Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary




# ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԱՆԱՆՈՒՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

# ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԱՆԱՆՈՒՆ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ

24846

«Սովետական գրող» հրատարակչություն
Երևան
1978

$\frac{AP_2}{Ա—88}$

Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները
ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

*Խմբագրական կոլեգիա.* Աբրահամյան Ա. Ա., Աբրահամյան Ա. Գ., Առեշատյան Ս. Ս., Գալշոյան Մ. Հ., Դավթյան Մ. Հ., Դերիկյան Գ. Խ., Խաչիկյան Լ. Ս., Նալբանդյան Վ. Ս.:

*Ա $\frac{70304\ (161)}{705\ (01)77}$ 77«Տ»*

© «Սովետական գրող» հրատարակչություն
Երևան, 1978

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Հայ գրական մտքի անդաստանում իր ուրույն տեղն ունի «Արծրունյաց տան պատմությունը», որն աշխարհաբար թարգմանությամբ հրատարակվում է առաջին անգամ։ Երկասիրության հեղինակներն են Թովմա Արծրունին և Անանուն շարունակողը։ Երկի նպատակն է ոչ միայն վեր հանել Արծրունիների տոհմի և հայրենի Վասպուրականի, այլև բովանդակ Հայաստանի պատմությունը։ Արծրունիները Հայաստանի նախարարական համակարգում հին և ազդեցիկ տներից էին, ունեին իրենց զորքը, հարկային սիստեմը, դատավարական իշխանությունը և այլն։ Հայ նախարարների մեջ իրենց դիրքով նրանք բռնում էին երրորդ տեղը (Սյունյաց և Բագրատունյաց տոհմերից հետո) և հայտնի էին իրենց ինքնուրույն քաղաքականությամբ։ Արշակունյաց հայոց թագավորության շրջանում այդ տոհմն իշխում էր միայն իր ժառանգական հայրենիքում՝ Վասպուրականի Աղբակ գավառում։ Արշակունիների անկումից հետո, մարզպանության և արաբական խալիֆայության օրոք ստեղծված նոր պայմաններում Արծրունիները իրենց շուրջը համախմբելով հարևան իշխանություններին, VIII դ. արդեն անբաժանորեն իշխում են Վասպուրականում։ Նույն դարի կեսերից նահանգի քաղաքական ամբողջացման պայմաններում Արծրունիները, դառնալով Հայաստանի խոշորագույն այդ երկրամասի տիրակալներ, է՛լ ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում երկրի քաղաքական կյանքում։*

*VIII դարում Հայաստանը շարունակում էր մնալ խալիֆայության գերիշխանության տակ։ Ստեղծված դառնաղետ իրավիճակի՝ ծանր հարկերի, ապօրինությունների ու բռնությունների պատճառով երկրի տնտեսական կյանքը հետադիմեց։ 850—851 թվականներին արաբական խալիֆայության զորապետ Բուղան մեծ զորքով արշավեց Հայաստան, կատարեց խժդժություններ, երկիրը ողողեց արյամբ։ Նա իր պատժիչ զորաբանակով առաջին հերթին ներխուժեց Վասպուրական և Հարավային Հայաստանի մյուս շրջաններ, կամենալով մեկընդմիշտ վերջ տալ ժողովրդի ազատագրական ոգորումներին։ Բռնակալի զորքը պատժեց Սասունի հերոս լեռնցիներին, ասպատակեց Տարոնը, Վասպուրականը, Այրարատը և Հայաստանի մյուս շրջանները։ Ժողովրդի աչքի առջև ավերվում էր իր հայրենիքը, պղծվում էին ազգային սրբությունները, հրո ճարակ դառնում դարերով ստեղծված հոգևոր գանձերը։ Սակայն Բուղայի շահատակությունները չկարողացան*

սանձել ժողովրդի ազատատենչ ոգին։ Այդ դաժան տարիներին հայ նախարարությունների զգալի մասը կարողացավ պահպանել իր դիրքերը։ Իսկ Բուղայի հեռանալուց հետո ստեղծված բարենպաստ պայմաններում Հայաստանը թևակոխեց զարգացման ուղին։ Երկրի քայքայված տնտեսությունը աշխուժացում ապրեց։ Զարգացան գյուղատնտեսությունն ու առևտուրը։ Վասպուրականով էր անցնում արևելքն արևմուտքի հետ շաղկապող առևտրական մայրուղու ճյուղավորումներից մեկը, մի հանգամանք, որը նպաստեց երկրամասի տնտեսական զարգացմանը։ Ներքին ու արտաքին բարդ և հակասական պայմանները հայ նախարարներին հուշում էին քաղաքական նոր ձևերի ստեղծման, երկրի անկախության վերականգնման ճշմարիտ ուղիներ։ Քայքայվում էր նախարարական հնամենի կարգը, փոխվում էին հնօրյա հասկացությունները ու ձևերը, հոգեվարք էր ապրում արաբական խալիֆայության տիրապետությունը, որը վերջին ճիգերն էր թափում իր տիրապետությունը երկարաձգելու։ Հայաստանի քաղաքական հորիզոնում բախտորոշ դեր խաղացող Բագրատունի, Արծրունի և Սյունյաց իշխանական տները միմյանց զորավիգում էին երկրի միասնականությունը վերականգնելու գործում։ 885 թ. ստեղծվեց Բագրատունյաց Հայոց թագավորությունը, սակայն շարունակվեցին միջիշխանական տարաձայնությունները, որոնք բացասաբար էին անդրադառնում երկրի քաղաքական ամբողջացման գործին։ Հայաստանի հարևան Ատրպատականի Սաջյան ամիրայությունը, որի թիկունքին կանգնած էր խալիֆան, կամենում էր տիրել Հայաստանը, որը սակայն նրան չհաջողվեց։ Սաջյանները ամեն կերպ ջանում էին երկիրը մասնատել, իրար հակադրել հայ իշխաններին, ջլատել երկրի ուժերը, և այդպիսով դյուրությամբ զավթել Հայաստանը։ Ատրպատականի ամիրա Յուսուփի խրախուսանքով 908 թվականին Վասպուրականում ստեղծվեց առանձին թագավորություն։ Հայաստանը քաղաքականապես թուլացավ։ 909 թ. Յուսուփը ներխուժեց Հայաստան, երկիրը վերստին հրի ու սրի մատնվեց։ Հայոց թագավոր Սմբատ Ա-ն գերվեց և 913 թ. տանջալի մահով սպանվեց։ Գագիկ Արծրունի թագավորը, քիչ ուշացումով, հասկանալով Յուսուփի հետին նպատակները, համախոհ իշխանների հետ գերադասեց հրաժարվել նրա հետ համագործակցելուց։ Արծրունիների հանդեպ թշնամանքով լցված Յուսուփը ի զորու չեղավ ծնկի բերել վասպուրականցիներին, հանգամանք, որին նպաստեց Բագրատունյաց գահի ամրապնդումը Աշոտ Բ. Երկաթ թագավորի ջանքերով։ Ժողովրդի անձնվիրության գնով հայոց երկրում կրկին տիրեց խաղաղություն։ Ավելի քան հարյուրամյա խաղաղության պայմաններում զարգացան գյուղատնտեսությունը, արհեստներն ու առևտուրը։ Զարկ տրվեց մշակույթին ու գրականությանը, ստեղծվեցին ճարտարապետական հոյակերտ կոթողներ։ Ծաղկում ապրեցին նաև Վասպուրականի քաղաքները՝ Վանը, Ոստանը, Աղթամարը, Ադամակերտը և այլն։ Նոր պայմաններում դրսևորվեց հայ ժողովրդի հոգևոր նկարագիրը։ Ֆեոդալական հայ իրականությունը ծնեց նոր անուններ, առաջացան նորանշան երևույթներ։ Սակայն բնատնտեսական հարաբերությունները, ֆեոդալական հիմնաշենքը զարգանում էին տարերայնորեն, ուստի հայ մատենագիրները չէին կարող հաղթահարել ժամանակի սահմանափակությունը։ Ֆեոդալա-



կան մասնավածությունն իր արտացոլումը գտավ նաև հայ մտաշխարհում, մատենագրության մեջ և պատճառ դարձավ որպեսզի գրվեն ֆեոդալական առանձին տների պատմությունները։ Ստեղծված երկասիրությունները ավելի շուտ իրականության (թե ներկա և թե անցյալ) գրական, քան թե գիտական արտացոլումն էին։ Այդուհանդերձ Միջնադարյան Հայաստանում ստեղծված մատենագրական երկերը կազմում են նրա հոգևոր կյանքի էությունը, ուր զգացվում է քաղաքական, տնտեսական ու մտավոր զարթոնք ապրող Հայաստանի կյանքի զարկերակը, նրա դարակուտակ փորձն ու իմաստնությունը։ Միաժամանակ մատենագրության մեջ արտացոլվում են ֆեոդալական պայմաններում կյանքի ներքին տարաձայնությունները և պայքարն արտաքին թշնամիների դեմ։ Պահանջ էր զգացվում անդրադառնալ ժողովրդի պատմական անցյալին, իմաստավորել ոչ միայն ներկան, այլև պատմության դասերը։ Այս հանգամանքը դառնում էր մտավոր կյանքի առաջնահերթ ուղղությունը, որը պայմանավորում էր նաև ստեղծվող երկասիրության բնույթն ու արժեքը։ Իշխող այդ մտահայեցողությանը այս կամ այն չափով տուրք էին տալիս ժամանակի բոլոր պատմագիրները։ Իհարկե, այդպիսով նրանք ոչ այնքան շահարկում էին պատմությունը, որքան իմաստավորում։

Հայ պատմագրության մեջ իր ուրույն տեղն ունի «Արծրունյաց տան պատմությունը», որի դերակշիռ մասը պատկանում է Թովմա Արծրունու գրչին, մնացածը շարունակել է Անանունը։ Հեղինակները, լինելով իրենց դարի հարազատ զավակները, բնականաբար չէին կարող անհաղորդ մնալ ժամանակի գերիշխող միտումներին։ Այս երկասիրությունը հայ մշակույթի անմեռ հուշարձաններից է։

Թովմա Արծրունու մասին եղած կենսագրական տվյալները աղքատիկ են։ Հայ մյուս մատենագիրների պես նա ևս համեստաբար չի հաղորդում իր կենսագրությանը վերաբերող փաստեր։ Այդ իսկ պատճառով մենք չգիտենք ո՛չ պատմիչի ծննդավայրը, ո՛չ ուսումնառության և ո՛չ էլ ապրելու և վարդապետելու վայրը։ Հայտնի է, որ նա եղել է Արծրունի, ուստի որոշ չափով մոտ է եղել Վասպուրականի իշխաններին, անձամբ շփվել նրանց հետ։ Բայց սա բավարար հիմք չի տալիս կարծելու, որ նա մշտապես ապրել է Արծրունիների գահանիստ Վանում։ Դատելով Թովմա Արծրունու մոտ եղած հատուկենտ տվյալներից, կարելի է մակաբերել, որ նա եղել է ազդեցիկ հոգևորական, հմուտ աստվածաբան՝ «Վարդապետ», որը ծանոթ է եղել ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների պատմությանը, հասու եղել ժամանակակից գիտություններին, հատկապես՝ աստվածաբանությանը։ Ելնելով պատմության բովանդակությունից, կարելի է մոտավորապես որոշել Թովմա Արծրունու ծննդյան և մահվան թվականները։ Իր մատյանի երկրորդ դպրության Դ գլխի վերջում պատմիչը հավաստում է, որ եղել է 850-ական թվականներին տեղի ունեցած անցքերի ժամանակակիցը։ Ընդունելով, որ այդ ժամանակ նա կարող էր լինել 15—20 տարեկան, կարելի է ենթադրել, որ Պատմության շարադրանքն սկսելիս, այսինքն 876—877 թվականներին, եղել է 40—45 տարեկան։ Թովմա Արծրունին ժամանակակից է Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիր-կաթողիկոսին։ Թովման հիշում է

Հովհաննես կաթողիկոսին, նրան հորջորջում «երանելի» ածականով, թեև ոչ մի ակնարկ չի անում նրա Պատմության մասին։ Թովմա Արծրունին իր իսկ վկայությամբ պատմությունը սկսել է գրել տակավին Վասպուրականի իշխանապետ Դերենիկ Արծրունու (գահակալել է 875-ից) օրոք և նրա հրամանով, հավանաբար 876—877 թվականներից սկսած։ Պատմության շարունակությունը գրում է հետագայում։ Որպես իր երկի պատվիրատուների, Թովմա Արծրունին հիշում է Դերենիկ և Գագիկ Արծրունիներին, որոնց նա համարում է ոչ միայն պետական կարող գործիչներ, այլև ամենահմուտ ուսումնասերներից։ Այս որակումը կողմնակալ գովք չէր, այլ ուներ իր իրական հիմքերը։ Այս երկու իշխանների եռանդուն գործունեությունը համընկավ այն շրջանին, երբ Վասպուրական նահանգն ապրեց տնտեսական ու քաղաքական աննախընթաց վերելք։ Վասպուրականում (Աղթամարում, Վանում, Ոստանում և այլուր) վեր խոյացան ճարտարապետական կոթողներ։ Դերենիկ Արծրունին մեծ ազդեցություն ուներ ոչ միայն Վասպուրականում, այլև բովանդակ Հայաստանում, նույնիսկ հարևան երկրներում։ Նրա հեղինակությունն այնքան մեծ էր, որ արաբ տիրողների կարծիքով նա արժանի էր ամբողջ Արմինիայի կառավարիչը դառնալու (տես J. Markwart, Sudarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 327)։ Հետագայում նույնիսկ արաբ մատենագիրները նրա որդիներին (այդ թվում և Գագիկ Թագավորին) կոչում էին հոր անունով՝ «Դարանիի (Դերենիկի) որդիներ»։ Գագիկ Արծրունին շարունակեց հոր քաղաքականությունը, որը, ինչպես հայտնի է, հանգեցրեց Վասպուրականում առանձին թագավորության ստեղծմանը։

Իհարկե, Թովմա Արծրունու պատմահայեցողությունը, գրական ճաշակը ձևավորվել են դաժան ու բախտորոշ իրադարձություններում, երբ երկրում մոլեգնում էին Աբբասյան խալիֆայության զորապետները, հարկահանները։ Պատմիչը խալիֆայության բռնակալության դեմ ժողովրդի հերոսական ապստամբների ժամանակակիցն է, թերևս նաև մասնակիցը, ուստի նրա մտահայեցողությունը ավելի աշխարհիկ է և իր դարաշրջանի համեմատ առաջադիմական։ Երկիրն ալեկոծող անցքերին մոտիկից ծանոթ լինելու հանգամանքը նրան դարձրել է ավելի իրազգաց և բանիբուն։ Թովմա Արծրունին դեպքերի շարադրանքը հասցնում է մոտավորապես մինչև 906 թվականը։ Այնուհետև պատմությունը շարունակում է անանուն մատենագիրը, դեպքերը հասցնելով մինչև X դարի երկրորդ քառորդը։ Չնայած այս հանգամանքին, «Արծրունյաց տան պատմությունը», ընդհուպ մինչև 1860-ական թվականները, դիտվել է իբրև մի ամբողջական երկ և կրել Թովմա Արծրունու անունը։

Հայ քննական բանասիրության մեջ Թովմա Արծրունու երկասիրությունը գրելու հիմնական շարժառիթը համարվել է Արծրունյաց տան գովերգումը։ Իր երկի առաջաբանում մատենագիրը Դերենիկ Արծրունուն խոստանում է, որ գրելու է Արծրունյաց տան պատմությունը։ Սակայն նրա երկասիրությունը ավելի լայն ընդգրկում ունի։ Պատմագիրը հեռանում է Վասպուրականի իշխանապետին տված իր խոստումից և շարադրում ոչ միայն Վասպուրականի, այլև բովանդակ Հայաստանի պատմությունը։ Այն փաս-



տը, որ պատմագիրը գրել է իր տոհմի դահերեցի պատվերով, ուստի այդ գործը նրա համար դարձել է այս կամ այն չափով տոհմական պատմություն, հետևաբար նա չէր կարող Արծրունիների մասին ավելին չգրել, քան մյուս մատենագիրները։ Այդուհանդերձ երկում համահայկականը գերազանցում է տոհմականին։ Պատմիչը շատ բարձր է գնահատում Հայոց Բագրատունի թագավորներին։ Եթե նա տոհմական պատմիչ լիներ, բնականաբար կգրեր հակառակը, քանի որ նրա ապրած ժամանակներում նույնպես ուժեղ մրցակցություն կար Բագրատունի և Արծրունի տների միջև։ Պատմագիրը հավասարապես դատապարտում է թե՛ Արծրունի և թե՛ մյուս տների դավաճան իշխաններին և դրվատանքի տուրք մատուցում ժողովրդին, հայրենիքին նվիրված անձանց՝ Հայաստանի որ մասում էլ նրանք լինեին։ Նա չի վարանում պատմել հայրենադավ Մեհրուժան Արծրունու մահապատժի մասին (առաջին դպրություն, գլուխ Դ), որը, ինչպես հայտնի է, իրագործվել է Սմբատ Բագրատունու ձեռքով։ Հայաստանի պատմության մեջ բացասական դեր կատարած Արծրունիներ Վասակը (նույն դպրություն, գլուխ ԺԱ), Գագիկ Ապումրվանը (երրորդ դպրություն, ԻԳ, ԻԴ) և ուրիշներ, իրենց պատշաճ դիմագիծն ունեն երկում։ Դարաշրջանի լայնախոհ աշխարհընկալումը պատմագրին ստիպել է չսահմանափակվել միայն նեղ անձուկ խնդրով, որպիսին էր Հայաստանի միայն մեկ (թեկուզև հարազատ) ազգատոհմի պատմություն գրելը։ Եթե Թովմա Արծրունին տոհմական մատենագիր լիներ, կցուցահաներ ավելի շատ սահմանափակ, հաճախ նույնիսկ քարացած վերաբերմունք իր իսկ հարուցած խնդիրներին։ Նրա երկասիրությունը ավելի շատ պատմության արտացոլումն է, ուր մասը չի զատված ամբողջից և առանձինի, մասնավորի մեջ անգամ զգացվում է ընդհանուրի շունչը։ Որպես հեղինակ, Թովմա Արծրունին նաև բարոյախոս է։ Սակայն նրա բարոյախոսությունը ինքնանպատակ չէ, այլ հետամուտ է իմաստավորել անցյալը, հուշել նրա հոռի կողմերը, ընթերցողին հասու դարձնել նաև ժամանակակից քաղաքական իրականության մութ ծալքերին։ Իհարկե, որոշ դեր ուներ նաև Հայոց եկեղեցու դրվատման բարոյաքաղաքական նպատակադրումը։ Սակայն այստեղ էլ իրեն զգալ է տալիս պատմագրի աշխարհիկ մտահայեցությունը։

Թովմա Արծրունու երկը արժեքավոր աղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների պատմության համար։ Ըմբռնելով, որ պատմական երևույթները շաղկապված են միմյանց, և մարդկային հասարակությունը բազմաթիվ ու անտեսանելի թելերով միահյուսված մի ամբողջություն է, նա անտես չի առնում նաև դրացի ժողովուրդներին։ Պատմագիրը առաջաբանում հավաստիացնում է, որ գրելու է առավել կարևոր ու հետաքրքիր անցքերի մասին, «որպեսզի,— գրում է նա,— հայտնապես, անուններով տեղերով ու ժամանակներով երևան արիությունները ու առաքինությունները»։ Մատենագիրը հիմնականում չի հեռանում իր խոստումից։

«Արծրունյաց տան պատմությունը» սկսվում է վաղ ժամանակներից։ Թովմա Արծրունին ծանոթ է այլազան աղբյուրների՝ թե՛ գրավոր և թե՛ բանավոր-ժողովրդականի։ Նա հիշում է նաև օտարազգի մատենագիրների՝ Արիստոնիկոս Քաղդեացուն, Եվսեբիոս Կեսարացուն, Հուլիա-

նոս Հալիկառնասացուն, Փիլոն Ալեքսանդրացուն, Հովսեպոս Եբրայեցուն, Մանեթոնին, Բերոսոսին, Հերոդոտոսին և ուրիշներին։ Նա օգտվել է Մովսես Խորենացուց, ինչպես նաև Ագաթանգեղոսից, Աբրահամ Խոստովանողից, Ղազար Փարպեցուց, Մամբրե Վերծանողից, Թեոդորոս Քերթողից, Կորյունից, Եղիշեից և ուրիշներից։ Զգացվում է հատկապես Ագաթանգեղոսի, Եղիշեի և Ղազար Փարպեցու ազդեցությունը պատմագրի վրա։ Սակայն Թովմա Արծրունին ոչ միշտ է հիշում այն աղբյուրները, որոնցից օգտվել է։ Նման վերապահումը հատուկ էր հին և միջնադարյան բոլոր հեղինակներին, որոնք անպայման հենվում էին որևէ աղբյուրի վրա՝ բայց ոչ միշտ էին այն հիշատակում։ Այն աղբյուրները, որոնցից օգտվել է Թովմա Արծրունին, մեծ մասամբ կորել են։ Պատմիչի բերած որոշ նյութերի բաղդատումը նույն անցքերի մասին պատմող ժամանակակից հեղինակների գրածի հետ, երբեմն ցույց է տալիս, որ Թովմա Արծրունին իր ձեռքի տակ ունեցել է ավելի ընդարձակ նյութ, քան տվյալ հեղինակը։ Օրինակ VII դարի հայ մատենագիր Սեբեոսը գրում է իր ժամանակ կատարված անցքերի մասին, որոնք ավելի մանրամասնորեն շարադրված են Թովմա Արծրունու Պատմության մեջ։ Թերևս երկու հեղինակներն էլ օգտվել են նույն աղբյուրից, բայց յուրովի։ Կամ գուցե Թովմա Արծրունին իր ձեռքի տակ ունեցել է Սեբեոսի Պատմության ավելի ընդարձակ տարբերակը, որը հետագայում կորել է։ Ընդհանրապես, Թովմա Արծրունին աղբյուրներից օգտվել է քննադատաբար, նրանց հաղորդածին ավելացրել որոշ նյութեր (հատկապես մեզ չհասած աղբյուրներից)։ Ինչպես հայոց մյուս մատենագիրները, որոնք բազում փորձությունների բովով անցած Հայաստանը իրենց ազնիվ ջանքերով դարձրեցին մտքի ու գիտության հայրենիք, Թովմա Արծրունին նույնպես լցված է մարդասիրությամբ, հայրենասիրությամբ և ապագայի հանդեպ լավատեսական հավատով։

«Արծրունյաց տան պատմությունը» բաղկացած է չորս մասերից («դպրություններից»)։ Ելնելով պատմությունը մաս-մաս, ըստ առանձին անցքերի, ժամանակագրորեն մատուցելու սկզբունքից, պատմիչն իր աշխատությունը բաժանել է գլուխների, պահպանելով, իհարկե, կառուցվածքային ընդհանուր սկզբունքները, մասի և ամբողջի հարաբերակցությունը։ Մինչև 2-րդ դպրության Ե գլուխը, որպես սկզբնաղբյուր, ունի երկրորդական նշանակություն։ Առաջին դպրությունն սկսվում է նախնական ժամանակներից և հասցվում մինչև V դարի կեսերը։ Պատմագիրը Ադամի, Նոյի և նրա շառավիղների առասպելական ժամանակներից սկսած շարադրում է անցքերը։ Ըստ Թովմայի, Արծրունիների նախնիներն են Ադրամելեքը և Սանասարը, որոնք սպանելով իրենց հորը՝ Ասորեստանի թագավոր Սենեքերիմին, իրենց զորագնդով գալիս են Սիմ սար (Սասուն) և բնակվում այնտեղ։ Այս արդյունք է աստվածաշնչյան հենքի շահարկման և զուրկ է պատմականությունից։ Նորագույն տվյալներով ապացուցված է, որ Արծրունիները ունեն զուտ հ ա յ կ ա կ ա ն, տեղական ծագում և հայտնի էին Բիայնիայի պատմաշրջանում, երբ, ինչպես երևում է ուրարտական սեպագիր արձանագրություններից, նրանք հայտնի էին «Արծունիունի» անունով և բնակվում էին Վանա լճի հարավ-արևելյան ոլորտում։ «Արծրունյաց տան



պատմության» մեջ այդ տոհմի որոշ գործիչներ կանգնած են Հայաստանում ծավալվող քաղաքական անցքերի կենտրոնում և երբեմն հասցվում են անարժան բարձրության։ Այսպես, առաջին դպրության Ե գլխում պատմվում է, որ Պարսից Կյուրոս արքայի դեմ Լյուդիայի վերջին թագավոր Կրեսոսի պատերազմի ժամանակ պարսիկները հաղթում են շնորհիվ Արծրունի եղբայրներ Քսերքսեսի և Արշեզի հնարամտության, որոնք անձամբ բռնում են Կրեսոսին և բերում Կյուրոսի մոտ։ Բաբելոնի գերությունից ազատված հրեաներին այս երկու եղբայրներն են, որ ապահով հասցնում են Երուսաղեմ, հաղթելով գալաթացիներին։ Իսկ Ասուդ Արծրունին, կռվելով Ալեքսանդր Մակեդոնացու դեմ, հաղթում է նրա զորքին, դառնալով Եգիպտոսի և Հնդկաստանի տիրակալ։ Այսպիսի ուրիշ օրինակներ էլ կարելի է բերել։ Ժամանակագրական հենք ստեղծելու միտումով, պատմիչը, հետևելով Մովսես Խորենացուն, պարսից թագավորներին զուգահեռ բերում է Արծրունի իշխանների ցանկը, միաժամանակ ցույց տալիս վերջիններիս մասնակցությունը պատմական որևէ նշանավոր իրադարձության։ Ընդ որում, պատմության մեջ տեղ գտած որոշ անցքեր Արծրունյաց տոհմում զանազան ժամանակներում ստեղծված զրույցներ են, որոնք զուրկ չեն պատմական հիմքից։ Նույն կերպ, առաջին դպրության Ժ գլխում պատմվում է, որ Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցող 16 նախարարների մեջ էր նաև Տիրոց Արծրունին։ Այս փաստը հիշատակում է նաև Ագաթանգեղոսը, որը սակայն Տիրոց Արծրունուն դնում է ամենավերջին՝ 16-րդ տեղը։ Թովմա Արծրունին գրում է, թե իբր Տիրոցի համեստության հետևանքով էր, որ նա վերջին տեղում էր նստում, թեև առաջին բարձին ամենից նա էր արժանի։ Այս մտայնությունը բխում էր Արծրունիների ազդեցիկ այն դերից, որն իրենց զգալ էր տալիս հայոց պատմության գրեթե բոլոր դարաշրջաններում և հատկապես IX—XI դդ.։

Օգտվելով Փավստոս Բուզանդից, Թովմա Արծրունին վերապատմում է Արծրունիների և Մարդպետների միջև մղված երբեմնի պայքարի մասին, այն հագեցնելով նոր մանրամասներով։ Ինչպես հայտնի է, Մարդպետները Արշակունի հայոց թագավորների արքունիքի, կանանոցի, թագավորական ամրությունների, կալվածքների, գանձերի վերակացուներն էին և հենվելով Արշակունիների վրա, պայքարում էին մրցակից նախարարությունների, հատկապես Արծրունիների և Ռշտունիների դեմ։ Պայքարը վերջանում է Արծրունիների համար դրական ելքով։ Պատմիչը վատաբանում է եկեղեցուն ընդդիմացող Մարդպետներին և դրվատում նրանց դիմակայող Արծրունիներին։

Միջնադարի խռովահույզ պայմաններում Արծրունի իշխանները երևան էին բերում կենտրոնախույս միտումներ։ Բայց տոհմում կային նաև հայրենանվեր գործիչներ։ Հաճախ դրական և բացասական ուժերի փոխազդեցությունն էր գույն տալիս Թովմա Արծրունու ապրած իրականությանը։ Պատմագիրը ճշգրիտ գծերով է բացահայտում Արծրունիների տոհմի ներսում եղած քաղաքական այս երկվությունը, միաժամանակ ցույց տալով իր բացասական վերաբերմունքը դրա հանդեպ։ Որպես հոգևորական, նա է՛լ ավելի աններող է Հայոց եկեղեցու դեմ ծառացողների նկատմամբ և շանթ ու կրակ է թափում նրանց գլխին, չխնայելով նաև հավատուրաց Արծրու-

ներին։ Այսպես, նա բացասական գույներով է պատմում V դ. ապրած Վասակ Արծրունու՝ քաղաքականապես երկդիմի և ճղճիմ վարքագծի մասին։ Հայոց Արտաշես վերջին թագավորի (428—428) ժամանակաշրջանում Հայաստանի շփոթ ու խառնակ դրության մեղքը բարդում է Վաչե Արծրունու վրա, որը Հմայակ Աշոցյանի հետ գործակցում էր պարսից արքունիքին, ընդդեմ հայրենանվեր գործիչների, որոնց թվում նաև՝ Սահակ Պարթևի։ Իսկ հոգևորականները հաճախ հանդես են գալիս Հայրենիքին դավող աշխարհիկ տերերին հակակշռող ուժի դերում։ Համակրանքի ջերմ տողեր կան հավատի համար մարտիրոսացվածների հասցեին։

V դարը բախտորոշ շրջան էր հայոց պատմության համար։ Պետականությունը կորցրած հայ ժողովուրդը կանգնած էր ճակատագրական երկընտրանքի առջև։ Նա կամ պիտի ընդուներ զրադաշտական կրոնը և կույր գնար Սասանյանների ձուլող քաղաքականության, կամ, կառչելով հայրենի մշակույթին, շարունակեր հարատևել որպես ժողովուրդ։ Ստեղծված պայմաններում անհաշտ պայքար է մղվում Հայաստանում եղած խմբավորումների՝ միջև։ Հայոց նախարարների հիմնական մասը՝ Մամիկոնյանների գլխավորությամբ, գտնում էր, որ լավագույն և ճիշտ ելքը հայրենի հողին և հավատակից Բյուզանդիային ապավինելն է, մյուս մասն, ընդհակառակը, գտնում էր, որ պետք է ընդառաջել Սասանյաններին և Պարսկաստանին մերձենալով՝ կտրվել արևմտյան աշխարհից։ Կողմնորոշումների հակամարտը, որ Հայաստանում դարձել էր դարավոր իրականություն, այս անգամ առանձնակի ուժով է դրսևորվում, գույն տալով պատմությանը։

«Արծրունյաց տան պատմության» երկրորդ դպրությունը սկսվում է V դարի կեսերի ժողովրդաազատագրական պատերազմի և դրա հետ առնչվող քաղաքական անցուդարձերի նկարագրությամբ։ Քաղաքական բեմում դարձյալ աշխույժ գործունեություն են ծավալում Արծրունիները, մասնավորապես այդ տոհմի պարսկամետ գործիչները։ Երկրորդ դպրության Ա գլխում պատմվում է, որ Շավասպ Արծրունին (Աղան Արծրունու հորեղբայրը), մեկնելով պարսից Պերոզ արքայի մոտ, հանձն է առնում պաշտել զրադաշտականություն, պայմանով, որ իրեն վերապահվի Հայոց թագավորի պատիվը։ Սասանյան արքունիքը նրան է վստահում հայերի հավատափոխության գործը և Վնգո մոգպետի հետ ուղարկում է Հայաստան։ Սակայն Մոկքի Ձայլ ամրոցում գտնվող Վարդան Մամիկոնյանը Ռշտունի և Անձևացի իշխանների օգնությամբ հաղթում է Շավասպին և նրա հետ եկած պարսիկներին։ Հայրենադավ Շավասպի կողքին հանդես է բերված հայրենիքին նվիրված Վահան Արծրունին։ Հայ նախարարները խաղաղեցնում են երկիրը, պարսպապատում Դվինը, այնտեղ կանգնեցնելով զանազան շինություններ, ապա կամենում են հայոց գահին նստեցնել Վահան Արծրունուն, որպես կարող և իմաստուն անձնավորության։ Սակայն նախարարները համաձայնության չեն գալիս և ի վերջո որոշում են թագավորեցնել Վարդան Մամիկոնյանին։ Վահանը ևս հետևում է նախարարներին և, հնազանդվելով Վարդանին, նրա հետ կողք-կողքի մարտնչում ու նահատակվում է Ավարայրի ճակատամարտում։ Պատմիչի այս վկայությունը բնականաբար կարող է տարակույս առաջացնել, քանի որ ոչ մի մատենագիր չի հիշում Վահան Արծրունուն։



Այդ տարակույսը չի ցրվում նաև պատմիչի այն հաղորդումից (երկրորդ դպրության Բ գլխում), թե Եղիշեն նախապես իր երկում գրած ունեցել է Վահան Արծրունու մասին, բայց Հայաստանում նեստորականություն քարոզող Բարծումա եպիսկոպոսը (որը հալածվելով Ներշապուհ Արծրունուց՝ չարությամբ էր լցված Արծրունիների հանդեպ), Եղիշե պատմիչից վերցնելով նրա երկասիրությունը, միջից դուրս է գցում Արծրունիների, որոնց թվում և Վահանի մասին գրվածը։ Շուտով վախճանվում է Եղիշե պատմիչը, և նրա երկի եղծված մասերն այնպես էլ չեն վերականգնվում։ Սակայն այդպե՞ս է եղել արդյոք։ Ենթադրենք, թե Եղիշեի երկից դուրս է գցվել Վահանի մասին հատվածը, իսկ ինչո՞ւ Ղազար Փարպեցին ոչ մի առիթով չի հիշատակում նրան։ Բացի այդ, Բարծուման հալածվում էր հայերից, ուստի կարող էր ոչնչացնել Եղիշեի ամբողջ երկը և ոչ թե սոսկ Արծրունիներին վերաբերող մասը։ Եղիշեի մոտ բավականին տվյալներ կան Արծրունիների մասին և այն էլ դրվատական։ Թովմա Արծրունու մոտ Բարծումային հալածողը ոչ թե Վահան Արծրունին էր, այլ Ներշապուհ Արծրունին, որին Եղիշեն հիշատակում է հինգ անգամ և այն էլ դրականապես (գիտելի է, որ Եղիշեին հետագա մատենագիրներից առաջինը հիշում է Թովմա Արծրունին, նրան համարելով իր ուսուցիչը)։ Հարկ է նշել, որ Թովմա Արծրունու կողմից իրար են շփոթված նույն շրջանի այլ գործիչներ։ Քրիստափոր Ա կաթողիկոսը (539—545) ժամանակակից է համարվում Բարծումային, Աշկանը և Վնդոն հանդես են բերված որպես մարզպաններ (ինչը չի եղել իրականում), իսկ Հազկերտ Բ-ն շփոթված է Պերոզի հետ և այլն։

Այսպիսով, Թովմա Արծրունու մոտ Վարդանանց պատերազմի, դրան նախորդող անցքերի մասին կա Եղիշեից ու Ղազար Փարպեցուց տարբեր պատում։ Ընդհանրապես նույնն ենք տեսնում նաև Թովմային ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու մոտ, ինչպես սա էլ իր հերթին տարբերվում է նաև Թովմայից (նա բոլորովին չի հիշում Վահան Արծրունուն)։ Հայտնի է, որ Հովհաննես Դրասխանակերտցին իր կյանքի վերջին տարիներին ապրել է Աղթամարում, ուր նա տեղափոխել էր Հայոց կաթողիկոսարանը։ Բնական էր սպասել, որ նա կարող էր օգտված լինել նույն աղբյուրներից, ինչ Թովմա Արծրունին։ Այն պարագան, որ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, թե Վարդան Մամիկոնյանը գործել է սկզբնապես Հարավային Հայաստանում, կողմնակի պատմական հիմք է տալիս Վահանի մասին Թովմայի հաղորդման համար։ Սակայն ինչո՞ւ ոչ մի մատենագիր, այդ թվում և Դրասխանակերտցին, չի հիշում նրան, արդյոք հնարածո անո՞ւն է Վահանը, ահա հարցեր, որոնք կարող են ծառանալ ընթերցողի առաջ։

Պետք է ենթադրել, որ Վահան Արծրունու մասին Թովման ունեցել է իր ձեռքի տակ աղբյուր, որը կորել է։ Իր Պատմության առաջին դպրության Ա գլխում նա գրում է, որ Վահանի մասին տվյալները վերցրել է V դարի հայ մատենագիր Աբրահամ Խոստովանողի Պատմությունից, որը սակայն նույնպես չի հասել մեզ։ Աբրահամ Խոստովանողը կյանքի վերջին շրջանում ապրել է Վասպուրականում և հետևաբար կարող էր Արծրունիների մասին ավելի քաջատեղյակ լինել, քան անգամ Եղիշեն կամ Ղազար Փարպեցին։ Սակայն դարձյալ անորոշ է մնում, թե ինչո՞ւ միայն Աբրահամ Խոստովա-

Նոզը պիտի հիշեր նրան։ Ուրեմն մնում է ենթադրել, որ Եղիշեի (հավանաբար նաև Փարպեցու) Պատմության մեջ իրոք եղել է Վահանի մասին պատմվածը։ Սակայն սխալվում է պատմիչը, երբ այն Եղիշեի երկից դուրս գցելը վերագրում է Բարձումային։ Թերևս Եղիշեի երկի խարդախողները եղել են հետագայի գրիչները, որոնք, լինելով հոգևորականներ, չեն կամեցել ստվեր ձգել հավատի համար նահատակված, եկեղեցու կողմից սրբացված Վարդանի վրա՝ Վահան Արծրունուն գերադասելով նրանից։ Դա միայն իրենց կամ մյուս հոգևորականների կրոնաքաղաքական հավատամքից չէր բխում։ IX—XI դարերում Բագրատունիների և Արծրունիների մրցապայքարը (Մամիկոնյանները չկային այլևս, բայց եկեղեցին նրանց բարձրացնում էր) ևս ուներ իր դերը։ V դարում Վարդանանց շարժման ժամանակ Մամիկոնյան և Սյունյաց տների միջև մղված պայքարում Արծրունիները զորավիգեցին առաջիններին։ Բացառված չէ, որ Վասակի հեռանալուց հետո Արծրունիներին վերապահվեր Հայոց տիրակալի պատիվը, որը մարզպանի պաշտոնը չէր կարող լինել, քանի որ վերջինս պարսկական էր, ուստի ապստամբները հազիվ թե այն պահպանեին։ Ուրեմն պիտի ենթադրել, որ այն փոխարինել են հայկականով՝ հավանաբար Հայոց թագավորի տիտղոսով։ Համենայն դեպս Վահան Արծրունու մասին Թովմայի արած պատմությունը մատենագրական կեղծիք չի կարելի համարել։ Գրելով Արծրունի իշխանների պատվերով, մատենագիրը բնականաբար ավելի, քան մյուս պատմիչները, աղբյուրներում պետք է փնտրեր և գտներ Արծրունիներից ականավոր գործիչների, հատկապես Հայոց պատմության բախտորոշ ու հեռավոր անցյալում։

Երկրորդ դպրության Բ գլխում պատմիչը Արծրունիներին հանդես է բերել նաև որպես հայ-քաղկեդոնական վեճերի գործուն մասնակիցներ։ Եկեղեցին ալեկոծող այդ վեճը Հայոց պետականության կորստի պայմաններում դարձել էր ոչ միայն կրոնական, այլև քաղաքական սուր հարց։ Արծրունիները չէին կարող դուրս մնալ դարաշրջանի հակոտնյա միտումների ոլորտից։ Նրանք մասնակցում են նաև առերևույթ միայն կրոնական թվացող, բայց իրապես քաղաքական խոր դրդապատճառներ ունեցող այդ վեճերին։ Այսպես, Վասակ Արծրունին (Ազանի հայրը), չտանելով Սասանյանների ապօրինությունները, իր երկու եղբայրների հետ անցնում է Բյուզանդիա, կայսեր կողմից գտնելով սիրալիր ընդունելություն։ Վասակը և եղբայրները ոչ մի կերպ չեն հրաժարվում լուսավորչական եկեղեցու դավանանքից։ Արծրունիները դրական դիրքավորում ունեն նաև 480-ական թթ. ազատագրական պատերազմում։ Մեհրշապուհ և Հաշկուր Արծրունիները զորավիգում են Վահան Մամիկոնյանին։

Նույն դպրության Ե—Է գլուխներն աչքի են ընկնում ոչ միայն պատմական արժանահավատությամբ, այլև լայն ընդգրկումներով ու նյութի կարևորությամբ։ Հայ պատմագիրներից ոչ ոք չի կարող համեմատվել Թովմա Արծրունու հետ՝ IX դարի երկրորդ կեսին Հարավային Հայաստանում տեղի ունեցած անցքերն արտացոլելու տեսանկյունից։

Շնորհիվ Թովմա Արծրունու, պատմության սեփականությունն են դարձել 851—852 թվականներին արաբական խալիֆայության դեմ հայերի մղած



հերոսական պայքարի դրվագները։ Ուշագրավ է, որ պատմիչը խոսելով խութեցի հերոս լեռնցիների ապստամբության մասին, գրում է, որ խալիֆայի Յուսուփ զորապետին սպանողի հետ անձամբ հանդիպել և զրուցել է ինքը։ Այս փաստից կարելի է ենթադրել, որ նա մասնակցել է (իհարկե, որպես հոգևորական) այդ շարժմանը։ Սասունցիների ապստամբության մասին պատմող էջերը պատմիչի երկասիրության ամենանկարագեղ մասերից են։ Ապստամբության ելքից ոգեշնչված մատենագիրն իր սիրտն է ներդնում այդտեղ, դառնալով իր նկարագրած անցքերի ոգեշունչ վկան և իմաստավորողը։ Հույժ արժեքավոր են նաև սասունցիների կենցաղին, նիստ ու կացին նվիրված էջերը։ Այստեղ Թովմա Արծրունին պատմաազգագրական նյութ է ընձեռում ուսումնասիրողին, նկարագրում է աշխատավոր ժողովրդի բարքերը, կենցաղը, այն դառն ու չարքաշ պայմանները, որոնցում նա ստիպված էր պահպանել իր գոյությունը։ Ընդհանրապես Թովմա Արծրունին, ինչպես մյուս պատմիչները, աշխատավոր ժողովրդի զբաղմունքներին, կենցաղին քիչ է ուշադրություն նվիրել։ Սակայն նրա Պատմության էջերում անուղղակիորեն արտացոլվում է աշխատավոր բնակչության ծանր վիճակը, երբ ընթերցում ենք խալիֆայի զորապետների, հարկահանների բռնությունների, կամայականությունների, պատերազմների, գաղթի և այլնի մասին։ Սասունցիների կենցաղի նկարագրությամբ ավարտվում է երկրորդ դպրությունը։

Թովմա Արծրունու երկասիրության կարևորագույն բաժինն է երրորդ դպրությունը, որը անգնահատելի նշանակություն ունի Հայոց պատմության բախտորոշ ժամանակաշրջանի՝ IX դարի երկրորդ կեսի լուսաբանման համար։ Օտար աղբյուրները հաճախ հաստատում են այս դպրության մեջ Թովմա Արծրունու բերած վկայությունները։ Նա երբեմն ջանում է գտնել պատմական երևույթների պատճառակցական կապը, քննադատաբար է վերաբերվում աղբյուրներին։ Երկրին պատուհասված դժբախտությունների պատճառ համարում է իշխանների անմիաբանությունը, իհարկե, նրա կարծիքով բոլոր պարագաներում նախասկիզբը արարիչն է, որի կամքով է կատարվում ամեն ինչ։ Առանձին արժեք ունեն Պատմության երրորդ դպրության Ա—Ժ գլուխները, որոնք նվիրված են Հայաստանում խալիֆայի դաժանաբարո զորավար, ծագումով թուրք Բուղայի կատարած շահատակություններին։ Ընդվզուն Հայաստանը ծունկի բերելու նպատակով խալիֆան 851 թվին մեծաթիվ զորքով այնտեղ է ուղարկում Բուղային, որի ազդեցությունը մեծ էր իր արքունիքում։ Վասպուրականում և Հայաստանի այլ մասերում ստեղծվում է ծանր վիճակ։ Թշնամին մոլեգնում էր ամենուր։ Ոտնակոխ էին արվում ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը։ Բուղայի, Յուսուփի և մյուս բռնավորների մասին պատմիչը գրում է խորին հակակրանքով։ Ցույց տալով բռնակալների ուխտադրժությունը, նենգությունն ու ամբարտավանությունը, Թովման նրանց հակադրում է ապստամբ հայ ռազմիկներին, որոնք հաճախ ռազմիկ-ասպետ էին, բայց ոչ դիվանագետ և դյուրությամբ ընկնում էին թշնամու լարած որոգայթը։ Պատմիչը չի մոռանում շեշտելու նաև հայ իշխանների թուլությունը (որը բացատրվում էր նրանց պետական, քաղաքական փորձի պակասով), այն է՝ բռնավորներին

Գավառ ընծայելը և հաղթական մարտերից հետո կամովին նրանց ծառայելն ընծենալը։ Ականատես և ականջալուր պատմագիրը խորին համակրանքով է արտահայտվում անձնազոհ հայ իշխանների մասին, բերելով հետաքրքիր դրվագներ։ Հուզիչ է Արյան լիճ վայրում հայերի ու արաբների ընդհարման նկարագրությունը (Դ գլուխ)։ Այստեղ պատմագիրը ցույց է տալիս, թե ինչպես հայ զինվորները, համախմբելով ժողովրդին պահպանելու միահամուռ ցանկությամբ, վճռում են մեռնել, բայց չլքել դիրքերը։ Ավելի քան երեսուն նախարարներ իրենց զորագնդերով կռվի են ելնում թշնամու դեմ։ Թընդվում է դաժան մարտը, որը հայերի համար դառնում է կենաց ու մահու պայքար։ Հայ շինականները մտել էին թեժ պայքարի մեջ, թշնամուն հարվածելով, ով ինչով կարող էր։ Ողջ օրը շարունակված մարտում հաղթանակը շահում են հայերը, որոնք, սակայն, պարտվում են դիվանագիտության ասպարեզում։ Խալիֆայի զորապետ Բուղան ստահոդ երդումներով իր որոգայթն է գցում Գուրգեն Արծրունուն։ Վասպուրականի հուսաբեկ զորքը ցրվում է, երկիրը թողնելով անպաշտպան ու անտերունչ։ Եվ, ասում է պատմիչը, «մեծ նեղություն էր ամբողջ երկրում, որպիսին չի եղել ի սկզբանե աշխարհի և այլևս չի լինելու» (Գլուխ Ե)։ Ավերված գյուղերի, ագարակների ու ավանների տեղերում նույնիսկ բնակչություն չէր մնում։ Բազմաթիվ հայ գերիներ քշվեցին օտար երկրներ, ստրկավաճառության շուկաները։

Գերեվարված հայ նախարարների դառնավարության մասին պատմելիս (Զ և Է գլուխներ) զգացվում է Եղիշեի ազդեցությունը։ Այսպես, երբ հայ նախարարներին կապանքների մեջ տանում են խալիֆայի ատյանը քննության, նրանց առաջարկվում է ընդունել մահմեդականություն, հակառակ դեպքում անխուսափելի էր մահավճիռը։ Եվ ահա իշխանները, ի զուգակշիռ իրենցից հինգ դար առաջ՝ Վարդանանց ճակատամարտում մարտնչած նախարարների, նախընտրում են աստվածահավատությունը, որի գնով նրանց մեծ մասին հաջողվում է ազատվել և վերադառնալ հայրենիք։ Եղան նաև հրաժարվողներ, որոնք անմիջապես բանտ նետվեցին։ Նման դեպքերում մատենագիրն ավելի է գունավորում իր կրոնական ջերմեռանդությունը, իր երկասիրությունը երբեմն հագեցնելով պատմությանն անհարիր վկայաբանական պատճառաբանություններով կամ իր խոսքը ջանում է հաստատել Ս. գրքից արված վկայաբերումներով։ Աստվածաշնչյան մեջբերումները, արարչին, Քրիստոսին, առաքյալներին հիշելն ինքնանպատակ չէ պատմիչի մոտ։ Նա այդպիսով կամենում է ավելի ազդեցիկ դարձնել պատմվող նյութը, խոսքը համեմել սրբագործված վկայակոչումներով, ժամանակի իշխող գաղափարաբանությամբ։ Պատմիչի կարծիքով հավատը զորեղ միջոց է ժողովրդին համախմբելու համար։ Միաժամանակ արաբական արշավանքները, դրանց պատճառով ժողովրդի կրած ծանր տառապանքները, նա բացատրում է ոչ թե արաբների կրոնական անհանդուրժողականությամբ, այլ խալիֆայի և նրա արբանյակների փառասիրական, նվաճողական ձգտումներով։ Ը գլխում Բուղայի շահատակությունների մասին պատմելիս Թովմա Արծրունին ցույց է տալիս, որ գերի բռնված հայերը մահապատժի գոյավիճակում իսկ չէին կորցնում ոգու արիությունը և համարձակորեն էին նայում մահվան երախին։ Հուզիչ է Գևորգ Բաղկացու մասին պատմող հատվածը։ Դահճի ձեռքից խլելով սուրը, Գևորգը թռցնում է նրա գլուխը, բայց ինքն էլ ի վերջո ընկնում է թշնամու սրից։

Թովմա Արծրունու ոճը հիմնականում զերծ է զեղումներից, բայց պատմական դեպքերի շարադրման մեջ (հատկապես շինարարական աշխատանքների, պատերազմական իրավիճակի) երևում է նրա հմտությունը։ Երբեմն պատմական նյութին ավելացնում է աշխարհագրական, ազգագրական բնույթի տվյալներ, որոնք թեև շատ քիչ են, այդուհանդերձ նրա երկասիրությունը դարձնում են ավելի կենդանի ու փաստառատ։ Պատմիչը երբեմն դիմում է համեմատությունների և գրական այլ հնարների, ինչը երևում է հատկապես Բուղայի կատարած չարագործությունները նկարագրելիս։ Բուղային նմանեցնում է գարնանամուտին քնից արթնացող և երախը բացող հրեշի։ Պատկերելով բնության զարթոնքը և ժողովրդի ստեղծարար եռանդը, հեղինակը կամեցել է ցայտուն դարձնել խաղաղ հոգսերով համակված ժողովրդի և մահասփյուռ բռնակալի հակադրությունը։ Միաժամանակ այստեղ երևում է բնության երևույթների նկատմամբ պատմիչի հետաքրքրությունը, ինչը զգացվում է նաև նրա երկի այլ գլուխներում (Դվինի երկրաշարժի նկարագրությունը և այլն)։ Իհարկե, բնության երևույթները պատկերելը հեղինակի համար միջոց են նրա հիմնական միտումի՝ երկրի պատմության վեր հանման համար։ Գարնանամուտ է, արթնանում է բնությունը, կենդանիները դուրս են գալիս բներից, աշխատասեր մշակները պատրաստվում են երկրագործ վաստակի, մինչդեռ Բուղան օր ու գիշեր որոճում է անձնվեր Հայաստանն իր զարշապարի տակ գցելու դիվային մտահղացումներ։ Արժեքավոր է նաև Հայաստանի Արցախ նահանգի մասին պատմիչի հաղորդումը (Ժ գլուխ)։ Պատմագիրը Արծրունի իշխանների արարքներից ոչ պակաս ոգևորությամբ է պատմում Արցախի իշխան Եսայի Ապու Մուսեի մասին։ Թ և Ժ գլուխներում արժեքավոր տվյալներ կան նաև Բուղայի դեմ Կովկասի ժողովուրդների (վրացիների, աղվանների և ծանարների) մղած պայքարի մասին։ 850-ական թվականների իրադարձությունների մասին պատմելիս՝ հեղինակը երբեմն հասնում է անցքերի դրամատիկ պատկերման աստիճանի, հատկապես հայ նահատակների մարտիրոսության, հայ ռազմիկների հերոսական արարքները նկարագրելիս։ Կամենալով ստեղծել այնպիսի մի երկ, որն ունենար կենսաբարոյական, ռազմաքաղաքական և ուսուցողական մեծ նշանակություն, Թովմա Արծրունին իր Պատմությունը հագեցրել է այնպիսի դեպքերով ու դեմքերով, որոնք հայ ժողովրդին պետք է զինեին կենսաիմաստությամբ, ընդհանրացնեին հայոց պատմության, նաև ոչ վաղ անցյալի դառն փորձը, տային քաղաքական, բարոյական, ռազմական դիտելիքներ, որպեսզի նոր սերունդը չկրկներ անցյալի սխալները։ Պատմագիրն, իհարկե, իր առաջ գեղարվեստական խնդիրներ չի դրել, սակայն անցքերի դրամատիկ շարադրանքը, որի մեջ զգացվում է պատմիչի հուզաթրթիռը, օժտում են նրա երկը գեղարվեստականությամբ։

Թովմա Արծրունու Պատմությունը արժեքավոր տվյալներ է պարունակում նաև Հայաստանում արաբական զավթականության հաստատման, ամիրայությունների ստեղծման և դրանց առնչվող այլ խնդիրների մասին։

Բուղայի արշավանքների հետևանքները նկարագրելիս Պատմության մեջ երբեմն հանդիպում ենք հոռետեսական երանգի։ Պատմագիրը քաջ գիտակցում է, թե իր եռանդի ինչ է բերում խալիֆայության լուծը։ Մատենագիրն ունի պատմական, իրական սուր զգացում, որոնք օգնում են նրան՝ ճշմարտացիորեն պատկերելու ծավալված իրադարձությունները, դրանց ընթացքը, հետևանքները։ Պատմիչը ցավով է հիշում, որ Բուղայի զորքի հետ Հայաստան էին թափանցել արաբական բազմաթիվ ցեղեր, աներկյուղ կերպով բնակություն հաստատելով երկրի տարբեր վայրերում։ Տեղի բնակչությունն ստիպված հեռանում էր իր պատմական հայրենիքից, որտեղ բնականաբար ստեղծվում էր ազգագրական անմիասեռություն։ Թովմայի Պատմությունից երևում է, որ այս ծանր տարիներին Վասպուրականում և այլուր իր քաջագործություններով փայլում է Գուրգեն Արծրունին՝ Ապուպելճի որդին, որի մասին առանձին գովեստով է խոսում պատմիչը։ Թշնամիների վրա, ասում է նա, այնպիսի ահ էր ընկել Գուրգենի խիզախ արարքների հետևանքով, որ նրանք այլևս համարձակորեն ելումուտ չէին անում Վասպուրականում։ Բուղայի կողմից Իրաք (Սամառա) տարագրված Արծրունի իշխանների գերության տարիներին (852—859) Գուրգեն Ապուպելճի ջանքերով Վասպուրականը կարողանում է դուրս գալ վհատ ու անտերունչ վիճակից։ Մատենագրի հաղորդումից երևում է, թե ինչպես Բուղա զորապետի նվաճումները ջուրն են ընկնում։ Այդպիսով խալիֆայությունը համոզվում է, որ անհնարին է հայերին ծունկի բերել։

Թովմա Արծրունին արժեքավոր տվյալներ է հաղորդում նաև հայ իշխանների գերեդարձության մասին։ Նա ցույց է տալիս, որ Հայաստանում ստեղծված ինքնավար վիճակն ստիպված էր ճանաչել նաև Բաղդադի խալիֆան, որն իր մոտ հրավիրելով գերության կապանքներում գտնվող հայ նախարարներին, խոստանում է նրանց ազատ արձակել։ Ընդհանրապես Թովմա Արծրունին, երբ անհրաժեշտ է, և այդ չի հակասում իրականին, հարազատ տոհմի անդամներին ներկայացնում է որպես բարեմասնություններով օժտված, քաջակորով անձնավորությունների, որոնց հաճախ, ամենածանր պահերին իսկ տեսնում ենք իրադարձությունների հորձանուտում։ Անգամ գերության մեջ Աշոտ Արծրունի իշխանը ցուցաբերում է կորովամտություն, հնարամտություն։

Թովմա Արծրունին գովեստով է խոսում նաև Աշոտի որդու՝ Դերենիկի մասին, որի պատվերով, ինչպես տեսանք, գրել է իր Պատմությունը։ Սակայն սա չէ էականը։ Հայաստանի բախտորոշ այս ժամանակաշրջանի մասին նա անգնահատելի տվյալներ է հաղորդում, որոնք, ինչպես նաև IX դ. երկրորդ կեսին վերաբերող շատ փաստեր, աչքի են ընկնում իրենց բացառիկ արժեքով։ Դա մի շրջան էր, երբ հոգեվարք էր ապրում խալիֆայությունը և օրակարգում էր Հայաստանի անկախության հարցը։ Սակայն հայ մատենագրության մեջ քիչ տվյալներ կան այս շրջանի մասին։ «Արծրունյաց տան պատմությունը» լրացնում է այդ բացը։ Շնորհիվ այդ երկասիրության, վերակենդանանում են Հայաստանում ընթացող դրամատիկ իրադարձությունները, երևում է ստեղծված լարված իրավիճակը, զգացվում է ժամանակի ռիթմը։ Հայոց թագավորության վերահաստատման ուղղությամբ ներ-



գրված ջանքերը հեշտությամբ չէր, որ պսակվեցին հաջողությամբ։ Այստեղ նույնպես երևում է պատմիչի դրական վերաբերմունքը Բագրատունիների նկատմամբ, միաժամանակ ցույց է տալիս, թե որքան լարված էր նույնիսկ խուլ պայքարը հայ իշխանների և թշնամական ուժերի միջև։ Աշոտ Բագրատունու միարարական ջանքերը լրջորեն խոչընդոտվում էին մահմեդական ամիրաների կողմից։ 870 թ. Արմինիայի նորընծա ոստիկան Ահմադը (Ահմեդ իբն Խալիդ), որին հայ իշխանները հարգանքի տուրք էին մատուցել և Պարտավի Յամանիկ (Մուհամմադ ալ-Յամանի) ամիրան, հայերի դեմ նյութում են դավադրություն։ Պատմիչը ցույց է տալիս, որ եթե չլիներ Աշոտ Բագրատունու և ուրիշ իշխանների աչալրջությունը, հայ իշխանների գերակշիռ մասը կարող էր Դվինում կոտորվել Ահմադ ոստիկանի հրամանով, ինչը ողբերգական հետևանքներ կունենար Հայաստանի համար, ինչպես եղել էր VIII դ. սկզբին Նախճավանում և Խրամում, որտեղ հրավիրված հայ նախարարները խալիֆայի դրածոյի հրահանգով լրիվ ողջակիզվեցին։ Սակայն անցյալից դասեր քաղած հայ իշխաններն այժմ կարողացան կանխել լուրջ աղետը և Հայաստանից հեռացնելով նենգադավ ոստիկանին, փրկել անկախության գործը։

Թովմա Արծրունու երկասիրությունը ուշագրավ տվյալներ է պարունակում նաև արաբական տիրապետության և Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, հարկային հարաբերությունների, ֆեոդալական և համայնքային հողատիրության, գյուղացիության վիճակի, Վասպուրականում ծավալված շինարարության և այլ խնդիրների մասին։ Պատմագիրը արժեքավոր տվյալներ է հաղորդում նաև Վասպուրականի հարևան նահանգների, հատկապես Տարոնի, Մոկքի, Պարսկահայքի, Սյունիքի, Այրարատի և Աղձնիքի մասին։ Ի (20-րդ) գլխում ցույց է տրվում, որ Տարոն գավառը, որ հնուց անտի եղել էր հայոց քաղաքակրթության օրրանը, IX դարի երկրորդ կեսին ապրում է քաղաքական եռուզեռ։ Պատմիչի շուրթերին Տարոնը հնչում է «Հայոց տունս հորջորջմամբ», որն անշուշտ հետևանք էր գավառի ունեցած մշակութային-պատմական կարևոր դերի։

Երրորդ դպրության մեջ, պատմելով Վասպուրականում առանձին թագավորության ստեղծման նախորդած տարիներին Հայաստանում տեղի ունեցած անցքերի մասին, մատենագիրը ցույց է տալիս, որ հայոց թագավորության ստեղծումից հետո հայոց պետականության ամրապնդման գործում իրենց բաժինն ունեին Արծրունիները։ Աշոտ Արծրունին մինչև իր կյանքի վերջը հավատարմորեն ծառայում է հայոց թագավորին, թեև Ատրպատականի Աֆշին ամիրան խոչընդոտում էր նրան։ Երբ Աֆշինը պատերազմում է հայոց թագավորի դեմ, Աշոտը զինական օժանդակություն չի ցույց տալիս Աֆշինին։ Այդ իսկ պատճառով Սմբատ Ա-ի հետ գործը հաշտությամբ վերջացնելով, Աֆշինը զենքն ուղղում է Արծրունիների դեմ և խուժելով Վասպուրական, ասպատակում է այն։ Սակայն վասպուրականցիները հերոսաբար մարտնչում են ոսոխի դեմ։ Երկրում ստեղծվում է դառնագին կացություն, մոլեգնում է սովը։ Պատմագիրը ցույց է տալիս, որ սովի և այլ արհավիրքների ճիրաններում գտնվող ժողովուրդը կարճատև խաղաղության





24.846

պայմաններում գնահատում է հայրենիքը։ Իհարկե, մեր մյուս մատենագիրների նման Թովմա Արծրունին երբեմն ժողովրդին պատուհասած դժբախտությունները համարում է աստվածատուր պատիժ, որին ոչ ոք չի կարող ընդդիմակայել։ Այդպիսի դեպքերում միայն աստծո ողորմածությունն է օգնում ծանր իրավիճակից։ Այդպես, նա հավատացնում է, թե իբր տիրոջ բարկությունը թափվում է Հայաստան ներխուժած Աֆշինի և իր զորքերի վրա, համաճարակից մեռնում է աշխարհը, կոտորվում է նրա զորքը, որով վերջ է տրվում չարագործ կեցությանը։ Արաբական տիրապետության ծանր ժամանակաշրջանի պատմության շարադրման ժամանակ պատմագրի գիտական-գրական նպատակադրումը երբեմն իր տեղը զիջում է քաղաքականին։ Զգացվում է, որ նա մեծ տեղ է հատկացնում այդ շրջանին, մասնավորապես խալիֆայի զորքի արշավանքներին, կատարած բռնություններին, ոչ միայն այն պատճառով, որ անձամբ ականատես և ականջալուր է եղել դրանց և խորապես ապրել, իր հոգում անթեղել ժողովրդի վիշտն ու տառապանքները, այլև որ այդ թեման մեծ այժմեականություն ուներ նաև արաբական տիրապետության վերացումից հետո։ Իր երկասիրությամբ մատենագիրը կամենում է համախմբել հայ իշխաններին արտաքին թշնամիների դեմ, նրանց մղել միաբանության։

Համակված լավատեսության անհիմ լույսով, պատմիչը ցույց է տալիս, որ պատերազմներին և զանազան այլ արհավիրքներին հաջորդող խաղաղ տարիներին հառնում է վասպուրականցիների շինարարական կորովը։ Վերջին գլխում պատմվում է Արծրունիների շինարարական անդրանիկ ձեռքերի մասին, որոնք սակայն չեն հասնում իրենց լրումին։ Աշոտ Արծրունու մահից հետո Վասպուրականի իշխանապետ դարձած Գագիկ Արծրունին իր եղբոր՝ Գուրգենի աջակցությամբ ձեռք է զարկում երկիրը բարեզարդելու, բարեշինելու գործին։ Վերակառուցվում են Ոստանի Ոստան քաղաքի միջնաբերդը, եկեղեցին, ձեռագործված կառույցներով զարդարվում Արծրունիների ոստանիստ Վան քաղաքը, որտեղ վերաշինվում է միջնաբերդը (անտրական քարանձավը), կառուցվում են մի քանի եկեղեցիներ, ավարտվում տակավին Դերենիկ Արծրունու օրոք սկսված պալատի շինարարությունը։ Խաղաղ կյանքի ալիքը բարձրանում է նաև Վասպուրականի այլ վայրերում։ Սակայն վերահաս պատերազմները ընդհատում են ամեն ինչ։ Հարևան ամիրայությունները պարբերաբար ալեկոծում են Վասպուրականի անդորրը։ Պատմագիրը ոգևորությամբ պատմում է, թե ինչպես հայ ավագները, հակահարված տալով թշնամիներին, հերոսական մաքառումներով ետ են գրավում Վասպուրականից խլված շրջանները։ Առանձին ոգևորությամբ է պատմվում [illegible] իշխաններ Թադևոսի և Շապուհի խիզախ արարքների մասին։

Թովմա Արծրունու երկասիրությունը թերի է, անավարտ է մնացել նրա վերջին մասը։ Թովմայից շարունակել է մեկ այլ մատենագիր։ Բայց որովհետև կիսատ է Թովմա Արծրունու հեղինակած գործի վերջին մասը և պակասում է նրա շարունակողի մասյանի թե՛ սկիզբը և թե՛ վերջը, ուստի «Արծրունյաց տան պատմության» մի ամբողջ բաժինը դուրս է ընկել։ Պետք է կարծել, որ Անանունի Պատմության սկիզբն ու վերջը կորել են վաղ շրջ-



ջանում, այն է մինչև XII—XIII դարերը, երբ Պատմությանը կցվել են հավելյալ գլուխն ու հիշատակարանը։ Այլ պարագայում հազիվ թե գրիչները ամբողջությամբ ընդօրինակած չլինեին Անանունի Պատմությունը։ Այն փաստը, որ երկն ընդօրինակող գրիչները երկու մատենագիրների գործն էլ համարել են մեկ աշխատություն, նույնպես վկայում է, որ մինչ այդ կորած են եղել Անանունի երկասիրության սկիզբն ու վերջը, և՝ հետևաբար վերնագիրը գրիչներին անհայտ է եղել։ Անանունի՝ հոգևորական և Արծրունի չլինելու հանգամանքը (եթե իհարկե այդպես էր) նույնպես կարող էր պատճառ դառնալ, որպեսզի նրա երկասիրությունը չդիտվի որպես առանձին գործ։ Սխալ կլինի կարծել, թե «Արծրունյաց տան պատմությունը» կոչվել է միայն Թովմա Արծրունու անունով, քանի որ երկասիրության ձեռնարկողը և գերակշիռ մասը նա է հեղինակել։ Մենք ստույգ չգիտենք, թե Անանունի գործն ինչ ծավալ է ունեցել։ Հայտնի չէ նաև նրա իսկական վերնագիրը։ Մենք չգիտենք նաև, թե նա Արծրունի տոհմի՞ց էր, թե ոչ, հոգևորակա՞ն էր արդյոք, թե՞ աշխարհական։ Նա հիշում է, որ ոտքով շրջագայել է Կովկասում, հասել Տայաստան (Տայք)։ Լրացուցիչ կռվանների դեպքում թերևս հնարավոր լիներ կարծել, որ Անանունը Գագիկի արքունի պալատ եկած այն շինարարներից էր, որոնց արհեստը դառնում էր նաև արվեստ։ Այդպես ենթադրել է տալիս նրա քաջ իրազեկությունը շինարարական գործերին։ Անանունը նույնպես իր երկը շարադրել է Արծրունի իշխանապետի (Գագիկի) խնդրանքով (այս մասին երկու անգամ վկայում է հեղինակը)։ Թովմայի պես նա ևս ունի քննախույզ և խորագետ միտք, պատմելաոճը հուզախառն է, կենդանի, ավելի պատկերավոր և արտահույզ, բայց չունի Թովմայի ողջամտությունն ու լրջությունը։ Նրա երկն ունի անառարկելի գրական արժանիքներ, որոնք հետևանք են ոչ միայն բերթողական արվեստին տուրք տալու, թագավորի պատվերն ինչպես հարկն է կատարելու, այլև պատմվող նյութը ավելի կենդանի, հյութեղ ու գրավիչ դարձնելու ցանկության։ Անանունը մասամբ կրկնում է իր նախորդին, ջանալով գերազանցել նրան։ Նույն անցքերի մասին վկայաբերում է Թովմայից տարբեր փաստեր։ Թովմա Արծրունին երբեմն, սկսած 851-ից մինչև 902 թթ. հիշատակում է հայոց թվականներ, որոնք արժանահավատ են, նշում է նաև օտար տարեթվեր՝ Հոբելյան, Օլիմպիադա և Ինդիկտիոն, մինչդեռ Անանունի մոտ բացակայում են թվականները, ինչը ստվերում է նրա երկասիրությունը։ Ոճի, բովանդակության կառուցվածքի տեսակետից նույնպես երկու մատենագիրների գործերը տարբերվում են միմյանցից։ Անանունի փայլուն ոճը պայմանավորված է նաև X դարի սկզբներին Վասպուրականում արվեստի տարբեր բնագավառների ծաղկման հետ, որը թույլ է տալիս խոսելու այդ շրջանում Հայաստանում վաղ վերածնության որոշ տարրերի առկայության մասին (հմմտ. Մ. Մկրյան, Վերածնության սկզբնավորման արտացոլումը X դարի հայ պատմագրության մեջ, Բանբեր Երևանի համալսարանի, № 1, 1975)։ Զարթնող ապրող հայ կյանքը գտավ իր արժանավոր մատենագրին՝ ի դեմս Անանունի, որը նույնպես համակված է վաղ վերածնության շնչով և կարողացել է իր երկը դարձնել ժամանակին համահունչ գործ, որտեղ հյութեղ ոճով պատկերված է նաև աշխատանքը։ Արվեստի կոթողներ նկարա-

գրող Անանունի երկը դարձել է գրական արվեստի իսկական դյուցազներգը։

Անանունի մեզ հասած երկասիրության սկզբում պատմվում է Վասպուրականի իշխանապետ Դերենիկ Արծրունու (845—885) կյանքի վերջին տարիներին տեղի ունեցած անցքերի մասին։ Հավանաբար Անանունը Պատմությունը շարադրել է, սկսելով Դերենիկի իշխանապետության շրջանից։ Սա թելադրվում էր որոշակի հանգամանքներով։ Վասպուրականի անկախացման, Բագրատունիներին հակադրվելու ուղղությամբ առաջին լուրջ քայլերը ձեռնարկողը հենց այս իշխանն էր, որի հրահանգով էլ, ինչպես տեսանք, սկսվեց Արծրունյաց առանձին պատմության շարադրանքը։ Առանձնապես հուզիչ է Դերենիկի մահվան առթիվ եղած սգո նկարագրությունը։ Այդ վշտի նկարագրության մեջ զգացվում է պատմիչի մարդասիրական վերաբերմունքը դեպի կին-անհատի անել վիճակն ու տառապանքը։ Դերենիկի մահվան առթիվ կատարվող սուգը կառուցված է վավերական հենքի վրա, թեև չափազանցումները անհերքելի են։ Մատենագիրը կամենում է ցույց տալ, որ Դերենիկի մահը սգում էր ողջ երկիրը, քանի որ անտերունչացավ Հայոց աշխարհը։ Ճշմարտությունը այն է, որ Դերենիկն իրոք մեծ ազդեցություն ուներ Հայաստանում, ուստի նրա մահը մեծ կորուստ էր ոչ միայն Վասպուրականի, այլև բովանդակ Հայաստանի համար։

Այնուհետև Անանունի գործում պատմվում է Դերենիկ Արծրունու ավագ որդու՝ Աշոտի իշխանության և հարակից անցքերի մասին։ Մնացած ինը գլուխները նվիրված են Աշոտի եղբոր՝ Գագիկի գահակալության տարիներին կատարված իրադարձություններին։ Արժեքավոր տվյալներ կան Վասպուրականի թագավորության սկզբի հետ առնչվող դեպքերի մասին։ Խոսելով Վասպուրականում առանձին թագավորություն ստեղծելու շարժառիթների մասին, Անանունը նույնպես թագավորության հիմնադրին՝ Գագիկ Արծրունուն (որի պատվերով է գրել իր գործը) օժտում է բարեմասնություններով։ Անանունի շուրթերին Գագիկն ունի «Հանճարեղ և մեծանուն իշխանս», «Արեգակ՝ աստղերի մեջ», «տեղական և բնատուր տիրող Հայոց» և նման այլ հորջորջումներ։ Մենք տեսնում ենք, թե ինչպես Գագիկ Արծրունին գժտվում է Հայոց Սմբատ Ա թագավորի հետ։ Անանուն պատմիչը գժտության պատճառ է համարում Սմբատ Ա-ի կողմից Վասպուրականի Ամյուկ բերդի խլելը, որը սակայն լոկ առիթ էր Գագիկի և Սմբատի միջև պառակտում մտցնելու համար։ Պատճառը միջնադարին հատուկ ավատական գրգռվածությունն ու անմիաբանությունն էր, որը բխում էր բնատնտեսական հարաբերությունների բուն էությունից։ Հենց ֆեոդալական մասնատվածությունն էր պատճառը, որ Բագրատունիները ի զորու չեղան ստեղծել միասնական, կուռ պետություն։ Նույնիսկ նրանց առանձին մասնավորեց տարբեր արքայական տներ (Կարսի, Տաշիր-Ձորագետի)։ Երկիրը միավորող տնտեսական կենտրոնի բացակայությունը (նույնիսկ հետագայում մայրաքաղաք դարձած «աշխարհահռչակ» Անին չունեցավ այդ դերը) հականերգործում էր երկրի պետական ամբողջությանը։ Ինքնուրույն տնտեսություն վարող իշխանությունն ի վիճակի էր նաև իրականացնել անկախ քաղաքականություն։ Ամյուկի շուրջը եղած միջադեպն այնպես էլ չի հարթվում, և Գագիկ Արծրունին ժամանակավորապես հակվում է Հայոց թագավորի երդվյալ



հակառակորդի՝ Յուսուֆ ամիրայի կողմը։ Անանուն պատմիչը միտված է Գագիկին «Ամենայն Հայոց թագավոր» համարելու։ Սակայն Գագիկ Արծրունին «Ամենայն Հայոց թագավոր» չէր կարող դառնալ, քանի որ Հայաստանի սիրտը՝ Այրարատը, նրա իրավասությունից դուրս մնաց։ Ճիշտ է, նա Այրարատին տիրելու համար որոշ քայլեր ձեռնարկեց (ժամանակավորապես գրավեց Դվինը և այլն), բայց հաջողություն չունեցավ։ Իհարկե, երբ Անանուն պատմիչը Գագիկ Արծրունուն համարում է «Ամենայն Հայոց թագավոր», ելնում է իրական տվյալներից ու շարժառիթներից։ 914-ի աշնանը (Աղթամարի շինարարությունը սկսելուց առաջ և Սմբատ Ա-ի մահից հետո) Մուքտադիր խալիֆան, որի դեմ ապստամբել էր Ատրպատականի Յուսուֆ ամիրան, ջանում է վերջինիս նկատմամբ անկախ դիրք բռնած Գագիկ Արծրունուն ամբողջ Հայաստանի արքայական թագ շնորհելով՝ կապել իր հետ և դարձնել Յուսուֆին հակակշռող ուժ։ Ընդամենը նույն նպատակով, ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, խալիֆան 919 թվին երկրորդ անգամ է թագ ուղարկում Գագիկին (տես Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 209)։ Անանունի մոտ այլ ձևով է տրված Գագիկի թագադրությունը։ Յուսուֆը Գագիկ Արծրունուն Վասպուրականի թագավոր է կարգում մինչև Սմբատ Ա-ի վրա հարձակվելը։ Այս մասին վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին։ Մինչդեռ Անանունը գրում է, թե իբր Յուսուֆը Սմբատ Ա-ի մահից հետո Գագիկին դարձրել է ամենայն Հայոց թագավոր։ Անանունը իրար է շփոթել Յուսուֆի և խալիֆայի կողմից Գագիկին թագ տալու հանգամանքները։ Մնացած դեպքում, երբ գրում է, թե Գագիկը Սմբատի մահից հետո հռչակվել է Հայոց թագավոր, հիմնավորվում է։ Դիտելի է, որ բյուզանդացի ժամանակակից կայսր-պատմագիր Կոստանդին Ծիրանածինը իր «Արարողությունների մասին» գրքում Հայաստանի թագավորների և իշխանների պաշտոնական տիտղոսները հիշելիս միայն Բագրատունյաց և Արծրունյաց (Գագիկին) թագավորներին է հորջորջում «իշխանաց իշխան», իսկ մնացածներին (այդ թվում և Սյունիքի թագավորին) անվանում է սոսկ «իշխան» (տես Կոստանդին Ծիրանածին, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151)։

Անանունը բոլորովին չի հիշատակում Աշոտ Երկաթին, իսկ նրա հաջորդ Աբասին հիշում է (գլուխ Ժ), որպեսզի ցույց տա Գագիկի գերազանցությունը Աբասի հանդեպ։

Սովորաբար Անանունը մեծ գովեստով է խոսում Գագիկի, որպես կառուցող պետական գործչի մասին, քաջ գիտակցելով, թե երկրի տնտեսական ու քաղաքական զարգացման համար ինչպիսի բախտորոշ դեր էր վերապահված ուժեղ, վարչական և քաղաքական մեքենայություններից հնարավորին չափով ազատ միահեծան արքային։ Պատմագիրը Գագիկին դրվատում է նաև Աղթամարում, Ոստանում և այլուր կառուցված կոթողների համար, քանի որ գիտակցում է, թե ինչպիսի եզակի գործեր էին այդ կառույցները։ Այս է պատճառը, որ պատմագիրն իր ուշադրությունը ավելի բևեռել է Գագիկ Արծրունու շինարարական գործերին, քան քաղաքականության ասպարեզում նրա ձեռք բերածին, լինելով շինարարության արվեստի հմուտ գիտակ։ Անանունը տվել է Վասպուրականի ճարտարապետական հուշարձանների ճըշ-

գրիչ ու քանքարան նկարագրությունը մագաղաթին, և այդպիսով ապագային հանձնել մշակույթի ու արվեստի այդ գոհարների ճարտարապետական լուծման, այլևայլ հնարների իրագործումը։ Հեղինակը բանաստեղծական եռանդներով նկարագրում է Ոստան քաղաքի թագավորական դղյակը, Աղթամարում ծավալված շինարարությունը և դրա հետևանքով վեր խոյացած ճարտարապետական համալիրը՝ Ս. Խաչ եկեղեցին, արքայական պալատը և այլն։ Ընթերցելով պատմիչին, զգում ես համաշխարհային քաղաքակրթության այդ գոհարների անանց վեհությունը, շքեղաշուք հորինվածքը, ճարտարապետական ակնահաճո ձևերը։

Անանունի գործում հյուսված պատմության որոշ դրվագներում հառնում է ալեհեր հնությունը, զգացվում միջնադարյան պատմության զարկերակը, հայտանշվում են ժողովրդի պատմական կենցաղի լուսավոր պահերը։ Պալատական շքակարգ ու խարդավանքներ, շինարարական և հասարակական մեծագործություններ, քաղաքական վայրիվերումներ, մի խոսքով դարաշրջանի բովանդակությունը կազմող բազմապիսի երևույթներ տեղ են գտել նրա երկում։

Անանունի երկը կարևոր տեղեկություններ է պարունակում Գագիկ Արծրունու թագավորության վերջին շրջանում Հայաստանի գլխով անցած քաղաքական հողմերի մասին։ Նրա երկասիրությունը վերջանում է Գագիկ Արծրունու գովքով ու նկարագրությամբ, որն այնպես էլ չի ավարտվում։ Անանունը չի հիշատակում Թովմա Արծրունուն, մինչդեռ ծանոթ է Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությանը։ Թերևս իր մատյանի կորած մասերում է տվել Թովմայի անունը։

Անանուն մատենագրի անավարտ Պատմության վերջում կցված է հավելյալ գլուխ, որը գրել են հետագայի գրիչները։ Այդտեղ համառոտակի պատմվում է Վասպուրականի թագավորության պատմությունը՝ Գագիկ Արծրունուց հետո ընկած շրջանում։ Ոչ մի խոսք չի ասվում Գագիկին հաջորդած Արծրունի թագավորների մասին, բացառությամբ Սենեքերիմի։ Հետաքրքիր տվյալներ է հաղորդվում սելջուկ-թուրքերի՝ առաջին անգամ Հայաստան թափանցելու, նրանց նիստ ու կացի, վայրենի բարքերի, ինչպես նաև Արծրունիների 1021 թ. արտագաղթի և հարակից այլ հարցերի մասին։ Որոշ տվյալներ կան նաև Վասպուրականում գոյատևած Արծրունիների վերջին շառավիղների մասին, ընդհուպ մինչև XII դարի երկրորդ քառորդը։ Ընդմին նշանակված են նաև թվականներ։ Այս հավելված գլուխը գրվել է հավանաբար XII դարի կեսերին։ Այդտեղ ընդգրկված ժամանակաշրջանում Արծրունիների՝ Վասպուրականում մնացած շառավիղների գործունեությունը ուներ բավականին համեստ շրջանակներ և նրանց կեցության հիմնական ոլորտն էին կազմում մանավոր, առանձին հարաբերությունները, որոնց միջոցով վեր են հանված վերջին Արծրունիների նաև անձնական բարեմասնությունները։ Չափազանցված գծերով են օժտված նրանք, թեև ժամանակաշրջանին գույն էին տալիս գլխավորապես սուսերը, ավերածությունները և սպանությունները։ Պատմվում է նաև 1113 թ. Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության հիմնադրման մասին։ Այս գլխից հետո կա մի հիշատակարան, որը գրել է Արծրունյաց տան պատմությունը 1303 թ. Աղթամարի Ս. Խաչ վանքում Ստեփաննոս Վարդապետի (իմա՝ Ստեփաննոս Օրբելյանի) խնդրանքով ընդօրինակած Դանիել գրիչը։ Հիշատակագիրը անքողակի պատմում է իր ժամանակ Վասպուրականում տեղի ունեցած որոշ անցքերի, Աղթամարում ամփոփված Սեֆեդինյան (մորական գծով Արծրունի) իշխանների մասին։ Ուշագրավ է, որ արտագրող գրիչը «Արծրունյաց տան Պատմությունը» համարել է իբրև մի ամբողջական երկ։

«Արծրունյաց տան պատմության» միակ ձեռագիրը (որից և ստեղծվել է տպագիր բնագիրը) պահվում է Մաշտոցյան մատենադարանում, ուր կան Թովմա Արծրունու Պատմության նաև ձեռագիր պատառիկներ, որոնք համեմատել ենք տպագիր բնագրի համապատասխան հատվածների հետ։ Թարգմանության ընթացքում ջանացել ենք, ըստ կարելվույն, հարազատ մնալ բնագրին, պահպանել հեղինակների ոչ միայն շարադրելու, այլև մտածելու ոճը, իհարկե, հաշվի առնելով արդի հայերենի բառակազմական, բառահարաբերական և ոճական առանձնահատկությունները։ Հայերենը հատկապես շեշտում է խոսքի մտածողական, իմաստային կողմը, հանգամանք, որն ընդհանուր է թե՛ գրաբարի և թե՛ արդի հայերենի համար։ Հաճախ նախապատվությունը տվել ենք բնագրի իմաստային թարգմանությանը, մանավորապես այն դեպքերում, երբ բառացի թարգմանությունը կարող էր խանգարել հեղինակի մտքի ստույգ վերարտադրմանն ու ընկալմանը։ Երբեմն ստիպված ենք եղել մասնակի ուղղումներով թարգմանել որոշ նախադասություններ, որոնք բնագրում աղճատված են՝ գրչագրական և այլ պատճառներով։

«Արծրունյաց տան պատմությունը» գրական-պատմական հույժ կարևոր հուշարձան է և այն արժեքավոր է ոչ միայն հայագիտության, այլև արևելագիտության համար, քանզի հնարավորություն է տալիս լուսաբանել նաև Արևելքի միջնադարյան պատմության որոշ հարցեր։ Այն չոր ու ցամաք փաստերի սովորական շարադրանք չէ, այլ պատմագիտական և գրական մեծարժեք, և հաճախ գեղարվեստականությամբ շնչող գործ։ Հայ մտաշխարհում այդ երկը գեղեցիկ մի հուշարձան է, որն ունի պատմաճանաչողական նշանակություն։

«Արծրունյաց տան պատմությունը» Մ. Բրոսեի թարգմանությամբ 1874 թ. Պետերբուրգում լույս է տեսել ֆրանսերեն։

## ԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Ինչպես ասել է նախամարգարե Մովսեսը, Աստված իր պատկերի նմանողությամբ ազատ կամք ունենալու պատիվը շնորհեց մարդուն և մեզ՝ հողանյութ էակներիս, սահմանեց որպես տեր իր ստեղծած բոլոր արարածների վրա*։ Նույնն է ասել նաև մարգարեի շնորհք ունեցող Դավիթ թագավորազնը. «Փառքով ու պատվով պսակեցիր նրան, քո ձեռքերով կերտածի վրա նրան իշխան կարգեցիր և ամեն ինչ դրեցիր նրա ոտքերի տակ»**։ Եվ վերևում դասավորված պայծառ լուսատու մարմինների շարժումը ծառայեցրեց մարդուն, ի նպաստ նրա կենսական պետքերի՝ միմյանց բացառող ցերեկվա և գիշերվա գործերին համապատասխան։ Ինչպես ասել է սաղմոսերգուն, «մարդն արևածագից մինչև երեկո գնում է իր գործին ու ծառայությանը»***։ Իսկ փրկիչն ասել է. «Քանի դեռ ցերեկ է, պետք է կատարել գործերը. գիշերը կգա, երբ ոչ ոք չի կարող գործել»****։ Համառոտաբար խոսելու եմ

---

* Հմմտ. Ծնդ., Ա, 26—27, Բ, 7։

** Սաղմ., Ը, 7—8։

*** Սաղմ., ՃԳ, 22—23։

**** Յովհ., Թ, 4։

մարդկանց օգուտի համար սրանց՝ ժամեր փոփոխող երկու լուսատուների շարժումների մասին, ցույց տալու համար հսկայական աստղերի երկնաճեմ ընթացքի հետ միասին [սրանց] պարբերական ժամաստեղծ շրջապտույտ շարժումը, օրերի, ամիսների տևողության, տարիների բոլորման համար, նույնպես և մարդկային սեռի անհատի հետ համեմատելու, գիտության գաղտնիքները գտնելու, թվերը հաշվելու և ժամանակը որոշելու համար։ Ժամանակը ներառում է համայն աշխարհի երևույթներն՝ ըստ չորս նյութերի որպիսության, ըստ տարվա եղանակների, որ հակադիր են միմյանց, և ըստ այդ չորս եռյակի ընթացքում օդի շարժման տարբերության։ Այսեռակի բաղկացությամբ եղանակները տևում են 365 օր։ Այսպես են սահմանել կրթված մարդիկ, որոնք հոգ տարան գիտության, մարդկային կյանքի այլևայլ իմաստների ու հնարների մասին։ Եղան պատվավոր, զորավոր, բարձրազդեցիկ, թագավորներից մեծարված, երևելի ու ընչավետ մարդիկ, որոնք հմուտ էին այսպիսի բաների մեջ, սիրով զբաղվում էին դրանցով։ Նրանք ամեն ինչի ժամանակը դրոշմեցին թվերի տակ, սահմանեցին ժամանակի չափը, հաջորդաբար միատեղեցին ժամանակի 7000 տարիները։ Այս մասին առաջինից ներշնչվեց և ասաց մեծն Մովսեսը, եբրայեցիների մատենագիրը և աշխարհի արարչության մարգարեն, որ հմուտ և տեղյակ էր եգիպտական գիտությանը, երկասիրություններին, ինչպես և արտաքին երևույթների, ժամանակաշրջանների, օրերի ու տարիների մեջ աստղերի կատարած շրջաններին։ Սրանց շնորհիվ նա որոշեց երկրակյաց մարդկանց կյանքի տևողությունն, սկսելով մեր նախահորից։ Ադամը,— ասում է նա,— ապրեց 230 տարի և սերեց Սեթին, և, ապրելով 930 տարի, մահացավ։ [Մովսեսը] գրեց նաև սրանց հետ առնչվող հանգամանքների մասին, նույն օրինակով գրի առավ մարդկանց գործունեության տարբեր եղանակները։ Սրա նման քաղդեացի իմաստուններ ոմն Բերոսոս[2] և Աբիդենոս[3], որոնք ժամանակով շատ հեռու չէին Մովսեսից, գրի առան և քաղդեական պատմության մատյաններում դրոշմեցին մարդկային սեռի գործունեությունը։ Սրանցից բացի ուրիշ մատենագիրներ բազում դժվարություններով հետազոտեցին և գրեցին մեզնից առաջ եղածի մասին, թե աշխարհակալ թագա-



վորներից ովքե՞ր, ինչքա՞ն ժամանակ ապրեցին և տիրեցին, ո՞ր մեկից առավել հոգ տարավ աշխարհի մասին։ Ցույց տվեցին պատերազմների ու խաղաղության կարգը, հաղթությունները ու պարտությունները, առաքինիների ու թույլերի փորձությունները, քաջերի ամրասրտությունն ու երկչոտների թուլամորթությունը, գիտունների ու անգետների ներհակությունը, խելացիների և կարճամիտների անհամատեղելիությունը, աշխարհը բարեշինողների կամ նրա մասին ոչնչով հոգ չտանողների՝ չարիքներ անելու ցանկությունը։ Նաև այն, թե ինչպես էին մարդիկ ապրում, հետևում մարմնականին կամ նախապատվություն տալիս հոգուն և հոգ տանում երկնային կյանքի մասին, երբ քարշ էին գալիս երկրի վրա։ Այլև յուրաքանչյուրի մասին, որ հաջորդեցին միմյանց և հնազանդեցնելով ժողովուրդներին, տիրեցին աշխարհին կամ, որոնք գիտվածով հասան այդ պատվին. իսկ ուրիշները իշխանությունից ու ընչավետությունից հղփացած՝ խլեցին այս աշխարհի փառքը։ Իսկ ոմանք էլ տիրոջ շնորհիվ բարձրացան գահին, ինչպես Դավիթը, Հեսուն և ուրիշներ, որոնք մեզ հասան։ [Գիտունները] որոշեցին անունները, ժամանակները, ինչպիսին լինելը, ճշգրտապես կանոնելով, սահմանեցին ըստ թվերի. պատմագրքերում, առանձին-առանձին գրի առան զանազան ժողովուրդների ու լեզուների մասին, եկեղեցին այլևայլ իմաստություններով լրացնելու նպատակով։ Որպեսզի իրենցից հետո ովքեր ուսման ու գիտության հանդեպ սեր ունենային, կարողանային ավելի խելացի, ուսումնասեր մարդկանցից դյուրությամբ, առանց դժվարության վերցնել իրենց որոնածը։

Ով արդ, ես գրում եմ, քո պահանջով, Արծրունյաց տեր և Վասպուրականի իշխան Գրիգոր[4], ընդունում եմ քո հրամանն ու պատվիրանը, ինչը թելադրված է քո բաղձանքից՝ մատյանների հիշատակարանների մեջ մտցնել քո նախնիների տոհմաբանությունն ու որպիսությունը, հերթով, թվականներով տալ յուրաքանչյուրի որդիների մասին և հասցնել մեր օրերը, ցույց տալ նաև Հայաստանում արաբների[5] տիրապետության ժամանակ կատարված անցուդարձերը։ Քո հրամանով, առանց հապաղելու, հնազանդորեն ձեռք եմ զարկելու գործին և ըստ իմ կարողության, համառոտաբար այս պատմության մեջ եմ մտցնելու ավելի կարևոր ու վայելուչ անցքերը։ Ըստ տեղի և

հանգամանքների, բացահայտելու եմ նաև ավելի հին հիշատակարաններից և մեր բնիկ տերերի՝ Արծրունիների տոհմի հին պատգամներից փոքր-ինչ մնացածը, որպեսզի հայտնապես երևան արիությունները ու առաքինությունները, ըստ անունների, տեղերի ու ժամանակների։ Քննեցի ավելի կարևոր մտքերը՝ խոսքերս կարգավորելու համար, որպեսզի ցույց տամ, թե ովքեր էին, ե՞րբ, որտեղի՞ց, ո՞ւր և ինչո՞ւ եկան, որքա՞ն մնացին, ինչպիսի՞ք էին, ինչպե՞ս ապրեցին, ինչի՞ համար պիտանի եղան։ Այլև նրանց մղած պատերազմների ու հաղթությունների մասին, հաղթեցի՞ն, թե պարտվեցին, կամ մի մասն էլ հաճությամբ օգուտներ տվեցին իրենց ու մերձավորներին։ Սրանց վերաբերող և գրի առնված պատմությունները ամփոփելու ենք այս մատյանում։ Մեր կարողության չափով օգտվել ենք հին, մարգարեների և Քրիստոսի եկեղեցու նոր վարդապետների պատմագրքերից, ինչպես նաև չանասեր ու մտացի օտար պատմագիրներից, որոնք գայակի պես հող տարան, որպեսզի հետևենք ավելի համեղ, ավելի կարևոր, առողջարար ու չխարդախված սնունդ ճաշակելու։ Նրանք մեզ հասունացրին, առնականացրին, հասու դարձրեցին գիտությանը, ուսմանը, աստծո հանդեպ երկյուղածությանը, խելացիությանը, այն կյանքի լավագույն ու մնայուն ընչավետությանը և այն աշխարհին։ Այս պատմության մեջ քեզ՝ ուսումնասերներից լավագույնից կպատմեմ նրանց մասին, ովքեր Քրիստոսի համար քաջությամբ պատերազմելով, երկրի վրա կանգնեցրին երկնահաս հաղթանակ ու որոնց աղոթքներով տերը ինձ կօգնի այս մատյանում գրելու շիտակ ու ճշմարիտ խոսքեր, սուրբ հոգու առաջնորդությամբ, Քրիստոսի խորհուրդներով, ի հաճույս քեզ և քո նմանների։ Ողջ լինե՛ք, տեր Քրիստոսի շնորհիվ։ Ամեն։

# ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

## Ա.

Ծանր աշխատանքի գնով է հնարավոր հայտնաբերել Արծրունյաց տոհմի ազգաբանության շարքը, շատ ժամանակներ անցած լինելու և Հայաստանում գրատներ չլինելու պատճառով։ Բայց քո մեծության հարկադրող հրամանը մեզ ստիպեց փութալ, գտնել, և ինչպես կարգն է, գրել՝ այս գրքում հայտնի դարձնել քո ցանկացածը, մտցնել ժամանակագրության կարգը և մեր կարողության չափով ու տքնաջան աշխատանքով փնտրել գտնել հավաստին։ Վերցրել եմ ինչն արժեքավոր է հին պատմությունների գրավոր մատյաններից և անցյալի բազում պատմություններից՝ սկսած Ադամից մինչև մեր ժամանակները։

Եվ որովհետև տասը ժողովուրդների մասին անսուտ կերպով գրվել է բոլոր պատմագրքերում, ապա անհրաժեշտ է, որ մենք, ինչպես կարգն է, ցույց տանք Նոյից հետո ժողովուրդների շարունակվող ճյուղավորումները, աշխարհում ցրված ցեղերի տեղն ու գիրքը։ Մեջ կբերեմ, թե աշտարակաշինությունից հետո բազմազան լեզուներով խոսող որ ցեղից աճեցին Արծրունյաց տոհմի սերունդները։ Եվ որովհետև երեք սերունդների, այսինքն Նոյի որդիների մասին, ինչպես հարկն է գրվել

է բազմաթիվ գրքերում, ուստի հարկավոր չէ որ մենք կրկնենք նույնը ընդարձակաբար։

Եվ արդ, հետևելու եմ Եվսեբիոսի[6] այլևայլ եղանակներով կատարած քննություններին, Աֆրիկանոսի հավաստիացմանը, Մովսես քերթողին* և նախ գրելու եմ ժողովուրդների ճյուղավորման մասին։ Սկզբից ևեթ կասկածելու եմ իմ գտած նոր ու զարմանալի բաների նկատմամբ, տեղեկություններ եմ վերցնելու նաև ուրիշների քննողական աշխատություններից, որպեսզի դուրս մնան տարակուսելի մտքերն ու քննությունները, որոնք չէին վրիպի քո մտացի և իմաստալից հմտություններից։ Արդ, պատմությունն այսպիսին է։

Նոյը սերում է երեք որդիների՝ Զրվանին, Տիտանին և Հապետոսթին, որոնք են Սեմը, Քամը և Հաբեթը։ Սեմը սերում է Եղամին, Ասուրին, Արփաքսաթին, Արամին և Ղուդին։ Ասուրը կառուցեց Նինոս քաղաքը, որը Նինվեն է և անվանվում է Առաջին Ասորիք։

Իսկ Քամացի Նեբրովթը կառուցեց Բաբելոնը՝ առաջին քաղաքը, և առաջինը թագավորեց երկրի վրա։ Եվ որովհետև Բաբելոնը բաժին էր ընկել Սեմին, Նեբրովթը բռնությամբ տիրացավ նրան, այնտեղ հաստատեց եթովպացիների թագավորությունը։ Իսկ Սեմի որդի Ասուրը կառուցեց Նինվեն՝ Ասորեստանի թագավորանիստ քաղաքը։

Արդ, ինչո՞ւ են ասում, թե բազում ժամանակներ հետո Շամիրամի ամուսին Նինոսը, որից սերվեց Նինուասը, կառուցել է Նինվեն։ Նրա սերունդները աճելով հասել են մինչև Սենեքերիմ[7] թագավորը, եբրայեցիների թագավոր Եզեկիայի[8] և մեր Հարամայիսի ժամանակները։ Ինչպես թվում է ինձ, դյուրին ու պատշաճ չէ անտես անել այս խնդրի պատճառը։ Անհրաժեշտ է լիովին հայտնի դարձնել և ստուգությամբ գրել, թե Ասուրը, որ կառուցեց Նինվեն, արդյոք Սեմի որդիների՞ց էր և Նինոսի պա՞պը, որտեղի՞ց էր Նեբրովթը կամ արդյոք Արծրունյաց տոհմը Սեմի սերունդների՞ց է, թե՞ Քամացի Նեբրովթի։ Որովհետև, ինչպես գրում են, Ասուրը, որ սերում էր Սեմից, կառուցել է Նինվեն, իսկ Սենեքերիմը ժառանգաբար թագավորել է Նինվեում և անվանվել Ասորեստանի թագավոր։ Այս մասին մեզ

* Ի նկատի ունի Մովսես Խորենացուն։



հավաստապես պատմում են Եվսեբիոս Կեսարացին, Հուլիանոս Հալիկառնասացին[9], որոնք ստուգությամբ և հաստատ սահմանել են, որ Ասորեստանի թագավորները սերում են Սեմի որդուց։ Եվ պատմությունն այսպիսին է. Տիտանը[10] բռնացավ Զրվանի[11] վրա, գրավեց Բաբելոնը և այնտեղ կառուցեց իր թագավորանիստ քաղաքը։ Զրվանը Քսիսութրոսի[12] հինգերորդ սերունդն էր։

Իսկ Ասուրը, որ երրորդն էր Սեմից հետո, առաջինը կառուցեց Նինվեն։ Մինչդեռ Նինոսը Սեմից ու Քամից հետո տասներորդն էր։ Նինվեն իսկապես Սեմի բաժինն էր, իսկ Նինոսը, ինչպես ստուգությամբ ասել են Արիստոնիկոս Քաղդեացին, Եվսեբիոս Կեսարացին, Մովսես Խորենացին և Հուլիանոս Հալիկառնասացին, սերում էր Քամից։ Կռոնոսը[13] կնության էր առել Ռեային՝ Զրվանի տոհմից և տեր դարձել թագավորությանը, իսկ Զրվանը երդմամբ խոստացել էր, որ ոչ ոքի թույլ չի տա թագավորել, մինչև որ Ռեա կնոջից, որը Զրվանի զարմից էր, արու զավակ ծնվեց, բայց ծննդից անմիջապես հետո մահացավ։ Իսկ Դիոս անունով մանկանը մայրը պահում էր ծածուկ, ինչպես բազում ժամանակներ հետո՝ Մովսեսը Եգիպտոսում։ Այն ժամանակ այնտեղ Զրվանի ահից ոչ ոք չկարողացավ թագավորել, բացի Դիոնեսիա անունով մի կնոջից, որը ուժեղ էր և ուներ վավաշոտ վարք։ Սա իր պապի՝ Սեմի անունով իրեն անվանում էր Սեմիրամ, որը հայերեն լեզվի հնչյուններով արտասանվում է Շամիրամ։ Բելյան Նինոսը մտերմացավ և կնության վերցրեց սրան։ Շամիրամն ամրացավ իրենց ընիկ քաղաքում՝ Նինվեում։ Նինոսն իր կնոջ՝ Շամիրամի փոխարեն հաշվվել է Ասորեստանի թագավորների թվի մեջ, որովհետև թագավորների ու օրենսդիրների համար ընդունված էր կանանց դասել ոչ թե ազգաբանության շարքը, այլ միայն ժամանակագրության մեջ, ինչպես Գոթողիան[14] Իսրայելում և Կլեոպատրան[15] Պտղոմեոս Դիոնիսոսի դուստրը, Եգիպտոսում։ Մեզ համար կբերեմ շատ հայտնի օրինակ։ Մատթեոս ավետարանիչը, գրել է փրկչի՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի ազգաբանությունն ըստ անձանց և մեկ առ մեկ թվել է բոլորին։ Սկսել է Աբրահամից և հասցրել մինչև Հովսեփը, սակայն Մարիամին չի մտցրել ազգաբանության մեջ։ Չնայած Հովսեփը ոչ մի մասնակցություն չուներ Քրիստոսի ծննդյանը, բայց,

ինչպես ավելի վերևում ասացի, մտել է ազգահամարի մեջ՝ իր կնոջ Մարիամի փոխարեն, որովհետև ընդունված չէր կանանց սեռը դասել ազգաբանության շարքը։ Նույնը կգտնես նաև Ղուկասի ազգաբանության մեջ*, ուր սկսված է վերջից, ինչպես ինքն էր կարծում, Հիսուսից, Հովսեփից, Հակոբից, Հեղիից և ապա շարունակում մյուսներին, մինչև սկիզբը։ Նույն ձևով Շամիրամ [անունով] կինը, որ Սեմի տոհմից էր և ամուսնու՝ Նինոսի հետ ժառանգաբար թագավորեց Ասորեստանում, գլուխ բարձրացրեց Նինոսի, որպես օտարի դեմ, որն իբր պանդուխտի պես եկել էր Սեմից սերող Շամիրամի թագավորությունը։ Սրան կավելացնենք նաև նրա վավաշոտ ցանկասիրության մասին գրվածը։ Բայց, ինչպես հայտնի է, Շամիրամը Ասուրի և Սեմի սերունդներից ժառանգեց Ասորեստանի իրենց բնիկ տերությունը և թագավորեց։ Ապա [թագավորները] միմյանց հաջորդեցին և հասան մինչև Թոնոս Կոնկողեռոսը,[16] որից 88 տարի հետո Սենեքերիմը հզորապես նստեց իր նախնիների թագավորության գահին, գրավեց Բաբելոնը, կառուցեց Տարսոնը՝ Բաբելոնի նմանությամբ։ Քաղաքի միջով հոսում է գետը, ինչի մասին առանձին կգրեմ հետո։ Այնուհետև Սենեքերիմի որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը սպանեցին իրենց հորը և ուժեղ զորագնդով եկան Սիմ լեռը[17], որն իր անունն ստացել էր իրենց նախահայր Սեմի անունից։ Նույն կերպ պարսկերեն լեզվում Զրվան անունից կոչում են Զարավանդը[18]։ Նրանք ապրեցին Սիմ լեռան վրա, մինչև Տիգրան Հայկազնը։ Քանի որ Նեբրովթը Սեմի սերունդների վրա բռնանալիս ավերել էր Նինվեն և նրա փոխարեն կառուցել Բաբելոնը, երբ Նինոսը դարձավ թագավոր, գրավեց Բաբելոնը, վերաշինեց Նինվեն և այնտեղ տեղափոխեց Ասորեստանի թագավորական աթոռը։ Նույն կերպ Մեստրիմը՝ Քամի որդին, հեռացավ իր ցեղից ու երկրից և բարեշինեց Եգիպտոսը։ Ապա ասորեստանցիներն այնտեղ զորացան իբրև տոհմապետ և թագավորեցին ինքնուրույնաբար։ Նինոսին, Շամիրամին, Աբրահամին և եգիպտացիների 16-րդ հարստությանը կգտնես նույն շարքում Հուլիանոս Հալիկառ-

* Ղուկ. Գ, 23։



նասացու չորրորդ դպրության, ինչպես և Մովսեսի չորրորդ դպրության[19] մեջ։

Իսկ Նինոսը և Շամիրամը տիրելով ասիացիներին ու եգիպտացիներին, դարձրին հարկատու հպատակներ, բայց [տեղացի] ցեղերին չզրկեցին երկիրը պայազատելուց։ Այս փոքրիկ բաժինը գրեցի միայն ազգատոհմերը ճանաչելու համար։

Արդ, քանի որ խոսքերիս կարգը հասցրեց այս խնդրին, անհրաժեշտ է նախ իմանալ, թե քաղդեացիների մատենագրության, սուտ հրամանով գրված գրքերի մեջ ինչպես են հաշվել տասը նահապետներ, որոնց առանձնացրել են և փոխել անունները։ Նույնպես և ժամանակն են երկարացրել անհամար տարիներով, ինչը ոչ մի կերպ չի ապացուցվում՝ ո՛չ արեգակի շարժմամբ և նույն շրջանում, ամիսների ու տարիների, տարվա չորս եղանակների փոփոխմամբ և ո՛չ էլ լուսնի լրմամբ կամ նվազմամբ։ Թեև նրանց գրածները համարվում են անստույգ, բայց ճշմարիտ շատ բաներ են ասում, նաև ամենից առաջ նրանք են հնարել գրերը, չնայած հույները պարծենում են Պաղամեդեսով[20] և երբեմն տարբեր ժողովուրդների մատյաններից ի մի հավաքելով և հունարենի թարգմանելով։ Այսպիսի միտում ունեն ուրիշների հաղորդած ավելի հին տեղեկությունների նկատմամբ, բայց ո՛չ իրենք և ո՛չ էլ ուրիշների միջոցով ի վիճակի չեղան հնարել գրերը, [թեև] իրենցից առաջ, բացի բաբելոնացիներից, ոչ ոք այդ չի արել։ Իսկ հույների համար ավելի ուշ գրեր հնարեց ինչ-որ Կադմոս[21] փյունիկեցի։ Մենք զանց չառանք այս և ջանացինք քննողաբար հասու լինել դրան, բայց այստեղ պետք է մի փոքր ընդհատենք մեր պատմությունը, որպեսզի սուտ ասածների միջոցով ուսումնասիրենք օտարների գրած հին պատմությունները և ապա շարունակենք մեր խոսքը։

Ինչպես ասվում է, ասված արևելյան կողմում՝ Եդեմի մեջ տնկեց պարտեզ, այսինքն երկրի արևելակողմը, իսկ նրանից անդին, դեպի արևելք, մարդկանց բնակության մասին չի խոսվում։ Այդպիսով ասվում է, որ պարտեզը դրախտի արևմուտքում էր կամ նրա մեջ, ինչ-որ տեղ։ Իսկ դրախտի անչափ մեծությունը երևում է հորդահոս աղբյուրի ուժգնությունից, ինչը ոռոգում էր դրախտը և ընկղմվում երկրի տակ, ապա բա-

ժանվում չորս մասի և աներևույթ աշխարհից անհաղթելի ու զորավոր հոսանքով դուրս էր գալիս տեսանելի աշխարհ։ Իսկ ո՞վ կարող է մարդկային խոսքով արտահայտել [դրախտի] գեղեցկության անհասանելիությունը, ինչպես նաև աստծո ստեղծած ծառերի հաճելի տեսքը։ Անհասանելի բաների շնորհիվ [աստված] մարդուն պսակեց փառքով, պատվով և իշխանական ճոխությամբ, վայելել տվեց դրախտը, շնորհեց կյանքի բազմամյա սահմանն իբրև մեկ օր։ Կարիք չէին զգում ո՛չ դրսից եկած լույսի, որը երեկոյանալիս կմթներ, ո՛չ դանդաղասահ արեգակի՝ աստծո լուսափայլ ստեղծածի, որը հեռանում է երեկոյանալիս և սկզբում լինելով առաջին կարգում, փոխվում է երկրորդական վիճակի։ [Կարիքը չէր զգացվում] նաև հեզուկ կերակրի, որը պիտի լրացներ անապականի նվազած ունակությունները, նրա, որը քիչ փոքր էր հրեշտակներից։ Որովհետև տերն ասում է՝ «Գործել և պահել», բայց ոչ թե ամեն ինչով կատարյալ դրախտի լիության կամ վնասատուներից այն պահպանելու, այլ արդարությամբ գործելու և նրա պատվիրանը պահելու համար։ Որովհետև քիչ դժվարությամբ ընծայաբերողը կարժանանա ավելի բարձր պատվի, համաձայն ասվածի, թե՝ «քիչ բանի մեջ հավատարիմ լինելով», կտիրանա ոչ միայն [կենաց] ծառին, այլև կհասնի երկնային բազմերջանիկ կյանքի։

Բայց [Եվան] հրապուրվեց խաբվարար վիշապից, որը մեծ խարդախությամբ ու չարությամբ իր խրատի թույնը առատաբար լցրեց անզգամ կնոջ ականջը։ Դրանով ոտքի կոխան արեց արարչի հանդեպ եղած սերն ու երախտիքը, նույնպես և նրա պատվիրանը. միացավ սպանողին, ինչի համար պատշաճում է նրան նենգավոր և անմիտ անվանելը։ Չգոհացավ իր մայրությամբ և ոչ էլ հրաժարվեց պտուղն ուտելուց։ Այլև ձգտում էր աստվածային փառքի. կամեցավ ապերախտությամբ տիրանալ նաև արարչի պատվին, ինչի պատճառով վնասվեց նաև նրան հրապուրող բանսարկուն։ Կնոջ առաջին ճաշակման պատճառով աստված նախապատվությունը տվեց տղամարդուն։ Վա՜յ, հույժ խարդախ այն խրատին և հիմար համաձայնությանը, որով նա անտեղյակ եղավ իր հողանյութ

* Մատթ., ԻԵ, 23։



շաղվածքին, կամեցավ թիկունք դարձնել վսեմ աստծուն և արարչին, որ՝ ամենատես հրամանով խոնարհաքայլ ցածիջավ կորուսյալին փնտրելու համար։ Նա գուշակեց մտերիմ գալուստը և ընտանի ձայնով կանչեց. «Ո՞ւր ես, Ադամ»։ Թերևս հույս ուներ հոգ տանել նրա մասին։

Իսկ Ադամը, նույն ժամանակ մեղքերի ուղղակի ապացույցից թուլացավ, պարտվեց և աստծուն հայտնեց պատճառը, ասելով. «Այն կինը, որին տվեցիր ինձ հետ լինելու համար, ծառից ինձ տվեց և ես կերա*»։ Եվ Ադամն իր նմանին ու օգնականին ասաց. «Ի՞նչն է պատշաճում կնոջն արդարացնելու համար, եթե ոչ պատճառ դարձնել օձին, որը ամենավատթար կենդանին է։ Ուստի մեղքերն ու ծանր անեծքները ըստ կարգի նախ օձի և ապա կնոջ համար են։ Ինչպես սովորեցնում է [Սուրբ գիրքը], օձի հանցանքի համար պետք է դատապարտել ոչ միայն իրեն, այլև հատկապես չարություն հնարողին։ Այս առիթով կասենք, որ բարուց ոչ մի կերպ չբուժվողը, որ ազնիվ ոչինչ չունի իր մեջ, որպեսզի վատին ոչնչացնի անեծքով, ինչպես նաև այն կենդանին, որի մեջ ոչ մի բարի բան չկա և որովհետև միշտ մնում է չար, պետք է տառապի առանց մեռնելու։ Օձի մասին սքանչելապես սովորեցնում է Փիլոն Ալեքսանդրացին[22]։ Խարդախության այս դիպվածից առաջ ամեն տեսակի շնչավորներն ունեին բազմազան նշանակություն։ Իսկ մարդը կարողանում էր ըմբռնել նրանցից ամեն մեկի բնությունը և այնուհետև նզովքների շնորհիվ երբեմն ի վիճակի էր լինում հասկանալ թե՛ չարի, թե՛ բարու նշանակությունը։ Մարդու մեջ եղած մարգարեական ներշնչումն այն ժամանակ ոգեկոչում էր, օժանդակում ապաշխարանքներով վերացնելու սխալները։ Այն օգնում էր նաև զգայություն ունեցող, ինչպես նաև չնչին զգուշավորությունից զուրկ կենդանիներին։

Եվ տեր աստվածը նրան դուրս հանեց Եդեմի պարտեզից, որպեսզի գործի երկրում, ուսկից նա վերցվել էր։ Ի՞նչ է մնում մեզ անել, եթե ոչ ողբագին հառաչել, որ աստծո երանելին թողեց այս մեղսամած աշխարհը ,ընկավ տաժանալից դրության մեջ և փոխվեց անել ու խղճալի կացության։ Աստծո պատկե-

* Ծննդ., Գ, 12։

րի սովերով վեր ելածը նվաստացավ։ Նա, որ հաղորդակից էր անմահ կյանքին, հող դարձավ անիծվածի պատճառով. նա, որ տեր էր կարգվել, տարվեց պես-պես չարագործություններով և դարձավ իր ախտերի ծառան և իրեն ու իրենից հետո ժառանգներին թողեց վշտագին կյանքը՝ մահվամբ հանդերձ և ցավերով ծննդաբերություն։ Այստեղ անհրաժեշտ էր ուրիշ ողբակիցների հետ ավելի երկար ողբ անել և բարձր ձայնել մարգարեական խոսքերը. «Մարդը, որ պատվի մեջ էր և չհասկացավ, հավասարվեց, նմանվեց անբան անասուններին»*։

Սրանից հետո Ադամը մտավ իր կնոջ՝ Եվայի մոտ։ Սա հղիացավ ու ծնեց Կայենին, որին համարեց աստծուց ստացած, բայց ոչ արժանավոր ժառանգ։ Ծնվեց նաև Կայենի եղբայր Աբելը, որին աստվածային, վաղորոք արված ներշնչմամբ հռչակեց իրեն ժառանգ, որպեսզի հորն սպանողը մահվան պատուհասն իր աչքերով տեսնի։ Եվ ինքը կերպագրեց Կայենից սպանված որդու պատկերը։ Ասված է, թե «ով որ Կայենին սպանի, նրանից յոթնապատիկ վրեժ կառնվի»։** Արդյոք մեղքերի պարտքի յոթ լինելո՞ւ, թե՞ ահավոր հանդիմանությունները ավելանալու իմաստով պետք է հասկացվեն աստծո ասածները, որոնք լցված են արդարադատությամբ՝ լծակից ունենալով ողորմածությունը։ Այս մասին, եթե մեկին լավ թվա, կասենք՝ որովհետև այն վայրենին վարակվեց յոթնապատիկ ախտերով, որպեսզի չարիքներ գործի, թեև ինքը երևալու է միակերպ։

Առաջին՝ որովհետև Կայենը ինչ-որ ժամանակ հետո եղավ, ոչ գլխավոր, հետին ու անկարևոր էր և արատավոր։ Ինչպես ասված է՝ եթե ուղիղ ընծայես և ուղիղ չբաժանես, կմեղանչես։ Այնուհետև Աբելն իր խոշոր և պարարտ ոչխարներից ընծա բերեց աստծուն***։

Երկրորդ՝ չարասեր, աներկյուղ ու նախանձոտ բնավորությունը՝ թե ինչու աստված նրա ընծային էլ նույն աչքով մտիկ չարեց։

Երրորդ՝ վայրենի նենգությունը, որով ծնողների աչքից հեռացրեց, առանձնացրեց և սպանեց իզուր։

* Հմմտ. Սաղմ., ԽԸ, 13։
** Ծննդ., Դ, 15։
*** Ծննդ., Դ, 4։



Չորրորդ՝ որովհետև եղբայրն էր և ոչ թե օտար, սակայն ոչ աստծո երկյուղը և ոչ էլ իր բնական գութը չկարողացան թուլացնել արյունարբու գազանի ձեռքը։

Հինգերորդ՝ որովհետև ծնողներին համակեց հույժ դառն ու լլված սգով։

Վեցերորդ՝ որովհետև չարագործության խավարով ծածկեց իր հոգին, մինչևիսկ աստծուն էլ անգետ կարծեց և ատրծո այն հարցումին, թե՝ «ո՞ւր է քո եղբայր Աբելը», պատասխանեց առանց ամաչելու. «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահապանն եմ»*։

Յոթերորդ՝ որովհետև երբ տիրոջից լսեց հատուցման վճիռը, չզարհուրեց և ետ չդարձավ՝ արտասուքներով մեղքերը ջնջելու։ Այլև պատժի վճիռն ինքն իր բերանով հաստատեց։ Ապաշխարող ու արդար հռչակված նահապետների ճյուղագրության մեջ չմտածը դուրս եկավ տիրոջ մոտից և սին տառապանքներով կառուցեց քաղաք։

Ադամը ապրեց 230 տարի և սերեց Սեթին, որի անունը հների լեզվով թարգմանվում է «Արբումն»։ Հին իմաստասեր ու վարդապետ Փիլոն Ալեքսանդրացին այն մեկնում է «ըմպարբի»։ Կանխատես հայրն այդպես է ասել, թերևս մարդկանց սնելու, աճեցնելու, բազմացնելու պատճառով։ Թեև Ադամն ուներ բազում այլ ուստրեր և դուստրեր, բայց նրանք արժանի չէին աշխարհի հոր ժառանգներ լինելու համար։ Սրան պետք է ավելացնել նաև այն, որ նա սերել էր ըստ իր պատկերի։ Եվ ապա Ադամն ասաց. «Աստված ինձ Կայենի սպանած Աբելի փոխարեն ուրիշ զավակ տվեց»**։

Սեթը դարձավ 205 տարեկան և սերեց Ենովսին, որն ապավինեց աստծուն։ Իսկ ինչպե՞ս թևավորվեց ու քաջալերվեց այս պատճառով։ Սեթի որդին իր հորից սովորեց նաև ապավինել աստծո որդուն։ [Հայրը] նրան պատվիրեց չմերձենալ անիծյալ զավակ Կայենին։ Դրանով նա ճանաչեց աստծո հոգացողության արժեքը և առավել հուսաց, որ աստծո աչքն իր վրա կլինի։

Ենովսը դարձավ 106 տարեկան և սերեց Կայնանին։ Կայ-

* Ծննդ., Դ, 9։
** Ծննդ., Դ, 25։

նանը դարձավ 170 տարեկան և սերեց Մաղաղիելին։ Սրա 135-րդ տարում վախճանվեց Ադամ նախահայրը, որն ապրեց 930 տարի։ Այդ պատճառով աստված նահապետներին տվեց երկար կյանք և բնակեցրեց դրախտին դեմ հանդիման, սովորեցրեց ապաշխարությամբ ավելացնելու իրենց կյանքը։ [Տերը] սովորեցրեց նրանց՝ ոչ միայն իրենց, այլև համայն մարդկության համար լինել արդարության ու պարկեշտության օրինակ, սրտանց ճանաչել աստծո երկյուղը, կարգավորել մարդկանց միջի բնական օրենքները, որպեսզի ինչպես իրենք, այնպես էլ ուրիշները սովորեն հրաժարվել ագահությունից, ինչը անկման պատճառ դարձավ առաջին մարդու համար, որ հիմարաբար կամենում էր աստվածանալ։ Որովհետև սրբերն իրենք էլ են ասել, թե ինչպես որ բոլոր սրբերն ստացան հայրենի ժառանգությունը, նույն կերպ վարվեցին հայրերը, որդիներին ավանդելով պահեցողության անհրաժեշտությունը։ Այդտեղից և այս ստացվածքներն ինչպես կարգն է պահպանվեցին մեզ համար։ Աշխարհը [բնակիչներով] լցնող նահապետների մասին կարելի է շատ խոսել, բայց այժմ շարունակենք մեր ասելիքը։

Մաղաղիելը դարձավ 165 տարեկան և սերեց Հարեդին։ Հարեդը դարձավ 162 տարեկան և սերեց Ենովքին, որը պարգև ստացավ աստծո ծայրագույն շնորհները և իր կենդանության ժամանակ վերադասվեց անմահների շարքը։ Սա մահից առաջ ճանաչեց աստծո համայնաշինչ զայրույթը՝ մոլորված ու անհնազանդ ցեղի որդիների վրա, որոնց խելքը չկտրեց անսալ սուրբ նախահայրերի պատվիրանը։ Սրբերից մեկը վկայում է, որ Ադամից հետո ութերորդը՝ Ենովքը մարգարեացավ և ասաց. «Ահավասիկ եկավ տերն իր բյուրավոր հրեշտակներով, ամենքի դատաստանն անելու և բոլոր ամբարիշտներին հանդիմանելու՝ իրենց անօրեն արարքների համար»*։ Այստեղ նկատի է առնում նաև հայհոյասեր բնավորությունը, ինչպես և [աստծո] նկատմամբ մեղավորների ու անօրենների բոլոր չարախոսությունները։ Եվ որովհետև եթե յոթերորդին [մեկն] ավելացնենք, կլինի ութերորդ, ուստի ինձ թվում է, թե արդար

* Հմմտ. Յուդ., 14—15։



Աբելն էլ է դասվել այս շարքում։ Բայց չի դասվել ծննդաբանության մեջ, որովհետև զավակ չուներ։

Արդ, Ենովքը դարձավ 165 տարեկան և սերեց Մաթուսաղային, որի հետ ապրեց 200 տարի և փոխվեց անմահության՝ Ղամեքի 33-րդ տարում։

Մաթուսաղան ապրեց 165 տարի և սերեց Ղամեքին։ Ղամեքը ապրեց 188 տարի, սերեց Նոյին, նրա հետ ապրելով 565 տարի, մինչև տապանը պատրաստելը։ Նոյը 500 տարեկան էր, երբ որդիների հետ հրաման ստացավ շինել տապանը։

Այստեղ Մովսեսը աստծո բերանով գրում է աստվածային լավագույն բաներ՝ ամբարիշտների բազմաթիվ ամբաստանությունների մասին, ցույց է տալիս յուրաքանչյուրի հասցրած վնասները։ Որովհետև,— ասում է նա՝ «Աստծո որդիները, տեսան մարդկանց դուստրերի գեղեցկությունը և կնության առան բոլոր իրենց ընտրածներին»*։

[Աստված] նրանց պատվիրեց հեռու կենալ նրանցից, որով հայտնի դարձրեց նրանց գեղծագործ ապականությունը, հուսակորույս եղավ, որ նրանց հանդեպ ցուցաբերել էր սիրո պատիվը, համարել էր իր որդիները։ Այստեղ, այնտեղ վերացրեցին բնական կարգը, դեմ գնացին աստծո հրամանին, և երկիրը միանգամից ապականվեց նրանց գործած բազմապիսի չարիքներից։ Որովհետև ասում է. «Բազմացավ մարդկանց չարությունը երկրի վրա, և ամեն մեկը իր սրտում մտածում էր չարության մասին»**։ Ապա կրկին տեր աստվածը նայեց երկրին, որն ապականված էր, քանզի ամենայն մարմին, շարժվելով ոչ թե բանականությամբ, այլ իբրև վայրենի երամակ, տեսակ-տեսակ անառակություններով, ապականել էր իր ճանապարհը երկրի վրա։ Շրջում էին դրսում, ապավինում էին իրենց մարմնեղությանը, ապերասան էին, բազկի զորությամբ դոռոզացած։ Հոգ էին տանում ոչ թե պատշաճի մասին, այլ գերազանցապես վատթարի մասին։

Ուստի աստված զղջաց մարդուն ստեղծելու համար***։

Եվ իր սրտում տրտմեց։ Նա, որ իրենց գոյություն ունե-

* Ծննդ., Զ, 2։
** Ծննդ., Զ, 5։
*** Ծննդ., Զ, 6։

նայում տեղաց էլ հսկաներին[illegible] ու տեսնում էր ամեն ինչ և մարդկային ձայնով Նոյին ցույց տվեց ինչպես նա կենդա- բնաջնջվելուց։ Աստծո արդարին հրաման տվեց շինել տապան, գուշակեց անօրենների կորուստը։

Լսիր ու զարմացիր և այստեղ առավել ևս, թե ինչպես բարերարի ողորմածությունը հաղթեց արդարադատ բարկությանը, որ նույն պահին սպառնաց պատուհասով և ներողամտորեն մարդու կյանքը հասցրեց հարյուրամյա տևողության։ Այլև եղան սաստիկ ու նորանշան տեսիլներ։ Ինչպես սրբերն են ասում, փայտը զամելիս ուրագների ձայնը, մուրճերի բախյունը լսելի էր ամենքին՝ մոտիկ թե հեռու, ինչպես ամպի որոտը, որպեսզի երկյուղ ներշնչի, զգուշացնի անզգամ ցեղին, որ թերևս դարձի գան ու ապրեն։

Աստված անտեղյակ չէր նրանց գոյությանը, բայց ամբողջապես մնաց իր բարի և անխառն բնությամբ ու ուշացրեց աշխարասիրտների արդար դատաստանը։ Ինչպես ուրիշ տեղ ասում է՝ «ապրող եմ ես, տեր իմ, որովհետև չեմ կամենում մեղավորի մահը, որպեսզի ետ դառնա չար ճանապարհից և ապրի»։

Ոմանք ասում են, թե Լավոդիկեոս փոյուգիացին է շինել տապանը, որը երկրի երրորդ՝ Ասիա կոչված մասում էր։ Բայց հույժ անհավատալի են նրանց ասածները, որովհետև ոչ ոք չի ասել, թե տասը սուրբ նահապետներն ապրել են Միջերկրայքում[23]։ Այլ աստծո հրամանով բնակվել են դրախտի դիմաց, պահեցողությամբ ու ապաշխարությամբ սգացել են, ողբացել առաջին մարդկանց սխալվելը, բոլորովին հրաժարվել մարմնականից և հոգիները զարդարել մարգարեությամբ, քիչ են գործածել միս և գինի։ Ջրհեղեղից հետո աստված հրամայեց՝ «Միսը կերեք բանջարի պես»*։ Ջրհեղեղից հետո Նոյը գինին խմեց, բայց անփորձ էր դրան, հարբեց։ Իսկ ովքեր սրանց պես չէին, լսեցին տիրոջից. «Իմ հոգին հավիտյան չպիտի մնա այդ մարդկանց մեջ, որովհետև նրանք մարմին են»**, այսինքն մարմնասեր են և ոչ թե հոգևոր։ Եվ արդար նահապետներն այնտեղ նույն կերպ ապրեցին և վախճանվեցին։

* Հմմտ., Ծննդ., Թ, 3։

** Ծննդ., Զ, 3։



Այնտեղ կառուցվեց նաև տապանը, և երկրի վրա թափվեցին սաստիկ չարիքներ։ Արդարի [Նոյի] զանգատով հարյուր տարի հետո միակ ու ահավոր աստված հրաման տվեց Նոյին. «Որդիներիդ ու նրանց կանանց հետ մտիր տապանը, որովհետև յոթ օր հետո հեղեղի պես ջուր եմ լցնելու երկրի վրա և մեռցնելու եմ բոլոր շնչավոր կենդանիներին»*։ Տեղեկացրեց յոթ թվի[24] մեջ մտնող ուրիշներին նույնպես ներելու մասին։

Ո՜վ աստվածային անհատնում բարերարություն և մարդասիրություն, որ տակավին խնայում ես անզգայացածներին։

Եվ այն օրը Նոյն իր կնոջ, որդիների ու նրանց կանանց հետ մտավ տապանը։

Իսկ պատմագիրներից ոմանք ասում են, թե տապանի մեջ են մտել նաև Նոյի դուստրը և տապանը շինող վարպետն իր կնոջ, որդիների ու մոտիկ հարազատների հետ։ Սա ինձ հավանական է թվում, որովհետև ջրհեղեղից հետո նահապետը որդիներ չունեցավ, և ասում են, թե վերին հնդկական աշխարհը պատկանում էր նրա դստերը։ Օրինակ՝ Եվսեբիոս Կեսարացին ասում է, թե «ըստ սովորության ցայսօր հնդկաց աշխարհում կնամարդ է թագավորում»։ Ինչ վերաբերում է տապանի մեջ մտածներին, շատ է պատշաճում ասել, որ եթե հավատացին և ապավինեցին արդարին, հուսացին նրա խոսքերին, երկյուղով ծառայեցին նրա հրամաններին, ինչո՞ւ պիտի անհավատալի լիներ նույնից փրկություն գտնելը։ Ինչ-որ մի անպարկեշտ պոռնիկ անցողիկ բարեմտությամբ իր ազգականներին ազատեց երիքովյան[25] բարկությունից և կամ ինչպես քանանացիների[26] ձեռքով սպանվելուց փրկվեցին գաբավոնացիները, որոնք արժանի եղան այնպիսի հոգատարության, որ նրանց արյան վրեժն առնվեց Սավուղի տանից։ Եվ եթե գրված է «զրեթե ութ հոգի», սա ևս կասկածելի է։ Այս առթիվ կասենք, որ թեև միայն նրանց հրաման տվեց, բայց նրանց ձեռքով փրկվեցին նաև ուրիշներ։ Մանավանդ որ տապանը մտած ութ հոգուց ոչ բոլորն էին ընտիրներ, ուրեմն և արդարի շնորհիվ ապրեցին նաև խեղճերը։

Իսկ Փիլոնն ասում է, որ Սեմը Ադամի՝ ամենքի հոր պատվին հոգ է տանում նաև նրա ոսկորների մասին և նույն

* Ծննդ., Զ, 1, 4։

ժամանակ տեղավորում տապանի մեջ։ Քիչ հետո դարձյալ խոսելու ենք այս մասին։

Եվ ասում է. «Տերը նրա վրայից տապանը փակեց»*։

Ո՜վ անհագնասատ բարկության հրաման, որ արձակվեցիր այն օրհասի պատճառով։ Ո՜վ ահալուր ձայն, որ սասանեցիր երկինքն ու երկիրը։ Որովհետև եթե ամպերի սոսկ մի փայլատակումն ու որոտը բավական է սաստիկ վախեցնելու և հոգին բանականությունից զրկելու համար, ապա երկրի վըրայի մնացածների հոգիներն ի՞նչ էին իրենց վրա կրում հորդահոս ու խորքերը բացած ջրերի խառնաշփոթության մեջ՝ նախքան ջրհեղեղից հեղձամահ լինելը, երբ անդունդների բոլոր աղբյուրները ճեղքվեցին, ու երկնքի ջրերը թափվեցին երկրի վրա և վերածվելով երկնային ծովի, համատարած ջրով ոչնչացրին բոլոր շնչավոր կենդանիներին։ Մեկ տարի ամբողջ երկիրը մնաց ապականված։ Աստվածային հրամանը կատարվելուց հետո ալեծուփ ջրերը տապանը բերեցին Միջերկրայքի արևելքը և այն նստեց Կորդվաց լեռներին[27], Եվ նահապետը զոհ մատուցեց գոհության աստծո, որը խոստացավ այլևս նույնը չհատուցել մարդկանց, հավիտենական ուխտ հաստատեց՝ «Իմ աղեղը պետք է դնեմ ամպի մեջ»**, որն է ծիածանը։ Ոմանք այն համարում են որպես ամպից զատված հուր, իսկ կռապաշտների որդիները՝ Արամազդի գոտին։ Բայց եթե Բելն Արամազդի հրամանատարն էր, ապա ինչպե՞ս կարող էր [ծիածանը] Արամազդի գոտին լինել. չէ՞ որ սա Բելի հրամանով կզրկվեր իր գոտուց։ Չենք երկարացնի նրանց առասպելները։ Սխալ է նաև այն ամպից զատված հուր համարելը, ապա թե ոչ պետք է որ երևար նաև գիշերով։ Այլ են արդարև արեգակի ճառագայթները, որոնք խոնավ ու խիտ ամպերի վերևում են՝ ծածկված պարզ օդով։ Դրանք սկզբում չկային, ասում են Նոյի ժամանակ եղան։

Իսկ դրանից հետո մարդիկ բազմացան, և երկիրն, ինչպես ասել է Հերոդոտոսը[28] բաժանվեց երեք մասի, ինչի մասին մանրամասն խոսում է մեծն Եպիփանոսը[29], վերստին անելու ենք մեծ ու իմաստասիրության մեջ հույժ լավատեղյակ

* Ծննդ., է. 16։

** Ծննդ., Թ, 13։



այրի՝ Փիլոնի մայրը, որը սուրբ առաքյալների հետևորդն էր և եկեղեցուն նպաստավորեց հին հրեական գեղեցիկ և շատ տեղեկություններով, ինչպես ուսուցանում է Եվսեբիոս Կեսարացու գիրքը։ Եբրայական անունների մեկնության մեջ Փիլոնն ասում է, թե Սեմը Ադամի ոսկորները բարձեց գրաստին և տարավ այն երկիրը, որն իր ժառանգությունն էր։ Այսպես հասնում է զույգ ցցված քարերով մի տեղի և այնտեղ տեղավորում գրաստին։ Նույն տեղը պատահմունքի բերումով անվանում է «մուտքի տեղ», ինչը եբրայեցերեն լեզվում աղավաղվել է «Ակավրշըլիմ», այսինքն «Երուսաղեմ», և թարգմանվում է՝ «այս մուտքն ավարտվեց»*։

Իսկ նախահոր ոսկորներն ամփոփող շիրիմի, ինչպես և նահատակության ու գլխատման տեղը նույնն է և հայտնի եբրայեցերեն երկու անուններով՝ «Գագաթ» և «Գողգոթա»[30], ինչը Սեմը խլեց Քամի որդիներից, այնտեղ կառուցեց նույն անունով քաղաք։ Այդ պատճառով աստված հրամայեց Մովսեսին, վրեժ առնել քանանացիների ցեղից՝ նահապետի կարգած սահմանը խախտելու համար։ Այս է, որ Դավիթը գովաբանում է. «Նա հավիտյան հիշեց իր ուխտն ու իր պատվիրած խոսքը՝ մինչև հազար ազգեր»**։ Իսկ փոքր ինչ հետո ասում է. «Քանանացիների երկիրը ձեզ տվեց ի ժառանգություն»***, որովհետև Քամը հորից ստացավ Եգիպտոսն ու Եթովպիան՝ մինչև հարավ-արևմուտք։ Իսկ Հաբեթը ստացավ ամբողջ Եվրոպան՝ Ամանա սարից մինչև հյուսիս-արևմուտք, իսկ Սեմը բովանդակ Ասորեստանը՝ մինչև արևելքի կողմերը։

Ջրհեղեղից հետո Նոյն իր որդիների հետ ապրեց 350 տարի, մինչև Երեքի 73 տարին և իրենից հետո ապրած ցեղերին ցույց տվեց աստծո կամքը և բնության օրենքները։ Մենք այժմ մի փոքր հիշատակեցինք համայն մարդկության ազգաբանությունը՝ սկսած առաջին նահապետներից։ Եվ շատ ավելի ջանացինք խնամել մեր երկրի հաջորդաբար տիրապետած իշխանների ու նրանցից առաջ ապրած Ասորեստանի թագավոր-

* Թովմա Արծրունու այս ստուգաբանությունն ընդունելի է. (Տե՛ս. Th. Ardzrouni, Histoire des Ardzrouni, trad. M, Brosset (Collection d'historiens arméniens, I, St. Pétersbourg, 1874, p. 15, n. 2).

** Սաղմ. ՃԴ, 8։

*** Հմմտ. Սաղմ., ՃԴ, 11—12։

ների մասին, Հորից սկսած մինչև որդին, Սենեքերիմ արքան, որը Երուսաղեմի թագավոր Եզեկիայի ժամանակ Արծրունյաց տան առհմապետն էր։ Մինչև այստեղ սրանք են հաշվվում. Ադամ, Սեթ, Ենովս, Կայինան, Մաղաղայել, Հարեդ, Ենովք, Մաթուսաղա, Ղամեք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ, որը նույն Բելն է։ Սրա մասին այժմ շատ եմ խոսելու։

## Բ

## ԲԵԼԻ[31], ԲԱԲԵԼԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թեպետ Բելի և քաղդեացիների՝ դյուցազունների հատուկ զառանցանքների մասին հետագայի ցուցմունքները ոչնչով չեն նպաստում առաջիկա քննությանս, բայց չեմ ծաղրելու նրանց, ինչպես կարծում են, հղացված քաջությունը և առանց մեղադրանքների զանց եմ առնելու ցնդաբանությունները։ Որովհետև ասում են, թե հին ասվածներից առաջինը ինչ-որ մի Բելոս է, Դիայի հայրը, որին հայերն անվանում են Արամազդ[32]։ Նա իշխում էր 255 բյուր տարի առաջ։ Այսպիսի ուրիշ առասպելներ էլ կան։ Նրանց կողմից գրված են մատյաններ և մեծ զգուշությամբ պահվում են Բաբելոնում։ Դրանց մասին գիտենք, որ գրվել են ջրհեղեղից հետո։

Իսկ ուրիշների [կարծիքով] Արամազդի հայրը եղել է ինչ-որ մեկը՝ Կռոնոս անունով, որը ևս մոտիկ էր ժամանակով և Քսիսութրոսին զուգակից ջրհեղեղի մասին ու առաջինը բնական ոճով իր գործերում գրելով ամփոփեց պղնձե ամանի մեջ, այն փակեց կապարով ու պահեց Սիպարացվոց քաղաքի[33] պահեստատանը։ Իսկ ոմանք էլ բազմիցս ընկան այս ու այն կողմ, զառանցեցին ժամանակների ու դեպքերի մասին։ Բայց մենք նրանց առասպելները հերքելու համար կարիք չունենք ըստ արժանվույն գրելու։ Իսկ Նեբրովթը[34], Քամից ծնված Քուշի որդին, հույժ ուժեղ էր ոչ միայն առաջին կուռքերից, այլև Հերակլեսից, որը դրանցից հետո էր և սաստիկ ուժեղ, կարողացավ քաջության ու մեծ ուժի շնորհիվ հաղթել տրոյական ծանր պատերազմում ու նրանցից անվանվեց աստված։ [Նեբրովթը զորեղ էր] նաև աշխարհակալ Ալեքսանդր Մակե-



դոնացուց, քանզի սա մի մոգի ու կախարդ մարդու խարկանքով իրեն հռչակեց Ամոնի ու Արամազդի որդի, բայց չուրացավ իր մահկանացու լինելը։ Իսկ [Նեբրովթը] իրեն հռչակեց որպես ամենահին, ժամանակից դուրս և ոչ միայն աստծո հայր՝ Բել*, այլև Արամազդին հրամայող, որը կարողացավ ուրիշներին, ինչպես և ջրհեղեղից ավելի քան քառասուն բյուր** տարի առաջ ապրող մարդկանց շնորհել կյանք ու հարատևփոխ, վայրենի ու արտասովոր տարիք, ինչպես նաև շարեր, ներեր ու սոսեր[35], իսկ նահապետների անուններն այլափոխեց կասկածելի ձևով։ Նա սպարծեցավ և ապավինեց իր բազկի ուժին ու մարմնի հաղթանդամությանը, քանզի ասում են, թե նրա հասակը վաթսուն կանգուն[36] էր։ Մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակները բաբելոնացիները պատվով պահպանեցին նրա հիմարության սերմերը՝ նման Բաբելոնի թագավորի քաջությանն ի հիշատակ կանգնեցրած ոսկեձույլ արձանին։ Ու թեպետ նրանից վրիպեց ճշմարիտ աստծո պատուհասը, բայց սովորություն դարձած չարն արմատավորվեց և նրա մեջ մնաց անվրեպ։ Ապա բազում ժամանակներ հետո նա հրամայեց թագավորին՝ հոգալ իր պետքերի համար արվող ծախսերը և պատրաստել կերակուր, ըստ Բելի անզուսպ ըմպության ու որովայնի մեծության։ Նույն կերպ նաև հույները մի ժամանակ հռչակեցին, թե Հերակլես աստվածը մի գիշերում ապականեց հիսուն կույս և ծաղրի արժանի ու ամոթալի բաները համարեցին քաջություն։ Այսպես բաբելացիներն էլ են զարմանալի բաներ պատմում Բելի մասին։ Ասում են, թե նա մի գիշերվա մեջ կերել է 12 արդու[37] ալյուր և 40 ոչխար, ինչի համար թագավորը, հպարտ ու խնդալից սրտով Դանիելին ասել է՝ «Դու ինչո՞ւ չես երկրպագում Բելին, մի՞թե չես տեսնում, թե նա ինչքան է ուտում և ըմպում»։

Ո՜վ կույր բաբելացի, քո ուղեղը թաղանթով մաշկը ցնդել է մկներից և խլուրդներից։ Ապա թե ոչ, էլ ի՞նչ բարի սպասելիքներ ունես, Բելի անհագ որովայնի լիությունը քեզ ի՞նչ բարգավաճում կլինի։ Ո՜վ հների հիմարություն։ Հին ժամանակներում դևերի ինչպիսի կատաղություն և կախարդանք

* «Բել» բառը աքադերեն նշանակում է «տեր»։

** Այսինքն 400 հազար տարի։ Մեկ բյուրը հավասար է տասը հազարի։

սպրդեց երկրի մեջ ու առաջացրեց աստծո դժգոհությունը,
սրբերի ու հրեշտակների տրտմությունը և ապագայում դառ-
նալու է աստծո ծառաների վտանգավոր մահվան պատճառ։
Ուստի ժամանակն է ու տեղին, պատշաճը հատուցել նրանց՝
նաև շատերի փոխարեն, որոնք արժանի չեն մեղադրանքի։
եթե Բելի ստամոքսում կուտակվել էին կերակուրների այնչափ
մթերված ամբարներ, ապա ըստ իրենց կարծիքի նրանից ար-
տավիժածն էլ արդյոք չի՞ ծառայի ի փառս բաբելացիների։
Երեմիայի բերանով կպատմե նաև աստվածային դատաս-
տանը. «Այն ժամանակ վրեժխնդիր կլինեմ Բելից ու Բաբելո-
նից և նրա բերանից կհանեմ կուլ տվածը», քանի որ առաջին
կուռքերից ոմանք, ինքնակործորեն շեղվեցին նահապետների՝
աստծո ծանուցած հոգեշահ գիտությունից։
Իսկ Ներրովթն ինքնակամորեն իրեն համարեց աստված
և մեծ զորությամբ թագավորեց Բաբելոնում։ Կախարդությամբ
և բոլորի աչքերի առաջ հրաշքներ գործեց, մինչև որ զարմաց-
րեց նրանց։ Նա տիրեց երկնքի տակ եղած բոլոր ժողովուրդ-
ներին։ Այնուհետև արձակեց ահավոր հրաման՝ ամենուրեք
կանգնեցնել իր արձանը, որին իբրև աստծո երկրպագել ու զոհ
մատուցել։ Դա եղավ կռապաշտության սկիզբը։ Պաշտում էին
ոչ միայն Բելին, ինչպես ասել էր ինքը, կամ մյուս երևելի
կուռքերին ու խաբեբա ոգիներին, այլև ձեռակերտ մեռելա-
կերպ կուռքերին։ Այս սովորությունը կարծեմ ինչ-որ մեկն ա-
սել է Եբերի որդի Փաղեկի և կամ Թարայի որդի Առանի նը-
կատմամբ, որովհետև ասում են, թե սրանք ավելի վաղ են
վախճանվել, քան իրենց հայրերը, որոնք խանդաղատանքից
նկարել են որդիների պատկերները, ըստ Սողոմոնի[38] ասածի՝
«Հայրը տրտմեց հանկարծահաս սգից, որդու վաղամեռ լի-
նելու պատճառով նկարեց նրա պատկերը»*։
Նույն չարից այլանդակված սովորությամբ կանգնեցրին
նաև արձաններ ի պատիվ հսկաների, քաջերի և բարբարոս
թագավորների։ Այս պատճառով սկսեցին պաշտել ոչ միայն
աստվածներին։ Պատշաճում է սրանց էլ նմանեցնել Բելին։
Սրանք ամբարտավանացան և մոլեգին հրաման արձակեցին
անխոհեմաբար միաբանվել դատարկ վաստակի համար և եր-

* Իմաստ. ԺԴ, 15։



կրրի վրա կանգնեցնել երկնահաս աշտարակ։ Փութապես ի
վերուստ կատարված ցրումով մարդկության միաբարբառ լե-
զուն վերածվեց տարբեր լեզուների, ինչից առաջացավ խառ-
նաշփոթություն։ Իր լեզուն պահպանեց միայն եբրայեցիների
նահապետ Եբերը, Սաղայի որդին, որը չհամաձայնեց աշ-
տարակի շինության անիմաստ մտահղացմանը։ Այստեղից էլ
մենք գիտենք, որ առաջին լեզուն եղել է եբրայերենը։
Ժամանակից դուրս համարվող Բելը սակայն կորավ ժա-
մանակով, սպանվեց իր դեմ ապստամբած Հայկից՝ Թորգոմի
որդուց, որը Հաբեթի սերնդից էր և քամահրելով Քամի որսոր-
դին*, ասաց. «Դու ոչ թե աստված ես, այլ շուն, իսկ քո ետևից
շարքով քարշ եկողները՝ շների երամակ»։
Այստեղ պատշաճում է մեծ նահապետի և աշխարհի հոր՝
Նոյի մարգարեական օրհնությունը «Աստված թող ընդարձակե
Հաբեթի [տոհմը] ու Սեմի տանը բնակվի»**։ Որովհետև Ա-
սիայի արևելքը Սեմի բաժինն էր, Հայկը խույս տվեց և բա-
ժանվեց Բելից, Բաբելոնից հեռացավ այնտեղ։ Իսկ Ներրով-
թը հանգույն զորությամբ իր հրոսակներով հետապնդեց Հայ-
կին, բայց նրանից նետահար եղավ և սպանվեց։ Պատմագիր-
ներից ոմանք ասում են, թե [Բելը] փախավ Ասորեստան։
Բայց սրանք դատարկ խոսքեր են, որովհետև այս մասին ավե-
լի ընդարձակ ձևով պատմում է մեծն Մովսես քերթողը։ Նա
պատմում է, թե ինչպես սպանվեց [Բելը], ինչպես նրա դիե
զմռսեցին, տարան Հարք գավառ[39] ի տես բազմության։ Իսկ
[Բելը] բռնությամբ իշխեց 62 տարի։ Պատմագիրներից ոմանք
ասում են, թե սրա հայրն էր Մեստրիմը[40], որն անվանվում է
Մեծրայիմ, այսինքն Եգիպտոս, որովհետև նա ժառանգել էր
Եգիպտոսը։ Որովհետև Քամի որդի Քուշը, որին Ծննդոց գիրքը
համարում է Ներրովթի հայրը, նույնպես եթովպացի է անվան-
վում, իսկ Եթովպիան Եգիպտոսի և ամբողջ Լիբեաստանի[41]
մի մասն է։
Իսկ ըստ պատմագիրների, ծննդաբանության կարգն այս-
պիսին է՝ Քամը սերում է Քուշին, Քուշը՝ Մեստրիմին։ Իսկ ըստ

* Աստվածաշնչում (Ծննդ., Ժ, 9) Ներրովթը (Բելը) համարվում է տի-
րոջ առջև զորավոր որսորդ։
** Ծննդ., Թ, 27։

Ծննդոց գրքի, Քուշը սերում է Նեբրովթին։ Այլ է ըստ պատմագիրների՝ Մեստրեմը սերում է Նեբրովթին, Նեբրովթը սերում է Բաբին, Բաբը սերում է Անեբիսին, Անեբիսը սերում է Արբելին, Արբելը սերում է Քայաղին, Քայաղը սերում է մյուս Արբելին, սա սերում է Նինոսին, որը Շամիրամի ամուսինն էր։ Բայց ասում են, թե Նինոսը թագավորեց Բելից հետո, հոգ չտարավ այդքանի մասին, որովհետև հները թագավորներից պատվեր էին ստանում մատյաններում գրել քաջերի կատարած նշանավոր արարքների և ոչ թե վախկոտների մասին, ինչպես նաև կենդանագրել քաջերից ու գեղեցիկներից մի քանիսի պատկերները։ Իսկ վախկոտներին ու տկարներին, թույլերին ու կանացիներին նշում էին սոսկ անուններով։

## Գ

### ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԶՐԱԴԱՇՏՆ[42] ՈՒ ՄԱՆԵԹՈՆԸ[43] ԴԱՐՁԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ԳԼԽԱՎՈՐՆԵՐ։ ՆՐԱՆՑ ՄՈԼԱՐ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ժամանակներում, որը ինչպես վերևում ասացինք, շարունակվում է Բելից մինչև Նինոս, ըստ եղած ցուցմունքների երևելիներն ու նշանավորները չեն երևում հին մատյաններում, թերևս բազում խափանումների պատճառով։ Նախ որովհետև խառնակված լեզուները միտված էին անմիաբանության կամ որովհետև քաղդեացիների մատենագիրները չգրեցին քաջերի թուլությունների մասին։ Եվ եթե գրել են, ապա միմիայն Նինոսի քաջությունների մասին։ Սա, Բելի օրինակով, անձնասեր ամբարտավանությամբ է՛լ ավելի փքվեց, իրեն համարեց քաջերից ու թագավորներից առաջինը, ուստի հին մատյանները, սաստիկ հարկադրանքով մի տեղ հավաքել տվեց և հրամայեց այրել, որպեսզի, բացի իրենից, ուրիշ ոչ ոքի մասին հիշատակության որևէ հետք չերևա։ Ասում են, թե սա նույնպես թագավորեց բովանդակ Ասիայում և Լիբիաստանում, բացի Հնդկաստանից։ Ի պատիվ իր անվան, վերաշինեց արքունի առաջին քաղաք Նինվեն, որը կառուցել էր Ասուրը և ավերել Նեբրովթը։ Ընկճեց բակտրիացիների[44] ու մեգացիների[45]



մոգ-թագավոր Զրադաշտին, հալածեց մինչև Հեփթաղների[46] [երկրի] սահմանները, հզորապես տիրեց ամբողջ Խուժաստանին[47], արևելյան կողմերին, Պարսկաստանին, և նույնիսկ Բալհից[48], Գեպուհանից[49], Գովմայիդից[50], Գուզանից,[51] Շերիրամականից[52], Խոճիհրաստանից[53] էլ անդին, մինչև Հնդկական ծովը, ամբողջովին, մեծ քաջությամբ նվաճեց 52 տարում։ Որովհետև նրա մահանալու ժամանակ որդիները հույժ մանկահասակ էին, իշխանությունը թողեց իր կնոջը՝ Շամիրամին, որը ավելի մեծ քաջությամբ տիրեց բոլորին, քան իշխել էր Նինոսը։ [Շամիրամը]Բաբելոնն ամրացրեց պարիսպներով, կոտրեց Զրադաշտի հակառակությունը, հնազանդեցրեց, ծառայության մեջ դրեց։ Եվ որովհետև [կյանքն] անց էր կացնում վավաշոտ մոլությամբ, որդիների նկատմամբ ոչ մի հոգ չէր տանում, մեծ գանձերով, առատաձեռնությամբ ու պատվով ուշ էր դարձնում միայն իր հոմանիներին, Զրադաշտին կարգեց Բաբելոնի, Խուժաստանի ու Պարսից ամբողջ արևելքի գլխավոր և ինքն Ասորեստանից մեկնեց Հայոց աշխարհը, ինչ-որ հայկազնի համբավից տոփանք տածելով։ Թե ինչպես եղավ նրա գալուստը, նույն պատճառով պատերազմելը և մեծաշուք ու զարմանքի հույժ արժանի ձեռակերտների կառուցումը, Զրադաշտի՝ վերստին ապստամբելը, Շամիրամի մահը, ինչպես նաև նրա կախարդության մասին ասվածը, այդ ամենի մասին խոսել են ուրիշները։ [Շամիրամն] իշխեց 42 տարի։ Այնուհետև իշխանությունը վերցրեց նրա որդի Զամեն, որը հոր անունով անվանվեց Նինուաս և տիրեց Ասորեստանին, իսկ մի առ ժամանակ նաև՝ Հայաստանին։ Որևէ ջանք չթափեց, հեշտասեր էր և տարված անպատերազմասեր մտքերով և իշխում էր խաղաղության մեջ։

Իսկ Զրադաշտը տիրեց Պարսկաստանի արևելյան կողմերին և այնուհետև այլևս չանհանգստացրեց Ասորեստանին։ Նա պախարակում էր Բելին և ուրիշ դյուցազուններին։ Իր մասին պատմեց իբր շատ հին ու անհայտ մի նոր առասպել։ Միաժամանակ պարսիկներին ու մարերին անջատեց բաբելացիներից, ասելով նաև, որ նրանք ուսմամբ և անուններով նույնպես կապ չեն ունեցել ասորեստանցիների հետ։ Եվ այսպես խոտորվեց և Նոյի որդի Սեմին համարեց մի նոր Զրվան, աստվածների նախահայր։ Սա,— ասում է,— կամեցավ գա-

նալ Հայր Որմիզդի[54] և ասաց. «Երանի թե ունենայի Որմիզդ անունով որդի, որն ստեղծեր երկինքն ու երկիրը»։ Ապա Զրվանը հղացավ երկվորյակների, որոնցից խարդախը չհամբերեց, վաղաժամ դուրս եկավ։ Զրվանը հարցրեց. «Ո՞վ ես դու»։ «Ես քո որդի Որմիզդն եմ», — պատասխանեց նա։ Իսկ [Զրվանը] ասաց. «Իմ որդի Որմիզդը լուսավոր է ու անուշահոտ, դու խավարային ես ու չարասեր»։ Երբ [որդին] շատ թախանձեց, [հայրը] նրան տվեց հազար տարվա իշխանություն։ Հազար տարի հետո ծնվեց Որմիզդը և ասաց եղբորը. «Հազար տարի անսացել եմ քեզ, արդ դու ինձ անսա»։ Արհմնը[55], իմանալով իր ետ մնալու մասին, ապստամբեց Որմիզդի դեմ և դարձավ նրա հակառակ աստվածը։ Որմիզդն ստեղծեց լույսը, Արհմնը՝ խավարը, նա ստեղծեց կյանքը, սա՝ մահը՝ նա հուրը, սա՝ ջուրը, նա՝ բարին, սա՝ չարը։ Որպեսզի բոլորը մեկառ-մեկ չասենք, այլ միանգամից, կնշենք, որ բոլոր բարիքների ստեղծողը Որմիզդն է, ոչ միայն լավի, այլև չարի ու դիվականի։ Արդ ով խիստ ծաղրի կարժանացնի այս կրոնի խոսքերը, ով Զրադաշտին կհամարի հիմար, սա, որ «Քո դատարկ վաստակի տեր աստծո՝ Որմիզդի համար դու իզուր մի աշխատիր»։ Քեզ գուցե քեզ ներհակողը կողքիդ լինի և նույն պահին բարկանա ու նույնիսկ կտոր-կտոր անի քեզ։

Նույն հիմար Զրադաշտն ասում է, թե երբ Որմիզդի և հարամինների միջև պատերազմ է եղել, Սաստիկ քաղցի պատճառով Որմիզդը դուրս է գալիս և շրջում այս ու այնտեղ՝ կերակուր փնտրելու։ Տեսնում է մի եզան, գողանում տանում է հեռու, մորթում, ծածկում է քարերով և սպասում երեկոյանալուն, որպեսզի գողացածը ծածկաբար տանի տուն և հագեցնի իր քաղցը։ Երեկոյան ուրախությամբ եկավ և հույս ուներ հագենալ, բայց [միսը] գտավ ապականված և լափված ճիճվակերներից։ Ուստի մեծ ու փոքր մողեսները, քարաթռթռները, բզեզները վրա թափվելով կերան նրա որսը։ Արդ [սահմանում է], որ այդուհետև բառ նեղակի[56], գյուղերից ամանով տարված ամեն տեսակի միջատներ բերվեն արքունի դուռը, սատկացնելու համար, քանի որ դրանք վնաս էին հասցրել աստծուն։ Օրինադրում է նաև բազում այլ զառանցանքներ։ Այս մասին իզուր տեղը չի գրվել և հասել մեզ, այլ որովհետև դիվական այս կրոնի միջոցով եղել են բազում նեղություններ,



կոտորածներ, իսպառ ավերվել է հայոց աշխարհը, ինչի մասին քեզ ցույց է տալիս նաև սուրբ Վարդանանց պատմությունը, որը գրել է երանելի Եղիշե քահանան։ Այժմ իսկ նույն բաներն ասում են հրապաշտների որդիները։

Իսկ հեփթաղների թագավոր Մանեթոնը նույնպես եղածին ավելացնում հաստատում է այս, բայց չի ասում թե Որմիզդը կրակն ստեղծեց, այլ՝ բնությունը, իսկ Հեփեստոսն ու Պրոմեթևսը, այսինքն արեգակն ու լուսինը, կրակը գողացան Որմիզդից և մի մասը տվեցին մարդկանց։ [Ասում է՝] երկիրը Սպանդարամետ[57] աստծո իշխանն է և չի ստեղծվել որևէ մեկից, այլ եղել է, կա և մնում է, ինչպես որ է, կա և մնում է, իսկ մարդն՝ ինքնածին է։

Այս մասին տեղեկանալով, ես իմացա շատերից, նրանցից, որոնք անվանվում են Շախրիք[58], Դիպվածով, հանդիպեցի սրանցից մի քանիսի հետ, ովքեր եկել էին Այղաստան[59] աշխարհից։ Նրանք իրենց համարում էին կրակապաշտության հավատի մեջ ամենագետներ և ուրիշ վատ ու զազիր բաների հետ կրկնեցին նույնը։ Նախամայր էին համարում ոչ թե մեր նախնի Ադամին, այլ ուրիշի, ինչ-որ մեկին՝ Շուշեի որդուն՝ ուղտապանին, որը զզվեցրել ու անհավատարիմ էր եղել անծանոթ երկրում, իր կնոջ հետ հալածվել էր այնտեղից և եկել դարձել իրենց ցեղապետը։ Իսկ ես հետևեցի նրա խոսքերին և հարցրեցի. «Ապա ասացեք, թե որտեղ է գտնվում այդ անծանոթ երկիրը»։ Նրանք պատասխանեցին. «Մի լեռ կա անսովոր չափով բարձր, որից անդին չկա բնակություն մարդկանց։ Պտղոմեոսի աշխարհագրությունից ես գիտեմ, որ այդ Իմավոն[60] լեռն է, ինչն արդարև ամենաբարձրն է ողջ աշխարհում և անհասանելի է մարդկանց։ Աչքերը չռած նույնիսկ դժվար է տեսնել լեռան գագաթը, որն ասես հասել է երկնքին։ Նրանք ինձ ասացին այսպիսի խոսքեր. «Մերոնցից շատերը մի փոքր բարձրացել են այդ լեռան վրա, և տեսել արևելյան կողմերում մեծ, լայնատարած, հարթ ու անսահման մի դաշտավայր, որը անհասանելի էր աչքի տեսողությանը, գիշերով զարդարված լույսով, երևում էր բազմակերպ տեսքով, իսկ ցերեկը նման էր թանձր ամպի, լման թաղիքի և մշուշի, հույժ սպիտակափայլ էր։ Դրա մասին ասում էին, թե օտար և անծանոթ երկիր է։ Իսկ ես, քամահրեցի նրանց ասածները, բայց հույժ

Հավատացի վերջին խոսքերին, մտածեցի, թե միգուցե այն եղել է նախամարդու բնակության երկիրը։ Քանզի արդարև զգալի և շոշափելի էր դրախտը. բայց ո՛չ իմանալի և ո՛չ էլ երկու աշխարհների միջև, կամ ինչպես ոմանք են ասում՝ Հովրեգենում։ Եվ ոչ էլ այն վերացած էր, ինչպես այժմ ոմանք են կարծում անգիտանալով տիրոջ ասածն ավազակին. «Այսօր ինձ հետ պիտի լինես դրախտում»*, ինչը, ըստ մորը՝ Օլիմպիադային Ալեքսանդրի գրած նամակի[61] հաղորդվել է իրեն՝ Ալեքսանդր Մակեդոնացուն, որը թերևս մասամբ հասել է դրախտի սահմաններին՝ արտաքին կողմից։ Այնտեղ հանդիպել է անծանոթ և զարմանալի ծառի, որը մեկ օրում արագորեն աճում և անսպասելիորեն անհայտանում էր։ Նրա ցողի կաթիլներն իսկ ունեին աննման անուշահոտություն։ Ծառի արմատները ոչ միայն անսովոր էին, այլև աներևույթ էին, անմերձենալի և ապահով։ Մոտենալիս անգամ մարդիկ տանջվում էին աներևույթ զորություններից, ինչը սակայն չեն վերագրում գետերին։ «Եվ,— ասում է նա,— մենք լսում էինք տանջվողների ծեծի ճողփյունը, տեսնում նրանց թիկունքներին իջնող հարվածները, սակայն չէինք տեսնում տանջողներին։ Լսում էինք միայն մի ինչ-որ ձայն. «Մի հավաքվեք և մի ընդհատեք, ապա թե ոչ այս անձը կապանվի և ժանտախտից կկոտորվի ձեր զորքը։ Ուստի ահաբեկված հեռացանք նրանից։ Այսպիսի զարմանալի ուրիշ բաներ էլ կսովորես նույն գրքում։ Քիչ հետո ասվում է. «Բարեկամներս բազմաթիվ անգամ ինձ աղերսեցին վերադառնալ, բայց ես հրաժարվեցի, քանի որ կամենում էի տեսնել երկրի ծայրը։ Այնուհետև, շարժվելով անբնակ տեղերով, ուղղվեցինք դեպի ծովակողմերը և այնուհետև, բացի երկնքից ու երկրից, ոչինչ չտեսանք, ո՛չ հավքի, ո՛չ գազանի, տասն օր արև չտեսանք, այլ միայն աղոտ օդ։ Հասնելով ծովափին ընկած մի տեղ, զինվորներին վրանների հետ ներս տարանք նավերի մեջ։ Այսպես նավարկեցինք դեպի ծովի կղզիներից մեկը, որը հեռու չէր երկրից։ Այնտեղից լսեցինք մարդկային խոսքեր՝ հունարեն, բայց խոսողներին չտեսանք։ Զինվորներն իրենց անձերը մահվան վտանգին տվեցին՝ լողացին և նավից հասան կղզին։ Բայց մի խեցգետին

* Ղուկ., ԻԳ, 43։



դուրս եկավ և ջրի մեջ քաշեց 54 զինվորի։ Մենք վախեցանք և հեռացանք այդ վայրերից և երկու օր հետո վերադարձանք այնտեղ, ուր արև չէր ծագում։ Ես կամեցա ծառաներիս բացատրել և նրանց միջոցով ձեռնարկել տեսնելու երանավետ վայրը, բայց իմ բարեկամ Կալիսթենեսն ինձ խորհուրդ տվեց այդ անել 40 ընկերներով, 100 մանուկներով և ընդամենը 1200 զինվորներով։ Ճանապարհից դուրս մենք նկատեցինք մատակ ավանակի՝ իր ձագի հետ։ Ավանակին անմիջապես կապեցինք բանակատեղում։ Երբ մենք անցանք 15 մղոն, հանդիպեցինք երկու հավքի, որոնք ունեին մարդկային կերպարանք և ավելի մեծ էին մեզ մոտ եղած հավքերից։ Դրանք հունարեն բարձրաձայն աղաղակեցին. «Ինչպե՞ս ես [համարձակվում] ոտք դնել աստծո տունը, Ալեքսա՛նդր։ Ե՛տ դարձիր, թշվառակա՛ն, քանզի չես կարող ոտք կոխել [աստծո] երջանիկ սպասավորների կղզին։ Ինչպե՞ս ես համարձակվում երկինք բարձրանալ»։ Այս լսելուց հետո ինձ պատեց սարսափն ու դողը։ Ականջալից լսեցի աստվածային, սքանչելի մի ձայն, ինչն արտասանեց [մարդակերպ] թռչունը»։ Այս պատճառով ճիշտ կլիներ դրանց համարել հրեշտակներ, որովհետև այդպիսի բանականություն ունեն միայն երեքը՝ հրեշտակները, մարդիկ և դևերը, բայց ոչ հավքերը կամ ուրիշ կենդանիները։ Իսկ այդ վայրերի սահմաններն ահավոր էին, զգալի և միաժամանակ զգայությունից դուրս և պահպանվում էին աներևույթ խնամատարների ու պահապանների շնորհիվ՝ ինչպես ամուր ցանկապատ, ունեին բնական ու սակավախնամ հիմք, որն արքունի բուրաստանը պարսպում էր արտաքին կողմից[62]։ Այդ վայրերն ինձ այդպես թվացին, իսկ ուրիշներին՝ ինչպես որ իրենք կկամենան։ Բայց մենք, ըստ արժանվույն պիտի հերքենք նրանց ասած առասպելական և անհիմն խոսքերը, որ ավանդել են խավարամիտ հերետիկոսները՝ Զրադաշտն ու Մանեթոնը, իրենց հավատացողներով հանդերձ։ Նրանք ասում են, թե Հեփեստոսը գողացել է կրակն աստծուց, մի մասը շնորհել է մարդկանց, իսկ մեծ մասը վերցրել իրեն։ Իսկ Հեփեստոսը,— շարունակում են նրանք,— երկու ոտքից կաղ էր, հուր վարսերով, ձեռքերին ուներ աքցան ու կռան և նստած դարբնում էր մարդկանց։ Արդ, եթե կաղը գողացավ Որմիզդի կեսը, և սա չիմացավ, ապա ինչպե՞ս կարող էր կաղից կիսա-

վին գողացվածը և մեջտեղից կտրվածն աստված դառնա։ Բացի այդ, երկրպագում է կրակին և ոչ թե արեգակին, որը չափավոր է և համարվում է սուտ մի մասը։ Ինչպե՞ս կարող էր գողն ու ապիկարը երկրպագվել իբրև աստված։ Այլև ինչպե՞ս չեն ամաչում կրակն սուտ մաս համարել։ Որովհետև քարի ու երկաթի բախվելուց կայծ է ժայթքում. նույնը նաև փայտի շփումից, ինչպես նաև անիվից, երբ սայլերի առանցքներն այրվում են, առանց կրակի։ Նույնպես եթե մաքուր ու վճիտ ջուրը լցնենք պարզ ապակու վրա ու թողնենք արևի տակ, իսկ շուրջը դնենք այրվող նյութը, ապա այն ապակու զգած շողերից արևակեզ կլինի և կայրվի։ Եվ որովհետև այս բոլորն այսպես է, և մոխրապաշտներին այն նույնպես հայտնի է, ուստի նրանց դատաստանն ու կորուստը ինչպես գրված է, ի բնե չի վերանում։ Գուցե որևէ մեկը կվախենա ասել սրա պատճառը։ Բայց սուրբ Պողոսն առաքելությամբ ասում է այս մասին. «Աստծուն ճանաչելով, աստծո պես չփառավորվեցին կամ շնորհակալ չեղան, այլ իրենց խորհուրդների մեջ ունայնացան, իսկ նրանց սրտերը մթագնեցին անմտությունից։ Իրենք իրենց իմաստուն կարծելով՝ հիմարացան։ Եվ անեղծ աստծո փառքը փոխելով, նմանեցրին եղծանելի էակներին»*։ Եվ շարունակ բողոքում ու ամբաստանում է, որ անարգել են բնության օրենքները և ընկել աստծո երեսից։ Ուստի պատշաճում էր, որ նախ իրենք իրենց ճանաչեին, ապա նոր այստեղ երևացողներին ու նրանց ստեղծողին։ Որովհետև այս աշխարհի աստվածային բաները աներևույթ են այստեղի արարածների համար, որոնք գիտենալով են տեսնում նրա մշտնջենավորությունը, զորությունը և աստվածությունը, ինչը չեն կարողանում մեկնել։ Իսկ ինչպե՞ս է սա իմացվել։ Օտարներից ավելի ուշիմներն ասում են, թե ամեն մի շարժուն մարմին ուրիշից է սովորել շարժվել, որովհետև ոչ թե մարմինն է ինքնաշարժ, այլ հոգին։ Արդ, տեսնում ենք, որ երկնային մարմինները, այսինքն արեգակը, լուսինը, աստղերը և նրանց նմանները, կարգավորված շարժվում են անդադար։ Հայտնի է, որ շարժվում են ուրիշ [ուժից]։ Եթե ուրիշից է, ուրեմն կա

* Հռոմ., Ա, 21—23։



մեկը, որ շարժում է երկնային մարմինները։ Եվ որովհետև երկնքի միևնույն շարժումն է, ուստի պարզ է, որ այն ոչ թե շատերից, այլ ինչ-որ մեկից է։ Քանզի եթե շատերից էր, կլինեին պես-պես ու խառնաշփոթ և ոչ կարգավորված։ Եվ որովհետև երկինքը մշտաշարժ է, պարզ է ուրեմն, որ նրան շարժողն ունի անբավ զորություն։ Եթե սահմանափակ զորություն ունենար, չէր կարող անդադար շարժել երկնային մարմինները։ Ուստի պարզ է, որ անմարմին է, որովհետև մարմինն ունի սահմանափակ զորություն և չի կարող մշտապես ու կարգավորված շարժել երկինքը։ Սրանից պարզ է, որ ինքնագո է, չի ստեղծված որևէ մեկից, քանի որ գոյություն ունեցողը նյութից ու տեսակից է, իսկ ինչը նյութից է, ունի մարմին և չունի անբավ զորություն։ Իսկ նա ի բնե ինքնագո է, անբավ և չի ստեղծվել որևէ մեկից։ Իսկ ինչն ինքնագո է, այն նաև սուրբ է, ինչը սուրբ է, նաև մշտնջենավոր է։ Իսկ մշտնջենավորն անսկիզբ է ու անվախճան։ Ասածից պարզ է, որ երկնային մարմինները շարժողը միագո է, ունի անբավ զորություն, անմարմին է, ինքնագո ու սուրբ և չի ստեղծվել որևէ մեկից, բայց մնացած բոլորն ստեղծվել են իրենից։ Իսկ այս ամենը արարածներից պատշաճում են ոչ այլ ոքի, եթե ոչ միագո աստծուն, որն է միայն արարիչը։ Սրանք խելացի գյուտեր են։ Եվ մենք հետևում ենք Սուրբ գրքին, հաստատում ոչ թե արտաքին, ոչ-եկեղեցական գիտունների ասած հիմարությունը, քա՛վ լիցի, այլ տիրոջ աստծո Մովսեսին, ոչ-եկեղեցական գիտուններին հանդիմանելու, մեռելների ճարպը նրանց գործածության տանելու և ոչ թե մեզ կերակրելու համար։

## Դ

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՐ ՀԱՋՈՐԴԵՑԻՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ԿՅՈՒՐՈՍ ՊԱՐՍԻԿԸ

Բնականաբար մենք հետևում ենք այն ազգաբանությանը, որ մեզանից առաջ եղել է Ասորեստանի թագավորության մեջ։ Այս թագավորության առաջին իշխեց Զամեսոսը, նույն ին-

քը՝ Նինուասը, Նինոսի և Շամիրամի որդին, որը Աբրահամ նահապետի[63] կյանքի 53-րդ տարում տիրեց ամբողջ Ասիային ու Հայաստանին։ Զրադաշտի մահից հետո 38 տարի խաղաղությամբ թագավորեց դարձյալ Պարսկաստանի ամբողջ աշխարհում, որը հարկատու դարձրեց։ Նրան հաջորդեց իր որդի Արիասը, Նինոսից հետո չորրորդը, որ իշխեց 30 տարի։ Այնուհետև Ասորեստանի բոլոր թագավորները հայրերից ժառանգեցին իշխանությունը և որևէ մեկը չկատարեց հիշատակելու արժանի որևէ բան։ Նրանցից ոչ ոք 20 տարուց պակաս չիշխեց. անպատերազմասեր ու խաղաղասեր բնավորության պատճառով զգույշ էին, փակված էին մնում արքունիքում, ոչ ոք նրանց չէր տեսնում, բացի իրենց հարճերից ու ներքինիներից։ Արդ, Ասորեստանի թագավորները մեկ առ մեկ սրանք են. ում անուններն ու ժամանակները նշելով փոքր-ինչ ցույց կտանք նաև նրանց ժամանակ կատարվածի մասին։

Նինոսը Արբելի որդին էր, Քամի ցեղից և [իշխեց] 52 տարի։ Սա վերականգնեց իրեն Բել անվանող Նեբրովթի թագավորությունը։ Նինոսի կին Շամիրամն իշխեց 42 տարի։ Սա հարձակվեց Հայաստանի վրա, նվաճեց այն և վերստին իշխեց պարսիկներին։ Նրա երրորդ տարում ծնվեց Աբրահամին խոստացված որդին՝ Իսահակը։ Շամիրամի վերջին տարում ծնվեցին Եսավն ու Հակոբը, որոնք անվանվում են երկու նահապետներ... Սրա վերջին տարում եգիպտացիներին տիրեցին հովիվները*։

Սրա քսանհինգերորդ տարում առաջին թեսալացիներին թագավորեց Բեղոքոսը, [իշխելով] 35 տարի։ Սրա 35-րդ տարում տարածվեց Ովգեգի ջրհեղեղը։ Բաղեոսն իշխեց 52 տարի։ Սրա 43-րդ տարում Հակոբը ծառայություն արեց հեթանոսների հրավերով և վախճանվեց։ Ազատադասն [իշխեց] 32 տարի։ Սրա ժամանակ հայտնվեց իմաստուն այր Պրոմեթևսը։ Մամեզոսն [իշխեց] 30 տարի։ Սրա 14-րդ տարում վախճանվեց Հովսեփը։ Մաքաղիսն [իշխեց] 30 տարի։ Սրա ժամանակ

* «Հովիվներ» ասելով Թովման ի նկատի ունի հիքսոսներին։ Այս ցեղը մ. թ. ա. մոտ 1700 թ. Առաջավոր Ասիայից խուժեց Եգիպտոս, նվաճելով այն։ «Հիքսոս» բառը հին եգիպտացիների լեզվում նշանակում էր «հովիվների կառավարողներ»։



հայտնվեց Ատլաս աստղագետը։ Զփերոսն [իշխեց] 20 տարի։ Սրա 18-րդ տարում ծնվեց Մովսես Մարգարեն։ Մյուս Մամեզոսն [իշխեց] 30 տարի։ Սրա ժամանակ Թեսալիայում թագավորեց մեկ ուրիշը։ Ասպարեթոսն [իշխեց] 40 տարի։ Սրա ժամանակ Մովսեսը դուրս եկավ Եգիպտոսից և հրաշքներ գործեց անապատում։ Ասկատադեսն [իշխեց] 40 տարի։ Սրա 8-րդ տարում Մովսեսը դարձավ հրեաների առաջնորդն ու օրենսդիրը։ Ամինեսն [իշխեց] 45 տարի։ Սրա 8-րդ տարում վախճանվեց Մովսես Մարգարեն։

Ադամից մինչև այդ տարին, ըստ յոթանասնից թարգմանության[64], կլինի 3730 տարի։

Բեղոքոսն [իշխեց] 25 տարի։ Սրա ժամանակ ուրիշ շատերը թագավորներ դարձան այլևայլ տեղերում։ Բաղեսարեսն [իշխեց] 30 տարի։ Սրա ժամանակ գահակալեց Արգիացիների թագավորը։ Ղամրիթեսն [իշխեց] 32 տարի։ Սրա ժամանակ երևաց Պեգասոսը, որի մասին ասում էին, թե թևավոր ձի է։ Զովսարեսն [իշխեց] 20 տարի։ Սրա ժամանակ Դիոնիսիոսն արշավեց հնդկացիների դեմ։ Ղամպերեսն [իշխեց] 30 տարի։ Սրա օրոք զանազան երկրներում թագավորեցին շատերը։ Պանիասն [իշխեց] 45 տարի։ Սրա ժամանակ կառուցվեց Տյուրոս[65] քաղաքը։ Սովսարմոսն [իշխեց] 15 տարի։ Սրա ժամանակ նահատակվեց Հերակլեսը։ Միթրեոսն [իշխեց] 27, Մոտանեսը՝ 31 տարի։ Սրա 25-րդ տարում աքեացիներն առան Եկիոն[66] քաղաքը։ Սրա ժամանակ կատարվեցին նաև Սամսոնի[67] գործերը։ Տևտեսն [իշխեց] 40 տարի, Ոթինեսը՝ 30, Դերկյուղոսը՝ [քառասուն] տարի։ Այս ժամանակ Դավիթը թագավորեց Երուսաղեմում, իսկ Ասորեստանի թագավորությունը թուլացավ, նրա իշխաններից մի քանիսը մնացին Դամասկոսի կողմերում։ Ղավոսթենեսն [իշխեց] 45 տարի, Պերիտիադեսը՝ 30, Ափրատեսը՝ 40, Ափրատանեսը՝ 50, Ակրապաղեսը՝ 42 տարի։ Թոնոս Կոնկողեոսը, որ հունարեն անվանվում է Սարդանապաղոս[68], [իշխեց] 40 տարի։ Սա գեղծարարո էր, թագավորելիս կատարեց տգեղ արարքներ, որից զզված, զորքն այնպես արեց, որ նա պարտվեց մարերի զորագլուխներ Վարբակից ու Բելոսից, մինչև որ ինքն իրեն այրեց ու մահացավ։

Ասորեստանի թագավորության ժամանակները, սկսած Բե-

լից և Նինոսից, 1300 տարի են։ Մարացի Վարբակը վերացրեց Ասորեստանի թագավորությունը, Պարույր Հայկազնին ազատեց հարկատվությունից և մեծարեց թագով, պատվեց իշխանությամբ։ Տվեց նաև մեծաթիվ օգնական զորք և կրկին հաստատեց Հայոց թագավորությունը։ Բելեսիսին կարգեց Բաբելոնի տիրակալ, իսկ ինքն այնուհետև արքունիքը տեղափոխեց Մարաստան, որտեղ այն շարունակվեց 259 տարի, թեև ոմանք հասցնում են 298 տարվա, հաշվելով նաև նախկին թագավորներին։ Սրա ժամանակ ասորեստանցիներից ու քաղդեացիներից ոմանք՝ թագավորական տոհմից, որոնք ավելի առաջ հեռացել էին Դամասկոսի և Նինվեի կողմերից, օգտվեցին անիշխանության պատեհությունից, գումարեցին մեծաթիվ զորք և Ասորեստանի անիշխանությունից 28 տարի հետո, Փուա թագավորի շնորհիվ, դարձյալ տիրեցին Բաբելոնին և ստորին Ասորեստանին, որը կոչվում է Խուժաստան։ Նորոգեցին Բելից լքված թագավորական առաջին պալատը, ինչը Ասարատի[69] տաճարն էր։ Պաղեստինի կողմերում չկարողացան տանել մարերի ու պարսիկների ճնշումը, կռվի ելան պաշարեցին Սամարիան[70] Բայց քանի որ եբրայեցիների թագավորությունը բաժանվել էր երկու հակառակ մասերի, Ասորեստանի Փուա թագավորը կարողացավ հնազանդեցնել նրանց և Մանասե[71] թագավորից հարկ վերցրեց՝ հազար տաղանդ արծաթով։ Այնուհետև Իսրայելը վտանգվեց Ասորեստանից։ Նրանից հետո Ասորեստանում թագավորեց Թիգլաթ-պալասարը[72]։ Սա արշավեց Հրեաստան, ժողովրդի մեծ մասը գերությամբ տարավ Ասորեստան... Սալմանասարն[73] իսպառ գերեվարեց տասը [հազար մարդու]։ [Սարգոնը երկրի սահմաններից հասցրեց մինչև] Մարաստանի լեռները և վերցրեց [Իսրայելի] թագավորությունը, որը տևեց 250 տարի*։ Նրանից հետո թագավորեց Սենեքերիմի եղբայրը... [որը] սպանվեց Մարութաքաղաքանում, երբ...** հազիվ էր իշխել վեց ամիս, նա էլ սպանվեց ինչ-որ մեկից, որը թագավոր էր՝ Ներեգիրոս անունով։ Նրա թագավորության երրորդ տարում Սենեքերիմը

* Բնագրում բացակայում են որոշ դարձվածքներ։ Աշխատել ենք վերականգնել, ելնելով բուն նյութի իմաստից։

** Բնագրում բացակայում են անհրաժեշտ նախադասություններ։



մեծ զորքով արշավեց նրա դեմ և ձերբակալեց իր բարեկամներով հանդերձ, ապա Բաբելոնում նշանակեց իր որդի Ասորդանիսին[74], իսկ ինքը գնաց Միջագետք, քաջաբար հնազանդեցրեց Եմաթին, Արբաթին, Դամասկոսի ու Կիլիկիայի բոլոր կողմերը և բազում ուրիշներին։ Դրանից հետո հարձակվեց Պաղեստինի ու Երուսաղեմի վրա, պաշարեց այն։ Բայց աստծո հրամանով կոտորվեց նրա զորքը, և նա վերադարձավ Նինվե։ Սենեքերիմի երկու որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը, Ասորդանիսին թագավորեցնելու պատճառով նախանձեցին, լարացան և սրով սպանեցին իրենց հորը, որը թագավորեց 18 տարի։ Իսկ իրենք, ինչպես ասվում է, գնացին հյուսիս-արևելք և ավելի վերև։

Արդ, Ասորեստանի թագավորները մյուս ճյուղից սրանք են. 28 տարի անիշխանություն էր, 12 տարի [իշխեց] Փուան, 27 տարի՝ Թիգլաթ-պալասարը, 15 տարի՝ Սալմանասարը, 4 տարի՝ Ներեգիրոսը, 18 տարի՝ Սենեքերիմը, 8 տարի՝ սրա որդին, 21 տարի՝ Սամոգեսը, նույնքան էլ սրա եղբայրը, 20 տարի՝ Նաբուպալասարը, 43 տարի՝ Նաբուքոդոնոսորը, 2 տարի՝ Ամիլմարուդաքոսը, 4 տարի՝ Ներիգլիսարոսը, 15 տարի՝ Նաբոնեդոսը։ Սա վեցերորդ տարում գահընկեց արվեց Կյուրոսից և ակարացած թափառում էր նույն տեղում, մինչև որ իսպառ վերացան Ասորեստանի ու Մարաց թագավորությունները՝ Կյուրոսի ձեռքով, որը թագավորեց [32 տարի]...

## Ե

Մարաստանի Աժդահակ թագավորը, ինչպես մեզ ցույց են տալիս հին պատմագիրները, պատրաստվում էր պատերազմելու Մեծն Տիգրան Հայկազնի դեմ։ Նա կազմակերպեց այրուձի, որպեսզի ներխուժի Հայոց աշխարհը և կատարի իր նյութած չարագործությունները։ Մեծն Տիգրանը տեղեկացավ Աժդահակի պատրաստությունների մասին և զանազան ցեղերի՝ կապադովկիացիների, վրացիների և աղվանների ընտրովի, զորավոր և քաջամարտիկ տղամարդկանցից զորք հավաքեց։ Նույնպես և գազանների հետ մարտնչող Արարատյան անճոռնի զորքն իր բոլոր զորագնդերով և Սենեքերիմի որդի-

ներին, կատարյալ պատրաստությամբ, անհամար բազմությամբ։ [Տիգրանն] աճապարեց, քանի դեռ Աժդահակը չէր հարձակվել, որպեսզի մարացին հայկազնից ավելի քաջասիրտ չկարծվեր։ Արագ շարժվեցին հասան Մուղանի կողմերը, բանակեցին մեդացիների դաշտավայրում։ Աժդահակին սպառնաց մեծ վտանգ, երբ Տիգրանը ծանր զորքերով շարժվեց նրա վրա։ Հույժ խոհեմ Կյուրոս պարսիկը նույնպես իր հեծյալ զինակիցներով եկավ Տիգրանին օգնելու, որովհետև Կյուրոսն ու Տիգրանը բարեկամացել էին միմյանց հետ, ամեն ինչով նըման էին, միասիրտ, խելացի ու հույժ գովելի։ Սակայն նրանք դեռ չէին հասել միմյանց, երբ Աժդահակը նվերներ ուղարկեց Կյուրոսին և խոստացավ նրան տալ Սենեքերիմյանների տերության քառորդ մասը՝ Նինվեի կողմերով և այնտեղ եղող Տմորիք[75] ամբողջ։ Ոչ թե մեկ անգամ, այլ բազմիցս, իրար ետևից ուղարկեց դեսպաններ՝ հրովարտակներով ու ընծաներով։ Երբ Սենեքերիմի որդիներ Քսերքսեսը, Ադրամելեքը և Սանասարն իմացան այս գաղտնիքը, եկան Հայոց Տիգրան թագավորի մոտ և նրան հայտնեցին Աժդահակի դիտավորությունների մասին։ Սենեքերիմի որդիները Աժդահակի հանդեպ լըցված էին մեծ զայրույթով և անհաշտ ատելությամբ[76], քանզի նա սերունդն էր մարացի Վարբակի, որը վերացրել էր Սենեքերիմյանների պապի՝ Սարդանապալի թագավորությունը։

Այնժամ Սենեքերիմյանները Տիգրանից վերցրեցին հրովարտակ և ընծաներով մեկնեցին Կյուրոսի մոտ, վերցրեցին նրան և եկան Տիգրանի մոտ, ապա առանց հապաղելու մտան պատերազմի մեջ, քաջերը ելան քաջերի դեմ։ Քսերքսեսն աճապարեց Աժդահակի ետևից, հարվածեց նրա պղնձակուռ վահանին և գցեց թիկունքի վրա՝ երիվարի գավակին։ Իսկ Տիգրանը ձեռքի նիզակն արագությամբ խրեց նրա սիրտը և դուրս թափեց թոքի կեսը։ Կյուրոսն իր զորքով եկավ և սպանեց շատերին, մինչև որ գլխովին սրի քաշեց Աժդահակի զորքը, տիրեց Մարաստանին ու Պարսկաստանին։

Բայց Տիգրանը ձերբակալեց Աժդահակի զավակներից ինչ-որ երկուսին, բերեց Հայաստան ու մեծացրեց ծառայողների կարգը և հոգ տանելով նրանց հպատակեցնելու մասին, կարգեց արծվակիրի ու բազեակիրի պաշտոններում։ Ապա առաջ



քաշեց մատովակի պաշտոնում, հասցրեց և հաստատեց նախարարության աստիճանի։ Նրանց բնակեցրեց Աղբակ[77] գավառում, Զողախելում[78], Վրնջունիքում[79], ապա Հախրամում[80] բնակեցնելուց հետո սպասելով մի որոշ ժամանակ, որովհետև [Տիգրանը] նախապես նրանց ծառայության էր տվել իր քույր Տիգրանուհուն՝ Աժդահակի կնոջը և բնակեցրել հիշատակված տեղերում։

Այս մասին, երբ տեղեկացավ Լյուղացոց[81] Կրեսոս թագավորը, իրար անցավ, մարդիկ հավաքեց, գումարեց մեծաթիվ զորք՝ Կյուրոսի դեմ պատերազմելու համար։ Նրա զորաժողովի մասին իմացավ Կյուրոսը, գրեց Տիգրանին՝ ուղարկել օգնական զորք։ Տիգրանն առանց հապաղելու, հարավային և հյուսիսային զորքերը հանձնեց Քսերքսեսի և սրա որդի Արշեզի ձեռքը, որպեսզի փութով հասնեն այնտեղ։ Նրանք գնացին և պարսից Դնբունինդում[82] հանդիպեցին [Կյուրոսին]։ Ապա ընկան Կյուրոսի զորքի առջև և պատերազմեցին։ Երբ հասան Լյուղացոց առաջապահ զորքին, նետաձգությամբ սկսեցին խոցել միմյանց։ Պատերազմը երկար շարունակվեց։ Վրա հասան Կյուրոս թագավորն ու Քսերքսեսը։ Արշեզն իր վահանավորներով շրջափակեց Լյուղացոց թագավորին, և մեծ տագնապ եղավ։ Իսկ Լյուղացոց թագավորն իր ձին շուրջանակի, ոտքից մինչև գլուխ, ամբողջապես պատել էր պղնձյա զրահով, որպեսզի անխոցելի լինի։ Կրեսոսը իր վրա կրում էր տախտակափակ լանջապան, թիկնապահ, զանգապաններ, սռնապաններ, սաղավարտ, այնպես որ թվում էր, թե նա ամբողջովին պղնձից էր կազմված։ Կանգնել էր զորքի մեջ, ինչպես բլուր և անմատչելի էր կարծում իրեն։ Զինվորները կտրիճաբար պատերազմում էին։ Այն ժամանակ Քսերքսեսն ու Արշեզը խելացիորեն, որպես թե լյուղացի զորականներ են, աղաղակեցին՝ «Կյուրոսի զորքը ջարդվեց, և նրանց թագավորը փախավ»։ Կրեսոսն ու զինվորները ուրախացան այս լուրից, դուրս եկան ամրացված զորագնդից և աճապարեցին Կյուրոսի ետևից, աշխատում էին առաջ անցնել միմյանցից։ Իսկ Լյուղացոց թագավորը հանդարտ քայլում էր զորքի ետևից։

Նույն ժամանակ Քսերքսեսն ու Արշեզը վազեցին և հանդիպեցին լյուղացիներին, ձերբակալեցին [Կրեսոսին], հանե-

ցին զենք ու զրահը և տարան կանգնեցրին Կյուրոսի առջև։ Կյուրոսը նրան վերցրեց տարավ Խորասան[84], իսկ այնտեղից վերադարձավ Բաբելոն, իր հետ ունենալով լյուդացուն, որի գանձատունը հրամայեց ավարի մատնել։ [Կրեսոսին] տանջեցին սաստիկ, ուստի տվեց նաև թաքցրած գանձերը, իսկ ինքն սպանվեց Կյուրոսի հրամանով, և վերացավ Լյուդացոց տերությունը։

Երբ Քսերքսեսն ու յուրայինները գործից հաջողությամբ գլուխ հանեցին, վերադարձան և նվեր տարան Տմորիք ամրոցն ու Նինվեի[85] գետեզերքը։

Իսկ երբ Կյուրոսը տիրեց պարսից թագավորությանը՝ գրավեց Բաբելոնը և ազատեց գերեվարված հրեաներին, Գալատունը[86] գալաթացիների[87] ցեղը 12 բյուր զորքով շարժվեց նրա դեմ։ Կյուրոսը գրեց Տիգրանին, որպեսզի օգնություն ցույց տա իրեն, որովհետև բարբարոս և խուժադուժ մի ցեղ գալիս էր պատերազմելու և խլելու հրեից գերիներին։ [Տիգրանը], բարեկամությունը պահպանելու նպատակով նույն Քսերքսեսին ու նրա որդի Արշեզին 40 հազարով ուղարկում է օգնության։ Գնացին և Տավրոս լեռան[88] ստորոտներում հանդիպեցին [Կյուրոսին]։ Ճանապարհին երկար ժամանակ անցկացնելուց հետո հասան մինչև Աղձնիքի[89] Արզն[90] [գավառը։ Գերեվարված հրեաների] Եզր մարգարեն և Սաղաթիել թագավորը վախճանվել և թաղվել էին այնտեղ՝ Մարքակատինայում, մի բլրակի վրա։ Եվ ոչ պակաս քան մեկ ամիս պատերազմեցին։ Հայոց զորքը քիչ քաջություններ չցուցաբերեց. նա շարժեց պարսից ամբողջ զորքի, այլև օտարների զարմանքը։ Գալաթացիների զորքը, մեծից մինչև փոքրը ջարդվեցին. նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց։ Իսկ Իսրայելի որդիները վերադարձան իրենց երկիրը։ Մինչև սուրբ քաղաք Երուսաղեմ նրանց առաջնորդեցին Քսերքսեսն ու Արշեզը, [ապա] հրեաների առաջնորդությունը վստահեցին Զորաբաբելին՝ Սաղաթիելի որդուն՝ Հուդայի ցեղից և ապա հաղթական վերադարձան մեծ զորությամբ։

Սրանք այն Գոգն ու Մագոգն են, որոնք հիշվում են Ամովս[91] և Եզեկիել[92] մարգարեների գրքերում։



## Ջ

### ԿՅՈՒՐՈՍԻՑ ՀԵՏՈ [ԹԱԳԱՎՈՐՈՒՄ ԵՆ] ԿԱՄԲԻՑՈՒՍԸ[93], ՇՄԵՐԴԻՍ ՄՈԳԸ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊՅԱՆԸ[94]։ ԴԱՐԵՀԻ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐՈՒՄ ՄԵՌՆՈՒՄ Է ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԸ

Այս դեպքերից հետո, Հայոց թագավորության վերանալու ժամանակ [Սենեքերիմյաններն] ապրում էին՝ մեկն այսպես, մեկն այնպես, խառնաշփոթությամբ և անիշխանությամբ։ Տիրում էին այլևայլ տեղերի, իշխանությունը հանձնում պատահական անձերի, որոնք հայտնի չեղան ո՛չ որևէ գործով և ո՛չ էլ՝ քաջությամբ։ Մենք ևս մտադիր չենք այդ մասին գրելու։ Բավարարվեցինք միայն ըստ կարգի անունները տալով, ինչպես արել են հին մատենագիրներն իրենց պատմություններում։ Եվ անուններն ըստ կարգի մտցրեցի մատյանիս մեջ։

| | |
|---|---|
| Տիգրան | Պարսից թագավորներ. |
| Արդրամելեք | Քսերքսես |
| Ներս | Արտաշես Երկայնաբազուկ |
| Ներսեհ | Դարեհ |
| Մարոգ | Արտաշես |
| Արշամ | Ողոքոս |
| Արշավիր | Զարսես |
| Ասուդ | Դարեհ |

Ապա Ալեքսանդր Մակեդոնացի՝ Փիլիպոսի որդին, աշխարհակալ թագավորը։

Այս ժամանակ թագավորում էր տիեզերակալ Ալեքսանդր Մակեդոնացին, որը փութապես հարձակվեց Դարեհի վրա, սպանեց նրան, և վերացավ պարսից Արշավիրյան[95] թագավորությունը։ Իսկ Ասուդը Դարեհի կողմում պատերազմեց Ալեքսանդրի զորագնդերի դեմ։ Նա դյուցազնաբար, ինչպես Հերակլեսը, ընդհարվեց Ալեքսանդրի հզոր զորապետների հետ և երկար ժամանակ նրանց ետ պահեց, մինչև որ ապշահար զորքը փախուստի դիմեց։ Փախուստի մատնեցին [զորապետներին], և Ալեքսանդրը երես առ երես հանդիպեց հանդուգն դիմադրության։ Իսկ Ասուդը նույնեց Ալեքսանդրին, որպես դյուցազուն սաստեց և դեմքը խոնարհեց գետնին։ Ապա զրահված

ձիուց իջավ Ալեքսանդրի առջև և առ ոչինչ համարելով իր հանգույն արարքները, կամեցավ ողջունել արքային, ասելով. «Քաջերը հանդիպելով քաջերին, հանգչում են ազատ մնալ մեղադրանքից, որպեսզի վախկոտությունը քաջությունից ավելի չմեծարվի և կանացի բնություն ունեցողները քաջ չձևանան, թեև զորքն ընկնելու է արյունահեղության մեջ»։ Ալեքսանդրի զորագլուխներ Պտղոմեոսն[96] ու Սելևկիոսը[97] հիացան նրա քաջասրտությամբ, լեզվի ճարտարությամբ և թագավորից խնդրեցին Ասուրին պարգևել իրենց։ Թեև Ալեքսանդրը լցված էր իմաստնությամբ ու հանճարով, սակայն գազազում էր ընդդիմակայող հրոսակների դեմ։ Ուստի Պտղոմեոսը վերցրեց Ասուրին և ուղարկեց Եգիպտոս, այն երկիրը, որն Ալեքսանդրը պարգևել էր իրեն։ Ասուրի համար առատորեն ռոճիկ կարգեց, մինչև որ ազատ ժամանակ անձամբ կգնար այնտեղ։

Իսկ Ասուրի զինակից Վահագն Հայկազնին կարգեցին արքունի դռանը։ Նա մեծ ջանասիրությամբ առաջ գնաց զինվորական գործում, ջանալով կամ մեռնել թշնամու սրից, կամ հաղթել քաջասրտությամբ։ 12 տարի հետո Բաբելոնում մահացավ Ալեքսանդրը, որն ապրեց 33 տարի, թագավորեց 12 տարի, համայն աշխարհին իշխեց 7 տարի։ Մահից առաջ, Ալեքսանդրը, որ առանց երկյուղի իշխում էր իր թագավորության մեջ, աշխարհի չորս կողմերում նշանակեց իր չորս զորապետներին՝ Պտղոմեոսին՝ Եգիպտոսում և Հնդկաստանում, Սելևկիոսին՝ Ասիայում և ամբողջ հյուսիսում, Անտիպատրոսին[98] Պարսկաստանում և ողջ արևելքում։

Իսկ Պտղոմեոսը 12 տարի նենգությամբ և դաժանությամբ իշխեց Երուսաղեմին ու Հրեաստանին, բնակիչներից շատերին տարավ բնակեցրեց Եգիպտոսում։ Ապա Ասորեստանին, Բաբելոնին և դրանց վերևի կողմերին տիրեց Սելևկիոս Նիկատորը, որը կոչվում էր «Հաղթող»։ Երբ եկավ տերության ժառանգ կարգելու ժամանակը, Պտղոմեոսն իր փոխարեն ժառանգ նշանակեց Ասուրին և նրա ձեռքը տվեց Եգիպտոսի ու Հնդկաստանի ամբողջ իշխանությունը, իսկ ինքն Ալեքսանդրի ետևից հետացավ գնաց Բաբելոն, ապա այնտեղից եկավ Երուսաղեմ, երկրպագեց աստծուն։ Թեպետ Ասուրը, դառնալով Եգիպտոսի ու Հնդկաստանի տերը, մեծ փառքի տիրացավ, սակայն հիշեց իր հայրենի թագավորությունը՝ Ասորեստանը, և չկամե-



ցավ մնալ Եգիպտոսի տիրակալ։ Գնալով աճեց նրա այս ցանկությունը։ Ուստի եկավ Պտղոմեոսի մոտ։ [Նրա] քաջության պատճառով Պտղոմեոսը սիրով լսեց այս մասին, բայց չհամարձակվեց հայտնել Ալեքսանդրին, քանզի վերջինս չէր ընդունում, թե իրենից բացի ուրիշ մեկը տիրում է աշխարհում։ Ուստի Ասուրը երկար տարիներ Եգիպտոսում ապրելուց հետո, մահացավ և թաղվեց այնտեղ։

Ալեքսանդրի մահից հետո նրա զորավարները տիրեցին մակեդոնական տերությանը։ Մնաց միայն Պտղոմեոսյան հարստությունը[99], մինչև որ բազում ժամանակներ հետո, նախքան Օգոստոս կայսրը[100], նրան տիրեց եգիպտացի մի կին՝ Կլեոպատրան։ Ալեքսանդրից հետո 60 տարի էր անցել, երբ Հայաստանի ու Պարսկաստանի անիշխանությունից հետո Արշակ[101] քաջն իշխեց մարերին, պարսիկներին, եգիպտացիներին ու ելիմացիներին[102] Բալհ քաղաքում։ Իսկ նրա Վաղարշակ[103] եղբայրը եկավ Հայաստան, բարեկարգեց Հայոց շփոթ ու խռովահույզ երկիրը, հիմնեց նախարարություններ, նրանց տվեց անուն, բարձ և գահ։

Իսկ Ասուրի սերունդները՝ Սենեքերիմյաններ Շավարշը, Գողյանը, Շավասպը, Պերոզը, Շահակը և Կյուրոսն ապրում էին, ինչպես որ պատահեր, երբեմն այսպես, երբեմն այնպես։

Այս Շահակն իր որդուն անվանեց Կյուրոս, հիշելով այդ մարդու քաջությունն ու նրա հետ իր նախնի Քսերքսեսի ունեցած մտերմությունը։ Սրանք զրկվեցին իրենց իշխանությունից, որ տվել էին Տիգրանն ու Կյուրոսը, և մինչև Կյուրոս Շահակյանը ապրեցին մի կերպ, խեղճությամբ։

Երբ Արշակը պատերազմեց մակեդոնացիների դեմ, Կյուրոսն աչքի ընկավ իր քաջագործություններով։ Նա արիությամբ գրեթե գերապանցեց Արշակ Պարթևին և զուշաններին[104] մարերի ու ելիմացիների քաջերին, վաստակեց քաջանունություն, հաղթողի և իմաստունի համբավ, տիրացավ գահի, պատվի և ընծաների, որովհետև [Վաղարշակը] նրան հարցրել էր, թե ո՞վ է, որ տոհմից է [սերում], ե՞րբ և ո՞ւմ օրոք է [եկել], և երբ իմացել էր նրա տոհմը, գավառը, նահանգը, հեռանալու պատճառը և նոր վայրում տեղավորվելու, որդիության, գլխով անցածի և ուրիշ շատ բաների մասին, Արշակից խնդրել էր նրան և ապա իր հետ վերցրել բերել Հայաս-

տան ու անվանել Արծրունի, առաջին՝ Արծվիք կոչված դաշտավայրում բնակվելու, ինչպես նաև արծվաքիթ կերպարանքով աչքի ընկնելու պատճառով։ Բայց չգիտեմ, նրանց Արծրունի է անվանել երկրի անունո՞վ, թե՞ իրենց կերպարանքի պատճառով։

Երկրորդ՝ անվանվեցին Արզրունիք՝ Արզնում նրա նախնիներ Ադրամելեքի և Սանասարի բնակության պատճառով։

Երրորդ՝ պատերազմներում արծվային քաջասրտության, արիության, խիզախության պատճառով նրանց նմանեցրին արծիվների։

Թեպետ տոհմի անվանակոչության երկրորդ և երրորդ պատճառները պատշաճ է համարվում և դուր է գալիս իմաստասերներին, ինձ համար ախորժելի է առաջինին հավանություն տալը։

Պտղոմեոսների թագավորության ժամանակներն անցան, հասնելով մինչև Կլեոպատրան՝ Պտղոմեոս Դիոնիսի դուստրը։ Սա թագավորեց Եգիպտոսում և Ալեքսանդրիայում։ Բացելով գրատունը, գտավ Սենեքերիմի ժառանգներից յուրաքանչյուրի մասին՝ հականե հանվանե, ինչպես նաև տոհմին վերաբերող բազում այլ բաներ։ Վախկոտներին, աննշաններին ու նրանց արարքները նշեց՝ նրանց երկչոտությանն արժանի ձևով։ Մագաղաթի վրա հունարեն լեզվով գրված հիշատակարանը, որպես ընծա, ուղարկեց հայոց Տիգրան արքային, որը չորրորդ թագավորն էր Վաղարշակ Պարթևից հետո։ Այնտեղ գրված էր Ալեքսանդր Մակեդոնացու մասին։ [Հիշատակարանն] սկսվում էր Սենեքերիմից և հասցվում Պտղոմեոս Եգիպտացին, որի անունով նրանք անվանվել են Պտղոմեոսյաններ։ Ուսումնասեր Պտղոմեոսն ստուգությամբ շարադրել էր այն, ապա պահել էին գրատանը, մինչև Կլեոպատրա կինը, որի մասին ավելի վերևում գրեցինք։ Իսկ մեզ այս պատմությունները հասել են ըստ հին պատմագիրներ Մամբրե Վերծանողի, նրա Մովսես անունով եղբոր և Թեոդորոս Քերթողի։ Սրանք աշակերտել էին Ղևոնդ քահանային, որն ուրիշ սուրբ եպիսկոպոսների ու քահանաների հետ մարտիրոսացավ Պարսկաստանում։ Սրանք Վահան Արծրունու հրամանով հոգ տանելով, պրպտեցին և համառոտակի գրեցին հին տոհմերի բազմաց-



ման մասին, բայց շատ երկար հոգ չտարան այս պատմությունը գրելիս։

Իսկ մենք, Հայոց զորավար և Վասպուրականի իշխան Գագի՛կ, քո հրամանով ջանացինք համառոտությամբ շարադրել պատմությունը։ Մեր խոսքն առաջ ենք տանելու և արագ անցնելու ենք պատմագիրներից յուրաքանչյուրի շարադրածի վրայով և, ինչպես հարկն է, այստեղ դրոշմելու ենք միայն ազգաբանությունը, մինչև որ կհասնենք մատյաններում գրված պատմությունների ընդարձակ ասպարեզը և, ինչպես հարկն է, մանրամասնորեն կշարադրենք քեզ ախորժելին։

Այս Վահանը, որ հիշեցինք, նա է, որին թագավորեցրին հայոց նախարարները սուրբ Վարդանի ժամանակ։ Սրա մասին, ինչպես հարկն է , կգրեմ իր տեղում։ Իսկ այժմ շարունակենք ըստ կարգի՝ Կյուրոս, Վարգեն, Վահան, Շամբիթ, Ջաջ, Շաջուռ։

Արշամը թագավորեց Հայաստանում և Բագրատունյաց տոհմը գցեց բազում տառապանքների մեջ, Հյուրկանոս քահանային բանտի կապանքներից ազատելու համար։ Նա Բագրատունյաց նահապետ և Հայոց ասպարապետ Ենանոսին ընտանիքով և ողջ ազգատոհմով հանդերձ ձերբակալեց և ենթարկեց բազում չարչարանքների, ոմանց էլ սրի քաշեց, կամենալով մեկ հարվածով ոչնչացնել Բագրատունյաց տոհմը։

Բայց Ջաջուռ Արծրունին ձեռք զարկեց գործին. մոտեցավ թագավորին և խնդրեց [ազատել] Ենանոսին, քանզի նա կախված էր փայտից։ [Ջաջուռը] նրա խնդիրքը կատարեց. Ենանոսին իջեցրեց փայտից, նրա տոհմը փրկեց սրածվելուց, իսկ Ենանոս Բագրատունուն հաստատեց արքունիքում՝ նույն բարձին։ Բայց Արշամը հանձն չառավ Ենանոսին ապահովաբար պահել իր մոտ և ուղարկեց Հայաստան։ Ջաջուռը վերցրեց նրան և իր կահ կարասիով[108] ու ամեն տեսակ պատրաստությամբ բնակեցրեց Արագածի կողմերը՝ Թալին անունով գյուղում։ Սա առաջինն է Բագրատունիների տոհմից, որը եկավ և բնակվեց Այրարատ նահանգի այս մասում։ Ջաջուռն իր որդի Սահակի համար կնություն առավ Ենանոսի դստերը, որի անունն էր Սմբատուհի։ Սա Բագրատունիների և Արծրունիների առաջին խնամությունն էր, որ կատարվեց Պարսից թագավորի 18-րդ տարում։

Իսկ Արշամը 20 տարի ապրելուց հետո վախճանվեց, ապա թագավորեց նրա որդի Աբգարը։ Այստեղ սկսվում է Հայոց թագավոր Աբգարի պատմությունը։ Սրա օրոք մարմնով աշխարհին երևաց մեր փրկիչն ու աստվածը՝ տեր Հիսուս Քրիստոսը և սկիզբ դրեց կենդանի արարածների նորոգմանը և լուսավորեց բոլորին, ովքեր աշխարհ էին գալու։ Պատմությունս համարձակորեն առաջ տանելու համար ինձ հույժ հաճելի է շատ-շատերի, կամ թե Քրիստոսի բոլոր հավատացյալների համար, ավելի երկար չարչարվել իմ այս ճառի վրա։ Ես գրեմ, դուք լսեք։

Քանզի սա առաջինն էր հեթանոս թագավորներից, որ սկիզբ դրեց Քրիստոսի հավատին, ինչպես ցույց են տալիս մարմնահավատ պատմագիրների հիշատակարանները, մանավանդ առաքյալ Հովհաննես ավետարանիչը՝ որոտի որդին, որ տիեզերքում հնչեցրեց Քրիստոսի ավետարանը նրանց համար, ովքեր հավատում էին նրան։ Որովհետև ասում է, թե՝ «Այնտեղ էին մի քանի հեթանոսներ, որոնք եկել էին Երուսաղեմ, տոնին երկրպագություն անելու։ Սրանք եկան Փիլիպոսի մոտ, որը Բեթսայիդայից էր և ասում էին՝ կամենում ենք Հիսուսին տեսնել»*։ Առաքյալները սրանց, Աբգարի թղթով հանդերձ, բերեցին Փրկչի առաջ, որից լսեցին խելացի պատասխան իր խաչվելու մասին, ինչը կատարվեց աշխարհի համար և համարվեց նրա փառքը։ Թովմա առաքյալի ձեռքով գրեց նաև [Աբգարի] թղթի պատասխանը, խոստացավ նաև, որ Թադեոս առաքյալը կկատարի [Աբգարի] խնդիրը։ Իսկ [Հիսուսի] գեղեցիկ պատկերը՝ հանված կտավի վրա, հագեցրեց Աբգարի կարոտը կենաց աղբյուրի՝ Քրիստոսի հանդեպ։

Պատմությունն այստեղ վերստին դառնում է հրճվալից, շնորհիվ Արծրունյաց բարձրագահ, մեծատոհմ նախարարության՝ Սենեքերիմից սերած մեծ զարմի, որն աճեց հասավ Աբգարի թագավորելու, Քրիստոսին նրա հավատալու ժամանակները։ Նրա հետ էր Արծրունյաց մեծ իշխանը, Մեծ Հայքի թագավորության զորքի զորապետն ու միապետը՝ Խուրանը, որն առաջինը հավատաց Քրիստոսին և մկրտվեց Թադեոս ա-

* Հմմտ. Յովհ., ԺԲ, 20—21։



ռաքյալի ձեռքով։ Քրիստոսին հավատալուց հետո նա հավատի հանդեպ ցուցաբերեց ուղղամտություն և երկյուղածություն, ինչը հասցրեց գրեթե ծայր առաքինության, ինչպես հորդորում ու դաստիարակում է ավետարանական ուսմունքը։ Երանելի ու խելացի տղամարդու՝ Խուրան Արծրունու առաքինությունը ցույց տալու համար առայժմ այսքանը բավական համարենք այն ամենի հետ, ինչ գիտենք։ Մենք պատմությունը կշարունակենք համառոտակի ու չափավոր ձևով, որովհետև ժամանակը չէ կատարել ներբողական գնգերումներ և զանց առնել պատմելու կարգը։

Մեր տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան ժամանակ Հրեաստանի թագավորն էր Անտիպատրես Ասկալոնացու և Կիպատրես Արաբիացու հեթանոս որդին՝ Հերովդեսը[106]։ Հովսեպոսը[107] մեզ պատմում է, թե ինչ կատարեց նա մանուկների հանդեպ։ Հերովդեսից ծնվեցին հինգ որդիներ, որոնցից մեկի անունը Հերովդես էր, մյուսինը՝ Փիլիպպոս։ Վերջինիս կնոջը խլեց [եղբայրը]՝ Հերովդեսը, որն արձակել էր իր առաջին կնոջը՝ պատրեացոց Արետ թագավորի դստերը։ Սրանից չարացած Արետը մտադրվեց վրեժխնդիր լինել դստեր անարգանքի համար, սակայն չէր համարձակվում ինքնակալ Օգոստոս Տիբերիոս[108] կայսեր պատճառով։ Այնուհետև [Արետը] բարեկամացավ Հայոց թագավոր Աբգարի և մեծ զորապետ Խուրան Արծրունու հետ, [Աբգարին] ուղարկեց ընծաներ և նրանից ստացավ օգնություն՝ նետաձգության, զենք գործածելու, ձիավարության մեջ ճարտար, իմաստուն ու կտրիճ այր Խուրան Արծրունուն, որը հարձակվեց ու ջարդեց Հերովդեսի զորքին, մինչև որ ինքը՝ Հերովդեսը իր զինակիր Ուրեղիանոսի հետ մազապուրծ փախավ Ասկալոն[109] քաղաքը, իր քեռու մոտ, որը Հյուրկանես քահանայի որդին էր։ Թեպետ Աբգարի և Խուրանի հետ Արետի բարեկամանալն ուներ իր պատճառը, սակայն Աբգարն ու Խուրանը, Քրիստոսի հանդեպ ունեցած սիրուց ու հնազանդությունից և Հերովդեսի արարքներից մղված՝ քեն պահեցին նրա հանդեպ, ինչպես հետագայում եղավ Պիղատոսի նկատմամբ, երբ վրեժխնդիր եղան Հովհաննես Մկրտչի սպանման ու Քրիստոսի հալածանքների համար։ Այդ [կատարվեց] Տիբերիոս կայսեր տասն և վեցերորդ տարում։

Մեր փրկչի երկինք համբարձվելուց և բարեպաշտ Աբգարի վախճանվելուց հետո թագավորեց նրա վատանուն որդին, որը չդարձավ Քրիստոսի հանդեպ հոր հավատի ժառանգորդը ու ետ կենալով սրբությունը պաշտելուց, երկրպագեց կուռքերին, ինչն արհամարհել և մերժել էր Աբգարը։ Նա կամեցավ մեծ զորավար Խուրան Արծրունուն ևս գցել խարդախության ուռկանը և հետևել տալ իր մոլորությանը, սակայն նրանից ծաղրվեց և արհամարհվեց։ Իսկ Խուրանը վերցրեց զորքի մեծ մասը և գնաց Շավարշան[110], Սանատրուկի մոտ, ապա նրա հետ հարձակվեց Աբգարի որդու վրա, որպեսզի թագավորությունից զրկի նրան։ Սակայն պատերազմը դեռ չէր վերջացել, երբ աշտարակը, որ կառուցում էր Աբգարի որդին, փլվեց և սպանեց նրան, առնելով սուրբ Ադդեի սպանության վրեժը։

Իսկ Խուրանը չմնաց Սանատրուկի մոտ և գնաց Հունաց երկիրը՝ Տիբերիոս կայսեր մոտ, երբ սա ոսկեհանքերի համար պատերազմ էր մղում իսպանացիների դեմ։ Այնտեղ Խուրանը Հայոց աշխարհից իր հետ մեկնած զորականների հետ ցուցաբերեց բազում քաջություններ և տարավ հաղթանակներ, ինչի համար հույժ ուրախացած Տիբերիոսը ստադիոն կոչված վայրում նրան պատվեց ծիրանիով և հաղթության պսակով։ Տիբերիոսը վախճանվեց 23 տարի թագավորելուց հետո։ Նրա փոխարեն թագավորեց Գայոս կրտսերը[111], երեք և կես տարի։

Իսկ Խուրանը լսեց, որ Աբգարի կինը՝ Հայոց Հեղինե տիկինը անօրեն Սանատրուկի պատճառով հրաժարվել է Միջագետքում մնալուց և գնացել է սուրբ քաղաք Երուսաղեմ, և ապրում է այնտեղ բարեպաշտությամբ։ [Խուրանը] եկավ նրա մոտ՝ Երուսաղեմ, ապա վերցրեց ոսկիներ և տիկնոջ հետ գնաց Եգիպտոս։ Կլավդիոսի օրոք եղած սովի ժամանակ գնեց ցորեն և բաշխեց որբերին ու այրիներին, ինչպես նաև Քրիստոսի հավատացյալ բոլոր տնանկներին, որոնց ցորենը բավականացրեց։ Խուրանն այնտեղ ապրեց և այնտեղ էլ վախճանվեց բարվոք ծերության մեջ։ Նա հանդերձյալ աշխարհում Հեղինե տիկնոջ և մեր աստծու՝ Քրիստոսի բոլոր սրբերի հետ պսակվելու է Քրիստոսից. Ամեն։



## Է

## ՆԵՐՍԵՀԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՉԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՉԵ ԱՐՇԱՎԻՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Բայց երբ Խուրանը մեկնեց Տիբերիոս կայսեր մոտ, իր Վաչե որդուն և եղբորը՝ Արշավիրին, թողեց Խառանում[112], Հեղինե տիկնոջ մոտ։ Երբ Հեղինե տիկինը մեկնեց Երուսաղեմ, Վաչեն ու Արշավիրը վախեցան մնալ Սանատրուկի մոտ և գնացին Ասորվոց Ներսեհ թագավորի[113] մոտ։ Իրենց հետ վերցրեցին Աբգարի, Խուրան Արծրունու և Ներսեհի խաղաղության դաշնագիրը։ Ներսեհը նրանց նշանակեց գործակալությունների գլուխ՝ Վաչեին կարգեց արքունիքի դռանը, որպեսզի այնտեղ յուրաքանչյուր ոք հլումուտ անի նրա միջոցով, և մեծից մինչև փոքրը նրա ձեռքով կարգի բերեն իրենց գործերը։ Իսկ Արշավիրին կարգեց պատերազմական գործի, զորքերի գլուխ։ Սրանից չարացան Ներսեհի նախարարները[114] և նրա մերձավորներից ինչ-որ մեկին, Դարեհ անունով, գրգռեցին, և նա մեկնեց Ներսեհի մոտ ու ասաց. «Ինչո՞ւ համաձայնեցիր այդպես անել, ինչո՞ւ կարգեցիր այդ մարդկանց գործակալներ քո երկրում, չէ՞ որ դրանք Նինվեից են, Սենեքերիմի սերունդներից, բայց իրենց տնօրինության տակ ունեն քո զորքը, միգուցե չարիքներ գործեն քո դեմ և խլեն Նինվեի թագավորությունը։ Որովհետև, երբ Աբգարը մեկնել էր Պարսկաստան, Խուրանը, որ Վաչեի հայրն էր և Արշավիրի եղբայրը, բարեկամացել և դաշինք էր կնքել պարսից Արտաշես թագավորի հետ։ Ուստի երբ կատարեն քո դեմ մտահղացած չարագործությունը, ապա, ինչպես լսել ենք իրենց հավատարիմներից, Արտաշեսի օժանդակությամբ կզրկեն քո զարմին ու զավակներին Ասորվոց թագավորությունից։ Կամ նրանց հղացած չարիքը թափել տուր իրենց գլխին, կամ թող գնան, ուր որ կկամենան»։ Ներսեհը լսեց Դարեհին, բայց ապացույցներ չկարողացավ գտնել ասածի վերաբերյալ։ Սակայն բանսարկուների պատճառով Վաչեն ու Արշավիրը ելան գնացին պարսից Արտաշես թագավորի մոտ, որտեղ և մնացին, մինչև Սանատրուկի որդի Արտաշեսի վերադարձը։ Սա եկավ մեզ մոտ և թագավորեց, սպանելով Երվանդին։

Վաչեի որդի Սահակը խույս տվեց գնաց Մարաց, Ատրպ-

պատականի[115] կողմերը և մնաց Պերոզ-Վռամ կոչված ինչ-որ զորավարի և մոգի մոտ։ Իսկ Սմբատը վերցրեց Արտաշեսին և բնակվեց Ատրպատականի Զարավանդ [գավառում], ապա գրեց Սահակին՝ վերադառնալ Երվանդի մոտ, միգուցե հնարավոր լինի մի բան խորհել Երվանդի մասին։ Նա անսաց ու առանց հապաղելու, եկավ և Երվանդի առաջ դրեց փախստյան պատճառը, ասելով՝ «դայակի[116] պես սնուցանեցինք Սանատրուկի որդիներին և դու թագավորելիս Արտեմիդի ու Արամազդի անուններով երդվեցիր, որ երկյուղ չունենանք որևէ բանից»։ Բայց Երվանդը հետևում, փնտրում էր Արտաշեսին։ Սմբատը վերցրեց Արտաշեսին և եկավ բնակվեց Վարագա բարձր լեռան[117] վրա։ Երվանդը հետապնդեց նրանց, եկավ բնակվեց Տոսպ գավառի[118] ծայրամասում՝ լեռան ստորոտին և տեղն անվանեց Երվանդական[119]։ Սահակը մարդիկ ուղարկեց Սմբատի մոտ, հորդորեց չմնալ լեռան վրա, այլ այնտեղից փութով վերադառնալ Հեր և Զարավանդ[120]: Որովհետև ասում է,— Երվանդը զորքով չի մտնի Մարաստանի սահմանները։ Նա ամեն օր ուղարկում էր այն, ինչ պետք էր մանկան համար։ Երվանդը գտավ սա և Սահակին կապանքներով ուղարկեց Արմավիր, որտեղ մնաց այդպես և վախճանվեց կապանքների մեջ։

Իսկ Վաչեի եղբայր Աշոտը, քանզի մանկահասակ էր, իր դայակի հետ եկավ Երվանդի մոտ, որովհետև չկարողացավ փախչել ուր որ կկամենար, մտածելով, թե միգուցե գնալիս բռնվի, և մահվան դատապարտվի։ Երվանդը պահեց նրա հորը տրված երդումը և թույլ տվեց գնալ բնակվել որտեղ որ հաճելի է համարում։ Դայակը վերցրեց նրան և տարավ Սիմ լեռը, իր պապերի բնակության տեղը՝ Տարոն[121] աշխարհում:

Նույն ժամանակ Սմբատը վերցրեց Արտաշեսին ու իջավ լեռան ստորոտը և քարերի մեջ ընկած ծածուկ, ապահով ու խորը կարկառը դարձրեց իր ապաստանը։ Այն Վանի[122] քաղաքերդի հարավակողմում էր, մոտիկ այն տեղին, ուր մի բլրակի ստորոտում, ծովեզերքից ոչ հեռու, ցայտում է աղբյուրը ու զովասուն քամիներն են փչում, զովացնելով ամառային տապից ու կիզիչ արևից։ Այստեղ մնացին բազում օրեր և ապահով էին Երվանդի հանդեպ ունեցած վախից ու կաս-



կածներից։ Որովհետև ասածը նախախնամությամբ, Արտաշեսը մնաց պահված, ուստի Երվանդը չկարողացավ որևէ հընար գտնել նրա փախստյան դեմ և Ատրպատականի սահմաններով վերադարձավ Անձահի ձոր[123]։ Իսկ Անձահի ձոր են կոչել այս պատճառով. բարձր բլուրների, նեղ կիրճերի մեջ ձորերի ապահով ու ջրաշատ տեղերում, երկրի խորքում բնակիչներից, Երվանդի հրոսակներից ապահով տեղերում թաքցրած ունի բազում գանձեր։ [Երվանդը] գնաց կանգ առավ Նախճավան[124] ավանում՝ Վասպուրական[125] աշխարհի ոստանում։ Այնուհետև Երվանդն ընկավ տարակույսների մեջ, գիշերը քաղցր քուն չէր գալիս [աչքերին], կերակուրը համ չուներ բերանում։ Դրանից հետո Սմբատը վերցրեց Արտաշեսին և ինչպես մուրացկանը, որ շրջում է խնդրում է ամենօրյա պետքերը, մեկնեց Մարաց թագավոր Դարեհի արքունի դուռը, որտեղ կրեց տառապանքներ, մինչև որ նրա մասին իմացավ Երվանդը։ Սա գրեց Սմբատին, թե միգուցե իրեն հանձնի մանուկ Արտաշեսին։ Արքունքի հասած Արտաշեսը մեկնեց պարսից թագավոր Արտաշեսի[126] մոտ։ Այնտեղ հաղթական պատերազմներում ցուցաբերեց բազում քաջություններ և մեծարվեց պարսից Արտաշես թագավորից, որը զորքով օժանդակեց նրան և հոր՝ Սանատրուկի փոխարեն թագավորեցրեց Հայաստանում, Արշակունիների թագավորանիստում։ Ապա Վաչեն ու Արշավիրը վերադարձան Արտաշեսի հետ ու արյաց արքա Արտաշեսի 31-երորդ տարում և Հունաց թագավոր [Տիտոսի երկրորդ[127]] տարում թագավորությունը խլեցին Երվանդից։ [Արտաշեսը] վերադարձրեց նրանց հայրենական կալվածքները՝ Սիմ լեռը և Աղձնիքը, մինչև Ասորեստանի սահմանները, որոնք Տիգրան Հայկազնը ի ժառանգություն էր տվել նրանց, բայց Սանատրուկը հարքունիս էր գրավել։

## Ը

## ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երբ Արտաշեսին հաջողվեց թագավորել և, ինչպես ցույց են տալիս պատմագիրների գրքերը, երկրաշեն հոգածությամբ կատարելապես կարգի բերել երկիրը ու Սաթենիկին առնել

կնության, հիշեց իր պանդխտությունը քարերի ծերպերում, ինչի մասին գրեցինք վերևում։ Նա կրկին մեկնեց այնտեղ զբոսնելու։ Այդ վայրը դուր եկավ նրան, ուստի ապառաժ լեռնակը բարեշինեց դարձրեց աշնան համար արքայական փառահեղ, գեղեցիկ ու պարսպավոր ապարանք, որը հյուսիսից նայում էր ծիծաղաշատ ծովին և պատած էր շատ հարմար պարիսպներով։ Արևի ճառագայթներն իրենց լույսը ցցում էին ճեմողների վրա, և թվում էր, թե ալիքների վրա ձկներն են խայտում։ Դիմացը Մասիք[128] կոչված լեռն էր, որը բարձրագագաթ է, ձյունապատ ու սպիտակափառ և նման է զորավոր նախարարների մեջ զվարճացող, վայելուչ մազերով փառահեղ թագավորի, որն աչքում տեսնում է կապուտակ ու ծիրանագույն դաշտի նմանվող ծովը։ Ափերի շուրջը կան սաղարթախիտ ծառերով, խաղողի որթերով ու զանազան պտուղներով ընդարձակ այգիներ։ [Արտաշեսը] կառուցեց շենքեր, ամրոցի շուրջը կար ծառաշատ, բազմապիսի ծաղիկների անուշ բույրով լցված ծաղկավետ բուրաստան, որը ոչ միայն ախորժելի է աչքին և հաճելի հոտոտելիքին, այլև դեղեր ստեղծելու համար՝ համաձայն Ասկղեպի* բժշկական հնարիմաց վարդապետության։ Նույն բլուրը շուրջանակի պատեց ամուր և ապառաժ սրբատաշ քարերից շինված բերդանման ապարանքներով, հովիտը շենացրեց դարձրեց ամեն տեսակ բարիքներով լի քաղաք։ Իսկ վերևում աղբյուրն էր ցայտում։ Ջրի պահպանության համար դարձյալ ամուր պարսպեց քարաբլուրը, պատեց պատերազմողների համար անմատչելի պարիսպներով։ Հաճելի ու ապահով լինելու համար ծովի խորության մեջ ցցեց պարիսպներ։ Իսկ երեք մասի ճյուղավորված, փոքր ու զգաձև հովտում, որ սկսվում է երեք բլուրներից, փորվածքի միջոցով կառուցեց բարձրաբերձ աշտարակ և նրա վրա կանգնեցրեց Աստղիկի պատկերը, իսկ մոտակայքում՝ գանձատուն, կուռքերին հովանավորելու համար։ Նույն տեղում հիմնեց ամեն տեսակ բարիքներով լիցուն ու հարմարավետ վաճառափողոցներ։ Այնտեղ, լեռան գագաթի հարավակողմում, գտավ սակավաբուխ աղբյուր, որից ջրմուղ անցկացնելով, բերեց հասցրեց հովիտը։ Ապա, ի բավականություն աչքերի տեսողության, դաշտավայրի արևմտյան կողմում և ծովեզրերին ստեղ-

* Առասպելական բժիշկ (Ապոլլոնի որդին)։



ծեց պարսպավորված ու զգավոր տարածություն, այն պատեց ծառաշատ ու վայելչատես այգիներով։

Քաղաքի կառուցումն ավարտելուց հետո պատրաստեց նաև անմատչելի և ապահով մի ամրոց, որն անվանեց «Զարդ», այսինքն՝ «պայծառություն փառահեղ կառույցի վրա»։ [Արտաշեսը] տիկին Սաթենիկին ամռանն ու աշնանը բերեց զբոսնելու բերդի գեղեցկաշեն ու զարդարված ապարանքներում։ Իսկ քաղաքի անունը կոչեցին Արտամատ[129], որը թարգմանվում և ստուգաբանվում է «Արտաշեսի ձեռակերտ» կամ «Արտաշեսի գալուստ», քանզի «մատը» ըստ պարսից լեզվի, թարգմանվում է «գալուստ»։ Որովհետև երբ Արտաշեսն այս վայրից հեռացավ, Երվանդը չշարունակեց այլևս անհանգստացնել ու նեղել նրան, իսկ երբ [Արտաշեսն] այնտեղից մեկնեց Մարաստան և Պարսկաստան, վերադարձավ մեծ ուժով ու թագավորական զորությամբ և տիրեց Մեծ Հայքին։ Ապա ըստ բարբարոսական սնահավատության, պատվեց այս վայրը, քանզի նրանից սկսելով էր հասել ամենաստորինից ամենաբարձրին։

Իսկ Սուկավետ[130] լեռան վրայի սրբերը, քանզի նվիրված էին Սաթենիկին, նրա համերկրացին էին և եկել էին նրա ետևից, ճգնավորներից մեկին ուղարկեցին տիկնոջ մոտ, ցույց տվեցին կուռքերի, նույնպես և Արտաշեսի մոտ եղած սրբի՝ Քոյուսի պաշտամունքի դատարկ ու անօգուտ լինելը։

Իսկ Սաթենիկն անսաց սրբերի խրատին, բայց չհրաժարվեց Աստղիկի պատկեր անվանված կուռքերից, քանի որ երկյուղ ուներ թագավորից ու նրա որդիներից, մանավանդ, որ թագավորը մտադիր էր հրաժարվել կուռքերից և երկրպագել ճշմարիտ աստծուն՝ Քրիստոսին։ Բայց մեզ հայտնի չէ, թե ինչպես վերջացավ գործը։

Վաշեի որդի Սահակը Արտաշեսի արքունիքում ուներ պատվավոր և երևելի գիրք։ Արտաշեսը վստահեց նրան Ազրակ գավառը, քանզի այնտեղ բնակվում էին ոմանք Աժդահակ Մարացու զարմից։ Նրանք քաջ տղամարդիկ էին, զենք գործածելու մեջ հաջողակ և լավ նետաձիգներ։ Բայց տոհմը նվազել էր և ոչ ոք չունեին, որ կարողանային պատերազմել, ծառայել թագավորին, մանավանդ որ նրանց երկիրը տակավին Երվանդի մահից և Արտաշեսի գահակալությունից հետո լիովին ավերվել էր պարսիկների ասպատակություններից։ Բայց Աժդահա-

*կի ցեղից ինչ-որ մի կին ապրում էր Փոքր Աղբակ[131] գավառի Ջլմար[132] և Սրինգ[133] ամրոցներում։ Կնոջ անունն էր Ջալլամար, նրա անունով էր կոչվում ամրոցը։ Կինն ուներ բազմաթիվ գանձեր, ինչպես նաև Անուշ անունով մի դուստր, որին Սահակը կնության առավ Արտաշեսի հրամանով։ [Արտաշեսը] կնոջ հայրենիքը հաստատեց Սահակի ժառանգական սեփականություն։ Այս պատճառով թագավորը նրա կնոջ հանդեպ խնամք ցույց տվեց, որպիսին չէր եղել ո՛չ Երվանդի և ո՛չ էլ մեկ ուրիշի ժամանակ։ Սահակը, նվեր ստանալով այդ երկիրը, որդուն՝ Աշոտին թողեց իրենց նախնի իշխանության լեռնակողմերում, որպեսզի բարեշինի, բնակեցնի երկիրը և այն ի ժառանգություն տա իրենց՝ Արծրունիների տոհմի զավակներին։ Աշոտն անխոհեմաբար գնաց բարձրացավ լեռը։ Բայց Հաշտյանք[134] գավառից ինչ-որ ելուզակներ էին հաստատվել լեռան վրա։ Միմյանց հանդիպեցին. [Աշոտը] հանդգնաբար դիմադրեց նրանց և նույն ժամանակ սպանվեց անզգուշաբար։ Հնարավոր չեղավ այդ ժամանակ բարեշինել երկիրը՝ ընդհուպ մինչև Արտաշեսի ութերորդ տարին, երբ թագավորը վերցրեց այդ երկիրը և հրամայեց կառուցել այնտեղ Հերակլեսի ու Դիոնիսի մեհյանները, որի շնորհիվ կարողացավ երկիրը պահել շեն ու բազմամարդ։ Սակայն Արծրունիների նվազած տոհմից ոչ ոք չմնաց, բացի Համամ անունով մի մանկանից, որը ծերունի Արշավիրի՝ Խուրանի եղբոր որդին էր և ապրում էր արքունիքում։ Թագավորը հիշեց նրա նախնիների ծառայությունը, և ինչպես որ Սահակին էր դարձրել, նրան ևս առաջ քաշեց, արժանացրեց հայրենի բարձ ու պատվին, ի ժառանգություն տվեց Աղբակ երկիրը։ Բայց Համամն ամբարտավան էր, ինքնահավան, պատերազմներում ծույլ ու դանդաղկոտ և թագավորի նկատմամբ վերաբերվում էր միայն շողոքորթ հնազանդությամբ։ Թագավորը, ճանաչելով նրա թույլ և մեղկ բնավորությունը, նշանակեց արքունի գործակալների վերակացու, որպեսզի այնու հպատակությամբ ծառայի թագավորին, մանավանդ որ նա տեղյակ էր դիվաններում պահվող մատյաններին։ Որովհետև հնում հոգ էին տանում ոչ թե որևէ զբաղմունքի և նույնիսկ երկրաշեն խնամատարության կամ պատերազմական գործերի մասին, այլ միայն ելումուտ էին անում թագավորի հավատարիմների հետ արքունի դիվանատներում*



*ու գանձատներում։ Սակայն Արտաշեսը Համամին դեսպան է ուղարկում Ադրիանոս[135] կայսեր մոտ՝ Բարբորա[136] ավազակի և Ասորիքում[137] նրա դեմ [մղած] պատերազմի պատճառով։ Մինչև գնաց և վերադարձավ, Արտաշես թագավորին գտավ Մարանդում[138] վախճանված։ Իսկ ինքն ուրիշ շողոքորթների հետ սպանվեց Մարաց աշխարհի Բակուրակերտ[139] ավանում։*

*Արտաշեսից հետո թագավորեց Արտավազդը, ապա Արտաշեսի որդի Տիրանը, ապա[140] Տիգրան վերջինը, հետո Վաղարշակը։ Սրանց ժամանակ Արծրունի տոհմի սերունդներն էին՝ Համազասպը, Շավարշը, Ասուդը և Բարգենը։*

*Վաղարշակը թագավորում է հոր՝ Տիգրանի փոխարեն, պատերազմեց հյուսիսաբնակ խազիրների[141] դեմ և սպանվեց կորվածից աղեղնավորների ձեռքով։ Նույն ժամանակ Բարգենը և մեծ ասպետ Աշոտը, որ զինակցում էին միմյանց, փրկվեցին մեծ պատերազմից, փութապես եկան Հայոց երկիրը և գուժեցին թագավորի մահվան մասին։ Նրանք պարսից Արտավան թագավորի օժանդակությամբ Վաղարշի փոխարեն թագավորեցրին որդուն՝ Խոսրովին։ Այսպես նրանք խաղաղեցրին երկիրը և Խոսրովի ողջ կյանքի ընթացքում, որ տևեց 48 տարի, ապրեցին խաղաղությամբ, իրենց կամեցածով։*

## Թ

## ՊԱՀԼԱՎԻԿ[142] ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՍՏԱՀՐԱՑՈՒ[143] ԹԱԳԱՎՈՐԵԼԸ

*Մինչդեռ Հայոց երկիրն այսպիսի անդորրի, ապահովության մեջ էր, ու ոչ մի կողմից վտանգ չէր սպառնում, այլ ինչպես գրված է, իրենք էին ուրիշներին նեղություններ տալիս, հանկարծակի հասավ Արտավանի[144] մահվան և Պարսկաստանում Ստահրացի Արտաշիր Սասանականի[145] թագավորելու համբավը։ Մեր Խոսրով արքան կործանման եզրին էր, բայց ջանում էր առնել իր հարազատի՝ Արտավան թագավորի վրեժը, ինչը և արեց։ Բայց [Խոսրովին] դավադրաբար սպանեց իր մերձավոր Անակը։ Ողջ երկիրը քայքայվեց, [բնակիչները] ցրվեցին, յուրաքանչյուրն աճապարեց փախչել, ուր որ կարող*

*էր։ Դիմեցին Վալենտիանոս կայսրին[146], թե հնար լինի, առնեն Խոսրովի արյան վրեժը և վերջ տան Ստահրացու բռնակալությանը։ Թեև Վալենտիանոս կայսրը հայերին օգնության ուղարկեց փոյուգիական զորքը, բայց երկիրը չխաղաղվեց, ոչ ոք ապահով չէր և ի վիճակի չէր տիրելու հայրենի ժառանգությանը։ Խաղաղություն չեղավ, մինչև որ Պրոբոս[147] կայսրը հաշտություն կնքեց Արտաշիրի հետ։ Ինձ հայտնի չէ, թե այս ժամանակ ի՞նչ պատահեց Արծրունյաց տոհմին, որտե՞ղ էին, ինչպե՞ս էին ապրում։ Ուստի բավական համարեցինք միայն տոհմի շարունակությունը երևան հանել և հասցնել մինչև Տրդատի թագավորությունը, մեծն Գրիգոր Լուսավորչի ձեռքով Հայոց աշխարհի լուսավորության սկզբնավորմանը։ Արծրունիների սերունդները սրանք են՝ սկսած Բաքգենից. Մուշեղը, Վահանը, Ներսեհը, մյուս Բաքգենը, Տիրոցը։*

## Ժ

### ՏՐԴԱՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՑ ԵՐԿՐԻՑ, ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ։ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

*Մեծն Տրդատը թագավորեց հայրենի երկրում։ Ինչպես գրըվել և ցույց են տալիս կատարված գործերի հանգամանքները, նա հավատում է միակ աստծուն՝ Հորը, Նրա միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն, որը Հոր ու Որդու պսակակիցն էր, նույն բնության տերն ու փառակիցը։ Նա նվիրվում է միակ աստծուն և մեծն Գրիգորի ձեռքով Մեծ Հայքի բոլոր նախարարների հետ մկրտվում Հոր, Որդու և Սուրբ Հոգու մաքուր ու անբիծ դավանությամբ։*

*Իսկ Արծրունյաց տոհմից Հայոց մեծ նախարարների հետ մկրտվում է Տիրոցը՝ Բաքգեն երկրորդի որդին, որը հեզաբարո էր, խելացի, խոսքերով ու շարժումներով համեստ։ Նա կամենում էր ճանաչել միայն մեկին՝ Քրիստոսին։ Որովհետև երբ մեծն Գրիգորին տարան Կեսարացվոց քաղաքը՝ քահանայապետ և Հայոց աշխարհը լուսավորող վարդապետ ձեռնադրելու, մեծ նախարարների հետ մեկնեց նաև Տիրոցը, որն, ինչպես վերևում ասացինք, հեզ ու խոնարհ բնավորություն ուներ, ուստի չէր ձգտում առաջնակարգ տեղերում երևելիների հետ հռխանալ և բազմել առաջին տեղը, որպես նախագահ, այլ [նստում էր] լքվածների հետ։ Առաջին բարձին չէր նստում ոչ այն պատճառով, որ Հայոց մեծ նախարարությունների մեջ չուներ բարձր և պատվական դիրք, այլ, որովհետև հետևում էր սուրբ ավետարանի վարդապետությանը։ Քանզի ո՞վ էր, որ ավելի զորավոր էր, քան Սենեքերիմյանները։ Կորովախոս Եսային Իսրայելի ցեղի հետ միասին հրապարակ է հանում նրանց մեծափառությունը*. Ալեքսանդր Մակեդոնացին դիվաններում պահված մատյաններում ոչ պակաս դրվատանքով է գրել տալիս սրանց փառավոր պատմությունը։*

*Արդ, ինչպես ավելի առաջ ասացինք, փնտրելու ենք կարևորը և մեր խոսքի շարունակության մեջ խոսելու ենք միայն Արծրունյաց տոհմի մասին և չենք ընկնի երկար ու բարակ պատմությունների ետևից, որոնք գրի են առել հին մատենագիրները։ Սրանք խոսել են տարբեր ժամանակ [Արծրունիների] կատարած քաջությունների մասին, արժանացրել մեծամեծ գովասանքների և շատ այլ բաների։ Իսկ մենք ցույց կտանք միայն առավել հայտնվածներին։ Սուրբ և քաջ նահատակ Տրդատ թագավորը հաջողությամբ պատերազմեց անմարմին և մարմնավոր զինվորների դեմ, ապա վախճանվեց, ազատվելով երկրային տառապանքներից։ Նա թաղվեց թագավորական շքեղ ու երևելի պատվով, ինչպես կարդում ենք տիեզերահռչակ Մովսես վարդապետի ու քերթողի՝ մեր լուսավորության ավելի հաստատ կարգավորողի բանիբուն երկասիրության՝ Պատմության երկրորդ գլխում։*

*Կոստանդիանոսի[148] հրամանով Տրդատի որդի Խոսրովը թագավորեց հոր փոխարեն և նախարարների հետ խաղաղասեր բարեկարգությամբ հաստատեց ու հորինեց երկրի կարգ ու կանոնը։ Ոչ մի կողմից հարձակում չէր սպառնում երկրին, բայց ինքը կամովին հնազանդվեց բյուզանդացոց թագավորին և հրաժարվեց արյաց արքա Շապուհին հարկ տալուց։ Զորքը տվեց Վահան Ամատունու ձեռքը՝ հոգալու պատերազմների մասին, եթե որևէ տեղ ծագեին։ [Խոսրովը] հետևում էր քրիս-*

* Հմմտ. Եսայ., Ժ, 5, 12։

տոնական կարգերին, տիրոջ պատվիրաններին, մեծն Վրթանեսի[149] խրատներին, ուստի ամեն կողմից ապահով էր և իշխեց 19 տարի։

Իսկ կայսրության մուծվող արքունի տուրքը ատենադպիրի ձեռքով վճարվում էր կայսեր։ Սակայն Արծրունյաց տոհմի, նրանց գործերի մասին ոչինչ չկարողացանք իմանալ, բացի այն, որ նրանք համերաշխ էին թագավորի ու նախարարների հանդեպ։ Յուրաքանչյուրը՝ Մուշեղը, Վահանը, [և ուրիշներ] ունեին իրենց կալվածները, որ ի ժառանգություն էին թողել նախկին թագավորները։ Մենք վայել չենք համարում գրել այն, ինչի մասին չգիտենք, ուստի գրել ենք միայն նրանց մասին, ովքեր ավելի բարձր ու պատվելի էին թագավորների մոտ։

Խոսրով փոքրից հետո թագավորեց նրա որդի Տիրանը։ Այն ժամանակ Հայոց հազարապետն[150] էր ժանտ ու չար մի մարդ, որի անունն էր Հայր Մարդպետ[151]։ Սա մոտենում է Տիրան թագավորին և գաղտնաբար քսու խոսքեր ասում Արծրունյաց և Ռշտունյաց տոհմերի մասին, որովհետև սրանք զորավոր, երևելի, քաջ և անվանի, բոլորից հարգված տոհմեր էին։ «Եթե, — ասում է նա, — մեջտեղից չվերացնես այդ երկու նախարարությունները, ապա քո թագավորության նկատմամբ լավ մտահղացում չեն ունենա, քանի որ նրանք ձեռք են մեկնել արյաց արքա Շապուհին»։ Մարդպետն այդպիսով կամենում էր կատարել իր ծուռ դիտավորությունը, հույս ուներ, թե միգուցե կկարողանա կորստյան մատնել նաև Մամիկոնյան նախարարությունը։ Տիրանն անսաց նրան և հրաման տվեց կատարել անօրեն և աստվածատյաց մարդու խորհուրդը։ Տմարդի արարքի մասին տեղեկացավ Մամիկոնյան նախարարությունը։ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները սրերը մերկացրած մտան ամրոցի մեջ և շատերին սրածեցին ու գետին գլորեցին, խլեցին Վաչե Արծրունու որդի Շավասպին և Մեհենդակ Ռշտունուն, որոնք մանկահասակ էին, և տարան Տայքի[152] բերդերը։ Երբ սրանք դարձան պատանիներ, [Արտավազդը ու Վասակը] նրանց կնություն տվեցին իրենց դուստրերին, նրանցից աճեցին երկու ազգատոհմերը՝ Արծրունիներն ու Ռշտունիները[153], որոնք երկար տարիներ չխառնվեցին Հայաստանի գործերին։ Իսկ Տիրանը, որ աղտոտվել էր պղծությամբ, մատնվեց Շապուհի ձեռքը, կուրացած ապրեց և ապա մահա-



ցավ՝ ըստ արժանվույն սուրբ Վրթանեսի, Հուսիկի[154] և մեծն Դանիելի[155] քահանայի դեմ գործած իր արարքների։ Նա թագավորեց 16 տարի։

Արյաց արքա Շապուհի վճռով Արշակը թագավորեց հոր՝ Տիրանի փոխարեն։ Նա հայոց նախարարներին հավաքեց իր մոտ, տեղեկացավ նաև Արծրունի և Ռշտունի տոհմերի, ինչպես նաև Մամիկոնյաններից նրանց մասին, ովքեր ամրացել էին Տայքի ամրոցներում։ Ստուգեց պատճառները, Ամատունյաց[156] տոհմից ինչ-որ Վահանի միջոցով հրավիրվեց վերադառնալ ու ապրել ապահով կյանքով, տիրանալ բարձի ու պատվի։ Երեք նախարարությունները անսացին խելացի մարդուն՝ Վահան Ամատունուն և առանց երկյուղի եկան նրա ետևից, քանզի իրենք ոչնչով իսկ իրենց մեղավոր չէին ճանաչում, ոչինչ չէին արել, մեծ թե փոքր չափով։ Նրանց ընդունեց Արշակ թագավորը, և ինչպես գրվել էր Վահանի ձեռքով, մնացին ապահով և անվտանգ։

Սակայն չարագործ Հայր Մարդպետ կոչեցյալը, որի համար չար դիտավորությունները սովորություն էին, երբեք չէր հանգստանում։ Նույն ժամանակ Արշակը մեկնեց արևմտյան կողմերը։ Նրա հետ էր նաև Հայոց կաթողիկոս մեծն Ներսեսը։ Հասնելով Տարոնի Աշտիշատ[157] [ավան], նրանք այցելեցին սուրբ Հովհաննես Մկրտչի Աթանագինե նահատակի վկայարանները, որ կառուցել էր մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը, երբ վերադառնում էր քահանայապետ ձեռնադրվելուց։ Բարձրացան սուրբ վայրը, կատարեցին աղոթքը, ապա դուրս եկան շրջելու նաև ուրիշ տեղեր։ Չարագործ Հայր Մարդպետը՝ Սադայելի որդին, չբավականացավ մարդկանց հանդեպ կատարած չարագործություններից, հանդգնեց նաև աստծո ու նրա սրբերի դեմ և երկնքի վրա բացեց իր աղտոտ բերանը, կատաղած շան պես հաչելով երկրի վրա։ Նա մոտեցավ Արշակ թագավորին ու ասաց. «Նախկին թագավորները լավ չեն մտածել, քանի որ այս տեղերը չեն բռնագրավել, որով թագավորական իշխանությունը կարելի էր վայելուչ խրախճանքների մեջ։ Արդ, քեզ պետք է դուր գա իմ մտադրությունը։ Սրբերին դուր չեն գալիս աչքի ընկնող տեղերը։ Որովհետև, եթե այդպես չէ, ապա նրանք չե՞ն, որ ապրում են մահ-

վան չափ անձուկ կյանքով։ Բայց չգիտեմ, արդյոք Թագավորն ազդվե՞ց նրա հրապույրներից, թե ոչ։ Եվ ինչ-որ մեզ համար ստույգ չէ, կարևոր չհամարեցի գրել։

Իսկ սուրբ Ներսեսը իրազեկ եղավ անպիտանի չարաբարո և խարդախ գիտավորությանը, բազմաթիվ աղոտ և զորավոր անեծքներ գրեց Մարդպետի վրա։ Սրբի ասածները կատարվեցին։ Անմիջապես Շավասպ Արծրունին մոտեցավ Մարդպետին և ասաց. «Ճերմակ ու գեղեցիկ բուրդ ունեցող արջերը թաքնվել են սաղարթախիտ անտառի իրենց որջերում։ Եթե այժմ քեզ հաճելի է, գնանք նրանց որսալու»։ Վերցրեց նրան և մտան անտառ։ Շավասպ Արծրունին քաշեց լայնալիճ[158] աղեղը, և մատների հատու շարժմամբ նետը թափով մխրճեց [Մարդպետի] թիկունքի ողերի մեջ, խրելով խարդախ սրտի մեջտեղը։ [Մարդպետն] ընկավ ձիու վրա և հոգին հանձնեց իր խորհրդատու սատանայի ձեռքը։ Սուրբ Ներսեսի խոսքերը խառնվեցին աստծո կենդանի խոսքերին, արհամարհողներին ավելի դյուրությամբ հաստատեցին օրհնանք ու անեծքներ, որոնք իսկույն կատարվեցին, և [Մարդպետն] ստացավ իր գիտավորությանն արժանի հատուցում։

Նույն ժամանակներում Բյուզանդիայում թագավորեց Վաղես[159] կայսրը, իսկ Պարսկաստանում՝ արյաց արքա Շապուհը[160]։ Արշակը հակվում էր երկու թագավորների կողմն էլ՝ երբեմն պարսիկների, երբեմն հույների, կամ ապստամբում երկուսի դեմ։

Իսկ Հայոց նախարարները Վաղեսի սադրանքով ապստամբեցին և պատերազմի ելան Արշակի դեմ։ Սուրբ Ներսեսը մեջ ընկավ, համոզեց նրանց և հանդարտեցրեց խռովությունը։ Թագավորը սուրբ Ներսեսից խնդրեց, որպեսզի Վաղեսին նույնպես հաշտեցնի իր հետ։ [Ներսեսը] գլուխ բերեց հաշտությունը։

Բայց Մեհրուժան Արծրունին ոչ լսում էր սուրբ Ներսեսին և ոչ էլ հնազանդվում թագավորին։ Նա իր աներոջը՝ Վահան Մամիկոնյանին, արբեցրեց պղտոր հրապույրներով և անցան գնացին Շապուհի մոտ։ Հրաժարվեցին քրիստոնեական կրոնից և հնազանդվեցին մոխրապաշտության վարդապետության որմզդական մոլորությանը։ Դրանից հույժ ուրախացած



Շապուհը Մեհրուժանին խոստացավ փեսայացնել իր քրոջը՝ Որմզդուհուն։

Արշակի կենդանության ժամանակ մեծ պատերազմ էր նրա և Շապուհի միջև։ Հայոց և պարսից զորքերը շատ անգամ և բազում տեղերում ճակատամարտ տվեցին միմյանց դեմ։ Ավելորդ եմ համարում երկրորդել այս մասին ավելի հին պատմագիրների գրածները։

Սակայն բազմաթիվ պատերազմներից հետո Շապուհը, խորամանկ խաբեությամբ, առերևույթ սիրով և խաղաղությամբ իր մոտ կանչեց Արշակին, չհիշեցնելով նրա որևէ վատ արարքը։ Իսկ նա անմտաբար գնաց նրա հրավերի ետևից։ [Շապուհը] նրան կապել տվեց երկաթե կապանքներով և ուղարկեց Տիզբոնի[161] մոտակայքի Անհուշ բերդը։ [Արշակն] այնտեղ ապրեց և ապա ինքնասպան եղավ, ինչպես աստծո այրը՝ սուրբ Ներսեսն էր բանադրել նրան։

Բայց այստեղ մի փոքր բացահայտելու եմ Հայաստանի հանդեպ անօրեն Մեհրուժանի ամբարտավան վերաբերմունքը։ Մեհրուժանն ու Վահանը վերցրեցին պարսից զորքը, մտան Հայոց երկիրը, ամբողջ երկրի երեսով մեկ սփռեցին ձիավոր հրոսակներ, ավերեցին, գրավեցին շեները, ավանները, ագարակները, կողոպտեցին ստացվածքը և ամբողջ ժառանգությունը, սրի քաշեցին բոլորին, ովքեր ընկան իրենց ձեռքը։ Գնացին մտան Ռշտունիք գավառը և ավարի մատնեցին Ռշտունյաց իշխան Գարեգինի տունը։ Գարեգինը ճողոպրեց և մազապուրծ հասավ Բյուզանդիայի կայսեր մոտ։ Իսկ [Մեհրուժանն ու Վահանը] բռնեցին Ռշտունյաց տիկնոջը, որը Գարեգինի կինն էր և Վարդան Մամիկոնյանի քույրը։ Նրան բերեցին Վանտոսպ, Շամիրամի քաղաքը, մատնեցին դաժան խոշտանգումների ու տանջանքների, ստիպեցին հրաժարվել քրիստոնեական կրոնից և հնազանդվել. պաշտել մազդեզական մոխրապաշտության հավատը։ Սուրբ տիկին Համազասպուհին հանձն չառավ այդ անել։ Նրան տարան հանեցին բերդաքաղաքի բարձր ամրոցի գլուխը, մերկացրին հանդերձներից, որպեսզի զգեստավորվի Քրիստոսի փառքով։ Նրա սրունքներից գցեցին պարանը և կախեցին ամրոցի հյուսիսային աշտարակից։ Գոհ սրտով, համբերությամբ ընդունեց

մարտիրոսության վճիռը։ Նրա դայակը մի-այն, կախաղանի ներքևում և սուրբ գանձը՝ [քայքայված մարմնի ոսկորները] դրեց իր ծոցը, ապա սուրբ Ներսեսի ձեռքով տարան ամփոփեցին վկայարանում՝ այն տեղը, որն այժմ անվանում են Զորո վանք[162]։ Այն սուրբ Հռիփսիմյանների վկայարանն էր, կառուցել էր սուրբ Գրիգորը։ Այնտեղ էին սուրբ սեղանը, հովվական գավազանը, կնքամատանին և ժրաջան մեջքի գոտին, որոնք հավիտյան հիշատակ էին մնացել մեր լուսավորության հորից։

Մեհրուժանն ու Վահանը կրկին եկան և գրավեցին Վանտոսպը, ավերեցին գեղեցկաշեն և ամուր տեղերը. գերեվարեցին քաղաքի բնակիչներին՝ 5000 հրեաների. 18 հազար քրիստոնյաների, և այն հրեաներին, որոնց դեռևս Բարզափրանն էր գերի բերել Տիգրանի հրամանով։ Նրանց քշեցին Ասպահան[163], ապա գրավեցին Վաղարշապատն ու Արտաշատը։ Եվ այն հրեաներին, որ սուրբ Գրիգորի ժամանակներից դարձել էին Քրիստոսի հավատացյալներ, [նույնպես] գերեվարեցին և մյուսներից ավելի շատ վնասներ հասցրին՝ Քրիստոսի հանդեպ նրանց ունեցած հավատի պատճառով։

Երջանիկ Զվիթա երեցը Արտաշատից մեկնեց հավատացյալ հրեաների ետևից, որպեսզի անապատներում ու վիհերում հոտն առանց հովվի կորստյան չձգեն գայլերի առաջ։ Իսկ Մեհրուժանը մտավ Շապուհի մոտ և սկսեց չարախոսել Զվիթա քահանայից, ասելով. «Այդ երեցը եկել է գերված քրիստոնյաների ետևից, հակառակվում է ձեր արքայական հրամանին և մազդեզական[164], արիների [165] դավանանքին։ Արքայից արքայի դեմ ամենուրեք նա է հայերի ապստամբության պատճառը, անարգում է կրակը, առ ոչինչ համարում արեգակը։ Եթե նրա կյանքին վերջ տրվի, արքայից հրամանը դյուրությամբ կկատարվի»։ Նույն ժամանակ սուրբը բերվեց Շապուհի առջև և պատասխանեց նրա հարցերին, լցվելով Սուրբ Հոգու կատարյալ իմաստությամբ, ինչն անբաժան էր իրենից։ Այնտեղ պատերազմեց չիտակարար, որպես քաջ հովիվ իր անձը դրեց հոտի համար, ընդունեց մարտիրոսության վճիռը և նահատակվեց ի փառս Սուրբ Երրորդության։ Հայաստան աշխարհում, արևելքից արևմուտք երանելի Զվիթան բա-



րի ճանապարհ հարթեց բազում վկաների համար։ Արշակը թագավորեց 36 տարի և վախճանվեց [վերևում] ասվածի պես։

Արյաց արքա Շապուհը, թագավորելով, բազում չարիքներ հասցրեց Հայոց աշխարհին, Ասորեստանին, Պաղեստինին, գերեվարեց 400 բյուր հրեաների, ավերեց Հրեաստանն ու սուրբ քաղաք Երուսաղեմը։ Օձերի ամբողջ մահացու թույնը թափվեց քրիստոնյաների վրա, որի պատճառով նահատակվեցին բազմաթիվ, ինչպես ասում են՝ 40000 սուրբ այրեր, վկայելով Քրիստոսի համար։ Նրանցից շատերը եպիսկոպոսներ ու քահանաներ էին և եկեղեցական ուրիշ դասերից։ Երկրի ազատներից ու նրանց տիկնանցից շատերը Քրիստոսի համար նահատակվեցին անասելի դառն տանջանքներով։ Սարսափում եմ, միտքս ապուշ է կտրում զարմանքից՝ նենգությամբ ու ճարտարությամբ արված այդքան չարչարանքներին նրանց դիմանալու պատճառով։ Այս մասին կարդում ենք նրանց պատմությունը պարունակող գրքում, որն ունի «Վկայք Արևելից» վերնագիրը։ Այն շարադրել է Քրիստոսի երանելի խոստովանող Աբրահամը[166] Արած[167] գյուղից։ Սա սուրբ Ղևոնդյանց աշակերտն ու հետևորդն էր, իր հիշատակարանում գրել է քչերի անունը։ Դրանցից են՝ Շահդոստ [անունը] որը թարգմանվում է «արքայասեր» և Գոհշթասպը, որ թարգմանաբար [կլինի] «թագավորական զգեստի՝ ծիրանիի ներկարար» ինչպես նաև Քրիստոսի եկեղեցու վեմը՝ Շմավոն եպիսկոպոսը և այլ եպիսկոպոսներ ու քահանաներ, թվով հարյուր մարդ։ Նրանք միանգամից սրի քաշվեցին նույն օրը՝ պասի մեծ ուրբաթին։

Սակայն Մեհրուժանը չբավականացավ քրիստոնյաների, առանձնապես Հայոց աշխարհի հանդեպ կատարած չարագործություններով, այլև Շապուհ արքայի հրամանով, Վահան Մամիկոնյանի հետ վերցրեց պարսից զորքը և եկավ թագավորելու Հայաստանում։ Առանց երկյուղի մտավ Հայոց աշխարհ, բայց չկարողացավ կատարել իր մտահղացումը, քանի որ Վահանի որդի Սամվելը դեմ գնաց հորը։ Վահանը հույս ուներ որդուն թեքել դեպի գահավեժ կործանում։ Նա առանձնացավ որդու՝ Սամվելի հետ, երբ թե խորհելու այն մասին,

ինչի համար եկել էին։ Երբ բավական հեռացան Պարսից զորագնդից, Սամվելը բարձրացրեց միասայրի թուրը ու խորունկ վերք հասցրեց նրան և անմիջապես զրկեց կյանքից։ Ապա վերադարձավ այնտեղից և սպանեց նաև իր մորը՝ Տաճատուհուն, որովհետև նա էլ էր[168] ուրացել Քրիստոսին։ Իսկ ինքը պարսիկների մոտից փախավ գնաց Խաղտիքի[169] կողմերը։

Բայց Մեհրուժանը չհրաժարվեց Հայոց թագավոր դառնալու և հավաքեց զորագնդերի ու դրոշների անհուն բազմություն։ Ապա հասավ Բագրևանդ[170] գավառի Ձիրավ[171] գյուղը և կամենում էր անցնել Հայաստանի թագավորանիստ տեղերը։ Նրա դեմ զորքը շարժեց Հայոց սպարապետ Սմբատը՝ Բագարատ Բագրատունու որդին, իր հետ ունենալով նաև բյուզանդացիների բազմաթիվ վահանավորների, փողփողացող դրոշներ, կայսեր հրամաններն ազդարարող փողեր ու զինավառված բազում զորագնդեր։ Շրջապատեցին Մեհրուժանի զորքը, որպեսզի նա չաճապարի ճողոպրել։ Նույն ժամանակ քաջ Սմբատը դեմ առ դեմ հանդիպեց Մեհրուժանին, ջարդեց նրա ձիու ոտքերը, ապա պարանը ձգեց Մեհրուժանի պարանոցը և ասաց. «Քեզ համար այսպես լավ է, Հայոց թագավո՛ր։ Եկ այստեղ, որպեսզի ես՝ սպարապետս, պսակեմ քեզ»։ Ապա շիկացած շամփուրը բոլորեց և խրեց ամբարիշտի գագաթի մեջ։ Այսպես թշվառականը հեռացավ այս աշխարհից։

Այստեղ ինձ շատ հարմար է թվում այն առակը, որն ասում է՝ «Բազում անգամ աղվեսները կամեցան թագավորել, բայց շները չհամաձայնեցին»։

## ԺԱ

### ԹԵՈԴՈՍԻ[172] ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ

Վախճանվեց Վաղես կայսրը և Բյուզանդիայում թագավորեց Թեոդոս Մեծը։ Սուրբ Ներսեսը վերցրեց Արշակի որդի Պապին և բյուզանդական զորքի հետ թագավորեցրեց Հայաստանում՝ Արշակունյաց բնիկ թագավորների փոխարեն։ Սա-



կայն Հայոց Պապ թագավորը չշարժվեց սուրբ Ներսեսի խրատով, այլ գնաց խոտոր ու ձախողակ ճանապարհով, ցանկասեր էր և շատ ապականված, ինչի մասին հաճելի չէ նորից գրել։ Սուրբ Ներսեսը հանդիմանեց նրան, ուստի իրեն բոլորից ծածուկ մահվան դեղ խմեցրին։ Հայերը զրկվեցին լուսավոր վարդապետից և քաջությամբ ու առաքինությամբ երևելի հովվից՝ սուրբ Ներսեսից։ Հայոց բազմահոծ զորքի հետ վերցրին սրբի մարմինը։ Առջևից գնում էին Հայոց զորավար Մերշապուհ Արծրունին, Վահան Ամատունին և Մեհրուժանի եղբայրը։ Տարան թաղեցին իր նախնիների վկայարանում, որը Թորդանում[173] էր։ Պապը քամահրեց նաև Թեոդոս կայսրին, ուստի բյուզանդական զորապետ Տերենտը ձերբակալեց նրան, դրեց կապանքների մեջ և տարավ կայսեր մոտ։ Այնտեղ կայսեր հրամանով սպանեցին [Պապին], որը թագավորեց վեց տարի։ Իսկ սուրբ Ներսեսի մահից հետո Հայոց եպիսկոպոսապետներ դարձան ոմանք՝ Բզնունիքի[174] եպիսկոպոսի, պատվական մարդու՝ Աղբիանոսի սերունդներից՝ Շահակը, Զավենը և Ասպուրակեսը, որոնք ոչ մի բանով չարժանացան բարի հիշատակի։

Թեոդոս կայսրը Պապի փոխարեն թագավորեցրեց Արշակունյաց տոհմից քաջ և պատերազմասեր ինչ-որ մի մարդու՝ Վարազդատին, որն ահարկու էր թե՛ մեծերի և թե՛ փոքրերի համար։ Սա հրաժարվեց կայսեր ենթարկվելուց և հայտնեց արյաց արքա Շապուհին, որ կհպատակվի իրեն։ Իր ընկերոջը՝ Մեհրուժան Արծրունուն դեսպան ուղարկեց Շապուհի մոտ՝ իր դիտավորությունը հաստատելու համար։ [Մեհրուժանը] մեկնեց Շապուհի մոտ, հիշեցրեց իր ազգակից Մեհրուժանի մասին, արքային հավատարմորեն նրա հպատակվելը, Հայոց աշխարհի դեմ նրա մղած պատերազմները, բազում ավարառությունները և նրա մահը քաջ Սմբատ Բագրատունուց[175], Ապա Շապուհին դրդեց կատարել Հայոց թագավոր Վարազդատի առաջարկը։ Մինչդեռ այս մասին էին մտածում, Տերենտ զորավարի միջոցով լուրը հասավ կայսրին։ Եվ արքան դեռ պատասխան չէր տվել, երբ կայսրից հրաման հասավ Վարազդատին՝ անհապաղ գալ իր մոտ։ Կայսրը նրան ուղարկեց Օվկիանոսի[176] կղզին, որտեղ և վախճանվեց չորս տարի թագավո-

րելուց հետո։ Իսկ Մեհրուժանը հասկացավ, թե իրեն ինչ է սպասում կայսրից ու Հայոց նախարարներից, այլևս չվերադարձավ Հայաստան, այլ մնաց Պարսկաստանում, որտեղ էլ հենց վախճանվեց, ցույց չտալով հիշատակելու արժանի որևէ արարք։ Շահակից չորս տարի հետո Հայոց եպիսկոպոսապետ դարձավ Զավենը, որին հիշեցինք նախապես։

Թեոդոս Մեծը Վարազդատից հետո Հայաստանում թագավորեցրեց Արշակին ու Վաղարշակին, որոնք Հայոց թագավոր Պապի որդիներն էին։ Բայց ամբողջ Հայաստանում իր եղբոր հետ երկու տարի թագավորելուց հետո, վախճանվեց Վաղարշակը։ Շուտով վախճանվեց նաև Թեոդոս կայսրը, և թագավորությանը տեր դարձան նրա որդիներ Ոնորեսն[177] ու Արկադիոսը[178]։ Եվ Հայոց թագավորությունը բաժանվեց երկու մասի՝ բյուզանդացիների ու Պարսկաստանի միջև։ Արշակն անցավ Միջագետքի կողմերը և ավելի լավ համարեց հնազանդվել քրիստոնյա թագավորին, քան պարսից տերությանը։ Հայոց նախարարներից շատերը հետևեցին Արշակին և մեկնեցին Արկադիոսի մոտ։ [Նրանց մեջ էին] Սամվել Մամիկոնյանը, որ սպանել էր իր հորը՝ Վահանին և մորը՝ Տաճատուհուն, քանզի նրանք դավանել էին պարսից մոգական կրոնը, ինչպես նաև Վասակ Արծրունին։ Ավագ նախարարներից ուրիշներն էլ իրենց ողջ սպառազինությամբ մեկնեցին Պարսկաստան՝ Սասանյան[179] հեթանոս և բարբարոս տոհմին հնազանդվելու, ինչը դարձավ Հայոց աշխարհի կորստյան պատճառը։ Նրանք պարսիկներին ցույց տվեցին, թե իբր ընդունում են նրանց կրոնը։

Երբ Շապուհ արքան իմացավ Արշակի կատարածի մասին, Հայաստանում թագավորեցրեց Արշակունյաց տոհմից ոմն Խոսրովի։ Շապուհը նախարարներին ուղարկեց հրովարտակ, բացատրեց նրանց հեռանալու պատճառը։ «Ձեզ,— ասում է նա,— թագավոր նշանակեցի ձեր ազգից ու հավատից, ուստի ձեզ ծանր թող չթվա վերադառնալ այնտեղից և տիրել յուրաքանչյուրդ ձեր ժառանգությանը։ Մի՛ համառեք մնալու Արշակի հետ և իզուր մի՛ հեռացեք հայրենի տունուտեղից և մի՛ ապրեք պանդխտության մեջ, ուր ձեզնից ամեն մեկը միայն իր սրով կարող է գտնել նախարարության բարձրն ու պատիվը։ Վերադարձեք այստեղ և ամեն մեկդ առանց



իշխանության տեր կդառնաք ձեր ժառանգական Հայրենիքներում»։ [Նախարարներն] անսացին Շապուհին, և ամեն մեկը վերադարձավ իր բնակության տեղը։ Նրանք վերցրեցին Արշակի գանձերը և բերեցին Խոսրովի մոտ։ Գեղամա ծովի ափին, ցեխոտ մի վայրում մեծ պատերազմ եղավ Արշակի ու Խոսրովի միջև։ Արշակը փախավ Եկեղյաց գավառը[180] և իր մահով վախճանվեց այնտեղ։ Նա թագավորեց յոթ տարի։

Իսկ բյուզանդացիները Արշակի բաժնում նշանակեցին իշխաններ, զորապետներ, կոմսեր և ոչ ոքի այլևս այնտեղ չթագավորեցրին։

Վասակ Արծրունին եկավ Խոսրովի մոտ և տիրեց իրենց կալվածքներն ու իշխանությունը։ Նա երկդիմի էր ու մնում էր կեղծավոր, խիստ անհաստատ ու դատարկամիտ. քրիստոնյաների հետ ձևանում էր քրիստոնյա, պարսիկների հետ՝ պարսիկ։

Դրանից քիչ ժամանակ անց Խոսրովն ապստամբեց Շապուհի դեմ և ապավինեց բյուզանդացիներին, ապա խոստացավ բովանդակ Հայաստանը հանձնել կայսերական իշխանությանը։ Որովհետև Ասպուրակեսի վախճանվելուց հետո Հայոց հայրապետության աթոռին նստեց սուրբ Սահակը՝ սուրբ Ներսեսի որդին, և [Խոսրովը] Արշակի մոտից վերադարձած նախարարներին նշանակեց իր մոտ՝ արքունիքում, Շապուհը չարացավ, թե ինչու առանց իր հրամանի այդպես արեցին։ Նա Հայաստան ուղարկեց իր որդի Արտաշիրին, որը գահընկեց արեց Խոսրովին և փոխարենը գահին բազմեցրեց նրա եղբորը՝ Վաղարշին*։

Իսկ Վասակ Արծրունին հեռացավ պարսից Արտաշիր[181] [թագավորի] մոտ։ Նա կարծում էր թե մեծն Սահակ սպարապետի դրդմամբ էր, որ Խոսրովը սահմանեց իր անձնիշխան վճիռը։ Միաժամանակ մտադրվել էր վրեժխնդիր լինել Մամիկոնյան տոհմից, իր պապի՝ Մեհրուժանի սպանության համար։ Վասակի որդի սուրբ Աղան Արծրունին հույժ չարացավ անխոհեմ արարքի, ինչպես և այն պատճառով, որ նա, որպես

* Խոսրովի եղբայրը ոչ թե Վաղարշն էր, այլ Վռամշապուհը, որը Հայոց թագավոր էր 388—414 թթ.։

ազգականի, գթասիրաբար էր վարվել աստծո դեմ կռվող Մեհրուժանի նկատմամբ, որն արժանի էր ատելության, և եթե հնարավոր լիներ՝ նաև չարիքների։ Եվ Ազանը ելավ գնաց սուրբ Սահակի մոտ, զինաթափվեց նրա առջև, հանեց զինվորական հանդերձը, ողբաց Հայոց աշխարհի, Հայոց թագավորության զորության նվազման և պարսից բռնությունների համար։ Առավելապես անմխիթար սուգ ու ողբ արեց իր տոհմի՝ Արծրունիների համար, որոնք Քրիստոսի երախտիքը դյուրությամբ մոռացան և ընթացան միայն այս աշխարհի փառքի ետևից, հետևեցին մոլությանն ու մոխրապաշտությանը։ Ազանը վառված սրտով երկարեցրեց ողբը և ջերմեռանդությամբ հեղեց հորդահոս արտասուք սուրբ Սահակի, մեծ սպարապետ Սահակի և մյուս նախարարների առջև, մինչև որ նրանք զիջեցին, լսելով նրա ասածը՝ որպես մարգարեական հայտնություն՝ ապագայում պատահելիք բաների մասին, որոնք նախապատրաստվում են Հայոց աշխարհում։ Միասին լաց եղան, արտասուք թափելով ողբացին անմխիթար սգո համար։ Ազանը երեսնիվայր ընկավ սուրբ Սահակի ու Սահակ սպարապետի առջև, [կամեցավ] ընդունել անապատասեր կրոնավորողի սքեմ և ապրել միայնակյացի կյանքով։ Սուրբ Սահակը մի փոքր չհամաձայնեց, ասելով. «Առայժմ լուռ մնա, մի ուրիշ անգամ հոգ կտանեմ, ինչի մասին մտածում ես։ Միգուցե ինչ-որ խաբեբաներ մոտենան Արտաշիրին և չարամիտ ու կեղծ բաներ ասեն մեր մասին։ Քո հայր Վասակը կարող է խորհրդակցել արքայի հետ, շփոթեցնել նրան և մեզ համարել ապստամբելու մտադրություն ունեցողներ։ Սակայն աստված հոժարությամբ, հանուն քո սիրույդ կկատարի քո ցանկությունը, ինչպես որ ինքը լավ կհամարի»։ Երանելի Ազանն ընդունեց նրա խրատը և սպասեց պատեհ օրվա։

Արկադիոս կայսրը թագավորեց 23 տարի և մեռավ Հովհան Ոսկեբերանի[182] հանդեպ ունեցած մեղքերի պատճառով՝ չարաչար պատուհասից։ Նրա փոխարեն թագավորեց որդին՝ Թեոդոս փոքրը[183], որը բազմապիսի ջանքերով Հայոց աշխարհին օգնություն ցույց տվեց։ Կառուցեց Թեոդուպոլիս[184] քաղաքը՝ Կարին[185] գավառում։ Այնտեղ թողեց պահապան



զորք՝ պարսից հարձակումներին ընդդիմանալու համար, քանզի Վռամն ու Հազկերտը իրենց տիրապետության տակ էին ձգել աշխարհի կեսը և հանդգնում էին տիրել նաև ողջ աշխարհը։ Իսկ Հայոց Խոսրով թագավորը չորս տարի թագավորելուց հետո վախճանվեց, բայց Հազկերտը չհամաձայնեց Արշակունյաց տոհմից որևէ մեկին նստեցնել Հայոց թագավոր, որպեսզի այնուհետև դյուրությամբ կարողանա իր կողմը ձգել Հայոց զորքը՝ նախարարներով հանդերձ։ [Հայաստանում] թագավորեցրեց իր Շապուհ որդուն, որը ինչպես կարգն է հոգ չտարավ մեր երկրի գործերի մասին և տարված էր միայն որսորդությամբ ու խաղերով։ Այս տեսնելով, Հայոց նախարարներն սկսեցին կատակով ու արհամարհանքով վերաբերվել նրան։ Օրինակ՝ Մոկաց Ատոմ իշխանը նրան անվանում էր աստվածորդի, որից նա փքվում և հավակնում էր ներկայանալ որպես կրակի։ [Դրան] հակառակ, Ատոմը նրան անվանեց նաև կնամարդի, իսկ ինքը հեռացավ Մարաստանի կողմերը։ Ավելի ևս քաջասիրտ էր Շավասպ Արծրունին։ [Մի անգամ], երբ ձիերով սուրում էին գնդակի ետևից, սա հարվածեց և բազմիցս նրանից խլեց գնդակը և ասաց. «Աղջկամարդ, դուրս արի ձիընթացարանից, կնամարդ, ճանաչիր ինքդ քեզ»։ Իսկ Շապուհը մականով հարվածեց գնդին, որպեսզի դիպցնի Շավասպին, որն արհամարհեց նրան, բայց թողեց ձիու երասանները և հպարտ ու աներկյուղ սուրաց գնաց Անատոլ զորապետի մոտ։ Թեոդոս կայսեր հրամանով նրան վստահվեց Հայաստանի և Միջագետքի իշխանությունը մինչև Եփրատ գետի անցքը։ Շավասպը կայսեր մոտ մնաց չորս տարի։

Իսկ Շապուհը, երբ լսեց հոր հիվանդության մասին, փութապես մեկնեց Պարսկաստան։ Հայրը վախճանվեց, բայց նույն օրը մահացավ նաև ինքը, սպանվելով հարազատների սրով։ Եվ որովհետև վախճանվել էր Համազասպ Մամիկոնյանը, որն այդ ժամանակ սուրբ Սահակի, Հունաց և Պարսից թագավորների խնդրանքով կրում էր Հայոց մարզպանի ու զորավարի պաշտոնը, ուստի մեկը չկար, որ այնուհետև առաջնորդեր Հայոց աշխարհը։ Քայքայվեցին ու աճապարանքով ցրվեցին, ով որտեղ կարող էր, քանի որ բազում հրոսակներ տիրեցին մեր երկիրը։

Ապա թագավորեց Վռամը[186], Հազկերտի որդին։ Սա իր արքունի դուռը կանչեց Հայոց կաթողիկոս սուրբ Սահակին, որը վերցրեց իր թոռներին՝ Հմայակին ու Համազասպյանին և մեկնեց արքայի մոտ՝ Տիզբոն։ Դեռևս Վարդանը սուրբ Սահակի նամակը ձեռքին սուրբ Մաշտոց Վարդապետի հետ մեկնել էր Թեոդոս կայսեր ու Ատտիկոս արքեպիսկոպոսի մոտ, հետը տարել նաև հայերեն դպրության գրերը։ Նրանց ընդունել էին սուրբ հայրապետն ու բարեպաշտ Թեոդոս թագավորը, որը հինգ թղթերով և հինգ պատասխաններով սուրբ վարդապետին կարգել էր սուրբ Հովհան Ոսկեբերանի և առաքինի ու երանելի վարդապետների աթոռակալության ներքո, իսկ Վարդանին կարգել Հայոց սպարապետ։

Իսկ երբ սուրբ Սահակը, նախարարներով հանդերձ, հասավ արքունի դուռը, Շապուհին հայերի հասցրած անարգանքների և հույների հետ նրանց հաստատուն խաղաղության պատճառով հայերի դեմ Վռամի ունեցած բարկությունն ու քենն անցավ։ Նա նախարարների ու սուրբ Սահակի խնդրանքով Հայաստանում թագավորեցրեց երկրորդ Արտաշեսին, որին անվանում էին նաև Արտաշիր։ Սրա թագավորելու տարիներին երկիրը մի քիչ խաղաղվեց պարսից զորքի [հարուցած] խառնակություններից։ Թագավորական դիվանը դադարեցրեց արքունի հարկերը, քանզի պարսից արքունիքը հինգ տարի չպահանջեց հարկեր և զորք։ Իսկ Արտաշիրը ամբարտավանությամբ և առանց պատկառանքի ընթացավ անառակ ցանկասիրության ամոթալի ախտի ետևից, ոչ միայն գիշերով, այլև ցերեկը, արեգակի առջև անխղճաբար կատարում էր ցանկությունը։ [Բոլորից] անցավ իր անասնական վավաշոտությամբ։ Հայոց նախարարները չարացան և զզվեցին նրա անառակությունից և մտադրվեցին Արտաշիրին զրկել Հայաստանում թագավորելուց։ Նրանք եկան սուրբ Սահակի մոտ, նրան հայտնեցին իրենց դիտավորությունը։ Կամեցան նույնն անել նաև Պարսից արքային, ինչը և արեցին։ Նրանք մեկնեցին ոչ թե բարեպաշտ, հավատակից, քրիստոնյա թագավորի՝ Թեոդոսի, այլ Վռամի մոտ և ամբարշտաբար ու անխոհեմաբար չափն անկացրին, սխալվեցին։ Իսկ Վռամը, որ մեծ սիրով ունկնդրեց [նրանց], համաձայնվեց վերացնել Հայոց թագավորությունը, վերստին փութապես արքունի դուռը կանչեց Ար-



տաշիրին ու սուրբ Սահակին, Հայոց նախարարների բազմությամբ հանդերձ։ Ապա նրանց հարցրեց, թե ինչի համար են ամբաստանում Արտաշիրին։ Սակայն սուրբ Սահակը հանձն չառավ որևէ բան գրել այն մասին, ինչի համար մեղադրում էին Արտաշիրին։

Նախարարներն առարկեցին սուրբ Սահակին, որպես իրենց ցանկությունը չկատարողի և ոմն Սուրմակ Արծկեցի խևացած ու փառամոլ աբեղայի հետ մեկնեցին Վռամի մոտ և սկսեցին տեսակ-տեսակ զրպարտություններով չարախոսել սուրբ Սահակին, որպես թե նա չի կամենում պարսիկների թագավորելը, հայերին հարկելը և զորապետելը, այլ ցանկանում է բյուզանդացիներն իշխեն։ Իրենց ասածը հաստատելու համար արքայի առջև դրեցին սուրբ Սահակի թղթերը, որ ուղղված էին կայսեր և հայրապետին, Մեսրոպի ու Վարդանի գնալը Բյուզանդիա, ինչպես նաև Անատոլ [զորավարի] մեկնելը Կարին գավառ և այնտեղ քաղաք կառուցելը։ [Նախարարները] դարձան անմիաբան և եպիսկոպոսապետության աթոռից զցեցին Սուրբ Սահակին, իսկ Արտաշիրին՝ թագավորական գահից։ Սուրբ Սահակին հակաթոռ կարգեցին խև Սուրմակին, ապա ասորի Բրքիշոյին, իսկ հետո Սամուելին, որոնք չշարժվեցին եղեկեցու, հավատի սահմանած օրենքներով, այլ Մշկան[187] մարզպանի հետ միացած էին հոգ տանում երկրի մասին։ Այս Մշկանը պարսից Վռամ արքայի հրամանով մտավ Հայոց երկիրը մեր Արտաշիր թագավորի փոխարեն։ Իսկ Հայոց նախարարները, երբ մեր երկրում տեսան երկուսի էլ անկարգ ու անվայել արարքները, զղջացին կատարվածի համար, որ հաճույքով իրենք էին խնդրել։ Ապա վերադարձան Վռամի մոտ, իրենց կաթողիկոս խնդրեցին սուրբ Սահակին։ Բայց Վռամը երկմտեց և չկարողացավ կատարել նրանց խնդրանքը։ Մտքում տարուբերվում էր կասկածներով, որ եթե չկատարի նրանց խնդրածը, միգուցե նախարարները բաժանվեն և հեռանան կայսեր մոտ, հարկն ու զորքը տան նրան։

Իսկ Արծրունյաց տեր Վաչեն, Աշոցքի[188] տեր Հմայակը և նրանց կողմնակիցներից ուրիշներ համաձայնեցին Վռամի հետ և թույլ տվեցին, որպեսզի արքան կատարի, ինչ որ կցանկանա։ Եվ նա Հայոց եպիսկոպոսապետության աթո-

ռին նստեցրեց նույն Սամուելին, որն ապրեց անկարգ ու անարգար կյանքով և վախճանվեց հինգ տարի հետո։

Բյուզանդիայի Անատոլ զորավարը ոմն Հավուկ Կուկառիճեցու նշանակեց Բյուզանդական մասի եպիսկոպոսապետ։ Եվ այսպես Հայոց աշխարհը աղմկահույզ էր ու խառնակ, անմիաբան և անկարգությամբ լի, ինչպես փափագում էր վաչե Արծրունին։

Երբ Սուրբ Սահակը վերադարձավ Պարսկաստանից, Ազան Արծրունին նորից եկավ նրա մոտ և ընդունեց կրոնավորողի սքեմը։ Այա գնաց և միայնակ բնակվեց Գողթն[189] գավառում, այնտեղ, ուր վարդապետել էր սուրբ Մեսրոպը։ Նա ապրեց ճգնակյաց ու հրեշտակային, մարդկանց համար երանելի, դևերին ահարկու վարքով։ Իսկ երբ վախճանվեցին եպիսկոպոս կարգվածները, որոնք Պարսկաստանից էին և ձեռնադրվել էին առանց Կեսարիայի երանելի եպիսկոպոսի, Հայոց նախարարները միասին եկան սուրբ Սահակի մոտ, խորը հառաչանքներով ընկան նրա ոտքերը և խնդրեցին, որպեսզի չհիշի սրբի հանդեպ անցյալում իրենց գործած արարքները և վերստին տիրի հայրապետական աթոռը։ Խոստացան ընթանալ ըստ նրա հրամանի։ Բայց [Սահակը] չանսաց նրանց և [պատմեց] տեսիլքի մասին, ինչը նրան ցույց էր տվել Սուրբ Հոգին, և որը կատարվելու էր գալիք ժամանակներում, երբ վերանալու էին [Հայոց] եպիսկոպոսապետությունը և Արշակունյաց թագավորությունը, քահանայապետելու չէին անարժանները, ապա ընտրվելու էին սրբերը և դարձյալ նորոգվելու էր հայրապետությունն ու նույն Արշակունյաց զարմի թագավորությունը, տեղի էր ունենալու Նեռի գալուստը, ժամանելու էր Քրիստոսը, և [կատարվելու էր] երկնային դատաստանը, յուրաքանչյուրը հատուցելու էր ըստ իր արարքի։ Այս տեսել էր մեծ հինգշաբթի օրը։

Երբ այս ամենը կատարվեց, Սուրբ Սահակը, 120 տարի ապրելուց հետո, այս աշխարհից փոխվեց հրեշտակների կարգը։ Սրբի մասունքները տարան ամփոփեցին Տարոնի Աշտիշատ [ավանում,] սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինես նահատակի վկայարանի տեղում։ Վեց ամիս անցնելուց հետո, նույն տարում վախճանվեց նաև սուրբ Մաշտոց հայրապետը։



Հայոց նախարարների բազմության, Վահան Ամատունու ղեկավարությամբ, որն այդ ժամանակ Հայոց սպարապետն էր, խաչի նման լույսի [ուղեկցությամբ] տարան և թաղեցին Արագածոտն[190] կոչված գավառի Օշական գյուղում։

Վռամ երկրորդի որդու՝ Հազկերտի[191] երկրորդ տարում վերացավ Հայոց թագավորությունը, որը տևեց 415 տարի։

Արշակունյաց թագավորության և սուրբ Գրիգորի տոհմի հայրապետության վերացումից հետո, սուրբ Մաշտոցի աշակերտներից ոմն Ղևոնդ դարձավ սուրբ Սահակի տեղապահը։ [Նրան հաջորդեցին] Հովսեփ եպիսկոպոսը, Մովսեսը, ապա Մեղեսը։ Իսկ Հայոց թագավորի փոխարեն Հազկերտի հրամանով նշանակվեց պարսից զորապետ Մշկանը։

Վարդան Մամիկոնյանը՝ Համազասպ Մամիկոնյանի որդին և սուրբ Սահակի թոռը հեռացավ Մոկքի[192] կողմերը, Տավրոս լեռան ծործորները՝ Ջերմաձորի կիրճերը[193] և բնակվեց այն ամրոցում, որն այժմ գեղջկական բարբառով անվանում են Զռայլ[194], իր սոսկալի անառիկության պատճառով։ Եվ որովհետև մեծ սպարապետ և Հայոց զորավար Սմբատ Բագրատունի ասպետի մահից հետո Թեոդոս կայսրը Հայոց սպարապետությունը վստահել էր Համազասպ Մամիկոնյանին և նրա որդի Վարդանին, որը վախեցավ, թե մարզպանը թույլ չի տա խաղաղությամբ ապրելու, ուստի հեռացավ Մոկքի ապահով վայրերը և սպասում էր, թե աստծո նախախնամությամբ մի օր կայցելի Հայոց աշխարհը։ Նա իր մոտ կանչեց Մոկաց Հովհան, Ռշտունյաց Սահակ, Անձևացիքի[195] Շմավոն եպիսկոպոսներին և կարգեց եկեղեցականների դասը, որպեսզի զոր ու գիշեր, առանց ձանձրանալու երկրպագեն տիրոջը, հոգ տանեն աղքատների հանդեպ և այդպիսով ողորմություն գտնեն Քրիստոսից։

Այս Սահակը նա է, որի հրամանով մեծ վարդապետ և տիեզերահռչակ քերթողը՝ Մովսեսը, հրաշալի հորինվածքով գրեց Հայոց մեծերի պատմության գիրքը, որ սկսվում է Ադամից և հասցվում մինչև Զենոն[196] կայսրը։ [Սուրբ Սահակըն][197] ապրեց 120 տարի՝ լի և պարարտ ծերությամբ, ինչպես գրվել և մեզ է ավանդվել Մովսես Խորենացու Պատմության խոստացված չորրորդ դրվագում[198], ինչն ավելացված է երկու[199] գլուխներին։ Նույնը վկայում է նաև Մովսեսի ուսում-

նակից և չորրդ Մեսրոպի աշակերտ Երանելի Կորյունը[200] իր գրած սուղապատում աշխատության մեջ։ Իսկ մենք, ըստ մեր կարողության, ի վիճակի եղանք [գրելու] այս համառոտ պատմությունը, որը շարադրեցինք բացատրություններով։ Ինչպես գրվել է հաստատ, ստուգությամբ վկայում են վարդապետների բանիրուն, իմաստալից և հրաշափառ գրքերը, ներկայացնում ենք ահա քե՛զ, Գագիկ, ուսումնասերներից լավագույնիդ՝ Վասպուրականի և Հայոց մեծ զորավարիդ։

Ապա ես՝ Թովմաս, որ ջանացի ետ չմնալ, բայց ամոթով բռնեցի վերջին տեղը, փոխարինեցի սրանց և անխոհեմաբար, տգիտաբար ձեռք զարկեցի այս մեծ քերթությանը։ Քո մեծության հրամանը ինձ մղեց այս մեծ ձեռնարկությանը, ինչի համար հեռու մնացի շաղակրատությունից և փառամոլ ոգուց։

Ավարտվեց Հայոց պատմության առաջին դպրությունը՝ ըստ ազգաբանության՝ Արծրունյաց տոհմի։

# ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

## Ա

Հայոց Արշակունի թագավորության վերացումից հետո մեր երկրին տիրեցին Պարսից մարզպանները։ Հայոց իշխաններն ամրացան զանազան վայրերի, գավառների քարանձավներում, ամրաշեն բերդերում։ Իսկ պարսիկների բռնությունները ավելի ու ավելի սաստկացան։ Հարկահանների խմբերը իրար ետևից գալիս էին, կատարելով սաստիկ խոշտանգումներ։

Այս ժամանակ Աղան Արծրունու հորեղբայր Շավասպ Արծրունին՝ Վասակի եղբայրը, միտք հղացավ տիրել Հայաստանին։ Նա անխելամտորեն մեկնեց պարսից Պերոզ[201] թագավորի մոտ և ինքնահոժար մոլորությամբ հանձն առավ պաշտել մազդեզական անմիտ մոխրապաշտության հավատքը և արքայից խնդրեց Հայոց իշխանությունը։ Նա կատարեց իր սնափառ ցանկությունը և վերադարձավ Հայաստան, իր հետ բերեց Վնդո[202] մարզպանին, որը պարսից մոգպետ էր։ Մտան մեր երկիրը, վրդովեցին քրիստոնեական միաբանությունները, փութաջանորեն ավերեցին եկեղեցիները, աղոթատները, գետնին հավասարեցրին փրկչի սուրբ խորանը, հիմնիվեր կործանեցին Սուրբ Հոգու մկրտության մաքրափայլ ավազանը, ցավագնորեն չարչարեցին Նոր կտակարանի սպասավոր քահանաներին, տղամարդկանց և կա-

նանց մատնեցին ծանր չարիքների, բանտարկության ու խոշտանգումների, որպեսզի դյուրությամբ հեռացնեն քրիստոնեության սուրբ հավատից։ Բազում էր ունեցվածքի հափշտակությունը։ Վատթարագույն մահն արհամարողներին ու մարտիրոսական չարչարանքներով նահատակվածները շատ էին, քան տատանվողները։ Իսկ երբ անօրեն Շավասպ Արծրունին և մարզպանը հասան Արտաշատ, Դվին[203] քաղաքի դռանը կառուցեցին որմզդական մեհյան և նրանում բորբոքեցին կրակապաշտության մոլությունը։ Երկիրն ընկավ մեծ ու վտանգավոր աղետների մեջ։

Այս դառնությունների մասին լուրը հասավ մեծն Վարդան Մամիկոնյանին, որն ամրացել էր Տավրոսի Ձայլ [բերդում]։ Վերահաս անչափ ու տաժանելի տառապանքները չհանդուրժելուց Վարդանի հոգին լցվեց ամենի զայրույթով՝ սուրբ հավատի կորստյան և Հայոց երկրի կործանման պատճառով։ Նա փութապես աղաչական նամակ հղեց Ուշտունիքի[204] Տաճատ և Անձևացիքի Վահրիճ իշխաններին և նրանց իմաց տվեց եղածի մասին։ Իսկ նրանք անմիջապես, յուրաքանչյուրն իր զորքով եկան մեծն Վարդանի մոտ և իրենց հետ բերեցին լեռնակողմի զորքը, ոչ ավելի քան 1200 մարդ։ Ապա արագությամբ վրա հասան Շավասպին և մարզպան Վնդոյին։ Եվ քանզի բանակել էին Երասխի և Մեծամորի[205] գետախառնուրդում, նախ հանդիպեց Շավասպ Արծրունին, որի վրա հարձակվեց քաջ Վարդանը և գոչելով առյուծի պես, արագությամբ, ամբողջ ուժով միասայր սրով երկատեց նրան։

Իսկ Տաճատը և Վահրիճը շրջապատեցին, ապա ձերբակալեցին և Դվին բերեցին մարզպանին ու նրա որդի Շիրոյին։ Բորբոքեցին կրակարանի հուրը և այրեցին մարզպանին, իսկ Շիրոյին կախեցին կրակարանի վերևի փայտից։ Մնացածներին գետավեժ և սրախողխող արեցին, սպանեցին, իսկ փախչողներին հետապնդեցին Նախճավանից անդին և իրենք վերադարձան մեծ հաղթությամբ։ Ապա քանդեցին մեհյանը, տեղը հարթեցին և նրա քարերով Դվինում* կառուցեցին Ս.

* Բնագրի «ի բլուր տեղվոյն» դարձվածքը նշանակում է Դվինում։ Փավստոս Բուզանդի կարծիքով Դվին բլրի հատուկ անունն էր, (Փավստ., Գ, ը), իսկ ըստ Մ. Խորենացու՝ Դվին պարսկերեն բառ է՝ բլուր նշանակությամբ (Խոր., Գ, ը)։



Գրիգոր եկեղեցին, որտեղ տեղափոխեցին Հայոց Գյուտ կաթողիկոսին։ Հայոց նախարարները իրենց համար կառուցեցին արքայական պալատներ ու երևելի դաստակերտներ, իսկ քաղաքը պատեցին որմնապարիսպներով։ Նրանք խաղաղեցրին երկիրը։ Իսկ մեծն Տրդատի թագավորաբնակ տեղը տվեցին Վահան Արծրունուն, որպեսզի այնտեղ կառուցի թագավորական ապարանք։ Այն կառուցվեց։ Ապա մտադրվեցին նրան թագավորեցնել Հայաստանում, քանզի սրտոտ և ուժեղ, խելացի, խոնարհ, աստվածեռն և ուրախ տղամարդ էր։ Բայց հետո Հայոց նախարարները անմիաբան գտնվեցին և հրաժարվեցին Վահանին թագավորեցնելու մտքից ու մեկնեցին մեծն Վարդանի մոտ։ Վահանը ևս հենց սկզբից նախարարների հետ մեկնեց Վարդանի մոտ և նրան հանձնեց Հայոց վերակացությունը։ Նրանք միշտ հնազանդ եղան Վարդանին։

Իսկ պարսիկների թագավորը մեկնել էր Ճորա դուռ[206] Քուշանների դեմ պատերազմելու, ուստի Հայոց երկիրը ապահով էր մնում Պարսից հրոսակներից։ Այնտեղ քուշաններից սպանվեց թագավորը, նրա փոխարեն գահակալեց Հազկերտը, որը զորավար սկսեց ոգորել Հայոց իշխանների դեմ։ Մեզնից առաջ եղած պատմագիրների հիշատակությունները ցույց են տալիս նաև Հայաստանի ավերումը, տառապանքների մեծացումը, Քրիստոսի համար զոհված նահատակների հույժ շատանալը, ինչպես և սուրբ քահանաների արիությունները, սրբազան պատերազմ մղելը մեծ անապատում՝ Ապար աշխարհում[207] և այն ամենը, ինչ մի անգամ արդեն ասված է, ուստի ավելորդ եմ համարում կրկնել։

Երբ Արտազ գավառի Ավարայր դաշտում եղավ սուրբ Վարդանի մեծ պատերազմը Մշկանի և պարսկական զորքի դեմ, այնտեղ աստծուց խրախուսված Հայոց սրբազան զորքը նահատակվեց հանուն Քրիստոսի։ Այդ ժամանակ Վահան Արծրունին երևելի քաջությամբ պատերազմում էր սուրբ Վարդանի կողքին և հանդարտ ճեմում պարսից քաջ ախոյանների մեջ, ինչպես հուրը եղեգներում։

Երբ երկու կողմերի միջև սկսվեց ճակատամարտը, և Հայոց զորքի ձախ թևը սկսեց պարտվել, սուրբ Վարդանը մտրակեց ձին, ախոյան պարսիկներին փախուստի մատնեց և ուժեղացրեց իր ձեռքի տակ եղած զորագունդը։ Նույն ժա-

ժանակ Վահան Արծրունին մտնելով Պարսից զորքի մեջ, ետ դարձրեց Վարդանի աչքերից։ Մինչ այս, մինչ այն, 140 ումեղ մարդկանցից բաղկացած պարսկական մի զորագունդ, որոտաց թափվեց նրանց։ Աչքերը վեր բարձրացրեց սուրբ Վարդանը և տեսավ անօրեն Վասակին՝ Սյունյաց տիրոջը, որի մարդիկ փութապես Վարդանին գցեցին փղերի լավ զինված գնդի մեջ։ Բայց Վահան Արծրունին զինակցեց նրան, և քաջ ու ընտիր նահատակներ Վարդանն ու Վահանը զոհվեցին միասին։ Հանուն Քրիստոսի՝ մարտիրոսի անուն ժառանգեց Հայոց սուրբ զորագունդը, բաղկացած 696 հոգուց։ Այս մասին պատմվում է Աբրահամ Խոստովանողի համառոտ [պատմության] մեջ։

Իսկ թե ինչու Վահանի նահատակվելու պատմությունը չի գրված պատմագրի գրքում, ստուգապես առանց երկբայության ցույց կտամ քեզ՝ քաջահմուտ ուսումնասերիդ։

## Բ

## ՄԱՐԴԱՍՊԱՆ ԲԱՐՍՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆ*

Արյաց արքա Պերոզի ժամանակ Նեստորի աղանդից[208] ինչ-որ մեկը՝ Բարծումա անունով, որ ուներ եպիսկոպոսի համբավ, զորությամբ ձեռքը վերցրեց նեստորական հերձվածը։ Պերոզի մոտ նա ամբաստանեց Հայոց նախարարներին և գործեց արյունոտ բազմաթիվ ոճիրներ։

Այդ ժամանակ սուրբ Գրիգորի աթոռին գովելի աթոռակալությամբ ճոխանում էր Հայոց կաթողիկոս տեր Քրիստափորը[209]։ Սա գրեց Ասորեստանի կողմերը և զգուշացրեց չխառնվել նեստորականների հետ։ Նույնը գրեց նաև Խուժաստանի ուղղափառ բնակիչներին, ինչպես նաև Դերջանի[210] ու Խաղտաց ձորի[211] բնակիչներին, գավառատերերին ու եպիսկոպոսներին։ Բարծուման խաբեությամբ ձեռք բերեց այդ թղթերը, ուղարկեց Պերոզ արքային, ասելով «Այս ամենից, որ գրել է Հայոց կաթողիկոսը, երևում է, որ հայ նախարարները մտադիր են ապստամբել քո դեմ և հնազանդվել Բյուզանդիայի թագավորին։ Ուրեմն պետք է քննել և իմանալ այդ մասին»։

Իսկ ինքը՝ Բարծուման, չքմեղանքով եկավ Հայաստան՝ Արզնորդյուն[212] և Մոկաց աշխարհը, որպեսզի այնտեղ ցանի նեստորական աղանդի սերմերը։ Այն ժամանակ Մոկաց աշխարհում էր բնակվում մեր սուրբ վարդապետ Եղիշեն։ Բարծուման եկավ նրա մոտ և խնդրեց Հայոց պատմությունը, որը նա գրել էր սուրբ Վարդանի հրամանով։ Նրա խնդրանքը կատարվեց։ Նույն ժամանակ Արծրունյաց մեծ իշխան Ներշապուհը, որ ամրացել էր Տմորիքի բերդում, տեղեկացավ Բարծումայի մասին և առաջարկեց նրան հեռանալ այդ վայրերից։ [Ներշապուհը] Պարսից թագավորի պատճառով ոչինչ չձեռնարկեց նրա դեմ և միայն ուղարկեց սպառնալից առաջարկներով հրամանը։ [Բարծուման] ստացավ հրամանը, զայրույթից լցվեց քենով և [Եղիշեի] պատմությունից դեն գցեց այն, ինչը վերաբերում էր Արծրունյաց տոհմի կատարած գործերին, ինչպես նաև Վահան Արծրունու նահատակությանը։

Իսկ Եղիշե վարդապետն այդ ժամանակ ապրում էր Ռշտունիք գավառում, ծովեզերքին։ Աստծո սուրբն այնտեղ էլ վախճանվեց։ Եվ երբ [նրա] գիրքը Մոկքից վերադարձրեցին, ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա հետ կատարվածի վրա, կարծեցին, թե վարդապետն է այդպես հորինել։ Անօրեն Բարծումայի սադրանքով Արծրունիների նկատմամբ պարսից արքայի կատարածի մասին ցույց եմ տալու այլ տեղում։

Մարկիանոս[213] կայսրը Բյուզանդիայում թագավորեց երկրորդ Թեոդոսից հետո, որը Քաղկեդոնում[214] գումարեց 636 եպիսկոպոսների ժողովը։ Նույն ժամանակ էր, որ նահատակվեցին սուրբ Վարդանը և Վահան Արծրունին։

Իսկ Վասակ Արծրունին՝ սուրբ Աղանի հայրը, վերցրեց իր եղբայրներ Տաճատին ու Գոտերին, մեկնեց կայսեր մոտ և հեռու մնաց պարսից խառնակություններից, երկրի ավերածություններից։ Մարկիանոս թագավորը նրանց ընդունեց սիրով ու բարեկամաբար, առաջարկեց մեծաշուք բարձ ու պատիվ, որպես կտրիճ մարտիկների, որոնք Քրիստոսի եկեղեցու և ուղ-

* Այս գլուխը տպագիր բնագրում վերնագրված է՝ «Պատմած յիշատակի վասն արինահեղին Բարսումայի», իսկ ձեռագիր բնագրից մեզ հասած պատառիկներում նույն գլուխը կրում է միայն «Վասն արինահեղին Բարծումայի» վերտառությունը (Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. 1890 թ., 208ա. ձեռ. 2559, թ. 304ա)։ Թարգմանել ենք ուղղումով։

դափառ սուրբ հավատի համար չարչարվեցին, արյուն թափեցին, նահատակվեցին և վաստակեցին խոստովանողի անուն։ Պատվական այրերին՝ Վասակին, Տաճատին և Գուտերին, որոնք Արծրունյաց տոհմի մեծ նախարարությունից էին, թագավորը խնդրեց, որպեսզի ընդունեն [Քաղկեդոնի] ժողովը, երեք տիեզերաժողովներով հանդերձ։ Նրանք պատասխանեցին. «Որովհետև մենք դադար չունեինք պարսկական հրոսակներից, հեռու մնացինք սուրբ գրքի սովորեցրածից և հավատի ու ճշմարտության կանոններն ընտրելուց։ Բայց քանի դեռ մեր երկրում էինք, մեր առաջնորդները թույլ չտվեցին ընդունել այդ կանոնները։ Արդ, չենք կարող փութով ու շողոմարար հաճությամբ հանձն առնել ձերդ կայսերական մեծության հրամայածը։ Թույլ տվեք մեզ՝ գրել Հայաստան, հարցնել Հայոց առաջնորդներին և ստանալ պատասխանները»։

Աշխարհակալ թագավորի առջև գրեցին նաև մեղադրանք, թե ինչո՞ւ, երբ ժողով էր գումարվում, հայերից ոչ ոքի անհրաժեշտ չհամարեց կանչել հավատի միաբանության համար։

Մարկիանոսը պատասխան տվեց և ասաց. «Այն պատճառով, որ Հայոց առաջնորդները վտանգների մեջ էին պարսկական խառնակություններից»։ Ապա Արծրունի մեր մեծամեծները թույլտվություն ստանալով, գրեցին Աբրահամ Մամիկոնյան եպիսկոպոսին, որը սուրբ Սահակի աշակերտն էր, և նրան ծանուցեցին արքայի պահանջը։ Իսկ նա վերստին պատասխանեց ասելով. «Տեղի չտալ, չհամաձայնել կայսեր հրամանին, և եթե որևէ վտանգ հասնի, ապա դիմանալ, ինչպես արել եք մինչ այդ»։ Նրանք այդ թուղթը մատուցեցին կայսեր, որն իմացավ նրանց հաստատ ու անդրդվելի մտադրությունը և այլևս չջանաց համոզել, թողեց իրենց կամքին ու ցանկությանը: Նրանք այնտեղ մնացին մինչև Լևոն առաջին[215] կայսեր ժամանակները։ Վասակն ու Տաճատը վախճանվեցին այնտեղ և փառավորապես թաղվեցին բյուզանդական մեծամեծների գերեզմանում։

Իսկ երանելի Աղան Արծրունին՝ Վասակի որդին, վերադարձավ Բյուզանդիայից Հայոց երկիրը, ապրեց միանձնի նույն խստակեցությամբ, հրեշտակային առաքինությամբ և ապա փոխվեց երկինք, սրբերի կարգը։ Նրա ոսկորներն ուրիշ սրբերի հետ թաղված են Հաղամակերտի[216] վանքում։



Ինչպես ցույց են տալիս պատմագիրներից շատերը, Հայոց տառապանքները շարունակվեցին մինչև Ջամասպի[217], Կավատի[218] և Խոսրով[219] թագավորի ժամանակները։ Հայոց նախարարները ծանր պարտավորություններ էին կրում՝ տալիս էին զորք, մասնակցում կռիվներին։

Բայց Վաղարշի[220] ժամանակ երիտասարդ Վահան Մամիկոնյանը խիզախեց պարսիկների դեմ։ Նա իր մոտ հավաքեց Հայոց նախարարներին, սուրբ Ավետարանի վրա կապեցին սրբազան ուխտ, որով անկեղծ ու աննենգ տիրասիրությամբ ցուցաբերելու էին հնազանդություն և սեր դեպի իրենց իշխանը, մինչև որ արյունոտ նահատակությամբ վրեժ կառնեին պարսից հրոսակներից՝ Հայոց եկեղեցիների ավերման, քրիստոնյաներին, սուրբ եկեղեցու զավակներին պատճառած նեղությունների, հափշտակությունների և սաստիկ արյունահեղությունների համար։

Նույն այդ ժամանակ պարսից Հազարավուխտ զորապետը ծանր զորքով շարժվեց Հայաստան՝ պատերազմելու Հայոց զորքի դեմ, ավերելու, գերելու, թալանելու երկիրը։ Այնինչ սուրբ Վարդանի մեծ պատերազմից հետո սկսել էին նորոգել Քրիստոսի եկեղեցիները, որ ավերել էին հրոսախմբերը։ Հազարավուխտն ասպատակներ սփռեց այլևայլ կողմեր, ապա վերցրեց պարսից թագավորների օգտագործած ընտիր այրուձին՝ կռվի պատերազմողներին և շարժվեց Հաշտյանքի ու Ծոփքի[221] կողմերը՝ Վահանի վրա։

Քաջն Վահանը տեղեկացավ, որ Հազարավուխտը պարսկական մեծաքանակ և ընտրովի զորքով գալիս է իր վրա։ Նույն ժամանակ Վահանը անմիջապես խրախուսվեց աստծուց և քաջալերող ձայնով ասաց Հայոց նախարարներին. «Հապա՛, քաջեր, զենքի դիմեք, նետեք ձիերը և արիաբար մարտնչեցեք, մի երկնչեք նրանց զորքի մեծաթվությունից։ Տերը կխորտակի թշնամիներին, պատերազմը տիրոջն է, տերը կտկարացնի հակառակորդներին, տերն է մեր հույսը»։

Նույն ժամին [հայերը] զինավառվեցին, յուրաքանչյուրը հեծավ իր ձին և շարժվեցին նրանց դեմ։ Սակայն երբ տեսան պարսից զորքի մեծաթվությունը, վհատվեցին, լքեցին ճիմյանց և ետ ընկրկեցին։ Քաջ Վահանի հետ մնացին միայն երեսուն հոգի՝ Մեհրշապուհ և Հաշկուր Արծրունիները, Ներ-

եհ Կամսարականը և [ոմանք] Ամատունյաց տոհմից, որոնց անունները չգիտեմ։ Նրանք երեսունով նիզակակցեցին միմյանց, օգնություն կանչեցին Սուրբ Երրորդությանն ու ձեռք քաշեցին մարդկանց օգնությունից, մի մարդու պես կպան ամրացան, ինչպես պղնձի բլուրը և միաբան ու միաբերան ասացին. «բոլոր ազգերը պաշարեցին ինձ, բայց Տիրոջ անունով հաղթեմ նրանց»*։ Ապա միահամուռ հարձակվեցին պարսից զորքի վրա, որոնց թվում էր, թե կատակ են անում։ Նրանք պարսիկներին հանդիպեցին Երեզ[222] անունով գյուղում, և ինչպես պտուտահողմն ու եղեգների միջով շարժվող կրակը, սրելով վանեցին շատերին, մնացածներին փախուստի մատնեցին, հետապնդելով դուրս վռնդեցին Հայաստանի սահմաններից, իսկ իրենք վերադարձան մեծ հաղթությամբ և աստծուն մատուցեցին պատարագներ, բավարարեցին տնանկների, այրիների ու որբերի կարիքները։ Ամենքը համակվեցին ուրախությամբ և փառք տվեցին աստծուն[223]։

## Գ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՑԱՎ ՊԱՐՍԻՑ ՍԱՍԱՆՅԱՆ ՏՈՀՄԻ ԱՆԱՐԳ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Բյուզանդիայի կայսր Մորիկի[224] ութերորդ տարում, Պարսից թագավոր Որմիզդը[225], որը Սասանյան տոհմից էր, սպանվեց իր հավատարիմներից։ Նրա մանկահասակ որդին՝ Խոսրովը՝ տիրեց թագավորությանը։ Ոմն Վահրամ Մեհրևանդակը[226], որ արևելյան կողմերի իշխանն էր, մեծ ուժի տեր մի տղամարդ, քաջարար ջարդեց թետալացիների[227] զորքը, գրավեց Բալհը և քուշանների ամբողջ երկիրը, մինչև Վահրոտ[228] անունով մեծ գետից էլ անդին։ Սա խլեց պարսից թագավորությունը, իսկ Որմիզդի որդի Խոսրովը փախավ Բյուզանդիայի Մորիկ կայսեր մոտ։ Նրան իր քեռիները՝ Վնդոն ու Վստամը փախցնելով, տարան կայսեր պալատը։ Մորիկ կայսեր մոտ ուղարկեցին նաև զորավոր մարդկանց, որոնք տարան մեծար-

* Սաղմ., ՃԺԸ, 10։



ժեք նվերներ և Խոսրովի բերանով գրված մի թուղթ՝ այսպիսի բովանդակությամբ։

«Մեծազոր թագավոր, ծովերի և ցամաքի տիրակալ, տուր ինձ օգնական զորք և հաստատիր ինձ իմ պապերի թագավորական գահին։ Քանզի եթե կարողանամ ջարդել իմ թշնամուն և վերականգնեմ թագավորությունս, կլինեմ քո հլու հնազանդ որդին, քեզ կտամ Ասորվոց կողմերն ու ամբողջ Արվաստանը[229], մինչև Մծուրն[230] քաղաքը, իսկ Հայոց աշխարհից՝ տանուտերական իշխանությունը[231] մինչև Այրարատ, Դվին քաղաքը և Բզնունյաց ծովի[232] եզերքը, Առեստ[233] ավանը, ինչպես նաև Վրաց երկրի մեծ մասը, ընդհուպ մինչև Տփխիս քաղաքը, և խաղաղության դաշինք կհաստատվի մեր միջև, իսկ մեր թագավորելուց հետո՝ մեր որդիների միջև»։

Մորիկ կայսրը համաձայնեց և նրա մոտ ուղարկեց իր փեսային՝ Փիլիպիկոսին։ Սրա հետ ուղարկեց հրավիրագիր, ապա [Խոսրովից] վերցրեց երդմնագիր։ [Մորիկը] նրան օգնության ուղարկեց կայսերական զորքը՝ հայերից Հովհան պատրիկին, ասորվոց Ներսես զորապետին, Մուշեղին, որը կտրիճ ու զորեղ տղամարդ էր, և հունաց, հայոց, վրաց ու աղվանից ամբողջ զորքը։ Անհամար այդ զորաբանակը եկավ Ատրպատականի կողմերը՝ Վառարատ[234] գավառ։

Վահրամը Մուշեղին ու մյուս զորագլուխներին գրեց այսպես.

«Ես այնպես էի կարծում, թե երբ կռվելու լինեմ ձեր թշնամիների դեմ, այդ կողմից դուք կօգնեք ինձ, և միասին մեջտեղից կվերացնենք ընդհանուր պատուհասը՝ Սասանյան տոհմը։ Դուք ահավասիկ հավաքվել գալիս եք իմ դեմ պատերազմելու, բայց ես չեմ երկնչի հավաքված և ինձ վրա եկող հոռոմ քահանաներից։

Բայց դուք, հայեր, զուր տեղն եք ցուցաբերում տիրասիրություն։ Չէ՞ որ Սասանյան տոհմն էր, որ վերացրեց ձեր երկրի թագավորությունը, մինչդեռ դուք գալիս եք ինձ վրա։ Ձեզ համար ավելի լավ է բաժանվել դրանցից և միաբանվել ինձ հետ, քանզի եթե ես հաղթեմ, երդվում եմ մեծն Որմիզդ աստծով, արեգակով, լուսնով, հրով, ջրով, Միհրով[235] և բոլոր աստվածներով, որ ձեզ կտրվի Հայոց թագավորությունը և ում որ կկամենաք, կդարձնեք ձեզ թագավոր։ [Ձեզ կթողնեմ] Ա-

սարվոց կողմերից Արվաստանը[236], Մծուրնը և Նուշիրականը[237], մինչև արաբական սահմանը, իսկ ես իրավունք չեմ ունենա Զարասպից[238] այդ կողմ անցնելու։ Ձեզ կուղարկեմ Արյաց թագավորության գանձերից այնքան, մինչև որ ասեք՝ շատ է։ Կուղարկեմ նաև մեծաթիվ զորք, որչափ որ հարկավոր լինի ձեզ, մինչև որ ձեր թագավորությունը հաստատ լինի»։ Ապա երդվեց իրենց սովորությամբ, աղը ծրարեց հրովարտակի մեջ և ուղարկեց։ [Հույները] վերցրեցին և ընթերցեցին այն, բայց պատասխան չտվեցին հրովարտակին։

[Վահրամը] գրում է նաև երկրորդ նամակը և ասում. «Ձեզ գրեցի, որ հեռանաք դրանից, ուրեմն չեք կամենում լսել ինձ։ Խղճում եմ ձեզ, քանզի վաղն առավոտյան ձեզ ցույց կտամ սպառազինված փղերի և նրանց վրա նստած զինավառ քաջերի, որոնց ամուր լարված աղեղներից ձեզ վրա կտեղան երկաթե նետեր, պողպատե սլաքներով տեգեր, ինչպես նաև բազմաթիվ բռունցքներ՝ որքան որ ձեզ և Խոսրովին հարկավոր կլինի»։

Մուշեղը գրեց նրան այսպես. «Քո խոսքերը լսեցի և ասում եմ, որ թագավորությունն աստծունն է, և ում կամենա, տալիս է։ Բայց դու պետք է խղճաս ոչ թե մեզ, այլ քո անձին, որովհետև տեսնում եմ որ պոռոտախոս մարդ ես և խրախուսվում ես ոչ թե աստծուց, այլ քո անձի, զորքի ու փղերի շատությամբ։ Բայց ասում եմ քեզ, որ եթե տերը կամենա, վաղը ևեթ քեզ շրջապատել կտա բաց պատերազմողներով, կճայթեն քեզ վրա, ինչպես ամպը երկնից, և նիզակները բռնած կանցնեն քո բազմության միջով, ինչպես փայլատակող կայծակի հուրը։ Քանզի եթե աստված կամենա, հողմը կքշի կտանի քո զորությունը, իբրև փոշի»։ Այնտեղ էին Վնդոն, Վստամը և պարսից զորքը՝ մոտ 8000 հեծյալներ, չհաշված հունաց և հայոց զորքերը։ Առավոտյան, երբ արեգակը միայն առաջին ճառագայթներն էր արձակել, սկսվեց սաստիկ պատերազմ։ Իրար դեմ-դիմաց կանգնած ուժեղ զորագնդերը բախվեցին սաստկությամբ և միմյանց խառնվելով, առավոտից մինչև երեկո կռվեցին միմյանց դեմ արիությամբ։ Երկու կողմն էլ հոգնեցին մեծ պատերազմից։ Սաստիկ կոտորած եղավ, այնչափ, որ հեղված արյան վտակները ոռոգեցին գետինը։ Վահրամի զորքը չկարողացավ դիմադրել



բյուզանդական զորքին և փախավ նրա առջևից։ Իսկ նրանք հետապնդեցին մինչև ուշ երեկո, գետինը ծածկեցին դիակներով, շատերին էլ բռնեցին բերեցին Խոսրովի մոտ։ Այդ օրը մեծացավ Խոսրովի զորությունը։ Իսկ Վահրամը փախավ գնաց թագավորանիստ Բալհ [քաղաք], որտեղ նա հետագայում սպանվեց Խոսրովի հրամանով։

Խոսրովը հաստատվեց թագավորական գահին և կատարեց կայսեր տված իր խոստումը՝ նրան տալով ամբողջ Արվաստանը, մինչև Մծուրն, Հայոց երկիրը՝ մինչև Հրազդան գետը և Կոտայք[239] գավառը, Գառնի ավանից մինչև Բզնունյաց ծովի եզերքը՝ Առեստ ավան, Կոգովիտ[240] գավառից մինչև Հացյուն[241], Մակու[242]։ Եվ հաստատվեց մեծ բարեկամություն ու դաշինք Պարսկաստանի ու Բյուզանդիայի թագավորների միջև։

Խոսրովի թագավորության 14-րդ և Մորիկի 20-րդ տարում Թրակիայի կողմերի բյուզանդական զորքն ապստամբեց կայսեր դեմ և գահին բազմեցրեց ինչ-որ մեկին, Փոկաս[243] անունով։ Ապա միատեղ շարժվեցին Կոստանդնուպոլսի վրա, սպանեցին Մորիկ կայսեր և կայսերական գահին նստեցրին Փոկասին։

Երբ Խոսրով արքան լսեց այս մասին, հույժ բարկացավ և [վճռեց] առնել Մորիկի արյան վրեժը։ Նա մեծ զորք հավաքեց և բազմաթիվ վնասներ հասցրեց բյուզանդական բաժնում։ Երբ լրացավ Փոկասի [գահակալելու] ութերորդ տարին, նրան սպանեց Հերակլեսը[244], որը դավեց նրա դեմ և խլեց թագավորությունը, ապա Խոսրովի մոտ ուղարկեց պատգամավորներ, մեծ գանձերով ու հրովարտակով։ Նա արքայից խնդրեց խաղաղություն և ասաց. «Մորիկի արյան վրեժն առա իր թշնամիներից։ Ուրեմն դու պետք է հաստատես ինձ հետ խաղաղություն և արգելես քո երկրի պատերազմներն իմ դեմ»։ Բայց Խոսրովը լսել չկամեցավ և ասաց. «Այդ կայսրությունն իմն է, և ես Մորիկի որդուն եմ նստեցրել գահին, բայց սա գնաց և թագավորեց առանց մեր հրամանի և ընծա է մատուցում մեզ մեր գանձը, չգիտենալով, որ հաշիվ եմ պահանջելու այս գանձերի համար և չեմ հանգստանա, մինչև որ նրան իմ ձեռքը չգցեմ»։ Եվ առնելով գանձերը, հրամայեց սպանել ընծայաբերներին, իսկ Հերակլեսի խոսքերին չպա-

տամխանից, ապա զանազան կողմերում հասցրեց սաստիկ վնասներ, մատնեց ավարառության, գերության ու սրածության։ Պաղեստինի կողմերի պարսկական զորքի հրամանատարը՝ Ռոզմաուզան անունով, նույն ինքը՝ Խոռեմը, բանակցում էր երուսաղեմցիների հետ հաշտության համար, քանզի նրանք մինչ այդ հնազանդվել էին բյուզանդական թագավորությանը, սպանել պարսից կառավարչին[245], որը նշանակված էր իրենց վրա և պատրաստվում էին պատերազմի ընդդեմ պարսիկների։ Այնժամ Խոռեմ Ռոզմաուզանը հավաքեց իր զորքը, բանակեց Երուսաղեմի շուրջը և պաշարեց այն։ 19 օր պատերազմեց Երուսաղեմի դեմ, ապա հիմքից փորեցին ու ավերեցին նրա պարիսպները։ Մարգաց ամսի 19-ին[246], Խոսրով Պարվեզի թագավորելու քսանհինգերորդ տարում, զատկից 10 օր հետո, գրավեցին քաղաքը և երեք օրում սրի քաշեցին քաղաքի ողջ բնակչությանը։ Քաղաքի մեջ մնացին 21 օր, ապա բանակեցին քաղաքից դուրս և հրի մատնեցին այն։ Հրամայեցին հաշվել սպանվածների դիակները, որոնց թիվը հասավ 57 հազարի։ Ձերբակալեցին նաև Զաքարիա հայրապետին։ Որոնեցին աստվածային սուրբ Նշանը, սկսեցին տանջել եկեղեցականներին, մինչև որ գլխատեցին նրանցից շատերին։ Ապա նրանք ցույց տվեցին այն տեղը, ուր թաքցրած էր [սուրբ Նշանը]. այն վերցրին և վարեցին գերության։ Անբավ ոսկի ու արծաթ տարան թագավորի պալատը։ Այնուհետև արքունիքից հրաման եկավ՝ ողորմած լինել քաղաքում և նրա շրջակայքում մնացածների հանդեպ, վերաշինել քաղաքը և ամենքին թույլ տալ դավանելու իրենց հավատը։ Փութապես կատարեցին արքունի հրամանը, քաղաքի եպիսկոպոսի փոխանորդ նշանակեցին ինչ-որ մեկին, որի անունն էր Մոդեստոս։ Դրանից հետո Խոռեմը հավաքեց մեծաթիվ զորք և շարժվեց Քաղկեդոնի վրա։ Նա բանակեց Բյուզանդիոնի[247] դիմաց և ջանում էր անցնել ու կործանել արքայանիստ քաղաքը։ Երբ Հերակլես կայսրը տեսավ իրեն հասած այս բոլոր չարիքները, ակամայից կամեցավ բարեկամություն ցույց տալ՝ գնաց նրանց ընդառաջ, մեծարեց որպես հոգնածների ու հյուրերի, ընդունեց նրանց և բաշխեց մեծաթիվ ընծաներ։ Զորապետին, բոլոր իշխաններին ընծայեց մեծարժեք նվերներ, իսկ բոլոր զինվորներին, որպես ռո-



ճիկ բաշխեց դահեկաններ[248], յոթ օր քեֆ կազմակերպեց ամբողջ զորքի համար։ Ապա նստեց նավ և ծովի վրա զրուցեց պարսից զորապետի հետ. «Ի՞նչ եք կամենում անել,— ասաց նա,— և ինչու՞ եք եկել այստեղ։ Մի՞թե ծովը համարում եք իբրև ցամաք և կամենում դրա համար կռվել մեր դեմ։ Աստված եթե ցանկանա, կարող է ցամաքեցնել ծովը ձեր առջև։ Բայց զգույշ եղեք, աստված միգուցե չհամաձայնվի և վրեժ առնի ձեզնից երկրի կոտորածի և արյունահեղության համար։ Որովհետև աստված այսպես վարվեց ոչ թե ձեր աստվածապաշտության, բարեպաշտության, մաքրության, այլ տիրոջ հանդեպ մեր ամբարշտության, մեր մեղքերի և ոչ թե ձեր քաջության պատճառով։ Բայց ձեր թագավորն ի՞նչ է ուզում ինձանից, որ հրաժարվում է խաղաղությունից։ Կամենում է վերացնե՞լ այս թագավորությունը։ Թող չջանա, քանզի այն հաստատված է աստծուց և անհնար է վերացնել։ Աստծուն ինչպես որ ընդունելի լինի, այնպես էլ կկատարվի։ Իսկ եթե կամենա ուրիշ թագավոր նստեցնել, կանի, ինչպես որ կկամենա։ Իսկ մեզ կարձակի և մենք կընդունենք [նրա վճիռը], ահավասիկ մեր թագավորանիստը։ Իսկ եթե Մորիկի արյան վրեժն է ուզում, ապա աստված այն առել է Փոկասից, իմ հոր՝ Հերակլեսի ձեռքով։ Եթե երկիր է ուզում, ահավասիկ մեր երկիրը ձեր առջև է, կկամենանք, թե ոչ, աստված կառնի մեզնից և կտա ձեզ։ Եթե քաղաքներ է ուզում, ահավասիկ մեծ և պարսպավոր քաղաքները։ Եթե պահանջում է գանձեր, թող ասի ինչքան պետք է տանք, և ձեռք կբերի։ Բայց նա չի կամենում լսել և տակավին ծարավի է արյունարբության։ Մինչև ե՞րբ չի հագենալու արյամբ։ Մի՞թե հռոմները[249] չէին կարող սպանել նրան և վերացնել պարսից թագավորությունն այն ժամանակ, երբ աստված նրան հանձնել էր մեր ձեռքը։ Սակայն իրեն ողորմացին։ Արդ ես խոսելու եմ նույն բարությամբ և խնդրելու եմ նրանից հաշտություն և բարեկամություն, իսկ ձեզնից պետք է խնդրեմ երեք բան, ուստի լսեցեք ինձ։ Աշխարհից վերացրեք սուրը, հուրը և գերությունը և դուք կստանաք եռակի օգուտ, քանզի ո՛չ դուք սովահար կլինեք և ո՛չ էլ արքունի հարկերը կկորչեն։ Ահավասիկ ուղարկում եմ նվերներ ձեր թագավորին, ինչպես նաև դեսպաններ՝ հրովարտակներով, և նրանցից խնդրում եմ՝ երկրին խաղաղու-

թյուն, մեր միջև՝ հաշտություն։ Նրանք ընդունեցին խնդիրքը և համաձայնեցին կատարել նրա կամքը, մինչև որ կտեսնեին, թե ինչ պատասխան կգար իրենց թագավորից, կամ զորքին ինչ կհրամայեր անել։ Իսկ զորքն այնտեղից գնաց Սիրիա՝ ձմեռելու։

Պարսից թագավորն ընդունեց կայսեր ուղարկած նվերները, բայց չարձակեց նրա դեսպաններին և ոչ էլ պատասխան տվեց հրովարտակներին, այլ զորքին հրաման տվեց նստել նավերը և շարժվել Կոստանդնուպոլսի վրա։ Ապա պատերազմ սկսվեց, և ծովի մեջ տեղի ունեցավ սաստիկ նավամարտ։ Այդ օրը պարսից զորքը կորցրեց 4000 սպառազինված հեծյալներ, իրենց նավերով հանդերձ։ Այդպիսի կորստից հետո նրանք այլևս չհամարձակվեցին նույնն անել, այլ սփռվեցին ու գրավեցին ամբողջ երկիրը։

Խոսրովն ավելի գրգռվեց։ Բայց տերը պնդացրեց նրա սիրտը, քանի որ կործանելու էր նրա թագավորությունը։ Նա գրեց կայսեր նախատալից հրովարտակ, այսպիսի օրինակով.

«Աստծուց և բոլոր թագավորներից փառաբանված, երկրի ու ծովերի տեր, մեծն Արամազդի որդուց՝ Խոսրով թագավորից մեր անմիտ և անպիտան ծառա Հերակլեսին։ Չցանկացար կամովին մտնել մեր ծառայության տակ, այլ քեզ կոչում ես տեր և թագավոր, ծախսում ես քո մոտ եղած իմ արքունի գանձը, չգիտես, որ վաղը հաշիվ ես տալու։ Խաբում ես իմ ծառաներին և ավազակներից զորք հավաքում, հանգիստ չես տալիս ինձ, միշտ պատրաստվում ես իմ դեմ պատերազմի և ասում, թե ապավինում ես աստծուն։ Հապա ո՞ւր է այն աստվածը, որ քանն ես համարում, ինչո՞ւ չփրկեց Կեսարիան,[250] Անտիոքը[251], Տարսոնը[252], Ամասիան[253], Երուսաղեմը, Ալեքսանդրիան, Թեբայիդը[254] և այլ երկրներ։ Մի՞թե այժմ չես ճանաչելու, որ հնազանդեցրել եմ ամբողջ աշխարհը, թե ծով և թե ցամաք։ Ուրեմն միայն Կոստանդնուպոլի՞սը չպիտի կարողանամ [հնազանդության] բերել։ Սակայն քեզ եմ թողնում քո գործած բոլոր հանցանքներն ու վնասները, վերցրու կնոջդ ու որդիներիդ և արի այստեղ։ Քեզ կտամ ագարակներ, այգիներ, ձիթենիներ և սերմեր, որպեսզի անես վար ու ցանք և հունձ, իսկ մենք քեզ կնայենք բարեկամաբար։ Ապա թե ոչ՝ թող չխաբի քեզ սնոտի հույսը, քանզի այն Քրիստոսը, որ ի



վիճակի չեղավ փրկելու իր անձը հրեաներից, որոնք նրան բռնեցին, և սպանեցին փայտի վրա,— ուրեմն նա ինչպե՞ս կարող է փրկել քեզ ինձանից։ Եթե անգամ իջնես ծովի անդունդը, կձգեմ իմ ցանցը և կբռնեմ քեզ, ապա կտեսնես ինձ այնպես, որպես չես կամենա»։

Հերակլեսը վերցրեց հրովարտակը և հրամայեց ընթերցել հայրապետի ու բոլոր մեծամեծերի առջև։ Այնուհետև մտան աստծո տաճար և հրովարտակը փռեցին սուրբ սեղանի առջև, երեսներն ի վայր ընկան գետնին՝ տիրոջ առջև ու դառնությամբ լաց եղան, որպեսզի տերը տեսնի թշնամուց իրեն հասցրած նախատինքը։

Հերակլեսը և բոլոր սինկղիտոսները[255] գերադասեցին թագավորության գահին նստեցնել Հերակլեսի որդուն, որը փոքրիկ մանուկ էր։ Իսկ Հերակլեսը պատրաստության տեսավ, ապա նավեց արևելք, դեպի Քաղկեդոն։ Երկրում եղած պարսից զորքը չիմացավ [այս մասին]։ Հերակլեսը հավաքեց ամբողջ արևելյան զորքը, որ հասնում էր 120 հազարի, և դիմեց Խոսրովի վրա։ Նա շարժվեց դեպի հյուսիս և ուղղվելով Կարնո քաղաք[256] տանող ճանապարհով, անցավ Շիրակ, հասավ Դվին, ավերեց այն, ինչպես նաև Նախճավանը, Որմին[257]։ Այնուհետ դիմեց Ատրպատականի Գանձակ[258] [քաղաք], քանդեց այն, ավերեց Ահմատանը[259], Մայը[260], կործանեց կրակապաշտական մեծ կրատունը, որին անվանում էին Վշնասպ[261]։ Կատտան դիմացի լիճը լցրեց դիակներով, սրի քաշեց ամենքին, ասուն, թե անասուն, տղամարդ, կին, թե մանուկ։ Խոսրով թագավորը զարհուրեց և պատրաստվեց փախուստի, քանզի մեծանում էր Հերակլեսի հաջողությունը պատերազմում և ամենուրեք, որտեղ էլ որ հանդիպեր պարսից զորքին, անխտիր կոտորում էր բոլորին, մինչև որ ոչ ոք կենդանի չմնաց։

Այս մասին ավելի վաղ իմացել է հին պատմագիրը, կանխատեսել նրանց կործանումը և ասել այսպես. «Վայ կգա քե՛զ, ողորմելի պարսից երկիր. երբ բյուզանդական բազմա[illegible]ուն զորքերն արշավի կելնեն քո դեմ, վրա կհասնեն, սրի կքաշեն և առաթուր կանեն ձիերի սմբակների տակ։ Վայ կգա քե՛զ, խեղճ, բայց քաջ այր և մեծանուն արքա, երբ բարձրյալը կմեկնի իր ձեռքը, որպեսզի կործանի քեզ և խորտակի

քո ամբարտավանության գավազանը։ Այնժամ արեգակը կզրկի քեզ իր լույսից և կպարուրի խավարով, երկինքը որոտալով, ուժգին կճայթի քեզ վրա, կլսվեն անդունդի ձայները, բոմբյունը, գոռոցը, ինչպես և բազմաթիվ ձիերի սմբակների որոտի ձայնը, սպառազեն անհամար զինվորներ աղաղակներով կհարձակվեն քեզ վրա։ Այնժամ ամոթահար աչքերով կտեսնես, որ բարձրացել են պայծառ ու մեծափառ դրոշներ։ Նույն ժամին վրա կհասնի թանձր մութը, մեգն ու խավարը կպատեն լեռներ ու դաշտեր, քո ռազմիկները կդառնան սրի ճարակ, քո դեմ կելնեն բազում փայտահատներ, կկտորեն քո մեծ անտառները, հասակ առած մատղաշ տնկիները։ Այնժամ քեզնից ծնված հուրը կլափի քեզ, ապա քեզնից բորբոքվելով նաև քո տղաների ու աղջիկների բազմությանը։ Քանզի ում շնորհիվ բարձրացար ու գոռոզացար, նրանով էլ կխոնարհվես և ցած կընկնես։ Կավերվի և ամենուրեք կանարգվի քո տաճարների պերճությունը։ Եվ ում որ ծնել ու փայփայել ես, նրանից էլ մահվան կարժանանաս»։ Այս բոլորը հատուցվեց պարսիկներին բյուզանդական սրի շնորհիվ։

Մինչդեռ Խոսրովը կամենում էր իր զորքը գրգռել։ Արքունի թիկնազորը և թագավորական տոհմի բոլոր ընտիր տղամարդիկ ուժ առան դարձյալ պատերազմելու Հերակլեսի դեմ։ Բայց սա մեծ զորությամբ շարժվեց նրանց դեմ։ Մառախուղն ու թանձր խավարը ամբողջովին պատել էր երկրի երեսը։ Պարսից զորքը չիմացավ, որ Հերակլեսը ետ է դարձել իրենց դեմ, մինչև որ եկան, իրար բախվեցին ու պատերազմեցին միմյանց դեմ։ Տերն այդ օրն այնչափ մեծացրեց իր ողորմածությունը Հերակլեսի հանդեպ, որ ամենքին տվեց նրա ձեռքը։ Եվ սրածելով անխնա կոտորեցին նրանց, սպանեցին նաև մարտը վարող զորապետին, իսկ սակավաթիվ ողջ մնացածներին շրջափակեցին և կամեցան կոտորել ամենքին։ Բայց նրանք ողորմագին ձայներով աղերսեցին Հերակլեսին, թե՝ «աստվածասեր և բարեբար տեր, ողորմա մեզ, թեև արժանի չենք ողորմածության»։ Այնժամ Հերակլեսը հրամայեց գթալ նրանց։ [Պարսիկները] թողեցին 4000 հետիոտն, մերկ, բոկոտն և վիրավոր այրերի։ Առավոտյան Հերակլեսը հրամայեց ասպատակներ սփռել ամբողջ երկրում և սրակոտոր անել ամենքին։



Իսկ Խոսրով արքան փախավ և Դկլաթով[262] անցավ գնաց Վեհկավատ[263], ապա հրամայեց կտրել կամուրջների կապերը։ Հերակլեսը վրա հասավ ու բանակեց Տիզբոն քաղաքի մոտերքը և ավերեց ու այրեց թագավորի բոլոր ապարանքները, ձեռք գցեց կուտակված ոսկու և արծաթի բազում գանձեր, հանդերձանք, բազում անասուններ ու ծովի ավազի պես անհամար գերիների բազմությունը։ Այնտեղ՝ Վեհկավատում էին նաև արքայի տիկնայք, հարճերը, բոլոր որդիներն, ինչպես և արքունի ձիերը։ Խոսրով արքան սկսեց հավաքել մյուս նախարարների զորքը, ինչպես նաև պատերազմից փրկված զորքը։ Նրանց հետ խոսեց մեծ խստությամբ, սպառնալիքներով, թե «ինչո՞ւ չպանվեցիք պատերազմում, այլ փախաք ինձ մոտ և համարձակություն տվեցիք իմ ծառային՝ հասցնելու ինձ այսքան վնասներ։ Մի՞թե Խոսրովին մեռած էիք կարծում»։ Այնժամ բոլորը միակամ համաձայնեցին ու ասացին միմյանց. «Թեպետ թշնամիներից ապրեցինք, բայց փրկություն չունենք սրա ձեռքից։ Ուրեմն եկեք մի բան մտածենք»։ Այնժամ միաբանեցին երդմամբ, գնացին և գիշերով անցան չարժվող կամուրջը, մտան Վեհկավատ, ձերբակալեցին արքայի բոլոր կանանց, հարճերին, որդիներին, վերցրեցին արքունի ձիերը, որոնցով Խոսրով արքան եկել էր Տիզբոն։ Այնուհետև դրանց գաղտնաբար դուրս հանեցին գիշերով, իսկ Խոսրով արքան տեղյակ չէր ոչինչ։ Նրա որդի Կավատին[264] նստեցրին գահին, և նա դիմեց [Խոսրովի] վրա։ Ապա ինչ-որ մեկը եկավ և փութապես զուժեց Խոսրովին, թե «արքայի ամբողջ երկիրն ապստամբել է քո դեմ, թագավոր են դարձրել քո որդի Կավատին և ահավասիկ նա գալիս է քեզ վրա»։ Խոսրովը ահից վեր թռավ, զարհուրանքով ու սաստիկ դողդողալով փախչելու տեղ էր որոնում և աղաղակում՝ «ձի, ձի», բայց մտան ախոռ, ձի չգտան։ Այնժամ Խոսրովը ծպտված մտավ արքունի պարտեզի թավ պուրակները և թաքնվեց մրգենիների խիտ թփերի ու ծաղիկների տակ։ Կավատ արքան հրամայեց փնտրել նրան։ Մտան պարտեզ և գտան նրան թաքնված խիտ թփերի տակ։ Ձերբակալեցին և բերեցին արքունի ատյան։ Կավատ արքան հրամայեց նետել նրան արքունի սենյակներից մեկը։ Նրա մոտ մտան նախարարներ, խոսեցին խստությամբ, նախատեցին, անարգեցին ու գնացին։ Այսպես շարունակվեց մի

առ ժամանակ։ Ապա Կավատ թագավորը ես անարգեց նրան ու հանեց մահավճիռ նրա հանդեպ և իր մարդկանց հրամայեց մտնել ու սպանել նրան։ Նրանք մտան սենյակ և կացնով խփեցին սպանեցին նրան։ Հրամայեց սպանել նաև իր եղբայրներին, և միանգամից սպանեցին 40 մարդու, բոլորն էլ արդեն չափահասության հասած։

Կավատ արքան հաստատվեց թագավորության գահին և մնայուն խաղաղություն հաստատեց թե կայսեր հետ, և թե իր թագավորության բոլոր երկրներում։ Կայսեր տվեց այն ամենը, ինչ նա կամեցավ վերցնել։ Բայց մինչդեռ Կավատ արքան խորհում էր երկրի շինության ու խաղաղության մասին, հասավ նրա կյանքի վերջը և վախճանվեց, վեց ամիս ապրելուց հետո։

Նրա մահից հետո թագավոր նստեցրին իր որդուն՝ Արտաշիրին[265], հույժ փոքր մի մանկան։ Այնժամ Հերակլեսը գրեց Խոռեմին. «Ձեր Կավատ թագավորը վախճանվեց, իսկ նրա որդին փոքրիկ մանուկ է, ուստի քեզ է հասնում այդ թագավորությունը, և ես այն կտամ քեզ, եթե հնարավոր է, ուղարկիր օգնություն, որչափ կկամենաս։ Իսկ այժմ եկ այդ կողմերից Ասորեստան, ես էլ կգամ և երկուսս միջև կկնքենք երդմնագաշինք՝ թագավորությունը խաղաղությամբ տիրելու համար»։ Խոռեմը համաձայնեց ու եկավ Բյուզանդիայի Հերակլես կայսեր մոտ և նրան թողեց Երուսաղեմը, Պաղեստինի Կեսարիան և Անտիոքի բոլոր կողմերը, այնտեղ եղած գավառներն իրենց բոլոր քաղաքներով, ինչպես նաև Կիլիկիայի Տարսոն քաղաքը. Հայաստանի մեծ մասն ու այն ամենը, ինչ պահանջեց Հերակլեսը, որը մեծապես հրճվեց։ Եվ Հերակլեսը նրան տվեց թագավորությունը, խոստացավ տալ զորք, ինչքան որ հարկավոր կլինի։ Ապա նրանից խնդրեց [հետևյալը]. «Նախ,— ասաց նա,— խնդրում եմ փութապես այստեղ վերադարձնես աստծուց ընդունած սուրբ խաչը, որ գերեցիր Երուսաղեմից»։ Այնժամ Խոռեմը երդվեց նրա առջև և ասաց. «Հրամայիր վստահելի մարդկանց՝ գան ինձ հետ, և երբ հասնեմ արքունի դուռը, նույն ժամին կփնտրեմ խաչը և գտնելուց հետո այն կուղարկեմ քեզ»։ Ապա նրան տվեց գրավոր, հաստատուն երաշխիք և աղով կնքեց երդումը՝ ըստ իրենց սովորության ու նրանից խնդրեց զորք՝ պակաս երևելի մարդ-



կանցից, որոնց ինքը վստահում էր։ Իսկ Խոռեմը վերցրեց զորքը և մեկնեց թագավորանիստը, մի քանիսին հրաման տվեց սպանել մանուկ Արտաշիր թագավորին։ Այնժամ Հերակլեսը վստահելի մարդկանց ուղարկեց Խոռեմի[266] մոտ, աստծուց ընդունված սուրբ խաչի համար։ Իսկ սա մեծ եռանդով փնտրեց, մինչև որ այն գտավ անվնաս և հանձնեց եկած մարդկանց։ Նրանք առան և փութով գնացին։ Հերակլեսը [սուրբ խաչը] բերողներին բաշխեց մեծ հարստություն, ապա մեծարեց ու ճանապարհեց պատվով։ Հերակլեսը ոգևորվեց և զվարթ սրտով գումարեց իր ամբողջ զորքը, նրա հետ գնաց ընդառաջ սուրբ խաչին, ի պատիվ երկնային, հրաշալի գանձի, և տարավ հասցրեց սուրբ Երուսաղեմ քաղաքը։ Այնտեղ նույն այդ օրը հաճախ էր լսվում լացի ձայն, [լացողների] սրտերի ուժգին բեկումից հոսում էին արտասուքներ և շարժում թագավորի, իշխանների, ամբողջ զորքի և քաղաքի բնակիչների գութն ու խանդաղատանքը։ Ոչ ոք չէր կարողանում երգել կամ լսել սաղմոսների օրհներգերը, ժողովրդի գթաշարժ արտասուքի, ինչպես նաև անչափ ուրախության պատճառով։ Եվ նույն ժամանակ Հերակլեսը հաստատեց սուրբ խաչն իր տեղում, սուրբ Գողգոթայի վրա։ Նա քաղաքի բոլոր եկեղեցիներին ու աղքատներին բաշխեց օրհնության ու խնկերի գինը, իսկ ինքը, մեկնեց Ասորվոց Միջագետք, որպեսզի գրավի և հաստատվի այն բոլոր քաղաքներում ու գավառներում, որոնք [կայսրությանն] էին անցել Խոսրովի ու Մորիկի ժամանակ։ Եվ տերունական սուրբ խաչը մնաց աստվածակերտ քաղաքում, մինչև մյուս անգամ Երուսաղեմի գրավվելը Իսմայելի որդիներից[267]։

Խոռեմը թագավոր դառնալուց հետո մի օր հագել էր արքայական շքազգեստ, նստել արքունի երիվար և շրջում էր իր ամբողջ զորքի մեջ՝ իրեն ցուցադրելու, զորքին քաջալերելու համար, հանկարծ, թիկունքից հարձակվեցին, խփեցին ու սպանեցին նրան։

Ապա թագավորեցրին Խոսրովի դստեր՝ Բորին[268], որը նաև նրա կինն էր, և կոչում էին թագուհի։ Իսկ արքունիքում հրամանատար կարգեցին Խոռոխ Որմիզդին, որը սակայն սպանվեց Բոր անունով թագուհուց։ Բորը թագավորեց երկու տարի, ապա մեռավ։ Նրանից հետո բերեցին ինչ-որ մի

երեխայի՝ Խոսրովին և նստեցրին իրենց թագավոր, բայց նա շուտ վախճանվեց։ Ապա ոմանք թագավորեցրին Խոսրովի դուստր Ազարմիկին[269], իսկ Խոռեմի զորքը Մծբին քաղաքում թագավորեցրեց ինչ-որ Որմիզդի[270]։ Եվ այնուհետև Պարսից թագավորությունը թուլացավ ու մասնատվեց։ Այս ամենից հետո Հազկերտը[271] թագավորեց Տիզբոնում։ Նա թագավորում էր վախով, ոչ թե հրամայող էր, այլ անձնապահ։ Սրա ժամանակ հասավ Պարսից թագավորության վախճանը, որի մասին մի փոքր հետո կասենք։

Այստեղ պատշաճում է Դանիելի մարգարեությունը՝ երկաթե և կավե ոտքեր ունեցող, բազմախառն նյութերից կերտված հսկայական արձանի երևալու մասին։

## Դ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՑԱՎ ՊԱՐՍԻՑ ՎԱՏԹԱՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՋՈՐԴԵՑ ՄՅՈՒՍԸ՝ ԻՍՄԱՅԵԼԱԿԱՆԸ, ՈՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԲԱՆԻ ՊԵՏՔ ՉԷՐ

Հոռոմների Հերակլես կայսեր օրոք հասավ Պարսից թագավորության վախճանը։ Այն ժամանակ Իսրայելի բոլոր ցեղերից 12 հազար մարդ հավաքվեցին Եդեսիա քաղաքում, և երբ տեսան, որ պարսից զորքը հեռացավ և ազատ թողեց քաղաքը, գնացին մտան այնտեղ, փակեցին դռները, ամրացան քաղաքում և ապստամբեցին բյուզանդական տերության դեմ։

Իսկ Հերակլես կայսրը հրաման տվեց պաշարել նրանց։ Նրա Թեոդորոս եղբայրն ու զորականների բազմությունը կամեցան կոտորել նրանց, սակայն կայսրը հրամայեց [Իսրայելի ցեղերին] հեռանալ իրենց երկրից։ Եվ նրանք բռնեցին անապատի ճանապարհը, անցան Արաբիա՝ Իսմայելի որդիների մոտ՝ Մադիամ[272] քաղաքը։ [Նույն անունով քաղաքը] ավերել էին իսրայելացիները, գնալս Եգիպտոսից իրենց դուրս գալու և Մովաբի[273] թագավոր Բաղակի դեմ պատերազմելու ժամանակ։ Եվ որովհետև պարսիկների իշխանությունը հույժ թուլացել էր, առանց երկյուղի կառուցեցին Մադիամ քաղաքը և բնակվեցին այնտեղ։



Նրանք լուրեր ուղարկեցին Իսմայելի որդիներին և ցուցաբերեցին մտերմություն, հարազատություն, թե՝ «Մենք և դուք Աբրահամի որդիներն ենք և եղբայրներ։ Դուք պարտավոր եք օգնության գալ մեզ և առնել մեր ժառանգած երկիրը»։ Իսկ նրանք թեև համաձայնեցին, բայց մեծ հակառակություն կար իրենց միջև, քանզի յուրաքանչյուրն ըստ իր ցանկության էր պաշտում կուռքերին։

Այն ժամանակ ապառաժուտ Արաբիայի կողմերում՝ Փառան վայրում, որ այժմ անվանվում է Մեքքա[274], բնակվում էին ինչ-որ բռնարկուներ, որոնք ընկերներ էին և պատերազմող տղամարդիկ, զորագլուխներ և պաշտոնատարներ էին Ամովնացիների[275] սրբությունների, որոնց անվանում էին Սամամ[276] և Քաբար[277]։ Այնպես պատահեց, որ մահացավ նրանցից մեկը, որին կոչում էին Աբդլա։ Նրանից մնաց մատղահաս մի որդի, որին անվանում էին Մահմեդ։ Նրան մինչև արբունքի հասնելը, վերցրել պահում էր իր հորեղբայր Աբու Թալիբը։ Չափահաս դառնալով նա բնակվեց իր ազգականներից ինչ-որ մեծատունի մոտ, հավատարմորեն ծառայեց նրան, արածացնում էր նրա ուղտերը և տերություն անում նրա տանը։ Ինչ-որ ժամանակ անցնելուց հետո տան տերը վախճանվեց։ Նրա կինը տեսավ, որ Մահմեդը հավատարիմ է, ուշիմ՝ աշխարհական բոլոր գործերում, դարձավ նրա կինը և նրա ձեռքը տվեց տան, ունեցվածքի բոլոր հոգսերը։ Մահմեդը դարձավ ճարտար վաճառական, առևտրի մեջ հմուտ։ Առևտրական գործերով անցավ հեռավոր ճանապարհներ, մեկնեց Եգիպտոս, Պաղեստինի կողմերը։ Մինչդեռ նա զբաղվում էր այս գործով, Եգիպտոսի կողմերում այնպես պատահեց, որ նա հանդիպեց մի կուսակրոն այրի՝ Սարգիս Բհիրա[278] անունով, որն աշակերտել էր արիոսականների[279] խենթությանը։ Սա ժամանակին ծանոթացել և հրապուրվել էր նրանցով, սովորել էր շատ բան նրանցից, բայց ավելի շատ Հին կտակարաններից, [սովորել էր] և այն, թե Որդին չունի աստվածային բնություն։ Սա համոզեց նրան հետևել պատվավոր իսրայելացիների[280] հավատին, ասելով. «Եթե հետևես ինձ, ապա իմ հրամանով կդառնաս մեծ զորապետ և քո ողջ տոհմի առաջնորդը»։ [Մահմեդին] հիշեցրեց աստծու խոստումն Աբրահամին և թլփատության, զոհերի և մյուս բոլոր բաների կարգ

ու կանոնը, որ հնարավոր չէ այժմ մեկ առ մեկ պատմել։ Այս էլ հենց մինչև վերջ դարձավ իսմայելացիների ձգտումը։

Մի օր [Մահմեդը] իր ներսից լսեց օտարոտի ձայն, ազդվեց դիվական ու ամեհի ուժից և ընկավ ուշագնաց։ Այս մասին ավելի հարմար է ասել այն, ինչ այժմ են պատմում։ Ասում են, թե ձայնը լսվել է այն կնոջից, որից նեռն էր ծնվելու։ Երբ [Մահմեդը] Եգիպտոսից մեկնեց Պաղեստին երկիրը, կամեցավ տեսնել Դավթի կնոջ արձանը։ Ճանապարհին նստեց հանգստանալու։ Երբ նիրհեց, օտար հոգին քարացած կնոջ բերանով ձայնեց, թե «ծնելու ես աշխարհակալ որդի, ինչպես պոռնկությունից հղիացած Դանա[281] ցեղի դուստրը»։ Սրա ժամանակ այդպիսի [ուրիշ] բաներ էլ երևացին, քանզի երբ նրա ուղեկիցները հարցնում են, թե ինչո՞ւ էր խելքը թողրել, ասում է. «Ինձ հասավ հրեշտակի ահավոր մի ձայն և հրամայեց գնալ իմ ժողովրդի մոտ, որպես մարգարե, ներկայացնել աստծուն որպես երկնի ու երկրի արարիչ, ստանալ առաջնորդողի անուն, հանդիմանել, խախտել կուռքերի հանդեպ եղած կեղծ հավատը»։ Ապա եկավ Փառան, նույն խոսքերը կրկնեց [մյուս] հորեղբորը, որի անունն էր Ապդչեհր։ Սա հարցնում է. «Ի՞նչ է այդ նոր հավատը, որ երևում է այժմ քո մեջ. եթե մեկ անգամ էլ կրկնես, կզանես քո անձին վնասապարտ»։ Եվ [Մահմեդը] տրտմած գնաց իր տուն, քանզի այնտեղ մշտապես բռնադատվում էր ոգիներից, թերևս աստծո կամքով։ Նա իր խելագարվելը համարում էր հրեշտակի տված։ Նրանցից շատերը համաձայնեցին իրեն համարել աստծո առաքյալ։

Մեկ օր, երբ նա տխրել էր հորեղբոր սպառնալիքներից, մոտը եկավ Աբու Թալիբի որդի Ալին[282] և ասաց. «Ինչ պատճառով ես այդպես տխուր նստել»։ Նա պատասխանեց. «Աստծուն համարում եմ երկնի ու երկրի արարիչ, ուստի ինձ անարգում են ու սպառնում»։ Իսկ Ալին, որ քաջ տղամարդ էր, ասաց. «Արի դուրս գանք. մեզ հետ են բազմաթիվ մարդիկ, թերևս հանգամանքներից հաջող ելք լինի»։

Նրանք դուրս եկան, և Մահմեդն սկսեց հրապարակով ասել նույն մտքերը։ Բայց նրանց միջև ծագեց մեծ վեճ և այնպիսի կռիվ, մինչև որ նրանցից շատերը դիմեցին սրի։ Մահմեդի կողմը պարտվեց։ Երկու կողմերից էլ եղան բազմաթիվ



վիրավորներ։ Մահմեդն ու Ալին 40 մարդու հետ փախան Մեդինա քաղաքը, որի մասին հիշեցինք վերևում։ Երբ հրեաներն իմացան նրանց փախստյան պատճառները, խրախուսեցին միաբանվել և շիտակարար ասել իրենց ասելիքը՝ հանուն աստծո և որպես Աբրահամի որդիներ ու միմյանց եղբայրներ։ Եղան նրա մոտ, միմյանց հետ ուխտ կնքեցին, [Մահմեդին] կնացու տվեցին իրենց ցեղից և պատրաստակամ եղան հետևելու նրան, ինչպես որ իր կամքը կթելադրեր։ Եվ եթե մեկին որևէ բան ասեր, պիտի կատարեին, որպես աստծուց նախապես տրված հրամանի։ Հրեաներն ու իսմայելացիները հավաքվեցին, կազմեցին մեծ բանակ և հարձակվեցին Փառանի վրա , գլխովին ջարդեցին ընդդիմակայողներին, սպանվեցին նաև Ապդչեհրը և շատերն ամովնացիների ու մովաբացիների[283] զորքից։ Կործանեցին նաև այնտեղի կռատանը դրված Սամամի արձանիկները։ Հանդգնեցին մեհյանն անվանել Աբրահամի տուն, հնազանդեցրին նաև մերձակայքի բոլոր բնակիչներին, իսկ ապստամբներին սրի քաշեցին միանգամից։

Հանգամանքների հաջող ընթացքը, հրեաների միաբանությունը տեսնելուց հետո, Մահմեդն իրեն հռչակեց բոլորի առաջնորդը։ Արաբների վրա զորապետներ կարգեց Ալիին, Աբուբեքրին[284], Ամրին[285] և Ութմանին[286]։ Ապա [Մահմեդը], հրեաներին օգնելու համար Հերակլեսի եղբորը՝ Թեոդորոսին լուր ուղարկեց և ասաց. «Ձեր երկիրն աստված խոստացավ Աբրահամին ու նրա որդուն, որոնց ձեռքում էր երկար ժամանակ։ Եվ եթե իրենց չար արարքների պատճառով աստված զրկեց և այն տվեց ձեր ձեռքը, ապա բավական է, ինչքան որ տիրեցիք։ Արդ մենք Աբրահամի զավակներն ենք, և դուք գիտեք մեր հորը՝ Իսմայելին տված խոստումը։ Խաղաղությամբ մեզ տվեք այդ երկիրը, ապա թե ոչ կառնենք պատերազմով և ոչ միայն այդ, այլև շատ ուրիշներ»։ [Թեոդորոսը] կամեցավ լուրը հասցնել թագավորին, սակայն նույն ժամանակ վախճանվեց Հերակլեսը, իսկ նրա որդի Կոստանդինը հանձն չառավ պատասխանել նրանց ցանկությանը։ Հրամայեց միայն զգուշանալ, չպատերազմել նրանց դեմ, մինչև տեսնեն, թե ինչ է լինելու։ Բայց իսմայելացիների զորքը սաստկորեն ձգտում էր պատերազմել։ Եվ նրանք ցանկացան պաշտպանել իրենց երկիրը, ելան ընդդեմ [արաբների]։ Իրենց ձիերը թո-

դեցին և հետիոտն դուրս եկան նրանց դեմ։ [Արաբները], քանի որ հանգիստ վիճակում էին, դիմեցին [բյուզանդացիների] վրա։ Իսկ սրանք զենքերի ծանրությունից, արևի տապից, ավազի շատությունից, սովածությունից, հետիոտն քայլելուց բոլորն էլ խիստ հոգնեցին և թշվառ վիճակում ընկան թշնամիների ձեռքը, որոնք սրակոտոր արեցին, ապա եկան նրանց զորատեղին, վերցրին բազում ավար և սկսեցին առանց երկյուղի տարածվել երկրի երեսին, քանզի չէին վախենում որևէ պատերազմից։

Երբ երուսաղեմցիները տեսան, որ այլևս օգնության հույս չկա, վերցրեցին աստվածային սուրբ նշանը և եկեղեցու այլ սպասների հետ փախցրեցին թագավորական քաղաք՝ Կոստանդնուպոլիս։ Իսմայելացիք տիրեցին ամբողջ Հրեաստանին։

Իսկ արիոսական աբեղան՝ Մահմեդի վարդապետը*, որին հիշեցինք վերևում, երբ տեսավ հանգամանքների հաջող ընթացքը, վեր կացավ եկավ Մահմեդի մոտ՝ որպես իրենից՝ վարդապետից սովորած և այդպիսի բաների հասածի, նրան սեր և երաշխիք ցույց տալու համար։ Բայց քանի որ [Մահմեդը] ասում էր, որ հրեշտակից է վերցրել պատգամը և ոչ թե մարդուց, ուստի ընկավ դժվար վիճակի մեջ և ծածուկ սպանեց նրան։

Նույն ժամանակ Պարսկաստանի կողմերում ապրում էր ինչ-որ մի այլ միայնակյաց կրոնավոր, որն ուներ մի աշակերտ՝ Սալման անունով. Միայնակյացը մահանալիս նրան պատվիրեց՝ «Որդյակ, իմ վախճանվելուց հետո չմնաս այս երկրում, որպեսզի քո հավատքը չկորցնես անհավատների մեջ։ Կգնաս Եգիպտոսի կողմերը և կբնակվես կրոնավորողների բազմության մեջ, որպեսզի փրկես քո հոգին»։ Միայնակյացի վախճանից հետո Սալմանը կամեցավ կատարել նրա պատվիրանը։ Ճանապարհին այնպես եղավ, որ նա գնաց Մեդինա։ Ծանոթ էր նաև գիտությանը, գրքերին, թեև ոչ կատարելապես։ Երբ Մահմեդը տեսավ սրան, վերցրեց իր մոտ և հրամայեց Աբու-Թուրաբ իսմայելացու ձեռքով գրել իր ցեղի օրենքների գիրքը, քանզի ինքը չգիտեր ո՛չ գիր և ո՛չ էլ դպրու-

* Նկատի ունի Սարգիս Բհիրային։



թյուն։ Սալմանը հանձն առավ և գրեց հոդվածների գիրքը, մի մասը ստույգ, հիշողությամբ, մի մասն էլ ենթադրությամբ։ Մահմեդը դրդվեց իր մոլագար հոգուց և գրել տվեց նաև ոչ խրատական բաներ, որոնցից մի քանիսը կհիշենք։ Նա իրեն մխիթարում էր և ասում, թե տեր Քրիստոսն իրեն խոստացել է ուղարկել իր աշակերտներին և իրեն ասել է, թե կգառնա փրկչի պես և նրա ճանապարհի ուղեկիցը, ինչպես Եսայի մարգարեն է ասել՝ «հեծած մի էշի և մի ուղտի»*։ Այս ամենը կապում էր իր հետ։ Սուրբ մկրտության փոխարեն նա հանձնարարեց ամեն օր ցողվել ջրով և այդքանը բավական համարեց սրբության համար։ Հանդերձյալ կյանքում տիրոջ խոստացած պարգևի՝ անպատմելի ու հրեշտակային նորոգման փոխարեն նա ասաց՝ «Թող այնտեղ լինեն կերակուրներ, ոգելից խմիչքներ, և ով ինչ կամենա ուտել, թող գտնի պատրաստ։ Կույս մնացած կանանց հետ որքան կուզեն, թող խառնակվեն»։ Նրա պղծության մասին ամբողջությամբ շարադրելը երկար կտևի, քանի որ հույժ շատ է և աստծուն ներհակող։ Այս բոլորը հաստատեց, անվանեց «Կուրան» և տվեց իր ժողովրդին։

Եվ արդ, քեզ ասելու եմ, թե հին մատենագրողն ինչպես է ողբում նրանց, ասելով. «Վայ քեզ արաբների խեղճ ցեղ, ծովեզրյա բոլոր քաղաքների կանայք և տղամարդիկ, ձեր անօրեն լեզվի և պիղծ հավատի համար, որոնցով բացում էիք ձեր բերանները և բարբառում անօրենություն ու պղծություն, հակառակվում մեծազոր աստծուն։ Եվ լեզվիդ [պատճառով], որ սրում էիր պղծությամբ՝ մեծազոր թագավորի դեմ, արդ քեզ համայն մարդկությունից ավելի է դառնալու՝ նոր և ապշեցուցիչ վերքերով։ Այլև սպանելու է քեզ՝ սաստիկ հարվածներով։ Եվ առհասարակ ամբողջ աշխարհը ծիծաղելու է և քեզնից հավիտյան չի հեռանա հուրը, և կայրվես իբրև խեցեգործների հնոց և չես լինի հանգիստ»։

[Մահմեդն] այս բոլոր չարիքները կատարելուց հետո ավելի մեծ չափերով սահմանեց բազում օրենքներ և այլ չարագործություններ իր ժողովրդի համար։ Նա այնտեղ ապրեց 20 տարի և մահացավ։ Ինքը արաբների գլխավոր էր նշանա-

* Հմմտ. Եսայ., ԻԱ, 7։

կել Աբուբեքրին, որն ապրեց երկու տարի և մահացավ։ Սրանից հետո 10 տարի[287] և վեց ամիս արաբներին գլխավորեց Ամրը՝ Հատաբի որդին, որը հալածեց հույներին, գումարեց մեծաթիվ զորք և շարժվեց Պարսկաստանի թուլացած թագավորության դեմ՝ Պարթևների երկիրը՝ Պարսից Հազկերտ անունով թագավորի վրա։ Հազկերտը փախավ նրանից, բայց չկարողացավ փրկվել, քանզի Քուշանների երկրի մոտակայքում հասան և կոտորեցին նրա ողջ զորքը։ Նա փախավ թեստալացիների զորքի մեջ, որոնք օգնության էին եկել իրեն։ Բայց նրան սպանեցին իսմայելացու հրամանով՝ 20 տարի թագավորությունը տիրելուց հետո։ Եվ այնուհետև վերացավ Պարսից և Սասանյան տոհմի տերությունը, որ գոյատևեց 442 տարի[288]։

Արդ, պարսից թագավորության ժամանակներն սկսվում են Կյուրոսից, հասնում Դարեհին, որին սպանեց Ալեքսանդր Մակեդոնացին։ Ապա անիշխանության տարիներն են, որոնք պատմագիրներից ոմանք հաշվում են 60 տարի, մյուսները՝ 70։ Այնուհետև պարթևներ կոչված պահլավիկ թագավորների ժամանակներն են, մինչև Վաղարշի որդի Արտավանը, որին սպանեց Սասանի որդի Արտաշիր Ստահրացին, տիրելով պարթևների թագավորությանը։ [Սասանյան թագավորությունը] շարունակվեց մինչև Հազկերտի ժամանակները, որը Պարսկաստանի վերջին թագավորն էր և սպանվեց արաբներից։ Սրանց [իշխանության] ժամանակները՝ Կյուրոսից մինչև արաբների թագավորությունը հաշվում են 1201 տարի[289]։

Մուավիան[290] [իշխեց] 20 տարի, 3 ամիս և մի քանի օր։ 5 տարի և երեք ամիս սաստիկ պատերազմ էր Աբու Թալիբի որդի Ալիի և Մուավիայի միջև, քանզի Ալին իրեն էր համարում արաբների գլխավորը լինելու համար։ Մուավիայի որդի Եզիտն[291] [իշխեց] 3 տարի 3 ամիս, Մրվանի որդի Աբդլմելիքը[292] 21 տարի։ Զուբայրի որդի Աբդլայի դեմ ծագեց մեծ խռովություն և պատերազմ, որը տևեց 2 տարի 3 ամիս։ Այս ժամանակ նրա չարասեր ցանկությամբ Հայոց աշխարհում մեծ նեղություն եղավ։ Աբդլմելիքի որդի Վալիդն[293] [իշխեց] 10 տարի։ Սա ավելի չար մտահղացում ուներ. խաբեությամբ ձերբակալեց Հայոց աշխարհի նախարարներին և բոլորին այրեց Նախճվան քաղաքում ու Խրամ[294] ավանում, որը Աստա-



պատի[295] վանքի ներքևում է՝ Երասխի ափին։ Աշխարհն ապականեց գերեվարությամբ։ Աբդլմելիքի որդի Սուլեյմանն[296] [իշխեց] 3 տարի, Աբդլազիզի որդի Օմարը[297] 3 տարի։ Սա ամենից ազնվագույնն էր. հավատի թուղթ գրեց Բյուզանդիայի Լևոն[298] կայսեր, որից պատասխան ստանալով, իրենց կուրանից դուրս գցեց հույժ առասպելականը, քանզի ստուգապես ծանոթացավ դրա զորությանը։ Թեպետև չհամարձակվեց ամեն ինչը վերացնել, բայց հույժ պատկառանքով ամաչեց, թուլացավ այդ խաբեությունից, ինչը հանդիմանվել էր կայսեր թղթում։ Սրա շնորհիվ էր, որ մեծ բարեմտություն ցուցաբերեց քրիստոնյա ժողովուրդների հանդեպ և ամենուրեք կատարեց բարերարություն։ Վերադարձրեց գերիներին, ներեց բոլորի հանցանքները և ձրիաբար թողություն արեց։ Բայց իր ժողովրդի հանդեպ մեծ մտերմություն էր ցույց տալիս, քան բոլոր մյուսներին։ Բաց արեց հավաքված գանձերը և առատորեն բաշխեց իր բոլոր ապաներին։ Եզիդն[299] [իշխեց] 6 տարի։ Սա ժանտաբարո այր էր, շարժվեց իր մոլագար հոգով և պատերազմեց քրիստոնյա ժողովրդի դեմ, նրանց պատճառեց բազում չարիքներ։ Հրամայեց ջնջել փրկչի մարդեղության ու նրա աշակերտների ճշմարիտ կենդանագրված պատկերները։ Խորտակեց նաև տերունական խաչի նշանը, որը կանգնեցված էր մի քանի տեղերում, քանի որ նրան հույժ ստիպում էր իր մոլագար հոգին։ Արձակեց նաև խոզասպանության հրաման, և երկրի երեսից ջնջեց բազմաթիվ արածող խոզերի։ Ամեն տեսակ չարագործություններից հետո դևերից խեղդվելով՝ չարաչար սպանվեց։ Շամորհեշմը[300] [իշխեց] 19 տարի, Վլիթը[301] 2 տարի, Մրվանը[302] 6 տարի, Աբդլան[303] 3 տարի, Մյուս Աբդլլան[304] 22 տարի, Մահադին[305] 10 տարի, սրա որդի Մահմեդը[306] 8 տարի, Մուսեն[307] 1 տարի, Ահարոնը[308] 5 տարի, սրա որդի Մահմեդն[309] ու կինը՝ Զուբեյդան՝ 4 տարի, Մահմեդի եղբայր Մայմունը[310] 21 տարի, Մահմեդի որդի Սահակը[311] 9 տարի, մյուս որդի Ահարոնը[312] 5 տարի 6 ամիս և [դարձյալ] Մահմեդի որդին՝ Ջաֆրը[313], 17 տարի։ Սրանց ժամանակների պատմությունը ավելի վաղ ուրիշներն արդեն գրել են. ուստի ավելորդ եմ համարում կրկնել։ Ընդ որում նրանց անունները, ժամանակների թվականները այլափոխված են ավել մեջ, թերևս խառնակ ու խռովարար ժողովրդի պատճառով,

քանի որ Դամասկոսի կողմերում ապրողներից ոմանք իրենց էին համարում թագավոր, իսկ ուրիշները, որոնք բնակվում էին Ասորեստանում՝ իրենց էին համարում։ [Այսպես շարունակվեց] մինչև Աբդլայի ժամանակները, որը միապետեց բոլորին և արքունիքի հուսալի ապահովության համար կառուցեց թագավորանիստ Բաղդադ քաղաքը։ Նվ որովհետև «Աբդլա» հագարացիների լեզվում նշանակում է «աստծո ծառա», Մյուսն[314] այն Աբդլան է, որին իր աչքածակության, անսահման ագահության պատճառով ժողովուրդն անվանում էր «Աբդանգի», այսինքն դանգի* ծառա և ոչ թե աստծո։

Բայց առաջիկայում խոսելու ենք Ջաֆրի և նրա չարագործությունների մասին, որը գրի չեն առել ուրիշները։ Նա մեր օրերում հայոց 300 (851) թվին երկար ժամանակ անտանելի նեղություններ պատճառեց Հայոց աշխարհին։

Ծ

ՋԱՖՐ ԹԱԳԱՎՈՐԻ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՉԱՐ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՐԱ ՉԱՐԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈՒԽ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵՎ ԻՆՉ ՈՐ ԿԱՏԱՐՎԵՑ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿ՝ ՄԻՆՉԵՎ 6-ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԻ[315], 70-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ[316] ԼՐԱՆԱԼԸ ԵՎ 19-ՐԴ ԻՆԴԻԿՏԻՈՆԻ[317] ՀԵՏՈ, ՈՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐՈՎ[318] ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ԱՐԱԲՆԵՐԻ ԲՌՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ 222 ՏԱՐԻՆԵՐԸ: ԱՐԱԲՆԵՐԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ Է ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ՝ ԹՈՐԼ ՋԱՖՐ ԱՆՈՒՆՈՎ

Ջաֆր անունով ամբարտավան ու ինքնահաճ մի մարդ սկսեց զոռոզանալ, անօրենությամբ և չարությամբ պատերազմել աշխարհի չորս կողմերում։ Չարչարում էր, հույժ անհանգըստացնում խաղաղասեր կյանքով [ապրողներին], քանզի նա շատ էր սիրում խռովությունն ու արյունահեղությունը։ Տարուբերվում էր հանապազօրյա մտահոգություններով՝ թե ո՞ւմ, վրա և որ կողմերը հեղի իր մահաբեր թույնի դառնությունը կամ որտեղ թափի իր մտքի կայարճի չար հնարիմացության բազմաթիվ նետերը։ Կամովին հարեց ծայրահեղ խենթությա-

* «Դանգը արաբերեն նշանակում է դրամ, փող»



նը և խլուրդի կերպարանքով, ինչպես կատաղած գազանը, հարձակվեց Հայոց աշխարհի վրա։ Իրենց ազգի հնարագետ և խորամանկ կեղծավորությամբ խաղաղասեր ձևացավ և կամաց-կամաց ջանաց կատարել իր չար մտահղացումները։

Այդ ժամանակ Վասպուրական աշխարհին տիրում էր Աշոտը՝ Արծրունյաց տոհմից, որը քաջահայտ ու զորավոր մարդ էր վեհազունների մեջ։ Նա բազում քաջություններ ցուցաբերեց պատերազմներում և մենամարտիկների զինված ընդհարումների հանդեսներում։ Փառավոր ու անվանի էր իրենից առաջ Հայաստանի թե՛ արևելյան և թե՛ հյուսիսային կողմերի իշխաններից և մանավանդ Վասպուրական աշխարհի իշխանապետության նախարարներից։

Նույն ժամանակներում թագավորն իր ավագ իշխաններից ինչ-որ մեկին, որին արաբական լեզվով՝ եբրայեցերենի կապակցմամբ Ապուսեթ էին անվանում, ուղարկեց Հայաստան, որպես վերակացու և արքունի հարկերի անօրեն։ Նա մեծ զորքով մոտեցավ Հայաստանի սահմաններին։ Տարոնի իշխան Բագարատը, որը համարվում էր առաջինը Հայոց մեջ, քանի որ նա Բագրատունիների տոհմից էր և այն ժամանակ գլխավորում էր հայոց իշխաններին, իր մեծամեծներից ոմանց ընծաներով՝ ոսկով, արծաթով և պատվական հանդերձներով ուղարկեց Տարոնի սահմանագլուխ՝ նրան ընդառաջ, որպեսզի համոզի չմտնելու հայոց երկիրը։ Սակայն նրանք մտադրվել էին, թերևս ստապատիր եղանակով, նրանցից յուրաքանչյուրին գրկել իրենց իշխանություններից։ Բայց երբ [Ապուսեթն] իմացավ Աշոտի ու Բագարատի անլույծ միաբանության՝ ուխտի մասին, չհայտնեց իր չար դիտավորությունները, որ ուներ նրանց հանդեպ, այլ իր գալստյան պատճառ համարեց միայն հարկերը և ուրիշ հոգսեր։ Նրանք [Ապուսեթին] ուղարկեցին արքունի հարկն ու հասը[319] և վերադարձրին այնտեղ, որտեղից եկել էր։ Նա վերադարձավ Սամառա[320], արքային ծանուցեց իր կատարածի և հայոց իշխանների միաբանության մասին։ Նա չարացել էր իր դիտավորությունների խափանումից, ուստի ամբաստանեց Աշոտին, [արքային] հանձնեց նաև Հայաստանում ապրող արաբների նամակները, որտեղ ավելի կեղծ, քան ճշմարիտ ձևով հայտնում էին նրա արարքների մասին, թե ամբողջապես հակառակ է և ընդդիմաբանում է քո թագավորությա-

նըս։ Նույն կերպ և Պարսկաստանի կուսակալները ամբաստանությամբ գրգռեցին արքային, համոզելով թե իբր Աշոտը վատաբանում է արաբների պետությանը։

[Ապուսեթ] զորապետը արքունիք վերադառնալուց առաջ Հայոց աշխարհի վերակացությունը և արքունի հարկերը վստահեց ինչ-որ Մուսեղի, որը Հազարացի Զորահայի որդին էր և այն ժամանակ տիրում էր Արզնին ու Աղձնիքի ներքին կողմերին, որոնք Տարոնի սահմանների մերձակայքում էին։

Ռ

## ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ ԲԱԳԱՐԱՏԻ ՈՒ ՄՈՒՍԵՂԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲԱԳԱՐԱՏԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵԿԱԾ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆ ԱՇՈՏԻ ՇՆՈՐՀԻՎ [ՏԱՐԱԾ] ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Նույն այդ ժամանակ մեծ պատերազմ էր Բագարատի և Մուսեղի միջև։ Մուսեղն զորք գումարեց՝ արքունի հարկերը հավաքելու պատրվակով և մտավ Տարոն երկիրը, որպեսզի պատերազմի Բագարատի դեմ։ Հավաքելով իր զորքի ամբողջ բազմությունը, եկավ բանակեց Հայոց իշխանի ձմեռոցի մոտ։ Այսպ զորակարգ ընդունեց, ճակատ հարդարեց և ներսից փակեց ամբողջ դաշտաձև հովիտը։ Զինավառվեցին և ամեն տեսակ պատրաստություններ տեսան Հայոց զորքի դեմ։

Երբ Հայոց իշխանը տեսավ, որ արաբների զորքը գալիս է պատրաստությամբ, իսկ իրենք սակավաթիվ են, փութապես աղերսագիր ուղարկեց քաջարի Աշոտ իշխանին, որպեսզի, եթե հնար լինի, անձամբ զորքով ու գնդով արագ օգնության հասնի իրեն։ Երբ լրատարները հանդիպեցին մեծ իշխան Աշոտին, նա ընթերցեց աղերսագիրն ու հին հիշատակարանները, [հիշեց] մոտիկ ազգակցությունը, միմյանց հետ կապված լինելըն ուխտով, որը հաստատվել էր սուրբ Ավետարանի և տերունական խաչի վրա արված երդմամբ, միատեղ հավաքեց Վասպուրական աշխարհի իշխանության բոլոր նախարարների զորագնդերը։

Փութապես, առանց հապաղելու յուրաքանչյուրն այնտեղ հասավ իր զորքով՝ իշխան Աշոտը և իր եղբայրներ Գուրգենն



ու Գրիգորն իրենց զորագնդերով Արծրունյաց տոհմից նաև Վահանը, Վասակը, Մուշեղը, Ապուսելճը, Գուրգենը, Վասակը, Ապուշափրը, Մուշեղը, Սպոսմայան, Վասակը, Վահանը, Համազասպը, Գրիգորի որդի Վասակը, Ապումկդեմը, Մեհրուժանը, Գրիգորը։ Բոլոր այս 16 այրերը իրենց զորքով Արծրունյաց տոհմից էին։ Իսկ Բագրատունյաց տոհմից՝ Թոռնիկի որդին իր զորքով, Ամատունյաց տոհմից՝ Շապուհն իր ուխտ ազգականներով ու իրենց զորքով, Գնունյաց տոհմից՝ Հազրի որդի Գրիգորն իր վեց ազգականներով և իրենց զորքով, Ընտրունյաց տոհմից՝ Արտավազդը՝ 7 ազգականներով ու իրենց զորքով, նաև Վասպուրականի իշխանի նախարարներից ուրիշներ՝ Սմբատ Ապահունին, Գրիգոր Քաջբերունին, Վահան Հավնունին, Դավիթ սեպուհը, Գագրիկ[յան] Ապուհարազը, Թոդորոս Վարազխը, Խոսրով Վահեւունին, Խոսրով Ակեացին, Վարդան Գաբայեղենը, Սմբատ Մարացյանը, ինչ-որ Սահակ Սեպուհ, Պատրիկ Անձևացին, Գորգ Հարմացին, Դավիթ զորապետը և շատերն ազատ[321] տներից։ Յուրաքանչյուրն իր զորքով շարժվեց այնտեղ։ Մինչդեռ նրանց զորքերը կռվում էին արդեն միմյանց դեմ, հնչում էին փողերը, ծածանվում դրոշները, գոռում գոչում էին վահանավորներն ու նիզակավորները, այրուձին այս ու այն կողմ էր նետվում, ախոյանները հարձակվում էին, կապարճակիրները նետեր էին տեղում։

Այսպիսի մարտ էր բռնկվել, երբ վրա հասավ մեր քաջ Աշոտը։ Ապա միանգամից, հախուռն ու հանդուգն հարձակմամբ դիմեցին այլազգիների վրա, միմյանց ընդհարվեցին և յուրաքանչյուր այր գտնին գլորեց իր ախոյանին։ Աշոտ իշխանն աչքերը վեր բարձրացրեց և տեսավ, ինչ-որ մեկը հարվածեց իր զորականներին։ Նա գոչեց առյուծաբար և հարձակվեց ընտիր այրուձիի վրա, ջարդեց նրա աջ թևը, ապա հարձակվեց ձախի վրա։ Բոլորին սրի ճարակ դարձրին։ Խփշտակեցին, որպես կտրիճներ, ձայնեցին ինչպես արծիվներ ու առյուծի կորյուններ և վրա հասան ու պատառոտեցին որսը։ Նույժ հանդուգն հարձակման հետևանքով ավելի շատ սպանեցին ձիերի սմբակների տակ դիաթավալ անելով, քան սրով։ Թշնամիների կողմից չգտնվեց մեկը, որ ի զորու լինէր ընդդիմակայել նրանց։ Սրից փրկվածները փախան անտառների ապահով տեղերը։ Նրանց կեսը հասավ շահա-

տան Բաղեշ[322], որտեղ և մնաց հիմնական զորքը։ Իսկ [հայ] իշխանները հետապնդեցին նրանց, ովքեր փախել ընկել էին [Բաղեշի] ամրոցը։ Ապա պաշարեցին քաղաքն ու ամրոցը, մինչև որ այնտեղից դուրս եկավ հետիոտն ու հեծելազոր մի ախկին և [խնդրեց] բավականանալ կատարած քաջությամբ, որով աստված օժնել էր Աշոտին։ Համոզեց և պաշարումից ետ արձակեցին նրանց, որովհետև Բագարատի քույրն էր։ Հայոց զորքը հաջողությամբ ավարտեց պատերազմը և վերադարձավ մեծ հաղթությամբ։ Ավարի մատնեցին բանակատեղը, սպանվածների վրայից հանեցին զգեստներն ու այլ իրեր, հավաքեցին բազում ավար, ոսկի, արծաթ, գեղեցկազարդ զենքեր, խիզախ այրերի զարդեր ու զենքեր, ընտիր երիվարներ՝ իրենց զարդարանքով։ Ապա յուրաքանչյուրը մեծ և անտրտում խնդությամբ վերադարձավ իր տեղը։

Երբ անօրեն Մուսե զորավարը տեսավ, որ գլուխ չեկան իր չար դիտավորությունները, և իր զորքը կրեց մեծամեծ հարվածներ, անճարակ գումկան ուղարկել արքունիք, արքային տեղեկացրեց Վասպուրականի իշխան Աշոտի արարքների մասին։

Դարձյալ պետք է վերադառնամ վերևում [ասվածին]՝ մինչև Աղձնիքի պատերազմը արաբական զորքի կատարած գործերին, և թե ինչպես Աշոտ իշխանը դուրս եկավ նրանց դեմ և սրով վանեց նրանց։ Այս մենք աչքաթող ենք արել։ Սակայն անվայել է լռության տալ, մոռացության մատնել այնքան մեծ հաղթության մասին, որը եղավ Վասպուրականի ազատանու զորքի շնորհիվ։

Երբ Ապուսեթը վերադարձավ արքունիք*, հանձնեց արքունի հարկերի վերակացությունը Մուսեին։ Արքունիքից եկավ նաև հարկերի մի ինչ-որ վերակացու՝ Ալա անունով ամիրան, որին կոչում էին Ծովափի։ Ապուսեթը հանձնարարեց նրան մտնել Վասպուրական երկիրը և մեծ զորքով մնալ այնտեղ, մինչև որ Հայաստանի բոլոր կողմերից ամեն մեկն իր

* Տպագիր բնագրում՝ «յԱսորիս», որը պետք է ուղղել «յարքունիս», քանի որ դեպքերի հետագա ընթացքից երևում է, որ Ապուսեթը մեկնել է ոչ թե Ասորիք, այլ արքունիք՝ Սամառա, որը ոչ թե Ասորիքում էր, այլ՝ Իրաքում։



մոտ կբերի սահմանված չափով հարկն ու տուրքը։ Նա խուժեց Աղբակ գավառը և ասպատակներ սփռեց Վասպուրական երկրի տարբեր կողմերը, գոփեց, ավերեց հափշտակեց, թալանեց ինչքն ու ստացվածքը։ Հափշտակում էին տղամարդկանց, կանանց և նրանց ժառանգությունը։ Ասպատակեց նաև Անձևացյաց իշխանության կողմերը, որտեղ նույնպես ավարի մատնեցին՝ պատճառ բերելով այրուձին պետքերի համար [արվող] ռոճիկը։

[Աշոտ] իշխանը հրովարտակի միջոցով նրան հայտնեց հետևյալը. «Հայոց աշխարհն ես եկել արքունի հրամանով, որպեսզի վերցնես արքունի հարկերը։ Մի՞թե արքունուստ ունես նաև հրաման՝ գերել, թալանել ու ավերակ դարձնել մեր երկիրը։ Բայց չէ՞ որ մենք երբեք զանց չենք արել թագավորի հրամանը և չենք խափանել արքունի հարկերը, ինչպես անում են ապստամբները, անհնազանդներն ու իրենց տերերին ծառայելու մեջ անկարգները։ Ուրեմն այստեղից վե՛ր կաց, գնա Հայոց քաղաքներից որևէ մեկը, ինչպես վայել է ոստիկաններին։ Մենք քեզ կուղարկենք հասանելիք հարկերը, կքաղցրացնենք քո միտքը, իսկ դու անխնա մի ասպատակի ու մի ավերի իմ երկիրը»։

Նա արհամարհեց իր մոտ առաքվածներին, խելքը չկտրեց ըստ արժանվույն պատասխանել և շարունակեց նույն ձևով շրջել Վասպուրական աշխարհի բոլոր կողմերը։ Ապա հասավ Արճուճ[323] գյուղը, մնաց այնտեղ և դիտակներ թողեց բլուրների կատարներին։

[Աշոտ] իշխանը հույժ զայրացավ այսպիսի արհամարհանքից և յուրաքանչյուր տոհմից վերցրեց ազատազորքի բազմությունը և զինավառված, այրուձիի ընտիր հեծյալներով հարձակվեց նրա վրա։ Դետքն այլազգիների զորքին իմաց ավեց, նրանք բորբոքեցին պատերազմ հայերի դեմ, և ընդհարվեցին միմյանց։ [Աշոտը] զորքը բաժանեց երեք մասի։ Առաջին զորագունդը տվեց Գուրգենի և նրա օգնական Վահան Ամինունու ձեռքը։ Երկրորդ զորագունդը հանձնեց Գուրգեն Ապուպելճի ձեռքը։ Սրան օգնական էր Վահան Արծրունին։ Իսկ երրորդ գունդն իշխանը վերցրեց իր ձեռքը։ Ինքը նաև պատերազմ հարդարողն էր։ Ապա քաջարար հարձակվեցին, արիագոչ ձայներով դիմեցին թշնամիների վրա։ [Մարտն]

սկսվեց այգաբացին և ընդամենը մեկ ժամում [Աշոտը] հաղթանակ տարավ և փախուստի մատնեց Ալայի[324] զորքի բազմությանը։ Այնտեղ, իրարանցումի մեջ սպանվեց նաև Ալայի եղբայրը։ Անհնարին չափով արյուն հեղվեց։ Քաջությամբ էին կռվում [Աշոտ] իշխանի եղբայր Գուրգենը և Վահան Հավնունին, որոնք վաստակեցին հաղթողի անուն։ Նրանք սրի քաշեցին թշնամի կողմին, ամբողջ հովիտը լցրեցին կոտորվածների դիակներով։ Զորից ցած հոսած ջուրն սպանվածների շատությունից դառնում էր արյուն։ Իսկ ինքը՝ Ալան փրկվեց և սակավաթիվ անձանց հետ ճողոպրեց Բերկրի[325] կողմերը։ Հայոց զորքից սպանեցին քչերին՝ մի քանիսին անզգուշաններից, և վիրավորեցին Գուրգեն իշխանին։

Հայոց զորականները վերցրեցին սպանված խիզախների, ինչպես նաև ձիերի զրահն ու զարդարանքը և յուրաքանչյուրը բազմաթիվ ավարով, մեծ հաղթությամբ մեկնեցին իրենց տեղերը։ Այս դեպքերի պատճառով Վասակ Արծրունին լցվեց նենգությամբ ու նախանձով, հատկապես երկյուղով ու սաստիկ կռիվ սարքեց։ Նա իր բազում գանձերը լցրել էր կարասների մեջ և թաքցրել գետնափոր տանը՝ իր ապարանքի ներքնահարկում։ Երկյուղում էր, թե արաբները կգտնեն իր գանձերի պահեստը և վաճառքի կհանեն իր հարստությունը։ Նա մեկնեց Ապուսեթի[326] մոտ, հետո տարավ ամբաստանությամբ լի թղթեր՝ Հայաստանում բնակվող նախարարների մասին։ Նրանք արքունիքին պատճառած բազում վնասները բարդեցին Աշոտ իշխանի վրա և քմահաճ խոսքերով արքային չարացրեցին իշխանի դեմ։ Աղձնիքի բնակիչները նույնպես չհանդուրժեցին կատարված անցքերը և ամբաստանեցին դրանց համար։ Եվ կոտորվածների կանայք, խառնիճաղանջ ամբոխի հետ, անամոթ կերպարանքներով, դեմքները բացած, կորցրած կին արարածի տեսքը, ինչպես նրանց, մանավանդ արաբական ցեղի սովորությունն է, հետիոտն դիմեցին արքունի պալատը։ Կրկին բողոքում էին ձեռքները դրած օձիքների մեջ, մազերն էին փետում, դեմքերը ճանկռտում, լալիս էին ողբալի ձայնով, արտասվալից հառաչանքներով, խփում էին ծնկներին ու գոչում. «Արքունի հարկերը դադարեցնողը և քո զորքի կոտորողը Աշոտն է, նա՛ է քո թագավորության դեմ հայերի բոլոր ապստամբությունների



պատճառը,— ասում են,— ով քաջ և աստվածային կարողությամբ հավասար ինքնակալ ու ամենքի կենաց և մահու տերը»։ Եվ կատարվեց Սոփոնեա մարգարեի ասածը, թե՝ «Այն օրը ձկների դռնից պիտի լսվի ձայն, իսկ երկրորդ դռնից՝ գույժ, և կլինի ջարդ բլուրների վրա։ Ողբացեք, կոտորվող բնակիչներ, քանզի բոլոր ժողովուրդները նմանվեցին քանանացիներին, և ամենքը, որ հպարտանում էին արծաթով, կոտորվեցին»*։

Իսկ երբ թագավորը լսեց արքունի դուռն հասնող այս աղաղակներն ու գույժը, մռմռաց ինչպես առյուծը, տարակուսեց ինչպես արջը, այրվեց ինչպես բոցը հնոցի, իբրև ծովի դիզված, փրփրած ու ծիրանագույն ալիքները, որ ուժգին գոչում են, շարժվում և բացում իրենց խորքերը, ինչպես կարկտաբեր ամպերի որոտից ծնված հորդահոս հեղեղ։ Արյունը հրի տոչորմամբ եռում էր նրա սրտի շուրջը, մաղձոտությունից ապուշացել էր և ընկել տարակույսի մեջ, իր մոտ եկած գուժկաններին խնդրում էր մի ելք գտնել։ Հավաքեց սինկղիտոսների խումբը և աստրեստանցիների ու բաբելոնացիների բոլոր իմաստուններին, որպեսզի քննեն այդ գործը։

Այն ժամանակ հայրապետության աթոռին նստում էր Հայոց կաթողիկոս տեր Հովհաննեսը[327]։ Նա ընդմիշտ ու հրաշալիորեն սահմանեց տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ ուղղափառ, առաքելական հավատի սուրբ եկեղեցու կարգերը։ Հայոց աշխարհի իշխանների հետ ուխտ կապեց՝ ընթանալ Քրիստոսի հավատին արժանի ձևով և մարտիրոսանալ քրիստոնեության անվան ու գործի համար։ Իսկ նրանք, թեև հանձն առան ու հոժարակամ լսեցին նրան, բայց հեռու չմնացին սոդոմական պիղծ զազրելի ապականությունից, հետևեցին մեր Արշակունի առաջին թագավորների մեղքերին, գնալով դարձան թույլ, անհաստատ ու գարշելի, մինչև որ բարկացրեցին չզայրացող Աստծուն, հասցրեցին իրենց մահվանն ու երկրի կործանմանը և հայրենի ժառանգության, տան ու անդի ավերմանը։ Որովհետև գրված է. «Արդար թագավորը կանգուն է պահում երկիրը, անօրեն թագավորը կործանում է երկիրը»**։ Նրանց հորդորում էր հեռու մնալ ապիրատ ու վնա-

* Հմմտ. Սոփ., Ա, 10—11։

** Հմմտ. Առակ., ԻԹ, 4։

սակար գործերից, որ կատարում էին իրենք, սաստիկ կըշտամբելով կշտամբում էր խոսքերով, վկայաբերում Եսայի մարգարեի ասածը. «Սոդոմայեցիների[328] իշխաննե՛ր, լսեցե՛ք, գոմորացիների ժողովուրդ, ունկնդրեցեք աստծո օրենքներին»*։ Այսպես էր ասում ոչ թե այն պատճառով, որ սոդոմայեցի էին, այլ որովհետև ընկել էին սոդոմական պղծության, նույն մեղքերի մեջ։ Ուստի և նրանց անվանեց սոդոմայեցիներ։ Իսկ Եզեկիել մարգարեն ասել է. «քո հայրը քանանացի էր, մայրը՝ քետացի»**։ Դարձյալ նույնին հարեց, խնամ տարավ այլ հոգսերի մասին, մեղադրանքներ տվեց, մարգարեի սպառնալիքներով հանդերձ. «Ձեր իշխանները,— ասում է,— ապստամբներ են, գողերի ընկեր, սիրում են կաշառքը, վնասապարտ են։ Որբերին իրավունքներ չեն տալիս, այրիների դատաստանին ունկն չեն դնում»***։ Դարձյալ ասում է. «Թագավորը պետք է թագավորի արդարությամբ, իշխաններն իշխեն իրավունքով»****, Եվ կրկին՝ «Կատարեք արդար դատաստան, ողորմություն, արդարություն և իրավունք արեք, քանզի ձեր մասին են իմ խոսքերը. ո՜վ բռնավորներ»*****,— ասում է Սողոմոնը։ Որովհետև ասված զորավորներին առաքում է զորավոր դատաստան, իսկ ռամիկների բազմությունը արժանի է ներելու, ողորմության։ Հայոց մեծերի սուրբ հայրապետն ու քաջ հովիվը՝ տեր Հովհաննես կաթողիկոսն այսպիսի և սրանից էլ առավել խրատներ էր տալիս և ուսուցանում։ Բայց նրանք չնայեցին վերև, տիրոջ օրենքներին և ականջները խուլ պահեցին, ինչպես ամենաչար իժը և մահացու վիշապը, հարբեցին հիմարության գինիով։ Ունեցան աչքեր, որոնցով չէին տեսնում և ականջներ, որոնցով չէին լըսում։ Մինչև որ մեզ հասան այսպիսի մեծամեծ չարիքներ, գահավէժ անկում, որի մասին իր տեղում ցույց կտամ, առաջ տանելով պատմությունը։ Եվ կատարվեց Եսայի մարգարեի ասածը. «Լսելով պիտի լսեք, բայց չպիտի իմանաք, տեսնելով պիտի տեսնեք, բայց չպիտի գիտենաք, քանզի թանձրա-

* Հմմտ. Եսայ., Զ, 9։

** Հմմտ. Եզե., ԺԶ, 3։

*** Եսայ, Ա., 23։

**** Եսայ, ԼԲ., 1։

***** Հմմտ. Իմաս. Զ. 7։



ցավ այս ժողովրդի սիրտը։ Մինչև որ քաղաքները զրկվեն բնակիչներից և տներն ամայի մնան մարդիկ չլինելուց։ Դարձյալ իմ ժողովուրդը գերության կմատնվի տիրոջը չճանաչելու համար։ Բազմաթիվ կլինեն նրա դիակները հացի սովի և ջրի ծարավի պատճառով»*։

Արդ մյուս տարի՝ վեցերորդ հոբելյանին, 72-րդ օլիմպիադային, 20-րդ ինդիկտիոնին և Հայոց թվականության 300 (851)-ին թագավորն իր սինկղիտոսների և բարեկացի բոլոր մեծամեծների հետ հաստատ նպատակադրվեց Հայոց աշխարհի իշխաններին զրկել իրենց իշխանությունից, որպեսզի խլեն նրանց ժառանգությունը։ [Կամեցան] ամենից առաջ ձեռք գցել Աշոտին՝ իր տոհմի հետ և Բագարատին ու իր տոհմին։ Որովհետև ասում էին՝ «Եթե նրանց վերացնենք մեջտեղից, ոչ ոք չի կարող ընդդիմակայել մեզ»։

Նույն այդ ժամանակ արքան գումարեց զորք ընտիր հեծյալներից, զորեղ այրերից, զորքով ու զորապետներով և տվեց ինչ-որ Հովսեփի[329], Ապուսեթի որդու ձեռքը։ Նա ստացավ Հայոց աշխարհը, փոխանակ հոր՝ Ապուսեթի, որովհետև սա մահացավ ճանապարհին, Ասորեստանի կողմերում։ Մտավ հայերի երկիրը, որպեսզի, ինչպես մտադրվել էին, տանջեն նրանց։ [Արքան] ասաց նրան. «Եթե քեզ հաջողվի մեր խորհուրդը հայերի ու նրանց իշխանների վերաբերյալ, կկատարվեն մեր իղձերն ու ցանկությունները, և [եթե] դու կարողանաս Հայոց իշխաններին, մանավանդ Վասպուրականի Աշոտ իշխանին մեզ մոտ հասցնել կապանքներով, այդ երկիրը կտամ քեզ և քո զավակին ի ժառանգություն։ Ուրեմն փութա՛, պինդ կա՛ց, հասի նրանց ետևից, մի՛ տատանվի ու թուլանա այդ գործում»։

Այնժամ զորապետը մեկնեց նրա մոտից և լցվեց չար դիտավորություններով ու հնարիմացությամբ։ Ատրպատականի կողմից մտավ Վասպուրական երկրի Աղբակ գավառը և բանակեց Արծրունյաց ոստան Ադամակերտում[330]։ Այնտեղից սկսեց ասպատակներ սփռել, ավարի մատնել և ագահաբար իր մոտ հավաքել երկրից կողոպտածը։ Նա ձևացավ բարեկամ ու խաղաղասեր և արքունի հարկերի պատրվակով իր մոտ կանչեց [Աշոտ] իշխանին։ Բայց արաբները

* Եսայ, Զ. 9—11, Ե, 13։

նույն զորագնդից իմաց էին տվել իշխանին՝ չգնալ նրա մոտ, հասկացրել էին, թե ինչ էր նա խորհել իր մասին։

Իսկ [Աշոտ] իշխանը զինավառվեց, բազում պատրաստություններով, իր ազատազորքով և իրեն ենթակա բոլոր տեղական իշխանների հետ խույս տվեց և շրջում էր Մարդաստանի[331], Հասկո ձորի[332] կողմերը։ Ապա զորապետի մոտ ուղարկեց դեսպանների և գրեց այսպիսի մի հրովարտակ.

«Թագավորների ու աշխարհակալների սովորությունն է մեծ հոգածությամբ խնամ տանել երկրի բարեշինության մասին, թեթևացնել իշխանության լուծը, ծանրությունները, մեղմացնել հարկերի համար կատարվող խոշտանգումները, որպեսզի խաղաղ չվերանա երկրի բարեկարգությունն ու զորությունը, կուսակալների, քաղաքային պաշտոնյաների ծառայակամ պաշտոնավարությունը, հարկերի ու զորքերի հավաքումը, որպեսզի երկիրը լինի շենության ու խաղաղության մեջ, և անխափան ուղարկվեն արքունի հարկերը։ Հույս ունենք, որ դուք էլ եք կամենում նույնը։ Եվ մենք տեսնելով քո բարյացակամ խնամարկությունը երկրին և բարեկամության երախտիքը մեր հանդեպ, կծառայենք սիրահոժար, հավատարմորեն և մեծ փութով կկատարենք քո հրամանները»։ Այսպիսի հաճելի ու գլուրընկալ շատ խոսքեր գրեց իր թղթում։ Նույնպես և Աշոտ իշխանի մայրը՝ Սահակի և Տարոնի իշխան Բագարատի քույրը, որը իմաստուն կին էր՝ թե խոսքի և թե գործի մեջ, և հույժ խոհեմ ու աստվածասեր, մեկնեց բազմաթիվ ընծաներով և հանդիպեց Հովսեփին, խնդրեց հաշտության, խաղաղություն հաստատել իր որդիների և ամբողջ Վասպուրական աշխարհի հետ։ Իսկ նա ընդունեց պարգևը և կատարեց խնդիրքը։ Ապա պատանդներ վերցրեց անվանի ու պատվական մարդկանցից և մեծ պատվով վերադարձրեց Աշոտի մորը։ Իսկ ինքը խաղաղությամբ, առանց մեծ վնասների անցավ Վասպուրական աշխարհի միջով և իր հետ տարավ պատանդներին։ Ապա անցավ Բզնունական գավառով, մտավ Խլաթ[333], քանզի կամենում էր սպասել պատեհ ժամի, որպեսզի նենգությամբ խաբի և որսա [իշխաններին]։

Երբ ամիրան հասավ Խլաթ, մտավ և բանակեց քաղաքի մեջ եղած ամրոցում։ Ապա բարեհ թղթով հրավիրականներ ու-



ղարկեց Բագարատի մոտ, որպեսզի առանց կասկածների ու վախի գա իր մոտ։ Նույն թղթում գրում էր, թե Հայաստան աշխարհը վստահում է նրան, քանի որ ինքը մեկնելու է արքունիք, իբր թե վերահաս ձմեռային եղանակի սաստկությունից և հյուսիսային սառնաշունչ օդի խստությունից, որոնց անընտել էր համարում իրեն։

Իսկ իշխան Բագարատը, քանզի չուներ նենգադրուժ կասկածներ թագավորի ու նրա զորքի հանդեպ, անխիղճ համարձակությամբ ու տիրասեր մտածումով ելավ գնաց ժամանած կոչնակների հետ, որպեսզի կատարի զինվորական ծառայությունը ըստ աստվածային պատվիրանի ու թագավորական հրամանի։ Ոչինչ չգիտեր նրա խաբեության մասին, ուստի սխալվեց։ Հետը վերցրեց նաև աստվածաշունչ գրքի սուրբ կտակարանները, քահանայական դասի պաշտոնյաների բազմության հետ։ [Հովսեփը] բռնեց նրան և իր ամբողջ ազգատոհմը՝ Բագրատունյաց տոհմից, կապեց երկաթյա կապանքներով և ուղարկեց Սամառա։ Իսկ ինքը եկավ ձմեռելու Տարոնի Մուշ[334] քաղաքում, ունենալով իր հետ նաև պատանդներ Վասպուրականի Արծրունյաց նախարարներից և նրանց ազատներից։ [Տարոն] գավառի բնակիչներին գերեվարեց, Ասորեստանի և արաբական տերության բոլոր կողմերում վաճառելու համար։ Իսկ գերիների կեսին պահեցին իրենց մոտ, քաղաքում, որպեսզի իրենց ծրկիրություն անեն և փայտ կտրեն։ Աշխատեցնում, չարչարում էին նրանց՝ ձմեռվա դառնաշունչ սառնամանիքին։ Իսկ ազատվածները փախան երկրի տարբեր կողմերը։ Ամբողջ գավառն ավերվեց, բացի լեռնակողմից, որի [բնակիչները] մնացին Խութ[335] անմատչելի լեռների վրա, իրենց ամրոցներում։

## Է

### ԽՈՒԹԻ ԼԵՌՆՑԻՆԵՐԻՑ ՀՈՎՍԵՓԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ։ ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երբ ձմեռը կես եղավ, եղանակը խստացավ, դարձավ մեղմախառն ու մրրկալից։ Թանձր ձյունը հարթ ու հավասար տեղաց լեռան ստորոտներում, որտեղ կառուցված էր Տարոնի

քաղաքը*։ Այդտեղ էր ամրացել արաբների զորապետը, նման ծերացած արջի, որը ձմեռ ժամանակ սնվում է արմատիքներով և անցնելով կենաց ու մահվան միջով, որջանում իր բնում[336]։ Իսկ երբ փչում է հարավային քամին, սփռում երկրի վրա իր ջերմության զորությունը, զվարթացնում է հողի տակ մնալուց և հյուսիսային սառնաշունչ օդից ընդարմացած արմատներն ու բույսերը։ Գարնանը՝ գիշերահավասարին որջացած գազանները, թռչունները, երբ զգում են օդի ջերմությունը, դուրս են գալիս յուրաքանչյուրն իրենց բներից։ Եվ շատերը, նույն ժամանակ սատկում են, իսկ մի մասը դյուրությամբ բռնվում է որսորդներից։ Կենդանի մնացածները, սաստիկ վնասներ են հասցնում ում որ հանդիպեն, թե՛ մարդկանց և թե՛ ուրիշ կենդանիների։ Նույն ձևով այն մարդը՝ Հովսեփը, արաբների զորապետը սպասում էր ձմեռն անցնի, որպեսզի հարձակվի Հայոց երկրի վրա, սրածությամբ, գերեվարությամբ ու մեծ-մեծ հարվածներով երկրի մեծամեծներին գերության տանի, երկրում նշանակի գործավարներ, որոնք իրենց հրամաններով պիտի հորինեին երկրի կարգերը և իրենց ընտանիքներով հանգերձ նստեին Հայաստանի ամրոցներում։

Այն ժամանակ լեռան բնակիչները, երբ տեսան, որ իշխանին տարան ի գերություն, և իրենց ես սպասում են նույն փորձությունները, ինչ կրեցին դաշտեցիները, եկան միասին Խութի մեկնազենների բազմությունը, ձմեռային կարիքների համար ձեռք բերած արհեստի իրենց միջոցներով։ Նրանք վերցրել էին իրենց նիզակները, որ միշտ կրում էին, ի զգուշություն անտառներում որջացած գազանների կամ իրենց վրա հարձակվող թշնամիների։ Հարձակվեցին [Մուշ] քաղաքի վրա, պաշարեցին այն, զորքը մատնեցին սրի, արգելանոցից հանեցին Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ ավարը։

Բայց ինքը՝ կարծեցյալ մարզպանը փախավ ընկավ մեծ եկեղեցին, որ հանուն Փրկչի մեծ ծախսով՝ 300 հազար [դահեկանով] կառուցել էր Բագարատ իշխանը։ Եվ այն ժամանակ նա սարսափից դողահար թաքնվեց գմբեթում։ Մեկնա-

* Այսինքն Մուշը։



զենները շրջապատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը և ինչ-որ մեկը աշտեով հարվածեց [Հովսեփի] թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով։ Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես։

Ես իմ աչքով տեսել եմ այն մարդուն, ով հարվածել էր [Հովսեփին]։ Սրա մասին տեղեկացա նրանից։

Գուժկանը փութապես հասավ թագավորի մոտ և [գուժեց] թե՝ սպանվել է քո զորապետը և Հայոց երկիրն ապստամբել է քո պետության դեմ։

Այստեղ մի փոքր ցույց կտամ լեռան բնակիչների որպիսությունը՝ թե ինչպիսիք են և կամ ովքեր են, ինչպես են նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով ձեռք բերում իրենց ապրուստը և բավարարում իրենց կարևոր պետքերը։ Նրանք բնակվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթներին։ Ապրում են առանձին, ազգատոհմերով և այնչափ հեռու են միմյանցից, որ եթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավի, նրա ձայնի բոմբյունը հազիվ կարող է որևէ տեղ լսվել և տպավորություն է թողնում, թե արձագանք է ձայների միջից։ Նրանց կեսը խոտորել է հայրենի բնական լեզվից՝ հեռաբնակ լինելու պատճառով։ Միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր և օտարոտի լեզվով։ Եվ այնքան խրթնախոս են և միմյանց անծանոթ, որ մինչև իսկ կարիք ունեն թարգմանների։ Կերակրի պետքերի համար գործ են ածում ինչ-որ սերմեր, առավելապես կորեկ կոչվող բույսը, որ սովի ժամանակ ոմանք անվանում են հաց։ Այդ սերմերը նրանք ոռոգում են առքերով՝ անտառների բացատներում կամ ցանում են երկմատանի փայտատներով։ Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում են բրդյա շորեր. տնամաններ պատրաստում են կոշիկների ձևով՝ այծերի մորթուց։ Ամառ թե ձմեռ բավարարվում են միևնույն սնունդով և միևնույն հագուստով։ Լեռներում բնակվող գազաններից պաշտպանվելու համար ունեն աշտե զենքը, որ կրում են մշտապես։

Երբ թշնամիներն հարձակվում են իրենց երկրի վրա, լեռնականները միայն գալիս են իրենց իշխաններին օգնության, քանզի տիրասեր են։ Երկնքից վար թափվող անկայուն ձյան

վրա ման գալու համար հնարել են փայտի կտորներ, որ օղակի պես շվանով ամրացնում են ոտքերի շուրջը և դյուրությամբ ընթանում ձյան, բքոտ գետնի վրայով։ Գազանաբարո են և արյունարբու, առ ոչինչ են համարում հարազատ եղբայրների, նույնպես և իրենց սպանությունը։ Սրանք կոչվում են արագագնաց մեկնաղեններ, բնակվում են այն լեռան վրա, որն Աղձնիքը բաժանում է Տարոնից։ Խրթին և անհասկանալի խոսակցության, բարքերի պատճառով անվանվում են Խութ։ Իրենց անունով լեռն էլ է Խութ անվանվում։ Անգիր գիտեն հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որ մշտապես ունեն շուրթերին։ Սրանք ասորեստանցի ռամիկներն են, որ գաղթեցին Ադրամելեքից և Սանասարից՝ Ասորեստանի և Նինվեի թագավոր Սենեքերիմի որդիներից հետո և նրանց անունով իրենց անվանեցին Սանասնայք։ Հյուրասեր են և պատիվ տվող։

---

# ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

## Ա

### ԱՄԲՈՂՋ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾԻ ՄԱՍԻՆ. ԻՇԽԱՆՆԵՐԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾԸ

Մինչև այստեղ ոչնչից չէինք վախենում ճշմարտության թշնամիներից մեզ հասած վտանգների ու նեղությունների մասին պատմելիս, որովհետև թեպետ պես-պես կտտանքներով նեղվեցինք ու չարչարվեցինք իսմայելական ազգի արաբական տերության զորքից, բայց քիչ չափով և կարճատև ժամանակ։ Եվ ավելի հաճախ մեզնից էին հարվածներ ստանում, քան՝ մենք նրանցից, քանզի դեռ միաբան, միակամ և համերաշխ էին ապրում Հայոց իշխանները, իրենց ազատազորքի բազմությամբ հանդերձ, թեպետև ծածուկ ունեին նենգ կասկածներ։ Իսկ երբ միաբանության մեջ սպրդեց երկպառակություն, հեռացավ գնաց աստվածատուր զորության շնորհը։ Եվ ոչինչ էին համարվում աստվածային խորհուրդները՝ մարտերում ու երկրի հոգաբարձության այլ կարգի գործերում։ Նույն կերպ, եթե մեկը մարմինը բաժանի մասերի, չի երևա մարդկային կենդանի սեռը, նրա կազմվածքի գոյությունը։ Իսկ եթե կորցնի անդամներից մեկը, կխեղանդամվի, բայց կմնա կենդանի։ Այսպես տակավին մեծ չափերով քայքայված էր երկրի միաբանությունը, և յուրաքանչյուր ոք՝ ընկերը ընկերոջը, եղբայրը եղբորը խոցում էր չարամտությամբ։ Միմյան-

ցից ծածուկ թագավորին ուղարկում էին թղթեր ու դեսպաններ, միմյանց դավում էին քսությամբ։ Չկար գեթ մեկը, որ համերաշխ լիներ մեկ ուրիշի հետ։ Իսկ թշնամիները նույն ուրախ էին նրանց անմիաբանություններից։ Ավելի շատ գրում էին այն մասին, ինչը չէր կատարվել Հայաստանում և ապստամբության ողջ մեղքը, հասցրած վնասները բարդում էին Աշոտի վրա։ Սրանց մասին է Փրկչի ասածը՝ «Ամեն թագավորություն իր դեմ բաժանված՝ կավերվի, և ամեն քաղաք կամ տուն իր դեմ բաժանված չի կարող մնալ»*։ Պատշաճում է նաև առյուծների ու եզների վեճի մասին Ոլպիան[337] փիլիսոփայի հին առակը, ինչին տեղյակ են ուսումնասեր անձինք։

Նույն ժամանակ թագավորը, իր տերության մեծամեծներով հանդերձ, դարձյալ նստեց խորհրդի, որպեսզի անվրեպ ու անսխալ ըմբռնի Հայոց աշխարհում կատարվածը։ Բազում և ճիշտ խորհուրդներից սինկղիտոսները հաստատապես ընտրեցին միայն այս մեկը, և ասացին թագավորին. «Զորք գումարի, գնա և մտիր Հայոց երկիրը։ Քո իշխանության տակ գտնվող բոլոր ազգերից քո մոտ հավաքի ընտիր այրուձի և շարժի գետից անդին։ Երբ վրա կհասնես հայերին, ամենից առաջ կգերես Աշոտին, կբերես այստեղ, որից հետո բոլոր մյուսները դյուրությամբ կմտնեն քո իշխանության տակ, և ամենքին առանց երկրայության կհնազանդեցնես քեզ։ Չպետք է ջանանք վրեժ առնել հարկերի, զինվորության և ուրիշ ծառայության խափանման կամ թագավորի դեմ կռվելու համար, այլ գերվածներին կստիպենք հեռանալ քրիստոնեական հավատից և պաշտել մեր մարգարեի ու օրենսդրի կրոնը, և դյուրությամբ կկատարվեն մեր բոլոր մտադրությունները։ Նրանց կխոշտանգես ծեծով, բանտով ու պես-պես տանջանքներով։ Սպանալիքներով, ողոքմամբ, հարստության խոստումով նրանց կենթարկենք մեր թագավորությանը, և քրիստոնեության անունը կվերանա նրանց միջից»։ Այս խորհուրդը հույժ դուր եկավ թագավորին, և նա մեծապես ուրախացավ։

Այստեղ լացը, ողբն ու կոծը ոչ միայն մեկ տոհմի կամ աշխարհի[338] վրա է, այլ Հայաստանի բոլոր ազգատոհմերի ու աշխարհների։ Առաջ անցնելով, թեպետև ոչ հաճությամբ,

* Մատթ., ԺԲ, 25։



ակամայից ու առհարկի կպատմեմ այն անօրինությունների մասին, որ գործեցինք մենք առհասարակ, մեծից մինչև փոքրը, որի պատճառով մեզ վրա բացվեց սաստիկ սաստող բարկության դուռը, վրա հասան վրիժահատույց պատիժները։ Ինչպես գրված է Երեմիայի մարգարեության մեջ, «Տերը բացեց իր զինարանը և հանեց այնտեղից իր բարկության զենքերը»*, որոնք պահել էր վրեժի հատուցման օրվա համար, հատուցելու մեզ ըստ մեր գործերի, խփելու մեր ոտքը քարին։ Կորստյան օրը եկավ հասավ մեր դռան մոտ, որովհետև տերն ահա,— ինչպես գրել է Մովսեսը[339],— պատրաստեց հասցրեց այն մեզ վրա։ Բայց այս ամենից վատթար է այն դռան բացվելը, որ եղել է աներևույթաբար. հոգիների կորստյան դուռն առավել է, քան՝ մարմինների, երբ խոտորվում են Հոր, Որդու և Սուրբ Հոգու անբիծ, ուղիղ և առաքելաքարոզ հավատից։ Մարդկային կարողության համար անհնար է փակել կորստյան համար բացված դուռը։ Սա հույժ պատշաճում է միայն կարող և ամենքին հոգածու սաստիկ զորությանը։ Ինչպես գրված է, «Նիփակի, և ոչ ոք չի լինի, որ բացի, կբացի և ոչ ոք չի լինի, որ փակի»**։

Այնժամ թագավորն արձակեց հրովարտակներ և ուղարկեց արագագնաց սուրհանդակներ իր տերության բոլոր կողմերը՝ Ասորեստանի և Բաբելոնի, Թուրքաստանի և Խուժաստանի, մարերի, էլիմացիների ու եգիպտացիների հեռաբնակ վայրերը, Արաբիայի ներքին կողմերը, մինչև Սակաստանի[340] սահմանները, այդ երկրների զորքերին ու զորագլուխներին, նահանգապետներին, քաղաքագլուխներին, հազարապետներին, կուսակալներին ու մեծամեծներին, ժամանակ տվեց փութով ներկայանալ՝ իրենց թագավորաբնակ քաղաքը[341]։ Եվ ամենքը թագավորի հրամանով բոլոր կողմերից գումարեցին այրուձի՝ պատրաստ այլ հորինվածով հանդերձ և անհապաղ, արագությամբ եկան ժամադրված տեղը։

Երբ զորապետները եկան թագավորի մոտ, սա սկսեց խոսել, ասելով. «Մեր նախնյաց թագավորության սկզբից, երբ աստված բազում թագավորների գահը տվեց նրանց ձեռքը,

* Երեմ., Ծ, 25։

** Հմմտ. Յայտն., Գ, 7։

մինչև մեր օրերը, ոչ ոք ի զորու չեղավ դիմակայել մեզ, ո՛չ հեռավոր և ո՛չ էլ մերձավոր երկրներից։ Ոչ ոք այսչափ աղետներ ու տառապանքներ չհասցրեց մեզ, մեր ազգատոհմին, զորքին ու զորապետներին, որչափ Վասպուրականի Աշոտ իշխանը։ Ուրեմն արիացե՛ք, եղեք տղամարդ և ելեք Հայոց երկրի վրա, [մատնեցեք] սովի, սրածության և գերության։ Իշխաններին, կուսակալ իշխաններին, ազատներին ու ազատորդիներին կապանքների մեջ դրած, փութով կբերեք մեզ մոտ, և այն ժամանակ դուք կբնակվեք նրանց երկրում, որն ի ժառանգություն կտրվի ձեզ և ձեր որդիներին։ Բայց նախ Աշոտին և նրա ազգատոհմին կբերեք այստեղ, մի՛ ջանացեք նրանից առաջ բռնել որևէ մեկին»։

Եվ իր մոտ եկած ամեն մի զորագլխի ընծայեց պարգևներ ու պատիվներ, հաստատեց ու տվեց գյուղեր, ավաններ։ Հարցրեց նաև զորքերի քանակի մասին, ինչը փնտրեցին և գտան։ Տեղեկացավ նաև ամեն մի զորագնդի հմուտ ու կորովի պատերազմողների մասին, յուրաքանչյուրն ըստ անվան, նույնպես և թե քանիսն են լավ սպառազինված, քանիսն են հետևակ վահանավորներ, նիզակավորներ ու աղեղնավորներ և քանիսը՝ զորապետներ, քանիսը մեկնազեն զինվորներ, քանիսը ըմբշամարտիկ և քանի զորագունդ ունեն զորագլուխներ և սուրհանդակների քանի զորապետներ կան։ Հարցրեց նաև թե քանի դրոշներ կան, և կամ զորքը քանի մասերի է բաժանելու, քանի փող են փչելու կամ քանի թմբուկ են զարկելու։

Երբ սովորեց և տեղեկացավ ամեն ինչ, իմացավ, որ ամենից մեծաթիվն են ելիմացիներն ու արաբները, որոնք երկու ձեռքով էլ աջողակ և մազից անգամ չվրիպող կապարճակիրներ ու կորովի նետաձիգներ են, ինչպես մի ժամանակ Իսրայելի զորավոր այրերն էին՝ Եփրեմի[342] ու Բենիամինի[343] տոհմի զորագնդերը։ Նրանց զորագլուխ կարգեց Բուղա անունով, ազգությամբ թուրք մի մարդու։ Իր ազգի բազմությանը հրամայաբար պատվիրեց անսալ նրա խրատներին ու հրամաններին։ Սա արաբների ամբողջ տերության գլխավոր հրամանատարն էր, և ո՛չ ոք, մեծից մինչև փոքրը, չէր համարձակվում ընդդիմանալ նրան։ Նույնիսկ ինքը՝ թագավորը լսում էր նրա խրատները։ Նա համակված էր ապիրատ ու սատանայական հնարներով, չար դիտավորություններով։ Սաստիկ հոխորտում էր և



վիշապի պես գոռալով ահաբեկում հեռավորներին ու մերձավորներին։

Նույն ժամանակ թագավորի մոտից մեկնեց այդ մարդը՝ Բուղան, որի ներսում որջացել էր սատանան իր զորությամբ և որի բաղձանքն ու ախորժելի զբաղմունքն էր անմեղ մարդկանց միսն ու արյունը, ինչով հագեցնում էր իր՝ լլկված, գազանաբարո կատաղությունը։

Ինձ թվում է սրա մասին է Ամբակում Մարգարեի ասածը՝ «Տեսե՛ք, արհամարհողներ և զարմացե՛ք ու ապշեցե՛ք, որովհետև ձեր օրերում մի այնպիսի գործ եմ կատարելու, որին չեք հավատալու, եթե մեկը պատմի ձեզ։ Քանզի ահա ես ձեր դեմ եմ արթնացնելու այն դառն ու արագագնաց ժողովուրդը, որը դիմում է երկրի լայնությունները՝ ժառանգելու խորանները, որ իրենը չեն։ Նա ահեղ է ու երևելի։ Եվ նրա դատաստանն ու վճիռը իրենից պիտի լինի։ Նրանց ձիերն արագավազ են, քան ինձերը և Արաբիայի գայլերը։ Եվ կգան, ինչպես արծիվները կերի վրա։ Անօրենների արածները դարձնելու է իրենց դեմ։ Ավազի պես հավաքելու է գերիներ, ծաղրելու է թագավորներին, և զորեղ իշխանները կդառնան նրա խաղալիքները, նա պիտի ծիծաղի բոլոր ամրոցների վրա»*։

## Բ

### ՄՈԿԱՑ ԻՇԽԱՆ ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ[344] ՄԱՍԻՆ

Այն ժամանակ Բուղան եկավ մտավ Խլաթ քաղաքը, ճանապարհվեց դեպի Ապահունիքի[345] կողմերը։ Զորքը բաժանեց երկու մասի և հրաման տվեց մտնել Վասպուրական երկիրը, ողողել, գերել, թալանել, ավերել ու բնաջինջ անել, սրի քաշել, մարդաթափ անել բազմամարդ գյուղերն ու ավանները, մնացածներին, կանանցով ու մանուկներով հանդերձ, վարել գերության։ Իսկ իշխան Աշոտին կապանքներով տանել թագավորի մոտ, որպեսզի վրեժով հատուցի իր արաբների և արաբացոց տերության դեմ ապստամբելու համար։ Այնուհետև

* Համտ. Ամբա., Ա, 5—10։

զորքի մի մասը ավեց Ժիրաք անունով ինչ-որ զորապետի ձեռքը և հղեց նրան Օշաունիքի կողմերը։ Իսկ զորքի մնացած բազմությանը վերցրեց իր հետ և գնաց դեպի Ապահունիք։ Առյուծների կամ նրանց նման ուրիշ [կենդանիների] որսորդների պես [Աշոտի] շուրջը ձգեցին արգելաններ, որպեսզի շրջափակեն կորովի և քաջ տղամարդուն՝ իշխան Աշոտին։ Կասկածում էին, թե միգուցե ճողոպրի իրենց ձեռքերից կամ գիշերով հանկարծակի հարձակվի իրենց վրա և գործի մեծամեծ ոճիրներ։ Բայց քանի որ Հողցի[346] պահպանությունն ամուր էր, Ժիրաքը փութապես եկավ հասավ Օշաունյաց գավառ և զորքն առաջ շարժեց Առվանից ձորը[347], Մոկաց կողմերը։ Այնտեղ գտան Օշաունիքի բնակիչներին, որոնք թափառական ընկել էին անողորմ, արյունարբու և գիշակեր շների ձեռքը։ Նրանց սրակոտոր արեցին և արյամբ լցրեցին երկիրը։ Կեսին գերի վերցրեցին և տարան իրենց հետ, հրդեհեցին շեներն, ավաններն ու ագարակները, դարձրեցին մարդկանցից և անասուններից անբնակ։ Իսկ Օշաունիքի Նորագեղջ ավանի ռամիկներին վերցրեցին բերեցին Օշաունյաց Ոստանի[348] վաճառատեղին, չվանն անց կացրեցին պարանոցները և սրի քաշեցին, ապա այնտեղից գնացին Ածանա ձոր[349], փախստականներին որոնելու համար։ Հասան եռևներից և սրի քաշեցին ու գերի տարան նրանցից շատերին։

Բայց սուրհանդակների գլխավորներից ինչ-որ երկու եղբայրներ հասան ձորի կիրճը, վահանները դրեցին թիկունքներին, ձեռքերին բռնեցին նիզակները, կապարճներում՝ նետեր և դիմահարեցին [թշնամի] զորքին։ Աստծո օգնությունը հասավ նրանց, և պարտության մատնեցին այլազգիներին, վիրավորեցին շատերին, գերիների բազմությանն ազատեցին գնալու երկրի ամրոցները։ Սրանցից մեկի անունն է Հայտնի... որով[350] և կատարվեց [Սողոմոն իմաստունի ասածը]՝ «եղբայրը եղբորը կօգնի, ինչպես ամուր և անառիկ քաղաքը»*։ Եվ ըստ Եսայիի՝ «Մեկի խոսքով կկորչեն հազարներ, և հնգի խոսքերով շատերը կփախչեն»**։ Շապուհ անունով մի երեց և ձորի ռամիկներից ինչ-որ մեկը, զորագունդ կազմեցին։ Սրանց

* Առակ., ԺԸ, 19։

** Հմմտ. Եսայ., Լ, 17։



օգնություն հասավ նաև մի հովիվ։ Պարսատիկներով քարեր էին նետում [թշնամիների] վրա։ Մարտի դաշտում շատերն առաքինացան մեծ ուժով ու քաջ նահատակությամբ։ Նրանց հիշատակը նպաստ կլինի շատերի քաջության արթնացման համար և անարիներին կտա զորություն, կխրախուսի քաջ նահատակներին։

Այն ժամանակ բռնվել էր ինչ-որ մեկը՝ Վահևունյաց ազատանի տոհմից, ոմն Ապուսահակը՝ Նախճավան ոստանի և Մարդպետականի[351] եպիսկոպոս Սահակի եղբայրը։ Մարմնով ծերացել էր, արտաքնապես ալևոր, բայց ներքինը նորոգ էր ու գեղեցկատեսիլ՝ նման արարչի պատկերին։ Տեղյակ էր ու հմուտ աստվածաշունչ գրքերին։ Նստում էր նեղ ու ցածր ճանապարհին, որը տանում էր դեպի վերին մայրաքաղաք Սիոնը[352], երկնային զորքի բանակատեղը և Քրիստոսի թագավորության արքայանիստը։ Սրան բերեցին Ժիրաք զորապետի առջև, որը տեսավ նրա վայելուչ ու բարձր հասակը, դեմքի պատշաճ գեղեցկությունն ու արուսյակի նման փայլփլող գույնը՝ սպիտակափայլ ու պատկառելի մազերով։ Նա դուր եկավ զորապետին, որն սկսեց դեպի նրան մղել ժահահոտ, հիմարեցուցիչ ու մաղձախառն թույնը, որպեսզի թերևս կարողանա գցել երանելիին մահածին հնազանդության պղտոր ու խաբեպատիր աղտեղության մեջ։ Սպունգով ծածկելով կապարճի նետերը, իր մեռցընող զորությունը նետեց սրբի դեմ, թե միգուցե փոքր-ինչ սասանի նրա ապաստանի միջոցը՝ հաստատուն վեմը, որպեսզի գաղտնի մոլորեցնի սրբի հոգին, որը զրահված էր վերուստ եկած սուրբ հոգով և որպես սուսեր, մեջքին էր կապել տիրոջ պատգամը, որն ասում է. «Երբ ձեզ մատնեն, մի հոգացեք, թե ինչպես կամ ինչ պիտի խոսեք, քանզի ես ձեզ կտամ բերան և իմաստություն, որին ձեր բոլոր հակառակորդները չեն կարող հակառակ կանգնել կամ պատասխան տալ»*։

Բռնավորն սկսեց ասել ողոքական խոսքեր, հրամայեց առաջ բերել մեծամեծ պարգևներ ու պատիվներ, խոստացավ շքեղ ու երևելի դարձնել արքունի պալատի ամբողջ բազմության մեջ և թագավորի առաջ՝ առաջին իշխանների հետ, բարձակից դարձնել թագավորի մեծամեծներին և այնտեղի

* Հմմտ. Մատթ., Ժ, 19։

գլխավոր դասին, երբ Հարդարվի արքունի ատյանը։ «Միայն թե,— ասում է,— հեռացիր Քրիստոսի հավատից, հնազանդվիր մեծ թագավորին[353], ընդունիր կենաց և գովության արժանի հավատը, հնազանդվի մեծ արքային և մեծ իշխող, նրա հրամանակատար թագավորին»։

Իսկ սուրբը զինավառվեց սուրբ հոգով և հիշեց փրկչի ասածը՝ «Մի երկնչեք նրանցից, որ սպանում են մարմինը և չեն կարողանում սպանել հոգին»*, Եվ որ՝ «Յոթ ջահով ճրագը չեն վառի և դնի գրվանի տակ, այլ կդնեն առաքելական եկեղեցու բարձրաբերձ աշտանակին, որպեսզի տեսնեն ու փառավորեն երկնավոր հորը»**։ Նա իր բերանը բացում էր սաստո խոսքով և այն ժամանակ գեղեցիկ, անպաճույճ ու համառոտակի մեկ առ մեկ հաստատում, ցույց էր տալիս հավատն ի Քրիստոս և ինչ որ նրանից կան և պահում են, որպես պարգևներ՝ ճշմարիտ հավատին մնացողների և տանջանք՝ ուրացողների ու ետ կեցողների համար։ Մեծ պարսավանքով առորդաստում էր իրենց իշխանին ու մոլար օրենսդրին՝ Մուհամմեդին։ Բայց որովհետև մեզանից ոչ ոք այն ժամանակ չհանդիպեց երանելիին՝ պատասխան տալիս, ուստի հարմար չհամարեցինք գրելու։

Երբ բռնավորը տեսավ [Աբուսահակի] անդառնալի մտադրությունը, հավատի աներկրայությունը, աներկյուղ ու հանդուգն պատասխանները և մեծ անարգանքը, որ հասցրեց իրեն ու իրենց օրենսդրին, հույժ բարկացավ և հրաման տվեց փութով վերջ տալ նրա կյանքին։

Իսկ սուրբը, դահիճներով հանդերձ, դուրս եկավ երկնային նահատակության կատարման ասպարեզ և ծունր իջած աղոթում էր, որպեսզի կարողանա անսայթաք հավատով հաղթել բանսարկուի հնարները, թե՛ ծածուկ և թե՛ հայտնի պատերազմում։ Նա ասաց. «Իրավունքի և արդարության արքա՜յ...»։ Ապա ձեռքերը բարձրացրեց դեպի երկինք. պարանոցը բռնեց դահիճների առաջ։ Ինչ-որ մեկը վերցրեց սուրը, հարվածեց երանելուն և հատեց նրա գլուխը։ Եվ այսպես նահատակվեց երանելի Աբուսահակը։ Սա առաջինը գտավ մարտիրոսության պսակը համայն Հայաստանին վրա հասած մեծ վտանգի ու

* Մատթ., Ժ, 28։

** Հմմտ. Մատթ., Ե, 15—16։



նեղության մեջ։ Այս պատմեց մեզ Արտամետ ավանի մեծ քահանա Սամուելը։ Նա լսել էր ինչ-որ պարսիկից, որը Նատվանի[354] ձորից էր և սրբի վկայության սկզբից մինչև նահատակվելը եղել էր այնտեղ։ Նա մտապահել էր սաղմոսը, որը ասել էր երանելին։ Այս գիտեն նաև Ռշտունյաց գավառի բնակիչները, քանզի նրանցից շատերը դեռևս կենդանի են։

Սրանից հետո Ժիրաքը գնաց այնտեղից, ապա եկավ մտավ Վանտոսպ[355] և անձամբ հրկիզեց Արտամետ ավանի մեծ եկեղեցին։

Իսկ ինքը՝ Բուղան շարժվեց իշխանի ետևից։ Նրա հետ էին նաև Հայաստանի արաբները, որ բնակվում էին մեր աշխարհի այլևայլ կողմերում և առաջնորդում էին Բուղային մեր երկրում եկ ու մուտ անելիս։

Աշոտ իշխանը կամաց-կամաց ամփոփվեց, ընտանյոք հանդերձ։ Նրա հետ էին ոմանք իր ազատներից՝ Մուշեղ Վահեվունին, որ ուներ տանուտերական պատիվ, Վահրամ Սեպուհը՝ իշխանի թիկնապահը, Վահրամ Տրունին, Հասանը և պաշտոնավոր սեպուհներից ուրիշներ։ Եկան մտան Նկան[356] բերդ-դղյակը, որը Թոռնավան[357] գավառում էր։ Փնտրում էին, քննում, թե ինչպես կարող են ելք գտնել վերահաս վտանգից։

Երբ արաբացոց զորքն իմացավ, որ իշխանը մտավ ամրոցը, այնուհետև բազմությամբ հետամտելով, անել վանդակի պես իսկույն շրջապատեց ամրոցը։ Հիմնական զորաբանակն ուղարկեց Ղոկորվատ[358] ավանը։ Իրենց հետ ունեին գերիների բազմությունը, որ հավաքել էին ինչպես հողը։ Իսկ Վահան Ամատունին գավառից փախավ ձորը, որը մոտ էր այն ամրոցին, ուր իրենց իշխանն էր։

Ապա փոքր-ինչ հետո գնաց զորքը՝ պատերազմելու բերդականների դեմ, ամրոցն առնելու համար։ Եվ ինքն իսկ, զորապետ Բուղան, նստած երիվարին, զինավառվելով՝ ելիմացիների կորովի աղեղնավորներին ու ընտիր հեծյալներին իր հետ տանում էր ի պատերազմ ընդդեմ [Աշոտ] իշխանի։ Նրա զինվորներն ունեին տեսակ-տեսակ վաղրեր, սուսերներ, սվիններ, ասպարներ, քարհատ գործիքներ, մեքենաներ, քար նետող գործիքներ, վահաններ և նիզակներ։ Վերցնում էին նաև կրակ, ծծումբ և նավթ՝ պատերազմելու համար։ Լուծույթը լցնում էին ապակեղեն անոթների մեջ, մանր ծծումբ խառնում նրա

հետ ու գնում մեքենայի պարսատիկի վրա։ Նրա հետ նաև կրակը և հնար գտնում գցելու ամրոցի վրա։ Եվ ովքեր որ ճակատում էին պարիսպների մոտ, ունեին բրդյա զգեստներ։ [Բուրդը] բաղուկների ուժով սեղմել և կպցրել էին միմյանց։ Այդ նուրբ մազը կոչում էին թաղիք, որը ջրի մեջ դրվելիս ծծում է իբրև սպունգ, և նրանով զինված մարդիկ ավելի սաստիկ են կռվում, մնում են աներկյուղ հրից այրվելուց։ Նրանց երիվարներն ու հեծյալները սպառազինված էին։ Ձիերը ունեին կուրծքը, ճակատը, գավակը և զանգապանները չորս կողմից պաշտպանող զարդեր, կրծքներից կախել էին զենք և խրոխտ [տեսքի] համար նաև՝ վահան, ոտնատրոփի [ժամանակ] փնչացնելիս զրնգացող, զանգակազարդ ոսկե շղթաներ։ Ձիերի ճակատների մեջտեղը կապել էին լուսնաձև մահիկներ։ Իսկ կերի խոտը ամուր կապել էին երկաթե շղթաներով։ Այլև տախտակը փորելով[359] ըստ ձիու փորի չափի, վահանի պես կպցրել էին փորի երկու կողմից, ցուցահանելով զինագործության արվեստ։ Իսկ իրենք մարմնի վրա կրում էին զրահ, գլխներին դրել էին սաղավարտ, ձեռքներին հագցրել բազպաններ, նետելատեղերին ամրացրել էին զանգապաններ, հնարել կոչկաձև ոտնամաններ, վահանը դրել թիկունքին, մեջքին կապել սուրը, ձեռքին բռնել նիզակը։ Կապարճներն ու աղեղները պատրաստ ունեին առջևները՝ ձիերի թիկունքներին։ Մեջքներին կապել էին ոսկենախշ ու արծաթազարդ զարդեր և գոտիներ։ Կողքերին ունեին փողփողացող դրոշներ և թևարախումների ձայնից թնդեցնում էին լեռները։ Բարձրացվել էին դրոշները, հնչում էին քնարները և գոփում թմբուկները։ Սպառազեն զարդերը և մերկ սրերը փայլում էին արևի տակ, նրա ճառագայթներն անդրադարձնում շրջակա լեռներին։ Քաջերը խիզախում էին, զորագլուխները և կտրիճաբար առաջ նետվողները գոչում։ Եվ պատրաստվեցին պատերազմի։ Այս ասել է Եսային մեկ խոսքով. «Եղլամացիք վերցրեցին կապարճները, նստեցին ձիերը*»։ Պատերազմողների զորագնդերը եկան մոտեցան մեր քաջն Աշոտին՝ մեծ իշխանների մեջ Հայոց ընտիր զորավարին։ Եվ այնչափ, դրանից էլ առավել սպառազեն պատրաստություն ունեին, բայց սաստիկ

* Հմմտ. Եսայ., ԻԲ, 6։



կասկածներից ու մեծ երկյուղից դողում էին մեր հայկասիրտ և հաղթող կտրիճից՝ Աշոտից և Վասպուրական տերության բնիկ նախարարների ազգատոհմերից նրա հետ եղած ազատների զորագնդերից ու նրանց զորքից։

Իսկ [Աշոտ] իշխանը ելավ պարսպի վրա, հպարտությամբ ճեմում էր, ինչպես առյուծի կորյուն, առ ոչինչ համարելով հրոսակներին, որ վրա էին հասել ու շրջափակել իրեն։ Որովհետև կարծում էր, թե իր նիզակակիրները, ազատագունդ զորքը, զորագլուխները, որ մտել էին իր հետ նկանի անձավը, համախոհ են ու գործակից իրեն։ Մինչդեռ [արաբներն] ավելի ու ավելի էին սաստկացնում մարտը։

Այնժամ խորհրդի նստեցին իշխանն ու իր տոհմակիցները՝ Վահան և Մուշեղ Արծրունիները, նրանց հետ եղած ազատների զորագունդը, որպեսզի թերևս կարողանան համաձայնեցնել [Բուղա] զորապետին՝ հրաժարվելու իր հղացած դիտավորություններից և դադարեցնելու մարտը, վերջ տալու խառնակություններին։ Ինչ-որ պահանջում է,— ասացին,— թող վերցնի ըստ իր կամքի, [կամեցան] հաստատել և նրան տալ գյուղեր, ագարակներ, վճարել արքունի հարկը և տալ խաղաղության պատանդներ։

Մինչդեռ այսպես էին խոսում ու խորհում միասին, նույն ժամանակ բերդում արգելվածները՝ ազատ տոհմերից, որոնք մասնակցում էին խորհրդին, իսկույն անջատվեցին ուխտած միաբանությունից, մեջտեղ բերեցին չար մտադրություն, կեղծեցին բարեկամություն, ինչպես երեկ և նրանից էլ առաջ, ու հանձն առան մեկնել զորապետի մոտ և խնդրել խաղաղություն։ Իրենցից մեկը՝ Վահրամ անունով, մեկնեց հրովարտակը տանելու զորապետին։ Լցված էին սատանայական դիտավորությունների թույնով, իշխանի աչքին [երևում էին] գառան մորթով, բայց ներքուստ ունեին ապականող գայլերի լըրբություն, նման էին համրացած շների, որոնք չեն կարող հաչել, ինչպես ասում է Եսայի մարգարեն*, բայց տիրոջ դեմ են ուղղում իրենց մահածին թույնի սպանող զորությունը, դառնալով տիրակործույններ, աշխարհավերներ, բանսարկուներ, բուներ, ավելի խռովարարներ, քան խաղաղասերներ, որոնք

* Եսայ., ԾԶ, 10։

ամենուրեք, որտեղ հանդիպեցին, քակում էին եղբայրների, ազգականների ու բարեկամների խաղաղության ուխտի միաբանությունը։

Եվ մատնիչի նման դուրս եկան Փրկչի տնօրինությունից իրենց հետ ունենալով հրովարտակ, ուր գրված էր.

«Արքունիքից ընդունել ես Հայոց աշխարհի վերակացությունը և ինքնակալ թագավորի հրամանով նվաճել և հնազանդեցրել ես ձեր պետությանը ամբողջ Հայաստանի իշխաններին, կուսակալներին, քաղաքապետներին, մարզպետներին, ինչպես և խրատել ապստամբներին ու ընդդիմակայողներին իրենց ապիրատության արժանի ձևով՝ բանտով, ծեծով և պես-պես տանջանքներով, երկրի խաղաղության միջից վերացրել շփոթն ու խռովությունը, ինչպես վայել է խաղաղասեր թագավորներին ու թագավորազններին, իբրև աստծո հլու հավատարիմ ու սիրասեր ծառաների։

Եվ արդ մենք՝ Վասպուրականի ազատների ու իշխանների նահապետներս, Վահևունյաց տոհմից Մուշեղը, Տրունյաց տոհմից Վահրամը, մյուս Վահրամը, որը և իշխանի թիկնապահն է, և բազում ուրիշ ազատներ ու պետության զորականներ, որոնց ձեռքն է մեր աշխարհի հոգաբարձությունը, գրեցինք քեզ, Բուղա, արաբացոց զորապետների գլխավոր և բարձակից մեծն թագավորի։ Միայն թե ազատ արձակի մեզ և մեր ազգատոհմին մեր տները և թույլ տուր յուրաքանչյուրիս խաղաղ ապրելու այնտեղ։ Մենք Աշոտին կտանք քո ձեռքը, առանց զենքի, մարտի ու ճակատ կազմելու, և չես չարչարվի նրա պատճառով։ Այլև չես կարծի, թե մենք ապստամբ ենք եղել ինքնակալ թագավորի և քո մեծության դեմ, եթե ստուգությամբ քննես։ Բայց սրան էլ անտեղյակ չպիտի լինես, որ Գուրգենի՝ իշխանի եղբոր հետ Արծրունյաց տոհմից ուրիշներ և Վասպուրական տերության ազատները, ազատորդիները և նրանց քաջարի զորքը՝ բոլորը նրա հետ անցան գնացին Անդրպատականի կողմերը և այնտեղ են հավաքել մեր աշխարհի ամբողջ զորքն ու ռամիկներին։ Նրանք կռվող և պատերազմող տղամարդիկ են, որոնք երես չեն դարձնում սրից։ Եվ եթե գործը ձգձգվի այսպես, և պատերազմը փութով չտարվի, գուցե գիշերվա օգնությամբ գա քո վրա և հասցնի մեծամեծ ոճիրներ քեզ և արքունի քո զորքին։ Որովհետև քաջ և պատերազմող տղամարդ է, նրա հետ եղած զորքն էլ միաբան է և անձերը մահվան կտան իրենց տան, երկրի ու ազգատոհմի համար։ Նրանց ձեռքում են հույժ ապահով ամրոցներ՝ Ջլմարը, Սրինգը և Ճահուկ[360] բերդը։ Ու եթե նրանք բաժանվեն երեք, չորս և ավելի մասերի և օգնական ունենան ամրոցները, կհասցնեն քեզ մեծ չարչարանքներ, կխափանեն քո բոլոր դիտավորությունները, քեզ կմատնեն ամոթալից պարտության, ինչպես ավելի առաջ արքունիքից եկած զորապետին, որ չկարողացավ ընդդիմակայել սրանց, նույնիսկ 100-ով հայոց 10 ձիավորի դեմ»։

Եվ երբ գլխավոր զորապետը ազատանուց ծածուկ ընթերցեց [հրովարտակը], գրավոր պատասխան տվեց և երդմամբ հաստատելով ասաց. «Դուք ինչ որ ցանկանում եք, կլինի ստուգապես, առանց երկբայության. միայն իմ ձեռքից Աշոտին, իր ազգականներով հանդերձ, չպետք է դուրս պրծնի»։

Այնժամ իշխանը, իմանալով նրանց նենգությունն ու խարամանկ կեղծավորությունը, և որովհետև ոչ ըստ նրա հրամանի էին կարգավորում ամրոցի պաշտպանության կարիքները, ասաց նրանց. «Գնացեք զորապետի մոտ, տեսեք հավատի և հաստ եղեք, իմացեք, թե ինչպես կարող եք նրան համաձայնեցնել խաղաղության»։

Այն ժամանակ դարչելի դեմքերից դեն դցվեց կեղծավոր քողը։ Պատասխան տվեցին, ասելով. «Դու ինքդ վեր կաց գնա, նրանից լսիր, ինչ որ կցանկանա և քեզնից կվերանա ապստամբի [անունը] և թագավորի դեմ ապստամբողի՝ քո մասին եղած կարծիքը»։

Երբ [Աշոտ] իշխանն իմացավ, որ նրանք վճռել են դիմել չարության, խոսում են խաբեությամբ, գաղտնի քրթմնջում են, հրաժարվում կատարել իր հրամանները, պատասխան տվեց, ասելով. «Դուք ծածուկ ի՞նչ եք կամենում անել, ինչո՞ւ եք միմյանց հետ հղանում գաղտնի դիտավորություններ։ Եթե չար եմ թվում ձեր աչքին, ապիրատություն եմ գործել ձեր հանդեպ կամ խարդախությամբ վերաբերվել, ահավասիկ իմ երեսին տվեք պատասխան և ցույց տվեք հականե հանդիման, մեկ առ մեկ իմ գործած ամեն մի հանցանքը, ասացեք ի լուր բոլոր զորականների և մի՛ ամաչեք ճշմարտություն ասելուց։ Չէ՞ որ իբրև հայր գրկել, գգվել եմ ձեզ, հավաքել, ինչպես հա-

վր ճյուղերին, թևերիս տակ՝ պաշտպանելու համար, և դուք ամենուրեք ապահով եք եղել իմ ձեռքի տակ և անհոգ, ինչպես անմատույց քաղաքում։ Իսկ դուք այսպես եք հատուցում ինձ, չիմանալով այն, ինչ ասել է Դավիթը. «Բարու փոխարեն չար հատուցեցին և իմ սիրույս փոխարեն՝ ատելություն*»։ Եվ որպես դրա հատուցում, ասում է «Նրանց վրա դիր մեղավորի, սատանան թող կանգնի նրա աջ կողմը»**։ Շարունակվում է սպառնում։ Չե՞ք լսել, թե ինչ է ասել Սողոմոնը. «Ով բարության փոխարեն հատուցում է չարությամբ, չարիքը նրա տանից չպիտի պակասի»***։ Չե՞ք մտաբերում և ոչ մեկն այն բարիքներից, որ դուք գտել եք ինձնից։ Քանզի ամեն տարիքում ձեզանից յուրաքանչյուրին մեծարում էի գթառատ սիրով [illegible], որ իմ հարստությունից, ինչն իմ գանձն էր, տարեցտարի բաժին էի տալիս զվարթ սրտով, իմն էի համարում իմ տանից՝ ձեր կողմից և ձեզ համար հափշտակվածը։ Չի լսվել, որ նախկին իշխաններից որևէ մեկը այսպիսի բան անի։ Ոչ մի հոգ չէի տանում իմ աղքատանալու մասին և դրա հետ ուրախանում էի ձեր լիացումից։ Ձեր որդիներին ու մանուկներին տեսնելիս խանդաղատանքով գիրկս էի ընդունում, մեծ ընծաներով ու գգվանքով, իբրև ինձնից ծնվածների։ Արդ այս ամենի փոխարե՞ն է, որ նենգաբար մտադրվել եք արգելք լինել և իմ ու զավակներիս անձերը դյուրությամբ որսալ տալ հետամտողներին, ամբողջ ընտանիքով ձգեք վիշապի բերանը և պատճառ լինեք ամբողջ երկրի սրածությանն ու գերությանը»։

Իսկ նրանք, քանզի հաստատապես միացել էին արաբացոց իշխանի նենգադրուժ մտադրությանը, պատասխան տվեցին, ասելով. «Չենք կարող դիմադրել արքունի իշխանության չտեսնված զորությանը, և ոչ էլ այս բերդի ամրություններն են այնքան վստահելի, ինքան մեզ էր թվում, և սրա միջի պաշարներն էլ բավական չեն, էլ չենք ասում ուրիշ բաների մասին։ Քիչ են նաև բերդի պահապան ռամիկ զինվորները։ Այս ամենի համար, հարկ է, որ դու գնաս, որպեսզի, քո որպես

* Սաղմ. ՃԹ, 5։
** Սաղմ. ՃԹ, 6։
*** Առակ., ԺԷ, 13։



ապստամբի [մասին] եղած կարծիքը վերանա, և այդ տառապյալները, որ զուր տեղը գաղթել և եկել ապավինել են այստեղ, արձակվեն յուրաքանչյուրն իր տեղը, և երկիրը հանգիստ առնի թշնամիների ասպատակություններից, վրա հասած ավերից ու ապականություններից։ Եվ եթե գնաս կամովին, թերևս շատերին, նաև քո անձին օգուտ լինի։ Ակամայից մեկնելը, նեղողին չարչարելով պահելը միգուցե վնաս տա նաև քեզ, և այնուհետև ոչ ոքից չի հասնի օգնությունս»։

Այս լսելով, հաստատ իմացավ նրանց նենգագործությունը և աչքերը բարձրացնելով առ աստված, աղոթեց, ճաշակեց մի քիչ հաց ու գինի, գոհացավ և թախանձագին նայեց իր ընտանիքին, ապա վեր կացավ, իջավ ամրոցից, եկավ վայրի ոսոխի առջև, ողջույն տվեց ըստ նրանց սովորության։ [Բուղան] հարցրեց. «Դո՞ւ ես Աշոտը»։ Պատասխանեց. «Այո, ես եմ»։ Կրկնեց, երրորդեց, բայց լսեց նույնը։ Ապա երկար խոսեց և նրա առաջ դրեց մեղադրական բազում խոսքեր, բայց նրանից լսեց դիպուկ ու մտացի պատասխաններ և հրամայեց նստել։

Այնժամ Սմբատ Բագրատունին՝ Մոկաց տերը, որին հիշեցինք ավելի վերևում, քանզի շատ սիրվեց զորապետից և առավել քան բոլոր մեծամեծները, ստացավ պարգևներ ու պատիվներ, չհանգուրժեց կատարված անցուդարձերը։ Նրա հոգին հառաչում էր մեծ տրտմությամբ։ Նա դուրս եկավ բանակից և հեղեց հորդառատ արտասուքներ՝ իշխանի և մյուս նախարարների կործանման համար։ Բայց ոչնչով չէր կարող օգնել նրանց, անօրեն թագավորի դաժան հրամանի պատճառով։ Ծածուկ իր սրտի այրվում, խորովվում էր երկրի ավերման և թշնամիներից գերվածների անողորմ չարչարանքների համար։ Այնժամ համարձակվեց մտնել բռնավորի ատյանը և աներկյուղ, առանց ամաչելու, եկավ զորապետի առջև ու ասաց. «Որովհետև քո մոտ գտա շնորհներ, և մեծարանքներ տվեցիր իմ պատվին, առավել քան Հայաստանի բոլոր իշխաններն ու արքունի մեծամեծները, համարեցիր ինձ նախամեծար և մեծարգո պատիվներ ցույց տվեցիր, ու բոլորը լսեցին ինձ քեզ հետ վերցնելու մասին։ Քո սիրալիրությունն իմ հանդեպ թող դատարկ ու անարժեք չլինի, որպեսզի ովքեր դառն են ասում և թշնամի են մեզ՝ տեսնեն և ամաչեն, իսկ բարեկամներն ու սիրողները հույժ ուրախ լինեն»։

Իսկ զորապետը հրամամբ խոստացավ տալ նրան, ինչ որ կամենա, մինչև իսկ արժանացնել իր իշխանության հավասար բարձերի ու պատիվների։

Սակայն նա հոգ չտարավ երկրային մեծության մասին, քանզի այն անցավոր է, անապառ, անվախճան, հավիտենական և անկողոպտելի գողերից, այլ խնդրեց միջնորդ լինել պարգևների։ «Տուր ինձ,— ասում է,— այդտեղի գերիներից, որչափ քո կամքը թելադրի»։ Այն ժամանակ փութով հրաման տվեց, որպեսզի ում որ կամենա Սմբատը, ոչ ոք չհամարձակվի արգելք լինել։ Եվ նրան տվեց սուրհանդակներ, մեկնազեններ, սակրավորներ, լախտավորներ, որպեսզի ըստ նրա կամքի, բանակից դուրս հանեն Վասպուրականի գերիներին։ [Սմբատը] վերցրեց նրանց, ամեն մեկին անցկացրեց իր բնակության կողմերը։ Ինքն էլ գնաց նրանց հետ ինչպես Պարսից Կյուրոս արքան՝ Բաբելոնի գերությունից[361] վերադարձողների առջևից։ Ժողովրդին բերեց հանեց նրա երկիրը։ Սմբատի նկատմամբ Եսայի Մարգարեի ասածը, թե՝ «կուղարկի նրանց մի մարդ, որը կփրկի նրանց»* և կփրկի դատաստանով։ Եվ դարձյալ, թե՝ «իր գերված ժողովրդին ետ պիտի դարձնի, ոչ կաշառքով և ոչ էլ ընծաներով, ասում է տերը»**։ Եվ արձակեց նրան իր տուն, մեծ ուրախությամբ և անսպառ խնդությամբ։ Ժամանակ տվեց նրան վերադառնալու իրեն մոտ՝ Դվին քաղաքի իր ձմեռոցը։

Գ

## ԻՇԽԱՆԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԱՊՎԵԼՆ ՈՒ ՎՏԱՐՎԵԼԸ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻՑ

Այն օրերին, մինչ մնում էին կապանքների մեջ [Աշոտ] իշխանն ու նախարարները՝ յուրաքանչյուրն ընտանյոք, [Բուղան] կազմեց զինվորների զորագունդ, ընտիր այրուձի, զինավառվեց բազում պատրաստությամբ և Աշոտ իշխանին ու

* Եսայ., ԺԹ, 20։

** Եսայ., ԽԵ, 13։



նրա որդի Գրիգորին, Վահան Արծրունուն և նրա որդի Գագիկին, որը նաև Ապումրվան էր կոչվում, Վահանի եղբայր Մուշեղին, տիկին Հրանույշին և ազատատոհմերից ուրիշների, կապեց, նստեցրեց ուղտերի վրա և վտարեց Սամառա։ Նրանց դրեցին տոպրակաձև տաղավարների ներքո և ուղարկեցին Պարսկաստանի կողմերը։ Ճանապարհեց Ատրպատականով. կասկածում էր, թե գուցե Գուրգենը կամ որևէ մեկը Արծրունյաց տոհմից և նրանց ազատներից՝ Վասպուրականի կորովի հեծյալներից, վրա հասնի և ազատի նրանց իր զորքից և դուրս հանի յուրայինների ձեռքից։

Երբ [Աշոտ] իշխանը հասավ արքունիք, նրա ոտքերը կապել տվեցին կրկնակի շղթաներով և դրեցին բանտի մեջ։ Ապա [արքան] սպառազեն զինվորներին հրամայեց պահել նրան, մինչև ինքը կնստի դատաստանի, նրանց կմտցնի ատյան* հարցուփորձի և կքննի այն գործերը, որ կուտակել դրել էին իշխանի վրա։

Արքան իր զորապետին այն ժամանակ գրել ու ծանուցել էր, թե ինչ էր պետք կատարել։

Դ

## ԹԵ ԻՆՉՈՒ ՆՐԱՆՑԻՑ ՈՄԱՆՔ ՀԱՍԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՄԱՆ

Այն ժամանակ մի քանի կտրիճներ, որ կալանավորների հետ էին, ելան բանտից և դեռ յուրաքանչյուրը սուր էր կապում մեջքին ու վահան կրում թիկունքին։ Իրենց աչքերը վեր բարձրացրին և տեսան, որ իրենց կանայք և մանուկները երկրից տարված գերիների մեջ են։ Նրանք չհանդուրժեցին այդպիսի տաժանելի նեղությունը. արիաբար հասան ձորի կիրճը և մերկացրած սրերով հարձակվեցին ձիավորների[362] վրա։ Տերը նրանց մատնեց մերոնց ձեռքը։ Նրանցից շատերին սրի քաշելով սպանեցին, ավելի շատերին վիրավորեցին և բազմաթիվ գերիների, իրենց ընտանիքներով հանդերձ, ազատեցին նրանցից ու ձորի անցքով անցկացրին լեռան ապահով կողմերը։ Բայց արաբների զորքը կուտակվեց նրանց վրա, շրջափակեցին, ձերբակալեցին և բերեցին զորապետի մոտ,

պատմեցին նրանց քաջագործության մասին։ [Բուղան] վերցրեց տղամարդկաց և ստիպեց հրաժարվել Քրիստոսի երկրպագությունից և արժանանալ պատվի ու պարգևների իրենից և չմեռնել չարաչար տանջանքներով։ Նրանք մեջտեղ բերեցին գեղեցիկ մտահղացում՝ ընտրեցին քաջաբար մեռնելը, քան խղճուկ կյանքը։ Խոսեց նրանց հետ ողոքական խոսքերով, բայց չանսացին նրան։ Թերևս տվեց պարգևներ, բայց և այնպես հանձն չառան։ Խոսեց նրանց հետ խստությամբ, սակայն դրանից էլ չերկյուղեցին։ Տանջեց նրանց ծեծով, բայց նրանք ավելի ամրացան հավատի, չարի հույսի և Քրիստոսի սիրո մեջ։ Այնուհետև հրամայեց սրով գլխատել նրանց, իսկ նրանք հույժ ուրախացան, քանզի տիրոջ անվան համար արժան եղան մահվան։ Եվ ընդունեցին մարտիրոսության մահավճիռ, նահատակվեցին՝ ի փառս Սուրբ Երրորդության։ Նրանցից հանվանե հայտնի են Գևորգը՝ Ակեացի տոհմից, մյուսը Խոսրով՝ Գարանեղյան տոհմից։

Իսկ երբեմն նրանցից ինչ-որ մեկը, երիտասարդ տարիքով, ինքը մահմեդական և ազգով պարսիկ[363], Քրիստոսի հավատի սիրուն հետևելով, եկավ Հարեց Պատրիկ Անձևացուն և խնդրեց մկրտել իրեն, որպեսզի կատարյալ լինի տիրոջ պատվիրանները կատարելու համար։ Բայց նա հապաղեց և խափանեց նրա բարեպաշտ ցանկությունը։ [Պարսիկը] բերդում արգելվածների մեջ էր։ Երբ առան ամրոցը, բռնվածներին համոզեցին, թե ովքեր հեռանան Քրիստոսից, չեն սպանվի։ Շատերը համոզվեցին և գնացին սատանայի ետևից, կեան ընդունեց մահվան տառապանքը։ [Պարսիկը] նույնպես դիմեց վկաների աջակողմը՝ սրի առաջ մատուցելու անձը, որպես կենդանի ընծա աստծո Որդուն։

Իսկ Վահրամ [անունով մեկը] նրան տեսել էր կառափնարանի մոտ։ Այնինչ դահիճը բարձրացրել էր սուրը նրա վրա և ուժգին ձայնում էր ու ասում. «Դու մուսուլման ես, ինչո՞ւ ես իզուր մահվան դիմում», նա ճչալով ասում էր՝ քրիստոնյա եմ։ Բայց [դահիճը] ավելի էր պնդում ու ասում. «Մի՛ մեռիր, մուսուլմա՛ն ես»։ [Պարսիկը] ավելի էր գրգռվում, ձայնում և արտասուքներ էր թափում, ասելով. «Քրիստոնյա եմ, մեռնում եմ Քրիստոսի համար և մկրտվում հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու՝ ոչ թե ջրով, այլ իմ արյամբ։ Մի՞թե դու չէիր



տեսնում, որ մտնում և դուրս էի գալիս սուրբ եկեղեցին բոլոր հավատացյալների հետ, իսկ դու ջանում ես մոլորեցնել ինձ Քրիստոսի հավատից։ Ես լսեցի, երբ կարդում էին ավետարանը, թե Քրիստոսն ասաց՝ «Ով ինձ կդավանի մարդկանց առջև, ես էլ նրան պիտի դավանեմ իմ Հոր առջև, որ երկինքն է»*։ Ուրեմն հեռու գնա, այ մարդ, ես մեռնում եմ Քրիստոսի համար»։ Ապա վազում է դեպի բանակը և կանչում, ձայնում, շարժում ձեռքն ու ասում. «Ես քրիստոնյա եմ, քրիստոնյա եմ», մինչև որ դահիճները վայրացան և խմբովին դիմեցին մեծ հրապարակ, սրով հարվածեցին երանելուն, հատեցին գլուխը, ապա գնացին պատմեցին զորապետին։ Եվ ահա սաստիկ լույս իջավ երկնից և ցոլանալով սուրբ մարմնի վրա, շրջափակեց այն տեղը, ուր ցայտել էր նրա արյունը։ Այս տեսավ առհասարակ կարավանի ամբողջ բազմությունը։

Ինձ թվում է, թե սրա մասին է մարգարեի ասածը. «Օտարականը, որ եկել է պիտի հարի տիրոջը, թող չասի, թե տերն ինձ բոլորովին զատեց իր ժողովրդից»**։ Ապա փոքր-ինչ հետո ասում է. «Օտարականները, որ եկել ու պիտի հարեն տիրոջը, նրա անունը սիրելու, նրան ծառաներ ու աղախիններ լինելու, և ամենքը, որ պիտի պահեն իմ շաբաթը, չեն պղծի և հիմնան իմ ուխտի մեջ, նրանց պիտի տանեմ իմ սուրբ լեռը և պիտի ուրախացնեմ իմ աղոթքի տան մեջ։ Նրանց ողջակեզներն ու պատարագները ընդունելի պիտի լինեն իմ սեղանի վրա, քանզի իմ տունը պիտի կոչեն բոլոր օտարականների աղոթքի տունը, ասաց ամենակալ տերը»***։ Եվ դարձյալ փրկիչն ասում է. «Ոչխարներ ունեմ, որ այս բակից չեն, նրանց ես պետք է բերեմ այստեղ, և իմ ձայնը պիտի լսեն ու լինեն մի հոտ և մի հովիվ։ Եվ ես նրանց կտամ հավիտենական կյանք»**։

Եվ նահատակվեց սուրբ վկան փառավորապես, հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու։ Նրա անունը գրված է վարքագրության մեջ։ Մեզ հայտնի դարձավ նրա ասածը, թե՝ «քրիստոն-

* Մատթ. Ժ., 32։
** Եսայ., ԾԶ, 3։
*** Եսայ., ԾԶ, 6—7։
**** Հմմտ., Յովհ., Ժ, 16։

յա եմ», ըստ այնմ, թե՝ «Իր ծառաներին կանչելու է նոր անունով, որպեսզի օրհնվի երկրի վրա»*, [Սա] վերաբերում է նաև հիշյալ սրբին։

Սրանից հետո Բուղան իր մոտից զատեց ավելի քան 15 հազար մարդու՝ բոլոր ազգատոհմերից, մեծամեծներից, կուսակալներից, ինչպես և պարսիկներից, եղիմացիներից, բադելացիներից ու արաբներից, որոնք թագավորի ու մեծ զորապետի հրամանով եկել էին նրա հետ՝ պատերազմ վարելու, և նրանց հանեց Գուրգենի դեմ, որպեսզի ուր էլ լինի, բերեն նրան իր մոտ, լինեն այդ ստապատիր ձևով, խորամանկ կեղծավորությամբ; խարդախությամբ կամ պատերազմով և մեծամեծ զորությամբ, ամենայն պատրաստությամբ, արքունի զորությամբ, ինչպես որ կարող են, հասցնեն իր մոտ։

Իսկ [Գուրգենն] անցավ Որսիրանք[364] գավառը։ Նրա հետ էր ազատների, մեծամեծների, Արծրունյաց նախարարության և նրանց ողջ զորքի բազմությունը։ Բանակեցին Թով[365] գյուղի հանդում, լեռան վրա, նրա հովտում, որ կոչվում է Արյան լիճ, քանզի այնտեղ կա մի մեծ լիճ, մոտիկ այն տեղին, որը Վասպուրականի մեր քաջ իշխանների զորքի արիությունների ու ճակատամարտերի ասպարեզն էր։ Այնտեղ էր հավաքվել գաղթականների մեծաթիվ բազմություն՝ Աղբակ, Զարեհավան[366] և Ակե[367] գավառներից, Ազգո[368] լեռնակողմերից։ Անեն ոտնից[369], Զողա լեռան[370] և ավելի այն կողմերից։ Անհուն բազմությունը պատել էր լեռան շուրջը, ինչպես մարախը և ծովի ավազն անթիվ։ Ապավինել էին քաջ զորավար Գուրգենին և նրա հետ եղած հայոց զորքին, իբրև մեծ ու ապահով ամրոցի։ Նա իր մորը՝ Վասպուրականի բամբիշին առաքեց Բուղա զորապետի մոտ, որպեսզի այնուհետև ունենան խաղաղություն ինքն ու իր աշխարհը, և [Բուղան] իր ձեռքը տա Վասպուրականի իշխանությունը, իր եղբոր փոխարեն։ Իսկ ինքն ու բոլոր յուրայինները հնազանդ կլինեն արքունիքին, սովորականի պես կտան արքունի հարկն ու տուրքը։

Իսկ երբ տիկինը մտավ զորականյան ու եկավ զորապետի առջև, խոսեց նրա հետ ըստ պատշաճի այն մասին, ինչ պետք էր։ Զորապետը հանդարտությամբ տվեց նրան պատասխան,

* Հմմտ. Եսայ., ԿԵ, 15։



ասելով. «Նստիր դու այստեղ, մինչև կարձակեմ քեզ և կկատարեմ քո խնդրանքը, որի համար եկել ես»։ Եվ հրամայեց պահել նրան ազատ, սահմանեց նրան ամենօրյա ռոճիկ, ըստ արժանվույն մեծ տիկնոջ՝ Հոփսիմեի։ Իսկ [արաբների] զորքը, որ եկել էր Գուրգենի ետևից, եկավ հասավ երկրի սահմաններին, ուր էր Գուրգենն իր զորքով։ [Նրանք] բանակեցին Ջավ[371] կոչված գետի եզերքին։ Իսկ զորքի զորագլուխներն էին՝ Մուքադմը, Յուսուփը՝ Տփղիս քաղաքից, Ռահիմի որդի Յուսուփը և Ելիի[372] տեր Աբուհեշմը և նրա հետ Պարսից ամբրա Համդոյի զորքը։ Ուղարկեցին Գուրգենի մոտ դեսպաններ, որպեսզի գա իրենց մոտ՝ առանց ամոթի ու երկյուղի և առանց մի կասկածի, միայն թե պատահեն միմյանց սիրով ու խաղաղությամբ և [Գուրգենը] նրանցից ստանա պատիվներ, զորապետի հրամանի և տիրոջ իր եղբոր փոխարեն, նրա ամբողջ երկրին։ Իսկ [Գուրգենը] նրանց մոտ հղեց դեսպան՝ ոմն Աբդլայի, որ ծանոթ էր զորապետին, տեսնելու, թե հաստա՞տ է, ինչ ասացին դեսպանները, թե՞ ստապատիր ձևով ջանում են կորցնել իրենց։ Բայց նրանք չհայտնելով իրենց չար մտադրությունը, վերադարձրին [Աբդլային], որպեսզի [Գուրգենը] առանց կասկածի գա իրենց մոտ։ Երկիցս, երիցս և բազում անգամ նույնը հաստատեցին երդմամբ, որպեսզի անվեհեր համարձակությամբ գա իրենց մոտ։ Եվ իրենց ամբողջ զորքը շարժեցին հայոց զորագնդի դեմ, ասելով [Գուրգենին]. «Ահա մեկնեց մեր մոտից զորքը, և քչերն են մեզ մոտ. դու նույնպես սակավ կամ թե ավելի մարդկանցով եկ և հանդիպենք միմյանց»։ Այնժամ [Գուրգենը] տվեց զորքը Մուշեղ Ապուսելճի՝ Գուրգենի եղբոր ձեռքը, իսկ ինքը ելավ գնաց ելած կոչնակների ետևից։ Արգելեցին նրան մեծամեծ նախարարները, բայց բնավ չանսաց որևէ մեկին։ Եվ ամենքը միասին լացեցին արտասվալից։ Մինչև զորագլուխների մոտ հասնելը, [Գուրգենը] գնում էր [կոչնակներից] երկու մղոն հեռավորությամբ։ Նրանք մտքներում դրել էին, որ եթե գա իրենց ետևից, կբռնեն նրան, զորքը կհուսահատվի, ու դյուրությամբ կհաղթեն նրան։

Կիրակի օրվա երրորդ ժամն էր, երբ մեծաթիվ հեծյալներ շարժվեցին Սմբատա կոչված բերդի[373] ավերակների կողմը։ Ավերվել էր նախկինում, պարսից զորքից։ Փաղփողում էին

զորագնդերի դրոշները առանձին-առանձին, և լեռը պատել էր
զորքի բազմությունը, իսկ գաղթականների կարավանը տես-
նում էր զենքերի շաղափը, սրերի շողշողալը և այս ու այնտեղ
ինչպես ուխտերը գայլերից՝ խուճապահար եղած հալածյալ-
ներին։ [Արաբների] զորքին իմաց էր տրվել, թե ինչ է կատար-
վում։ Նրանք ևս լսում էին, որ ձայնը զորքի է և հույժ սաս-
տիկ։ Գետինն էլ ձայնեց, ամբողջ բազմությունը աղաղակ
բարձրացրեց, և կարծես հիմքից լեռը տապալվեց։ Ահեղ որոտ
էր, թնդյուն ու պարհուրանք։ Զենքերի սաստիկ փայլից, թը-
րերի շողշողալուց և սպառազինված երիվարների զարդերից
թվում էր, թե լեռն է այրվում հրից կամ ամպը շանթ ու որոտ
է արձակում և ցած է դցում կայծակը՝ կարկտաբեր անձրև
ժամանակ։ Այդպես էր թվում նաև երիվարների խրխնջոցից ու
արագ առաջ շարժվելուց։

Իսկ հայոց զորքը տակավին անհոգության մեջ էր։ Օրվա
աղոթքները վերջացնելուց հետո քահանաներն ընթերցեցին
սուրբ ավետարանը, բանակի մեջ՝ զանազան տեղերում։ Կա-
տարեցին աղոթքը, գոհացան ու փառք տվին աստծուն, ասա-
ցին «ամեն» և նստեցին հացի։ Միայն Ապումկդեմ իշխանն
ու հետը եղողները գիշերը պահպանություն արեցին, [քան-
զի] գիտեին [արաբացոց] զորքի դիտավորությունը։ Եվ երբ
[արաբները] արդեն սկսեցին նստել ձիերը, նրանք փութացին
դեպի բանակ, և [Ապումկդեմը] հրաման տվեց զինավառվել
զենք ու զարդով և իրենց ընտիր երիվարներին պատրաստել
մարտի։ Եվ ինքն շտապեցրեց, տագնապեցրեց, փութացրեց
շարքեր կազմել, հարդարել ճակատ, պատրաստվել պատե-
րազմի։ Իր ձիապահը մատուցեց իրեն ընտիր երիվար։ Նստեց
ու արագ սլացավ Գուրգենի մոտից, մոտեցավ նրան, մեր-
կացրեց սուրը, հանեց սաղավարտը և զրահը, որ գցել էր վը-
րանի։ Աղաղակեց նրա մոտից, որպեսզի թերևս ձայնից, զենքի
փայլից, սրի շողշողալուց, ձիու սաստիկ խրխնջյունից և
արագ, ուժգին վազքից ազդվելով, դառնա նրանց ձայնի կող-
մը, հասկանա, ետ դառնա կործանման ճանապարհից, դեպի ուր
դիմելով՝ գնում էր ընկնելու արյունարբու գազանների երա-
խը։ Եվ այնպես եղավ, որ աչքերը վեր բարձրացրեց ու տե-
սավ, որ հեծյալը վազքով գալիս է իր մոտից։ Հասկացավ, որ
զուժկան է, քանզի մերկ սուր ուներ ձեռքին և միայնակ գալիս



իր ետևներից։ Երիվարի երասանակները դարձրեց նրա կողմը։
Հավասարվեցին միմյանց, ետ դարձան և հասան իրենց բա-
նակատեղը։ Ապա յուրաքանչյուր զորական համարձակորեն դի-
մեց զենքի և հեծնելով ընտիր երիվարներ, մոտեցան իրար,
շարվեցին միևնույն տեղում, իրար կպան, ձուլվեցին, ինչպես
մեկ մարդ, քարացան ու կարծրացան, ինչպես բլրաձև վեմը
և դարձան երկաթի զորությանն անմատչելի։ Եվ ինչպես
ադամանդյա պարիսպ, իրենց անձերը տվեցին գաղթական-
ների մեծաթիվ բազմության համար, իբրև քաջ հովիվ, հան-
ձըն առան մեռնել հոտի համար։ Եվ մինչ [արաբները] դեռ
չէին հասել հայոց զորագնդին, Գուրգեն զորավարը փութով
պատվիրակներ հղեց Աբուհեշմի ու նրա հետ եղող զորա-
գլուխների մոտ՝ խնդրելու խաղաղություն, մինչև որ իրեն
պատասխան կգա գլխավոր զորապետից, բայց չլսեցին նրա
խնդրանքը։ [Գուրգենը] խոստացավ տալ նրանց գանձեր,
գյուղեր, ագարակներ, պայման կնքել և հաստատել վկանե-
րով։ Սակայն դրանից հետո էլ հրաման տվեցին զորքին՝ ել-
նել պատերազմի։

Այնժամ, երբ Հայոց զորավարն իմացավ որ ոչ մի բանով
չի կարող համաձայնեցնել նրանց, մանավանդ, որ միակամ
հրաման տվեցին [արաբացոց] զորքին՝ ելնել պատերազմի,
ուստի Գուրգենը իր զորագնդին հրամայեց պատրաստվել
պատերազմի, կազմել մարտաշարքեր և կռվել այլազգինե-
րի դեմ։ Իսկ ինքը բարձրացրեց ձեռքերը դեպի երկինք, հորդ
արտասուքներով աղոթեց, ասաց երեսուն ու չորրորդ և ութ-
սունութերկուերորդ սաղմոսները։ Եվ ահա այլազգիները մո-
տեցան մարտի մեջ մտնելու, իսկ զորագլուխները փութացին
զորքի հետ։ Հայոց զորագունդը շարժվեց նրանց դեմ՝ վիմաձև,
միմյանցից անքակ և ըստ ազգատոհմերի։ Արծրունյաց տոհ-
մից՝ Գուրգենը, Վասակը, Պելճը, Մուշեղը, Սահակը, Ապումկ-
դեմը և Աշոտը, Գնունիներից՝ Վահանը, Շապուհը, Ապուսեթը,
Պատրիկը, Ապուսելմը և Վարդանը, Գազրիկյաններից՝ Ապու-
սելմը, Վասակը և Վահանը, Ամատունիներից՝ Մուշեղը, Աթի-
թը և Սահակը, Վարաժնունիներից՝ Մլեհը, Ռստոմը և Վա-
րազշապուհը, Ընտրունիներից՝ Գևորգը, Հիսեն և Սահակը,
Ակեացիներից՝ Վասակը, Վահևունիներից՝ Քարարակը և Հը-
րահատը, Անձևացիներից՝ Պատրիկը, Գևորգը, Դավիթը, Հա-

սոնը և Դավիթ զորապետը։ Կարգեցին, հորինեցին ճակատը։ Ինքը՝ Գուրգեն զորավարը գլխավորեց ճակատի ձախակողմը, որպեսզի թիկունք լինի հետևակազոր մարտակիցների զորագնդին, իսկ աջ թևը տվեց Ապումկդեմին։ Մյուսները մեկմեկու ետևից կանգնեցին մարտակարգում։ Աղոթողները պաղատանքներ հղեցին տիրոջը, եկեղեցու սպասավորները ուժեղացրեցին օրհնությունները, քահանաները վեր բարձրացրին սուրբ ավետարանը և իրենց նշան կանգնեցրին սուրբ խաչը։ Ապա եկեղեցու սպասավորները կատարեցին տերունական կանոնը, իսկ երաժիշտները երգեցին փառավորին հաղթելու երգը, գոչելով «Տերը կխորտակի պատերազմները, տեր է նրա անունը»*։ Մյուսները տխրաձայն երգեցին հնոցի օրհնությունը, ի վերուստ զորավիգ կանչեցին աստծո հրեշտակին։ Եվ ռամիկների ամբոխից ոմանք մի կողմից քարերով ձեռնամուխ եղան պատերազմին։

Ապա խիտ շարքերով, հանգույն հարձակմամբ դիմեցին առաջ, բախվեցին զորագնդին, ճեղքեցին ճակատը ու ետ դարձրին այլազգիներին։ Գոչում էին միաբանաձայն, պատառոտում առյուծաբար, խոցում ինչպես վարազը և մատնում էին մահվան ու պարտության։ Յուրաքանչյուր տղամարդ գետին էր գցում իր ախոյանին և նետվում մյուսի ետևից։ Բազմակուտակ նիզակների սաստիկ բախումից, զենքերի փայլից, սրերի շողշողալուց և լարված աղեղների սուլոցից կայծակ էր դուրս ցայտում, ինչպես ամպի որոտից, և թվում էր, թե լեռն այրվում է հրից։ Պատերազմը երկարեց մինչև օրվա տասներորդ ժամը. այլազգիներին հասցրեցին մեծամեծ հարվածներ։ Սպանվածների թիվը 1800 էր, բացի բազում վիրավորները, ավարն ու ձերբակալվածները։ Պատերազմին միջամուխ էին նաև քահանաները, որոնք դաղթական բազմության մեջ էին։ Քանզի հոգևոր էր պատերազմը և ոչ մարմնավոր, պատերազմում էին սուրբ եկեղեցու և աստծո ժողովրդի համար։ Զարկեցին, հալածեցին և ի փախուստ դարձրին զորքին։ [Հայոց զորագնդի] կեսը հետամուտ փախչողներին, մինչև գիշերվա մթության թանձրանալը, դուրս հանեցին Հայոց սահմաններից ոմանց Նյիի, ոմանց՝ Ատրպատականի

* Ելից., ԺԵ, 3։



ու Պարսից կողմերը։ Բայց ումն Աշխե, որ եկել էր արքունի զորքի հետ Պարսից Գարդիից[374], չեկավ [արաբների] մոտ և նրանց հետ չմասնակցեց պատերազմին, այլ մնաց հեռվում՝ երկու հազարով։ Եվ երբ զորքը ջարդվեց, մտրակեցին երիվարների կողքերին և ամենից առաջ իրենք փախան։ Ապա վերադարձան սպանվածների գիակները կողոպտելու։

Բայց ոչ միայն Հայոց քաջերն արիացան մեծ պատերազմում, այլև անմարմին երկնազորը մարտակից եղավ Հայոց զորագնդին։ Քանզի մինչ սկսվեց պատերազմը և դեմ առ դեմ ճակատեցին, հանկարծակի մի մարդ՝ լույսի նմանությամբ, մտավ ռազմի ճակատի մեջ։ Գցել էր վրան լուսակեզ պատմուճան, փայլում էր իբրև արուսյակ։ Աջ ձեռքին ուներ սուր, ձախին՝ բուրվառ՝ լի խնկով։ Ինքը նստել էր սպիտակ ձիու վրա և ցանում էր ծուխը՝ ընդդեմ թշնամիների, և մեղմ քամին ծուխը ցանում էր նրանց երեսներին։ Սրի սաստկանալիս զորանում էր հայոց զորագունդը, իսկ մի փոքր նվազելիս ոգի էին առնում թշնամիները։

Ե

ՆՐԱՆԻՑ ՀԵՏՈ [ԿԱՏԱՐՎԱԾԸ]: ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵԿՆԵԼԸ ԲՈՒՂԱՅԻ ԿԱՆՉՈՎ ԵՎ ԱՅԴ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ: ԱՐՔԱՅԻՑ ԻԲՐԵՎ ԹԵ ՍՏԱՑԱԾ ԹՈՒՂԹԸ

Այնուհետև [արաբաց] զորագլուխներն ընկան տարակուսական մտքերի մեջ՝ հայոց զորագնդից իրենց զորքի կրած հարվածների պատճառով։ Գրել և իմաց տալ գլխավոր զորապետին չէին համարձակվում, ծածկել, թաքցնել չէին կարող, լռությամբ ու կեղծիքով ի վիճակի չէին հաճոյացնել զորապետին։ Հանձն չէին առնում հայտնել, ներկայացնել սպանվածների թվի մասին, և այն, թե սոսկ 900 տղամարդ զորեղ ձեռքերով հաղթեցին 15000-ի։ Որովհետև ստուգեցին և իմացան, որ ամեն մի [հայ] տղամարդուց ընկել էին իրենց երկուսը, բացի վիրավորները, ավարն ու ձերբակալվածները։ Հարկ եղավ ակամայից մեկառմեկ պատմել [զորապետին] կատարվածի մա-

սին։ Եվ զորապետի հանդեպ երկյուղից ու վատ կասկածից մեջտեղ բերեցին տեսիլքը և սուտ հրեշտակը, որ երևաց երկնից։ Դրանով մի փոքր ցածրացրին [գայրույթի] լեռնացած ալիքները, հանդարտեցրին մրրկալից կոհակները և բռնավորի գազանությունը վերածեցին ընտանության։ Ապա հրաման տվեց ամբողջ երկրին, որ յուրաքանչյուր ոք վերադառնա իր երկիրը և տիրի իր ժառանգությանը, բնակվի խաղաղությամբ, ապրի ըստ իր կամքի, ոչ ոք չհալածվի իր բնակության տեղից և չապրի օտար երկրում պանդխտությամբ։ Այս հրաման-պատվիրանը տվեցին ի օժանդակություն իրենց խաբեության, որով ձեռք բերեցին [կամեցածը] և մոլորեցրին [հայերին]։

Այնուհետև [Բուղան] դարձյալ ուղարկեց Համդոյին՝ Պարսից ամիրային, արքունի զորապետներից[375] ազգով թուրք Հեթումին և նրանց հետ 10000 հեծյալներ, որոնք սպառազինված էին ավելի լավ, քան նախորդները։ Ապա գրեցին մի թուղթ, կնքեցին խորամանկությամբ, կեղծավորությամբ ու խարդախությամբ, ըստ Իսմայելի որդիների հնարագիտության։ Եվ մտան այնտեղ, ուր բանակել էր հայոց զորքը։ Թուղթն ուղարկեցին [Գուրգենին]։ Այն լի էր սատանայական հնարների թույնով, իբրև կապարճ, որ լի է թունավոր նետերով՝ աղեղից ծածկաբար դեպի նպատակը թռչելու համար։

Իսկ [Գուրգենն] ընթերցեց նամակը, ուր գրված էր երդում՝ ի խոստովանություն նրանց կանանց և մոլար մարգարեի։ Հանձն էր առնում տալ նրան իրենց բնիկ տերության իշխանությունը։ [Երդվում էր] իրենց Մուհամմեդով։ [Գուրգենը] ելավ գնաց փառքի և իշխանասիրության ցանկության ետևից, որով և սխալվեց։

Երբ նա մոտեցավ բանակին, իրեն ընդառաջ հանեցին զորագնդեր, իսկ երբ մտավ Բուղա զորապետի մոտ, սա հոգ տանելով զորքի կրած վնասների ու ջարդվելու մասին, չամբաստանեց իշխանին, որպես ապստամբի։ Նույնիսկ նրա առջև փողփողում էին դրոշներն ու նշանակները, գլխին դրեցին իշխանական թագ և հագցրին արքունական շքազգեստ։ Սուրը կապեցին մեջքին, նստեցրին մեծազարդ ջորու վրա և նժույգներ [կանգնեցրին] առջևից ու ետևից՝ սպառազինված զենքով ու զարդարանքով։ Փողերի ձայնը, թմբուկների դոփ-



յունը և երաժշտական այլ գործիքների ձայները հնչեցին չորս կողմը։ Այս ու այնտեղ սպառազեն զինվորների բազմությունն էր. մահակավորները, սակրավորները այս ու այնկողմ էին քշում վրա վազող ամբոխին։ Մունետիկը աղաղակում էր, թե՝ «Գուրգենը Վասպուրականի իշխանությունն առավ իր ձեռքը և իր եղբոր՝ Աշոտի փոխարեն, տիրում է նրան»։

Իսկ երեք օր անցնելուց հետո մի թուղթ ուղարկեցին Գուրգենին, գրված Բուղայից՝ լի դավանությամբ և կնքված արքայի մատանիով, իբրև թե այն եկել էր արքունուստ՝ թագավորից։ Թղթի պատճենը, որ կեղծեցին և տվեցին նրան այս էր.

«Բուղա, գլուխ զորապետաց արաբների ընդհանուր թագավորության. Ջաֆրը, որ իշխում է ծովին ու ցամաքին, հավասար է մեր մարգարե Մուհամմեդին, հավատարիմ միջնորդ է աստծո և մարդկանց [միջև] և հարավային թագավորության բոլոր ժողովուրդների արքան է, որի ձեռքերում են հաստատված մահն ու կյանքը, հղեցի քեզ ելնել Հայոց երկրի բոլոր բնակիչների դեմ։ Քո ձեռքը տվեցի իմ զորքը, իմ մեծամեծ զորագլուխներով հանդերձ և բազմաթիվ ժողովուրդների, որոնք նվաճվել են իմ ձեռքով, թագավորազներով, որպեսզի Աշոտին և իր եղբայրներին փութով մեզ մոտ հասցնես։ Դու, ահավասիկ, մտար Հայոց երկիրը, անցար իմ թշնամիների կողմը և ապստամբներին միաբանեցիր քեզ հետ, քանզի հապաղեցիր իմ հրամանների մեջ։ Արդ, այս նամակը հասնելուն պես փութով Գուրգենին և իր ազգատոհմին, Վասպուրականի ազատներով հանդերձ, կապկպված մեզ մոտ կհասցնես։ Ապա թե ոչ՝ կքննեմ քո արարքը»։

Ապա տվեցին կարծեցյալ թուղթը, իբրև արքայից ուղարկված. «Ընթերցիր այդ,— ասաց,— մեղադրանքի տակ մի գցիր ինձ և մի կարծիր, թե նենգությամբ եմ վարվում քեզ հետ, վնաս եմ տալիս և չեմ պահում մեր երդումը. ինքդ տես և իմացիր, որ ես մեղք չունեմ դրա մեջ և ոչ էլ կարողություն՝ արձակելու քեզ»։

Այնժամ նրա ոտքերը դրեցին երկաթե կապանքների մեջ։ Նրա հետ էր նաև իշխան Գրիգոր Արծրունին, որը և նահատակվեց թագավորի առջև, հանուն Քրիստոսի բարեպաշտ դավանության։ Ապա դրեցին ուղտերի վրա և շարժեցին դեպի

Սամառա, տարան գցեցին արքունի բանտը, որտեղ էր Աշոտ իշխանը և այլ նախարարներ՝ Արծրունյաց տոհմից։

Նույն ժամանակ, երբ [Հոփսիմե] տիկինը տեսավ, որ իր որդիներին վարեցին գերության, ինքը նույնպես գնաց նրանց ետևից, մազերը փետելով, օձիքը պատռելով, լաց ու կոծով, ինչպես ասել է Միքիա Մարգարեն. «Քո մատղաշ որդիների համար [մազերդ] փետիր և կտրիր, խուզվածքը շատացրու իբրև արծիվ, քանզի քեզանից գերեվարվեցին»*։

Այնժամ Հայոց բոլոր նախարարներն սկսեցին ցրվել հեռանալ միմյանցից։ Գնացին և գրավեցին անմատույց տեղեր, ոմանք փութացին մտնել Վասպուրականի ամրոցներն ու բերդերը։ Իսկ զորքը քայքայվեց և ցրվեց երկրի երեսով մեկ։ Եվ այսպես եղավ, որպեսզի կատարվի ասածը. «Արթնացի՛ր, ով սուր, հովվի վրա և մարդու՝ նրա ընկերոջ վրա։ Զարկիր հովվին, և կցրվեն ոչխարները»**, Եվ դարձյալ ասում է վերևում այն, ինչ տերն ասաց մարգարեի բերանով***։

Այնժամ, երբ [Բուղա] զորապետն իմացավ, որ ամեն ինչ հաջողվեց ըստ իր կամքի ու անօրեն թագավորի հրամանի, և գլուխ եկավ նրանց չար մտադրությունը, որ խորհել էին Վասպուրական աշխարհի իշխանության նկատմամբ և վերջ տվեց բոլոր զորավոր տղամարդկանց, ո՛չ ոք չկար այնուհետև, որ կարողանար իր սահմաններում փակել նրա առաջը։ Այնուհետև սկսեցին առանց երկյուղի համարձակությամբ սփռվել տարածվել երկրի երեսին արաբների բոլոր ցեղերը, որ եկել էին նրա ետևից՝ իրենց ընտանիքներով։ Եվ ձեռնամուխ եղան բաժանելու երկիրը իրենց միջև։ Վիճակ էին գցում, լարեր ձգում սահմանների վրա և բնակվում էին երկրի ամրոցներում առանց վախենալու։ Մինչևիսկ որտեղից մի փոքր կասկած ունեին, այնտեղ նույնպես հաստատվեցին, առանց երկյուղի։ Եվ մեծ նեղություն էր ամբողջ երկրում, որպիսին չի եղել ի սկզբանե աշխարհի և այլևս չի լինելու։ Ավերակներ դարձան գյուղերը, ագարակները և ավանները,

* Միքիա, Ա, 16։ Բնագրում այս խոսքերը սխալմամբ վերագրվում են Ամովսին։

** Զաք., ԺԳ, 7։

*** Հմմտ. Մարկ., ԺԴ, 27։



գրկվեցին զարդարանքից ու վայելչությունից։ Երկրի երեսից վերացան զանազան բույսերի ու ծառերի տեսակները։ Ինչպես Հովել մարգարեն է ողբում վրա հասած թշվառության վրա, ասելով. «Երկիրը նրա առաջ իբրև դրախտ զվարճության և ետևից ապականության դաշտ [պիտի լինի]։ Իբրև եղեգների միջով ընթացող հուր, այնպես հասան մեզ վրա, ինչպես մարախ, իբրև ջորյակ և թրթուր՝ խառնիճով հանդերձ։ Վրա հասան մրգատու ծառերի կամ դյուրությամբ թառամող խոտաբույսերի, այնպես վատնեցին, սպանեցին մարդկային ցեղի զորությունը իրենց ունեցվածքով»*։ Այսպես է գրված Հովել մարգարեի հայտնության գրքում։

Եվ [Բուղան] հրաման տվեց այնուհետև, որպեսզի գերիների բազմությունը վաճառքի հանեն այլևայլ ցեղերի ու ժողովուրդների մեջ, ում որ դուր կգան։ Իսկ ինքը եկավ [illegible] Դվին քաղաքը, այնտեղ պատրաստեց իրեն ձմեռոց, մինչև գարնանային ժամանակը, ունենալով իր հետ բազում կապյալներ։ Մեր երկիրն ավերվել էր իր նկումուտի ժամանակ։

## Զ

### ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՉԱՐ ՀԱՆՑԱՆՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ԻՇԽԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ, ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԸ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՔԱՋԱՆԱՑԻ ՆԵՂԱՑԱՆԿԱԼԸ ՀԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հույժ վշտալի և դառնությամբ լի են այս պատմության մեջ եղած հիշատակարանները, մեր մեծ նախարարների ու իշխանների հանձնառության պատճառով։ Խոսքս լի է արտասուքով և բավականությամբ չէ, որ պատմում եմ նրանց կրոնատարբեր մոլորության, Հոր, Որդու և Սուրբ Հոգու հանդեպ առաքելական եկեղեցու ուղիղ, անբիծ և առաքելաքարոզ հավատի դավանությունից շեղվելու մասին։ Չեմ կամենում պատմել, գրի առնել մեր իշխանների կործանումը և այն, որ ավելի շատ կրեցին հոգու տառապանքներ, քան՝ մարմնի։ Բայց ակամայից ու առհարկի մի փոքր պատումով գրելու

* Հմմտ, Հովել, Բ, 3, 5, 25։

եմ կարգով և համառոտակի, սուղ ու սակավ խոսքերով անցնելու եմ այս պատմության դեպքերի վրայով, քանզի կարողություն չունեմ լրությամբ ծածկել, թաքցնել, անհայտ թողնել մեզ հասած անհուն ու անբավ վիշտն ու աղետները։ Եվ արդ, պատմելու եմ փոքրիշատե հայտնի դարձածների՝ սրանց ժամանակ և դրանից հետո կատարված իրողությունների մասին, որոնց առանց երկբայության կհավատաս, իբրև ճշմարիտ ու անսուտ պատմողի։

Մի պարապ օր, մինչ [Աշոտ] իշխանն ու նրա հետ եղողները՝ իրենց ազգատոհմերով և ուրիշների հետ այլ տոհմերից, բանտում էին, և ահա փողերն հնչեցին ուժգին ձայնով, քաղաքին իմաց տվեցին, թե թագավորը ելավ նստեց դատաստանի։ Մունետիկները հայտարարեցին, որ քաղաքի բոլոր մեծամեծները, արքունի իշխանության գլխավորներն ու իշխանները հավաքվեն այնտեղ, որպեսզի կապյալներին բերեն բազմության առջև՝ հարցափորձի և քննության։ Բոլոր մեծամեծները, խառնիճաղանջ ամբոխով հանդերձ, վրա վազեցին, ոչ միայն թագավորի հրամանով փողերի ու կոչնակների աղաղակներից այլև փութացին տեսնել, թե ովքեր և ինչպիսիք են նրանք, որոնց քաջության համբավն ու հռչակը տարածվել էր մինչև աշխարհի ծայրերը, որ մինչև իսկ թագավորն ստիպված էր եղել իր ամբողջ ուժով ու զորությամբ զորք հավաքել բոլոր ազգերից, որ հնազանդվել էին իր իշխանությանը, թագավորներից ու թագավորազուններից, մեծ չարչարանքով և բազում ժամանակներ անդուլ անդադար հոգ տանել, գիշեր ու ցերեկ ընկնել մեծ տարակուսանքի ու վարանման մեջ։ Գիշերվա քունը նույնիսկ նրան քաղցր չէր թվում և տվնջյան զվարճությունները ոչինչ էր համարում, մինչև որ հազիվ կարողացավ մի տեղ գցել նրանց իր տերության զորականների նենգապատիր խարդախության ցանցը։ Ամենքն ընթացան դեպի ատյան, տեսնելու նրանց և վերահասու լինելու, թե ինչպես է կատարվելու դատաստանը։

Եվ թագավորը ելավ նստեց դատաստանի՝ բարձր մի բեմի վրա, երկրից հավաքված ամբոխի անհուն բազմության մեջ և հրամայեց բերել առաջը կապյալներին, հարցնել ու լսել նրանց։ Հոնքերը կիտել էր, մեծաբանում էր լի հոխորտանքներով, խրոխտանում, սպրդենում, եռացնում ու դուրս



էր մղում ժահահոտ մաղձի թունալից դարշահոտությունը։ Արտմտեց անզուսպորեն, բարկությունից տաք արյունը փոթորկվեց, ու սկսեց թափել իր մահաշունչ թույնը կապյալների վրա, իբրև իժի թույն և անհիմն կերպով կորստի ու ապականության մատնել շատերին։

Իսկ երբ նրանք կանգնեցին թագավորի առջև, հարցեր տվեց հեգնական խոսքերով, մեղադրեց ամբարհավաճությամբ և խորամանկ խարդախությամբ քողարկելով խոսքերն ասաց. «Ո՞վ եք դուք և ո՞ր աշխարհից, ի՞նչ է ձեր անունը։ Արդյոք դո՞ւք եք իմ դեմ ապստամբածները»։

Պատասխան տվեցին, ասելով. «Ինչո՞ւ ես, ո՛վ աստվածասեր թագավոր, խոսում մեզ հետ իբրև ծառաների ու ապստամբների, իբրև անծանոթների կամ իբրև անընտել վայրենիների և նախքան տանջալից խոշտանգումներով մեզ պատժելը, քո խոսքերով, ինչպես քարերով, հարվածում ես մեզ և շտապում տագնապի մեջ ձգել մեր հոգիները։ Գիտես նաև ով ենք մենք, որտեղից, ումից և թե ինչպես է մեր անունը լավ հայտնի է քեզ։ Մենք չենք ապստամբել քո ինքնակալ թագավորության դեմ։ Սակայն բազմացան մեր փորձությունները, քանզի մեղանչեցինք մեր տեր աստծո առաջ, ետ կանգնեցինք նրա պատվիրաններից, և աստված մեզ մատնեց քո ձեռքը։ Ահավասիկ եկել հասել ենք քո առջև, ինքնակալ թագավոր, կենաց և մահու տիրակալ։ Ինչպես տերը հրամայի, [այնպես] կլինի»։

Թագավորն սկսեց խոսել, ասելով. «Բազում ժամանակներ ի վեր թագավոր են եղել մեր նախնիները և հասել են մինչև մեզ։ Բազում ժողովուրդների ու թագավորների նվաճել ու հնազանդեցրել ենք մեր տերությանը և ոչ ոքի հանդեպ այնքան խնամք ու հոգ չենք տարել, որչափ՝ ձեր և ձեր երկրի։ Դուք ահավասիկ միշտ ինձ հակառակ էիք մտածում, չէիք ընդունում, երբ ձեզ մոտ էին գալիս մեր երկրի զորապետները, վերակացուները, և արքունի հոգսերի խնամատարները, որոնց ուղարկում էինք մենք։ Զորք էիք գումարում, այրուձի կազմում, արծարծում կռիվներ, պատերազմներ, ռազմի էիք ելնում և մեր զորքը մատնում սրի, մեր ազգատոհմը պաշարում մեծ նեղություններով, ավերում երկիրը, խափանում դրված հարկերը։ Եվ մենք ահա անփույթ եղանք այդ ամենի հանդեպ, որ-

պետք է հայտնի լիներ այն սերն ու հոգատարությունը, որ մենք ունեինք ձեր հանդեպ։ Բայց քանի որ այժմ տեսնում ենք ձեզ անձնեղ, գեղեցիկ, դեմքի պատշաճ ու վայելուչ գեղեցկությամբ, և քանի որ դուք եղել եք այս աշխարհի թագավորների որդիներ, արժանի եք գթության։ Դուք զորավոր տղամարդիկ եք։ Ձեր դեմքերից երևում է, որ ձեր մեջ կա մեծ զորություն, սակայն այդչափ վնասներ եք գործել իմ հանդեպ։ Եվ ահա եկել հասել եք իմ առջև դատաստանի՝ անտրտում երեսով, անխիղճ համարձակությամբ, որպես անմեղներ և բարեգործներ, մեր ամեն մի ցանկությունը կատարողներ։ Բայց ես խնայելու եմ ձեզ, վերջ չեմ տալու ձեր կյանքին, իմ հանդեպ ձեր կատարած անպիտան արարքների, վնասների դիմաց։ Առանց տանջանքների, ու դառն հարվածներով լի չարչարանքների մեջ մտնելու, հնազանդվեք մեզ և մեր մարգարեին՝ Մուհամմեդին, ընդունեցեք մեր աստվածատուր հավատը և կրոնը, որը հեռու է ստությունից և լի է այն ամենով, ինչը կեղծիքի դեմ է։ Հեռու մնացեք ձեր սնոտի ու մոլար պաշտամունքից, որով կաշկանդվել եք Քրիստոսի համար մեծ համառությամբ։ Եվ մենք անտես արեցինք ձեր կատարած վնասակար գործերը, որ մեղա գաք մեր առջև և ձեր անձերը օգուտ առնեն, իսկ դուք, ձեր որդիները առնեք ու տիրեք ձեր երկրին, տուն ու տեղին։ Եվ տանջալից մահվամբ դուրս չեք գա ձեր բնակությունից ու չեք ապրի դժոխքում»։

Պատասխան տվեցին սուրբ Հայրապետ Հովհաննեսն ու նախարարները, ասելով. «Քո իսկ ինքնակալ թագավորության և ձեր առաջնորդի օրենքներում գրված է, որ չիք որևէ ճշմարիտ ու արդարացի վկայություն և հույժ հավաստի ու ընդունելի է բազմության վկայությունը՝ մեծ ու փոքր բաների կամ կենաց մահու մասին։ Եվ միայնակ, արհամարհելով. առանց որևէ մեկի, կարող եք դատաստան տեսնել, ինչպես [վարվում] է նաև ձեր մարգարե կոչեցյալ Մուհամմեդը, քանզի գոնե մեկը չկա, որ պաշտպանի ճշմարտությունը, ուսուցանի նրան, ուր մնաց՝ շատերը։ Եվ արդ կան 111 մարգարեներ, որոնք իրենց ժամանակ առանձին-առանձին, ստույգ ու ճշմարտապես, մեկ մարդու պես վկայել են Քրիստոսի աստվածությունը, չենք ասում ավետարանն ու նրա առաքյալները։ Իսկ մենք ընդունում և հավատում ենք ճշմարտու-



թյանը, չենք կարող այն փոխանակել ձեր սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստահոդ, պաճուճազարդ և մոլոր ուսման հետ։ Ինչպես քո կամքը կթելադրի, թող մեզ վրա հասնի պատուհասը։ Պատրաստ ենք կապանքների, բանտերի, գանահարության, հրի, սրի, ջրի, տանջալից հարվածների և ամեն տեսակ չարչարանքների»։ Այս և սրանից էլ առավել, բազմաթիվ անգամ, կարգով ասացին Քրիստոսի հավատքին հույժ պատշաճող խոսքեր։ Բայց քանզի ոչ ոք այն ժամանակ գրի չառավ դրանք, ինչպես թագավորների սովորությունն է, ուստի մենք, ինչպես որ պետք է, չենք կրկնում։

Այնժամ թագավորը հույժ սրտմտեց, կարմրատակեց, հոխորտաց, մռնչաց իբրև արյունարբու գազան և հրաման տվեց հանել ատյանից դուրս։ Հղեց պատգամներ, ասելով. «Վայել չէ մեր թագավորության խոսքերով պայքարել որևէ մեկի հետ և երկարաբանել, ինչպես արեցինք ձեզ հետ, որն այլևս չենք անելու։ Եվ արդ քանզի խոսեցի ձեզ հետ ողորքական խոսքերով, բայց դուք թերևս դրանից գայթակղվեցիք ու խաբվեցիք և ամուր եք ու համառ։ Արդ խնայում եմ ձեզ, իսկ դուք առանց հապաղման և ինձ չարչարելու, հրաժարվեցե՛ք Քրիստոսի երկրպագությունից, և ձեր անձերը օգուտ կառնեն ու կապրեք։ Իսկ ես ձեզ եմ թողնում ձեր ապստամբության մեղքը։ Վայելեցեք ինձ հետ և տիրեցեք ձեր աշխարհին»։

Իսկ նրանք թեպետ մի փոքր չկամեցան ետ դառնալ աստվածորդու երկրպագությունից, քանզի նրանց սրտերում զգվել էր սուրբ առաքյալների հավատը, — բայց որովհետև չունեին արմատներ, արագորեն չորացավ բանսարկուի այրող շնչից։ Քանզի նրա փնչալից կայծեր էին ցայտում, և «նրա ռունգերից ելնում էր հնոցի ծուխ ու բոց»*, ինչպես գրել է Հոբը։ Եվ իրենց թուլամորթության, անհաստատ ու հողդողդ խելքի պատճառով մարդկային փառքն առավել սիրեցին, քան աստծո փառքը, քանզի «Այս ժողովուրդը միայն շրթունքներով է պաշտում ինձ, և իրենց սրտերը հեռացած ու անջատված են ինձնից»**։ Եվ աստծո սիրուց խոտորվելու պատճառով նրանց վրա թափվեց մահվան սարսափը, մանավանդ որ չկամեցան հեռանալ այս հարափոփոխ աշխարհի փուչ կյանքից

* Հմմտ. Յոբ., ԽԱ, 21։
** Մատթ., ԺԵ, 8։

և ասացին. «Հանձն ենք առնում արքունական հրամանը»։ Մտքներում գրել էին իբրև թե առերես հաճոյացնել թագավորին, բայց ներքուստ, մտքներում պահեցին հավատն ի Քրիստոս։ Սակայն անհնար է այս երկուսի միատեղվելը, և ո՛չ ոք չէ կարող ծառայել երկու տիրոջ, ինչպես ասել է փրկիչը, և ինչն իր տեղում ցույց կտամ։

Այնժամ փութով թլփատվեցին, դարձան մուսուլմաններ։ Հետևեցին Բագարատ Բագրատունուն, որը բռնվեց այլ զորապետից՝ Խլաթ քաղաքում։ Նա Տարոնի իշխանն էր, տարվեց Սամառա, դարձավ աստվածուրաց և բացեց ճանապարհ՝ լայն ու ընդարձակ, կորստյան շավիղ, որը տանում է անդարձ կորստի։ Ինչպես Բոռվամր[376] Նաբատի որդին, որը մեղանչեց, անիրավություն արեց Իսրայելի դեմ, ինչը գրված է Իսրայելի թագավորների գրքում։ Նրա մոլորության հիշատակը, որով խոտորվեց և մոլորեցնելով կործանեց բազում ցեղերի, կա և կմնա սերնդե-սերունդ, մինչև հավիտյան։

Իսկ այս Վասակը, որին հիշեցինք վերևում, մեծ նախարարների հետ՝ Արծրունյաց ազգատոհմին ազգակից լինելու պատճառով, նրանց բռնվելուց առաջ ելավ գնաց իր կամքով Սամառա և դարձավ աստվածուրաց։ Նրա մեջ որջացել, բուն էր դրել սատանան, և իր զորությամբ, ամեն տեսակ հնարներով, խորամանկությամբ ամուր գոտիով կապվել էր երիցս թշվառականի հոգուն, որն իր սատանայական գործի հաջողության համար կազմեց խարդախության բոլոր հնարագիտությունները, իբրև պատշաճ զարան՝ թունավոր նետերով գետի խավարը թուլող խավարամած հոգիների համար։ Այս մարդն այնպես արեց, որ հաստատ ու անքակ հագավ բանսարկուի զորավոր պատյանը։ Եվ որպեսզի չերկարի այն, ինչ կա սրա ապիրատ ու ինքնակամ, անզգուշ ու անխիղճ, անպատկառ ու անամոթությամբ լի մոլորության մասին, չենք հիշատակի սրան նախարարների մեջ, քանզի չատեց անօրենությունն իբրև անամոթության և, ինչը մեղք գործելուց առավել վատ էր, իրեն հանցավոր չհամարեց։ Որովհետև ողջախոհների համար ամենավատթար տանջանքը ամոթն է, սրան պետք չէ հիշատակել [նախարարների] մեջ, որոնք թեպետև մոլորվեցին ու կործանվեցին, բայց նաև զղջացին ու ետ կանգնեցին, երբ վերադարձան գերության մեծ կարավանից, բռնա-



վորի երախից։ Բայց սա թե՛ գնալիս, և թե՛ վերադառնալիս, վարվեց նույն ցանկությամբ և նույն մոլորությամբ, լրբացավ ու լցվեց թշվառությամբ։ Եվ ինչպես պատմում են նրա մասին, որ աստծուց ետ կանգնեց և իր երեսը դարձրեց աստվածորդու երկրպագության ճշմարիտ դավանությունից, ինչպես ասել է՝ «թիկունքները դարձրին ինձ և ոչ թե իրենց երեսը»*, Այս ժամանակվանից իսկ դարձրեց երեսը ետ՝ թիկունքի կողմը և ժառանգեց մեղքեր, ձախողակ, դեպի ետ խոտորվելու դիմաց։ Առանց ախոյանի պարտվեց, առանց զենքի խոցոտվեց և առանց հողմի նավաբեկվեց, կամովին անձնիշխանաբար մոլորվեց ու ելավ գնաց իր բաղձանքի իշխանության, ինքնամոլորության ու անդարձ կորստյան ետևից։ Սա ապրեց առանց հավատի և մեռավ անհույս։

Իսկ երիցս երանելի սրբերը՝ տեր Հովհաննեսը, Արծրունյաց եպիսկոպոսը, երանելի Գրիգոր քահանան և իշխան Գրիգոր Արծրունին խրախուսվեցին աստծուց, կանգնեցին դատաստանի՝ հոգևոր պատերազմի մեծ ասպարեզում։ Աներկյուղ համարձակությամբ, բանիբուն համառոտությամբ, ինչպես կարգն է, դրեցին բռնավորի առջև Աստվածաշունչ գրքից գեղեցիկ ու հարմար խոսքեր՝ Քրիստոսի հավատի մասին, պախարակեցին նրանց մոլոր մարգարեին, արհամարհեցին նրանց խոստացած պարգևները և ասացին. «լավ է մեռնել Քրիստոսի համար, քան առժամապես վայելել [կյանքը] մեղքերի մեջ»։

Այնժամ բռնավորը հրամայեց կապել նրանց երկաթե կապանքներով և գցել բանտի մեջ։ Վայել էր եպիսկոպոս Հովհաննին կրելու լուծը իր անվանակցի՝ Հովհաննես Մկրտչի, որին Հերովդեսը կապել և գցել էր բանտ։ Գեղեցիկ էր նաև Գրիգոր Արծրունի իշխանը, որը ջանաց իր անվանակցի՝ սուրբ Գրիգորի պես հանձն առնել մտնելու խոր ու խավարոտ վիրապը՝ կապանքներով հանդերձ։ Հույժ վայելուչ էր նաև երանելի Գրիգոր քահանան, որ միաբանվեց նրանց հետ և լրացրեց երրորդությունը, որպեսզի Քրիստոսը չհեռանա իրենցից, ինչպես ասել է Քրիստոսը, «ուր երկու կամ երեք հոգի հավաքված են հանուն ինձ, այնտեղ եմ և ես՝ նրանց մեջ»**։ Եվ միա-

* Երեմ., Բ, 27։

** Մատթ.,ԺԸ, 20։

սին սաղմոս էին ասում. «Քեզ համար ենք մեռնում հանապազօր։ Համարվում ենք մորթվելու ոչխար»*։

Թագավորն իմացավ, որ հաղթվել է սրբազան այրերից, մանավանդ քաջ Գրիգորից, քանզի կարծում էր, թե դյուրությամբ նրանց կգցի իր խաբեության որոգայթը՝ ճշմարտությունից [երես] դարձրածների նման։ Եվ երբ իր հույսերն ի դերև ելան, նա ընկրկեց ինչպես մեքենան ադամանդյա, որ ամուր է պարսպից։ Նրանց [օգնության] հասավ Քրիստոսը։ Ապա [արքան] խստությամբ հրամայեց իր ծառաներին կապել կրկնակի շղթաներով և գցել գետնափոր բանտը։

Երբ սրբերն իմացան չարի անհուն պատերազմը, զինավառվեցին և իրենք, որպեսզի հանապազ կռիվ մղեն և անխափան սաղմոսերգությամբ միշտ դեպի վեր առաքեն իրենց անուշաբույր աղոթքները։ Ամենահաղթ Քրիստոսից աղերսեցին հաղթել մեծ պատերազմում։ Զինավառվեցին պատերազմի ընթացքում, հագան արդարության զրահ, մեջքներն ամրացրին ճշմարտությամբ, ոտքերին հագցրեցին Ավետարանի պատրաստած խաղաղությունը և մեջքերին, որպես սուր, կապեցին Քրիստոսի պատգամը, որը հատու է, քան ամեն մի երկսայրի սուր։ Թիկունքներին, որպես վահան, դրեցին ի սրտե անբիծ հավատը, բարձրացրին իրենց ձեռքերը դեպի երկինք, իբրև հաստ աղեղ։ Աղոթքի զորությունն, իբրև լայնալիճ աղեղից նպատակին ուղղված նետ, հարվածեց սատանայի գլխին, դիաթավալ արեց և կործանեց։ Հաղթության համար գոհություն մատուցեցին Քրիստոսին, ասելով. «Օրհնյալ է մեր Տեր Աստվածը, որ վարժեցրեց մեր ձեռքերը մարտնչելու և մեր մատները՝ պատերազմելու»**, և շարունակությունը։ Այս պատերազմում ոչ միայն երանելի եպիսկոպոսն ու ճգնավոր քահանան էին մարտակից իշխան Գրիգորին, այլև հրեշտակների զորքը, քանզի՝ «Տիրոջ հրեշտակների բանակները իրենից վախեցողների շուրջն են և պահպանում են նրանց»***։

Եվ սրբերը մնացին կապանքների մեջ երեք ամիս, գետնափոր բանտում։ Բազմողորմ Աստծուց խնդրեցին անցավոր այդ

* Սաղմ., ԽԴ, 22։
** Սաղմ., ՃԽԴ, 1։
*** Սաղմ., ԼԴ, 8։



ժամանակում մնալ անսայթաք ու հաստատուն հավատքով։ Արտասուքներով ու հեծեծանքներով լի հիշեցին վերին Սիոնը՝ սուրբ մայրաքաղաքը, ինչպես Աստծո ժողովուրդը, որ նստած գետի ափին լալիս էին՝ Սիոնը հիշելիս կամ ինչպես նույն իրենք՝ երեք մանուկները, որ կապվել ու գցվել էին նեղության հնոցը։ Ամեն գիշեր կրկնում էին նրանց օրհնանքները և ամեն ինչ պարգևող Քրիստոսից խնդրում նույն օրհնության ցողը։ Հույժ զվարճանում էին Քրիստոսի քաղցր խոսքով, ինչը քրիստոսասեր անձանց անեղծանելի վճիռն է. «Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ և ես կհանգստացնեմ ձեզ»*։ Եվ որ՝ «ով ինձ համար կորցնի իր անձը, պիտի գտնի նրան»**։ Երեք տարի սրբերը կերակրվեցին իրենց ձեռքի վաստակով, ինչպես նույն ինքը՝ սուրբ Պողոսը, թե՝ «Իմ և ինձ հետ եղողների պետքերը հոգացին այս ձեռքերս»***։

Իսկ չորրորդ տարում դարձյալ, նախկինից ավելի մեծ ու սաստիկ մեքենայությամբ Գրիգորին գցեցին նեղության քուրան, որպեսզի իր պայծառ սուրբ ու մաքուր ոսկին կռակի աստվածորդու պատկերին։ Քանզի Հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորն ասում էր, թե՝ «Օձերի մեջ էր իմ բնակությունը, և վխտում էին իմ մարմնի վրա»։ Իսկ Գրիգոր իշխանը բնակվում էր մարդակեր գազանների և խուժադուժ բարբարոսների խառնամբոխի մեջ, որոնք ավելի չար են, քան մեզ մոտ եղած թունավոր գազանները։ Որպես բարի մխիթարանք, ունեն մարգարեի խոսքերից, ուր ասվում է, թե՝ «Մատաղ երեխան իժի բնի մեջ պիտի դնի իր ձեռքը և չպիտի վնասեն նրան»****։ Եվ Քրիստոսից խնդրեց դուրս գալ այսանցիկ մարմնից և մտնել Աստծո մոտ։ Քրիստոսը նրա պաղատանքը անտես չառավ, թույլ տվեց նրան կատարելու քառասներյա սուրբ [պահքը], խաչակից լինելու Քրիստոսին մինչև զատկին արժանանալը։ Եվ սուրբ ճգնավորները զվարճացան հոգեգալստյան օրը, բազմեցին Քրիստոսի շուրջը, ինչպես առաքյալի մանուկները։ Իսկ Քրիստոսի համբարձվելուց 15 օր

* Մատթ., ԺԱ, 28։
** Մատթ., ԺԶ, 25։
*** Գործք առաք., Ի, 34։
**** Հմմտ. Եսայ., ԺԱ, 8։

հետո Գրիգորը նահատակվեց Քրիստոսի կանչով՝ ինչպես նա է ասել. «Երբ ես բարձրանամ Հոր մոտ, ամենքին կձգեմ ինձ մոտ»*։ Ապա բարձրացրեց իր ձեռքերը դեպի երկինքը և ասաց. «Տեր, հիշիր ինձ, երբ գաս քո արքայությամբ»**։ Եվ օրհնեց ամենքին՝ հեռավորներին ու մերձավորներին, նրանց ավանդեց աստծո շնորհները։ Իսկ իրեն հանձնեց հրաշալի Եպիսկոպոսին ու ճգնավոր քահանային և հոռի ամսի 5-ին, ուրբաթ օրը հանգչեց բարի խոստովանությամբ, մեր տեր Հիսուս Քրիստոսի մոտ, որին փառք հավիտյան. ամեն։

Հավատացյալները երբ տեսան, որ բարի խոստովանությամբ ննջեց իշխան սուրբ Գրիգորը, գոհություն մատուցեցին ամենազոր Քրիստոսին, որ զորացրեց սուրբ վկային և ամոթով արեց սատանային։ Ապա պատվական ու քրիստոսասեր մարդիկ մտան թագավորի մոտ, խնդրեցին սրբի մարմինը և վերցնելով՝ պատանքեցին ու դրին գերեզմանի մեջ։ Սրբի մահվան օրը համայն Ասորեստանը տոնախմբություն արեց մեծ ուրախությամբ, հանուն մեր տեր Հիսուս Քրիստոսի, որին փառք հավիտյան. ամեն։

## Է

### ԲԱԳԱՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՀԵՐՁՎԱԾԻ ՄԱՍԻՆ, ՈՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒՐԱՑՈՂԻՆ ԱՎԵԼԱՑՐԵՑ ՆԱԵՎ ՍԱ, Ի ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՇԱՏԵՐԻ։ ՄԻ ՔԱՆԻՍԻ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բագրատն իր ուրացության ժամանակ ասաց, թե տառապանքների, վտանգի պատճառով ուրացությունը ոչնչով չի վնասի, եթե սրտում թաքուն պահպանի հավատքի խոստովանությունը։ Եվ այս ըստ եկեղեցականների[377]։ Բայց ինձ այնպես է թվում, որ եկեղեցականների աղանդը վաղուց մարել ու խափանվել էր սուրբ և առաքինի վարդապետներից, որոնց ասված գրել էր եկեղեցու վրա։ Դա ահավասիկ աճեց դարձավ դառնության արմատ, և շատերը պղծվեցին նրանով։

* Հովհ., ԺԲ, 32։

** Ղուկ., ԻԳ, 42։



Ուրեմն եկեք մի փոքր հանդիմանենք սրանց սուրբ գրքերով, որպեսզի այդ աղանդի ամբարիշտությունը արմատախիլ արվի ուղղափառ հավատացյալների եկեղեցիներից։ Անցնենք եկեղեցականներից ավելի վաղ ժամանակներին, երբ հալածյալներն ընկան կռապաշտության մոլորության մեջ և կարծեցին այսպես՝ որ եթե մեկը վտանգի ու տառապանքների պատճառով պաշտի կուռքերին, ոչինչ է, եթե իր սրտում ուղիղ պահի Քրիստոսի հավատի հանդեպ։ Նույն ժամանակ Հռոմի Նավատոս երեցը եկեղեցականների մոտ առաքեց նրանց հակառակորդներին։ Բայց նրանք հալածանքները դադարելիս ապաշխարանք չընդունեցին կուռքերը ոչնչացնողներից։ [Նավատոսը] շատերին ետ պահեց կռապաշտությունից, թեպետև անհուսությամբ մոլորեցրեց ապաշխարությամբ դարձի եկածներին։ Նա ամբողջ աշխարհն իսկ կործանեց, դարձրեց սնապաշտ, թեպետ հետո ընդունեց ապաշխարության կանոնները։ Սակայն երկու կողմերն էլ դրվում են պարսավանքի ներքո, թեպետև մոլորվել էին բարեպաշտության պատճառով։ Բայց որպեսզի մենք նույնպես չընկնենք նույնի մեջ, պետք է սովորենք Աստվածաշունչ գրքից և ընթանանք ուղիղ ճանապարհով, չխոտորվենք ո՛չ աջ և ո՛չ էլ ձախ։ Մաքրենք մեր շուրթերը մաքուր խոստովանությանը հպելու նպատակով և մեր միտքը մաքուր պահենք ճշմարիտ հավատի համար։ Քանզի եթե երկուսով չզարդարվեն միևնույն բարեպաշտությամբ, մեկից ոչ մի օգուտ չի լինի։ Որովհետև եթե նավը առագաստները երկու կողմ չպարզի, ուղիղ նավարկությամբ չի ճանապարհորդի, կամ նավաբեկության կենթարկվի մրրկալից հողմի կուտակած ալիքների ուժգնությունից։ Եթե թռչունը չթափի երկու թևերով, չի վեր ելնի բարձունքները, նույնպես եթե սրտի հավատքն ու շուրթերի խոստովանությունը անարատ չպահեն, չեն կարող հետևել Հոր, Որդու և Սուրբ Հոգու ճշմարիտ դավանությանը, «Քանզի սրտով հավատում ենք արդարանալու և բերանով խոստովանում փրկվելու»*, ասել է առաքյալը։ Ինչպես որ շուրթերով պատվում են, [նույնպես էլ] անպատվում են իրենց սրտում, քանզի «Այս ժողովուրդը,— ասում է,— իր շուրթերով է պատվում,

* Հռոմ., Ժ, 10։

բայց նրա սիրտը հեռու է ինձնից»*։ Որովհետև հնարավոր չէ, որ մեկը թե՛ հավատա բերանով և թե՛ ուրանա շուրթերով։ Քանզի, ինչպես ասել է փրկիչը, «բարի ծառը չի կարող չար պտուղ տալ, և ո՛չ էլ չար ծառը բարի պտուղ տալ»**, ինչպես նաև՝ «Մի՞թե փշերից խաղող կքաղեն կամ տատասկից՝ թուզ»***։ Այլև՝ «ով կուրանա ինձ մարդկանց առջև, ես էլ նրան պիտի ուրանամ իմ Հոր առջև, որ երկինքն է։ Եվ ով կդավանի ինձ մարդկանց առջև, ես էլ նրան պիտի դավանեմ Հորս առջև, որ երկինքն է»****։ Սրանով մեր շուրթերի պտուղը՝ դավանելը հանուն նրա պահանջում է սպառնալիքներով ու խոստումներով։ Դարձյալ նրա նման ասում է Պողոսը, որը գրավոր շարադրել է հավատքը և ասել այսպես. «Խոսքը քեզ մոտ է, քո բերանի մեջ և սրտումդ. այսինքն հավատքի խոսքը, որ մենք քարոզում ենք»*****։ Եվ գրում է Տիմոթեոսին՝ հավատարիմ մնալու հավատքի զորությանը, ասելով. «Եթե իրեն ուրանանք, ինքն էլ մեզ պիտի ուրանա։ Եթե չհավատանք, նա հավատարիմ կմնա»******, Տես և երանելի Եսային ի՛նչ է ասում. «Մարդ եմ և պիղծ շրթունքներ ունեմ և ապրում եմ պղծաշուրթ ժողովրդի մեջ»*******։ Այս ոչ թե ուրացության պատճառով է ամբաստանում իրեն, կամ ժողովրդի, այլ որովհետև չհանդիմանեց թագավորին, որը խախտում էր օրենքները, ամբարշտություն անում։ Իսկ եթե փոքրի համար այդչափ ամբաստանում էր իրեն մարգարեն, ապա քանի՜ ողբերի ու արտասուքի են արժանի, ովքեր աստծո որդուն չարչարանում են իրենց շուրթերով։ Ինչպես Պողոսն է ողբալով ու սպառնալիքներով ասում. «որչափ սաստիկ պատժի արժանի կհամարեք նրան, որ աստծո որդուն ոտքի տակ գցեց և նրա ուխտի արյունը համարեց անմաքուր և նախատեց շնորհաց հոգին»********, Տե՛ս, ով սիրելի, որ անարգելը լեզվի

* Եսայ., ԻԹ., 13, Մարկ., Է, 6։
** Մատթ., Է, 18—19։
*** Մատթ., Է, 17։
**** Մատթ., Ժ, 32—33։
***** Հռովմ., Ժ, 8։
****** Բ Տիմ., Բ, 12։
******* Եսայ., Զ, 5։
******** Առ Եբր., Ժ, 29։



խոսքն է, և լեզուն ստեղծողը չի ներում ուրացությունը բարբառելը, քանզի լեզուն ստեղծողն ուրիշ չէ սիրտն ստեղծողից։ Մեզնից թող հեռու լինի։

Տես սրան նման և ուրիշը «Գործք առաքելոց» գրքում։ Սիմոն Սամարացին լեզվով մատուցեց հոգու պարգևները Փիլիպպոսին և ինչպե՞ս պատժվեց սրտի կեղծավորության համար։ Ի՞նչ եղան Անանիան ու Սափիրան[378] ագարակի և խարդախության համար. իմացիր և ուշ դարձրու։ Քանզի եթե սրտի ստուգությունը և բերանի ճշմարտությունը համամիտ չլինեն և ուղիղ չմտնեն հավատքին, անպետք են ու գեն գցելու [արժանի] և օտար՝ սուրբ առաքելական եկեղեցուն։ Որովհետև հարմար չէ բարու և չարի միասին առկայությունը, և ո՛չ էլ լույսի ու խավարի, կամ՝ առողջության և հիվանդության։ Նույն կերպ և հնարավոր չէ սրտի դավանածը պղծել շուրթերով։ Քանզի գրված է, որ ավելորդ է սրտի [փոխարեն] բերանի խոսելը, քանզի խելքը հղանում է մտքից, և խոսքը՝ իմացությունից։ Այլև՝ ինչպես որ արմատն է, նույնպես և ոստն ու պտուղը։ Եթե հիմքը մաքուր է, նույնն է և արմատը, ապա ինչպես ոստն է, նույնն է և տեսակը։ Վերջացնեմ իմ այս չնչին խոսքերը հերձվածող մոլորությունների մասին։

Իսկ մենք, հետևելով Աստվածաշունչ գրքին, անբիծ կպահենք սրտի հավատքը և մաքուր՝ շուրթերի խոստովանությունը հավատքի մասին սուրբ Պողոսի ասածի համաձայն՝ «Խոսքը քեզ մոտ է, քո բերանի մեջ և սրտումդ. այսինքն հավատքի խոսքը, որ մենք քարոզում ենք»*։ Իսկ Դավիթն ասում է. «Ինչ հավատացի, նույնը և խոսեցի»**, Եվ Պողոսը՝ «Մենք հավատում ենք, ինչ որ խոսում ենք»***, Եվ դարձյալ Պողոսը՝ «Եթե խոստովանես քո բերանով տեր Հիսուսին և հավատաս քո սրտի մեջ, թե աստված հարություն տվեց... Քանզի սրտով հավատում ենք արդարանալու և բերանով խոստովանում փրկվելու»****, Վկայությունները միատեղ բերելով՝ չենք գնա աստվածաբանողների ետևից և անկոխ ճանապարհով։ Այլ

* Հռովմ., Ժ, 8։
** Սաղմ., ՃԺԵ, 10։
*** Բ. Կորնթ., Դ, 13։
**** Հռովմ., Ժ, 9—10։

մենք կտանենք թագավորների ու դատավորների առաջ՝ իմ [անձի] վկայության համար և լավ կպահպանենք [մեր] դավանանքը, վկայություն կտանք, ինչպես Փրկիչը Պոնտացի Պիղատոսի առաջ։ Ինչպես ասում է Պողոսը՝ Տիմոթեոսին. «Ամոթ մի համարի մեր տիրոջ վկայությունը»*, Եվ Դավիթը՝ «խոսում էի քո վկայության մասին թագավորների առաջ և չէի ամաչում**։ Իսկ Փրկիչը՝ «Եթե մեկը ամոթ համարի իմ խոսքերը»***։ Այստեղ վերջացնում եմ խոսքս։ Մենք պետք է փութանք, որպեսզի չերկարացնենք դատապարտող խոսքերը և չուշացնենք պատմության մասին առաջիկայում մեր գիտելիքը։

## Ը

### ԻՆՉ ՈՐ ԴԻՊՎԱԾԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԵՑ ԹՈՒՂԱՆ ԴՎԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ, ԵՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես որ մի փոքր վերևում բարոյական նպատակով պատմեցինք ծովային վիշապի մասին, դարձյալ հիշատակելու ենք նրան՝ այժմ արդեն այս պատմության իմաստի կապակցությամբ։

Երբ անդնդական խորքերը գետնի տակ ապրող կենդանիներին իմաց են տալիս ջերմության վրա հասնելը, նրանք տաքանում են հյուսիսային սառնաշունչ ցրտից [հետո] և գետնի տակ շարժվում են, զգալով ջերմությունը, զվարթանում են, զվարճանում, հրճվում և կայտառությամբ վեր են բարձրանում՝ ելնելու տաք վայրեր, ջանում են հասնել ծովափերին հավաքված ջրերը։ Եվ ծովեզերքին, ամառ ժամանակ սնվում են և ամրանում։ Անճոռնի, բլրաձև ու ծանր մարմնի պատճառով դժվարությամբ են վեր ելնում։ Եվ որովհետև ընկնում են բարակ ու ծանծաղ ջրի մեջ և նրանում խրվում անշարժ, դյուրությամբ կարող են ընկնել որսորդների ձեռքը։ Այլև իր շարժվելու ժամանակ սարսափում են ծովային բոլոր կենդանիները, գազանները։ Նույն լողացող գեռուններն ուրիշ կենդանիների հետ նրա կերակուրն են։ Իսկ երբ դարձյալ պակասում է հարավային ջերմ օդի զորությունը, ու արեգակն ընթանում է [երկնքի] ցածր կողմերում, ձմեռային եղանակը հասնում, կանգնում է դռներին, և հյուսիսային քամին փչում սաստկացնում է ցրտի զորությունը, հասնում ծառերին, նրանց բարձր կատարներին, տերևաթափ անում ու ընդարմացնում արմատների զորությունը, այնժամ վիշապը նեղվում է, շտապում, տագնապում և ուժի զորությամբ, բռնությամբ շարժվում իջնում է անդնդական խորության տաք վայրերը, ձմեռում այնտեղ։ Վրա է հասնում այնտեղ եղած կենդանիներին և նրանցով հոգում իր քաղցի կարիքները, մինչև գարնանային ժամանակները։ Նա նույնպես առանձնանում է, ինչպես մյուս թռչուններն ու գազանները, որոնք սովորաբար տարին բաժանում են երկու կամ երեք [մասի]՝ ամառային և ձմեռային, իրենց ապրելու [միջոց] ճարելու համար։ Գարնանը ապրում են լեռների բարձրաբերձ գագաթներին, ժայռերի փապարներում և բարձր ծառերի վրա, ուր հաճախ փչում է հյուսիսային քամին։ Իսկ ձմռանը շարժվում գնում են գետնի խորքը, հաստատվում ու առանձնանում տաքուկ տեղերում կամ միայն բնակվում իրենց ցեղակիցների հետ։

Նույն ձևով, երբ վրա հասավ ամառային ջերմությունը, կարծես գետնի խորքերից դուրս մղվելով, Բուղա զորապետը եկավ արքայի մոտից՝ բազում ու ծանր զորքով և շարժվեց դեպի մեր երկիր՝ Հայաստան աշխարհի հյուսիս-արևմուտքը։ Նրա շարժվելուց ահ պատեց բոլոր երկրներին ու երկրակալներին, և ում որ կարողացավ հանդիպել, վրա հասավ ու վիշապաբար կուլ տվեց։ Նրան որպես օրինակ բերեցինք վիշապին՝ նրա սաստիկ ուժի և ձեռքի զորության պատճառով։ Սակայն էր դուրս եկել՝ այսինքն երկրից, և անդնդական խորքերը՝ այսինքն թագավորանիստ քաղաքից։ Որպես մյուս անկախ պետությունները. պետք է հասկանալ փոքրիկ կետերին, լողացող մանր կենդանիներին, քանզի ոչ ոք ի զորու չեղավ ընդդիմանալ նրան։ Բայց պատմելու ենք ոչ թե առանց վկայության, ինչպես վերևում գրեցինք, ի հաստատումն դրա, այլ մարգարեների խոսքերով, որոնք ճշտությամբ գիտեն

* Բ Տիմ., Ա, 8։
** Սաղմ., ՃԺԸ, 46։
*** Հմմտ., Մարկ., Ը, 38։

դեպքերն ու հանգամանքները, ինչպես նաև ըստ այն ժամանակ այնտեղ եղածների, որոնք մնացել են այժմ։

Իսկ անօրենը, երբ կատարեց իր ամբողջ չար մտադրությունը Վասպուրական կոչված մեր աշխարհի հանդեպ, գնաց մտավ տաք տեղ՝ Դվին քաղաք ձմեռելու։ Եվ Հայոց աշխարհի բոլոր ազգատոհմերից իր մոտ եկած զորքերը յուրաքանչյուրն իր զորագլուխներով արձակեց գնալ ձմեռել ամեն մեկն իր բնակության տեղում։ Ամենքին հրաման տվեց, որպեսզի երբ մտենա գարունը, փութով, առանց հապաղումների, հասնեն իր մոտ, ամեն տեսակ պատրաստությամբ։ Քաղաք մտնելիս նա իր հետ ուներ բազում կապյալներ ու գերիներ, որոնց թիվ չկար։ Նրանց վաճառքի հանեցին օտար ժողովուրդների մեջ, տարան ստրկության, հեռացրին, զրկեցին իրենց հայրենի տան ժառանգությունից։ Նույն ժամանակ, երբ [Բուղան] կատարեց իր ամբողջ չարակամությունը սուրբ եկեղեցու հանդեպ, կործանեց ու կորցրեց շատերին քրիստոնյաների բազմությունից, լույսի որդիներին դարձրեց խավարի որդիներ, աստծո ժառանգներին սատանայի բաժին, Քրիստոսի ժառանգակիցներին՝ դևերի ժառանգակիցներ, [երկնային] արքայության բնակիչներին՝ հավիտենական հրի մեջ բնակվողներ։ Հույս ուներ միանգամից Քրիստոսի բոլոր հավատացյալներին հեռացնել ճշմարիտ աստծուն՝ մեր տեր Հիսուս Քրիստոսին հավատարմությամբ երկրպագելուց։ Նա պարծենում էր, մեծամտանում, լցվում խարդախությամբ։ Հրամայեց իր առջև բերել ազատ տոհմերից մի քանի երանելի մարդկանց և բնիկ հեծյալ տոհմերից ուրիշներին՝ ըստ ազգատոհմերի ու աշխարհների, որոնք հանձն չէին առել միաբանվել ուրացողների բազմությանը։ Այնժամ կարծեց, թե խոշտանգումների շնորհիվ կարող է դյուրությամբ գցել նրանց կորուսյալների և Քրիստոսի հավատից մոլորվածների աղտեղության մեջ։ Ամենևին, նույնիսկ փոքր-ինչ չմոլորվեցին նրա խոսքերից և չխաբվեցին հարստության խոստումներից և ո՛չ էլ անսացին, կամ հնազանդվեցին աշխարհական փառքին ու ցանկություններին։ Քանզի գիտեին և հասկանում էին, որ այս աշխարհի կյանքը ունայն է ու սուտ, դյուրամոռաց երազ և արագ անէացող ստվեր, և հավիտենական, անսպառ ու անվախճան են այն կյանքն ու պարգևները, որ աստված պատրաստել է իր սիրեց-



յալներին, ու որոնք սպասվում են ճշմարիտ հավատի դիմաց։ Նույնպես և տանջանքներ՝ նրա պես հավիտենական, մշտնջենավոր ու անսպառ, և հավիտյան ու անվախճան խոշտանգումներ՝ պիղծերի՛ և քրիստոնեության սուրբ ու անբիծ հավատն ուրացողների համար։ Առընթեր ունեին տիրոջ պատգամը, թե՝ «Ով կուրանա ինձ մարդկանց առջև, ես էլ նրան պիտի ուրանամ իմ հոր առջև»*։ Եվ թե՝ «Ով կկամենա ապրեցնել իր անձը, պիտի կորցնի այն և ով իր անձը ինձ համար կկորցնի՝ կգտնի այն»**։ Կամ «Ինչ օգուտ կլինի մարդուն, որ ձեռք բերի համայն աշխարհը և կորցնի իր անձը։ Կամ ինչ փրկանք պիտի տա մարդ իր անձի համար. քանզի մարդու որդին եկավ փնտրելու և ապրեցնելու կորուսյալին»***։ Եվ մտքները բերեցին այսպիսի ուրիշ խոսքեր, որ գրված են սուրբ ավետարանում։ Ծաղրով ու կատակներով այպանեցին, արհամարհանքով անարգեցին բռնավորին, ինչպես անպիտան մի մանկան կամ զառանցող ու խելագար ծերուկի, որը ակամայից ինչ կամենա, կխոսի։

Իսկ երբ բռնավորն իմացավ, որ գլուխ չեկավ իր մտադրությունը, որ խորհել էր սրբերի նկատմամբ, ինչպես գրված է՝ «Կասկածողն ու արհամարհողն ամբարտավան մարդ է և ոչինչ չի հասուցի»****, Նույն ժամանակ հույժ ամբարտավանության, սաստիկ ու անհուն սրտմտության, անբուժելի կատաղության պատճառով ապուշացել էր, ինչպես անզգայորեն հարբածը։ Փոքր չափով իսկ չներեց կամ չանսաց ու տեղի չտվեց նրանց պատասխաններին, այլ դահիճներին հրամայեց նրանց հանդեպ կատարել մահվան վճիռը՝ շտապ սրով սպանել, վերջ տալ նրանց։ Նրանք դուրս եկան ատյանից մեծ խնդությամբ և հույժ զվարճացած փութացին դուրս գալ այստեղի մարմնից և մտնել աստծո մոտ։ Ցնծացին, հրճվեցին կայտառությամբ, բերկրացան, ուրախացան սրտով և անտրտում խնդությամբ դիմեցին սպանման տեղը, ինչպես երիտասարդները՝ ամուսնության հարսանիքին և ուրախ էին՝ ինչ-

* Մատթ., Ժ, 33։
** Մատթ., Ժ, 39։
*** Հմմտ., Մարկ., Ը, 36—37։
**** Ամբա., Բ, 5։

պես փեսան հարսի մոտ։ Այպա մերկացան ամբոխի մեջ, որը փութացել էր տեսնել սրբերի նահատակությունը. դեն գցեցին մեղքերի ապականող ու հնացած հանդերձներն ու ծածկույթը և հարանյաց զգեստի փոխարեն ճանաչեցնել տվեցին մկրտության զգեստը, որ հագել էին ջրով ու սուրբ հոգով։ Եվ գեղեցիկ պատմուճանի գույնզգույն հյուսվածքի փոխարեն իրենց սուրբ մարմնի վրա էր սուրբ, վարդագույն ու կարմրատեսիլ արյունը և ոսկեհուռ, թագակապ զարդապսակի փոխարեն՝ Քրիստոսի երկրպագությունը։ Իսկ փրկող խաչի նշանը դրոշմեցին գլուխների վրա և մանյակների փոխարեն պարանոցներին ընդունեցին փայլող սուրը։

Եվ երբ հասան նահատակության ասպարեզը, ծնրադիր աղոթեցին, որպեսզի անսայթաք, աներկբա և հաստատուն հավատով, մեծ համբերությամբ ու գոհության օրհնանքով ընդունեն մարտիրոսության վճիռը։ Իսկ դահիճները հանեցին սրերը և դիմեցին նրանց վրա, իբրև արյունարբու գազաններ, խփեցին սրերով, ինչպես անտառախիտ մայրիներում փայտահատելիս են հարվածում կացնով, և անխնա, անողորմությամբ կոտորեցին անդամ առ անդամ։

Իսկ երանելիները գոհացան Քրիստոսի անպատում պարգևներով, որ արժանացրեց իրենց՝ մեռնելու նրա անվան համար, և միասին աղաղակ բարձրացնելով ասացին. «Աստված, նայիր և օգնիր մեզ, և, տեր, փութա մեզ պաշտպանելու»*։ Եվ շարունակությունը՝ «Քանզի քեզ համար ենք մեռնում հանապազօր և համարվում ենք մորթվող ոչխար»**։ Եվ նրանք այսպես նահատակվեցին մարտիրոսաբար, ի փառս աստծո և վկայողի անուն ժառանգեցին հանուն Քրիստոսի և ի պատիվ ամենասուրբ երրորդության։ Սրանց անուններն են՝ Ատոմ Անձևացի, Մլեհ Վարաժնունի, Գևորգ Բողկացի, Վասակ և բազում ուրիշներ, որոնց անունները գրված են երկնքում։ Բայց այս երանելի Գևորգը, մինչ սրի տակ էր, դահիճը հարվածում էր, իբրև անզգա իրի և մի փոքր գիծ իսկ չկարողացավ սրի խոցումով թողնել սրբի մարմնի վրա։ [Սուրբը] թեքվեց դահիճի կողմը՝ նրա աղաչանքով և որպեսզի տեսնի,

* Հմմտ., Սաղմ., ԿԹ, 2։

** Սաղմ., ԽԳ, 22։



թե ինչու չի հատում սուրը։ Այպա [դահիճի] ձեռքից խլեց սուրը, նայեց նրա կողմը և ասաց. «Ո՛վ անարի, վախկոտ և կանացի այր, թշվառական զինվոր, քո տիրոջ անպիտան շուն»։ Եվ հարվածեց դահճի պարանոցին, թռցրեց նրա գլուխը։ Զարմանքը պատեց ամբողջ բազմությանը՝ երանելի Գևորգի սրտի պնդության, ուժի և քաջաբար նահատակվելու պատճառով։ Իսկ քրիստոնյաների բազմությունը, որ այնտեղ էր, գոհացավ և միաբան փառք տվեց աստծուն, որ զորացրեց սրբերին, և և ամաչեցրեց սատանային իր գործակիցներով հանդերձ։

Այնժամ զորապետը հրամայեց սրբերի մարմինները քարշել քաղաքից դուրս, դարձնել շների ու երկնքի թռչունների կերակուր։ Սրբերի մարմինները մնացին անթաղ բազում օրեր և ամենևին չարատավորվեցին, նրանց վրայից չէր գալիս ժահահոտություն։ Ապա քրիստոնյաները վերցրեցին նրանց պատվական մարմինները և թաղեցին փառավորապես։ Ամեն տարի տոնվելով հիշատակվում է թվով յոթ այրերի նահատակման օրը։ Սուրբ վկաները նահատակվեցին 302 [853] թվականին։

## Թ

## ԹԵ ԻՆՉ ԿԱՏԱՐԵՑ ԲՈՒՂԱՆ ԻՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՄ, ՈՐԸ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ Է, ՆՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԱՀԱԿ ԻՍՄԱՅԵԼԱՑՈՒ ԴԵՄ, ՈՐԸ ՃԱՆԱՉՎՈՒՄ ԷՐ ԻՍՄԱՅԵԼԻ ՈՐԴԻ, ԵՎ [ՏՓՂԻՍ] ՔԱՂԱՔԻ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Երբ ձմեռը թեթևացավ և գարնանային եղանակի ժամանակը մոտեցավ, միգամած ու մառախլապատ օդը հստակվեց, և հարավային տաք քամին խուժեց Դվին քաղաքի ցածրադիր դաշտը, ընդարմացած արմատներն ու բույսերը համակվեցին զորությամբ, թռչուններն ու գազանները հայտնեցին իրենց ցալստյան ժամանակը, իսկ աշխատասեր մշակները պատրաստվեցին աշխատելու երկրաշահ վաստակների համար, որսորդները պատրաստեցին իրենց գործիքները, վաճառականները հեռավոր ճանապարհների համար պատրաստություն

տեսան, հովիվները հավաքեցին ոչխարները և քշեցին դեպի դալարաբեր հովիտը։ Եվ ամեն ոք այլևայլ [միջոցներով] ջանում էր դիմելու իր վաստակների հնարներին։ Իսկ [Բուղա] զորապետը մտահոգված էր ապականող ու աշխարհավեր իր դիտավորություններով, մտածում ու մտատանջվում էր նաև ուրիշ երկրների և աշխարհակալների մասին, դադար չուներ, ծփում էր իր մտքերում, ինչպես ծովը, որ չի դադարում ալիքները շարժելուց։ Հիշում էր, թե ինչ գործեց Աշոտի ու նրա երկրի դեմ, հիշում էր նաև նրա քաջությունն ու արիությունը։ Եվ քանզի ի զորու չեղավ ընդդիմակայել նրան, ահ էր ազդում, սպառնում ավելի չարաչար կոտանքներով լլկել նրանց և, ոտքերը գետին խփելով, փնչացնում էր, ինչպես անսանձ ձի։ Մերթ թավալվում էր ինչպես օձը, մերթ գոռում որպես առյուծ և իբրև վայրի խոզ՝ կնչում ու կռնչում, փրփրում էր և ատամները կրճտացնում։ Մերձավորների հետ կեղծում էր բարեկամություն, հեռավորների հանդեպ մեծացնում չարությունն ու սպառնալիքները։ Հրաման տվեց ամենքին՝ պատրաստ լինել քաղաքի պաշարման։ Հավաքեց նաև նրանց, ովքեր ավելի առաջ իր մոտ էին եկել իրենց ազգատոհմով ու զորքով։ Բայց արևելյան բոլոր մյուս իշխանները խույս տվեցին նրանից, թողեցին գնացին և փակվեցին ամրոցներում, բերդերում, քաղաքներում և լեռներում, մոտներն հավաքեցին իրենց երկրների զորքն ու բնակիչներին՝ ամեն տեսակ պատրաստությամբ։ Իսկ Հայոց սպարապետ Սմբատ Ապլաբասը, երբ իմացավ, որ ոչ մի օգուտ չի բերի նրա հրամանները չկատարելը, փութաց նրա մոտ, ընդունվեց նրանից և ինքն ու յուրայինները, յուրաքանչյուրն իր կալվածքով հանդերձ, ապրեցին առանց կասկածների։ Մանավանդ առաջուց պատրաստվել էր և թղթերով ու նվերներով պատսպարվել էր թագավորի և Բուղայի մոտ, [խոստացել] գնալ նրանց հրամանով և նրանց կամքին հակառակ ոչինչ չմտադրվել և չգործել։ Ավելի առաջ ուղարկել էր իր Աշոտ որդուն [Բուղային] ընդառաջ, երբ սա դուրս էր եկել արքայի մոտից։ Սպարապետը նրան առաջնորդեց պատերազմական գործերում, գավառներում ելումուտ անելիս։ Ծանոթացրեց յուրաքանչյուր գավառի զորությանը, ամրոցներին և նրանց պատերազմելու կարողությանն ըստ ազգատոհմերի։ Այնուհետև [Բուղան] գումարեց զորքի անհուն



բազմություն, ավելի մեծ, քան նախկինը, և ելավ ու շարժվեց արևելյան աշխարհի* դեմ։ Հրամայեց վրա հասնել Տփղիս կոչված քաղաքին, որին առաջներում անվանում էին Փայտակարան**։ Անտառի փայտից էր շինված նրանց քաղաքը, պարիսպները, պատերը, ապարանքները և քաղաքի բնակության բոլոր տներն ու նրանց բոլոր կահ կարասիները։

Ավելորդ եմ համարում մեկ առ մեկ գրի առնել և ցույց տալ քաղաքում [կատարված] անօրենությունը, որ գերազանցեց Սոդոմին ու Երիքովին և լի էր չարագործություններով։ Բայց Բուղան հասավ ու անցավ մեծ գետը, որին Կուր են կոչում և գարնանային վարարումների ջրհոսքերին տեղի տալով, զորքը հանեց ու բանակել տվեց քաղաքի շուրջը։ Ոչ ոք չկորավ, բացի ինչ-որ մեկից, որը ճանաչվում էր Աշխեթ անունով, պերճ ու անվանի տղամարդ էր, զորքի մեջ քաջամարտիկ։ Իր հետ ուներ ուժեղ զորագունդ, որն ինչպես ծովը, մեջն էր առել զորապետներին։ Եվ ինքը՝ Աշխեթը սպառազինված էր, նստած ձիուն. ոմանք կարծում էին, թե ձին ու հեծյալը երկաթեղեն արձան են, այնպես էին զրահված, որ միայն աչքերին ծածկույթ չկար։ Եվ երբ մոտեցավ գետի ափին, ինչ-որ մեկը ձգեց լայնալիճ [աղեղը], նետեց դարանում, նետահարեց [դեմքի] բաց տեղը և երասանները՝ բռնող ձեռքը թուլացավ։ Ինչ-որ մի ուրիշը ճկած նիզակով [հարվածը] կրկնեց նույն աչքին, ու գետավեժ արեցին Աշխեթին։ Մի քանի որ հետո նրա դին գտնողներին Բուղան տվեց 10000 արծաթ. քանզի այդչափ պատվական էր այդ մարդը նրա համար։

Եվ նույն ժամանակ քաղաքը շրջափակեցին կրակով. անտառի չոր փայտից, գիհերից*** դիզվեց, բորբոքվեց հուրը, իսկ քաղաքապետ Սահակը դուրս եկավ այն դարպասից, որը տանում է Շամշղտա[379] բերդը, վրան գցեց սամույրենին, ձեռքին բռնեց գավազանը և մտքով հիմարանալով, ձեռքից բաց

* Ի նկատի ունի վրաց աշխարհի արևելքը։

** Միջնադարյան Թբիլիսին (Տփղիսը) փայտաշեն էր, սակայն Թովմա Արծրունին այն կոչում է Փայտակարան, իհարկե, անծանոթ լինելով իսկական Փայտակարանի տեղադրությանը, որը հավանաբար IX—X դդ. մոռացվել էր արդեն։

*** Ծառատեսակ։

թողեց փախուստի [հնարավորությունը], որով կարող էր դըննալ, ում մոտ որ կամենար։ [Կոչնակներ] ուղարկեց ժիրաք զորապետի մոտ, ասելով. «Փութա ինձ հետ հանդիպելու»։ Բայց նա չհավատաց գնացած հրավիրակներին, մինչև որ [Սահակը] կրկնեց ու հորդորեց։ Իսկ ժիրաքը գնաց ու նրան վերցրեց բերեց Բուղայի առջև, որը զարմացավ ապստամբելու փոխարեն հույժ անմտությամբ իր մոտ նրա գալու համար։ Սահակի կենակիցը, որ գեղանի կին էր, երբ լսեց, թե [ամուսինը] բռնվեց, փութով գնաց Բուղայի մոտ, [հույս ուներ] թերևս կարողանա վայելուչ գեղեցկությամբ ու մեծաքանակ գանձերով ապրեցնել իր ամուսնուն։ Բայց առավել նրա մահվան, քան թե ապրելու պատճառ եղավ։ Բուղան հրամայեց դահիճներին՝ գլխատել նրան։ Իսկ կինը ճիչ բարձրացրեց ու ասաց. «Գույժը կհասցնեմ թագավորին»։ Հոլանի շրջեց բանակի մեջ, ինչը սովորություն չէր արաբական ցեղերի կանանց համար։ Բայց ոչնչով չկարողացավ օգնել։ Այլև Բուղան կըտրեց [Սահակի] գլուխը և ուղարկեց արքունիք, իսկ կնոջը առավ իրեն կնության։ Կինը դարձյալ ճիչ բարձրացնելով ասաց. «Ինձ համար սպանեցիր իմ տիրոջը. ես արժան եմ ոչ թե քեզ կին [լինելու], այլ մեծն թագավորին»։ Բայց Բուղան կնոջը վերցրեց իրեն, ապա ուղարկեց թագավորի մոտ՝ նրան կին լինելու։ Իսկ կինը գնաց և թագավորին պատմեց ինչ որ եղել էր, վկաներ բերեց, [հաստատեց] իր բողոք բարձրացնելը և «արժան չեմ քեզ, այլ արքային պիտի կին դառնամ», [ասելը] և ինչ որ կատարվել։ Դրանով նա եղավ Բուղայի կործանման պատճառը, ինչը ցույց կտամ իր տեղում համառոտ խոսքերով։

Ժ

## ԾԱՆԱՐՆԵՐԻ[380] ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Բայց որովհետև բոլորովին ոչ մի տեղ և ոչ ոք չկարողացավ ընդդիմակայել [Բուղային], ամեն ինչ արեց, ինչպես կամեցավ։ Սկսեց ձեռք զարկել հերթով արևելյան բոլոր գավառներին, աներկյուղ համարձակությամբ, լի ամբարտավա-



նությամբ ասպատակելով նրանց տերության բոլոր կողմերը։ Եվ ահա դիմեց ու գնաց հասավ հյուսիսային կողմերը, այն երկիրը, որ Ծանարք է կոչվում։ Սրանք բնակվում են լեռնային ամրոցներում, անհոգ ու խաղաղ են արտաքին թշնամիներից, արքունի հարկերն ու տուրքերը մնում են իրենց։ Միայն ինչ-որ մեկին գնում են իրենց վրա տիրելու, ըստ իրենց կամքի։ Միաբան ու համախոհ են միմյանց հանդեպ, բնակվում են ըստ ազգատոհմերի, միմյանցից հեռու։ Սրանց մոտ է Կովկասի լեռը, որտեղ բնակվում են 72 ցեղեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր լեզուն։ Ապրում են առանց առաջնորդի, ամեն մեկն ունի իր կամեցած սովորույթը. ամուսնանում են և՛ մոր, և՛ քրոջ հետ։

Սրանց մոտ էր գնացել Գրիգորիսը՝ Վրթանեսի երիցագույն որդին և նրանց մեջ քարոզել կենաց խոսքը։ Ծառերն ընկան նրա մոտ և հավատացին Քրիստոսին, ինչպես ծանարներն ու ափխազները[381]։ Կեսն էլ չանսացին ու գնացին դեպի նույն կործանումը, մինչև այսօր, ինչի մասին ժամանակ չունենք պատմելու։ Նրանց բարբարոսներից էր, որ մարտիրոսական վախճան ընդունեց սուրբ Գրիգորիսը՝ Վատնիանյան[382] դաշտում։

Իսկ երբ Բուղան զորքի բազմությամբ հասավ նրանց սահմաններին, գրեց հրովարտակներ՝ խաղաղությամբ, [հորդորեց] դիմել սիրով միաբանության, ի հնազանդություն արքայի, ընդունել պատիվներ և նրա միջոցով ստանալ իշխանական զորավոր անուն։ Բայց նրանք, քանզի ապավինել էին ապահով ամրոցներին, զորքի ու պատերազմող տղամարդկանց բազմությանը, փոքր չափով իսկ չխոնարհվեցին կամ պատասխանով տեղի չտվեցին նրա խոսքերին, այլ վերադարձրեցին այնտեղից պատգամավորներին անարգանքով. արբեցրին նրանց ասուրիկ ծեծով, իսկ իրենք իջան լեռներից, գրավեցին լեռան ստորոտները և պատրաստվեցին ի պատերազմ։ Փակեցին ամրոցների դռները և ձորերի կիրճերը, որոնք նրանց տանում էին դեպի իրենց գավառի ամրոցները։

Այնժամ Բուղա զորապետը հրաման տվեց իր զորքին՝ ելնել նրանց դեմ պատերազմի։ Եվ մոտեցան նրանց, կարգերին, կազմեցին ճակատ և պատերազմեցին ծանարների զորքի դեմ։ Ներքևից շուրջանակի փակեցին լեռան ստորոտները,

ինչպես ծով, որ դեպի վեր է բարձրացնում հողմակուտակ ալիքները։ Եվ ահա ձայնեց առհասարակ ամբողջ երկիրը, ինչպես ալիքները կուտակած ծով։ Սաստկացավ պատերազմը՝ սկսած այգաբացից մինչև արևամուտ՝ օրվա 12-երորդ ժամը։ Եվ ջարդվեց արքունի զորքը, ետ դարձավ իր բանակատեղը, իսկ լեռնականները եկան իրենց զորատեղը։ Մեկ օրվա ընդմիջումից հետո դարձյալ սկսվեց պատերազմը, և ջարդվեց արքունի զորքը։ Դարձյալ փոքր ինչ ժամանակ անցնելուց հետո սկսվեց պատերազմը, և դարձյալ սաստկորեն ջարդվեց արքունի զորքը. մեծ տարակույսի մեջ էին. այնտեղից վերադառնալ չէին կամենում, քանզի կատարվածը սաստիկ ամոթալի էին համարում։ Չէին կարող ընդդիմակայել, դիմանալ նրանց, որովհետև շատերն էին ընկել իրենց զինվորներից։ Ապա մտադրվեցին դարձյալ պատերազմել։ Կանգնեցրին պատնեշներ, շինեցին մեծ տներ ու դարձրեցին բնակության տուն, որտեղ նստեցին ինը օր և պատերազմեցին նրանց դեմ ավելի քան 19 անգամ։ Արքունի զորքը ջարդվեց ու պակասեց ծանարների զորքից և ետ դարձավ կորակնած, ամոթով ու խայտառակված, ծանակված ու մեծապես կոտրված։

Արդեն մոտենում էր [Բուղայի] գալստյան երկրորդ տարին, երբ ելավ գնաց Աղվանից կողմերը։ Այն ժամանակ Աղվանքի մեծ մասին տիրում էր ոմն Ապումուսե, որը հայտնի էր որպես կարդացող և ճանաչվում էր երեցի որդի։ Իսկ երբ լսեց, թե ահա Բուղան վերցրած իր զորքը, գալիս է իր վրա, հրաման տվեց իր ողջ երկրին՝ ելնել բռնել լեռնակողմերը, ջանք թափել ուժեղությամբ և արիաբարությամբ դիմադրել, մանավանդ տեսավ, որ ծանարներից նա պարտության է մատնվել ու հաղթվել։ «Մենք,— ասում է,— ծանարներից վախկոտ չպիտի լինենք, քանզի նրանցից ավելի հզոր և ավելի բարձր ամրոցներ ունենք, և մեր կիրճերում ավելի դյուրությամբ կփակենք նրանց։ Միայն սրտանց միաբան ուխտի մնանք, ապավինենք աստծո օգնությանը։ Եվ եթե մեկին մահ հասնի, պարծանք կհամարվի իր անձի, իր տոհմի համար և՝ Քրիստոսից կընդունի մարտիրոսության պսակ, որովհետև ոչ թե ամենքի համար սահմանված մահով, այլ սուրբ եկեղեցու և աստծո ժողովրդի համար [կմեռնի]»։ Աղվանից աստվածա-



սեր իշխանը այսպիսի և սրանից էլ առավել խոսքեր ասաց իր զորքի առջև։

Իսկ Բուղան վերցրեց իր զորքի բազմությունը և իջավ Գարգարացվոց[383] դաշտը և գնաց մտավ Պարտավ մեծ քաղաքը։ Սկսեց զոռալ, մտադրվեց չարության թույնը թափել Աղվանից իշխանի վրա։ [Մարդիկ] ուղարկեց նրա մոտ, հորդորելով ի հնազանդություն։ Բայց նա տեղի չտվեց նրա խոսքերին, քանզի լավ գիտեր նրա խաբեբա բնավորությունը։ Ապա հավաքեց երկրի ամբողջ բնակչությանը՝ կանանց, երեխաներին և Աղվանից երկրից ուրիշների՝ ռամիկների, շինականների բազմությանը, սակավաթիվ զորականների լեգեոնները լեռան վրա՝ Քթիշ[384] անվանված ամրոցում, ըստ այնմ՝ նաև մթերապաշար։ Իսկ Բուղան, իմանալով, թե ինչպիսի պատրաստություն է տեսել Աղվանից իշխանը, տարակուսեց իր մտքում։ Եվ որովհետև բազմիցս պատերազմեց պես-պես մարտերով և ոչնչով չկարողացավ վնասել անպարտելի ամրոցներին, նրանց մեջ եղած տղամարդկանց քաջությունը, ողոքական խոսքերով կոչ արեց հպատակվել։ Իսկ [Ապումուսեն] տվեց այսպիսի պատասխան. «Աշխարհակալների սովորությունն է արքունի հոգածությամբ գնալ երկիրը, իբրև հնազանդների մոտ, վերացնել, թեթևացնել տառապյալների նեղությունները, իբրև խնամարկուներ, և ոչ թե ավազակաբար, սրով ու գերեվարությամբ ավերակ դարձնել [երկիրը]։ Եվ եթե դու խաղաղության հսկող էիր եկել արքունիքից, շենություն պիտի պարգևեիր սրանց և ոչ թե ավերանք ու խառնակություն։ Եվ արդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ տեր աստծո ուժով ու զորությամբ և քեզ տեսնելու եմ ոչ թե սիրով ու խաղաղությամբ, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով։ Եվ եթե դու ցանկանում ես ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ել այստեղից և գնա իմ [երկրի] սահմաններից։ Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո զայրույթից ու կատաղության պատճառով և ոսկորներդ ցրես անապատներում ու դառնաս երկրի գազանների, երկնքի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել աստծո թշնամիներին, ինչ-

պես Մովսեսն Ամաղեկին[385], Հեսուն[386] Քանանացիներին, Սամուելն Ագագին[387] և Դավիթը[388] Գողիաթին[389], ինչպես նաև իսրայելացիներն այլազգիներին։ Եվ աստված սիրեց նրանց։ Նույն կերպ կանեմ քեզ և քո զորքի հետ։ Արդ չեմ կամենում խոսել քեզ հետ. քո ձեռքերում է խաղաղությունն ու խառնակությունը։ Եթե, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ։ Դու [կդառնաս] թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու՝ ախոյան, իմ զինվորները՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքը քեզ դատապարտող, քո պատերազմը, մեր հաղթությունը, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ՝ մենք կողոպտիչներ, դու եղեգն, մենք դյուրավառ կրակ, դու հարդ, իսկ մենք դյուրությամբ փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք թարշամեցնող խորշակ, դու պտղալից հանդ, մենք ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիման, իսկ ես հիմնիվեր տապալող հեղեղ, դու լեշ, իմ զորքը հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք մանուկներ, որ բռնելով քո զորությունը, խաղում. կատակում ենք քեզ հետ և քո հպարտության ու անբարեհաճության հետ. դու վայրի երե, մենք՝ որսորդներ, դու թռչուն, իսկ մենք բարձրությունից ցած ենք իջեցնում և ձգում որոգայթի մեջ. դու ծովի վիշապ, մենք՝ կարթ, որ բիմքից վեր ենք ձգում քեզ անդունդների խորքից. դու իբրև եղջերու առանց եղջյուրների, մենք արծիվներ քո վերևում, քո աչքերը կուրացնողներ, որ քո լեշը գցում ենք իմ ձագերին և ծակերում բնակվող աղվեսներին։ Եվ ահա դարձյալ եմ ասում. անհաստատ է քո ունեցածը։ Եվ որպեսզի քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ, ավելի քան կջանաս վտանգել մեզ՝ դու կընդունես վտանգավորը։

Այնժամ երբ բռնավորը լսեց պատասխանի այս խոսքերը՝ լի զորությամբ ու մեծ անարգանքով, լցվեց խորը տարակուսանքով, մեծապես ապշեց, և իր բոլոր դիտավորություններն ապականվեցին ու ցրվեցին. չգիտեր ինչ անել։ Ապա բազում անգամ մտքերում քննեցին և բազմապիսի հնարներից ընտրեցին [մեկը]՝ գրել և ծանուցել թագավորին այդ մարդու մասին։ Եվ ուղարկեցին արքայի մոտ լրատարներ, իսկ իրենք մնացին լեռան շուրջը, մինչև որ արքունի փութով մի հրաման կգար իրենց։

Իսկ Ապումուսեն զինավառված, իր ամբողջ զորությամբ շարժվեց իջավ նրանց վրա և հասցրեց մեծամեծ հարվածներ, վերցրեց բազում ավար և վերադարձավ իր բանակատեղը։ Այնուհետև [Բուղան] չհամարձակվեց հեռու տանել իր բանակը, այլ զորքի կեսը հանձնեց ինչ-որ մի զորագլխի և նստեցրեց նրան հյուսիսային կողմում, իսկ ինքը զորքի բազմությամբ մնաց արևելյան կողմում։ Շինեցին ամուր ու մեծ տներ ու պարսպեցին մեծ զգուշությամբ։ Բարձրացրին նաև պատնեշ, կուտակեցին քարեր, կանգնեցրին մեքենաներ և եղան պատրաստ։ Քիչ ժամանակ հետո Բուղան հրաման տվեց ելնել պատերազմի։ Ապա հարդարեցին ճակատ, կազմեցին մարտաշարքեր, և ընտրովի, տեսակ-տեսակ զորականների գնդերը ներքևի կողմից շուրջանակի փակեցին լեռը։ Կանգնեցրին բարձր ու մեծ դրոշներ ու նշաններ, բաշխելով ըստ զորագլուխների՝ 500 մարդուն մեկ դրոշակ։ Մեկ առ մեկ, հանվանե չեմ թվի զենքի շատությունը և ձիերի ու նրանց հեծյալների սպառազինությունը։ Դրանում գիտակ են քաջ տղամարդիկ, և ովքեր միշտ գեգերել են պատերազմներում ու վարել կռիվներ։ Բոլոր զինվորները գանձեր էին հավաքել թագավորի գանձատան համար և բարձած ուղտերին, կրում էին իրենց հետ։ Ելան մարտի և պատերազմեցին. ըստ որում սաստկացավ կռիվը, հախուռն հարձակմամբ դիմեցին միմյանց վրա։ Արքունի զորքը ջարդվեց մեծամեծ հարվածներից, փախան իրենց բանակը և մտան այն տները, որ շինել էին։ Իսկ Ապումուսեի լեռնային զորքը հետամտեց փախստականներին, իջեցրեց լեռան վրայից և վերադարձավ սպանվածների իրերը վերցնելու։ Ապա գնացին իրենց բանակատեղը մեծ հաղթությամբ, ուրախանալով անտրտում խնդությամբ։ Մնացին պահպանելու իրենց և [Ապումուսեի] իշխանության մեջ բնակվող աշխարհախումբ բազմությանը։

Սրանից հետո, որ այլազգիների երկրորդ հարվածն էր, [Բուղան] դարձյալ հրաման տվեց ելնել պատերազմի, և հետամտելով հասան նրանց։ Բայց ահա աղվանից 1000 ընտրովի տղամարդիկ պատահեցին նրանց, ջարդեցին և ի փախուստ

դարձրին դեպի բանակը, իսկ իրենցից ոչ ոք չվիրավորվեց և ողջանդամ հասան իրենց զորապետի մոտ, մեծ հաղթությամբ և բազում ավարով։

Իսկ Բուղա զորապետը կորցրեց գլուխը, ընկավ տարակուսանքի մեջ և կսկծում էր մտքում, մտատանջվում և փակված վրանում ելք էր փնտրում, չուներ հանգիստ, չուներ դադար, աչքերին քուն չէր գալիս։ 10 օր ոչ ոք ելումուտ չարեց նրա մոտ, որովհետև ամոթահար երեսով մտել էր սենյակը, շատ երկյուղ չուներ. քանզի սուսերավորների բազմաթիվ զորագնդեր շրջապատել և պահպանում էին նրան։ Իսկ տասն օր անցնելուց հետո [Ամբատ] սպարապետը խնդրեց մտնել նրա մոտ, ապա բռնեց նրա ձեռքից, սկսեց խոսել նրա հետ և ասաց. «Ինչո՞ւ ես թուլացնում քո ձեռքերը և դրանց արիությանը խառնում երկչոտություն և քեզ վրա վերցնում ամբողջ աշխարհի [հոգսը], կորցնում քո քաջանունությունը, որից ամբողջ աշխարհն էր զարհուրում և դողում, և ոչ ոք դուրս չեկավ քո դեմ։ Ինչո՞ւ ես տկարացնում քո զորեղ բազուկները։ Մի՞թե դու առաջինն էիր միայն, որ հաղթվեցիր ու չարդվեցիր թշնամիներից, կամ միայն քո զո՞րքն էր, որ ընկավ և միայն քո ավա՞րն էր, որ բաժանվեց։ Չե՞ս մտածում արդյոք, որ ի սկզբանե մինչև այժմ, ամենուրեք, որտեղ էլ որ զորք գումարվեր և լիներ պատերազմ, սուր ու ճակատամարտ, երբեմն հաղթում էին, երբեմն մատնվում պարտության։ Ո՞վ էր աշխարհակալներից, որ չմատնվեց սրի։ Ժողովուրդներն ունեն իշխաններ. մի տեղ զորանում են, մի տեղ էլ՝ տկարանում»։ Սպարապետը երկար խոսեց զորապետի հետ, նրա սրտից դուրս վանեց տրտմության պատրվակը։ Ապա դուրս եկան սենյակից և նստեցին զվարճանալու։

Նույն ժամանակ արքունուստ հրաման հասավ՝ «չտաղտկանալ և չվհատվել և չդադարել նրա դեմ պատերազմելուց, մինչև որ ակամայից իսկ հնազանդության կգա արքային»։

Այնժամ հրաման տվեցին ամբողջ զորքին ելնել պատերազմի։ Եվ ահա աղաղակ, փողեր, քնարներ, անհամար զորքը սպառազինվեց զենքով, սրերով և ամեն տեսակ պատրաստությամբ, ու քիչ մնաց հիմքից տապալվեր լեռը։ Զորքը բարձրացավ մինչև լեռան գլուխը, նրա հետ նաև բազում ղըրաշներ՝ ձիերին նստած 1000 ընտրյալ քաջ տղամարդկանց



[ձեռքին]։ Եվ գրեթե ոչ մի տեղ, աշխարհի չորս կողմերում ոչ մի թագավորի մոտ չէր երևացել այդպիսի ահավոր տեսքով ու սպառազինությամբ զորք՝ սաստիկ որոտումով և ճայթյունով, զենքերի փայլատակումով և ինչով այն ժամանակ զինվել, զարդարվել ու հանդերձավորվել էր արաբացոց զորքը։ Եվ գունդ առ գունդ, փութապես ելան մեկը մյուսի ետևից և ամեն ոք, որ տեսնում էր, մեծ երկյուղով ներս էր մտնում [տուն]։ Սպարապետի որդի Մուշեղ իշխանը նստել էր այնտեղ հեռվում, մի բլրի վրա և ապշում ու զարմանում էր մեծապես։ Մտքով նա վերացավ դեպի Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ երկրի վրա կլինեն ահեղ որոտումներ, թնդյուն ու կայծակ, մեծամեծ արհավիրքներ և թե ինչպես հրեշտակների խմբերը կգան միմյանց ետևից, և տերունական խաչը կփայլեր ահավոր ճառագայթներով, և ինչ որ հետևելու էր դրանց, Քրիստոսի երկրորդ գալստյան վերջին օրը։ Այնժամ հրաժարվեց աշխարհական պատրանքներով զբաղվելուց, վերացավ տեսանելի [աշխարհից]։ Եվ որովհետև վարժվել էր Աստվածաշունչ գրքին, ընտելացել ու ծանոթ էր ճարտասանական արվեստին, նույն ժամին հորինեց մի խոհական երգ, որի սկիզբն է. «Իմ անձը սրտի անզբաղ աչքով նայում է կրկին անդամվա գալուստին», հինգ տուն՝ ութ [երաժշտական] խաղից։

Եվ երբ զորքի ամբողջ բազմությունը, ավելի քան 200 հազար, հավաքվեց միևնույն տեղում, կազմվեցին մարտաշարքեր և հարդարեցին ճակատ, միմյանց ձայնեցին հարձակվել թշնամու վրա։ Եվ ահա Ապումուսեն, որ ճանաչվում էր երբեթի որդի, ելավ նրանց դեմ պատերազմի, մտավ նրանց հետ մրցահանդեսի մեջ։ Դարձան իբրև երկաթի մի մեծ բլուր կամ ադամանդյա վեմ և իրար շուրջ խռնվելով՝ կպան միմյանց, ինչպես մեկ մարդ։ Իսկ արաբացոց զորքը սրտապնդվեց և ներսից շրջափակեց աղվանից զորագունդը և դիմեց հանդգնաբար նրանց վրա, որոնք սակայն մնացին անշարժ, առաջ չընկան ոչ մեկուց։ Եվ մինչ [արաբները] կարծում էին, թե մատնվեցին իրենց ձեռքը, սակայն նրանք աղոթում էին և աստծուն կանչում իրենց օգնության։ Ապա դիմեցին նրանց վրա՝ չորս մասով՝ Քրիստոսի խաչի նմանությամբ։ Հարվածեցին ճակատից, ճեղքեցին մարտաշարքերը և նրանց դարձրին դեպի զառիվայր, իջեցրին լեռան վրայից։ [Թշնամին] կրեց մեծամեծ

հարվածներ, ինչպես քամուց հարդն է թռչում, կամ ծուխը՝ մրրկից, և այդպես կորան գնացին աղվանից զորքի շնորհիվ, որոնք վերադարձան և հավաքեցին ավար, որին թիվ չկար։ Բայց ինչո՞ւ պիտի մեկ-մեկ, հականե հանվանե նկարագրեմ նրանց կռիվները։ Կպատմեմ կարճառոտ և կհամառոտեմ խոսքս։ Նրանց պատերազմը երկարեց մոտ մեկ տարի, և ոչ մի ճակատամարտում Ասպումուսեն երեսը չդարձրեց Բուղայից։ Եվ ինչպես պատմվում է, նրանց պատերազմների թիվը հասավ 28-ի, և արքունի զորքը ջարդվեց այնքան կռիվներ մղելուց։ Այնժամ, երբ երկու կողմերն իմացան, որ ելք չեն կարող գտնել և հասնել խաղաղության, հաճությամբ համաձայնեցին գրել թագավորին, որովհետև Աղվանից զորավարն ասաց, թե՝ «Ոչ ոք թող չկարծի, թե ես ապստամբել եմ թագավորի դեմ և այդ պատճառով ջարդել եմ Ասորեստանի զորքը»։ Այլ կուտակեց և գրեց Բուղայի վրա ապստամբության վնասն ու զորքի հարվածները, ինչը գրեց և ծանուցեց արքային, [ասելով]. «Իսկ եթե արքունուստ ինձ գրություն գա՝ կնքված արքայի մատանիով, և գրված լինի նրանից հրաման՝ որ ես գամ քեզ մոտ, կամ գնամ արքունիք, չեմ մերժի նրա հրամանը։ Բայց եթե չլինի այնպես, ինչպես ասացի, կտեսնես անսահմանից ավելի սուր ու պատերազմ»։

Այդ երկուսով նրանք սուրհանդակներ ուղարկեցին թագավորի մոտ հավատարիմ մարդկանցից, ինչպես Եսայի մարգարեն է ասում, «սուրհանդակներ կուղարկեն, որոնք կլացեն դառնապես»*, և գրեցին ու արքային ծանուցեցին, ինչ որ գործել էին և թե ինչպես էր ջարդվել արքունի զորքը։ Երկու կողմերն էլ մնացին իրենց տեղերում, մեծ զգուշությամբ պահելով իրենց պաշտպանության [գիծը] և համաձայնեցին միմյանց դեմ չելնել պատերազմի, մինչև որ կգային արքայի մոտից իրենց ուղարկած սուրհանդակները։ Բայց [ստացված] այդ մեծ հաղթությունը տվեց Ասպումուսեն զորավարի ձեռքը, որպեսզի կատարվի այն, ինչ ասել է տերը Ամոսի մարգարեի բերանով. «Կոտրատելու եմ Դամասկոսի նիգակները»**: [Դամասկոսին] այժմ Դմիշկ[390] են կոչում. այնտեղից էին եկել Բուղայի հետ [եկածները]։

---

* Եսայի, ԼԳ, 7։

** Ամոս, Ա, 5։



Եվ մինչ նրանք սպասում էին արքունի հրամանին, վերադարձան սուրհանդակները և փութապես եկան, թուղթ բերեցին արքայից Ասպումուսեին՝ հնազանդության գալ իրենց և գնալ Բուղայի մոտ։ Նրանում գրված էր թողություն վնասների, զորքի կոտորածի ու բազում ավարների համար, երդում՝ ի հաստատումն ասածների և պարգևներ՝ պատվական ու մեծագին հանդերձներից, նախշազարդ սաղավարտ և սուր, միայն թե համաձայնի արքունի խոսքին ու չհրաժարվի թագավորի կամքը կատարելուց։ Բուղային գրված էր, որպեսզի ոչ մի չարիք չհղանա կամ չգործի այն մարդու հանդեպ, այլ ուղարկի նրան թագավորի մոտ՝ մեծ պատվով ու զգուշությամբ։

Իսկ երբ Աղվանից զորապետն ընթերցեց թագավորի թուղթը, փութաց իջնել լեռան վրայից ու եկավ Բուղայի մոտ։ Եվ մինչև կհասներ զորապետի մոտ, նրան ընդառաջ հանեցին զինավառված զորագնդեր՝ ընտրովի երիվարներով։ Նրան ընդառաջ տարան մեծազարդ ու աչքի ընկնող նժույգներ, երգասացներ, գովասացներ և առջևից ու ետևից՝ երաժշտական բազում գործիքներ, մինչև որ մտավ նրանց բանակը։ Եվ Բուղան ոչնչով ամենևին չչարացավ նրա վրա, չհիշեց կատարած գործերը և ոչ էլ տրտմեցրեց իր երեսը։ Այլ ընդունեց նրան սիրով ու խաղաղությամբ, մեծաշուք պատվով ու պարգևներով՝ ըստ թագավորի հրամանի։ Իսկ մի քանի օր անցնելուց հետո ուղարկեց նրան թագավորի մոտ, նրա հետ նաև սպառազեն զինվորների զորագնդեր և ընտիր այրուձի։ Եվ գնաց քաջ նահատակ Ասպումուսեն, աներկյուղ համարձակությամբ, մտքում քաջալերվելով՝ ըստ իր կարիճ ու արի [բնավորության]։

## ԺԱ.

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱՀԱՏԱԿՎԵՑ ՄՈՒԿԱՅԵԼԸ ՎԱՆԱՆԴԻ[391] ԳԱՎԱՌԻՑ

Երբ Վանանդի անվանի ազատներից մեկը՝ Մուկայելը, անցնում էր այնտեղով, ըստ սովորության ծանոթանում ամեն մի առանձին բանի՝ պատիվներին, դերակայությանը կամ ծնողներին, տեղին, գավառին, ազգատոհմին, արիության-

ներին, պատահածի պատճառներին։ Սովորություն է գրի-րում [գրել] ինչպես հանգամանքների, նույնպես և անցի վե-րաբերյալ, ըստ ծանոթության, կամ ըստ պատվի։ Արքա-յից զինվորները բռնեցին նրան, տարան զորապետի մոտ և արքունիքին հասած բազում վնասներ կուտակեցին իր վրա, բայց առավելապես ստությամբ, քան ճշմարտությամբ, դատա-պարտեցին նրան։ Եվ մինչ նրա շուրջը հավաքվեց ահագին բազմություն, ամբաստանողները միաձայն աղաղակ բարձ-րացրին և բռնավորի առաջ օձիքները պատռելով ասացին. «Ար-ժանի է մահվան, չպետք է դա ապրի և ոչ էլ պիտի թողնել, որ պատասխան տա»։ Եվ անհուն ամբոխի սուտ վկայությունները այնպես արթնացրին բռնավորի ամբողջ զայրույթն այդ մար-դու վրա, որ Բուղա զորապետը դեռևս ոչ ոքի վրա այդպես չէր թափել իր բարկությունը։ Եվ հրամայեց տանել նրան դատաստանի, ուր միասին հավաքվել էին զորագլուխները։ Ահավոր ու տիրաբար ասաց. «Հեռացիր Քրիստոսի հավա-տից, և ես կներեմ քո գործած բազում վնասները։ Կապրես ու կվայելես թագավորի պատիվներն ու պարգևները։ Քո կա-տարած մեծ հանցանքների վրա, ինչպես լսում եմ քեզ ամ-բաստանողներից, այդ ես մի՛ ավելացրու, մի՛ համառիր ու պնդիր Քրիստոսի հավատի մեջ, որ պաշտում ես և չարա-չար տանջանքներով մի՛ զրկվիր այս կյանքից, քանզի այլևս քեզ հետ երկար չեմ խոսելու»։

Երանելի Մուկաթլը պատասխան տվեց՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հանդեպ լի հավատով ու ճշմարիտ խոստովանությամբ և ասաց. «Երանի թե ինձ թույլ տան նահատակվել ճշմարտու-թյան և Քրիստոսի անվան համար և հեղել իմ արյունը Քրիս-տոսի արյան փոխարեն, մահվան մատնել իմ մարմինը նրա մարմնի փոխարեն և իմ չարչարանքները խառնել նրա չար-չարանքներին, որպեսզի նրա հետ փառավորվեմ։ Նա է իշ-խանաց իշխանը, թագավորաց թագավորը, կենաց և մահու տերը, հավիտենական աստվածը՝ Հիսուս Քրիստոսը։ Իսկ քո սպառնալիքներն ու չարչարանքները, որ ասում ես, թե կհասցնես ինձ, իմ աչքին թվում են մանկան կամ խենթացա-ծի խաղ, և քո խոսքերը նույնպես անմիտ մարդու, խելագար ու ցնորված ծերունի խոսքեր են»։



Այնժամ բռնավորը բարկացավ և հրամայեց նախ կտրել սրբի լեզուն, որպեսզի առհասարակ չշարունակի անարգել թագավորին և մարգարեին։ Ապա հրամայեց հատել ձեռքերն ու ոտքերը։ Ապա անդամ առ անդամ կտրատեցին նրան, որը մասնատվեց որպես կենդանի պատարագ աստծո որդուն։ Բայց մնաց տակավին մեծ ուժով, գոհությամբ ընդունեց Քրիստոսի սիրույն իրեն հասած չարչարանքները։ Դեռևս կենդանի էր, որ կանգնեցնել տվեցին մի մեծ և հույժ բարձր փայտ, իրեն դրեցին փայտի ծայրին և ամրացրեցին բարձր տեղում։ Ապա իջեցրին փայտից, սրով հատեցին գլուխը և [illegible] դրեցին իր նահատակության տեղում՝ Գորգում[392], [illegible] լեռան մերձակայքում, ուր այլազգիների բանակն էր։ Եվ այսպես փառավորապես սպանվեց Քրիստոսի սուրբ և ա-մենահաղթ նահատակը՝ Մուկաթլը, հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու։ Նրան փառք հավիտյան. ամեն։

Նմանապես հրաշափառ, երիցս երանելիներ Սողոմոնը, որ Սեորդի[393] էր ճանաչվում ու վերին աշխարհից՝ Կահան, [illegible] թագավորի խոսքերից և չունկնդրեցին մաղձա-համ ու ժահահոտ խոսքերին, իբրև դերեզմանը ճեղքած ու դուրս եկած գարշահոտության։ Որով և մեծ չափով զզվեցին աստվածային օրենքների և աստվածորդու երկրպագության նկատմամբ։ Սակայն նահատակվեցին արիաբար, թագավո-րին պատասխան տվեցին մեծ համարձակությամբ, հուսալով մեն միայն թագավորաց թագավոր և իշխանաց իշխան Քրիս-տոսից՝ Աստծո որդուց։ Եվ ասացին թագավորին. «Մեզ համար լավ է մեռնել Քրիստոսի անվան համար, քան վայելել [կյանքը] քեզ հետ։ Ինչպիսի մահով որ կամենում ես, պատ-րաստ ենք կրելու ամեն տեսակ չարչարանքներ, որ ուսուցա-նել է քեզ չարյաց վարդապետը՝ քո հայր սատանան։ Մենք չենք հրաժարվի Քրիստոսի սիրուց և չենք բաժանվի հավիտե-նական կյանքից, չենք դառնա հավիտենական տանջանքների ժառանգորդ»։

Այնժամ բարկացավ բռնավորն, իբրև կատաղած գազան, որ հարձակվում է ոչխարների վրա և կոտորում նրանց։ Հրա-մայեց ամրացնել նրանց ցցից՝ կապած ոտք ու ձեռքը։ Եվ բերել տվեց փշոտ գավազան ու դրանով երկար տանջեցին նրանց, մինչև որ կարծեցին, թե վախճանվել են, բայց նրանք դիմա-

քան մեծ ուժով և գոհացան Քրիստոսի անբավ ու առատաշնորհ պարգևներից, որ արժանի դարձրեց իրենց մեռնել Քրիստոսի անվան համար և փառակել մարտիրոսության պսակը։

Եվ մինչդեռ կենդանի էին և փառք էին տալիս Քրիստոսի անհաղթ զորությանը, որ ուժ տվեց սրբերին հոգևոր պատերազմի մեծ ասպարեզում, առավել ևս բարկացավ Թագավորը և բորբոքվելով վառվեց ինչպես հնոցը։ Բերել տվեց փայտեր. երանելի Սաղամոնին դրեցին փայտի վրա և մոտը կանգնեցրին սուրբ Կահային, որպեսզի գոնե մեկը մյուսի տանջանքներից վախենալով, հնազանդվի թագավորի հրամանին։ Իսկ նրանք առավել քան նախկինում, դիմացան չարչարանքներին և խաչակից եղան Քրիստոսին։ Ուրացան իրենց անձերը և կրեցին Քրիստոսի խաչը, գնացին նրա կանչով, կորցրեցին իրենց անձերը, այսինքն այս աշխարհի կյանքը, որպեսզի գտնեն հավիտենական կյանքը, միայն Քրիստոսի համար, որպեսզի նրա հետ պսակվեն։

Նույն ժամին հրաման եղավ արքունուստ, որպեսզի սուրբ Սաղամոնին սպանեն նույն փայտի վրա, նետեր արձակելով վրան։ Եվ բռնավորի հրամանով դահիճները չորս կողմից նետեր ձգեցին դեպի նա, և Քրիստոսի երանելի նահատակն ավանդեց հոգին ի փառս աստծո։ Իսկ սուրբ Կահային հրամայեց սպանել սրով։ Դահիճը վերցրեց սուրը, խփեց երանելուն և կտրեց նրա գլուխը։ Ու նույն ժամին հոգին ավանդեց աստծո ձեռքով։ Այսպես նահատակվեցին երանելիները ի փառս սուրբ երրորդության, հավիտյանս հավիտենից։

Գերյալների հետ էր նաև Հովնանը՝ Խութի լեռներից։ Սա էր, որ Բուղայի գալուց առաջ ելավ Հայաստան մտած նրա նախորդի դեմ՝ լեռան բնակիչներով և մեծամեծ հարվածներ հասցրեց արքունի զորքին։ Իսկ երբ լեռցիների դեմ ելան Արաքացոց զորագնդերը, հարվածեցին նրանց, ձերբակալեցին երանելի Հովնանին և տարան կապանքներով ձգեցին արքունի բանտ։

Եվ մի օր Թագավորը հրաման տվեց բերել [Հովնանին] իր առջև։ Նրան հարցրեց Հովսեփի մահվան, վրեժխնդրության նպատակով նրա վերջին քաջության մասին, երբ ընդդիմակայեց զորապետին։ Հիշեցրեց նրան ապստամբության



մասին, մեջ բերեց նաև արքունիքին [հասցրած] վնասները, միաժամանակ ավելի սաստիկ ահ գցեց նրա վրա, որպեսզի գոնե դրանով կարողանա այժմ մոլորեցնել Հոր, Որդու և Սուրբ Հոգու հանդեպ ճշմարիտ հավատքից։ Ապա առաջ դրեց վնասները, որով կարծում էր, թե նրան կգցի կորստյան աղբի մեջ, ասելով. «Եթե կամենում ես ապրել ինձ հետ և վայելել այս աշխարհի կյանքը, ինձնից ընդունել պարգևներ ու պատիվներ, համաձայնիր իմ կամքին և հեռացիր քրիստոնեության հավատից, որ պաշտում ես և ծառայիր ճշմարիտ օրենքներին, ու հավատքին, որ ուսանել ենք Մուհամմեդ Մարգարեից։ Ապա թե ոչ, կստանաս դրա հակառակը՝ տանջանքներ ու մահ և կզրկվես այս կյանքից չարաչար մահվամբ»։

Իսկ սուրբը, գեղեցիկ խորհուրդ հղանալով, ասաց բռնավորին. «Ինչո՞ւ ես փոքրիկ երեխա համարում ինձ և առաջս գցում պատրանքներ, խոստանում սնոտի, կեղծ ու խաբեպատիր հույս, [կամենալով] հանել ինձ ճշմարիտ հույսից, որով մանկությունից վերահասու եմ եղել ճշմարտությանը»։

Թագավորն ասաց. «Մի՛ արհամարհի թագավորական իմ խոսքերը և մի՛ կորցրու քո կյանքը. կդառնաս մեկն այն մահապարտներից, որոնք իրենց անձերը զրկեցին կյանքից տաժանելի մահվամբ, ինչը պատրաստված է նաև քեզ համար, եթե մնաս նույն համառությամբ հրեա կնոջ՝ Մարիամի որդու՝ Հիսուսի հավատքին»։

Երանելին ասաց. «Տեսնում եմ, որ խոսում ես ինչպես զառամածի ու խելագարվածի մեկը։ Ես վաղուց եմ անարգել քեզ և փոքր-ինչ երկյուղ չունեի քեզնից իմ սրտում, քանզի չամահրեցի քեզ և երբ մտանեցի քո զորապետին, իր զորքով հանդերձ, ջախջախեցի նրա ավարը և երկրորդ անգամ ոչ պակաս նախճիրներ գործեցի քո զորքերի մեջ։ Արդ, իմ արիություններին վախկոտությո՞ւն պիտի խառնեմ և երկյուղո՞վ պիտի դիմեմ մահվան։ Մարմնավորների համար այնչափ արիացա, ինչպես իմացել ես և ինչպես ահա լսում ես ինձանից, Քրիստոսի և հավիտենական կյանքի համար չպիտի՞ մեռնեմ, կամ արդյոք քեզնի՞ց պիտի վախենամ. քա՛վ լիցի։ Ահավասիկ առջևդ եմ, մի հապաղիր անելու այն, ինչ որ կամենում ես»։

Երբ լսեց այսքան և սրանից էլ առավել հանդուգն, առանց երկյուղի և մեծ համարձակությամբ ընդդիմաբանելը, հրաման տվեց փութապես սրով մարմնից հատել նրա գլուխը։ Դահիճները վերցրեցին երանելիին և տարան սպանման տեղը։ Իսկ նա իր ձեռքերը բարձրացրեց երկինք, աղոթեց, որպեսզի կարողանա հաղթել նահատակությամբ։ Ապա մոտեցրեց պարանոցը դահճին, որը հատեց նրա գլուխը, և երանելի Հովնանը ավանդեց հոգին ճշմարիտ խոստովանությամբ, հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու. նրան փա՛ռք հավիտյան։

Եվ երբ Բուղան կատարեց, ինչ որ մտահղացել էր Հայոց աշխարհի հանդեպ, դրան ավելացրեց նաև երկրից Հայոց մեծամեծներին վերացնելը, որպեսզի ոչ ոք չմնար ապահովության մեջ, և հատկապես, որպեսզի ոչ մեկը չկարողանար ընդդիմանալ նրա զորությանը։ Գրեց հանվանե նրանց, որ մնացել էին իրենց գավառներում, ամրոցներում, որպեսզի փութով ամեն տեղից, առանց կասկածանքի ու երկյուղի, հասնեն իր մոտ և տիրեն ամեն մեկն իր իշխանությանը, վայելեն արքունի պարգևներ ու պատիվներ և հնազանդ լինեն թագավորին։ Ապա ելան յուրաքանչյուրն իրենց տեղերից և միմյանց հետևից եկան Բուղայի կանչով, հավաքվեցին միևնույն վայրում և եկան արաբացոց զորապետի մոտ։ Իսկ նա կարճ ժամանակ ներեց նրանց՝ առերես սիրով և խաղաղությամբ, մինչև որ գլուխ բերեց Ապումուսեի նկատմամբ կատարածը։ Իսկ երբ զորապետը հասկացավ, որ այնուհետև ոչ ոք Հայոց իշխաններից չմնաց, որ հավաքված չլիներ իր մոտ, այնժամ մերկացրեց կեղծ պատրվակը, որ սատանան սերմանել էր իր սրտում։ Եվ ըստ ազգատոհմերի, ըստ Հայոց իշխանների թվի, կազմեց զինավառված զորականների գնդեր, զինեց և պատրաստեց։ Այգաբացին, մինչ նրանք քնած էին յուրաքանչյուրն իր ննջավրանում, զորքը շրջափակեց սրերով, վահաններով, նիզակներով, վառած մոմերով և մտան ներս, ըստ իրենց զորապետի հրամանի։ Դրեցին նրանց ոտքերը երկաթե կապանքների մեջ, նստեցրեցին ուղտերին և շարժեցին դեպի Սամառա։ Նրանցից հանվանե ճանաչված են իշխան Սմբատը՝ Հայոց սպարապետը, Գրիգորը՝ Քուրդիկի որդին և Մամիկոնյան իշխանը, Աղվանից իշխան Ատրներսեհը, Սյունյաց Գրիգոր իշխանը, Սմբատի որդի Սահ-



կը՝ Շաքիի[394] տերը, որ ձերբակալեց Բաբանին, իշխանիկ Վասակը՝ Վայոց ձորի[395] տերը, Սյունյաց Փիլիպե իշխանը, Գարդմանից[396] Ներսես իշխանը, և ապա Եսայի Ապումուսեն, որ շատ պատերազմներ էր վարել։ Մնացին միայն Աշոտը՝ սպարապետի որդին, նրա եղբայրներ Մուշեղն ու Սմբատը, որոնց Բուղան թողեց տիրելու իրենց երկրին, զորապետի ու թագավորի հետ մինչ այդ նրանց հոր [ունեցած] մտերմության համար, քանզի նա իր մտքի ողջ զորությամբ շարժվում էր նրանց կամքով։ Իսկ Վասպուրականի իշխանության մեջ մնաց Գուրգենը զորավարի փոխարեն, ինչպես նաև Արծրունյաց տոհմի մյուս ճյուղերը։ Եվ վերացրեց Հայոց երկրից բոլոր զորավոր տղամարդկանց, իսկ ինքը գնաց այնտեղից, մտավ Գարտավ՝ ձմեռելու և տեսնելու, թե ինչ է անելու հետագայում Հայոց աշխարհի հանդեպ և ինչպես է այդ գլուխ բերելու։ Իր մոտից ոմն Իբրահիմի ուղարկեց Հայոց զորապետ, արքունի հարկերի վերակացու և տիրելու [Հայոց] իշխանների փոխարեն։

## ԺԲ

## ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԱԾԻ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վասպուրական երկրից իշխանության վերացումից հետո Արծրունյաց ազգատոհմից մնացին այլևայլ [իշխաններ]՝ քաջն Գուրգենը և իր եղբայր Մուշեղը, Ապուչափրը, Ապումկդեմը, Վասակը, մյուս Վասակը և դարձյալ Վասակ [անունով] ուրիշը, Մուշեղը, Աշոտը, Սահակը և Արծրունյաց տոհմից ուրիշներ՝ իրենց ազատներով։ Եվ սկսեցին ավելանալ եղածի վրա այլ չարիքներ, քանզի միմյանց հետ կռիվներ էին անում իշխելու ցանկության պատճառով։ Բաժանվեցին միմյանցից և զորք գումարեցին Բուղայի սրից ու գերությունից փրկվածներից։ Կեսը Գուրգենին առաջ բերեցին իշխանության աթոռի համար, մյուսները՝ Ապուչափրին, ոմանք՝ Վասակին, ըստ այնմ, որ ասել է Եսայի մարգարեն. «Այն ժամանակ պիտի բռնի մարդ իր եղբորը կամ ազգակցին և ասի՝ եղիր մեզ իշ-

խան, և մեր ավերքը թող քո ձեռքի տակ լինի»*: Երկիրը շփոթվեց, անդադար էին կռիվները, և ուր որ հասնեին, ավերում էին՝ ասպատակությամբ, ավարառությամբ և հափշտակություններով: Եղբայրը եղբորը չէր ողորմում, ըստ այնմ, որ ասել է դարձյալ Եսային. «Կկռվեն,— ասում է— մարդը մարդու, ընկերն իր ընկերոջ դեմ, կընդհարվի մանուկը ծերի և անարգը պատվականի հետ»**: Քանզի նման էին խարայելացիներին, որոնց անիշխանության ժամանակ անկարգություններ էին, և յուրաքանչյուր մարդ անում էր իր սրտի ուզածը: Նույնը այժմ էր կատարվում: Որովհետև խեղճերն ու տկարները աղքատացած թափառում էին ու վտանգվում, իսկ զորեղներն ու իշխանները, ըստ գազանների բնության, դարձել էին վայրենամիտ, անամոթ և անարգել հափշտակությամբ վրդովում էին ամբողջ երկիրը:

## ԺԳ

### ԳՈՒՐԳԵՆԻ ՄԻԱՅՆԱԿ ՄՆԱԼՈՒ ԵՎ ՄԵՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆՐԱ ԲԱԶՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինձ համար հավետ ուրախալի է ու ախորժելի ձեռնարկել մեծատոհմիկ բարեփառ ու քաջարի Գուրգենի մասին պատմությունը, որը հույժ փառավոր, զորեղ ու պատվական և առաջին գահին նստող ազգատոհմից էր և սերել, բողբոջել էր երկու թագավորազուններից՝ Սենեքերիմյաններից ու նենայն Մամգունյաններից[397], որոնք միասին, հավասարապես ժառանգել էին թագավորական գահեր:

Հորից Սենեքերիմյան էր, մորից՝ Մամգունյան, ծննդաբանությամբ հասնում էր մեր ժամանակները: Գուրգենի մասին վայել է ավելի երկար գովասանքը, հարկավոր է հատուկ նրան ավելի երկար գովասանքով ու ճարտասանությամբ: Քանզի ժամ է պատմագրության և ոչ թե գովասանքների, հեռու կմնամ շատերի մեղադրանքից, մանավանդ որ չեմ կարող իմ անճարակ գիտությամբ ըստ պատշաճի տալ սրա ներբողականը, որը թողնում եմ ուրիշ, ավելի կարող և մտացի այրերի և ինձ ազատում մեծագույն պարսավանքներից: Սակայն ես չեմ կարող ծուլանալ, ամաչել կամ սխալվել և որևէ մեկին, սրան ի զուգակշիռ, կորիճ համարել, գրվատել, որպես դիմացկունությամբ, մարտիրոսությամբ սրան հավասարի: Արաբացի ասպատակողների դեմ արյուն ու քրտինք թափելով մարտնչեց հայրենի երկրի համար, իր հոգին ու մարմինը [դրեց] Քրիստոսի սուրբ եկեղեցիների, նրա հավատացյալների, Հոր, Որդու, Սուրբ Հոգու անարատ ու անբիծ պահելու համար: Իբրև քաջ հովիվ, անձը մահվան տվեց հոտի համար և նմանվեց աստծո որդուն, ինչպես Պողոսն էր սիրում ասել՝ «Որոնց առաջուց ճանաչում էր, նախասահմանեց կերպարանակից լինելու իր որդու պատկերին»*: Այս թող բավականացնի մտառու անձանց, իսկ մենք, ինչպես պետք է, համառոտաբար առաջ կվարենք մեր պատմելիքը:

Բայց դու ինձ մի մեղադրիր, ո՜վ ուսումնասեր, որ մանրապատում չեմ շարահարում սրա բովանդակ գործերը: Որովհետև ուրիշները մեկ-երկու կամ մի քանի գործ են կատարել, իսկ սրանք՝ գերազանցում են շատերի արածներից: Այդ պատճառով այժմ գրում եմ համառոտ, ինչպես Պողոսն էր սիրում գրել Եբրայեցիներին ուղղված թղթում, թե՝ «ժամանակը բավական չէ պատմելու»՝ Իսրայելի դատավորների և սուրբ մարգարեների մասին, և ասում է միայն այսքանը. «Որոնք հավատով հաղթեցին թագավորությունների**»: Այսպես է գրում նաև Հովհաննեսը՝ Փրկչի մարդեղության խորհրդի մասին, ավետարանական գրքի վերջում:

Վասպուրականի իշխան Ապուպելճի որդի Գուրգենը Բուղայի [օրոք] և Հայոց կաթողիկոս Հովհաննեսի հայրապետության շփոթ տարիներին գործեց իմաստությամբ, հակառակ չգնաց չարին: Այլ երբ Բուղան մտավ Վասպուրական աշխարհ, Գուրգենը ելավ գնաց Մամիկոնյան իշխան Քուրդիկի մոտ՝ Բագրևանդ գավառ և մնաց այնտեղ, քանզի Քուրդիկը Գուրգենի քեռին էր:

* Հմմտ. Եսայ., Գ, 6:
** Հմմտ. Եսայ., Գ, 5:

* Հռովմ., Ը, 29:
** Եբր., ԺԱ, 32—33:

Իսկ երբ Բուզան կատարեց իր արարքները Վասպուրական աշխարհում և շարժվեց արևելյան կողմերը, Գուրգենը ելավ գնաց Սալեր[399] գավառ։ Այդ ժամանակ Իշխանիկ կոչեցյալը, Բագրատունյաց զարմից՝ գաղտնաբար[399] բյուզանդացիներից գրավել էր Արամանյակ[400] բերդը։ [Գուրգենը] նրանից ընդունվեց մեծաշուք պատվով։ [Բյուզանդիայի] արևելյան զորավարը եկավ պատերազմելու Իշխանիկի[401] դեմ, առնելու ամրոցը։ Այնտեղ Գուրգենը մեծ արիություն ցույց տվեց բյուզանդական զորքի դեմ, ոչ թե մեկ, այլ բազում անգամ։ 40 տղամարդկանցով ընդհարվեց հազարի հետ, սպանեց նրանցից շատերին՝ բյուզանդացոց ընտրյալներից, ավարի մատնեց, մինչև որ նրանց զորապետը, զարմացած սրա քաջության վրա, գրեց Բյուզանդիայի Միքայել կայսեր, զեկուցելով նրա մասին։

Իսկ կայսրը գրեց Գուրգեն զորապետին, թե միգուցե կարողանա համոզել նրան մեկնելու թագավորանիստ քաղաքը, կայսեր մոտ, առաջ քաշվի և նրանից ստանա մեծ պարգևներ, բարձ ու պատիվ։ Գուրգենը չհամաձայնեց գնալ բյուզանդացիների մոտ, բայց Գրիգորին համոզեց բերդը տալ զորապետին, որով հաճոյացրեց կայսեր։ Արաբացոց զորքը՝ կազմված Բուղայի զորքերից, եկել և պատերազմում էր բյուզանդացոց զորքի դեմ, այդ ամրոցի մոտ։ Գուրգենը բազում անգամներ զամ ելավ նրանց դեմ և քիչ վնասներ չհասցրեց արաբական զորքին։ Ապա անցավ գնաց Իշխանիկի մոտ, Աշխարհաքերդ[402] կոչված ամրոցը և այնտեղից արիաբար, քաջասիրտ դիմացկունությամբ ելավ գնաց դարձյալ Սմբատ սպարապետի մոտ։

[Սմբատը] նրա մասին զեկուցեց Բուղային, ասելով. «Այս մարդը Գուրգենն է, Արծրունյաց տոհմից, քաջ և պատերազմող տղամարդ, որը քո ահից անցավ գնաց Բյուզանդիայի կողմերը, բազում անգամներ հարձակվեց բյուզանդական զորքի վրա, որոնք պատերազմում էին քո զորքերի դեմ և այնտեղ քո զորքի փոխարեն քիչ արյուն չթափեց բյուզանդացի զորականներից։ Ահավասիկ, եկել և սպասում է քո հրամանին։ Արդ հաճելի կլինեն քեզ, քաջ զորավար, սրա գործած քաջությունները բյուզանդացոց զորքի դեմ»։ Իսկ Բուզան մեծ



հաճությամբ հրամայեց սպարապետին, որ Գուրգենը առանց երկյուղի մնա նրա մոտ։

Նույն ժամանակ, ովքեր մնացել էին Արծրունյաց ազգատոհմից, երբ լսեցին արքունի զորքի պարտվելը ծանարներից, հավաքվեցին միևնույն վայրում, զորագունդ կազմեցին, հետևազոր մարտակիցներով, խառնիճաղանջ ամբոխով հանդերձ, թվով 4000 մարդ, և իրենց առաջնորդ կարգեցին Ապուջափր Արծրունուն և նրա հետ Սահակ Ապումկդեմին՝ Ապուջափրի քեռորդուն, քաջ և պատերազմող մի տղամարդու։ Ապա ասպատակեցին, ավարի մատնեցին Ճվաշ[403] և Թոռնավան գավառները։ Եվ որովհետև Բուզան գավառների [վերակացությունը] վստահել էր Սմբատ սպարապետի ձեռքը, սա գրեց Նախճավանի Իբրահիմ անունով ամիրային և իմաց տվեց Վասպուրականի զորքի մասին։ [Իբրահիմը] փութապես հասավ Բերկրի քաղաքը և միանալով քաղաքացիներին, ելան և պատահեցին Վասպուրականի զորագլուխների զորքի մի մասին, Խողաղբերք[404] անունով գյուղի մոտ, այնպես, որ այլազգիները տեղի տվեցին և փախան Ապումկդեմի առջևից։ Ապումկդեմը ձիով վրա վազելով մի անգամից սպանեց 8 մարդու իրենց ձիերով, ապա նրանց վրայից հանեց զենքն ու զարդը, այլազգիներին հասցրեց մեծամեծ հարվածներ և շարունակեց ասպատակել նրանցից հետո։ Եվ մինչ գնում էր ու խորհում, խոցվեց նրա ձին։ Հանկարծակի ձիու ոտքին փաթաթվեց մի փոքրիկ ճյուղ, ինչպես պատմում են, և ձին գլխիվայր գլորվելով, ջարդեց մեջքի վանդակը և վայր գցեց հեծյալին՝ քաջ զորավար Ապումկդեմին։ Թշնամիները վրա հասան նրան և հարվածեցին սրով։ Ինչ-որ մեկը նրա ոտքերից հանեց կոշիկները։ Այդ վատ մարդը աքացիով հարվածեց սրտին և սպանեց նրան։ Այնժամ դիմեցին նրա վրա, հատեցին գլուխը և տարան տվեցին իրենց զորապետ Իբրահիմին։ Եվ քաջալերվեցին դարձյալ Հայոց զորագնդի դեմ և հասցրին մեծամեծ հարվածներ։ Բայց Ապուջափր իշխանը և ովքեր նրա հետ էին, քաջապես մարտնչեցին այլազգիների դեմ և հաղթեցին։

Իսկ երբ իմացան, թե սպանվել է զորավարը, կտրվեց իրենց աջ ձեռքի բազուկը և ի փախուստ դարձան, խախտեցին մարտաշարքերը, քակեցին ճակատը, լքեցին միմյանց, թո-

-ջնցին պատերազմն ու փախան գնացին, ով որտեղ կարող էր։ Մնաց միայն հետևակազորը՝ լքված, առանց առաջնորդի։ Նրա վրա էլ հարձակվեցին, սուր գործադրելով կոտորեցին և սպանվածների դիակներով լցրեցին դաշտաձև հովիտը։ Այնտեղի աղբյուրները և ծործորներից ցած քամվող ջրերը դարձան արյուն։ Իսկ ինքը՝ Իբրահիմը եկավ անցավ այն կողմ՝ Ոշտունյաց ոստանը և մնաց այնտեղ։ Ապա վերադարձավ իր տեղը՝ Նախճավան։ Իսկ Ապուջաֆրն անցավ Աղբակի կողմը. նրա մոտ հավաքվեցին բոլոր կողմերից զորագնդեր։ Ապա վերադարձան, մտան Ոշտունյաց ոստանը և իրենց վրա իշխան կարգեցին Վասակ Կովակերին՝ Վահանի եղբորը։

Քաջն Գուրգենը լսեց արաբներից Վասպուրականի պարտության և Վասակի իշխանանալու մասին։ Ելավ ու փութապես եկավ հասավ Վասպուրական աշխարհը՝ սպարապետի կամակցությամբ։ Գալուն պես՝ արագությամբ վրա հասավ Ջլմար և Սրինգ անուններով ամրոցներին, գրավեց դրանք, ձերբակալեց Վասակին, իր ձեռքը վերցրեց Վասպուրականի ամբողջ իշխանության զորապետությունը։ Եվ սկսեց հերթով շրջել ամբողջ նահանգում, ուր բնակվում էին արաբները, որոնք այնտեղ էին մնացել Բուղայի հրամանով։ Այլազգիներին հասցրեց մեծամեծ հարվածներ, կոտորեց նրանց սրով ու նետերով և վերացրեց արաբացոց այն բոլոր ցեղերին, որոնք բնակվում էին Վասպուրականի իշխանությունում։

Այն ժամանակներում Բուտել անունով ինչ-որ մեկը, Բուղայի հրամանով արքունի զորքով եկավ Գուրգենի վրա։ Նրա հետ էին նաև Բերկրիի քաղաքացիները, որ Ութմանիկներ[405] են կոչվում, ինչպես և Վասպուրականի ազատները, որ միաբանել էին արքունի զորքին, թվով 2000 մարդ։ Միմյանց հանդիպեցին Որսոր[406] գյուղի մոտ, Հայոց ձորի եզրին, որը տանում է դեպի Ա[illegible]ունի[407] գավառ։ Եվ Գուրգենն անհոգ ու ապահով բնակվեց այնտեղ՝ 400 մարդկանցով։ Այնինչ առավոտյան հանկարծակի վրա հասավ արաբացոց զորքը, իսկ Գուրգենն աճապարեց հեծնել ձին և ապա կազմեցին մարտաշարքեր և հարդարեցին ճակատ։ Վահանավորները փակեցին ճակատի առաջակողմը և կանգնեցին հետևակազոր խիզախների թիկունքում։ Հայոց զորագունդը արիաբար հանդեպ



մեջ մտավ, ճակատեց այլազգիների դեմ երկար ու ձիգ ժամեր և մեծամեծ հարվածներ հասցրեց նրանց բանակին։ Եվ ապա արաբների զորագունդը, մի փոքր զորանալով, մնաց տեղում։ Այնժամ Գուրգեն իշխանի սիրտը չհամբերեց։ Նա մտրակեց իր արագավազ ձին, որին նստել էր և հարվածեց արաբացոց ձախակողմյան զորագնդին, ճեղքեց մարտակարգը և շուռ տվեց նրանց։ Այլազգիները Գուրգենի առջևից փախան մի կողմ։ Իսկ նա գնաց ետևներից և անհատնում ուժով կոտորեց նրանց։ Գուրգենի սրից սպանվածներն ավելի էին, քան [ողջ] մնացածները։ Հայոց զորքը հետապնդեց կենդանի մնացածներին և դուրս հանեց երկրից։ Բայց արաբացոց ուժ թեր սասանեց Հայոց զորությունը, ուստի [հայերը] նահանջեցին, ետ գնալով մինչ իրենց սահմանները, իսկ [արաբները] ետ դարձան և հույս ունեին խապառ ոչնչացնել Հայոց զորքը։ Բայց արաբացոց զորքը պարտվեց քաջն Գուրգենից, և բեկվեց նրանց զորությունը։ Այնուհետև արաբացոց զորքն այլևս համարձակ ելումուտ չէր անում Վասպուրական աշխարհը, քանզի սաստիկ ահ ընկավ նրանց վրա։

Բացի Գուրգենի վրա եկած բազում հրոսակներից ու սաստիկ պատերազմներից, որ մղեց քաջությամբ ու հաղթարար, ինչպես և չորս կողմից պաշարած արտաքին թշնամիներից, շատ էին նաև ներսում ազգակիցների, հարազատների խարդախություններով, ուխտազանցությամբ ու երդմնազանցությամբ առաջացրած խառնակությունները։ Բայց նրանից անբաժան էր հույսն ի Քրիստոս, ամենից ստացավ գերազանց ու հոյակապ անուն, դարձավ հաղթության օրինակ։ Ամենակալ տերը նրա հետ էր ամենուրեք, որտեղ նա կամենար։

Նրա քաջության, խոհեմության, մղած պատերազմների, հարձակումների մասին լուրը հասավ Բուղա զորապետին, որի սիրտը նրա հանդեպ փոխվեց սիրո և խաղաղության։ Ինչպես վայել է զորապետին, նրա համար բերել տվեց ու մեջքին կապեց իշխանական սուր, և պարսկական գոտի, որով պատեց մեջքը։ [Տվեց] հարվածելու գավազան, խրոխտաքայլ, արագավազ և պատերազմների համար հարմար ձի։ Նրան կարգեց իշխան իրեն վստահելի տեղում և այդպիսի փայլլությամբ ճոխացրեց երևելի տղամարդուն։ Այլևս ներքին ու արտաքին հարձակվողները չէին կարողանում դիմել

դեպի [երկրի] ներսը և մարտնչել Քրիստոսից զորացածների անհաղթ զորության դեմ։ Բայց ես անհունորեն զարմանում եմ, թե ինչպես էր կարողանում տոկալ, առանց հոգնելու կրել բազում չարչարանքներ։ Նախքան մտքով հոժարելը [պատերազմական] հանդեսների մեջ մտնելու, մարմինը միշտ պահում էր անհանգիստ ու ամուր՝ ճակատամարտերի համար։ Բայց ինչպես նախօրոք ասացի, պարսավանքներից ինձ հեռու եմ պահում սրա մասին ինչպես կարգն է, մանրամասնորեն այստեղ չշարադրելու և անչափելին ի մի հավաքել, մասնավորեցնել չկարողանալու պատճառով, մանավանդ որ մեզանից ավելի առաջ ուրիշները հավաքել և շարադրել են։

Չորս տարի անցնելուց հետո, երբ տեր Զաքարիան գրավում էր Հայոց կաթողիկոսության գահը, Վասպուրականի Աշոտ իշխանի եղբայր Գրիգորը վերադարձավ Ափխազաց աշխարհից և նրանց օժանդակությամբ ու վրաց ընտիր զորքով եկավ մտավ մեր Վասպուրական աշխարհը՝ Գուրգենի դեմ պատերազմելու համար։ Բայց երբ նրա հետ եկած զինվորները իմացան [Գուրգենի] անկասրում արիության մասին, այս ու այն պատճառաբանություններով վերադարձան իրենց տեղերը։ Իսկ Գրիգորը, չկարողանալով ընդդիմակայել նրան, հետը խոսեց սիրով ու խաղաղությամբ, ապա հաշտվեցին և երկիրը բաժանեցին միմյանց միջև։ Բայց խռովարարներն ու խաղաղության ատողները չդադարեցին բարուն և չարի աճմանը հակառակ գնալուց։ Մանավանդ Վասակը, որ կարծեցյալ իշխանական անունն իր վրա էր կրում։ Գուրգենը, թեպետև գտավ իր դեմ նենգություն անողներին, ոչ ոքի չհատուցեց նրանց չարության փոխարենը։ Բայց ամեն անգամ իբրև կատակով բռնում էր Վասակին և ազատ արձակում խաղաղությամբ։

Նույն ժամանակներում գերությունից եկավ Վահանը, Աշոտի որդին և Սահակի հորեղբորորդին՝ տիրելու մեր երկիրը։ Զորագունդ կազմեց Գուրգենի դեմ, բայց ոչ թե հաղթեց, այլ պարտություն կրեց։ Գուրգենը նստած էր Ռշտունյաց Ոստանի ամուր բերդում, և ահա Վահանը հանկարծակի վրա հասավ նրան, մտադրվելով մի վնաս հասցնել։ Բայց Գուրգենը սակավաթիվ տղամարդկանցով, ինչպես զառիվայրից հոսող ջուր, քշեց Վահանին ու նրա զորքին։ Ապա իջան դաշտավայրը,



խմբեր կազմեցին, ճակատ հարդարեցին և հարձակվեցին միմյանց վրա։ Շատերը գետին գլորվեցին։ Վիրավոր ընկածների մեջ էր նաև Ամատունյաց նահապետ Շապուհը։ Իսկ երբ Գուրգենը հանդիպեց Վահանի ուժեղ զորագնդին առավոտյան ճահճում, բազմաթիվ սրերով [կամեցան] հարվածել նրան, մինչև որ ինչ-որ մեկը՝ Ջվանշիր անունով, ետևից հանկարծակի հարվածեց ու վիրավորեց Գուրգենին, որն արագությամբ քաշեց սուրը և հարվածեց Ջվանշիրի երեսին, հանեց նրա աչքը, իսկ ինքը վերադարձավ մեծ հաղթությամբ և մտավ ապահով տեղեր։

Մի քանի օրից հետո Վահանը դարձյալ վերադարձավ Սամառա, [հորը] Աշոտին զեկուցելու կատարվածի մասին։ Իսկ Գրիգորը իր վերադարձից հետո ապրեց մեկ տարի և մեռավ իր մահվամբ։ Նրան տարան թաղեցին Աղբակ գավառի Սուրբ Խաչ[408] վանքում։

Իսկ Գուրգենը շարունակեց քաջագործությունները մարտադաշտերում և գիշեր ու ցերեկ դադար չուներ՝ իրեն միացած ազատազորքով հանդերձ։ Եվ ոչ թե տեղ-տեղ էր մարտահանդեսների մեջ ցուցաբերում հաղթական քաջություններ, այլ բոլոր տեղերում սլանում էր խիզախաբար։ [Յուրայիններով], ինչպես մեկ մարդ, զինավառված ու պատրաստ պատերազմի, հասնում էր ամրոցներին, տապալում նրանց զորությունը սրով ու նետաձգությամբ, սրի և նիզակի փայլատակմամբ և գիշերային մարտերում քաջություններով, նման Իսրայելի քաջ զորապետ Հեսուին, Գեդեոնին[408] կամ թե նույն իրեն՝ Աբրահամ նահապետին, որ վրա է հասնում քանանացիներին, խիզախում հավետ հաղթական քաջագործությամբ և վերադառնում մեծ հաղթությամբ։ Նույն կերպ կամ թե ավելի հրաշալիորեն մեծ զորավար Գուրգենը հաղթական մարտերով պարտության մատնեց իսմայելացոց ցեղին և ամեն ինչով, բոլոր տեղերում դարձավ հաղթության օրինակ։ Եվ իբրև քաջ հովիվ, դրվատվեց փրկչից և իր անձը տվեց խաշների պահպանության, ընդդեմ ապականող գայլերի։ Հարձակվեց անխնա թափով, արյամբ ու քրտինքով, սպանելու, վերջ տալու համար սրի մատնեց մեր աշխարհի վրա հարձակվողներին ու նեղողներին, ուստի օրհնվեց ու դրվատվեց հեռավորներից ու մերձավորներից, երկրի բնակիչներից ու եկվոր-

ներից։ Արաբական ցեղերն առհասարակ նրա երեսից չփոթվեցին և բռնվեցին մեծ ահով, քանզի տեսնում էին հաստատ, առանց երկբայության իրենց հասած օրհասը։ Մեր երկիրը մաքրեց պղծությունից, նենգությունից ու նեղություններից, ինչպես Հուդա Մակաբայեցին Իսրայելից մաքրեց Անտիոքի անաստվածությունը և խաղաղարեց նրանց, ում իշխում էր։

ԾԴ.

## ԳԵՐԵԼԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՍՏԾՈ [ՇՆՈՐՀԻՎ] ԱՄԲՈՂՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԳԵՐԵԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Հայերի գերության վեցերորդ տարին լրացավ Հայոց տոմարի 306 թվականին, որ համընկնում է 6 հոբելյանի, նաև օլիմպիադայի ու ինդիկտիոնի և Հայոց կաթողիկոս տեր Զաքարիայի[410] հայրապետության երրորդ տարուն և արքունիքում իշխանների գտնվելու յոթերորդ տարվա սկզբին, ըստ ժամանակի շարժման յոթնյակի չափի։ Ինչպես աստված սահմանեց Բաբելոն գերված Իսրայելի ժողովրդի համար և ինչպես գրըված է [Դանիելի] մարգարեության մեջ, «77-րդն,— ասում է,— պետք է գիտենաս և խելամուտ լինես՝ եղած խոսքերին պատասխան տալու. մինչև օծյալը կա յոթը յոթնյակ ու վաթսունևերկու յոթնյակ»*։ Այս նույնպես վկայում է Դանիելը։

Արդ, նրանցն այնքան էր, իսկ մեզ համար բոլորը մի քիչ համառոտեցինք տարիների մի թվի մեջ, որ բովանդակում է յոթ տասնյակներ՝ լրիվ յոթ թիվ, որ [տերը] համառոտել ու ժամանակի համար սահմանել էր Իսրայելի, այսինքն հեթանոսների համար։ Եվ նա առատապես սահղծածների վրա հեղեց աստվածային նախախնամության գութը դեպի իր արարածները, մարդասիրաբար ողորմաց սրբերի բարեխոսությամբ, որոնք իրենց արյունը թափեցին Քրիստոսի հանդեպ ուղիղ ու անբիծ դավանության ու երանելի Գրիգոր Արծրունու՝ քաջ ու աներեր նահատակի, Քրիստոսին խոստովանողի չարչարանքների համար և հովվապետ սուրբ Հովհաննես ե-

* Հմմտ. Դանիել, Թ, 25։



պիսկոպոսի ու ճգնավոր քահանա Գրիգորի միջոցով, որոնք միշտ տիրոջն էին առաքում ողորմության աղերսանքներ ժողովրդի համար, ինչպես տիրոջ հրեշտակն էր աղերսում աստծուն, ասելով. «Մինչև ե՞րբ չպիտի ողորմաս Երուսաղեմին ու Հուդայի քաղաքներին. այս 70-երորդ տարին է»*։ Եվ որ կողմը կամեցավ, նայել տվեց նրանց։

Տերը լսեց նրանց աղոթքը և մեղմեց բարկությունը գըթությամբ ու ողորմությամբ, ինչպես գրել են երանելի մարգարեները։

Այն ժամանակներից հետո, պալատում, խրախճանքի ժամին, այնպես եղավ, որ թագավորն ուրախացրեց Հայոց նախարարներին և խոստացավ տալ ամեն մեկին իր երկիրն ի ժառանգություն։ Այնժամ հրամայեց իր առջև բերել Աշոտին ու նրա որդի Գրիգորին, հագցրեց նրանց հանդերձներ, տվեց իշխանական նշաններ և մեջքներին կապեց սուր ու գոհարազարդ գոտի, [տվեց] ընտիր ու լավ զարդարված ձի։ Ապա նրանց հանեց առյանից՝ փառահեղ, շքեղ ու երևելի պատվով, երգերի ու փողերի հնչյունների տակ։ Մունետիկները բարձրաձայն ու սաստիկ գոչյունով երգում էին, թե՝ «Վասպուրական աշխարհի իշխանությունը տրվեց Աշոտին ու իր որդի Գրիգորին»։ Մունետիկների միջոցով [ազդարարվեց] արքայի հրովարտակը, որ՝ «Թագավորն ուղարկում է Աշոտի որդի Գրիգորին իր երկիրը, տիրելու նրան իր հոր փոխարեն»։

Այնժամ իշխան Գրիգորը դուրս եկավ արքայի մոտից մեծ ուրախությամբ, անպատում խնդությամբ ու եկավ մըտավ իր երկիրը՝ Վասպուրական կոչված իշխանությունը և տիրեց իր երկրին իշխանական ճոխությամբ։ Տասը տարեկան էր, երբ նստեց իր հոր իշխանության աթոռին։

Գերության ութերորդ տարում[411] վերադարձավ Աշոտի եղբայր Գուրգենը, միապետելու տերության իշխանությունը և շինել ու ավեր երկրում հարդարելու, հորինելու կարգ ու կանոն։ Վանդի թեպետև Գուրգեն [Ապուպելճը] մեծ զորությամբ դիմակայում էր թե իր վրա հարձակվողներին, որոնք ջանում էին հանել իշխանական գահին և թե արտաքին, արաբական կռիվներին, երբ բանի դիմում էին դեպի [երկրի] ներսը, սա-

* Զաք. Ա, 12։

*կայն երկիրը տակավին ապահով չէր դառնում։ Ավազակների ասպատակությունները, սովի սաստկանալը, գերեվարվածների տառապանքները, գազանների հարձակումները, ներքին ու արտաքին վրդովմունքները մերկացրեցին մեր երկիրը։*

*Իսկ երբ եկավ մյուս Գուրգենը, փութաց վրա հասնել Գուրգեն [Ապուպելճին], որը ուժով տիրել էր Սրինգ և Ջլմար ամրոցները և բնակվում էր այնտեղ։ Երբ նա հասավ այնտեղ, [մի կողմ] թողեցին հակառակվելն ու կռվելը և խոսեցին խաղաղության համար։ [Գուրգենի] առաջը դրեց արաբների գլխավորի արքունի հրամանը և Վասպուրականի ամբողջ իշխանությունը Աշոտին վստահելը, ինչին [Գուրգենը] հնազանդվեց և խելացի դիտավորությամբ [դուրս] ելավ ամրոցից։ Իսկ մյուս Գուրգենը սուրհանդակներ ուղարկեց նրա մոտ՝ այսօրինակ [առաջարկով]. «Ինձ հետ հաստատիր խաղաղության անվերջանալի դաշնագրություն, իսկ ես կապստամբեմ Աշոտի դեմ և միասին բաժանելով երկիրը, կապրենք ապահովության մեջ»։*

*Բայց Գուրգենը չհամաձայնեց՝ երկու պատճառով. նախ՝ որպեսզի ապստամբ չերևա արաբացոց թագավորին, որը լսել էր բազմաթիվ այլ պատերազմներում նրա արիությունների և արաբական զորքին [հասցրած] հարվածների մասին։ Կասկած ուներ նաև Աշոտի դեմ կատարածների համար։ Երկրորդ, քանզի չէր հավատում Գուրգենին և հաստատ պահելով երդմամբ իրենց համաձայնածը, հիշում էր նրա հորից իր հոր կրածները։ Այնուհետև ելավ գնաց շրջելու Բյուզանդիայի կողմերը, իր հոգսը թողեց աստծո ողորմածությանը, քանի որ նրա սիրտը լցված էր [սիրով] ամենակալ տիրոջ՝ աստծո հանդեպ։*

*Եվ երբ [Գուրգենը] հասավ Թեոդոսի քաղաքը Կարին գավառում, նրա մասին լուրը հասավ Բյուզանդիայի թագավոր Միքայել[412] կայսեր, որը փութացրեց, որպեսզի անհապաղ նրան իր մոտ բերեն և արժանացնի հյուրասիրության մեծ պատիվների, ճոխացնի խաչանշան դրոշներով։ Եվ մինչդեռ [կայսրն] այս մասին էր խորհրդածում, [Գուրգենի] վրա հարձակվեցին երկու քաղաքապետներ, մեկի անունը Բշիր, մյուսինը՝ Ջըրի և բռնեցին նրան տարան Աշոտի՝ սպարապետի որդու մոտ։ Նա թեպետև չարացավ եղածի վրա, բայց վա-*



*խեցավ թողնել նրան գնալու, երկյուղելով Իսմայելի չարահույզ ցեղից, քանզի դեռևս տիրում էր բռնությունը և գերյալները և իր հայրը սպարապետը, դեռ արքունիքում էին գտնվում։ Տփղիսի քաղաքապետը[413] տեղեկացավ և պահանջեց բերել նրան իր մոտ, ստիպեց տագնապեցրեց, ահ տվեց՝ թողնել քրիստոնեության դավանությունը և մնալ անդորրի մեջ։ [Գուրգենը] ծաղրեց նրան, ընտրեց կապանքները և քաջությամբ մեռնելը Քրիստոսի անվան համար, քան խղճուկ կյանքը։ Նրանք Գուրգենին կապեցին երեքտակ կապանքներով, պարանոցին նույնպես դրեցին շղթաներ և ուղարկեցին Ատրպատականի միջով Պարսկաստան և գցեցին բանտ՝ կալյալների հետ։ Մոտը բազում անգամ [մարդիկ] ուղարկեցին, պես-պես սպառնալիքներով ու ողոքական խոսքերով համոզեցին թողնել քրիստոնեության դավանությունը և հավասարվել Քրիստոսի մյուս ուրացողներին։ Բայց հանուն Քրիստոսի սիրույն, փոքր ինչ չմոլորվեց բռնավորի խոսքերից։*

*Նույնպես և Սողոմոն Բագրատունին զինավառելով սատանայական զենքերով, բազմաթիվ անգամ ուղարկեց նրա մոտ, նույն մտադրությամբ։ Բայց [Գուրգենը] ետ էր դարձնում նրան կսկծեցնող խոսքերով, իբրև սատանայի սպասավորի։*

*Այնժամ բանտում նրա աչքին երևաց գեղեցկատեսիլ մի տղամարդ՝ ալեորի կերպարանքով, լուսակեզ փայլմամբ և ասաց Գուրգենին. «Զգույշ եղի՛ր, արիաբար մարտնչի՛ր, զինավառվի՛ր քաջապես, զինվորագրվի՛ր Քրիստոսին։ Չխոտորվե՛ս գնալի ճշմարտությունից շեղվածների՝ Իսմայելի ժողովրդի մոլար հավատքը, ինչպես մոլորվեցին Հայոց գերյալներից ոմանք»։ Իսկ նա առավել ես ամրացավ ու հաստատ մնաց Քրիստոսի հավատքի, սիրո և հույսի մեջ։ Մտավ խորունկ բանտը և այն տարավ ամենայն գոհությամբ Քրիստոսի անվան համար՝ քաղցով, ծարավով ու մեծ դիմացկունությամբ։*

*Իսկ [մյուս] Գուրգենը մեկ տարի ապրեց և փոխվեց այս աշխարհից՝ հրաժարված ուրացող ամբարիշտությունից։ Նրան տարան թաղեցին իրենց հանգստարանի տեղում՝ Սուրբ Խաչ վանքում։*

*Իսկ Դերենիկը զորացավ Քրիստոսի զորությամբ, հռչակվեց ու անվանի դարձավ ամբողջ Հայաստան աշխարհում։ Եր-*

կիրը խաղաղվեց վրա հասած խառնակություններից, սկսեց նորոգվել, եկեղեցիները փառավորվեցին շքեղաշուք զարդերով ու արարողություններով։ Ցրվածները բազմությամբ, ցնծությամբ վերադարձան ամեն մեկն իրենց տեղերը և շինեցին, տնկեցին, մոռացան կրած ցավերն ու տրտմությունները։

Այն ժամանակներում մինչ ճոխանալով, Ջափրմոթոքըլը[414] մեծապես փքվում էր քրիստոնյաների վրա, ինչպես մեր նախնի Սենեքերիմը Երուսաղեմի և Իսրայելի ժողովրդի վրա, նրա որդի Մոթեքինը[415] հանկարծակի վրա հասավ և սպանեց նրան, իսկ ինքը թագավորեց հոր փոխարեն, բայց վեց ամիս հետո մահացավ։ Նրա փոխարեն թագավորեց իր հորեղբոր որդի Մուհթիսը, որն ապրեց չորս տարի[416] և մահացավ։

Իսկ Հայոց իշխանները տագնապի մեջ էին և խնդրում էին Քրիստոսին, որից լքված էին, մի ելք գտնել։ Սակայն բազում օրեր հետո, երբ անցան խառնակությունները, Գուրգենն ապավինեց Քրիստոսի նախախնամությամբ և ելավ բանտից ու եկավ մտավ իր աշխարհը։ Երբ Դերենիկն իմացավ, գնաց նրա դեմ պատերազմի, բայց վերադարձավ փախուստով։ Եվ կրկին ուժեղանալով, դուրս եկավ Գուրգենի դեմ։ Բայց երիվարը փնչացնելով ու խրոխտ վազելով, վար գցեց Գուրգենին, նրա ցավերի պատճառով, քանի որ Գուրգենը նոր էր կազդուրվել հիվանդությունից և բանտում կրած տառապանքներից։ Վրա հասան, բռնեցին նրան և տարան գցեցին Հադամակերտ քաղաքի երկաթապատ բանտը։ Բայց Դերենիկի ծառաներից մեկը, որ բանտապահն էր, արձակեց նրա կապանքները և տարավ մտցրեց այն սենյակը, ուր ննջում էր Դերենիկը։ Ծառան չարությամբ մտահղացավ սպանել Դերենիկին և երկիրը ենթարկել Գուրգենի իշխանությանը, որովհետև հարմար պահ էր։ Բայց Գուրգենն ընտրեց Քրիստոսի սերը, քան թե այս աշխարհի կարճատև սերը. արյան վրեժ չպահանջեց նրա պապի կողմից իր հոր սպանության համար։ [Գուրգենը] մերկացրած սուրը և վաղրը ձեռքերին, արտասվալից ձայնով դիմեց Դերենիկին և ասաց. «Որդյակ իմ Դերենիկ, ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն, ես ելա գնացի բյուզանդացիների աշխարհը»։ Իսկ նա ահից սարսափած ասաց. «Հա՛յր իմ, խնա՛յիր ինձ»։ Ու այլևս ոչինչ չկարողացավ խոսել։

Գուրգենը փութով ելավ գնաց՝ իրեն անհայտության տա-



լու, մինչև որ կհաջողվեր Քրիստոսի կամքով որևէ տեղ գնալ։ Եվ գնաց հասավ Երագանի[417] անունով գյուղը, մի կրոնավորի մոտ, որը վաներեց էր։ [Գուրգենը] ապաստանեց նրան, որպես աստծուց երկյուղածի և խնդրեց պահպանել իրեն։ Բայց նա գցեց իրեն մի նեղ ու փոքր տեղ, իսկ ինքը փութաց գուժել նրա մասին։ Վայրենի աբեղան անմտաբար [Գուրգենին] տվեց մահվան, ինչը ոչ ոք չէր հրամայել նրան, այլ ըստ իր կամքի ստանձնեց դառնալ արյունապարտ, որի համար վրեժով պիտի հատուցի իր դատաստանի ժամանակ։

Իսկ Դերենիկը բռնեց [Գուրգենին] և պահեց զգուշությամբ, ոչնչով չվնասեց նրան, բացի կապանքներից, որոնց մեջ դրել էր նրան։ Հատուցեց նրա բարությանը, միշտ հովանավորում էր նրան և օրհնվեց սուրբ Զաքարիայից։

Քանզի երբ երանելի Զաքարիան լսեց, թե բռնվել է Գուրգենը, փութապես եկավ երկրի եպիսկոպոսների հետ։ Նրա հետ էր նաև Աշոտ իշխանաց իշխանը։ [Զաքարիան] աղերսեց Դերենիկ իշխանին, որպեսզի արձակի նրան կապանքներից։ Նրան անսալով, իշխանը կատարեց ասածը։ Ապա երկուսով համաձայնեցին և մնացին առանց կասկածների, իսկ Մարդաստան գավառը, որ Գուրգենի իսկական բաժինն էր, Դերենիկը վերադարձրեց նրան։ Բայց Գուրգենը կասկածում էր, թե իբրև իր մասին, որպես ապստամբի, Աշոտը կտեղեկացնի արաբների առաջնորդին, ուստի ելավ գնաց ու ապրեց թափառակյաց, հարափոփոխ ու խիղախ կյանքով, սիրվելով ամբողջ երկրում։

Բայց քանի որ Հայոց աշխարհի վերակացությունը վստահվել էր Աշոտին, որն իշխանաց իշխան էր, ձեռնարկեց հպատակեցնելու հայոց, վրաց և աղվանից իշխաններին, որը և կատարվեց։ Ապա զորք գումարեց, եկավ մտավ Վանտոսպ, որտեղ Դերենիկն ընդառաջ եկավ նրան։ Բայց [Աշոտը] բռնեց նրան, դրեց կապանքների մեջ, որպես անհնազանդի և անցավ գնաց Ռշտունյաց ոստանը։

Գուրգենն իմացավ Դերենիկի մասին և ինչպե՞ս ազդվեց։ Առանց հապաղելու փութաց Տարոնի կողմերից և 400 զինավառված տղամարդկանցով բանակեց Ռշտունյաց Նորագյուղ [ավանում]։ Գրեց իշխանաց իշխանին [ասելով]. «Դին նեախր անտեղի մտադրությունդ, ապա թե ոչ, գալու եմ քո դեմ

կռվելու»։ Կամեցավ հանկարծակի, գիշերով հարձակվել Աշոտի վրա։ Բայց իշխանաց իշխանը, որ փայլում էր իմաստությամբ, փութաց կատարել Գուրգենի գրածը։ Եվ որովհետև նոր էր վախճանվել Դերենիկի կինը, Գուրգենը գրեց Աշոտին, ասելով. «Այս ես հույժ հաճելի կերևա քեզ՝ վեհիդ ու բոլորից ճանաչվածիդ. որպեսզի քո և Դերենիկի միջև լինի ապահով միություն, քո դստերը պետք է Վասպուրականի տիկնության՝ կնության տաս Դերենիկին»։ Եվ անհապաղ գլուխ բերեց մտադրությունը։ [Աշոտն] իր հետ վերցրեց Դերենիկին և անցավ գնաց իր տունը՝ Բագարան[418]։ Եվ կատարեցին Դերենիկի փեսայության հարսանյաց մեծ հանդեսը Հայոց 311(862) թվականին։

## ԺԵ

### ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Նույն այս ժամանակ աստծո բարերարությամբ ազատվեցին Հայոց իշխանները և վերադարձան յուրաքանչյուրն իրենց բնիկ տերությունը և ապրեցին խաղաղությամբ, հնազանդվեցին իշխանաց իշխանի տիրապետությանը։

Նրանց հետ էին նաև երանելի Հովհաննես եպիսկոպոսն ու առաքինակրոն Գրիգոր քահանան, որոնք մարտիրոսական վարքով բոլորի մեջ հայտնի էին խոստովանողի հոչակով և ազատվելով բանտարգելությունից, եկան հասան մեր այս երկիրը, բերեցին գերիների ազատման ավետիսը։ Քրիստոսի խոստովանողներ Խորենի ու Աբրահամի պես ազատվեցին Պարսկաստանում կրած դառն տառապանքներից, մատուցեցին Հայոց նախարարների ազատման, տիրոջ շնորհիվ գերությունից իր ժողովրդին վերադարձնելու ավետաբեր լուրը։

Իսկ երանելի Հովհան եպիսկոպոսն ընտրեց իր համար առանձնացված, միայնակյացի տեղ և պարապեց միայն աղոթքներով, հրաժարվեց եպիսկոպոսական հովվապետությունից։ Նրա փոխարեն ընծայեցին ումն Հովհանի, որը հեզաբարո և բարեպաշտ մարդ էր, լցված աստծո երկյուղով և պատշաճում էր Քրիստոսի եկեղեցու գլխավոր դառնալուն։

Բայց Սմբատ սպարապետն ու Վասպուրականի տիկին



Հռիփսիմեն մնացին այնտեղ և միացան մարտիրոսների բազմությանը։ Թեև արաբների գլխավորը հարցաքննեց, բռնադատեց երկուսին էլ, բայց չանսացին սաստերը և աստծո նախախնամությամբ մնացին անվտանգ, որպեսզի հաճելի լինի համարձակությամբ մնալը Քրիստոսի հավատքին։ Նրանք մեռան այնտեղ, փառավորապես թաղվեցին տեղի հավատացյալ ժողովրդի՝ Հալոբիկյան ուխտի[419] քրիստոնյաների սովորությամբ։ Խոստովանողի անուն ստացան, փառավորվեցին այս աշխարհում և վարձատրվելու են Քրիստոսից բոլոր սրբերի հետ. ամեն։

Իսկ Գուրգենը օրըստօրե աճում էր զորությամբ բազում տեղերում, ինչպես Տարոնում, նույնպես և Անձևացիքում, Արզնում և ամենուր, ինչպես ցույց են տալիս մեզնից առաջ գրի առնված հիշատակարանները, ուստի ավելորդ եմ համարում կրկնել։ Սակայն բազում խառնակություններից ու պատերազմներից հետո նրան այսպես հաջողվեց տիրել Անձևացյաց իշխանությանը։

Անձևացյաց իշխան Մուշեղը մահամերձ հիվանդ էր և ուներ ծծկեր մի երեխա։ Իսկ Դերենիկը մտադրվեց տիրել նրա գավառին։ Մուշեղը իր ձեռքով կտակ գրեց, որ Նորաբերդ ամրոցը իր շրջակայքով վստահվի Դերենիկին, իսկ մնացածը ժառանգություն թողնվի իր որդուն։ Եվ երբ մեռավ Անձևացյաց տերը, նրա տիկին Հեղինեն գրեց Գուրգենին. «Եթե քեզ հաճելի է ինձ կնության առնելը և ցանկանում ես տեր դառնալ Անձևացիքին, մի՛ վախեցիր. մի՛ հապաղիր և ծուլարար դանդաղկոտ մի՛ եղիր»։ Գուրգենին դուր եկավ Հեղինե տիկնոջ մտադրությունը, և եկավ գնաց Կանգավար[420] ամրոցը, կատարեց իր ցանկությունը, մեծ հաջողությամբ տիրեց Անձևացիքին։

Իսկ Դերենիկը ջանաց մի հնար գտնել և մտքում այս ու այն կողմ ընկավ, ելք գտնելու, որ կարողանա Գուրգենից խլել ամրոցները և տիրել երկրին։ Շատ հուզումներից, որոնումներից, զորք հավաքելուց, կռիվներից, ամրոցների դեմ կռվելու միջոցներ հարդարելուց, նաև ձեռքի զորեղ քարաձիգ մեքենա հնարելուց և զուր տեղը չարչարվելուց հետո, վարանեց և չկարողանալով վնաս հասցնել ամրոցին, վերադարձավ իր իշխանությանը։ Սակայն Դերենիկն իր գործակալներով

գրավեց Անձևացիքի երկրորդ մասը, Նորաբերդ ամրոցով հանդերձ, իսկ Մարդաստան գավառը տվեց Գուրգենին, որպես նրա խնկական բաժին։ Նա այնտեղ թողեց իր գործակալներին։ Եվ քանի որ Դերենիկը Գուրգենին խաբեց և այնտեղից հանեց նրա գործակալներին, նույն ձևով Գուրգենը հնար գտավ առնելու ամրոցը, որտեղից դուրս հանեց նրա գործակալներին, միայնակ տիրեց Անձևացյաց իշխանությանը, խաղաղեցրեց երկիրը, ապրեց անհոգ և հարձակումներից ապահով։ Շինեց եկեղեցիներ և կատարեց խաղաղության նավակատիքի տոնը։

Այս հայերի գերության վեցերորդ տարին էր՝ Հայոց 306 (857) թվականը։ Հայոց թվականի 317 (868) տարում[421] Վասպուրականի իշխան Աշոտը ելավ գերությունից։

Վերևում խոստացա գրել Բուղայի մասին, մասնավորաբար ըստ արժանվույն նրան վրեժով հատուցելը և ոչ թե ամբողջը։

Երբ Բուղան վերադարձավ արքունիք, հանքերը կիտեց, փքվեց ամբարտավանությամբ լի և ճամարտակեց իր կատարած մեծամեծ գործերի մասին, հույս ուներ իր զորությունը մեծացնել հայերի կործանմամբ, մոռանալով, որ տերը հատուցելու է մեր մեղքերի համար, ինչպես Իսրայելին հրնում՝ Սեդեկիայի[422] և Նաբուքոդոնոսորի ժամանակ։ Իսմայելի որդի Սահակի կինը, որի մասին հիշեցինք, ամուսնու սպանությունից հետո հրապարակով գուժեց. թե ինչ պատճառով սպանվեց իր ամուսինը։ Նրա երևելի տեսքի մասին պատմեցին արաբների գլխավորին՝ Ջաֆրին։ Իսկ սա ըստ իր պիղծ, անհագ ու ցանկասեր սովորության, հոխորտաց ու մրրթմրթաց և էլ ավելի լցվեց գազանային թույնով, բորբոքվեց կրակի բոցով՝ մահաբեր թույնը Բուղայի վրա թափելու համար։ Սակայն չհամարձակվեց բացահայտորեն կատարել իր ցանկությունը. մեկ՝ նրա հաղթանակների ու աչքառու գործերի պատճառով նախատինք համարեց իր անձին, երկրորդ՝ նրա զորքի հզորության պատճառով։ Ապա [Բուղային] ուղարկեց Խորասան և նրան վստահեց երկրի վերակացությունը։ Իսկ ինքը՝ Ջաֆրը սակավ առ սակավ նրանից հեռացրեց զորքը, զանազան երկրներում ասպատակներ սփռելու պատրվակով։



Նույն ժամանակ ոմանց գաղտնի հրաման հասավ վերջ տալ [Բուղայի] կյանքին։ Հրամայվածը իսկույն կատարեցին։

## ԺԶ

## ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ ԵՎ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այս ժամանակներում արաբացոց պետության դեմ ապստամբել էին Կզվին[423] քաղաքի բնակիչները։ Իսկ արաբների առաջնորդը Ասորեստանի և արաբացոց ընտրովի զորականներից զորք գումարեց, այրուձի կազմեց։ Նրանց հետ էր նաև մեր քաջն Աշոտը՝ համարձակ զորությամբ. նա ելավ արքունի զորքի հետ։ Զորագլուխ էր կարգվել Բուղայի որդի Մուսեն, որը խոստացել էր Աշոտին վերադարձնել իր բնիկ իշխանությունը։ Գլուխ բերելու ժամանակը եկավ, բայց մեկնեցին պատերազմի։

Երբ հասան այն տեղը, ուր պիտի լինեին, երկու [կողմերի] զորքերը անհուն բազմությամբ հանդիպեցին միմյանց և ճակատ առ ճակատ մղեցին պատերազմ։ Քաջերն ու զորավարները խրոխտաբար, խիզախությամբ հարձակվեցին միմյանց վրա։ Այնտեղ մեր քաջն Աշոտը հիվանդություն կեղծեց ու պառկեց օթոցի տեղում։ Մինչդեռ հույս ունեին առաջ տանել պատերազմը։ Ինքը՝ Մուսե զորապետը, շտապեցրեց փութով սկսել պատերազմը, բայց Աշոտն ավելի մեծացրեց իր վրա ծանրացած կարծեցյալ հիվանդության ցավերի խըստությունը։ Եվ մինչդեռ նույն մահճում կեղծում էր հիվանդություն, ախոյանները արագ հասան միմյանց։ Հախուռն հարձակման ահեղ որոտը, թնդյունները, բախյունները պեսպես ձայներով լսվում էին որպես կարկտաբեր ամպի որոտ ու կայծակ։ Քաղաքի զորքը ազդեց Մուսեի զորքին, մինչև որ ընկրեց գցեց բուն բանակատեղը, ուր մեր Աշոտն էր և կարծվում էր թե հիվանդ է։ [Նրա մոտ] մտավ Վահանը և աղերսեց, համոզեց չմնալ [պառկած], քանզի ոմանք կարող են կարծել, թե քաջությունը վախկոտություն է խառնում։ Թե-

պետն ինքն էլ էր կարծում, որ կկասկածվի։ Նույն պահին [Աշոտը] անապարանքով աշտանակեց նժույգին, զենքը գցեց վրան, նիզակը վերցրեց ձեռքը և բարձր ձայնով խրախուսեց իր ազատագորքին, ասելով. «Հապա՛, հայոց քաջեր, թող այսօ՛ր էլ ճանաչեն մեզ և մեր արիությունը»։ Եվ հանդուգն հարձակմամբ, ինչը վեր էր զարմանքից, մի ակնթարթում նա զարձրին հրոսակներին, քակեցին զորքի մարտաշարքերը և առաջապահ ախոյաններին կայծակնահար անելով, գետին գլորեցին և ամառվա փոշու մեջ խուժող հողմի արագությամբ, խիզախորեն գլուխ հանեցին պատերազմից, և Մուսեի բոլոր դիտավորությունները կատարվեցին թշնամիների հանդեպ։ Բայց Մուսեն հաստատ չպահեց Աշոտին տված խոստումը՝ նրան արձակելու և իր իշխանությունն ուղարկելու։ Մտածեց, թե այսպիսի քաջ ու պատերազմող տղամարդուն արքունի պատից հեռաբնակ վայր ուղարկելը պատշաճ չի համարվի։ Բայց Աշոտը Վահանի հետ հեռացավ և հույժ ուրախ սրտով, խաղաղությամբ եկավ հասավ իր երկիրը։ Նրա պատճառով ավելի շատացրին ատոծուն փառք տալը։

ԺԵ

## ԱՆՁՆՎԱՍԻՔԻ ՀԱՄԱՐ ԱՇՈՏԻ ԳՐԴՈՒՎԵԼՈՒ ԵՎ ԴԱՐՁՅԱԼ ԽԱՂԱՂՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սրանից հետո [Աշոտին] իմաց տվեցին, որ Գուրգենը տիրել է Անձևացիքին։ Աշոտը ծանր զորքով եկավ մտավ Անձևացյաց երկիրը, բանակեց Բլրակ գյուղում և Վահան Արծրունուն ու վաներեց Թեոդորոսին, որ Հոգյաց վանքի[424] գլխավորն էր, ուղարկեց Գուրգենի մոտ, ասելով. «Ես եկա խաղաղությամբ, արքունի հրամանով և ոչ քեզ նման ապստամբության դիմելով։ Արդ, Անձևացիքի երկրորդ մասը թո՛ղ իմ որդի Դերենիկին և այլևս մի՛ հակառակվիր, իսկ եթե հոժարությամբ այդ չանես, գիտցիր, որ չուզենաս էլ, հարկադրվելու ես թողնել նաև ունեցածդ»։

Իսկ Գուրգենը հեզաբար, առանց ամբարտավանության



պատասխանեց նրան, ասելով. «իմ հայրենի ժառանգությունից դուրս եք հանել ինձ և զրկել եղբայրական բաժնից։ Մի՞թե այս էլ եք ջանում բռնությամբ խլել, որ աստված ինձ ժառանգություն է տվել։ Մի՞թե դու միայն պիտի բնակվես այս երկրում։ Թող տերը տեսնի և դատ անի ու իրավունք տա ինձ, ինչպես սովոր է արդար դատավորը»։

Գուրգենը, իր եղբորորդի Գրիգորը, ընտրովի ուրիշ կտրիճների հետ՝ 200 տղամարդ զինավառվեցին, նստեցին ձիերը, ինչի մասին իմաց տվեցին Աշոտին։ Բայց նա արհամարհեց, առ ոչինչ համարեց իրեն հայտնածը և խոսեց ամբարտավանությամբ։ Եվ հանկարծակի Գրիգորը կիսովչերին հարձակվեց խիզախաբար, ապա շրջապատեցին բանակը, սրերով ու նետաձգությամբ հասցրեցին մահաբեր վերքեր։ Շատերն ընկան զորականներից, իսկ ինքը՝ Աշոտը մեն-մենակ, ձիով ճողոպրեց և փախստյամբ հասավ մինչև Ոչտունյաց Ոստանը, բանակի հիմնական մասը թողնելով նույն տեղում։ Մյուսներն էլ ցրվեցին, ով որտեղ որ անապարեց։ Իսկ այգաբացին ավարի առան բանակը, բնակիչներով հանդերձ և իրենց մոտ եղած գանձարանները։

Բայց իշխան Դերենիկը անգիտացավ կատարվածի մասին և նույն օրը բազմաթիվ զորքով եկավ բանակեց բերդի հարավակողմը, իսկ երբ իմաց տվեցին եղելությունը, վերադարձավ այնտեղից և գնաց իր ճանապարհով։

[Աշոտը] դարձյալ հավաքեց 5 հազար հեծյալների։ Իշխանաց իշխանի որդիներ՝ Սահակ Բագրատունին, Շապուհը, Մոկաց իշխան** Մուշեղը և Արզնի զորքը նույնպես եկան կանգնեցին հանդիավար բերդի մոտ։ Պատերազմեցին երկու ամիս, բայց գործն իրենց կամեցածով գլուխ չեկավ։ Այսպ Սահակը, Սմբատը և ուրիշներ համոզեցին ու մեջտեղից վերացրին աղմուկը։ Երկուսի միջև հաստատվեց սեր և բարեկամու-

* Բնագրի «գորդի» բառը ուղղելի է «գորգիս», որովհետև Շապուհն էլ էր Աշոտ իշխանաց իշխանի որդին։

** Բնագրում «ԶՍմբատ և զՇապուհ և զՄուշեղ Մոկաց իշխեցողք»։ Պետք է լինի «ԶՍմբատ և զՇապուհ և զՄուշեղ Մոկաց իշխեցող», քանի որ այս երեքից միայն Մուշեղն էր Մոկաց իշխան։ Թարգմանել ենք վերջին ձևով։

թյուն, և յուրաքանչյուրը գնաց իր տեղը։ Իսկ Գուրգենն ու Աշոտը առանձին հանդիպեցին, ողջունեցին միմյանց և ուխտեցին ընդմիշտ մնալ խաղաղությամբ։

## ՈՒԹՄԱՆԻԿՆԵՐԻ ԴԵՄ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ ՄԱՔԱՌՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՓՇՏԱԿԱԾԸ ԵՏ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բայց Աշոտը գնաց պատերազմելու ծովեզերքին ապրողների դեմ, որոնք Ութմանիկ են կոչվում և ամրացել էին Ամյուկ[426] անառիկ ժայռամրոցի մեջ, որովհետև ըստ Պտղոմեոսի և Ալեքսանդրի, կամ թե մեր Արտաշեսի՝ Սանատրուկի որդու կարգավորման, Վասպուրականի գավառների մեջ է մըտցըվել նաև այս գավառը, որը 100 տարի առաջ արաբները բըռնությամբ խլել էին Վասպուրականի իշխանությունից։

Իսկ նույն ժամանակ ամրոցում հաստատված Ութմանիկների ձեռքով սպանվել էր Ռստոմ Վարաժնունին, որն այն ժամանակ ուներ մեր Վասպուրական աշխարհի սանուտերական պատիվը։ Աշոտն ու իր որդի Դերենիկը զորքով շարժվեցին նրանց վրա՝ պատերազմելու ամրոցի դեմ։

Բայց որովհետև ամրոցն անառիկ էր, իշխանը միայն բավականացավ առանց պարեն վառնելու, արարացոց ձեռքից Վարագն[426] առնելով, քանզի այն գրավել և հարկատու էին արել Սուրբ Խաչի կրոնավորներին։ Մանավանդ Վանահորը, որին անվանում էին Գրիգոր, բռնել գցել էին խոր ու խավարչոտին բանտը։ Որոնեցին և ազատեցին նրան վտանգավոր բանտից։ Այդտեղից Աշոտը դարձյալ շուռ եկավ մյուս ոչ բարձր ժայռի վրայի ամրոցի դեմ, որը գտնվում էր Վարագա լեռան արևելակողմում, Կոխպան գյուղի վերևում, սուրբ Հռիփսիմեի եկեղեցու դիմաց, որ շինել էր սուրբ Գրիգորը, Ահեական[427] գյուղից վերև, Հայոց լուսավորությունը կատարելուց հետո, որովհետև այն նախկինում եղել էր Վահեվահյան[428] մեհենատեղի։ Այնինչ արդեն մտնում էին ամրոցը պաշարելու, Ամիրի տեր Հիսեն[429], Ծեհի որդին, որ տիրում էր Հայոց զորապետությունը, Մանազկերտի տիրոջ և ութմանիկների վատ խը-



բատով 15 հազար զինավառ հեծյալներով արագությամբ եկավ հասավ Աշոտի վրա, որը թողեց ամրոցի դեմ պատերազմելը և ետ դարձավ գնաց աներկյուղ քաջասրտությամբ նրա դեմ, Գուրգենի օժանդակ զորքով։ Նա ճակատ հարդարեց Վանտոսպից անդին, երկու բլրակների միջի քարաշատ, քարակակառ ու զոգաձև տեղում, որ նայում է Երիվարաց արկման[430] դաշտին, որը ներքև է Լեզք[431] գյուղից, ուր հույժ գեղեցիկ առասպելաբանում են Շամիրամի սպանած Արա Գեղեցիկի[432] վերքերի սպիանալու մասին։ Եվ ամիրա Հիսեն շարժվեց բազմաթիվ զորքով և առաջխաղաց դեպի Աքաղայու կատար[433] կոչված բլուրը։

Իսկ Աշոտը մտրակեց սպառազեն երիվարին, զինավառվեց և պատրաստվեց մարտի։ Արշավեց համարձակ, ինչպես խաղագնդակը, իր սակավաթիվ [զորքը] համարեց բազմահազար, թեև 2000 հեծյալից ավելին չուներ։

Այնժամ Գագիկ Ապումրվանի հայր Վահանը և ինքը՝ Գագիկը ջանացին խաղաղեցնել նրանց։ Բայց [Աշոտի] չանսալու պատճառով Վահանը ետևի կողմից, գաղտնաբար հարվածեց նրա ձիու գարշապարին, և մեջքին վահան ունեցողի նժույգը կաղացավ։ Ապա Հիսեի մերձավորներից ինչ-որ մեկը, Սեմ անունով, առաջ շարժվեց և պատահեց [Աշոտ] իշխանին և Վահանի հետ խորհրդակից լինելով, կամեցան խաղաղ մնալ և վերջ տալ հրահրված կռվին, մարել սկսված պատերազմը։ Սրան անսաց Աշոտը, ետ քաշվեց ու եկավ բանակեց Արտաշեսյան[434] ավանում, իսկ Հիսեն՝ Վան քաղաքում։ Նույն ժամանակ Դերենիկն ու Գագիկը գնացին և մտան Հիսեի մոտ, խոսեցին խաղաղության համար, տվեցին պատանդներ, հանձն առան [մուծել] արքունի հարկերը և նրան վերադարձրին այն ճանապարհով, որով եկել էր և չթողեցին մտնել Վասպուրական աշխարհը։ [Հիսեն] դարձյալ գնաց հասավ Պարտավ, Գարգարացվոց աշխարհը։ Իսկ մեր իշխաններն ստացան ավելի զորավոր ու հոյակապ անուն Հայաստանի մեջ, և այլևս նա չհամարձակվեց հանձն առնել մտնելու մեր Վասպուրական աշխարհը։

Արդ Աշոտը 19 տարեկան դառնալուց հետո, 16 տարի մնաց մեծ իշխան՝ Հայոց գերությունից առաջ, 15 տարի[435] անցկացրեց գերության մեջ։ Գերեդարձ լինելուց հետո, մեր աշխար-

հում տարեց դարձյալ 6 տարի և համարձակորեն կապվեց քրիստոնեական կրոնավորության, զղջաց Քրիստոսին ուրանալու համար։

Բայց ինչ պիտի ասեմ այստեղ, քանզի թեպետև ետ դարձան հայտնապես Քրիստոսի՝ մեր աստծո երկրպագությանը, բայց շիտակորեն չենթարկվեցին կանոնական վճիռներին՝ ոչ միայն Աշոտը, այլև Հայոց բոլոր այն իշխանները, որոնք գերեվարձ եղան։ Հեռացան վատթար ուրացությունից, սակայն հրաժարվեցին կանոնական վճիռներից, քրիստոնյայի՝ իրենց անհաստատ վարքին խառնեցին անառակությունը, արբեցությունը, անկողնում պղծությամբ խառնակվելը և գարշելի ու սարսափելի խառնակությունը՝ արվապղծությունը, որը գերազանցում է երիքովյան անասնական խառնակության և սոդոմական լրբության, երբ անամոթաբար տղամարդը բորբոքվեց տղամարդով, երկնուստ բերել տալով դեղ-դեղ ցանված հուրը՝ անվերջ կիզվելը, ինչը գերազանցեց մահաբեր ու կործանարար ջրհեղեղին։ Որովհետև նրանք դեպի կանայք մոլի լինելու պատճառով խառնակվեցին Կայենի դուստրերի հետ և կործանվեցին ջրով։ Իսկ ովքեր արուներից խառնակվում էին արուների հետ, այրվեցին ծծմբախառն հրով, իրենց վրա կրեցին հավիտենական հրի առհավատչյան և ապագայում երկրորդ անգամ պիտի մտնեն հավիտենական տանջանքների մեջ. որտեղ ջուրն անվերջ է, և հուրն անշեջ։ Ուրեմն եթե սոդոմայեցիք, որ իրենց [կատարածների] փոխարեն հատուցեցին հրի դատաստանով և դարձյալ պիտի տանջվեն, բոլոր ախտարով այնտեղ պիտի գնան, ինչպե՞ս ակնկալությունը կարող է նրանց փրկել տանջանքներից։ Ուրեմն տես՝ մեղքերը մեղքերի, տանջանքները տանջանքների ետևից են։

Բայց Աշոտը, երբ հասավ այս աշխարհից իր ելնելու ժամանակը, անհունապես զղջաց, հորդահոս արտասուքով խոստովանեց և արժանացավ միջնորդության։ Հուսաց Քրիստոսի մարդասիրությանը, հետին խոսքեր ասաց մաքս առնողին և ավազակին, աստծո որդու փրկարար մարմնից և արյունից հայցեց հավատով մեղքերի թողություն, հուսալով աստծո սիրուն։ Ես ոչ արհամարհում, ոչ էլ այպանում եմ զղջումն ու ապաշխարությունը, քանզի «ով կոչի աստծո անունը, նա կապ-



րի»*։ Բայց եթե անհայտները կատարելանում են, ապա հազիվ թե սայլները վերանան, ըստ ինչ-որ մի որբազանի կարծիքի։ Սակայն Քրիստոսի հոր տանը կան բազում օթևաններ։ Թերևս հեռու մնան տանջանքներից, թեպետև փեսայի հետ չպիտի վայելեն հարսանիքը։ Ել դուրս գալով այս անհուսությունից, զգացին աստծո քաղցրությունը։

Աշոտն սպառեց իր կյանքը՝ մեռավ Վանտոսպ գավառում, Հայոց 323 [874] թվականին, Հոռի ամսի 6-ին, հինգշաբթի օրը։ [Նրան] տարան թաղեցին իր մերձավոր ազգականների մոտ, Աղբակ գավառի Սուրբ Խաչ վանքում։

## ԺԹ

## ԴԵՐԵՆԻԿԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ Դերենիկն օրըստօրե ավելի ու ավելի էր փույթ տանում երկրի շինության ու խաղաղության մասին, բարեկարգում, հոգ էր տանում և խնամում էր մեր աշխարհը։ Սրա օրոք երկրում դադարեցին ավազակություններն ու ասպատակությունները և հույժ վայելչացան, բարեկարգվեցին Քրիստոսի սուրբ եկեղեցու կարգերը և ոչ մի տեղ չկար երկյուղ ու կասկած։ Նրան ծնվեցին երեք որդիներ. Սարգիսը, որին [անվանում էին] նաև Աշոտ՝ Հայոց 326 [877] թվականին, Խաչիկը, որն ուներ նաև Գագիկ [անունը] 328 [879)]-ին, և Գուրգենը։ Նրանք կայտառ, վայելչագեղ, պայծառ և ամենքին դուրեկան մանուկներ էին։ Ունեցավ նաև երկու դուստր։

Այն ժամանակներում տեր Զաքարիան վախճանվեց, 19 տարի Հայոց հայրապետություն [անելուց] հետո։ Նրան հաջորդեց տեր Գևորգը։

Բայց, Շեհի որդին, երբ մտավ Պարտավ, այնտեղ թողեց քաղաքապետ՝ իր մերձավորներից մեկին՝ Յամանիկ անունով, որը քաղաքի գլխավորների հետ հրաժարվեց իր պետին ենթարկվելուց։ Ուստի Հիսեն, Հայոց բոլոր նախարարներով հանդերձ, մեկ տարի պատերազմեց քաղաքի դեմ, բայց վնասել չկարողանալով, վերադարձավ Ասորիք։ Այսպես եղավ երկու անգամ։ Իսկ Յամանիկը մտադրվեց ելնել հայերի դեմ [կռվի],

* Գործք առաք., Բ, 21։

կամեցավ հպատակեցնել նրանց։ Հայոց իշխաններն իմացան նրա ծուռ դիտավորության մասին և համահաճությամբ գրեցին արքունիք, խնդրեցին Ահմադին՝ Հալթի որդուն, քանզի Ցամանիկը իրար ետևից թղթեր ու լրատարներ էր ուղարկում մեր աշխարհի իշխաններին, [կամենալով] առաջ քաշվել Հայոց վերակացության պաշտոնին։ Նա բողոքում էր իր դավաճանող ակեղծավորությունը, Հայոց բոլոր իշխանների, մանավանդ առաջին գահին նստող Աշոտ իշխանաց իշխանին վերացնելու [մտադրությունը]։ Բայց արաբների առաջնորդը կատարեց Հայերի խնդրանքը և Հայաստան ուղարկեց վերը հիշված Ահմադին՝ Հալթի որդուն։ Եվ երբ նա մտավ Դատվան[436] ավանը, որը համարում էին իրենց սեփական ժառանգությունը, Հայոց իշխանները ելան իրենց տեղերից և գնացին նրան դիմավորելու. Գագիկ և Գրիգոր իշխանները, մյուս Գրիգորը՝ Վասպուրականի իշխանը, Հայոց իշխան Աշոտ Կյուրապաղատը, Մոկաց իշխան Մուշեղը, իշխանաց իշխանի եղբայր Շապուհը, Ապահունյաց բռնավոր Ապլբառ[437] կայսիկը և ուրիշները։ Սրանք բոլորը, զինավառված ու պատրաստ, առատաձեռն ընծաներով գնացին, որպեսզի վերցնեն նրան և տանեն մտցնեն Դվին քաղաքը։ Բայց Ցամանիկը, Ահմադը և Ապլբառը, ուրիշ արաբների հետ միացած՝ հղացան նույն չարագործությունը։ [Ահմադը] թուղթ գրեց Ցամանիկին, թե՝ «Երբ կըմտնեմ Դվին քաղաք, կպահանջեմ բերել արքունի հարկերը, և Հայոց իշխանները, կասկած չեն տանի, կգան ինձ մոտ։ Դու իմ դեմ կռվելու պատրվակով զորք գումարիր ու ելիր իմ դեմ պատերազմի. միասին կչարդենք նրանց և կզրկենք Հայոց իշխանություններից»։

Իսկ իմաստությամբ լցված Աշոտը չմնաց անհոգ ու աներկյուղ, այլ հրամայեց լավ հսկել կամուրջների, անբնակ տեղերի, ձորերի ու կիրճերի մուտքերը։ Ոմանց ծածուկ գրեց, իմաց տվեց, թե՝ «այսինչ մարդիկ, այսպիսի ձիերով, որոնցից այսինչի մեջքի այսինչ տեղում դրված ամանի մեջ ծրարում պահված նամակ են տանում դեպի Ապահունյաց կողմերը. արդ հսկիր քո ճանապարհը»։ Դա ազդեցություն գործեց, և կատարվեց ինչ որ պետք էր։ Ձերբակալեցին լրատարներին, հանեցին թղթերը, իսկ մարդկանց պահեցին հսկողության մեջ, ոչ ոքի չհայտնեցին կատարվածի մասին։



## Ի

### ԴԵՐԵՆԻԿԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐՈՆԻ ԻՇԽԱՆԻՆ՝ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ԴԱՎԹԻՆ, ՈՐ ՃԱՆԱՉՎՈՒՄ ԷՐ ԱՐՔԱ, ԻՇԽԱՆ ԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվ մինչ իշխաններն, առանց վախի ու կասկածի, միաբանության մեջ էին և մնում էին Հալթի որդու՝ արքունի զորապետի հպատակության տակ, ամուր ու անքակ պահելով միմյանց հանդեպ սերն ու միաբանությունը, ինչ-որ բանսարկուներ քսությամբ մեկից մյուսին էին տանում բերում կեղտոտ խրատներ։ Որպես թե ի հայտ էին բերում զորապետի հանդեպ մեկը մյուսի նյութած չարագործությունները և պատճառները ցցում էին միմյանց վրա. տրտնջում։ Ուրիշները, որ մոտիկ էին Դերենիկին, ամբաստանում էին Աշոտ Կյուրապաղատին, որպես թե նախանձով էր լցված և քսություն էր անում հազարապետի մոտ և ջանում [Դերենիկին] զրկել իր իշխանությունից։ Բայց այս չարագործությունները ճշտությամբ հայտնի դարձան և հաստատվեցին կայսիկ Ապլբառի վրա։

Եվ այնինչ արևը բարձրանալիս բարի լույսի գնացողները մտնում էին ամիրայի մոտ, [Դերենիկը], որպես թե որսի պատճառով, նստեց ընտիր երիվարը, իր մերձավոր հարազատներով, և Վասպուրականի ընտրյալ ազատների հետ ելավ գնաց երկու նետընկեց տարածության չափ։ Իսկ կայսիկների հեծելազորը ելավ նրա ետևից, զգալով բանակից նրա դուրս գալու պատճառը։ Բայց ոչնչով չկարողացան վնասել նրան և վերադարձան ամոթալից ու կորակնած, չիմանալու տալով իրենց կատարածը։

Այս ժամանակ կյուրապաղատը ելավ Դերենիկի ետևից, նույն պատճառով զորապետի մոտից հեռանալու համար։ Գիտեր, թե ինչ էր նա մտադրվել իր մոտ եկած Հայոց նախարարների հանդեպ։ Այնտեղի զորքից հեռացան 5 ասպարեզ[438], և [Դերենիկը] մտաբերեց իր հանդեպ Աշոտ կյուրապաղատի բռնությունը, որի մասին տեղեկացրել էին իրեն՝ ստությամբ թե ճշմարտությամբ, մեզ հայտնի չէ։ Բայց Դերենիկը հրաման տվեց Գրիգորին՝ իր հարազատին՝ նույն Արծրունյաց ազգատոհմից, որը բռնեց [Աշոտին] և գցեց Սևան[439] ամրոցը։ Ապա [Դերենիկն] իր քեռորդի Հասանին հրամայեց պահել նրան, առանց կապանքների։

Բայց նրան բռնելու մի պատճառն էլ այսպիսին էր [Դերենիկը] փեսայացրել էր Կյուրապաղատի եղբայր Դավթին, նրան տալով իր քույր Մարիամին։ Ասում են, թե այս պատճառով [Դերենիկը] բռնեց [Աշոտին] և ցանկացավ [Դավթին] նշանակել Տարոնի իշխան, որ կոչվում է նաև Հայոց իշխան։ Այդ կատարվեց, որովհետև Դերենիկը հրամայեց իր ազատազորքին հետևել [Դավիթ] արքային և տիրել ամբողջ [Տարոն] աշխարհին, ամրոցներով հանդերձ։ Ապա Դերենիկը գրեց Հալթի որդուն՝ իր հրամանով հաստատել [Դավթին] իշխան։ Սա Տարոնի իշխան եղավ 7 տարի և վախճանվեց, թողնելով Աշոտ անունով զավակ։

Բայց Հիսեն՝ Շեհի որդին, բռնությամբ գրավեց [Տարոն] աշխարհը և այնտեղ կարգեց իր գործավարներին։

Երբ Հայոց նախարարները դուրս եկան ամիրայի մոտից, նրա մոտ մնաց միայն Մոկաց իշխան Մուշեղը, որ երևելի ու փառավոր մարդ էր։ Նրա հետ էր նաև Վասակի որդի Գրիգորը, որը նույնպես հոգով զվարթ էր և լցված իմաստնությամբ, հոյակապ էր ու անվանի հայերի մեջ՝ լսողներին, ցանկալի, տեսնողներին՝ ուրախացնող։ Սա մեծացրեց ըստ ամենայնի հոգածությունը ճարտարության, իմաստնության, ուսման և շատ ուրիշ բաների նկատմամբ, ավելի քան իր հայրերն ու պապերը։ Սրանք բանակի մեջ կասկածեցին զորապետին, քանզի հայտնապես երևում էր, թե Ահմադն ինչ էր մտադրվել իրենց հանդեպ։ Նրանք հարմար ժամանակ գտան և դուրս եկան բանակից, փրկվեցին ինչպես այծյամը որսորդների հնարներից ու գնացին խաղաղությամբ իրենց տեղերը, իսկ նրան թողեցին լքված ու ամոթահար։

Սրանից հետո Ահմադը, իր հետ եղած կայսիկների զորագնդերով առաջխաղալով, գնաց մտավ Դվին քաղաք, որ թերևս կարողանա կատարել իր մտահղացածը՝ հասցնելու չարիք։ Եվ Իշխանաց իշխանը, որ ավելի բարձր, ավելի խելացի էր, քան հայաստանցի որևէ մեկը և ամենքից, որ ապրում էին երկնի տակ, ելավ գնաց նրա մոտ՝ փառավոր մեծարանքով և մատուցեց նրան շատ պարգևներ ու պատիվներ։ Բայց նա համառեց և ամուր մնաց նույն չարամիտ դիտավորությամբ։ Ջանում էր կործանել պղնձե պարիսպը, կոտրել երկաթե գավազանը, հովվին մատնել կորստյան և հոտին՝ ապականության։



Բայց Իշխանաց իշխան Աշոտը չհանդուրժեց և կամեցավ վերջ տալ նրա չար մտահղացումներին։ Մի օր, մինչ զորապետը հղփացել ու գեղխացել էր այնքան շքեղությունից ու մեծարանքներից, [Աշոտ] իշխանը կորովի տղամարդուն՝ Հայոց սպարապետ Աբասին, որն իր եղբայրն էր, հրաման տվեց զինավառվել, լինել կազմ ու կուռ, պատրաստ ու զորքի, զենքերի, զարդերի ամբողջ կարելությամբ, ինչպես վայել է քաջ տղամարդկանց, պատրաստել նաև ձիերը և ի գերև հանել Ահմադի չար մտադրությունները։ Եվ այն ժամին, երբ բարի լույսի ցնծացողները կամենում էին մտնել [Ահմադի] մոտ, սա հույս ուներ, որ մեծ իշխանը [նույնպես] կմտնի իր մոտ։ Այնժամ մեծ սպարապետը վահանավոր ու նիզակավոր զորագնդով ամուր շրջափակեց նրա վրանը, ապա մտավ ու մատուցեց այն թուղթը, որ նենգությամբ գրել էր Ահմադը՝ Յամանիկին, դեպի Պարտավ քաղաք։ Իսկ նա նայեց գետնին, չկարողացավ վեր նայել, կորակնած էր, և անուժ, գուշակեց որ իր վրա է հասել օրհասը։ Սպարապետը բռնեց նրա ձեռքից, հանեց դուրս, քաջալերեց լինել աներկյուղ։ Ապա ելավ նստեց ջորու վրա, որ պատրաստել էին արդեն վրանի մուտքի մոտ։ Դուրս հանեցին զորաբանակից, վերադարձրեցին այնտեղ, որտեղից եկել էր։ Իսկ զորքը նրա մոտից մեկնեց Ապահունյաց կողմերը. զրկվեցին զենքից ու զարդից, այլև կողոպուտ չարեցին և գնացին իրենց ունեցվածքով ու ձիերով։ Իսկ Ահմադն անցավ գնաց Վասպուրական աշխարհով։ Նրա ետևից գնաց Աշոտի որդի Շապուհը, մինչև տարավ հասցրեց նրան Ասորեստան[340] տանող ճանապարհի սկիզբը։

Բայց Տարոնի կյուրապաղատը դեռ Սևան ամրոցում էր, որը Հասանի՝ Վասակ ամբարշտի որդու ձեռքում էր։ Ոչ մի կերպ չկարողացավ հնար գտնել ելնելու վտանգավոր արգելանոցից, թեև շատերը հոգ էին տանում պատվական մարդու համար, մանավանդ Հայոց կաթողիկոս Գևորգը, որ խնդրեց Դերենիկին՝ ազատ արձակել նրան։ Բազում անգամ թղթերով աղաչեց նրանց, բայց հանձն չառավ [ազատել]։ Ինքն անձամբ հոգ տարավ և ելավ գնաց մեծ հոգացողությամբ՝ ազատելու նրան բանտի տառապանքներից։ Բայց և այնպես չկարողացավ գտնել վտանգից մարդուն [ազատելու] ելքը։ Թողեց այնուհետև արարչի խնամքին ու շնորհներին։ Քանզի Տարոնի իշ-

խանը Հայրապետի պաշտոնի նկատմամբ մեծ հարգանք ուներ, [Հայրապետը] նույնպես սաստիկ հոգ էր տանում նրա համար, թեպետ այդ գործում չկարողացավ օգնել։ Այնուհետև կյուրապաղատն սկսեց խարդախություն ձգել Դերենիկի ու նրա քեռորդի Հասանի միջև, որպես թե Դերենիկն ուղիղ չէ նայում նրան, այլ նկրտում է խլել նրանից ամրոցն ու գավառը։ «Բազում անգամ,— ասում է,— ես այդ իմացել եմ նրա հավատարիմ խորհրդականներից։ Արդ դու անփույթ ու անհոգ չպիտի մնաս դրա հանդեպ, անհապաղ պետք է հնար գտնես ի դերև հանելու նրա մտադրությունները»։ Հույժ անմատչելի էր ամրոցը, և բազում տարիների մեծ գանձեր էին մթերված այնտեղ, իսկ [Հասանը] պատանի էր տարիքով, երբ դարձավ իշխան, 15 տարեկան էր, քանզի «Մանկությունն ու անխելամտությունը ունայնություն են»,* ինչպես գրում էր Սողոմոնը։ [Հասանը] թուլամորթաբար հրապուրվեց այն մարդու խրատից, նրան վստահեց ամրոցն ու գանձերը և աչք դրեց իշխանասեր ցանկության։ Զորք գումարեց, այրուձի կազմեց, մեծամեծներին, գավառատերերին պարգևներ տվեց, բոլորին կանչեց օգնության, թիկունք լինելու, որպեսզի գործի ըստ նրա հավանության ու խրատների։ Սակայն բացեիբաց չէր կարող [Դերենիկի] դեմ ելնել։ Անվայելուչ էր զորագունդ կազմելը և ճակատ հարդարելն ընդդեմ նրա։ Այս ամեն կերպ ջանաց ստապատիր ձևով ի կատար ածել իր անհաստատ մտահղացումը։ Ապա գնաց մտավ ամրոցը և կեղծեց հիվանդություն, իրեն դրեց մահամերձի տեղ։

[Մարդ] ուղարկեց Դերենիկի մոտ, թե՝ «առանց հապաղելու փութա հասնել այստեղ»։ Ելավ գնաց կոչնականների ետևից հարազատի նկատմամբ գթից, սաստիկ հիվանդության վախից, [կարծեց], թե ինչպես տեղեկացրել էին կոչնականները, մերձիմահ ընկած է։ Եվ երբ գիշերն իջավ, խավարը թանձրացավ, և բոլորն սկսեցին քուն մտնել իրենց օթոցներում, հանկարծակի փայլեցին սրերը, վառվեցին մոմերը, [երևաց] դավադիրների խումբը, որոնց հետ նաև Հասանը։ Դրսից փակեցին այն դուռը, ուր մտել էր իշխանը։ Բռնեցին նրան, հանեցին

* Հմմտ. Ժող., ԺԱ., 10։



ամրոցի ավելի բարձր տեղը և բանտարկեցին ներքում եղած սենյակներում։ Իսկ կյուրապաղատին ազատ արձակեցին՝ ըստ գործի հաջողության գնալու, ուր որ կկարողանա հասնել։

Այնժամ փութապես գուժկանը հասավ փառավոր իշխանաց իշխանին և տեղեկացրեց կատարվածի մասին։ Եվ որովհետև նա այն ժամանակ պաշարել էր Մանազկերտ[40] քաղաքը Ապահունյաց աշխարհում, որին տիրում էր Ապլբասը, գուժկանները մեկնեցին այնտեղ։ Նրանց տեղ հասնելու ժամանակ թողեց [պաշարումը] և քաղաքացիներին տվեց խաղաղության հրովարտակ։ [Աշոտը] Գուրգենի, Մուշեղ Բագրատունու և կաթողիկոսի հետ փութաց ու եկավ բանակեց ամրոցի մերձակայքում, որտեղ արգելված էր Դերենիկը։ Կաթողիկոսը իմաստուն և մտացի հղացմամբ, քաղցր ու փափուկ խոսքերով համոզեց պատանի Հասանին, որի առաջ դրեց իր ճերմակ մազերին արժանի պատիվը և իշխանական մեծության բարձրագահությունը և ինչ որ հետևում էր դրան։ Միջնորդեց երդմամբ, խաղաղության ուխտով մոռանալ չարությունները ու կատարած վնասները և բաց թողնել [Դերենիկին]։ Իշխանի և մեծ Հայրապետի աղերսանքով կատարվեց ասածը և նրան հանեցին բանտարկությունից, պատանդ թողնելով Գրիգոր-Դերենիկ Արծրունու որդի Գագիկին։

Նույն ժամանակ ոմանք մոտեցան Դերենիկին և ավելի ստույգ չարախոսեցին Գագիկ Ապումրվանի մասին, թե Կյուրապաղատի հետ մտադիր է անելու այն, ինչ գործեց Հասանը առանց օգուտի։ Բայց ստույգ ու ճշմարիտ էր, թե ոչ, մեզ չէ հայտնի, և լավ համարեցի չգրել անստույգը։ Բայց ինքը՝ Դերենիկը ստեց երդումն ու խաղաղության ուխտը, որ դրել էին իր ու Հասանի միջև, և, բռնելով նրան, բանտարկեց նկան բերդի մեջ, իսկ նրա ամրոցը խլեց և իր հավատարիմներին կարգեց հսկելու նրան։ Տունն ու ստացվածքը խլեց նրանից, իսկ գավառի վրա նշանակեց իր գործակալներին։

Բայց Ցամանիկը, երբ լսեց, որ Աշոտը անարգանքով ետ է դարձրել Ահմադին, և ի չիք դարձրել իրենց մտադրությունը հայերի հանդեպ, հասկացավ, որ մոտեցել է իր օրհասը։ Սկսեց հայտնապես հակառակվել Աշոտին, գոռոզանալ, ձեռնամուխ եղավ շողոքորթական թղթերով հեռացնել նրանից իրեն հնազանդվածներին՝ Վասպուրականի իշխան Դերենիկին, Ապլբաս

կայսրիկին՝ Ապահունյաց բռնավորին, նմանապես և այլոց, ում կարողացավ հրապուրել։ Նույն ինքը՝ Ցամանիկը, գրեց նաև Աշոտին Դերենիկի մասին, որպես թե սա ապիրատ մտադրություններ ունի Աշոտի դեմ։ Եվ [այնպես] արեց, մինչև որ ճեղքեց, խզեց հայերի միաբանությունը։

Իսկ Դերենիկը Հասանի հետ խոսեց խաղաղության համար, խոստացավ վերադարձնել Սևան ամրոցը և իր գավառը. «Միայն թե,— ասում է [նա],— Գագիկ Ապումրվանին մի հրամանով ինձ մոտ հասցնես»։ Որովհետև Գագիկը գնացել ամրացել էր Ճահուկ բերդում, կասկածվելով Դերենիկից, ըստ այն տեղեկության, որ Հասանը տվել էր Դերենիկին, ուստի Հասանը Դերենիկի հանձնարարությամբ մեկնեց Գագիկի մոտ՝ նրա ամրոցը և հավատացրեց, թե դժգոհ է Դերենիկից, որպեսզի դյուրությամբ ու հաստատ համոզի։ Ինչպես որ Դերենիկի նըկատմամբ էր հաջողացրել՝ հիվանդություն կեղծելով, նույն ձեվով գլուխ բերեց նաև Գագիկի հանդեպ։ Երբ Գագիկը անհոգ ու անկասկած քնած էր, Հասանը գիշերը, մերկացրած սրերով ու սպառազինված փոքր զորագնդով, այրվող մոմերով, վրա հասավ և կապեց նրան երկաթե կապանքներով։ Իսկ Դերենիկը փութաց նրա մոտ, վերցրեց Գագիկին և սպառազեն պահպանությամբ ուղարկեց նրան Վանտոսպ՝ Վասպուրականի տիկնոջ մոտ, կարգադրեց պահել զգուշությամբ։ Քիչ ժամանակ հետո Դերենիկը ելավ գնաց Ճվաշ գավառ, ձմեռելու Մառական[442] ավանում։

Այստեղ ինձ համար հեշտ չէ պատմությունը շարունակել։ Ապշում եմ, երբ մտաբերում եմ աղետները, երբ մտածում եմ գրել հիշատակարանս։ Ձեռքերս թուլանում են գրելիս։ Իբրև ծննդաբերողի, ինձ վրա են հասնում երկունքի ցավերը, երբ կամենում եմ գրել այս աղետաբեր լուրերի մասին։ Ինձ համար ցավ է, որ նախատողից ջարդվեցի, խորտակվեցի։ Արտասուքները պղպջալով, ինչպես եռացող կաթսայից, դուրս են թափվում [աչքերիցս]։ Անհուսալի տարակուսանքն է ինձ պաշարում եղածների համար։ Առավել քան անդնդակուռ հողմերի հուզած ծիրանագույն, լեռնացած ալիքները, վիշապաձայն գոչյունները, նույնպես և մարդկանց հավետ ահարեկող, վըրդովվող փոթորիկն իր նոսուն ընթացքով, բռնությամբ խուժում են ազատ սրտիս և ուղեղիս մեջ։ Շատ եմ փափագում միատեղ



հավաքված իմաստասերների, որպեսզի ողբով ճոխացնեմ ասելիքս, քանզի վրա հասած այսքան աղետների վրա ուժ չունեմ դամբանական ողբեր երգելու։ Այս պատճառով դուրս եկա այս մեծ գիտության ասպարեզից և կարոտելով զորեղ ու մըտահարուստ այրերի, բավականացա պատմության իմ անշընորհք գրվածքով, ինչպես կարգն է, պահանջվածն առաջ վարելու համար։ Թերևս գործակիցներով եմ հանդգնելու առաջ տանել ողբալից պատմությունս։

Երբ Դերենիկը գնաց Վասպուրականի իշխանների ձմեռոցը, մեկնեց դեպի Ընծայից ձորը, որի ճանապարհն անցնում էր Հեր քաղաքի[443] գավառով։ Ազատազորքից նրան արգելեցին, քանզի նրանք լսել էին, որ շրջաբերական թղթով Աշոտ իշխանաց իշխանը դարան էր պատրաստել նրա դեմ, բայց չանսաց։ Ասացին՝ թո՛ղ տեսնենք, թե լուրերից ինչ դուրս կգա։ Բայց նա չանսալու պատճառով մնաց անդրդվելի և գնաց գիշերեց Փեռոտակ[444] գյուղում, քաղաքի դիմաց։ Իսկ քաղաքապետը, որին Ապլբերս էին կոչում, պարսկական զորքի օժանդակությամբ երկար ժամանակ սպասում էր նրան չարությամբ։ Զորք գումարեց, ելավ նրան ընդառաջ։ Այգաբացին հրավիրակները փութացնելով ասացին. «Ե՛կ, հանդիպենք միմյանց սիրով ու խաղաղությամբ»։ Ազատանին արգելեց նրան, սակայն բնավ չանսաց ոչ ոքի։ Այն, որ երկուսի աշխարհներն էլ ընդհանուր միացած են իրար, և քաղաքը հովտաձև դաշտում է, նպաստում էր վայրի մարդասպաններին լինելու ավելի քաջասիրտ։ [Դերենիկը] իրեն պատահած հրավիրակներին հղեց պատասխան տանելու նրան։ Եվ լրտեսները լուծելով ասացին քաղաքապետին. «Ահա հեռացել է զորքից և ընկած որսի ետևից, անհոգությամբ ու անզգուշությամբ գալիս է այսինչ տեղը։ Արդ, փութա պատահել նրան, քանզի աստված մատնել է նրան քո ձեռքը»։ Նրանք վազեցին ձիով, հախուռն հարձակմամբ, սպառազինված այրուձիով։ Իսկ Դերենիկը հանդարտ ճեմում էր սիգաքայլ երիվարով և սպառազինված զորագնդի առջև, միայնակ, առանց ուղեկցի, հասավ առուների միջև [ընկած] տեղը։ Թշնամու զորքը ճեղքվեց այս ու այն կողմ և նրան առավ իր մեջ։ Նույն ժամանակ բազմությամբ շրջափակեցին նրան և պահեցին ինչպես ամուր անձավում, շուրջը ձգեցին մահաբեր ցանցը, քաշ

նահատակին կործանելու համար։ Քաղաքապետը, ինչպես Հուդան էր համբուրել տիրոջը, նշան էր տվել և ասել. «Երբ որ կհամբուրեմ նրա այսինչ տեղը, դուք նիզակի ուժով խորունկ վերք կհասցնեք նրան»։

Եվ նույն ժամանակ մերկացրած սրերով, նիզակներով, հախուռն հարձակվեցին վրան, ինչպես արյունարբու, մարդակեր գազաններ, սրախողխող արեցին ու սպանեցին նրան, և խավար դարձրեցին Վասպուրական աշխարհը, որտեղ ապրում էր իշխանը։ [Դերենիկը] քառասուն տարեկան էր, երբ մեռավ։ Այնժամ ողորմագին աչքերը շրջեց իր քաջ նիզակակիցների կողմը, թե ո՞վ արդյոք իրեն օգնության կհասնի։ Բայց որովհետև տերը նրան մատնեց նրանց ձեռքը, ինչպես ասել է Դավիթը՝ «տիրոջ ահը եղավ ամենքի վրա»*, ուստի յուրաքանչյուր տղամարդ մազապուրծ փախավ գնաց իր աշխարհը։ Զերծակալեցին միայն Ամատունյաց նահապետ Ապուսակրին, և առան գնացին դեպի քաղաք, վերցրին նաև սպանվածի դին և տարան իրենց հետ, պարծենալու համար։

Այստեղ հիշվեցին, կատարվեցին սողոմոնյան առակները, ըստ որոնց՝ «աներկյուղն ընկնում է որոգայթի ու վիհի մեջ այնպիսի տեղ, որտեղ հավիտյան այցելություն չպիտի լինի»**։ Իսկ վախկոտության մասին, ընդհակառակը, ասում է՝ «Վախկոտությունն ապրեցնում է»***, Իսկ եթե վախկոտների համար երկյուղը հարգի է արիությունից, ապա քաջերը որքան շատ արիություն պետք է ստանան, երկյուղից իրենց պատսպարելու համար։ Ինչպես Դավիթն է ասում, «զգուշացա և չըշփոթվեցի»****։ Եվ ինչ-որ մեկ ուրիշը արտաքին իմաստուններից***** ասում է. «Աներկյուղի հետ ճանապարհ մի գնա»։ Բայց ավելի ճշմարիտ են Սողոմոնի խոսքերը, ըստ որի «վա՜յ մեկին, երբ կընկնի, ո՞վ կվերցնի նրան»******, Եվ թե՝ «երկուսը լավ են, քան մեկը, քանզի եթե մեկն ընկնի, մյուսը կըկանգնեցնի»*******։

* Գործք առաք., Ե., 5։

** Հմմտ. Առակ., ԺԹ., 23։

*** Հմմտ. Առակ., ԺԸ., 8։

**** Հմմտ. Սաղմ., ԾԺԹ. 60։

***** Ի նկատի ունի Խիկար Իմաստունին։

****** Ժող., Դ, 10։

******* Ժող. Դ, 9—10



Եվ վաճառականները խնդրեցին նրա դին, նույն գավառի եպիսկոպոս Դավիթի ձեռքով պատանեցին և դրեցին տապանի մեջ, տեղի եկեղեցում։ Իսկ մեկ օր անցնելուց հետո Դերենիկի որդի Աշոտը գնաց, առավ նրա դին և տարավ թաղեց իր նախնյաց մոտ, Աղբակ գավառի Սուրբ Խաչ վանքում։ Վասպուրական աշխարհը հավաքվեց և 10 ամիս մեծ սուգ արեց նրա համար։

Այնուհետև եկավ Շապուհը՝ Աշոտ թագավորի որդին և իշխանությունը վերցրեց Աշոտի՝ Դերենիկի որդու ձեռքը, իր հոր փոխարեն։ Իսկ Գագիկին՝ նույն Ապումրվանին, ոստիկան կարգեց աշխարհի վրա՝ տիրելու որպես փոխանորդ, քանզի հույժ մատաղահասակ էին Դերենիկի որդիները. Աշոտն 9 տարեկան էր, երբ մեռավ Դերենիկը, Գագիկը՝ 7, Գուրգենը՝ 5 տարեկան։ Եվ թեպետ Գագիկ [Ապումրվանը] հոգ էր տանում, խնամում մեր աշխարհը, սակայն ազատների բազմությունը սիրով չընդունեց նրան և մնաց տարակուսանքի մեջ։ Բայց որովհետև Գագիկը հույժ լցված էր իմաստությամբ, տեղի էր տալիս երկրի բոլոր գավառապետներին, զորագլուխներին, նրանց հետ վարվում էր իմաստությամբ, խորագետ հնարներով, յուրաքանչյուրին մեծարում էր գահով ու պատվով և ցանկանում հաճոյանալ նրանց։

Սրանից հետո Հայոց թագավոր Աշոտը եկավ մխիթարելու իր դստերն ու թոռներին և ավելի ևս մեծացավ Աշոտի իշխանության հաստատությունն ու Ապումրվանի ոստիկանությունը։

Բայց տիկին Սոփին Դերենիկի մահից հետո ապրեց մեկ տարի և ութ ամիս ու վախճանվեց։ Տարան թաղեցին նույն Սուրբ Խաչ վանքում։

Սրանից հետո նրա որդիները՝ Գագիկը, Աշոտը և Գուրգենը կանոնեցին նրանց հիշատակը Սուրբ Խաչի տոնին և սուրբ եկեղեցուն տվեցին 4 ագարակ, Փշոց[445] վանքը, Ահավանք[446] ագարակը, որը [Աղթամար] կղզու եկեղեցու դիմացն է և Մանակերտ[447] ժայռը, որը [կղզու] դիմացն է հարավակողմից, Բերկրին և բազում այլ տեղեր, որ թագավորի որդիներն իրենց հոր և մոր մահից հետո հանձնեցին Աղթամարի Սուրբ Խաչի[448] կարիքների համար։ Սրանց հրամանները հաստատուն են ինչպես վեմը, և եթե որևէ մեկը ջանա խախտել,

աստծո հրամանով նա չի ժառանգի իր աթոռն ու թագավորությունը։ Իսկ եթե որևէ մեկը կամենա հաստատել, կմնա անսասան այս աշխարհում. ամեն։

## ԻԱ

### ՍՄԲԱՏԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԱՇՈՏԻ ՓՈԽԱՐԵՆ

*Այն ժամանակներում Հայոց Աշոտ թագավորը բարվոք ծերության մեջ փոխվեց այս աշխարհից, փափկացած ու հրղփացած խրախճանքներից՝ «նրա ձեռքն ամենքի վրա էր և ամենքի ձեռքը՝ նրա վրա»*։ Նրա թագավորության ժամանակն անցավ հույժ վայելչորեն՝ հինգ տարի իշխանական ճոխությամբ, 25 տարի որպես Իշխանաց իշխան, 4 տարի թագավորական շքեղությամբ և մեռավ Հայոց 339 [890] թվականին Հայոց կաթողիկոս Գևորգի հայրապետության 15-երորդ տարում։ Նրա փոխարեն թագավորեց իր որդի Սմբատը, որը քաջահայտ և հույժ խելացի տղամարդ էր, եռանդուն բոլոր գործերում, որոնք կատարվում են երկնի տակ պատշաճաբար ու անալարորեն, հաճո աստծուն և մարդկանց համար լավ։*

## ԻԲ

### ԴՎԻՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ ՍԱՍՏԻԿ ՇԱՐԺԻՑ

*Հայաստանում [Սմբատի] թագավորելու երրորդ տարում աստվածատուր բարկությամբ գետնի խորքերում հորձանքի պես դղրդյունով միմյանց բախվեցին անդունդը շարժող [ուժերը], հորձանք տվեցին, ցնցումով հիմքից շարժեցին, տապալեցին։ Երկրի խորքերում սանդարամետական սահմանում թուլացած, ամուր փակված բարկության հողմերը փչեցին խավար ջրերի մեջ, խորքերը բացող ալիքներով տատանեցին երկրի խոր ընդերքի կարծր, անշարժ ու անկշռելի անբավությունը և վեր մղեցին երկրի երեսը՝ Արտաշեսի քաղաքի դիմաց, որին անվանում են Բլուր, և որտեղ է թագավորանիստ Դվին քաղաքը՝ մարդաշատ, պատվարված պարսպավոր պատնեշներով, հղփացած ու հափրացած վաճառականությամբ, տեսակ-տեսակ պղծություններով։ Այն հիմքից տապալեց, դժոխքի պես լայն բացեց իր բերանը, շատերին վիժեցրեց անդունդը։ Նրանցից ոմանց տներն իսկ գերեզմաններ դարձան իրենց համար։ Կորխայինի[449] բանակի պես բնակության տները թաղվեցին անդունդի խորքում. չխնայվեցին ինչպես Նինվեացիները, որոնք զղջացին։ Բայց Դվինի քաղաքացիների քարեղեն սրտերի պատճառով չխնայեց նրանց։ Սրբատեղիները, աղոթքի տները նույնպես ներգործվեցին շարժից, ճեղքրվեցին, պատերը խախտվեցին ինչպես Ոզիա[450] թագավորի մահվան ժամին, Եսայի մարգարեի ժամանակ, երբ սերովբեների ձայնից շարժվեց տիրոջ տաճարը, մինչև դռների բարձրանալը։ Նույնպես և Զաքարիա մարգարեի ժամանակ [գետինը] շարժվեց մինչև Զիթենյաց[451] լեռը։ Ասվում է, թե շարժից խեղված մարդկանց թիվը ավելի քան 70 հազար էր։ Այս շարժրն ավելի սաստիկ էր, քան այն, որ եղավ Հայոց կաթողիկոս Զաքարիայի ժամանակ, հայերի գերությունից 7 տարի հետո։*

*Այնտեղ էր նաև Ռշտունյաց երանելի եպիսկոպոսը՝ սրբազան Գրիգորը, որը յուրայինների հետ չկարողացավ փրկվել, երբ նույն ժամին աղոթում էր լեռան վրա։ Նրանցից ոմանք նույն շարժից մնացին այնտեղ փլվածքի տակ։*

*Բայց երանելի հայրապետ տեր Գևորգը տրտմեց ավելի սաստիկ, քան տիեզերական կործանման ժամանակ՝ Նոյը։ Գրիգոր եպիսկոպոսի հետ, ինչպես Աբրահամը վաղնջական Սոդոմի կործանման ժամանակ, աղաչում էր մարդասեր աստծուն, ապա թողեց Դվինը և գնաց բնակվեց Նոր քաղաքում[452], մեծ եկեղեցու մեջ, որը սուրբ Գրիգորի անունով շինել էր երանելի տեր Ներսես երկրորդը՝ Հայոց կաթողիկոսը։*

*Սրանից երկու տարի հետո բյուզանդական զորքը պաշարեց Կարին քաղաքը, ապա ետ դարձան այնտեղից և իրենց կամքով թողեցին գնացին։ Նույն տարում մեռավ Տարոնի տերը՝ [Դավիթ] արքան։ Հիսեի որդի Ահմադը բռնությամբ նվաճեց նրա երկիրը։ Եվ [Տարոնի] իշխան Գուրգենը՝ [Աշոտ] կյուրապաղատի որդին, նենգությամբ սպանվեց Ահ-*

* Ծննդ., ԺԶ, 12։

մտքի վարագույրներից։ Նա քաջ ու երանելի տղամարդ էր և Հայաստանում՝ հույժ հայտնի։

Բայց Դերենիկի որդիները՝ Աշոտը, Գագիկը և Գուրգենը աճեցին, հասակ առան մարմնով, ոչ պակաս չափով հարըստացան մտքով, հայտնի դարձան, զուգընթաց նաև բողբոջեցին, կատարելագործվեցին իրենց մտացիությամբ։ Ուրախ ու զվարթ խրախուսանքով միմյանց հուսադրեցին տիրաբար, հոգատարությամբ խնամք տանելու երկրի շինության համար, և սուգն ու տրտմությունը, որ կրում էր մեր աշխարհը, Դերենիկի մահվան պատճառով, փոխեցին ուրախության, խնդության։ Ցույց տվեցին եղբայրական հնազանդության օրինակ, աննման վայելչությամբ մեկմեկու լավ համարեցին, հավասար վերաբերվեցին իշխանական գահի դրությանը։ Միայն ծննդյան տարիների պատճառով վստահեցին Աշոտին տալու իշխանական պատիվը։ Բնավորություններով միմյանց չհակառակվելով, երկիրը բաժանեցին երեք մասի. Աշոտը, ինչպես վերևում ասացինք, [ստացավ] նախնյաց իշխանությունը, այլև աշխարհի մեծ մասը, մինչև Նախճավանի ամրոցը, իսկ Գագիկը՝ Ռշտունյաց կողմերը, մոտակայքի այլ գավառներով և որքան որ կարողանա հասնել ուժով։ Ավելի այն կողմ՝ նաև Մոկաց աշխարհը։ Գուրգենին [բաժին հասավ] արևելյան կողմերը՝ Աղբակից արևելք գտնվող [գավառները]՝ ամբողջ Պարսկահայքը[453], մինչև Կորդուքի[454] արևմտյան կողմերը և մինչև ուր որ հնար լիներ ձեռք բերել։ Եվ սրանք այսպես էին։

Իսկ Ապումրվանը ոստիկանության համար պատճառ բերեց նրանց մանկահասակությունը և մտքի երասանները ձգեց իշխանական ցանկությունների ետևից, սակավ առ սակավ սկսեց գրավել ամրոցները՝ Նկանը Թոռնավան գավառում, Կոտոր[455] ամրոցը Ընծայից ձորում, Սևան ամրոցը՝ Լմբա փորում[456]։ Իսկ ամրոցաբնակ մյուս ազատներին օրըստօրե բաշխում էր պարգևներ ու պատիվներ և կամենում էր նրանց կապել իրեն հետ։ Վասպուրականի ազատները իմացան նրա մտադրությունների մասին և չկամեցան թեակցել Գագիկ [Ապումրվանին] և անխռով ու հանդարտ ջանացին մի ելք գտնել։ Ոմանք խորհրդածում էին այսպես, ոմանք այնպես։ Բայց շատերի դիտավորությունները այս ժամանակ միատեղվեցին։

Աբուսաճի որդի Ավշինը, որ հզորապես ու հաղթությամբ



գլխավորում էր պարսկական հարստությունը, կամեցավ ձեռք պարզել տիրելու նաև հայերին։ Հեռու մնաց բռնանալուց, մեկ առ մեկ թղթեր ուղարկեց իշխաններին, ամենից շատ Աշոտ իշխանին և իր եղբայրներին։ Նրանք տեղեկացել էին պարսկական իշխանների վրա նրա բռնանալու, նրանց կրածների մասին և հաշվի առան խառն դրակցությունը նրանց երկրի հետ, որ միգուցե իրենք և իրենց երկիրն էլ կրեին, այն ինչ եղել էր պարսից երկրում, համաձայնության ձեռք տվեցին նրան՝ մնալու հպատակության մեջ։

Եվ Աշոտը, առանց երկյուղի, համարձակությամբ ելավ գնաց Ավշինի հրավերների ետևից։ Իսկ Հայոց թագավոր Սմբատը անվայել համարեց Աշոտի մեկնելն Ավշինի մոտ, [մտածեց], որ միգուցե իշխաններից ուրիշներն էլ կհետևեն նրան և կգնան։ Նա արգելեց Աշոտին, որը սակայն չանսաց ոչ ոքի։ Այնժամ Սմբատ թագավորը հույժ զայրացավ ու գրեց Գուրգենին՝ Անձևացյաց տիրոջը և Գագիկ Ապումրվանին, ասելով. «Բնական արդարությամբ Վասպուրական աշխարհը եղել է ձեր ժառանգությունը և ձեզ արտաքսելով, այն թողել են Աշոտի նախնիներին։ Ուրեմն ելեք այդ աշխարհի դեմ՝ համարձակ ու զորությամբ, և այդ երկիրը կդառնա ձեր ժառանգությունը»։ Այս հրամանը փութով ի կատար ածվեց, ըստ նրանց իշխանասեր ցանկության։ Եվ հարձակվելով մեր աշխարհի վրա, այն կիսեցին երկու բաժնի։

Ապա եկան պատերազմելու Վան քաղաքի ամրոցի դեմ։ Եվ որովհետև [Ավշինի մոտ] գնալիս Աշոտը [Վանում] թողել էր Վասպուրականի տիկին Սեդային և ամրոցի ռազմի պատրաստությունը վստահել էր Հիսեին և եղբորը՝ Բագևոսին, որոնց անվանում էին Շերեփի որդիներ՝ Ակեացի տոհմից և որոնք քաջ էին ու հմուտ պատերազմելու մեջ, պատերազմեցին երեսուն օր, ոչնչով չկարողացան վնասել։ Հիսեից պարտվում էին, քան թե հաղթանակ կորզում, մինչև որ բերդի միջոցները պակասեցին, մանավանդ ջուրը։ Նրանք ակամայից լքեցին, թուլացրեցին մարտը և ամրոցը տվեցին Գագիկ [Ապումրվանին]։

Եվ մինչև մեր երկիրն այսպիսի խառնաշփոթության մեջ էր, եղածի լուրը հասավ Ավշինին և իշխան Աշոտին, թե՝ «երկիրը վրդովված է, տարակույսի մեջ են քո ամրոցների տերե-

րը. արդ ջանա անհապաղ վերջ տալ, քակտել նրանց միաբանական դավադրությունը։ Որից չհամբերելով, [Աշոտը] Ավշինի զորքով եկավ նրանց վրա, որոնք տեղի տվեցին և գնացին իրենց ամրոցները, իսկ Վասպուրականի զորքը գնաց Աշոտի տունից։

Բայց Գուրգեն [Ապուպելճը] սրտանց ցանկանում էր գրավել երկրի մի մասը, մանավանդ Ուշտունյաց Ոստանը, որն իր հոր սպանման տեղն էր, և համարում էր նրա արյան գինը։ Իսկ Ապումրվանը կեղծավորությամբ ասում է Աշոտին. «Այն պատճառով մտա այս երկիրը, որպեսզի Գուրգենը բռնությամբ չխլի երկրի ամրոցները և ուժով իր կողմը չձգի քո զորքը։ Ուրեմն ինձ հետ խաղաղություն արա և երկուսից միջից կվերանա կեղծավորության պատրվակը»։ Իսկ քաղցրաբարո իշխան Աշոտը, որ հեզ էր ու լցված ամենայն բարությամբ, տեղի տվեց ասածին։ Ապա հասան նույն տեղն ու եկան Կուղան հովիտը[457], որտեղ կամարաձև մի տեղում բանակել էր Գուրգենը բազմաթիվ զորքով։ Գուրգենը խոսեց Աշոտի հետ հայտնապես, ինչ որ մտածում էր, և իշխանի չանսալու պատճառով նույն ժամանակ պատրաստվեցին մարտի։ Բայց Աշոտը, թեև իր հետ քիչ զորք ուներ, չձգտեց վերջացնել պատերազմը։ Նրանց միջև կանգնեց Ապումրվանը, համոզեց ու հանգստացրեց միմյանց միջև բռնկված պատերազմը, և Գուրգենը ետ դարձավ գնաց իր գավառը, Կանգավար ամրոցը։ Բայց փոքր-ինչ հետո նրա կյանքը վերջ գտավ՝ խրոխտ ձին վար գցեց ու մեռցրեց տղամարդկանցից ամենաքաջին և իշխաններից վսեմագույնին՝ Հայոց մեծերի քաջ զորավարին։

Բայց Ապումրվանը իշխանասիրությամբ նյութում էր դահակալելու մեր աշխարհը։ Եվ քանզի այս երեքը՝ Դերենիկի որդիները՝ Աշոտը, Գագիկը և Գուրգենը միմյանց հետ կապված էին անքակ ու անխզելի միաբանությամբ, հենվել և հույսները դրել էին միմյանց վրա, որպես ամուր քաղաք և պղնձի պարիսպ, [Ապումրվանի] դիտավորությունը չէր կատարվում։ Իր ներսում կուտակած ցանկության ալեծուփ ալիքները դադար չէին տալիս նրա մտքերին։ Ապա նրանք գեն գցեցին Ապումրվանի հանդեպ ունեցած կասկածները և եկան նրա մոտ առանց երկյուղի։ Իսկ նա հարմար պահը գտնելով, նրանց միասին բռնեց և ուղարկեց երկրի ամրոցները, կապելով եր-



կաթե կապանքներով։ Աշոտին տարավ ապահով Նկանը, Գագիկին՝ Սևան ամրոցը, Գուրգենին՝ Կոտոր բերդը։ Դարձյալ Սևան բերդը տվեց Հասանին՝ Վասակ Ամբարիշտի որդու ձեռքը։

Այս տեսան Վասպուրականի ազատները, որոնք չկարողացան տանել Ապումրվանի կատարած արարքները և Տրունյաց իշխան Հիսեն՝ Հոնավարի որդին, Արեղյանքի իշխան Վարազշապուհը, Թադեոս Ակեացին՝ Շերեփի որդին և նրանց հետ ուրիշներ, ելան գնացին Աստմի՝ մեծն Գուրգեն [Ապուպելճի] որդու մոտ, Կանգավար ամրոցը, հանգամանքներից ելք գտնելու։ Սրանք ամենքն իրենց ունեցվածքով ու գերդաստանով թողեցին իրենց բնակության տները, ժառանգությունը, Դերենիկի որդիների հանդեպ ունեցած հավատարիմ հպատակության պատճառով։ Լավ համարեցին պանդուխտի կյանքով ապրել օտարության մեջ, քան տեսնել կապված ու բանտարգել արված իրենց իշխանի որդիներին, աշխարհի իշխանին (հնազանդեցնողների և հնազանդվողների սովորությամբ, ինչպես խրատում է հեթանոսների վարդապետը), որոնց մանկուց սրտանց հատուցել էին ծառայության պարտքը։

Նույն ժամանակ եկավ Շապուհը՝ թագավորի եղբայրը և Գագիկ [Ապումրվանին] կարգեց Վասպուրական տերության իշխան, մանավանդ որ Գագիկը փեսայացրել էր Շապուհին, տալով իր դստերը։ Իսկ Աստմը մինչ մնաց թագավորի երկյուղից։ Եվ Վասպուրականի ազատները գլուխները վերցրեցին ու գնացին Ամիդացոց[458] քաղաքը, Հիսեի որդու՝ Ահմադի մոտ, որը մեծ հաճությամբ իր հետ կապեց նրանց, իբրև պատվավոր այրերի ու զորավոր քաջամարտիկների, մանավանդ որ բազում անգամ արժանացել էին հաղթողի անվան։ Իսկ ավելի առաջ նա իմացել էր նրանց համբավի մասին և մեծ հոժարությամբ ընդունեց նրանց, [մանավանդ] որ զավթել էր Տարոնի կողմերը և հաստատում էր բնական կարգով ամրապնդել ամրոցը Հայաստանում, քանզի Տարոնն անվանում էին հայոց առաջին տունը։ Այն գրավել էր Ահմադը և կամենում էր ավելի ևս առաջ գալ, որպեսզի հայոց նախարարներին գրավի մեծապատիվ սիրով, և նրանց միջոցով հաստատ մնա երկյուղալի այն հրամանների հանդեպ, որ հանապազօր Հայոց Սմբատ թագավորն ուղարկում էր նրան։

## ԻԳ

### ՀԱՅՈՑ ՍՄԲԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԱՀՄԱԴ ԱՄԻՐԱՅԻ ԴԵՄ՝ ՎՐԱՑ, ԱՂՎԱՆԻՑ Ե ՀԱՅՈՑ ԲՈԼՈՐ ԻՇԽԱՆՆԵՐՈՎ. ՍՄԲԱՏԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՀՄԱԴԻՑ՝ ԱՂՁՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, ԹՈՒԽ[459] ԿՈՉՎԱԾ ԳԵՏԻ ՎՐԱ, ՈՐԸ ԹԱՓՎՈՒՄ Է ԲԶՆՈՒՆՅԱՑ ԾՈՎԸ

Ինչպես վերևում մի փոքր հիշեցինք, Ահմադը գրավել էր Տարոնի աշխարհը, այն անջատել հայոց պետությունից։ Սմբատը բազում անգամ գրեց նրան՝ փութապես թողնել գավառը և տալ Աշոտի՝ Դավիթ իշխանի որդու ձեռքը։ Նրան խոստացավ Հայոց զորապետությունը՝ արքունի հրամանով և հայերի հնազանդությամբ հանդերձ։ Բայց Ահմադը չխոնարհվեց և ո՛չ էլ ունկնդրեց նրա ասածներին, արհամարհեց իր մոտ առաքվածներին։

Այնժամ թագավորը դեսպաններ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը՝ Հայաստան, Վրաստան և Աղվանք՝ քաղաքացիներին, զորապետներին, գավառապետներին, ովքեր սիրով հնազանդվում և հարկ էին վճարում նրան։ Նրա մոտ եկան Վրաց Ատրներսեհ իշխանը [և ուրիշներ]։ Եվ, ինչպես ասում են, գումարված զորքի թիվը եղավ 100 հազար։ Սա գնաց Բզնունյաց ծովի եզերքով դեպի Ապահունյաց կողմերը և բանակեց այն գետի ափին, որը լցվում է Աղձնիքի խոխոմները։ Ահմադը իրազեկ եղավ դեպի իր կողմը [Սմբատի] գալստյան մասին և գումարեց իր նահանգի, Միջագետքի, Գեթացիների[460] զորքը և եկավ հասավ նրա դիմացը։ Եվ անհապաղ, մի ակնթարթում պատրաստված այրուձին դարձավ կազմ ու կուռ, պատրաստվեց մարտի։ Վասպուրականի քաջերը, որոնց անունները հիշեցինք վերևում, կտրճաբար նետվեցին առաջ, փակեցին բանակի առջևը և ետ դարձրեցին զորագլուխներին։ Եվ ինչպես հողմն է այս ու այն կողմ շարժում եղեգների անտառը, սասանեցրին ու շփոթեցրին զորքին։

Իսկ թագավորը, երբ իմացավ, որ զորքերը հարձակվեցին միմյանց վրա, մտածեց, որ միգուցե կարողանա դադարեցնել մաքառումը։ Սաստեց պատերազմող իր զորագնդին, բայց չկարողացավ հանդարտեցնել սրախողխող կոտորածի դեղագեղ կոհակներն ու բորբոքված հնոցը։ Նույն ժամանակ շատ



ավեց ձիու երասանները և մտավ պատերազմի մեջ, այնտեղ ցուցաբերեց բազում արիություններ, սակայն ոչ մի օգուտ չկարողացավ բերել։ Այլ դուրս ելավ մարտից և փախավ դեպի Հողցի ճանապարհը։ Իսկ Ահմադը շրջափակեց զորքը, անխնա հարվածներ հասցրեց, մանավանդ նրանց հետ եղած հետևակազոր բազմությանն ու ռազմիկներին։ Եվ ինչպես ասում են՝ սպանվածների թիվը եղավ ավելի քան 5 000։ Նրանց մարմինները մեկ տարի մնացին, առանց հողատվելու գազաններից ու թռչուններից։ Այդ ժամանակ պատերազմում ընկել էր նաև Գեղարքունիքի[461] իշխան Աշոտ Հայկազնը, որը ճանաչվում էր Սուփանի որդի։ Սպարապետի տիկինը եկավ Տարոնից, մի նշանով գտավ նրա դին, տարավ իր Գոռպ[462] ավանը և գերեզման դրեց։

## ԻԴ

### ԱՊՈՒՄՐՎԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Բայց Ապումրվանը Դերենիկի որդի Գագիկին հանել էր բանտի կապանքներից՝ պահում էր ազատ։ Սա քաջաբար, հաստատ մտադրվեց սպանել Ապումրվանին։ Եվ Ամատունյաց տոհմից եղբայրներ Շապուհը, Վահանը և Սարան, Ապուսակր Վահունին և ուրիշներ, միասին խորհրդակցեցին Գագիկի հետ և մտադրվեցին սպանել Ապումրվանին, որով կապանքներից կհանեին իշխան Աշոտին ու Գուրգենին և նորից իշխանությունը կվերադարձնեին իրենց։ Իսկ երբ Ապումրվանը փախստականների հետ թագավորի ետևից եկավ Վանտոսպ, Գագիկի հղացումը հաստատորեն կատարվեց։

Երբ թագավորը հեռացավ երկու օրվա ճանապարհ, Ապումրվանը դուրս էր եկել և զբոսնում էր ձիընթացարանում։ Ազատները ետևի կողմից սուր գործի դնելով, սպանեցին նրան, գլուխը հատեցին և ուղարկեցին բերդի մեջ եղողներին։ Աշոտն ու Գուրգենը հանվեցին կապանքներից, տիրեցին մեծ զորությամբ իրենց բնիկ իշխանությանը և այնուհետև ապրեցին անհոգ ու ապահով։ Տիկին Սեդան՝ Աշոտի կինը, վերցրեց [Ապումրվանի] մարմինը և դրեց գերեզման այնտեղ, որին անվանում են Ձորո վանք[463], Ահեակյան գյուղի վերևում։

Երբ կատարվածի մասին [լուրը] Հասավ թագավորին, Նա ոչ մի պատասխան չտվեց, բայց միայն ասաց՝ «ըստ արժանվույն այդ գործը կատարվեց»։

Երբ թագավորը Հասավ իր աշխարհը, բերել տվեց պարգևներ ու պատիվներ Աշոտի Համար՝ իշխանական կարգով։ Գագիկին Հասցրեց Հայոց մեծերի զորավարության պատվին և բյուզանդական թագավորների օրենքով նրա ձեռքը տվեց խաչվառ։ Իսկ Գուրգենին՝ նրա եղբորը, վստահեց մարզպանության գահի պատիվը, Հայոց թագավորների, մանավանդ մեծն Տրդատ թագավորի [սահմանած] բարձր պատվի կարգով։

## ԻԵ

### ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ԿԵՂԾԱՎՈՐ ՍԻՐՈՎ ԷՐ ԱՎՇԻՆԸ ՆՅՈՒԹՈՒՄ ՔԱՐԻՔՆԵՐ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Բայց Աբուսաճի որդի Ավշինը, քանզի խորամանկ մարդ էր, ատում էր խաղաղությունը, չէր Հագենում մարդկանց արյունը խմելուց և այն լավ էր Համարում իր անձը փառավորելու Համար։ Երկրի ավերումը կարևոր էր Համարում, քան շինությունը։ Ողորում էր մեր ամբողջ աշխարհի դեմ՝ անընդհատ շրջագայությամբ, մնում էր անհանգիստ և կեղծավոր սիրով Վասպուրականի աշխարհի ու նրա տերերի Հանդեպ, կարծել էր տալիս, թե կարող է բարեկամ [լինել]։ Մեկը մյուսի ետևից ստիպեց նրանց փութալ, իր առջև կատարել ծառայական սպասավորություններ, ինչը արեցին իսկ Աշոտը, Գագիկը և Գուրգենը, կամավոր և ակամա կատարելով նրա Հրամանները։ Մեկ-մեկ գնացին [նրա մոտ] և վերադարձան։

Իսկ մի օր Գուրգենը անցավ գնաց և Հանդիպեց նրան Պարտավ քաղաքում և պահվեց այնտեղ երկար ժամանակ, գրեթե մեկ տարի։ Բարխասյաց ու չարասեր Ավշինը նյութեց Գուրգենին Հասցնել մեծամեծ չարիքներ, դցել նրան կապանքների ու մահաբեր տանջանքների մեջ, գրավել նրա ամրոցները, երկիրը տալ իր զորավարների ձեռքը, Հատուցել նրանց պարսկական Հատուցմամբ։ Երբ ոմանք նրան տեղեկացրին, թե Ավշինն ինչ է մտադրվել իր Հանդեպ, մանավանդ որ Քրիս-



տոսի նախախնամող ու պահապան աջը Գեղանավորից նրան՝ փրկելու վրա Հասած Հրածին, կարկտաբեր ու կորստաբեր ցիպվածից, աստծուց Հասած օգնությամբ նա գործեց ավելի քաջասրտորեն և դուրս պրծավ գազանի երախից։ Ելավ գնաց ու Հեռացավ՝ վրա Հասած գիշերվա օգնությամբ։ Նրա Հետ էր Ամատունյաց տոհմից Շապուհը, նա, որը եղավ Գագիկի գործակիցը Ապումրվանի սպանության ժամանակ, ինչը Հիշեցինք ավելի վերևում։ Այսպես նրանք մտան իրենց աշխարհը։ Եվ մեծ խնդությամբ լցվեց երկիրը, կարծես տեսնում էին մեռյալների միջից ելած ինչ-որ մեկի։

Իսկ Ավշինը, զրկվելով իր Հղացած դիտավորությունից, կրկնեց իր չարակամությունը նաև այսպես։ Ելավ, սպառնալով ու մռմռալով, խրոխտ ու դառնաշունչ և Հանկարծակի եկավ մտավ Շամիրամի քաղաքը՝ Վանտոսպ։ Իսկ Աշոտ իշխանն ու իր եղբայրները խույս տվեցին Փոքր Աղբակի կողմերը, Ջլմար և Սրինգ ամրոցների մոտ։ Ավշինը [Վասպուրական] աշխարհը վստահեց Սափի անունով ինչ-որ ծառայի, որը Հույն գերյալներից էր, ներքինի, թողել էր Հավատը ի Քրիստոս, ընդունել մահմեդական դենը, լցվել արյունարբու գիտությամբ։ Նա տարածեց, սփռեց իր զորավարներին ամբողջ երկրում, բայց չկարողացան մի Հնար գտնել ամրոցները վնասելու Համար։ Եվ այդպես անհոգ ու աներկյուղ ընությամբ Հարկ էին պահանջում գործակալներով։ Մի ուժեղ զորագունդ եկավ ու մնաց Մարդաստան գավառի Համբուրագան ավանում, ուր այն ժամանակ Նախճավան քաղաքից տեղափոխվել էր Մարդպետականի եպիսկոպոսական աթոռը։ Ձմեռային եղանակին այնտեղ Հասան մեր քաջերը՝ երեք եղբայրները, սակավաթիվ սպառազորքով և մթնշաղի լույսի տակ վազքով վրա Հասան ու սրի քաշեցին շատերին։ Բայց քանի որ երկար ընթացքից և թանձրամած ձյան կուտակումներից ձիերը Հոգնել էին, պակասել էր նրանց ուժը, ուստի թշնամիները, աղեղներով, նիզակներով անողոք Հարձակվեցին նրանց վրա, ձերբակալեցին ոմանց, կեսին դատապարտեցին մահվան և նրանց գլուխները Հատելով, բարձրացրին փայտի վրա, պարսպի դարպասների վերևում։ Իսկ ձերբակալվածներին ուղարկեցին Ավշինի մոտ՝ Պարտավ, կապանքների մեջ դցեցին բանտ, ապա դատապարտեցին մահվան և սրով խողխողեցին, կտրելով մեջքերից։

Այսպես բոլոր բռնվածներին տանջամահ արեցին, չարչարեցին, կտրեցին մեջքերից և ահ ու սարսափի մեջ գցեցին նրանց տեսնողներին։ Բայց միայն ոմն Արշակ՝ Վարաժնունյաց տոհմից [փրկվեց] Շապուհ Բագրատունու դստեր խնդրանքով, որին այն ժամանակ կնության էր առել Ավշինը, անօրեն ամուսնությամբ։ Նրան աղերսեց Վասպուրականի Սեդա տիկինը, որն Աշոտի կինն էր ու Ապումրվանի դուստրը, և փրկեցին նրան Ավշինի սրից։

## ԻԶ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԲԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՄԵՌԱՎ ԱՎՇԻՆԸ ԵՎ ԱՄԲՈՂՋ ԻՐ ԶՈՐՔԸ

Բայց ո՞ւմ կամ որ երկիրն էր, որ չկործանեց Ավշինը, սպառնալիքներով, ավազակային ասպատակություններով, ավարառությամբ հափշտակումներով, կոտորելով՝ սրով ու սովով։ Քանզի այնչափ սաստկացավ սովը, որ ինչպես անասունի, ուտում էին ոչ միայն անմաքուր կենդանիներին, այլև, որ սարսափելի է ու գձնգակ և անցնում է գազանային կատաղությունից, առանց խղճալու ուտում էին մեռյալների մարմինները, գերեզմաններից հանելով մեկ-երկու տարի թաղելուց հետո։ Եվ սրա պատճառն ի՞նչ է, եթե ոչ այն, որ ասել է Պողոսը. «Որովհետև չկամեցան աստծուն պահել իրենց ճանաչողության մեջ՝ մատնեց նրանց անարգ մտքերի, անվայել արարքների»*, Նույնպես մարգարեն է ասում բարեկացող գեղության մասին. «Հայրերը պիտի ուտեն իրենց որդիներին, և որդիները՝ հայրերին»**, ինչպես եղավ Վեսպասիանոսի[464] ժամանակ։ Քանզի վտանգը հասել էր երկնուստ և աստվածատուր էր բարկությունը, ոչ ոք ի զորու չեղավ ընդդիմակայել և պատերազմել նրա դեմ, այլ ում հարվածեց, նրան էլ բժշկեց։ Մինչ երկիրն այսպես տարակույսների մեջ էր, և հույս ունեին աստվածեղեն աստծո գթության վրա, այնպես որ աստված սովոր է բարկության մեջ լինել ողորմած։ Հովսեփ անունով մեկը,

* Հռոմ., Ա, 28։
** Եզեկ., Ե, 10։



հույն ազգից, որ ծառայում էր Ավշինին, ներքինի էր, թողել էր քրիստոնեական դավանանքը և հավատում էր Մուհամմեդի մոլորությանը։ Գազանաբարո մարդ էր, կատաղի, անհագուրդ մարդկանց արյունը խմելու մեջ, պատերազմներում զորավոր ուժով, ազնվազարմներին ահարկու։ Սրա զորավոր ձեռքերում էր Ավշինի ուժն ու կարողությունը։ Բայց նախախնամող աստված, որ փոփոխում է իշխանների սիրտը՝ Հովսեփին քաշեց, բաժանեց Ավշինից։ [Հովսեփը] թողեց Պարտավ քաղաքը, առավ իր զորքը և փութապես անցավ գնաց Ասորվոց աշխարհը։ Այս լսեց Ավշինը և մնաց գլխիկոր, փութաց, գրեց Սափիին, որը նստել էր Վանտոսպում և ճոխանում էր Վասպուրականի իշխանությամբ ու առանց հապաղման վաղընդփույթ գնաց հասավ Ավշինի մոտ, Մարակա[465] քաղաքը։ Հանցանքին ըստ արժանվույն, տիրոջ բարկությամբ լցված սուրը խաղաց Ավշինի և առհասարակ նրա բանակի վրա։ Աստծո հրեշտակը հասցրեց անբուժելի հարվածներ, Հերովդեսի պատակրության օրինակով ուռչեց չարալլուկ ուռուցքով, թարախակալվեց և գազանային արյամբ լցված, արյունապարտ մարմինը նեխվեց, քայքայվեց։ Նախ և առաջ Սափին, իրենից հույժ սիրեցյալը, ըմպեց մահաբեր թույնը, անբուժելի խոցերից այրվեցին ոսկորներն ու մարմինը, և Ավշինի աչքի նա զրկվեց կյանքից։ Նույնպես և ամբողջ զորքն ու զորագլուխները, կարավանի բազմությամբ հանդերձ, ընդունեցին կորստյան վճիռը։ Ձիերի, էշերի և ուղտերի երամակը նույնպես այրվեց նույն խոցերից ու կոտորվեց։ Իսկ ինքը՝ Ավշինը տանջալի փորձություն կրեց, ճաշակեց ավելի մեծ դառնություն, քան իժի թույնը և գնաց կորստյան ճանապարհով։ Եվ դժոխքը ներքուստ դառնացավ, երբ պատահեց նրան՝ իր գործած անբավ չարագործությունները տանելիս։

Իսկ մեր աշխարհը ոգի առավ, յուրաքանչյուրը, ըստ տարիքի չափի, մեծից մինչև փոքրը բնակվեցին խաղաղությամբ, գոհացան աստծո գթությամբ և հիացմամբ հայելով նրան, ասում էին, թե՝ ո՞վ էր, ինչպիսի՞ն և ինչպես կորավ. «Ինչպես դադարեց հարկ պահանջողը, հանդչեց տագնապողը։ Ինչպես գերեզման իջավ նրա փառքը»*։

* Հմմտ. Եսայ., ԺԴ, 4, 11։

Այս կատարվեց Հայոց 347 [898] թվականին։ Նույն տարում վախճանվեց Հայոց կաթողիկոս տեր Գևորգը։ Հաջորդեց և նրա փոխարեն սուրբ Գրիգորի աթոռին նստեց Երանելի Մաշտոցը, որը եղավ Գեղարքունի[466] լճի կղզուց և վարքով նման էր Հովհաննես Կարապետին։ Ինձ չեք կամենա այպանել իմ խոսքերի համար. սխալ կամ պախարակելի չպիտի թվա այդ նույն անունով կոչելը։ Մկրտիչը պատվիրել էր չըմպել գինի և օղի։ Սա ոչ միայն գինի չէր ըմպում, այլև ջրով չէր հագեցնում ծարավը, սակավապետությամբ թաթախվում էր ընդեղեններով և ժուժկալությամբ բանջարեղեն էր ճաշակում քաղցած ժամանակ։ Այլև ուսումնասեր էր և քաջահմուտ գիտության մեջ, մեռածից ավելի անընչասեր, ողջից ավելի առատաձեռն։ Սա նստեց ութ կամ ինը ամիս հայրապետական [աթոռին] և փոխվեց մեր փրկչից խոստացած առաքելական պատվի աթոռին։

Նրա փոխարեն հայրապետական աթոռը ժառանգեց Երանելի տեր Հովհաննեսը, որը աճել և ուսում էր առել սուրբ Մաշտոցի մոտ, նրանից հրահանգվող կրթարանում ուսմամբ լցված, քաղցրաբարո և հեզահայաց ողջամիտ էր, միշտ իրեն հասարակ էր պահում, հեռու էր ամբարտավանությունից, բարձրահոնությունից, մնում էր հեզերի աստիճանին, դրվատվելով մեր փրկչից՝ Հիսուս Քրիստոսից։

## ԻԷ

### ՀՐԱՇՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵՎԱՑ ՌՇՏՈՒՆՅԱՑ ՈՍՏԱՆՈՒՄ, ԳԱԳԻԿԻ ԶՈՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հանձն եմ առնում պատմել ստուգապես հրաշքի, նրա հրաշագործ հայտնության մասին, որ երևաց Գագիկի զորավարության ժամանակ։ Բազում ցավերով է լցված սիրտս։ Արդ այժմ համառոտաբար պիտի հատուցեմ շարահարելու պարտքս։

Քրիստոսի խաչը քառաթև փայտից չինել էր ինչ-որ մի վարպետ, որը արծաթագործ էր, յոթ անգամ փորձ արեց, հուր ցայտեցրեց հալոցքի բովում, ընտրեց զուտ և վճիտ արծաթ, փայտեղենն արտաքուստ արծաթապատեց, ինչպես Մովսեսի



սահմանած և Եղիաբ ու Բեսելիել[467] ճարտարապետների ձեռքով կառուցած վկայության խորանի հաղորդության տուփը և այլ սպասքներ։ Նոր մի Նարուզարդան[468] կամ Ջամրի[469], հայտնըված Նեստորի աղանդից, երիցս թշվառական և անզգամ, հիվանդացած ագահության չարությամբ, մութ գիշերով սպրդեց մտավ ապահով ու պարսպված բլուրը և անցավ գիշերից սուրբ եկեղեցում։ Մինչ քաղցրատենչ քունը վրա հասավ գիշերվա պահապաններին, նա մեկնեց պիղծ ձեռքը սրբության սրբոցին և վերցնելով Քրիստոսի սուրբ խաչը, պատուհանով դուրս եկավ, որջացավ ծովափի արևմտյան կողմում, կարծր ժայռի փապարում և փշուր-փշուր արեց արծաթեղենը փայտեղենի հետ։ Բայց պիղծն իսկույն այսահար եղավ և զառիվայր լեռան վրայով թավալգլոր եղավ մեծ երկարությամբ, մինչև դաշտավայր տեղը, ուր այգեստաններն են։ Երբ ստույգ իմացան եղածի մասին, փութացին փնտրել քաղաքի մեջ և ճանապարհի նեղ տեղերում, ով որտեղ կարող էր, աճապարեցին, մինչև որ գտան պատժված չար ոգուն, քանզի դեռ մնում էր կիսամեռ։ Վերցրեցին խաչի մանրատված, խորտակված մասերը և բերեցին [Գագիկ] զորավարի մոտ, լվացին պիղծ արյունը, որ քսվել էր խաչին այսահարի գլորվելիս։ Եվ հրամայեց բերել ոսկերիչ, որը նորոգեց, նորացրեց Քրիստոսի անհաղթ խաչափայտը, անգամ-անգամ իրար միացրեց, յուրաքանչյուր մասը պատեց մաքուր արծաթով, ավելի վայելուչ, քան նախկինը ի պարծանս քրիստոնյաների և համոթ ու ի նախատինք Քրիստոսի խաչի թշնամիների։ Իսկ թշվառականը ընդունեց մահվան վճիռը, և հանդերձյալ [կյանքում] կհատուցի ըստ արժանվույն՝ խաչը հանելու համար։

Բայց ինձ չպիտի մեղադրես այս օրինակը ավետարանի մեջ եղածի հետ համեմատության դնելու համար, որպեսզի գիտեմ ես չեմ անգիտանում մեծն ու փոքրը, օրինակը և ճշմարտությունը։ Ինչպես Պողոսն է ուսուցանում, «Մեկը եթե արհամարհեր Մովսեսի օրենքները, պիտի մեռներ երկու կամ երեք վկաներով։ Որչա՞փ ավելի սաստիկ պատժի արժանի պիտի համարենք նրան, ով ոտքի տակ առավ աստծու որդուն»* և շարունակությունը։

* Եբր., Ժ, 28–29։

## ԻԲ

### ՍՄԲԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ[470] ԿԱՅՍԻԿՆԵՐ[471] ԿՈՉՎԱԾ ԱՐԱԲՆԵՐԻ ԵՎ ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ԵՐԿՈՒՍԻՆ ՀՆԱԶԱՆԴԵՑՆԵԼԸ

*Այն ժամանակներում Հայոց Սմբատ թագավորը արշավեց Ապահունյաց աշխարհի վրա, քանզի Աբդլահմանի որդիները, որ կայսիկներ են անվանվում, ապստամբել էին թագավորի իշխանության դեմ և հրաժարվել, ինչպես օրենքն էր, հարկեր և զինվորներ տալուց։ Եվ գրեթե Հայոց, Վրաց և Աղվանից բոլոր իշխանները եկել էին Հայոց զորքի հետ Ապահունյաց աշխարհի վրա։ Նրանց հետ էր նաև Վասպուրականի մեծ իշխան Աշոտը՝ Դերենիկի որդին և նրա հետ՝ Մոկաց Գրիգոր իշխանը և Անձևացյաց զորքը, որովհետև Մոկաց և Անձևացյաց իշխանները հպատակվում էին Վասպուրականի իշխանությանը։ Հայոց զորքն անցավ բանակեց Մանավազյան[472] նահանգի Օշական[473] դաշտում։*

*Իսկ կայսիկը, որ տիրում էր Ապահունյաց աշխարհին, հավաքեց իր զորքը։ Նրա հետ էին նաև Պարսկաստանի քաղաքաբնակները, ասպատակները, որոնք հարձակումներ էին գործում բյուզանդացիների վրա։ Կայսիկը գրեց [Սմբատ] թագավորին, խնդրեց խաղաղություն և [խոստացավ], թե ինչ կամենա, իսկույն կլինի։ Հայտնին այսպես էր, իսկ ծածուկը՝ ինչպես որ պարզվեց։ Թագավորը հանձն առավ խաղաղությունը։ Իսկ կայսիկները և ովքեր նրանց հետ էին, ու պարսից զորքը, գաղտնի պատրաստվեցին մարտի և աճապարեցին, հասան Հայոց զորքի դիմացը։ Մինչ սրանք մնում էին անհոգ ու ապահով, նրանք մարտաշարքեր կազմեցին և պատրաստվեցին մարտի։ Իսկ թագավորը, որ անհոգ էր, փութաց, ելավ և փախավ բանակից երկար տարածության վրա։*

*Իսկ Աշոտ իշխանը, Մոկաց տերը և Անձևացյաց զորքը ավելի քաջությամբ արիացան և մնացին հանդիստ, զինավառվեցին և ժայռի պես կանգնեցին իբրև մի մարդ։ Հանդուգն դիմադրությամբ, խուռն հարձակմամբ հարվածեցին ճակատից, ուր, աջակողմյան թևում կռվում էին այլազգի քաջերը, և ցրիվ տվեցին զորագունդը, պարտության մատնեցին ախոյաններին։*



*Մի ակնթարթում ետ դարձրին զորքը, հետապնդելով փախըստականներին, սուր գործի դրեցին և շատ-շատերին գլորեցին գետին, իսկ մնացյալները փախուստով ընկան Մանավազյան քաղաքը։ Ապա զույժը հասավ թագավորի ետևից, և ետ դարձան, եկան պաշարեցին քաղաքը։ Իսկ ովքեր փակված էին քաղաքում, աղոթքներ ու պաղատանքներ հղեցին մեծ իշխան Աշոտին, որպեսզի հաշտեցնի իրենց։ Բարեմտությամբ լցված Աշոտը հոգ տարավ և թագավորի հետ խոսեց խաղաղության մասին։ [Սմբատը] անսաց և ընդունեց հայցածը, առնելով հարկ և պատանդներ ու Երիկավ[474] բերդը Հաղացովտում, որ Մանավազեցին խլել էր բերկրացուց։ Իսկ սրանք այն զավթել էին Գինունի ազգատոհմից՝ Մեծեծ Գնունու զարմից, Վասպուրականի բաժնից, [քանզի] Բերկրին եղել էր նաև Վասպուրականի մասը։ Եվ իսկույն վերադարձրեց բերկրացիներին, իսկ իրենք վերադարձան մեծ հաղթությամբ, անչափ խնդությամբ։ Այս կատարվեց Հայոց 351 [902] թվականին, Հայոց կաթողիկոս Հովհաննեսի հայրապետության չորրորդ տարում։*

*Երբ եկավ մյուս տարին, Սյունյաց Աշոտ[475] իշխանը դուրս եկավ Հայոց թագավորի հնազանդությունից, դադարեցրեց հարկատվությունը թագավորին, ձեռնարկեց հարկերն ու տուրքը հատուցել Պարսից բռնավորին։ Նա հավաքեց իր զորքը՝ 10 հազար զորավոր տղամարդկանց ու եկավ մտավ Վայոց ձորի ամրոցները։ Այնժամ թագավորը փութով սուրհանդակներ ուղարկեց մեկը մյուսի ետևից Աշոտ իշխանի մոտ, որպեսզի անհապաղ, արագությամբ հասնի իր մոտ։ Եվ գրեց այն ժամանակ մի թղթում, հիշեցրեց Աշոտի կատարածը Ապահունյաց զորքի դեմ մղած պատերազմում հաղթելու համար։ Նրա փառավոր անուն հանելը, ասելով. «Այս գործը նույնպես խաղաղությամբ կամ պատերազմով գլուխ կգա, եթե միայն դու հեռու մնաս հապաղելուց»։ Եվ խոստացավ տալ նրան քաղաքներ, գավառներ, գյուղեր և ագարակներ։ Քանզի Նախճավան ոստանը նույնպես տվել էր նրան ի տիրություն, Մանավազեցի կայսիկին հաղթելու համար։ Ինքը՝ թագավորը, հավաքեց մեծ զորք, ավելի քան քսան և հինգ հազար ու եկավ անցավ Երասխ գետից անդին և բանակեց այնտեղ։*

*Իսկ Վասպուրականի իշխանը նրա ետևից իսկույն եկավ ժամադրված տեղը, ինչի համար հույժ ուրախացավ թագավո-*

րը, քանզի ազատվեց Սյունյաց իշխանի հանդեպ ունեցած երկյուղից։ Ալզարացին անցան Երասխ գետից այն կողմ՝ Ճարուր[479] դաշտը և բանակեցին գետեզերքին։ Աշոտ իշխանը գրեց [Սյունյաց] Աշոտ իշխանին և ապստամբելը համարեց անօգուտ։ Համոզեց երկուսին և գլուխ բերեց հաշտություն նրանց միջև, մինչև որ եկավ Սյունյաց իշխանի եղբայր Սահակը, իր հետ բերելով հարկերը։ Ապա վերադարձավ մեծ պարգևներով ու անչափ խնդությամբ։

## ԻԹ

## ՆԱԽՃԱՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՇՈՏԻ՝ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

*Այստեղ հոժարագին ու սրտի ցանկությամբ չէ, որ գրում եմ այս պատմությունը. ավելի շատ տրտմությունն է ինձ տիրում, քան ուրախությունը. բողբոջում է անանց թախիծը, ավելի, քան խնդությունը, աչքերից թափվում են արտասուքի հորդառատ վտակներ, քան թե ծիծաղն է հնչում, խոխոջում. գլորվում եմ, քան թե կանգնում։ Ներսս է դիմում սրտաբեկությունը քան թե քաջապնդությունը, հաջորդում է ցավագին կյանքը, քան թե մահվանն ընդդիմակ առողջությունը: Ինչի՞ համար, կամ ո՞ր պատճառներով. քանզի զրկվել եմ իմ քաջից ու մեծ իշխանից, քաջատոհմիկ ու բարեփառ գլխավորից։ Աշոտի մասին եմ ասում, փառապանծ և բարձրագահ, ծխացած իշխանապետի, որը ընդհանուրի մեջ, ամբողջ Հայաստանում նստում էր առաջին գահին։*

*Քանզի, երբ նա գնաց օգնելու իր քեռուն՝ Հայոց թագավորին, իսկույն, երբ նա դուրս եկավ իր տանից՝ Վան քաղաքից, նրա վրա թափվեցին հիվանդագին ցավեր՝ մահվան կարապետներ, որոնք վեր էին բժշկական հնարավորություններից, կարողություններից։ Վասպուրականի ազատներն աղերսեցին նրան կանգնել այդ ճանապարհից, առաջքը դնելով իր հիվանդությունը։ Բայց նա ընտրեց մահն իր քեռու համար, քան ապրելը, երբ իր մասին կմտածեին կասկածանքով։ Եվ որովայնի ցավերն ավելի խստացան. գնաց մտավ Նախճավան քա-*



*ղաքը և մնաց այնտեղ 40 օր, փոխվեց այս աշխարհից ամենքից պատկառելին, մանավանդ ընդհանուրի ցանկալին և ճոխերի ու ապատոհմիկների, ազատների ու փարթամների, մեծերի ու փոքրերի սիրելին։ Սրա տարիները ձգվում են Հայոց 325 (876) թվականից։ Դարձավ 29 տարեկան և փոխվեց այս աշխարհից, արեգ ամսի 4-ին, երկուշաբթի օրը, օրվա իններորդ ժամին։ Իսկ Սեգա տիկինը վերցրեց նրա դին և տարավ թաղեց Աղբակի Ոսի գյուղի Սուրբ խաչ վանքում։*

*Սրա մասին հարկավոր էր երկար ասել ողբերգական ճառտասանություններ, բայց որովհետև իմ աղքատիմաց միտքը ի զորու չէ ըստ պատշաճի ողբեր շարահարելու, այժմ թողնում եմ կարող ուրիշ կամ այլ ժամանակի։ Եվ ես դեմ ելա տրտմությանը, լցվեցի անզուգական ու անչափ խնդությամբ, մարմնական աճից հետո ընթանալով դեպի հոգևոր բերկրությունը։ Քանզի թեպետև Աշոտի կյանքը չափավորվեց ժամանակի տարաժամ կրումով, բայց անցավ գնաց ավելի հաստատ, ճշմարիտ, հոգևոր և հավիտենական կյանքի լիության մեջ, ապաշխարեց, զղջաց երիտասարդական, դյուրամետ, դյուրահավան, չարիքի միտված խակության համար։ Որովհետև, երբ մահաբեր ցավերը վրա հասան նրան, հոգ տարավ իր երիտասարդության, այս աշխարհից տարաժամ ելնելու մասին, թողեց, լքեց մեր բազմագավառ աշխարհը, անմատույց ամրոցները, հրաժարվեց, հեռացավ ճոխ ու պանծալի, պատվավոր եղբայրներից, ազատների բազմությամբ, տեսակ-տեսակ պերճություններով շրջապատված լինելուց և այլ ավելի քաղցր վայելքներից՝ երկնի տակ, երկրի վրա, արևի ու լուսնի պայծառ երեսներից, աստղերի ճոխություններից, երկնային տարրերի այլաձևություններից, ծովի և ցամաքային այլ կենդանիների, ջրի մեջ եղածների և դրանց նման ուրիշ կենդանիների հրճվալից ու երջանիկ պտույտներից, որ սանձվել են [աստծո] նախախնամությամբ, սկզբնատիպ պատկերի նմանությամբ։ Այս և սրանից էլ առավել հանգամանքներ մոռացության տվեց, և թռավ երկնավորների ու երկնի թագավորի մոտ։ Հոգ տարավ հանդերձյալ կյանքի մասին, խոնարհվեց սուրբ եկեղեցու կղերի առջև, կանչեց Նոր կտակարանի երեցներին, եպիսկոպոսներին, քահանաներին և առաջները դրեց հավատի կատարելությունը, մկրտության լու-*

սավորությունը, մոտը եկածների ապաշխարանքը, հույսը վախճանից հետո, Քրիստոսի մարդասիրությունը։ Առաջ բերեց հավատարմության ապացույցներ և փոքր ժամանակում մեծ-մեծ զատողություններ արեց պոռնիկի, մաքսապահանջողի, ավազակի և սրանց նմանների մասին։ Հառաչեց, արտասուք հեղեց, խոստովանքով ու ողորմագին պաղատանքով, մինչև մահը տրտմեց, հայցեց կենաց գեղը, աստծո որդու մարմինն ու արյունը՝ մեղքերի թողության համար։ Վայ տվեց, ախուվախ արեց անհամար հառաչանքներով և մեծ ողբով դիմելով Քրիստոսին։ Կարծր քարերը խփեց երեսին, հորդառատ արտասուք թափեց կճած աչքերից, [ձեռքի] ճիրաններով փետեց նորափթիթ, ծաղկազարդ ու ոսկեճաճանչ մորուսը, և սրանից էլ առավել էր ապաշխարանքի անհագությունը։ Աչքին երևացին սուրբ հրեշտակներ, որոնցից սարսափահար եղավ նրա նայվածքը, միտքն ապուշ կտրեց, և հայացքը հանելով շուրջը, հարց տվեց, ասելով՝ «Թողություն կլինի՞ իմ գործած չարիքների համար, աստված թողություն կանի՞ բազում մեղքերիս համար, ասացե՛ք ինձ, տվե՛ք ինձ պատասխան»։ Այս ասելով երեսը վեր ու վար էր անում, հարվածում մահճին, երկար ու տարբեր ձայներով հյուսում եղկելի ողբեր։ Ես կողքին էի և ստուգապես, ու լիովին իրազեկ եղա փրկության հանդեպ նրա ունեցած հաստատ հույսին։ Ճաշակեց աստծո կենարար որդու կենաց հացն ու արյունը և հոգին ավանդեց սուրբ հրեշտակների ձեռքը, համարձակորեն անցավ գնաց իշխանությունից, պետությունից և այս խավարի աշխարհակալներից, որոնք ի կորուստ սեփական անձերի, բռնությամբ տիրում և ձգում են իրենց կողմը ավելի անհավատներին, քան հավատացյալ հոգիներին ու ապաշխարողներին։

Աշոտի մահից և նրա համար արված սգի օրերից Վասպուրական տերության իշխանությունը [ձեռքն] առավ նրա եղբայր Գագիկը։ Եվ նրան միևնույն տեղը Գագիկն ու Գուրգենը՝ համահայր և մի մորից ծնված եղբայրներ, Սենեքերիմի ու Դավթի երկու քաջատոհմիկ իշխանություններից [սերված], համերաշխ էին ու համահաճ, հեզահայաց միմյանց հանդեպ՝ սիրո հորդորմամբ, խոհեմաբար հեռու մնացին վատ-



թարից, քաջախորհուրդ և առատաբուխ իմաստնությամբ զորավիգեցին միմյանց, դեն գցեցին օտարոտին, չարամտությունն ու անխելամտությունը, ընտրելով առինքնեցին լավն ու հույժ օգտակարը, ջանասիրաբար հոգ տարան հայրենի աշխարհի շինության ու խաղաղության մասին։ Կարգ ու կանոնով զարդարեցին բարեզարդությունից զրկվածներին, վերադարձրեցին հայրենիքից, տնից զրկված հեռացածներին և բարեկարգեցին մեր աշխարհի շփոթ ու վրդովված կարգերը, ստեղծեցին հանդարտություն, խաղաղություն։ Ամենուրեք, մեր աշխարհի բոլոր բնակիչները հանգստացան, անհոգ ու ապահով եղան ներքին ու արտաքին կռվարարներից։

Եվ իրենց տերության բոլոր գավառները բաժանեցին երկու մասի։ Արևելյան կողմը և հյուսիս-արևմուտքը բաժին ընկավ Գագիկ իշխանին՝ Ծվաշ գավառը, Թոռնավանը, Արտազը[477], Մարդաստանը, Գառնին[478], Առբերանին[479], Աղանդրոտը[480], Բաղիլովիտը[481], Պալունիքը[482], Մեծնունիքը[483], Տոսպուշտունիքը[484], Բոգունիքը[485], Գուգան[486] գավառը և Արտաշեսյանը[487]։ Սրանք հռչակված գավառներ էին, որ նախկինում, իր իշխանության ժամանակ ննջեցյալ հայրը՝ Մարզպետ կոչեցյալը, դարձրել էր իր սեփականությունը։ Այս մասին ավելի վերևում հիշատակելով ցույց տվեցինք, մանավանդ Շամիրամի քաղաքը[488] հռչակվածն ու հույժ փառավորը, Վասպուրականի բոլոր կողմերում։

Իսկ Գուրգենը՝ Հայոց մարզպանը, բաժին առավ արևելյան կողմը, որ տարածվում է դեպի հարավ՝ Անձահի ձորը, Կրճունիքը[489], Կուղանովիտը[490], Բուն Մարդաստան գավառը, Արճիշակովիտը[492], Առնո ոտնը, Մեծ և Փոքր Աղբակները, Ակեն, Տամբերը[493], Տագրյանը[494], Ընծան[495] և Զարեհավանը։

Բայց Տամբերը, Ընծան և Զարեհավան գավառը վերցվել էին Պարսկահայքից, իսկ Նախճավան քաղաքը և գավառը[496] խլվել էին Վասպուրականից բազում ժամանակներ՝ 211 տարի առաջ, [սուրբ] Գրիգորի եկեղեցու այրման և Հայոց զորականների վտանգավոր մահվան տարում։ Իսկ Գողթն գավառը՝ սուրբ Վահանի նահատակման ժամանակ, 186[737] թվականին։ Այդ տարում հոգին ավանդեց սուրբ Վահանը, որը Խոսրովի՝ Գողթնի տիրոջ որդին էր։

Եվ սկսեցին մեր աշխարհի շինությունն ու խաղաղությու-

նը՝ իրավադատությամբ, որբերի ու այրիների հովանավորությամբ, աղքատասիրությամբ, առատաձեռնությամբ ու եկեղեցու զարդարմամբ։ Գագիկը բարեշինեց պարսպավոր ամրությամբ Ոստանյաց Ոստանի բլուրը*, որն ավերված էր բազում տարիներ ի վեր։ Վերաշինեց նաև եկեղեցին, որ այնտեղ է և կոչվում է սուրբ Մարիամ Աստվածածնի անունով, զարդարեց այն թանկարժեք սպասքով և նրա մեջ դրեց խաչը, որի մասին հիշեցինք վերևում և որի միջոցով իմացվեց հրաշագործ զորությունը։ Շինեց նաև մի եկեղեցի Ամրական քարանձավի[497] մեջ, նրա կատարին, քաջամարտիկ զորավար սուրբ Գևորգի անունով։ Այն զարդարեց նույնպիսի զարդերով, արծաթեղեն բուրվառներով և Քրիստոսի խաչով, որը դրոշմված էր ընտիր ու փորձված արծաթով։ Ամրականի ամենաստորին մասում, զոգաձև տեղում, որը հյուսիսից դարավեր է երևում, շինեց հրաշագործ եկեղեցի՝ հրաշագան հորինվածքով, տաշված քարերից, որ Վանտոսպ [բերեցին] Մանավազյան քաղաքից։ Այն հաստատեց սուրբ Սիոնի անունով, որը սուրբ քաղաք Երուսաղեմում է։ Խորանի աջակողմում, նույնպիսի հիմքով շինեց եկեղեցի, ի հիշատակ Գողգոթա տեղում տիրոջ խաչվելու։ Իսկ նրանից վերև շինեց եկեղեցի, որը նման էր այն վերնատանը, ուր հավաքվում էին առաքյալները։ Խորանի ձախ կողմում շինեց եկեղեցի, ի հիշատակ Քրիստոսի հարության՝ եռօրյա թաղումից, գերեզմանի ավար լինելուց նրա վեր բարձրանալու։ Իսկ նրա վերևում շինեց եկեղեցի, ի հիշատակ [Քրիստոսի] համբարձման, հոր աթոռին գահակցելու և երկրորդ գալստյան, երբ ժամանելու է հայրական փառքով, հրեշտակներով, որոնք ուղարկվելու են մխիթարական ու քաջալերող ավետիսը բերելու։ Ամրականի քարանձավի վրա, արևելյան և արևմտյան կողմերում շինեց նաև ոսկեզօծ, պատշգամբավոր խրախճանասենյակներ, ավելացնելով ավելի առաջ իր հորից՝ Դերենիկից շինվածին։ Իսկ հարավային կողմից՝ ջրամբարից հորինեց քարաշեն ճանապարհ, որը ներքևից տանում էր դեպի վեր, մինչև անձավի կատարը, հեշտությամբ ելնելու և իջնելու համար։ Փորձածվեց քար, ավազ և կիր։ Այլև պատշաճ իմաստությամբ

---

* Այսինքն Ոստան քաղաքի միջնաբերդը։



անցկացրեց ջրմուղ՝ գետնի տակով տաշած քարերից շինեց ջրի հոսքի ճանապարհ, որը ձգվում, իջնում էր արևելքից՝ Վարագա լեռան ստորոտից, ծովում էր հարավից հյուսիս, դեպի խաղաղ, լայնանիստ ու զոգաձև դաշտը։ [Գագիկը] ելավ Ամրական անձավի գագաթը, զբոսնեց նրա վրա, բավականության համար, ըստ պատշաճի օժանդակեց իր ձեռակերտ թագավորական պալատի [կառուցմանը], որը զարդարված էր քաղաքի պես, և իր շինածն ավելացրեց հոր [կառուցածին]։ Առավոտյան կողմը դարձյալ վեր ելավ ու գնաց Ծովաշատ, Գետն ավանը, որտեղ շինեց վայելուչ խրախճանատեղի։ Այն մի բլուր էր, որը շրջապատեց բազում տներ ունեցող շինություններով, որտեղից երևում էին ստորին կողմի դաշտավայրը, Երասխ գետի պտույտները, ուր թափառում էին եղնիկներ, վայրի խոզերի հոտեր, ցիռերի երամակներ, այնտեղ կային և առյուծի բույներ։ Դրանք միշտ պատրաստ էին և ձեռքի տակ՝ որսի հաճույքների համար։ Դիմացից երևում էին Արարատյան լեռները՝ Ազատն Մասիս[498], ուր Արտավազդ Արտաշեսյանը բարավեժ էր եղել ու գլորվել կոշտ կոհակների մեջ։ Ապա շարժվեց դեպի ցած՝ Մառական ավանը, Կարմիր[499] գետի ափին, որը թափվում է Երասխ գետը։ Այնտեղ շինեց ամրոց, դժվարամատչելի՝ սպառնացող հրոսակների համար։ Նրա մեջ հիմնեց նաև ապարանք, որը հարդարված էր փողոցներով, կերտված տաճարի պես, ուներ շատ խուցեր՝ պատրաստված պետքերի համար։ Ապա փոքր-ինչ ցած իջավ այն տեղը, որին Զորք են ասում։ Այնտեղ գտավ անմատույց անձավ, պատերազմներից ապահով տեղում և այն պարսպապատեց շուրջանակի։ Հորինեց, պատրաստեց նաև պատվական, հանդիսավոր կարգավորությամբ գեղազարդված ապարանքներ։ Եվ այսպես առատաձեռնությամբ հոգ տարավ պիտանիի համար, գլուխ բերեց մեր աշխարհի շինության ու խաղաղության համար նպաստավորը, պահանջեց գործառնության ավելի օգտակար եղանակներ։ Ինչպես թագավորների ու թագավորազունների, աշխարհաշեն խնամողների սովորությունն է՝ հոգածու եղավ սեփական կամքով իրեն վստահվածներին։ Որովհետև [հոգաց] ոչ միայն շինության համար, այլև առաջինաբար արյուն ու քրտինք թափեց, անձը տվեց հոտին՝ մնանելու իբրև քաջ հո-

վիվ, հույժ բարձր հիշատակ կանգնեցրեց և հեռավոր ժամանակների համար տրամադրեց անշինչ կոչակ։ Փութաճեմ ընթացքով վազեց և հասավ տիրոջ լեռը, մեր աստծո տունը, ըստ մարգարեների հորդորման և վարից ճախրեց ի վեր, Վարագա լեռան վրա ու երկրպագեց Քրիստոսից պսակված, սրբազան փայտյա խաչը, աստծո ոտքերի պատվանդանը, որով պարծենում է և Քրիստոսից վարձատրվում է հավատացյալ թագավորների բազմությունը։ Փրկիչ սուրբ խաչը պատեց ոսկով ու գոհարներով, ընդելուզեց մարգարիտներով, զարդարեց հրաշագործ փայտը, շրջահյուսելով անուշահոտ փայտի մեջտեղից։ Դուրս թողեց ոսկեպատ պահարանի մի փոքր մասը, որն իր քառաթև ու խաչաձև գզրոցի առջևում էր։ Այս այն խաչն է, որի մասին գրեցինք ավելի վերևում։ Այն երևացել էր 259 տարի առաջ՝ Հայոց Ներսես 3-րդ կաթողիկոսի և Ռշտունյաց Վարդան պատրիկի օրոք ու հայկական աշխարհը արաբներից գրավելու տարում։ Եվ խաչը փառավորապես զարդարելուց հետո Գագիկն իջավ լեռան վրայից ստորոտը, ուր բնակվում էին սքեմավոր աբեղաներ։

Իսկ Գագիկն իր տիրական զորավորության ժամանակ սկսեց ձեռակերտը՝ շինելով բարձր հողաբլրի վրա, Մահաշտ[500] գյուղում, գետի արևելյան ափին, որ նայում է Ռշտունյաց Ոստանին։ Այստեղ ավելի առաջ եղել էր Վարդ պատրիկ Ռշտունի հայկազնի պարսպավոր ապարանքը։ Այնտեղ [Գագիկը] վերակացու թողեց ոմն Հովհաննես քահանայի՝ Ռոգունի գավառի Անստան[501] գյուղից։ Նույն տեղում կարգեց կրոնավորների բանակ և առաջնորդությունը վստահեց վերը հիշված քահանային, որը հեզ ու պարկեշտ, պատվական վարքով և իր կոչմանը հույժ պատշաճող մարդ էր։ [Գագիկ] զորավարը վանքին հատկացրեց բավական գյուղեր, հյուրընկալության և աղքատախնամության համար։

Այնտեղ շինեց նաև վայելուչ ու փառահեղ եկեղեցի և այն անվանեց սուրբ Պետրոս առաքյալի՝ դժոխքից չպարտված առաջնորդի անունով։ Իսկ խորանի աջ և ձախ կողմերում կառուցեց նաև երկու այլ եկեղեցիներ։ Նախ և առաջ Գագիկին ցանկալի թվաց եկեղեցին անվանել փրկչի անունով և հավատքն ուղղակի չմատուցել եկեղեցուն, քանզի այսպիսի հնարներ ունեն նեստորականները, քաղկեդոնականները և ուրիշ երկա-



բնակներ, որոնք ցնդաբանելով ասել են, թե աստծո որդու տունն ու տաղավարը վերցված է դարուվար կողմից, և աստվածորդու մարմինը չունի մեկ բնություն։ Բայց Քրիստոսի տունը սուրբ առաքյալներն են. սա ասվել է ուրիշ սուրբ գրողներից։ Ինչպես ասել է Պողոսը՝ «Դուք կենդանի աստծո տաճար եք», և դարձյալ ասել է, թե՝ «աստծո տունը մենք ենք»։ Ապա նորից մարգարեաբար ասել է. «պիտի բնակվեմ նրանց մեջ ու պիտի գնամ նրանց մեջ»։* Այլև ասել է ոչ թե «Քրիստոսի տուն», այլ միայն «տեր Հիսուս Քրիստոս, աստծո [որդի] և մարդկանցից կատարյալ»։ Ապա թե ոչ պաշտելի կըդառնան եկեղեցիները, որոնք կանվանվեն «փրկիչ» ու կերկրպագվեն սրբազան պատվով, ինչը հույժ ծիծաղելի է։ Եվ պարզ ու հայտնապես, առանց կասկածանքի ասում է՝ «աստվածն»։ Եկեղեցին աստվածորդու մարմին համարելն ավելի է ծիծաղելի. ուրեմն քարերը, փայտերը և երկաթեղեն այլ իրեր պիտի ունեն, ինչպես նրանում աստված որդու պատարագվող մարմինն ու արյունը, մանավանդ որ այն ճշմարտապես աստծո որդին է։ Սա նույնպես հույժ ծիծաղելի է։ Այս առայժմ թող բավականացնի մտառու և ուսումնական անձանց, անմիտները հեռու մնան իմանալուց։

Գագիկ զորավարը շինություններ արեց նաև Ոձ[502] ձորի գլխին, որն այդպես են անվանում, քանի որ [այնտեղ] սաստկաշունչ, դառնալից ու մահաբեր հողմեր են փչում։ Այնտեղ տեղափոխեց գյուղեր և բարեշինեց բլուրը, որն Արծրունյաց տոհմի բանակատեղն էր, և անվանեց ձեռակերտն իր անունով Գագկակերտ։ Նույն ժամանակ փոխեց այնտեղ տեղափոխված գյուղերի սահմանները։ [Նրանց] հավասար կերպով Հայոց մարզպան Գուրգենը շինեց հրաշալի հորինվածքով եկեղեցի Ադամակերտ քաղաքում՝ Մեծ Աղբակում, Արծրունյաց զարմի տերության՝ բնիկ իշխանական սեփականության մեջ։ Շատ հեռվից տաշած քարերը պատերին բերեցին մոտ երեք ասպարեզ, եկեղեցին պատրաստելու համար, սյուների [անիվների] պտույտներով հեռավորը դարձրին հույժ մոտիկ։ Բարձրաճիչ աղաղակով, գոռգոռալով, ազդու եղանակով իմաց տրվեց, որ նյութը պատրաստ է՝ սուրբ

* Բ Կորնթ., Զ, 16։

եկեղեցու շինությունն ավարտելու համար։ Փայտերը տաշելու ձայները նման էին Նոյի ժամանակվան, երբ երկնքից թափվող հեղեղածուփ ու ծովացած ջրերի ազդեցությամբ միատեղ ճանապարհորդողները համատարմորեն գործակցում էին իրենց հարազատներին, ապրուստի համար հույս ակնկալում աստծուց։ Ինչպես որ Նոյի մոտ բերեցին և բացահայտեցին տապանի գաղտնիքը, փռյուգիացիների[503] ապերասանությունից դեպի մեզ ճախրեց փրկությունը, որն արագ ու ավելի հարմար եղանակով բերեցին աստծո տունը։ Իսկ Գագիկ իշխանը ծովի պես գիզված, ձորեր լցնող ալիքների վրայով գցեց ճանապարհ՝ նավագնացության համար։ Փոքրիկ, ուղղություն տվող փայտը ձեռքին նա վազեց, սիգաքայլ ճեմեց երկնագույն լեռների ու դաշտերի ասպարեզով, Բզնունյաց ծովով, Մանավազյան նահանգից բերեց մատուցեց տաշված քարեր, որպես եկեղեցու շինության նյութ, սուրբ Սիոնի հրաշագեղ գիտանոցի ավարտման և աստծո որդու մարդեղության, սուրբ անունով այլ տեղերի համար։ Այսպես և Գուրգենը կատարյալ դարձրեց բարձր ու սարավանդ տեղը, այն վայելչացրեց, խորանի աջ և ձախ կողմերում կառուցելով ևս երկու հրաշակերտ եկեղեցիներ։ Դրանք գեղեցկությամբ զարդարեց մեծարժեք սպասքով, ոսկուց կերտված, խաչով դրոշմված, ընդելուզված մարգարտով և հրաշագործեց պատվական ակներով։

Այլև թերևս տարակուսես Գուրգենին ներկայացնելու իմաստի, մարմնավոր, զինվորական դժվարությունները [կրելու] նրա հոժարակամության մեջ։ Կավելացնեմ, ինչպես որ պետքն է, գրելով նրա արիությունների, դիմացկունությամբ, ողջախոհ վարժությամբ զինվորական գործերով հոժարությամբ զբաղվելու և մարզպանության անունը պիտանի դարձնելու մասին։ Այդպես հռչակավոր Տրդատը վայելչապես, հոգաբարձությամբ սահմանեց պատերազմական հարկ ընդդեմ հրոսակների արշավանքների։ Այսպիսի կարգավորություն ենք գտնում նաև սուրբ հրեշտակների մոտ՝ արարչի նախախնամությամբ, և օգուտ բերելով աշխարհին։ Այս մասին հանգամանորեն ընթերցել ես մարգարեների գրքերում, ինչպես նաև Դանիելի վեցերորդ տեսիլքում և Զաքարիայի խոսքերում։ Պողոսը նույնպես ջանաց բացահայտել Սուրբ



Հոգու կողմից սրբազան եկեղեցուն ավանդված յոթ աստիճանի մասունքները։

Մեծ պատերազմից հետո, որը եղավ Նախջրան այն դեպքերը, որոնց մասին գրեցի և որոնք տեղի ունեցան Մանավազյան նահանգի ու Հուշա դաշտի սահմանագլխին, քաղաքների խռովարարները հավաքվեցին միևնույն վայրում և զուր տեղը ապստամբեցին երկիրը։ Բայց այն ժամանակ նրանք պատվաճիռ ընդունեցին Վասպուրականի քաջերի սրից, ինչպես գրել ենք։ Իսկույն պատերազմում ընկածների գույժը հասավ Պարսից քաղաքը և Ատրպատականի սահմանները։ Եվ նրանք, ըստ իրենց օրինադրության, ձախողակ օրենքների, արյունարբու, դաժանաբարո չարագործությունների, մանավանդ սատանայական չարությամբ լցվածները, ձայները միասին բոլոր քաղաքները, խռովեցին ըստ իրենց գազանային մոլեգնության, դուրս թռչելով ելան իրենց որջերից, ինչպես մեղուները են ծնվելուց հետո դիմում դուրս՝ մեղվանոցներից իրենց որդնածին առաջնորդի գլխավորությամբ և գայրույթով հարձակվում մարդկային սեռի վրա, հույս ունենալով վնասել նրանց, բայց իրենց են ձգում մահվան մեջ։ Այսպես պարսկական խուժանն այլևայլ ցեղերից ու քաղաքներից՝ Մարաստանից, Պարսկաստանից, Ելիմացիներից, Խուժաստանից, Կրմանից,[504] Մուկանից,[505] Թուրքաստանից,[506] Խորասանից հանկարծակի հասավ Ճվաշ գավառը։ Այրեցին, ավերեցին և հիմնիվեր կործանեցին սուրբ եկեղեցիները, քրիստոնյաների աղոթքի տները, սրի քաշեցին նրա միաբանության քահանաներին, ժանտամահ արեցին ծերերին ու պառավներին, գերության տարան երիտասարդներին ու կույսերին, ավարառությամբ վատնեցին նրանց ինչքն ու ստացվածքը։ Եվ երկիրն ընկավ մեծ նեղությունների մեջ, լցվեց վատ կասկածներով։

Այն ժամանակ Շամիրամ[507] բերդում ապահով նստած էր Աշոտի տոհմից Թադևոսը, որը ճանաչվում էր Շերեփի որդի։ Նախապես սրան հիշեցինք այլ վայրում՝ Աղձնիքի կողմերում [մղված] մեծ պատերազմում։ Սա, ինչպես առյուծի կորյուն, նստել էր իր բնում, վարանումի մեջ։ Գրեց Ամատունյաց տոհմի սուրբ եպիսկոպոսին, որը նստում էր սուրբ Թադևոս առաքյալի հանգստարանում՝ Արտազական[508] գավառում՝ ելք

գտնելու վրա հասած հրամաններից։ Նա պատասխանեց քաջալերող խրատով, հորդորեց մարտիրոսական պսակների ակնկալություն և եթե այդ պատերազմում մահանա, որպես հաղթող կժառանգի-խոստովանողի անուն, կզորանա Քրիստոսի՝ մեր ամուր խաչի զորությամբ։ [Թադեոսն] անսայթաք հավատով փութաց, առաջ անցավ պատերազմելու համար և եկավ ապահով տեղից, սակավաթիվ զորականներով, որ պահպանում էին Շամիրամ բերդը, և սլանալով ինչպես արծիվը որսի վրա, պատահեց անհուն բազմության Փայտակշտան[509] գյուղում և այնտեղ, փոքրիկ վտակի տեղում, ինչպես հեղեղատ, հորդալով հասավ նրանց վրա, խրախուսվելով Քրիստոսից, և մեկ ակնթարթում դաշտի երեսը լցրեց սպանվածների ու վիրավորների դիակներով։ Իսկ ողջ մնացածների կեսը, ով որ կարողացավ, փախավ նրա առջևից ու փրկվեց, ուրիշները աղաղակ բարձրացրին, վայնասունով փրկություն հայցեցին քաջամարտիկ ախոյան Շերեփյան Թադեոսից։ Վասպուրական աշխարհն անդորրացավ, եղավ ապահով ու անհոգ։ Եվ այլևս պարսկական ասպատակող հրոսակները չկրկնեցին մեր երկրի վրա իրենց հարձակումը։

Քանզի Փոքր Աղբակը, Կորճեից աշխարհը[510] և Պարսկահայքը սահմանակից էին միմյանց և միշտ դժտություններ էին առաջանում Գուրգեն մարզպանի և Կորճեքի տերերի միջև, մարզպանը եկավ նրանց դեմ և գրավեց Տամբեր և Ըռնա գավառները, Ապուչաիրի[511] բերդը և Կորճեից Վհրի* քաղաքում նշանակեց իր վերակացուներին՝ ամրոցի պահպանության համար։ Իսկ Պարսկահայքի ամիրները, խառնիճաղանջ բազմությամբ, գաղտագնա, անկոխ ճանապարհներով եկան հասան Մարդաստան գավառի Վիտահոտ ավանը, [բնակիչներին] սրի քաշեցին, վարեցին գերության, ավարի մատնեցին։ Անցնելիս եղան նաև Ծվաշ և Թոռնավան գավառներում, անցան Կրճունյաց գավառով։ Եվ գերեվարեցին, ավարի մատնեցին Լեկը[512], Աղվին[513], Կրերիքը[514] և Ճահուկ գավառի մի մասը։ [Այս մասին] տեղեկացավ Թադեոս Շերեփյանի եղբայր Շապուհը։ Սա եկավ Պարսկահայքի ամիրների դեմ և այնտեղ ցուցաբերեց բազում արիություններ, ա-

* Ունի նաև Վճրի տարընթերցվածը։



դատեց շատ գերիների, խլեց ավարը նրանցից։ Բայց սրով խոցվելով, վախճանվեց Գյուղիկ [անունով] բնակավայրում, հասնելով մարտիրոսական նահատակության և անձը մահվան տալով Քրիստոսի հոտի համար։ Իսկ այլազգիներն անցան գնացին և մտան Թրար[515] գավառ և Շնոհ[516]։

Երբ զուժկանը հասավ Հայոց մարզպան Գուրգենին, եկավ նրանց ետևից հազար հեծյալ այրերով, որոնք զինավառված էին, և գնաց հասավ Ալլի գավառը։ Նրա գալուստը հայտնի եղավ այլազգիների զորագնդին, և փախան գնացին ավելի հեռու, մտան ապահով տեղեր, ցրվեցին լեռնային անհայտ թաքստոցներում։

Իսկ երբ եկավ մյուս տարին, և մինչ նրանք անհոգ, ապահով ու աներկյուղ էին մարզպանի հանդեպ, սա վերցրեց այրուձի կազմած յոթ հարյուր զորականների, անցավ երկար տարածություն՝ հասնելու համար պարսից զորքի բազմությանը։ Դուրս եկավ Հադամակերտ քաղաքից՝ ուրբաթ օրվա իններորդ ժամին, անցավ Ըմբեա[517] ծովակով, Վարաժնունիքով[518] և Զարեհավանով, այգաբացին հասավ Ըռնայի Համաց[519] գյուղը և գիշերով՝ մինչև Տարոնա կոչված գետը։ Իսկ մյուս առավոտ վրա հասան բանակին հոգնած ձիերով և անզգուշությամբ մտան այնտեղ։ Նույն ժամին ընկան ինչ-որ երկուսը՝ Վիքեն ու Մարաճան, իսկ մարզպանի ձին վազելուց սատկեց։ Բայց պատերազմին հույժ պատշաճող խրոխտությամբ ու հպարտությամբ վանեցին ախոյաններին, ավարի մատնեցին բանակը, սրի քաշեցին շատերին և հասան մի ցածրադիր տեղ՝ Մգունիս[520] գյուղը։ Եվ որովհետև, ինչպես ասվեց, երկար ճանապարհ գնալուց ու անքնությունից տանջվել, թուլացել էին թե՛ ձիերը և թե՛ հեծյալները, որոնք տոթից, արևի այրող տապից ջերմությունից և ուժեղ ծարավից պապանձվել էին։ Հանկարծակի, հանգստությամբ դիմեցին [հայերի] վրա, քանզի սրանք անհոգության մեջ էին։ Անհավատների զորականները, հոգով դառնացած իրենց կանանց, որդիների և աշխարհների համար, ուժգին, սաստկությամբ հարձակվեցին նրանց վրա և սուր գործի դնելով, կոտորեցին անխնա։ Եվ չլսված բեկմամբ կործանվեց Հայոց զորագունդը, այնպես որ շատերից քչերը հազիվ մազապուրծ փրկվեցին։ Այն օրը տարապարտ պատերազմում ընկան

զրեթե 500 անվանի մարդիկ, որոնց գերեզմանի տեղն անգամ ցարդ հայտնի չէ։ Նրանք հույժ փառավոր տղամարդիկ էին՝ Արծրունյաց ազգատոհմից և ուրիշ նախարարություններից։ Թո՛ղ տերն այցելու լինի նրանց։

Եվ այնուհետև անօրենները համարձակություն առան, սկսեցին հավաքել ամիրներից զորագնդեր, մարախի պես, անհամար բազմությամբ՝ նրանցից, որ Շեխետիք են կոչվում, այլև այս ու այն կողմերից, Պարսկաստանի հեռավոր աշխարհներից, Ժանգանից[521], Զուրջանից[522] և Վարաստա գավառից ու կազմեցին մեծ բանակ Զարևանդ գավառում։ Թունալից քինախնդրությամբ կամենում էին ելնել մեր աշխարհի դեմ և առհասարակ ավերակ դարձնել։ Իսկ նրանցից ավելի կատարյալները և ծերերը չկամեցան այդ բանը, մանավանդ ովքեր, ըստ նրանց հավատի, համարվում էին վստահելիներ և Ղուրանի ընթերցողներ։ Նրանցից գլխավորը՝ Համիսը, և մյուսը, որ Ժանգանի կողմերից էր, ասացին, որ այդ անելն, ըստ իրենց մարգարեի, իրավացի չի լինի։ Այլև Գուրգեն իշխանը շարունակ պատգամներ էր [ուղարկում] նրանց ծերերին ու մեծամեծներին, եղածը համարում փորձություն և դիպված, [խնդրում] քինահատույց չլինել իրենց հարկատուների ու հպատակների նկատմամբ։ Եվ մեծ փորձությունները վերջացան վերին հրամանով...

# [ԱՆԱՆՈՒՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ]

## [ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ][1]

### Ա

... Տերը [Դերենիկին] տվեց մեկ այլ որդի, որին անվանեց իր հորեղբոր անունով՝ Գուրգեն։ [Դերենիկը] ցույց տվեց բազում արի գործեր աստծո օգնությամբ։ Նրա հանդեպ կատարվեց Դավթի սաղմոսների հոգեշունչ մարգարեությունը, թե՝ «Այն ամենը, որ սիրտ անի, կհաջողվի նրան»։*

Սա վերստին սեփականեց իր և իրենից հետո եկածների համար Աղզան[2] և իր մերձակայքը՝ Տոսպ գավառից, որը Վարագա լեռան ստորոտում է։ Այն վաղուց հափշտակել էր իսմայելացիների ամենաչար ցեղը։ Դրա համար [Դերենիկի] նախնիները ջանքեր թափեցին, բայց ոչ մի օգուտ չունեցան։ Իսկ մեծանուն և քաջամարտիկ իշխանը ջանաց արդարացնել իր նախնիների [հույսերը] և հույժ խելացի հնարներով, մանավանդ խրախուսվելով աստծո օգնությունից, մեծ արիությամբ գիշերով առավ ամրոցը և տիրեց գավառին։ Այլազգիների ձեռքից բռնությամբ խլեց նաև Ըռնա գավառը, որը վաղուց [ժամանակներից] հափշտակել էին նրանք, և ոչ ոք չի կարող հիշատակել, թե դարերից ի վեր ինչ

* Սաղմ., Ա., 3։

է կատարվել այնտեղ։ Նրա հետ մեծ զորությամբ տիրեց նաև Ատրպատականի բազում այլ քաղաքների։ Այդքան սքանչելի հաղթություններով հռչակավոր ու երևելի տղամարդ դարձավ Հայաստանում։

Ինչպես երբեմն հնում դավաճան կնոջ ազդեցությամբ դյուրահավատ նախահայր ([Ադամը] ճաշակեց պտուղը և վերջ տվեց անմահ կյանքին, որն ունեինք դրախտի գոյության մեջ, նույն կերպ և այստեղ չարարվեստ սատանան և բանսարկուն նախանձի հրով այրվեց քաջ և մեծանուն իշխանի հանդեպ և ոխակալության սերմանեց հայաստանցիներից ոմանց սրտերում՝ գործակիցներ դարձնելով նրանց։ Բորբոքեց նաև Քրիստոսի խաչի թշնամիներին, որոնք արյունարբու գազանների օրինակով կրճտեցին իրենց ատամները նրա վրա և իջնելով չարության խորքը, իմաց տվեցին միմյանց։ Խորհեցին մի ճար գտնել։ Գաղտնի, նենգությամբ, ինչպես և կեղծավոր սիրով, խոսում էին ելք հնարելու մասին։ Դրանից հետո այլևս ոչ մի տեղ ու երբեք չհամարձակվեցին երևալ։ «Գուցե լսի,— ասում էին,— և սլանալով խոյանա մեզ վրա, ինչպես արծիվը հավքերի երամի հետևից, և սրո ճարակ դարձնի մեր անձերը»։ Եվ մինչդեռ բոլոր այս գաղտնի խորամանկությունների ու չարության սերմերը թաքցնում էին, [Դերենիկ] իշխանն անհոգությամբ վայելում էր խորին խաղաղություն, համաձայն ի վերուստ նրան տրված շնորհների։

Այս ժամանակ [Դերենիկն] իր ազգակիցներից ինչ-որ մեկին, որի անունն էր Գագիկ, նախապատվեց՝ տալով նրան Ագարակի[3] բերդը, Ճահուկ գավառը, զորագլուխ նշանակեց նրան Պարսից կողմերի վրա։ Իսկ նա ճարպիկ ծածկեց աչքերը՝ Իսրայելի կույրի նմանությամբ և ապաշնորհ եղավ պարգևատուի հանդեպ, երես դարձրեց իշխանից, հաղթվելով ապստամբության ախտով։ Այդ տեսնելով, ամեն իմաստության տեր կորիճը մտացի դիտավորությամբ հղացավ՝ հեռանալու պատճառով նրա մոտ ուղարկեց իր քեռորդի Հասանին։ Եվ որովհետև Գագիկը կնության էր առել Հասանի քրոջը, այդ պատճառով սիրով ու խաղաղությամբ ընդունեց նրան ամրոցում։ Իսկ Հասանը պատեհ համարելով՝ առավ ամրոցը, եղածի մասին, ինչպես պատշաճ է, գրեց իշխանին։ Փութով այնտեղ ժամանեց իշխանը, շղթայակապ



արեց նրան, ուղարկեց Վան ավանը, և բնակեցրեց նույն ամրոցում, աքսորի մեջ։

Ինչպես ավելի առաջ ենք ասել, Ատրպատականից ինչ-որ գավառացիներ, նմանապես և նրանք, ովքեր Հայաստան աշխարհից էին, որոնց հետ և այս ապստամբ Գագիկը, միշտ խոկում էին կատարել իրենց մութ հղացումը։ Եվ քանզի ոչընչով հայտնապես չէին կարող վնասել քաջին, նրանց օգնեց մի մարդ, որը հույժ սիրված էր իշխանից՝ Արումսարի որդին, Հեր քաղաքից։ Արտասուքներ ու հառաչանքներ թափեցին նրա առաջ, հիշեցրին հայրենի քենը, քաղաքների ու ստացվածքի հափշտակումը, տների առումն ու ամրոցների քանդելը, զորքերի կործանումը և կորիճի սրից շատ արյուն հեղելը։ Առաջը դրեցին նաև Մուհամմեդի կրոնի մոլար օրենսդրության հավատո հանգանակը։ Նույնպես և ոմանք հայաստանցիներից խոստացան նրան ունեցվածք ու պարգևներ։ Ինչպես հուրն է ծաղկում փայտի շատությունից, նույնպես և այս մարդը՝ նրանց խոստումներից ու խոսքերից, մինչև որ հրապուրեցին և նրա դավաճանությամբ հյուսեցին մահվան դարանը։

Իսկ այսպես լինելուց հետո, համաձայն եղանակի փոփոխման, երբ արեգակի միջոցով չափի է բերվում մարդկային կյանքը, հասավ ձմեռային ժամանակը։ Եվ մեծանուն իշխանը, ըստ նախնյաց սովորության, ճանապարհվեց դեպի Անձահի ձորը, եկավ իջևանեց Հերական[4] կոչված դաշտը և կամեցավ փութով անցնել արքունի ձմեռոցը՝ Ճվաշ գավառի Մառական ավանը։

Այն ժամանակ ընդառաջ ելավ անօրեն մարդը, նենգավոր մտերիմը, կեղծավոր բարեկամը, անօրինությամբ հղին, կորստյան ծնողն ու պահապանը, մահացու հղացումների չարաբարո ստնտուն, խավարի դայակը, արյուն թափողների սատարողը, սատանայից խրատվածը, բարության հանդեպ անհաշտը, չարի արբանյակը, դժոխքի բանալին, մեղքերի հնոցը, իր գործակիցների նախանձի հրով վառվածը, խավարի տիղմը, որը ծովային լուսավոր մարգարիտը ընկղմում է կորստյան իր խորխորատը։ Սա չարի դրդումով աղաչեց Վասպուրականի մեծանուն իշխանին, որպեսզի, ըստ սովորական մտերմության, իջևանի իր մոտ, ինչը հանձն չառավ

իշխանը, դեպի իր գավառը փութալու պատճառով։ Իսկ նա առաջը դնելով իր իսկ քաղած բարեկամության ուխտը, ստիպեց իշխանին, որպեսզի գոնե թույլ տա արժանանալու նրա փառահեղ երեսը տեսնելուն։ Եվ գտնելով մահառիթ պարգեւ, եկավ հանդիպելու կարիճին, բայց կանգնելով դեմ հանդիման, չկարողացավ գրկախառնվել։ Իշխանը որսի պատճառով դուրս էր եկել շրջելու, առանց իր զորքի, ինչպես և առանց զենքի։ Քանզի առուների միջև ընկած այգեվետ, դժվարանց տեղեր էին, որոնց միջև անցրպետում էր սահմանակարկալ։ Հորդահոս և հույժ խորը մի առու, ուստի ո՛չ այն այլազգին և ո՛չ էլ մեր զորականներից որևէ մեկը չհամարձակվեց անցնել նրա միջով, խոստովանելով իրենց սրտերի վհատությունն ու ձիերի անշարժ մնալը, առավել ևս, որ իշխանը ոչ ոքի չթողեց անցնելու իր ետևից։ Այն ժամանակ քաջ ու կարիճ իշխանը մտրակեց ձիու կողքին և արագ անցավ դժվարին հորձանուտից անդին։

Իսկ այն պիղծ այլազգին, քանզի անձամբ չէր կարող դիմակայել կարիճին, նախապես իր գործակիցների խրատով հետը վերցրել էր ուժեղ և ըմբշամարտիկ ողջամարդկանց՝ թաքցրած զենքերով։ Նա մոտ եկավ իշխանին, գրկեց նրա պարանոցը և տվեց հուդայական համբույր։ Իսկ զորականները մոտեցան բռնեցին ձիու երասանները, ինչպես նաև պողպատե հատու սուրը, որպեսզի կարիճը չկարողանա ճապարել որևէ տեղ։ Ապա հարվածեցին գեղարդով և վերջ տվին քաջի կյանքին։ Եվ որովհետև նրանից սերված մանուկները՝ Աշոտը, Գագիկը և Գուրգենը երեխա էին ու անկատար և տակավին չէին հասել արբունքի, այդ պատճառով ոչ ոք չկար, որ վրեժխնդիր լիներ անարդարաբար հեղված արյան համար։

Եվ արդ, ներելի չէ մեզ՝ պատմությունը թողնել առանց մեծ ու արժանի ողբերի՝ ի հիշատակ գովելի կարիճի։ Որի համար կանչում եմ Երեմիայի ժիր մատյանին և ասում. «Ո՞վ կդարձներ իմ գլուխը ջրերի շտեմարան և աչքերս՝ աղբյուրների հորդահոս վտակներ, որպեսզի անդադար լայի Իսրայելի նոր կործանման օրվա համար»*։ Չեմ հապաղում երգակցող կանչել ողորմելի ողբերիս մեծն մարգարեին՝

* Հմմտ., Երեմ., Թ., 1։



սքանչելի Զաքարիային և նրա հետ ելնել բարձր դիտանոցն ու ձայն տալ բոլոր ժողովուրդներին և ասել. «Լացե՛ք, լացե՛ք, արևելքից արևմուտք, հյուսիսից հարավ, ցեղից ցեղ, ժողովրդից ժողովուրդ։ Քանզի [այս աշխարհից] ելավ օգնողը, լռեց զորավիգողը, և իշխանական զորության տեր մեծ առաջնորդն այսօր վերցվեց ձեր գլխից։ Վերևում՝ երկնքում և ներքևում՝ երկրում, ողբացին իրենց խոնարհ ծառայակցի կորուստը։ Ո՞վ է, որ այն օրվա համար չպիտի ողբա, ո՞վ չի աղեխարշվի, որ դառնապես արժանացանք տեսնելու և կրելու այսպիսի ծանրատաղտուկ աղետներ»։

Որովհետև աշխարհազորքը, տիրակորույս ցրվեց լեռներն ու դաշտերը և օդը ու կականով, հորդահոս արտասուքներով երկիրը լցրեցին դառնությամբ ու աղեկեզ կսկիծից ընկան ու թավալվեցին գետնին, թմբեցին մահվան դառնաճաշակ բաժակից արբած։ Զենասուն պահապանները, թիկնապահները, որոնց իշխանը հաստատել էր իր ձեռքով, խեղդելու թոկը դցում էին պարանոցները, ջանում հեղել իրենց արյունը, ավելի լավ համարելով մահը, քան ապրելը։ Նաև տիրասեր շները, պտտվելով սպանման տեղում և գիշերապահ հավատարմությամբ, կատաղած վայունով երկնահաչ էին տալիս և հալածական անում անապատի գազաններին, մինչև որ արեգակի տաքությունից չորացան պատվականի արյան շիթերը, որ ընկել էին գետնի վրա։

Իսկ կարիճի կորստյան համբավը, իբրև թանձրամած ամպ, որ սաստկությամբ լցված է խավարով, ելավ տարածվեց հայաստանցիների, մանավանդ Վասպուրական կոչված բարձրագույն և սեփական նահանգի վրա, որի տիկնայք և աղախինները, թողած կանացի բնության պատիվը, բաց գլուխներով, փողոցե-փողոց, գետնի վրա քարշ էին տալիս իրենց անձերը։ Նրանք չլսված սգի դառնությունից մոռացան սովորականը՝ մատաղ մանուկներին կրծքի կաթ տալը և միմյանց ձայնակցելով, պարապած էին միայն ողբերով։ Սրտիկագեղ տիկնոջ՝ մեծն Սոփիի ապարանքից լսվում էին կուրծք բախելու, ճակատին հարվածելու ճայթյուններ, բարձրաճիչ աղաղակներ։ Նրանք լաց ու կոծով կանչում էին այսպես. «Վա՜յ, կորա՜վ մեծանուն իշխանը, և անտերունչ մնաց Հայոց երկիրը»։

Իսկ տիկինը, խիզախելով կորիճի անպարտելի զորությամբ, ասաց. «Ինչո՞ւ, ով մարդիկ և ինչպե՞ս եք դուք հանդգնում այդ անել։ Ո՛չ մի տեղ թշնամի չկա, և պատերազմը չէ պատել ոչ մի տեղ։ Ո՞վ էր, որ համարձակվեց այդ անելու, ո՞վ էր, որ կարող էր իմ ոսկեփետուր, առաջամարտիկ ու քաջազգի վարուժանին հավահար անել կամ ծուղակը գցել և ինքը նրանից չպատառոտվեր ու մեռներ. ո՞վ կարող էր ձեռքը հասցնել՝ բարձրաթռիչ արծվին, քաջահնչուն և ահարկու ձայնով ցած իջեցնելու համար. ո՞վ էր, որ [կարողանար] մերձենալ՝ սանձելու անհաղթ վիշապին՝ և ինքն ապրեր»։ Այսպես և սրանից ավելին էր ասում տիկինը, ընդդեմ լաց եղողների։

Իսկ երբ ստուգվեց կատարվածը ու ճշտվեց կորստյան լուրը, ապա տիկինն ընկավ գետին, և երեսը դրեց հողին, մոխիր ցանեց գլխին, և պալատի օդը պատեց ձեռագործ խավարը։ Դեն գցեց իր պատվական մարգարտահյուս զարդաքողը, հագավ սև զգեստ և պատրաստեց թխակերպ ծածկոց իր գլխի համար։ Առաջ կանչեց սուգ ու ողբ անող կանանց, խմբեր կազմեց, դաս-դաս արեց, կարգավորեց և բոլորել տալով, երգեցրեց եբրայեցիների և Իսրայելի թագավորների ողբերը։

Այն օրը սուգ արեցին սուրբ եկեղեցիներն ու հոգևորականների դասը։ Սենյակների դռներից վերցրեցին ոսկեհուռ, կամարաձև վարագույրները և փոխարենը բերեցին սև, այծի կոշտ և հույժ տխրալիները։ Լաց ու կոծ անող ծառաները տիկնոջ հրամանով այս ու այն կողմ ընթանալով, խցեցին հրաշակերտ ապարանքի լուսանցույց պատուհանները։ «Որպեսզի,— ասում է,— արեգակը երկնակամարի անհաս բարձրություններում ճեմելիս, իր ճառագայթները ցած չգցի, չլուսավորի իմ խավարը, և լրման ժամանակին հասած լուսինը արուսյակի և աստղերի ամբողջ հույլի հետ չփարատի իմ մեգը, մինչև որ աստված իմ որդիներից մեկին կտա հոր արիասրտությունը՝ որ իմ կենդանության ժամանակ կամ մահիցս հետո գերեզմանիս վրա ավետի, թե առել է իր հոր թափած արյան վրեժը նրանցից, ովքեր ինձ տվեցին այս խավարը»։

Այս մեջ ընծայեցին նրանք, ովքեր ականատես էին եղել գործին և մանուկներ էին կրել գրկներում և ասում էին, թե տիկինը ձեռքը գցել էր հրաշագեղ մանկան՝ Գագիկի ուսին, չգիտեմ դիմացը լինելուց, թե մարգարեաբար էր այս արել



մեծն օրիորդ Սոփին, երջանիկ տիկնանցից։ Այդ սգի դառնության ժամանակ երկրագործներն ու արհեստավորները հրաժարվեցին ամեն մի վաստակից և ձեռքները դրած ծնկներին կամ ծնոտին, լալիս էին դառնապես։ Իշխաններն ու ազատները միասին հավաքված սաստիկ ողբերով ճմլեցնում էին միմյանց սրտերը։ «Ո՞ւր,— ասացին,— լքելով կորցրեցինք պատվական մարգարիտը, Հայոց պարծանքը, անպարտելի քաջին, որ դյուրությամբ մղում էր մեծ պատերազմներ և բարձրագույն անուն էր վաստակում իր և մեզ համար։ Ո՞ւր է բարեձևի շրթունքների ծիծաղը, որ ոսկեզարդ աթոռներին նստած բազմերանգ հանդիսականների մեջ միշտ զմայլեցնում էր մեզ ուրախության բաժակով։ Ո՞ւր է պարգևաբաշխ ու առատաշնորհ ձեռքը, որ երևելի պարգևներով միշտ շլացնում էր մեզ։ Վա՜յ և ավա՜ղ մեր կյանքին։ Ինչո՞ւ այն օրը մենք մեծ պատերազմի և նիզակախառն զորքի մեջ չէինք, թերևս մեր կյանքին էլ վերջ լիներ»։ Այստեղ մեջտեղ եկան եպիսկոպոսների ու ճգնավորների դասերը և սթափեցրին կնոջը և մյուս ողբացողներին աստծո եկյուղով և փոքր-ինչ փարատեցին դառն սգի ցավերը։

Եվ արդ ինձ համար հաճելի էր ավելի հրաշալիորեն անել ողբալից պատմությունը։ Բայց որպեսզի լսողների մտքերը չխռովվեն, կլռեմ սրա մասին խոսելուց և պիտի փութամ պատմությունների ասպարեզը։ Թերևս աստված մեզ հաջողություն տա կատարելապես իր լրումին հասցնելու Արծրունյաց ազգատոհմի քաջ տղամարդկանց մանրազնին պատմությունը։

Ավարտվեց ծննդաբանության կարգը՝ «մեծանուն և քաջատոհմիկ իշխան Գրիգորի երեք որդիների, ինչպես նաև նրա՝ ըստ ամենայնի հաջողված գործերը, նրա վախճանը ինչ-որ հայաստանցիներից ու պարսկաստանցիներից և նրա վրա արված ողբերը։

## Բ

### [ԴԵՐԵՆԻԿԻ] ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴՈՒ՝ ԱՇՈՏԻ ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԻԿԻՆ ՍՈՓԻԱՅԻ՝ ԻՐ ՋԱՆԻԿԻ ՈՒ ԲԱՐԵՊԱՇՏԻ ՄԱՀԸ

*Բայց երջանիկ իշխանի մահից հետո իր հոր աթոռին հաստատվեց անդրանիկ որդի Աշոտը, որը գրեթե 12 տարեկան էր։ Իսկ մեծանուն տիկին Սոփին ուշք էր դարձնում մանկանց բարենշան առաջադիմությանը, մանավանդ Գագիկ մանկան, քանզի սա հենց սկզբից, մանուկ հասակում հրաշալի փառքով փայլում էր իր եղբայրների մեջ։ Տիկինը նայում էր նրան և հուսալով ամրացնում իր սիրտը։ Նա առնաբար իր ձեռքը վերցրեց իշխանությունը, հոր՝ Հայոց թագավոր Աշոտի օժանդակությամբ։*

*Եվ որովհետև Ապումրվանը Սոփի տիկնոջ քրոջ որդին էր, այդ պատճառով նրան ազատեց կապանքներից իր հոր հրամանով։ Իսկ ինքը՝ Սոփին, անհամեմատելին կանանց մեջ, նման էր ամուսնասեր տատրակի. հրաժարվեց կյանքի բոլոր վայելչություններից, խանդակաթ եղավ, չդիմացավ սրտի նեղությանը և յոթ ամսից հետո փոխվեց այս աշխարհից, խաղաղությամբ ննջեց իր նախնյաց մոտ, և [որբ] թողեց մանկահասակ տղաներին։*

*Այստեղ սրանց կսկծացող բազմաթիվ ազգականները մտադրվեցին մանուկներից կորզել ունեցվածքը, բայց չհամարձակվեցին Հայոց մեծ թագավոր Աշոտի երկյուղից։ Սրանից հետո Աշոտ թագավորն ապրեց մեկ ու կես տարի և փոխվեց այս աշխարհից, հուղարկավորվելով փառք ու պատվով։ Այնուհետև սրանց հարազատները, պատեհ համարելով, սկսեցին մանուկների ձեռքից հափշտակել զանազան տեղեր։ Այնժամ առաջ եկավ Ապումրվանը, մեջտեղ բերեց իր հղացումը և կամեցավ տիրել Վասպուրականի իշխանությանը։ Իր կողմը գրավեց երկրի իշխաններին ու ազատներին, ասելով այսպես. «Աշոտից առնեմ աշխարհի իշխանապետությունը»։ Եվ համոզեց, հավատացրեց աշխարհի բնակիչներին։ Իսկ արքունահասակ Աշոտը սովորաբար մնում էր ահի մեջ, Ապումրվանի ձեռքի տակ, քանզի փեսայացել էր նրան։*

*Այնուհետև հարմար ժամանակ [Ապումրվանը] Աշոտին,*



*եղբայրներով հանդերձ, կանչեց Կոտոր բերդը, պատիվ տալու համար։ Եվ իսկույն, նույն գիշերը բռնեց, կապեց նրանց, Աշոտին ու Գուրգենին ուղարկեց Նկան անունով բերդը, դրեց բանտի մեջ, պահելով մեծ զգուշությամբ։ Իսկ Գագիկին տարավ Ճվաշ գավառի Շամիրամ ամրոցը։ Որովհետև իբրև երեխայի խաբել էր Աշոտին, տալով նրան Ագարակի բերդը, Ճահուկ կոչված գավառով հանդերձ, փոխարենը առել էր Նկան բերդը, Թոռնավան և Ճվաշ գավառները։ [Ճվաշում] ինքը վերաշինեց, պարսպեց Շամիրամ [բերդը]։*

*Դարձյալ ուրիշ տեսակ խաբեական բաներ տարածեց մարդկանց մեջ, ասելով այսպես. «Ես մի մարդ եմ որ չունեմ ժառանգ, բացի դուստրս, որին Աշոտը կնության էր առել։ Վախենում եմ, գուցե Աշոտը զոռզանա իմ հանդեպ»։ Եվ այսպես համոզեց, հավատացրեց լսողներին, բայց ինքը տարակույսի մեջ լինելով, լցվեց կասկածելի մտքերով։ Երբեմն հանում էր կրտսերին՝ Գուրգենին և տանում շրջեցնում իր հետ ու դարձյալ գցում բանտ։ Ապա հանեց Գագիկին, որի մասին մտորում էր, բայց չգիտեր ինչ պիտի անի, քանզի նրա սիրտը կոտրված էր մանկան ուշիմության պատճառով, և սպասում էր ծածուկ կորցնել նրան։ Բայց աստված թույլ չտվեց, որ նրա ձեռքը թաթախվի արդար արյան մեջ։*

## Գ

### ՓՈՔՐԻ ՃԱՃԱՆՉՈՒՄԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԵՐԵՎԱԼԸ ԳԱԳԻԿ ՄԱՆԿԱՆ ՎՐԱ. ԱՊՈՒՄՐՎԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՁԵՌՔՈՎ ՄԵԾ ԱՐԻՈՒԹՅԱՄԲ, ԵՎ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ԳՈՎԵՍՏՆԵՐԸ

*Քանզի իր կանխագիտությամբ ամենքի թագավոր Քրիստոսը նախապես նկատել էր, որ երջանիկ մանուկը՝ Գագիկը, ընտրյալ է ու արժանի իր շնորհներին, և գիտենալով, որ նա այդպիսին է լինելու, տվեց նրան զորության ու իմաստության ոգի, նրա նկատմամբ կատարելով մարգարեի ասածը, թե՝ «Արդար թագավորը կանգնեցնում է իր երկիրը»*, որով և*

**Առակ., ԻԹ, 4։*

փրկեց իսկ Հայաստան աշխարհը ծանրածանր աղետներից, որ գալու էին անընդհատ, իրար ետևից և նրա ժամանակ եղած բազմախուռն պատերազմներից։ Հենց սկզբից, երեխա հասակից իսկ երևում էր բարության արմատը, ուստի մեծապես զարմանում եմ մանկան վրա, քանզի դեռևս անկարող էր պարգևներ կամ ունեցվածք շնորհել որևէ մեկին և ոչ էլ կարող էր իշխանական հրամանով հարկել որևէ մեկին։ Եվ աշխարհի իշխաններն ու ազատները նրա սիրով էին տարվում, քանզի նրա շուրթերից բխող իմաստությունը առավել էր ընտիր ոսկուց։ Համեստությունն ու քաղցրությունը, միաժամանակ նաև նրա վրա ճաճանչող քաջարիության շնորհքը ամենքի սիրտը լցնում էին հույսով։

Ուր որ պետք էր, արիաբար զենքի էր դիմում. այնինչ դեռևս 15 տարեկան չէր եղել, մտքումը դրեց պատերազմող ըզամարդու հղացում՝ սպանել Ապումրվանին։ Մի հարմար ժամի հետը վերցրեց իր գործակիցներին և վրա հասավ նրան, սրախողխող արեց Վան ավանի հրապարակում, գցեց ձիու ոտքերի տակ։ Սրա գլուխը կտրեց և վերցրեց տարավ Աշիճառ[5] ամրոցը, որտեղ էր Գուրգենը, նմանապես և Կոտոր բերդը՝ Անձախի ձորում, որտեղ էր Աշոտը։ Նրանք հույս չունեին, թե կփրկեն իրենց անձերը։ [Գագիկը] հանեց նրանց այնտեղից, կնքամատանին տվեց Աշոտի ձեռքը և իշխեցրեց սեփական ժառանգությանը, իշխանական զորությամբ հանգերձ։

Սա, ինչպես կարծում եմ, աստծո թողտվությամբ առավ իր հոր արյան վրեժը Ապումրվանից։ Որովհետև նա էլ մեկն էր չարի գործակիցներից, որի մասին ասել ենք նախապես։ Ուստի միշտ և սակավ-սակավ, առանց հապաղելու գրվատում եմ [Գագիկի] շնորհքը։ Ինձ համար ընդհանրապես հույժ բղձալի է սրա պատմությամբ, ինչպես նաև սրա գործերով ու գովասանությամբ զբաղվելը, քանզի սա իր ժողովրդի մարող ջահը վառեց ու դրեց բարձրադիր ու անառիկ ամրոցի մեջ, շուրջանակի պարսպեց աստծո զորությամբ, անմար պահեց թշնամական սաստիկ հողմերից, որոնք չորս կողմից փչում էին սրա վրա։ Այդպիսով ոչ միայն ինքը չաղոտացավ, այլև ամուր հավատքի շնորհիվ ընդոստնեց և ցոլանալով հրակեզ արեց իր հայրենի տան թշնամիներին։



Սա բարձրաբերձ աշտարակ էր, զորավոր վեմերով, որոնք կապարով հյուսվել և միմյանց են միացել՝ որպես պղնձե պարիսպ ամրացված գամերով, թշնամիներից չճեղքվող, ինչպես նաև իբրև երկաթի սյուն՝ զորավոր պատվանդանով, ապավինած աստծուն, անհաս զորությամբ։ Հայոց տերության մեջ կանգնեցրեց ամուր ապաստան թշնամիներից հալածվածների համար։ Սա հոգևոր սուսեր էր, որ կրակ էր դարձել երկնային զորությամբ, հատու էր և ճառագայթելով փայլատակում էր թշնամիների գլուխների վրա։ Ահաբեկ արեց, վերջ տվեց եկեղեցու և նրա կարգերի վրա հոխորտացողներին։ Սա պատանի հասակից, ինչպես առյուծի կորյունը, վեր ելավ սիգաճեմ ու շնորհալի զորությամբ, բազուկները բարձրացրեց թշնամիների վրա, խորտակեց իր շավղի վրա դարանամուտ եղածներին և ահարկու ձայնով, սուրհանդակների ու հրովարտակների միջոցով իր կողմը ձգելով, կորզեց բազում գանձեր ու մթերքներ օտար ցեղերից, տիրեց նրանց բերդերին ու գավառներին առավել քան իր նախնիները։

Եվ արդ, քանզի ժամանակն է ոչ թե գովասանության, այլ պատմության, պիտի փութանք շարահարելու նույն կարգով։

Իսկ Աշոտ իշխանը, օժանդակություն ունենալով քաջարի մանկան՝ Գագիկի զորավոր բազկից, ինչպես ասել է իմաստունը, թե՝ «Եղբայրը եղբորից օգնություն ստանալով, կդառնա ինչպես ամուր քաղաք»*, սկսեց փառահեղացնել օրըստօրե իր հոր աթոռը՝ ամենահաջող և փառավոր կերպով։ Այս տեսնելով, Հայոց Սմբատ թագավորը ուղարկեց իր եղբորը՝ Դավթին և աղաչեց իշխան Աշոտին՝ չհեռանալ իրենից և ոխ չպահել այն բանի համար, որ Վահանի որդին՝ Գագիկ [Ապումրվանը] ձերբակալել էր իրեն։

Այս խնդրեց Սմբատը, որպես պարգև իր քեռորդուց, կասկածելով, որ գուցե Աշոտը կրկին անգամ գնա Ավշինի հրավերի ետևից, ինչպես առաջին անգամ եղավ, ինչի մասին ասացինք ավելի վերևում։ Թեպետև Ավշինը Աշոտի առջև դրեց պարգևներ տալու բազում խոստումներ, պայմանադրինք, բայց Աշոտը չհամաձայնեց, փոխադարձելով նրան իր

* Առակ., ԺԸ, 19։

*բանտարգելության ժամանակ հոգ չտանելու համար։ Եվ [Աշոտը] գնաց Սմբատի մոտ բարեկամաբար ու խաղաղությամբ։ Ուստի և բազում փորձություններ անցան մեր գլխով, Ափշին ամիրայի մոտ իշխանի չգնալու պատճառով։*

*Իսկ Ափշինը ելավ Հայոց երկրի վրա՝ անհուն զորքով ու զենքով, եկավ հասավ Սմբատին, որը փախավ և մազապուրծ ընկավ Վրաց աշխարհը։ Ապա այնտեղից վերադարձավ և պաշարեց Կարուց[6] բերդը, բացեց մթերված գանձերի տունը, վերցրեց բազում ավար։*

*Այնժամ Վասպուրականի Աշոտ իշխանը ճանապարհվեց դեպի Բագրևանդ գավառ և արագ անցավ իր աշխարհը։ Իսկ Հայոց Սմբատ թագավորը դեսպան ուղարկեց և Ափշինից խնդրեց խաղաղություն, գրավական տալով անդրանիկ որդուն։ [Ափշինը] վերցրեց նրան, վերադարձավ և դիմեց Աշոտի վրա, մեծ սպառնալիքով, ոխ պահելով նրանից իր հրավերը արհամարհելու համար։ Եվ ձմռան օրերին եկավ հասավ Թոռնավան գավառը։*

*Իսկ իշխան Աշոտը, եղբայրներն ու բոլոր իշխանները, ազատազորքի հետ խորհրդակցեցին ու ասացին. «Դաժան ժամանակներ են, ու պատերազմ, ո՞վ գիտե, թե ում կլինի հաղթությունը»։ Եվ խնայելով սուրբ եկեղեցիներն ու հավատացյալներին, ելավ գնաց Ափշինի մոտ, մահվանը գրավ դնելով անձը։ Այնտեղ բարեկամաբար, մեղադրանքներով չանացին նեղել մեկմեկու և պատճառեցին միմյանց, ինչ որ ցանկացան։ Ապա իշխան Աշոտին վերադարձրեց մեծ պատվով և բազում ու երևելի պարգևներով։ Բայց որովհետև երկուսի սրտերից էլ կասկածը դուրս չեկավ, Ափշինը պահանջեց գրավականներ։ Իսկ [Աշոտը] տվեց եղբորը՝ Գագիկին և յոթ ամիս հետո ուղարկեց կրտսերին՝ Գուրգենին և վերադարձրեց Գագիկին։*

*Իսկ երբ գարունը եկավ, Գուրգենը փախավ Ափշինի մոտից, եկավ հասավ իր եղբայրների մոտ, քակելով բարեկամության դաշինքը։ [Ափշինը Սմբատի] ետևից գնաց դեպի Տփղիս քաղաքը և հույժ հարստահարեց Սմբատին, վերցնելով բազում հարկեր։ Իսկ այնտեղից առաջանալով, եկավ հասավ մինչև Վան ավանը, Վասպուրական աշխարհ՝ անհամար*



*բազմությամբ։ Իսկ իշխան Աշոտը եղբայրների և ամբողջ զորքի հետ խույս տվեց և ամրացավ Ոսփրանից ձորում։*

*Այնժամ Վասակ Գնեազարձի[7] որդին՝ Հասանը, որի մասին ասացինք վերևում, անօրեն, ժանտ ու ապերասան մի մարդ, ավազակների հայր, մարդասպանների մայր և ծնող ամեն մի անօրինության, դարձյալ մոլեգնեց, հաղթվելով հորական չարապաշտությունից։ Հավատքի անարատությունը հաղիվ թե պահպանելով անարատ, օգնեց Ափշին ամիրային և կործանարար բազում վնասներ հասցրեց հավատացյալներին ու սուրբ եկեղեցիներին։ Նվիրվեց պիղծ գործերի, դուռ բացեց չարյաց համար, սատանայի հնարիմացությամբ գործեց մահաբեր դարաններ։*

*Իսկ [Ափշին] ամիրան մեծն Վանում և Ոստան ավանում թողեց երկու ներքինի ոստիկանների՝ բազում հեծյալներով։ Նրանց գլխավորը ճանաչվում էր Սափի անունով։ Իսկ ինքը՝ [Ափշինը] գնաց Աղբակ գավառ և իջևանեց Հաղամակերտ ավանում։ Ապա ուղարկեց մի ներքինի մարդու, որի անունն էր Հյուսր՝ մեծաթիվ զորքով, որպեսզի գնա և պատերազմի իշխանի դեմ։ Եվ որովհետև նրանք ամրացել էին անմատույց Սակենից[8] գյուղում, ներքինին վերադարձավ մեծ ամոթով, ոչինչ չկարողանալով վնասել նրանց, տեղի ամրության և գրավականների քաջամարտիկ լինելու պատճառով։*

*[Ափշին] ամիրան այնուհետև մեծ փութով անցավ գնաց Ատրպատական, երկու ներքինիներին թողնելով երկու ավաններում, որ հիշեցինք վերևում։*

*Գարնանամուտին ներքինի մի մարդ, որ կարգվել էր Պարտավ քաղաքի վերակացու, զորք հավաքեց, ապստամբեց Ափշինի դեմ և անցավ գնաց մինչև Շամա երկիրը[9]։ Այս լսելով, ամիրան ստիպված իր մոտ կանչեց այն մարդկանց, որոնց թողել էր Վասպուրական աշխարհի տեղապահներ, իսկ ինքն աճապարելով հասավ Պարտավ քաղաքը։ Այնտեղ պատահեց վրեժխնդրության, Հայաստան աշխարհում արած չարագործությունների համար։ Աստված չներեց նրան և սուրբ հրեշտակի միջոցով պատժեց սոսկալի խոցով, ինչպես մի ժամանակ Վաղես կայսրը Քրիստոսի քաջ նահատակների ձեռքով, ինչին ականատես էր սուրբ Թեկղը, որի մասին ընծայեց մեզ հավաստի կերպով Բուզանդ[10] պատմիչը։ Այնտեղ անմիջապես*

[Վագեսի] երկու որդիները և զորականներից շատերը սոսկալի մահվամբ ոչնչացան նրա աչքերի առաջ, որից հետո ինքը նույնպես վախճանվեց չարաչար տանջանքներով։ Սրանից հետո Հայոց երկիրը խաղաղացավ չարահնար իսմայելական ցեղի հրոսակներից։

Այս ժամանակ Աշոտը հիշեց Հասանի՝ Վասակ Գենադարձի որդու չարաբարո արբանյակությունը, որ կատարեց Ավշին ամիրայի մոտ։ Զորք ուղարկեց և պաշարեց Սևան բերդը, որ հափշտակել էր Վահանի որդի Գագիկը և տվել Հասանի ձեռքը, քանի դեռ Աշոտը կալանքի մեջ էր։ Եվ քանզի ձմեռային օրեր էին, երբ հնար չկար ձիարշավներով ճակատամարտել, Հասանը զորագունդ կազմեց և հետիոտն գնաց ճակատելու Աշոտ իշխանի զորքի դեմ, որը Պղունես[11] գյուղում էր, Լումբա Փորակ կոչված գավառում։ Եվ կեսգիշերին վրա հասնելով, հույս ուներ հաղթել, անգիտանալով իմաստունի ասածները, թե՝ «Մարդը անիրավությամբ հաջողություն չի ունենա»*։

Իսկ նախախնամողի զորությունը օգնության հասավ իշխանի զորքին, որը թեպետև փոքրաթիվ էր, բայց հարվածեց, և գիշերային մարտում կոտորելով, թուլացրեց Հասանի հրոսախումբը։ [Հասանը] չդիմացավ, բարձրացավ մի տան փլված ձեղունը, ինչը դարձավ նրա համար ծուղակ, որից փրկություն չկար։ Սուզվեց, ընկավ տան մեջ, քաջ տղամարդկանց ձեռքը, որպեսզի կատարվի մարգարեի ասածը՝ թե՝ «Հոր փորեց, բայց իր շինած փոսի մեջ ինքը պիտի ընկնի»**։ Եվ իսկույն ձերբակալեցին [Հասանին] և կրկին կապանքներով բարշ տվեցին Սևան կոչված բերդի դուռը։ Աճապարեց, այնտեղ հասավ ավետաբեր սուրհանդակների շնորհիվ նաև Աշոտ իշխանը, եղբայրներով հանդերձ։ Կարճ ժամանակ շրջապատեցին [բերդը], ապա փորեցին Հասանի աչքերը և առան ամրոցը։

Այստեղ մեջ ընկավ, բազում ջանքեր թափեց Գագիկը՝ իշխանի եղբայրը, խավարի պատուհասից Հասանին ազատելու համար, բայց չհասավ իր ցանկացածին։ Եվ Հասանը զրկվեց զգալի լույսից, բացվեցին նրա հոգու աչքերը։ Իսկույն

* Առակ. ժԹ, 3։
** Սաղմ., է, 16։



կրոնավորվեց ու ապրեց մաքրությամբ, մինչև իր վախճանի օրը։

Բայց Աշոտի իշխանության տարիները իր կամեցածի պես խաղաղ չէին, երբեմն մոտիկ ազգականների կամ ուրիշ շատերի պատճառով։

Այս ժամանակ Հայոց թագավոր Սմբատը եկավ հասավ Ապահունիք գավառ և գլխահարկ պահանջեց Կայսիկ կոչված ցեղից, բայց նրանք ընդդիմացան, ցույց տվեցին պատերազմելու ցանկություն։ Այնժամ Սմբատ թագավորը օգնության կանչեց Աշոտ իշխանին, որը հիշելով արյան հարազատությունն ու սերը, եկավ հասավ մեծ փութով։ Բայց պատերազմը սաստկանալիս Սմբատն, իր զորքով հանդերձ, ի փախուստ դարձավ այլազգիների առջևից։ Այստեղ մեջ ընկավ Աշոտը՝ Վասպուրականի իշխանը՝ սակավաթիվ զորքով և բարձրյալի մեծ օգնությամբ պարտության մատնեց թշնամիներին, իսկ ինքը վերադարձավ գնաց Նախճավան քաղաք, որը դրված էր իր իշխանության տակ։ Բայց հիվանդացավ մահվան ախտով և փոխվեց այս աշխարհից 29 տարեկան հասակում։

## Դ

### ԳԱԳԻԿԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ԻՐ ԵՂԲՈՐԻՑ՝ ԱՇՈՏԻՑ ՀԵՏՈ, ԵՎ ՆՐԱ ՔԱՋԱՐԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Սրանից հետո իշխանության աթոռին նստեց Գագիկը՝ Աշոտի եղբայրը, մերձակից երկու ակնավճիտ աղբյուրների նմանությամբ, որոնցից մեկը Նվագելիս՝ մյուսն ավելի ևս վեր է ցայտում, ինչպես երկու վիշապները կամ արյունի կորյունները, որոնցից մեկը թաքնվում է, մյուսն ավելի է խրոխտանում։ Կամ թե ավելի ևս հրաշափառ ձևով ասենք՝ լուսնի նմանությամբ, որը թանձրամած ամպերի մեջ շրջագայում է 15 օր, մարդկանցից հեռու, արփին մաշում է նրա սկավառակը։ Ապա մեկեն այն ծագում է և մի ակնթարթում համակվում լույսի զորությամբ և նախախնամողի հրամանով մաքրում է օդի պղտորությունը և երկրին է հասցնում իր մաքուր լույսի ճառագայթները, որին ախորժելով՝ սրբերից մեկն ասել է՝

տրաղցր է արևն ամպից հետո, ինչպես որ քաղցր է հանգիստը տառապանքից հետո»։

Այսպիսի խոհեմությամբ, իմաստնաբար Գագիկը՝ Վասպուրականի իշխանը, անձամբ ցույց տվեց այն օրինակները, որոնց մասին գրեցինք վերևում, ըստ մեր խոսքի ճարտարության և պատմողների օրինակով։ Հանգստացրեց Վասպուրականի շփոթ ու տառապյալ երկիրը գրացիների և սահմանակից օտար ցեղերի, ինչպես նաև աշխարհի բնակիչների... կոչված ցեղի [հարձակումներից]։ Սրանք ապստամբ ողամարտիկ էին, գողերին գողակից, երկիրն ապականող և իշխանության արհամարհողներ։ Նրանցից մեկն էր Շապուհը՝ Մայմանկի որդին, որը չարահնար նենգությամբ գրավել էր Ագարակի բերդն ու Ճահուկ գավառը և հպարտությամբ, բարձրավիզ ամբարտավանությամբ նստել էր ամրոցում, ինչ-որ մեծատոհմիկի տեղ դնելով իրեն։ Այս ժամանակ նույն օրինակով ապստամբեց նաև Գրիգորը՝ Վասակի որդին, որը ճանաչվում էր Ապուհամզա անունով և որջացել էր Արճուճք անվանված ամրոցում։

Իսկ քաջ ու մտացի Գագիկը՝ Վասպուրականի իշխանը, տեսնելով, որ երկու գարանակալների արարքները կատարվում են միևնույն ժամանակ, դիմեց Շապուհի վրա, պաշարեց բերդն այնպիսի զգուշությամբ, որ ճողոպրել չկարողանա։ Շապուհը տեսավ հույժ խելացի կորիճի քաջանդությունը և շարունակ աստվածային շնորհների փայլելը նրա վրա, ըմբռնեց իր և գործակիցների նեղությունը, հանկարծորեն, իբրև հասած և բարձր ոստից ինքնիրեն թափողի գոգն ընկնող պտուղ, ամրոցի անմերձենալի գագաթից ցած իջավ և ընկավ երջանիկ իշխանի՝ Գագիկի ոտքերը, խնդրեց խնայել իրեն և իր ազգատոհմին, [խոստացավ] պարգևներ, վարձագին՝ հավիտենական ծառայություն և աննենգ մնալ արքունի դռան հանդեպ։ Իշխանն առավ պարգևը, փրկության վճարը, իսկ նրանց ամբողջ ցեղը հնազանդվեց ի ծառայություն հզորին։ Սակայն նրանց սրտերն ուղիղ չէին ո՛չ միայն իշխանի, այլև տիրո՛ջ՝ Քրիստոսի հանդեպ։

Ապա Գագիկի՝ Վասպուրականի իշխանի ականջը լուր հասավ, թե Ապուհամզան ելել և համարձակաբար շրջում է իր որդիների հետ իր ավերված գավառում։ Զորք առաքեց նրանց վրա, բռնեցին և որդիներով հանդերձ բերեցին նրա առաջ։ Իսկ նրանք աղաղակ բարձրացրեցին, արտասուքներ թափեցին, հառաչեցին, ասելով. «Իսպառ մեզ մի զրկիր մեր ժառանգությունից»։



Իսկ քաջը, հեզաբարո և ամեն ինչով աջողակ կորիճը, լսեց նրանց աղաչանքները, մանավանդ որ հույժ քաջության, անպարտելի սրտի զորության պատճառով երբեք մտքում երկյուղ չէր ունենում նրանցից, ինչպես օրինակ որսից հագեցած առյուծը ոչ մի ուշադրություն չի դարձնում անզեն երեների վրա, նույնպես և հզորը գթաց նրանց, նախ՝ որովհետև ողորմած էր և հույժ բարեգութ բարեկամների ու թշնամիների հանդեպ, այլև, որ կնություն էր առել Ապուհամզայի դստերը։ Խնայեց նրանց, բայց հիմքից տապալեց ամրոցի շինվածքը, թույլ տվեց ժառանգելու իրենց գավառը և ապրելու աներկյուղ հզորից։ Այս ամենը նրան հաջողվեց աստծո շնորհներով, և խաղաղացավ Վասպուրական աշխարհը։

Երկրի խաղաղանալուց հետո մեծանուն իշխան Գագիկը, գթասիրաբար, ուրախալից սրտով կանչեց իր եղբորը՝ Գուրգենին և նրան բաժին տվեց Անձո տունը և Ընծայից ձորից մինչև Սրինգ և Ջլմար ամրոցները, քանզի հույժ խանդաղատական ու զվարթագին ոգով սիրում էր նրան և հնարիմաց հոգածությամբ, ինչպես հայրը որդու հանդեպ, ողորմում էր նրան, պատճառ դառնում և օգնում ապստամբելու, բանալու հազարյան ցեղի փակածը։ Այդպիսով [Գուրգենը] գրավեց Նլի[12] գավառը և վանելով նրա բնակիչներին, իսպառ ջնջեց նրանց հիշատակները երկրից, քանզի խիստ ու քաջասիրտ ողամարդ էր և հույժ հնազանդ իր եղբորը՝ Վասպուրականի իշխան Գագիկին։ Եվ միմյանց ճշմարիտ սիրելու պատճառով, երկրի բարեշինության համար, բաժանեցին գավառներն ու բերդերը երկուսի միջև։ Եվ Վասպուրականի իշխան Գագիկը տվեց [եղբորը] Ագարակի բերդն ու Ճահուկ գավառը, իրեն վերցրեց Զոհլ բերդը և Ջերմաձոր կոչված գավառը, որը Մոկաց երկրի մասն է, որովհետև սրանք մերձավոր ու հարակից են միմյանց։

Իսկ Վասպուրականի Գագիկ իշխանը գնալով առաջանում էր, մեծանում։ Ամենակալ տերը նրա հետ էր։ Սա աստծո զորությամբ բոլոր գրացիներին և ովքեր իր տերության շրջակայքում էին, նվաճեց իշխանաստատ հրամանով և ծառայեց-

րեց իր տերությանը։ Երբ Մոկաց տերերը տեսան, որ Գագիկի ձեռքը բարձրացավ բոլորի վրա, ապաստանեցին իրենց ամրոցներում և հրաժարվեցին հարկեր տալուց, հույժ վախենալով մեծն Գագիկ իշխանի սպառնալիքներից։ Իսկ մեծանուն իշխանը փութապես զորք գումարեց և ձմռան օրերին ասպատակեց Մոկաց երկիրը։

Այստեղ զարմանում եմ ամեն օրհնանքի արժանի և մեծանուն իշխանի քաջության վրա, քանզի երկու դժվար գործ հաղթահարեց քաջապես. մեկը՝ քանզի Մոկաց երկիրն ուներ բարձրաբերձ լեռներ ու անտառախիտ փապարներ, և մյուսը, որ ձյունն էր պատել, սաստիկ ցուրտ էր, և առհասարակ սառել էր ամբողջ երկիրը։ Իսկ նա ելավ բարձրագագաթ լեռները և ոտքի կոխան արեց, ինչպես հարթ ճանապարհ։ Իսկ աշխարհի իշխաններն ու ազատները, ամբողջ բնակչությամբ հանդերձ, մազապուրծ փախան և մնացին ամրոցներում, բերդերում, չկարողանալով ընդդիմակայել հզորին։ [Գագիկն] առավ երկրի ավարը և վերադարձավ Երիզվարկ[13] անվանված գավառը, գրավեց այնտեղ Պաղա բերդը և Փարհուացը[14]։ Գրավեց նաև Առվենից ձորը, առավ այն, ինչպես նաև [այնուէջի] ամրոցը և տիրեց այդ գավառներին։

Իսկ ծովեզերքի գավառում է սքանչելի և անառիկ Ամյուկ բերդը, որը երկար ժամանակ հափշտակել էին այլազգիները, բազում ու անհուն պատերազմներում հարձակվելով մեր նախկին աստվածասեր իշխանների վրա։ Դեռևս այն ժամանակներում այնտեղ հզորացել ու ամրացել էին ութմանիկներ կոչված ցեղի մարդիկ։ Նրանց դեմ շատ չարչարանքներ թափեց Արծրունյաց տունը, բայց ոչնչով չկարողացավ վնասել նրանց, մանավանդ քաջահաղթ ու մեծանուն Գրիգոր իշխանը՝ Դերենիկ անվանվածը, որ թարգմանվում է «Ուխտով տիրոջից խնդրրված»։ Նա բազում չարչարանքներ կրեց և մնաց փափագով, չհասնելով ցանկացածին։ Եվ Ամյուկ բերդն իր գավառներով մնաց որպես մեծ ու անբժշկելի վերք Վասպուրականի իշխանների սրտում, որին նախկին սպեղանիները ոչնչով չազդեցին։ Այսպես անցեց գրեթե հարյուր տարի, մինչև քաջն Գագիկի ժամանակները։

Սրան հասավ նախնյաց վրեժը, և պատրաստվեց նրանց դեմ պատերազմելու, նեղվեց նրանցից ու նեղեց նրանց։ Ապա



դտավ մեծ հզացում՝ գիշերով գողացավ* ամրոցը և սրախողխող արեց, բնաջնջեց ու վերացրեց երկրից նրա բնակիչներին։ Իսկ խռովարարների գլխավորներին քարավեժ արեց ծովի սրտի խորքերը։ Այնտեղ կունենան անհայտ գերեզմաններ, մինչև որ կհնչի վերջին փողը, և կլինի իրենց արարքների դատաստանը։ Իսկ սքանչելի Ամյուկ ամրոցը, որ երկնաշփ է և նայողի պարանոցը ցավեցնող, բազում ծախսերով ու մեծաթիվ արհեստավորների ձեռքով հրաշակերտեց երևելի շինություններով, գագաթից ցած, մինչև ծովի եզրը, ծայրեծայր պարսպավորեց անմերձենալի ամրությամբ։ Այս լսելով, իսմայելացոց, Մարաց և Պարսից չարահնար ցեղերը և ամբողջ Ատրպատականի պատերազմող տղամարդիկ, առհասարակ շարժվեցին պատերազմելու քաջ Գագիկի՝ մեծն իշխանի դեմ։ Մռնչալով ինչպես արյունարբու գազաններ, եկան հասան մինչև Սալմաստ քաղաքը։ Երդմամբ ուխտեցին միմյանց հետ՝ վրեժ առնել, քանդել, ավերել Վասպուրական երկիրը, մինչև որ գրավեն Ամյուկը և առնեն Ութմանի արյան վրեժը։

Իսկ քաջարի ու երջանիկ իշխանը՝ Գագիկը, գումարեց բազում զորք, եկավ Մարդաստան գավառը և առաքեց իր եղբորը՝ Գուրգենին, Հադամակերտ քաղաքը։ Երկուսով զինավառվեցին ընդդեմ նրանց, պահեցին ճանապարհների նեղ տեղերը [հուսալով], որ թերևս աստված կօգնի իրենց՝ պատերազմը հաղթությամբ պսակելու։ Գագիկ իշխանը կանխատեսորեն [illegible] գավառի և Շամիրամ կոչված բերդի վերակացու էր կարգել ինչ-որ մեկին Ակեացոց տոհմից, հավատարիմ ու քաջասիրտ մի տղամարդու, որի անունն էր Թադեոս։ Սա պատերազմներում ցուցաբերել էր բազում արի արարքներ, դարձել պայծառ ու երևելի և փայլում էր հայաստանցի զորականների մեջ։ Կատարել էր բարի շատ արարքներ, գթարությամբ առատաձեռնորեն օգնել աղքատներին, ժիր էր և հոգածու եկեղեցիների զարդարման և շինության հանդեպ, օգնող էր որբերի և այրիների, հանգստացնող բոլոր տառապյալների։ Նա հույսը դրել էր ոչ միայն իր զենքի ու զինվորության, այլև աստծո զորության վրա։ Սրա մոտ հասան լուրերը և ասացին՝ առհասարակ այս գիշերվա մեջ այլազգիների զորքն անցավ մեր

* Այսինքն գրավեց հանկարծակիորեն ու հնարիմացությամբ։

աշխարհն անթիվ բազմությամբ։ [Թադևոսը] սակավաթիվ զորքով հետամտեց և հասավ նրանց Գերասա[15] դաշտում։ Այնինչ այլազգիները մերձենալով, կամենում էին սրի բերանը տալ աստծո ժողովրդի բազում խմբերի։ Այնժամ քաջ տղամարդը՝ Թադևոսը, աչքերը բարձրացրեց դեպի երկինք, օգնության կանչեց տեր Քրիստոսին։ Եվ ըստ գրածի, թե՝ «Աստված պատրաստ է գտնվում իրեն կանչողների համար»*, փութապես աստծո զորությունը օգնության հասավ Հայոց զորագնդին, որը թեպետև հույժ նվազ էր, սուր գործի դնելով, կոտորեց, դաշտի երեսը լցրեց ընկածների դիակներով, որոնք դիզվեցին իրար վրա։ Շատերին ձերբակալեցին և բերեցին իշխանի առջև մեծ հաղթությամբ։ Իսկ մեծանուն Գագիկ իշխանը բազում ու երևելի պարգևներով շքեղացրեց, նախապատվեց հաղթանակող տղամարդուն՝ Թադևոսին։

Իսկ այլազգիները, տեսնելով եղածը, ասացին. «Որովհետև քչերից այս կրեցինք, ինչպե՞ս կարող ենք դիմանալ իշխանի բազմաթիվ զորքին, մանավանդ որ այնտեղ ինքն՝ իշխանն է լինելու պատերազմի հարդարողը։ Եվ ահաբեկված կրունկ դարձրեցին, ու խափանվեցին նրանց չար մտադրությունները։

Հայոց թագավոր Սմբատը, այդ տեսնելով, նախանձեց եղածի համար և ջանաց հորդորել այլազգիներին, կրկին ելնել Գագիկ իշխանի դեմ, բայց դրանով ոչինչ չհասավ։ Ապա այն մարդը, որին [Գագիկը]կարգել էր Ամյուկ ամրոցում և որի անունն էր Ապուսակր՝ Վահունյաց ազգատոհմից, դավաճանեց խաբեական խոսքերով ու խոստումներով և Հուդայի՝ աստծուն վաճառողի նմանությամբ բերդը տվեց Հայոց թագավոր Սմբատի ձեռքը։

Իսկ Սմբատը, առնելով բերդը, դարձյալ վաճառեց Գագիկ իշխանին և նրանից վերցրեց բազում գանձեր։ Այն օրվանից չար կասկած ընկավ յուրաքանչյուրի սիրտը, որի պատճառով բարեկամաբար ու խաղաղությամբ միմյանց թև ու թիկունք չեղան, ինչպես էին նախկինում։

Այն ժամանակ սաստկացել էր արաբների բռնությունը քրիստոնյաների հանդեպ։ Արքունի հրամանով պարսիկների

* Սաղմ., ՃԽԴ, 18։



ու հայերի վրա ոստիկան կարգվեց ինչ-որ մի մեծամեծ, որի անունն էր Յուսուֆ որդի Աբուսաճի, խորոտ ու բարձրահասակ մի մարդ և ահարկու, քան շատերն իրենից առաջ եղածներից։ Սա լցվեց մեծ բարկությամբ Սմբատի հանդեպ, արքունի հարկերը նրա կողմից բեկանելու համար։ Նրանց միջև գնացին եկան շատ դեսպաններ՝ հրովարտակներով, բայց նրանց միջև ոչ մի բան խաղաղությամբ չշտկվեց։ Իսկ ամիրա Յուսուֆը, քանզի միշտ լսել էր խելացի և մեծանուն Գագիկ իշխանի համբավը, քաջարի արարքները, ինչպես նաև մտացի խոհեմությունը, բազում ժամանակներից ի վեր ցանկանում էր տեսնել նրան։ Փութապես դեսպաններ առաքեց նրա մոտ հրովարտակներով և բազում խոստումներով, շատ թախանձելով, հանդիպելու կանչեց [Գագիկ] իշխանին, որն անհապաղ գնաց կոչնակների ետևից, բարեկամաբար ու խաղաղությամբ։ Երբ հասան միմյանց մոտ, մեծ փառավորությամբ շքեղացրեց իշխանին։

Տեսնելով [Գագիկի] պատանեկական վայելչագարդ հասակը և դեմքի սքանչելի գեղեցկությունը, բռնավորն ապշեց և հարցուփորձեց նրան խորին ու անքննելի իմաստ ունեցող խոսքերով։ Լսեց նրանից ճարտար ու խիստ պատասխաններ, որոնք նաև խորն էին ու դժվարիմաց, և դրանցով աստատապես, անարգել բացահայտեց նրա հարցումների իմաստը և նրա առջև բացեց փակված դռները, մարդկանց համար անհիմանալին, դառնալով նրա համար իմաստնության մայր և գիտության դայակ։ Եվ որովհետև պարսից արքա Յուսուֆը մտքով զորավոր տղամարդ էր և դժգոհ բոլոր մահկանացուներից, այդ պատճառով մեծապանծ և սրբազան իշխանին գցեց քննության բովը և աչքերը վեր տնկած անպատեհորեն հետամտում էր նրա կեցվածքին, նիստուկացին։ Ապա գտավ, որ նա զարդարված է թագավորական բոլոր հատկություններով, մաքուր և պատվական համեստությամբ, իբրև ոսկի, որ փորձվել է բազում հալոցներում։ Նրա առաջ բացեց արքունի հրովարտակները, հայտնեց տարակուսելի մտադրություններն ու գործերը, հարցրեց նրան ելքի մասին և նպաստավորվելով Գագիկից, ծայրահեղորեն հմտացավ նրանից բխած մտքերից։ Ուստի տվեց նրան պատվական ակներ և գեղեցիկ ու լուսափայլ մարգարիտներ, որոնք հանվել էին հողից ու ծովից, և

վայել էին թագավորներին։ [Գագիկի] համար պատմեց հին թագավորների՝ դարեդար կատարած գործերի և նրանց օրոք եղած պատերազմների մասին։ Հարցրեց նրան թագավորների և բարձրիշխան ազգատոհմերի, տների, գահերի, յուրաքանչյուրի երկրի սահմանների մասին, սկսելով Մարաստանից ու Պարսկաստանից, Հրեաստանից ու Երուսաղեմից, Ասորեստանից ու Եգիպտոսից, Հունաստանից և Հնդկաստանից, ամբողջ Հայաստանից, մինչև Ալանաց[18] և Կասպից դռները, թագավորներին հույժ վայելուչ ձևով։ Նրան գտավ ըստ ամենայնի ճարտար և շատ հմուտ։ Եղած պատերազմների մասին քննեց, փորձեց անպարտելի քաջին և հրաշափառ իշխանին, նրա շուրջը շարելով դիտողների՝ պատերազմող տղամարդկանցից։ Եվ գտավ, որ նա բարձր մի լեռ է՝ անշարժ պատերազմական հողմերի ձայներից, որոնց հաղթել էր իսկապես մեծ արիությամբ։ Այս ամենը և սրանից էլ առավելը իմացավ Պարսից Յուսուփ արքան։ Աստվածային շնորհները երևացին քաջ ու սրբազան իշխանի՝ Գագիկի վրա, իսկ [Յուսուփը] հույժ ուրախ էր իր մոտ նրա գալստյան համար։

Բայց երբ լուրը հասավ Սմբատի ականջին, թե Վասպուրականի իշխան Գագիկը միաբանեց Յուսուփի՝ Պարսից արքայի հետ, նախանձեց, գայրացավ նրա վրա՝ խորապես չարացած։ Եվ ինքը՝ Սմբատը, չկամեցավ գնալ խաղաղության ետևից, չտվեց արքունի հարկերը, ինչպես տերն էր հրամայել՝ անդրանիկ հարկը Պետրոսի ձեռքով տալ նրանց, ովքեր պահանջում էին երկդրամյանը, ասելով՝ «կայսրինը տվեք կայսեր, աստծունը՝ աստծուն»*։ Եվ այնքան արդարությամբ նշանակեց արքունի հարկը, որ մինչև իսկ Պետրոսին ուղարկեց ծովը որսալու ձկանը, հանելու [նրա բերանից] դրամը, կատարեց պահանջողների կամքը՝ տալով դրամը արարչի և Պետրոսի փոխարեն։ Սմբատը տիրոջ այս պատվերը քամահրեց և բազում չարիքներ բերեց սուրբ եկեղեցու և աստծո ժողովրդի գլխին։

Այդ պատճառով Յուսուփը սրտմտեց սաստկությամբ, հարձակվեց Հայաստանի վրա, անհուն զորքով ու զենքով, և մեզ վրա հասան բազում աղետավոր անցքեր, որոնց մասին ինչ-որ մի այլ զորավոր ու մտահարուստ հռետոր մեզնից առաջ

* Մատթ., ԻԲ, 21։



գրեց և հանձնեց արքունի գրապահոցը։ Երբ Սմբատը տեսավ, որ հնար չունի ընդդիմանալու պարսից արքային, փախավ ու ամրացավ Կապույտ բերդում։ Իսկ բռնավորը շուրջանակի պաշարեց ամրոցը և մի քանի օրից հետո բռնեց նրան, իբրև անզոր երեխայի։

Եվ տեսնելով, որ ոչ ոք չի կարող տիրել, պահել Հայոց աշխարհը, բացի Գագիկից, որին փորձել էր և գիտեր, որ այնպիսի տղամարդ է, որը չի թուլացնում իր անձնիշխան կամքը, նրան թագավորեցրեց ամենայն Հայոց վրա։ Նրա գլխին դրեց թագ, որը զուտ ոսկյա էր, հույժ վարպետ հորինվածքով, հյուսված մարգարիտներով և մեծագին ու պատվական ակներով, որոնց չեմ կարող նկարագրել։ Հագցրեց ոսկեզարդ պատմուճան, ինչպես նաև սուսերով գոտի, ոսկեհուռ ու փայլուն պարգով հանդերձ, ինչը վեր է պատմողների մտքից ու խոսքից։ Ապա [Գագիկը] նստեց ձիուն, հոյակերտ ու ոսկեհյուս զարդերի մեջ փայլելով ինչպես արեգակն աստղերի մեջ։ Աջից ու ձախից սպառազինված զորականների բազմություն էր։ Թնդում էին ձայները, փայլատակում սրերը, հնչում եղջերափողերը, սրինգներն ու հեշտալուր քնարները, տավիղները, հանդերձ դրոշներով՝ առջևից ու ետևից։ Սրանց ահեղ ձայներից սարսեց արքունի զորաբանակը։ Եվ այսպիսի փառավորությամբ հաստատեց, [Գագիկի] ձեռքը տվեց ամբողջ Հայաստան աշխարհը, մեծամեծ քաղաքներով և ամեն տեսակ վայելչություններով հանդերձ։ Ես չեմ վարանում ասելու, որ սրա օծումը եղել է աներևույթաբար, սուրբ հոգուց, ըստ առաքյալի ասածի, թե՝ «Չկա որևէ մի իշխանություն, որ աստծուց չլինի. և որոնք կան, աստծուց են կարգված»*։

Ապա Յուսուփ արքան ելավ գնաց Պարսից աշխարհը, ապստամբեց արքունիքի դեմ և չհնազանդվեց նրա հրամաններին, առավ բազում քաղաքներ, փախուստի մատնեց արքունի զորքը, և ստիպեց մնալու իրենց տեղերում։

Եվ արաբների գլխավորը, որի անունը նրանց գրքերից հայտնի է Ջափր անունով, անվանված նաև Մուկթադիր, երբ իմացավ Գագիկի թագավորելը Հայաստանում, ուղարկեց նր-

* Հռովմ. ԺԳ, 1։

րան թագ և սքանչելի շքահանդերձներ, իսկ [Գագիկը] հանձն առավ [մուծել] արքունի հարկը։

Այս պատմելիս շատ եմ հիանում և ապշում լսելիս։ [Այն] ավելի վեր է թե իմ և թե այլոց պատմածներից։ Երբեք չի համբավվել և չի լսվել, ոչ էլ որևէ մեկը կարող է ականատես եղած լինել, որ թագընկալ փառքով մեկին պատվեն արքունիքից․ մանավանդ քրիստոնյայի և ուղղափառ հավատացյալի, թագավորազնի, Հայոց ժառանգական ու բնատուր տիրոջը։ Չեմ հանդգնում երկրորդ անգամ ասելու, թե ակամայից այս բանավորը հարկադրվեց կատարել բարձրյալի և ամենքի տիրոջ կամքն ու հրամանը։

Բայց երբ Յուսուֆ ամիրան գնաց Պարսկաստան, Գագիկ թագավորը մեկնեց Կոգովիտ գավառը, պաշարեց անառիկ Դարույնքը[17], հանկարծակի առավ գիշերով, ի վերուստ իրեն [արված] հաջողության շնորհիվ։ Առավ նաև Մակվի բերդը, և, այնտեղից առաջանալով, գրավեց Ուշեռ[18] բերդը և Մասյացոտնը[19]։

Այս ժամանակ արքունուստ ուղարկեցին սպառավոր զորավարների մեծաթիվ զորքով, որոնց հրաման էր տրվել անցնել Ատրպատական։ Սրանք կրկին անգամ արքունուստ բերեցին թագ և սպառական հանդերձներ, Գագիկ թագավորին կրկին շքեղացրեցին փառահեղորեն, առավել, քան այն, որ պատմեցինք վերևում, Արքունիքի անունից մտերմական հրավարտակների միջոցով [Գագիկ] թագավորին խնդրեցին որպեսզի ճանապարհ ցնի, օժանդակի իրենց․ Հայոց երկրով անցնելու համար։ Եվ արքան, համաձայն արքունիքի խնդրանքի, ուղարկեց նրանց, որոնք գնացին ու պատերազմեցին արևելյան կողմերում։ Ապա փախուստի մատնեցին Յուսուֆ ամիրայի զորքը, նաև ձերբակալեցին իրեն և բերեցին արքունի դուռը։ Նա մնաց բանտում ութ տարի, ապա դարձյալ ազատ արձակվեց արքունի հրամանով։ Նրա ձեռքը տվեցին համայն Պարսից աշխարհը և ամբողջ Հայքը, որոնց հետ նաև մեծամեծ քաղաքներ, որոնք բռնությամբ հափշտակել էր ապստամբության ժամանակ, ինչպես նաև Ռեյ քաղաքը և մեծ Բասրան։ Բայց նա պարտվեց իր իշխանության տակ գրաված քաղաքների և նահանգների բազմությունից և չժամանեց Ատրպատական, այլ ուղարկեց հավատարիմ ոստիկանների և [երկիրը]



տվեց նրանց ձեռքը։ Ուղարկեց նաև թագ ու շքահանդերձներ Հայոց թագավոր Գագիկին, հաստատեց նրա իշխանությունը Հայաստան աշխարհի վրա։

Բայց նույն ժամանակ այս աշխարհից փոխվեց Գուրգենը՝ թագավորի եղբայրը, խաղաղությամբ ննջելով իր նախնյաց մոտ։ Նրա վախճանվելու օրը մեծ սուգ եղավ ամբողջ Հայաստան աշխարհում։ Արքան ողբաց նրան, մեծ սուգ պահեց՝ 40 օր և ապա կրկին իր մտքում արծարծեց աստծո երկյուղը, իմանալով իմաստունի ասածը՝ թե՝ «Գիտունի սուգը յոթ օր է, իսկ տգետինը՝ իր ամբողջ կյանքում»*։ Մտքում դրեց առօրյա, ապականվող ու վաղանցուկ կյանքի փոփոխումը, մտքի աչքերը բարձրացրեց մշտնջենավոր ու անքակտելի կյանքի հարատև հաստատությանը, քաջապես ու լիակատար իմաստությամբ վեր բարձրացավ, աշխարհին շնորհեց շինություն և սուրբ եկեղեցիների ու մենաստանների նորոգում, որոնցով միշտ լուսավորեց այս աշխարհից գնացողների հոգիները։ Մատուցեց նաև պատարագներ ու զոհեր, բազում գանձերով լիացրեց աղքատների, որբերի ու այրիների, տնանկների ու տառապյալների բազմությանը, իր մոտ հավաքված բյուրավոր ամբոխին։ Այստեղից էլ առատաբար բարեբանողների մաղթանքներն ու աղոթքները։ Ըստ իմ գիտեցածի, մանավանդ ըստ սուրբ ավետարանի կամ ավելի բարձրյալի՝ աստծո ասածների, այս պատարագով նա համահավասար եղավ երեք արդար մարդկանց՝ Աբելին, Նոյին և Աբրահամին։ Անմահ պատարագի և տիրոջ պատգամի միջոցով մեզ համար տիրոջը մատուցեց հաշտության անուշաբույր ընծան։ Բայց չբավականացավ միայն այսքանով, այլ օրըստօրե հիշելով կյանքի գութը, ինչպես նաև մահվան սերը, վերցրեց մթերված գանձերը, պայծառազարդ հանդերձներ, ձիեր ու ջորիներ, արջառների նախիրներ, ոչխարների հոտեր, երկրի չորս կողմերում տվեց սուրբ վանքերին ու առաքինակրոն մարդկանց, կարգեց նշանավոր օրեր և քառասնօրյա ժամանակը, անխափան ուխտագրությամբ և անմոռաց հիշատակներով։ Միշտ փառք փառքի ետևից վերև էր ուղարկում դեպի անվախճանը, անապառ ու հավիտենականը գնացած եղբորը։ Մտքումը դրել էր՝ թերևս այնպես կպատահի հե-

* Հմմտ. Սիրաք, ԻԲ, 13։

տագայում, որ ահեղ գալստյան օրը աջակողմյան բազմության մեջ զվարթությամբ ու փառավորապես կգրկախառնվի եղբոր հետ և կլսի նրանից՝ «ողջույն քեզ, եղբայր, դժոխքի դռնից իմ հոգու ազատարար, որ բարիք մատուցեցիր ինձ, ինձանից հետո՝ քո կենդանության ժամանակ։ Իմ հետ քո հոգին ես վեր հանեցիր այս կյանքին»։ Եվ դարձյալ ինքը՝ Գագիկ արքան զինավորվեց և լցվեց անհամեմատ քաջությամբ, միապետեց ամբողջ Հայաստան աշխարհում, վարեց ինչպես վազող գետ, հոսանուտ ու բարեբուխ հորդով։ Ինչպես ծովը, բազմացրեց խաղաղությունը Հայաստան աշխարհում։ Այս մասին մենք չենք վախենում ճշմարիտ խոսքեր ասելուց։ Սրանից առաջ մեր երկրում չի պատահել, որ եղած լինի այսպիսի բարություն, և անկարելի է իմանալ, թե ապագայում կարող է լինել։

## Ե

### ՄԵԾ ՍԳԻ ՎԵՐԱՆԱԼՈՒ, ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂԵՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՍՓԻ ԱԲՈՒՍԱՃԻ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Մեծ սգի վերանալուց հետո [Գագիկ] թագավորը խաղաղեցրեց երկիրը Պարսից և լեռնակողմերի Հագարյան Սերնդների[20] հարուցած պատերազմներից։

Այն ժամանակներում դեռևս Աբուսաճի որդի Յուսուֆը բռնակալությամբ տիրում էր Պարսկաստանն ու Հայաստանը։ Նա չկարողացավ դիմանալ արքայի քաջությանն ու իմաստնությանը, թողեց իր գազանաբարո չարության գործերը, դիմեց խաղաղության և բարեկամության, արքայի ձեռքը տվեց Հայոց և Վրաց աշխարհը և խաղաղության ուխտ դնելով, գնաց Պարսից երկիրը։ Եվ մինչդեռ կամենում էր հանգստանալ իր կարծեցյալ խաղաղության մեջ, փութապես նրա մոտ եկան արքունի սուրհանդակները և հանձնեցին հրաման, որպեսզի գնա և պատերազմի հարավային զորքերի դեմ, որոնք հարձակվել էին Բաբելոնի և նրա սահմանների վրա։ Եվ նա գնաց զորքի անհամար բազմությամբ, թողեց Պարսից ոստիկան իր սիրելիներից մեկին, որի անունն էր Փեթք, իսկ ինքը հասավ արքունի դուռը և այնտեղից նույնպես առավ բազմաթիվ օգնական զորք։ Ապա եկան և պատահեցին միմյանց Ասիա աշխարհում, զորագնդերը ճակատեցին, և խայտառակ ջարդեցին Յուսուֆի զորքը, ձերբակալեցին նաև նրան։ Սակավ ժամանակից հետո սպանվեց, չգիտեմ, ինչպիսի մահ վիճակվեց նրան։



## Զ

### ՊԱՐՍԻՑ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս եղելություններից հետո Պարսից երկիրն անիշխանացավ։ Թեպետև առաջացան ու գահին հաստատվեցին ազատների ու ծառաների որդիները Աբուսաճի տոհմից[21], որոնք կարծում էին, թե մի բան կդառնան, բայց շուտ-շուտ, միմյանց ետևից մահանում էին, և նրանց հանդեպ կատարվում էր իմաստունի ասածը. «Ավա՜ղ և վա՜յ քեզ, քաղա՛ք, որ քո թագավորը ապախնի որդի է»*։ Եվ դարձյալ ուրիշ տեղում ասում է. «Երեք բանի համար է երկիրը դողում, և չորս բան կա, որոնք չի կարող հանդուրժել։ Ծառան երբ թագավորի, երկիրը կդողա։ Անխելքը երբ հացով կշտանա, նույնը կկատարվի»**։ Եվ արդարև, երկիրը սասանվեց, կարծելով, թե պիտի թագավորեն այս ծառաները։ Եվ քանզի սրանցից ոչ ոք հիշատակելու արժանի գործ չկատարեց, ուստի մեր շարահարած այս պատմության մեջ հաշվի չառանք և չնշեցինք նրանց անունները։

## Է

### ԳԱԳԻԿ ՄԵԾ ԱՐՔԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԲԱԶՈՒՄ ՏԵՂԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՈՍՏԱՆ ԱՎԱՆԻ ՀՐԱՇԱԿԵՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Բայց ինձ ահա հույժ սիրելի է ձեռնարկել ավելի բարձր բանի՝ հիշատակ թողնելու [մեզնից] հետո եկածներին, ինչպես և ի պարծանս Արծրունյաց ազգատոհմի, հիշատակել Հայոց մեծն թագավոր Գագիկի մտացի և խոհական գործերը։ Նա քաջությամբ և աշխարհաշեն խաղաղասիրությամբ, իբրև հայր և խնամածու, հոգ էր տանում Հայոց աշխարհի մասին։ Բարեխնամ գթությամբ դարմանում էր աղքատներին, վերադարձ-

* Ժողով., Ժ, 16։
** Առակ., Լ, 21—22։

նում գերիներին, փրկում հափշտակվածներին, իրավունք տալիս որբերին ու այրիներին, ավարտում, գլուխ էր բերում ամեն մի առաքինասեր արարք։ Արժանի է ավելի մեծ գովեստի։ Քե՛զ համար, սիրելի բարեկամ և առաջինը քաջ տղամարդկանցից, որ այս պատմությունն ինձնից պահանջեցիր, ուրիշներից լսած ստահոդ և առասպելներով պաճուճված պատմություն չէ, որ հաստատապես գրելու և մատուցելու եմ, այլ որպես ականատես և ականջալուր, իմ ձեռքով շոշափած՝ հավաստապես կըպատմեմ քեզ զարմանալի եղելությունների մասին։

Բոլոր ուսումնասերներին հայտնի է այն գրույցը, ըստ որի[22] արծաթասեր մարդը ավելի լավ է համարում իր պարանոցը ոլորելը, քան մի մանր արծաթով տուժելը։ Եվ տեսնելով, որ նախախնամող աստծո հրամանով արևն իր ճառագայթները արձակում է, հոգ տանելով աշխարհի մասին, ընդդիմանում է նրան և ասում. «Ինչո՞ւ լույսիդ փոխարեն ոսկի չես բըխում ինձ համար»։ Կամ թե՝ տեսնելով ականավճիտ աղբյուր, ասում է՝ «չե՛մ ծարավի և երբեք քեզանից ջուր չե՛մ խմի, մատուցիր ինձ արծաթ»։ Իսկ թագավորը, ունենալով անարծաթասեր բնավորություն, մաքուր մնաց նման մեծավեր ախտից, խնամ տարավ ոչ միայն իր անձի, զվարճության, այլև ամբողջ Հայոց աշխարհի մասին։ Մթերված գանձերը տվեց գործավորներին ու արհեստավորներին՝ գավառներում ու երկրի կենտրոնում պարսպելու բարձրագագաթ բլուրները, անառիկ ամրոցներն ու բերդերը, ավազակներից և օտար ազգերի խառնակություններից փախչողներին ապաստանելու համար։ Իր պատրաստած բազմաթիվ ամրոցներից հատկապես երկուսը գրավում են դիտողին, ստիպելով ակնապիշ նայելու։ Մեկը Ոստան ավանն է՝ ծովեզերքին, Ռշտունյաց գավառում և հույժ բարեխառն է, երկրի չորս կողմերից առհասարակ այնտեղ է փչում քամին։ Այն վայելչագեղորեն զարդարված է սաղարթախիտ ու պտղաբեր ծառերով ու բազում այգիներով։ Քաղաքի շուրջը բխում են անուշահամ աղբյուրներ, որոնք օգնություն են մատուցում մարդկանց, բազում պետքերի համար։ Իսկ հարավակողմում, ամրոցի մոտակայքում է բարձրաբերձ Արտոս լեռը, որը գարնանային եղանակին ամբարում և իր վրա պահպանում է արմատների ու ծաղիկների գալարությունը, վերևում ունենալով ձյունահորեր՝ թագավորների ու բոլոր նրանց հա-



մար, ովքեր կկամենան օգտվել։ Նաև լեռան գագաթից ցած են հոսում սահանակարկաչ ու հորդահոս գետեր, որոնցով ոռոգվում է երկիրն առհասարակ։ Դրանք թափվում են ծովը և իրենց մեջ աճեցնում մանր ձկներ՝ գավառի բնակիչների վայելելու համար, ինչպես և թագավորների գանձարանը լցնում բազում հարստություն, որոնք վերցնելով՝ արքան նվիրաբերում է աղքատների կարիքների համար։ Իսկ ամրոցի գագաթը ծովահայաց է և շատ վայելուչ։ Երբ հողմերից հուզված ալեկոծվում է ծովը, նրա ծաղկաձև ալիքները հաճելի ու վայելուչ են երևում, իսկ երբ օդը հստակ է լինում, գրավում է բոլորին՝ իր ծավալումը տեսնելու համար։ Որի պատճառով և թագավորը ձեռնարկում է նրա մեջ կառուցել ապարանքներ, սենյակներ և փողոցներ, հրաշալի, պատկերավոր և տեսակ-տեսակ հորինվածքով, որը չեմ կարող պատմել։ Պարսպում է նաև ծովակողմը զորավոր վեմերով, հիմքերը դնելով անհնարին խորության մեջ, իսկ պարսպի վերևում, ծովի առջև շինում է մի ճեմագահլիճ՝ զարդարված ոսկեզարդ ու պես-պես ներկերով, հույժ լուսավոր, աչքերը շոյելու, հուրախություն իր սրտի և իրեն արժանիների։ Կազմում է կամարաձև, օդաբեր, զովացնող դռներ, միաժամանակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք արեգակի ծագման ու մայրամուտի պահերին փայլատակելով ծովի վրա, դահլիճի սրտի մեջ են գցում իրենց շողերը և պես-պես գույներով շքշքելով դրոշմված պատկերներն ու զանազան հորինվածքները, ապշեցնում են դիտողներին, ավելի վեր անցնելով պատմողների գիտությունից։

Իսկ մենք շատից սակավը հիշելով, պատմեցինք ինչ որ կար Ոստան ավանի մասին։

## Ը

### ԱՂԹԱՄԱՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՎՔԵՐ ԷԻՆ, ՈՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՅՆՏԵՂ ԿԱՏԱՐՎԵՑԻՆ ՆՎԱՍՏ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԵԼՈՒ ԱՆԱՐԺԱՆ ԳՈՐԾԵՐ

Եվ արդ մենք սիրով ու բաղձանքով ձեռնարկեցինք գրելու գեղեցիկ պատմություններ, զանց առանք բազում գրույցներ, մանավանդ որ դրանք լի են անհուն շատախոսություններով,

տեսողութ մեր պատմության և անշահ լսողների համար։ Ուստի սրանք դուրս գցեցինք մեր մտքից և պիտի ջանանք շարահարել օգտակար պատմություններ և անսխալ բացահայտել Հայոց աշխարհի շինության մասին, ի սկզբանե անտի, Հայկ աղեղնավորից ու նրա զարմից, մինչև վավաշոտ Շամիրամը՝ Ասորեստանի թագուհին, նրանից հետո մինչև այժմ մեր երկրում նաև ուրիշների կատարած ձեռակերտներն ու շինվածքները։ Այս ամենը մտքից ես անձամբ տեսել եմ, հասնելով նաև հնամյա երկրներ՝ մինչև Կղարջք[23] և Շուշեթ[24], Կովկասյան լեռներ և Ահիզ[25], մինչև Գաղիի մատույցները և ոտքով շրջել Տայաստանը[26], ամբողջ հյուսիսը և արևելքը, դիտել հին ու լավ շինությունները։ Բայց մեր ուշքն ու միտքը միայն գրավել է հրաշակերտ և շատերից ավելի նորանշան ու զարմանալի Աղթամարը, չնայած ասում են, թե սրանցից առաջ այստեղ շինություն են կատարել Դավիթ Սահառունին, Ռաշամ Ռշտունին և Բարզափրանը, որը Պաղեստինի ամբողջ բնակչությունը Հյուրկանես քահանայի հետ գերեվարեց և բնակեցրեց մեր երկրում։ Սակայն սրանք ամենքն էլ Աղթամար կոչված այն երևելի կղզում բնակվում էին ինչպես վրաններում, կամ մրգերի պահակների հյուղերում, մինչև Հայոց մեծ արքա Գագիկի ժամանակները։ Նա դրսևելիս խորագիտությամբ դիտեց և գտավ, որ այն կարող է լինել աշխարհի ապաստանը թշնամիներից և հրոսախմբերից, ձեռնարկեց այնտեղ հիմք դնել ահեղ ու զարմանալի որևէ բան։ Հրաման տվեց բազմաթիվ արհեստավորների և անթիվ մարդկանց՝ կտրել ծանր ու դժվարակիր վեմ քարեր և գցել ծովի անհնարին խոր հատակը։ Այնպես մեծն արքան մի առ ժամանակ ջանքեր թափեց և անսպասելիորեն կանգնեցվեց, ծովից հինգ կանգուն բարձրությամբ, քարահատակ ամբարտակ, որը մտքի աչքերով, ինչպես ցամաքի վրա, հաստատուն կերպով դրեց մեծ քարերի շարքով։ Նրա վրա շուրջանակի, լարաձգությամբ կառուցեց պարիսպը մոտ հինգ ասպարեզ տարածությամբ։ Եվ պարիսպն էր հրաշակերտ, ահեղակերպ, զարդարված էր բարձրաբերձ, լայնանիստ բուրգերով ու բարձր աշտարակներով և ուներ իր մեջ անկյունավոր, խորանանման, տախտակաձև հանգստանալու գահույքներ, որտեղ միշտ զվարճանում էր արքան իր որդիների և ազատակույտ զորքերի հետ։ Իսկ պարսպի ծայ-



րից նա տարավ քարանձավի դժվարամատ կիրճերը և սերտ միացրեց իրար։ Ծովի խորահատակ հիմքերի բերանին նա դրեց ահավորատես, հաստահեղույս, բևեռապինդ դռներ։ Այսպիսով ծովի մի մասն առնելով կղզու կողմը, նա հրաշալիք գործեց և ստեղծեց խաղաղ ու անքույթ նավահանգիստ՝ նավերի խմբի համար։ Հրաշակերտից ավելի լավ, քան [կատարել էր] Ալեքսանդրը Մակեդոն քաղաքից։ Այն իմ կարծիքով գերազանցում է ժայռերի մեջ Շամիրամի փորած զարմանալի սենյակներին և Վարագա լեռան ստորոտին նրա անցկացրած գետի ամբարտակին։ Որովհետև դրանք գոնե ցամաքի վրա են շինված, իսկ սա, որ կառուցեց ծովի մեծ խորությունում, ապարժեք արեց իրենից առաջ եղած ճարտարապետների գործերն ու իմաստությունը։

Եվ այնուհետև թագավորի պալատում հավաքվեցին իշխաններ, ազատներ, ռամիկներ, եպիսկոպոսներ և կրոնավորներ, որպեսզի միասին և փութապես կանգնեցնեն այնտեղ շինություններ ու ձեռակերտներ։ Հրաման տվեց, որպեսզի այն լինի թշնամի բոլոր հրոսախմբերից փախած եկածների ապաստանի տեղ։ Թագավորը գթաց և չխնայեց պահանջված վարձը։ Եվ հինգ տարի հետո, երբ սկսեցին շինել, բարձրացավ քաղաքի շատ և շատ ավելի փառահեղ շինությունը։

Այնժամ ինքը՝ թագավորը, հույժ խելացի ըմբռնմամբ բազմաթիվ ճարտարապետների հետ, վարպետի լարը ձեռքին, լեռան ստորոտում, որը կղզու գագաթն է, միանգամից տեղը նշանակեց և գծագրեց վայելուչ զբոսատեղեր, գցեց թագավորական հանգստավայրին արժանի պարիսպներ, փողոցներ, բուրաստաններ, պարտեզներ, թագավորավայել նստելատեղեր։ Ծաղկանոցների ու պարտեզների համար հատկացրեց հովիտներ։ Այս ամենն ի կատար ածեց փութապես։ Տնկվեցին նաև բազմաթիվ ծառեր, որոնց ոռոգեցին անուշահամ աղբյուրի անհատնում ջրերով, որ նախախնամող աստծո կամքով [բըխում է] քաղաքի մեջ։

Եվ քանզի արքունի դուռը հավաքվել էին բազում արհեստավորներ, պատվավոր մարդիկ, ժողովված երկրի բոլոր ազգերից, որոնք կարող էին անել արքայի կամեցածը և իսկույն գործը կատարում են համաձայն հրամանի։ Թագավորը հրամայեց նրանցից մեկին՝ ճարտարապետ, իմաստուն և հանճա-

բերանը և անխոս կատարում, երբեմն անձամբ և երբեմն զորքի միջոցով։

Այս անկումից հետո պատերազմի ելավ նաև Վասպուրականի դեմ և գրավեց բազում գավառներ ամրոցներով հանդերձ։ Վասպուրականի մասունքներում տեսավ Աղձնիքի իշխանական տան մի ամրոց՝ Կոտոմ[27] անունով գյուղում, որը սեփականել էր Զուրարիկ[28] կոչված ցեղը։ Սրան իսպառ ջնջեց, կործանեց, հիմքից տապալեց ամրոցի շինությունը, նրա քարերը, բարձեց [նավերը] և բերեց ծովի վրայով, տվեց սուրբ եկեղեցու շինության համար։ Եվ կռատան ձև ունեցող պղծալից շենքի փոխարեն կանգնեցրեց փառաց տաճարը։ Այստեղ կատարվեց մարգարեի ասածը՝ «Եթե պատվականը անարժանից զատի, իմ բերանի պես կդառնաս»*, ուր միշտ հանգչում է սուրբ Հոգին, մարդկանց ընծայելով անստվեր լույսը։

Եվ քանզի ճարտարապետն էր Մանվելը, իմաստությամբ լի և իր գործում զորավոր մի մարդ, որին հիշատակեցինք վերևում, հրաշակերտեց եկեղեցին զարմանալի արվեստով։ Կրոնավորը, որին հիշեցրինք նախապես, օգնեց նկարելու քարերի վրա ճշգրիտ նմանությամբ, սկսած Աբրահամից ու Դավթից մինչև մեր տեր Հիսուս Քրիստոսը։ Հորինեց նաև մարգարեների ու առաքյալների դասերը, զարմանալի տեսքով, ըստ յուրաքանչյուրի դիրքի։ Եկեղեցու շինվածքի շարքերում ստեղծագործեց, շարակարգեց երեների խումբը և թռչունների երամները, ինչպես նաև գազանների, խոզերի ու առյուծների, ցուլերի ու արջերի խմբերը, քանդակազարդված միմյանց դեմդիմաց, հիշեցնելով ասպելու համար նրանց կռիվը, ինչը հույժ ըղձալի է իմաստուններին։ Եկեղեցու իրանը գոտևորեց գովեստի արժանի շրջանակով, որը զարդարեց նուրբ կտրվածքներով, վրան նկարեց խաղողի որթեր, այգեգործների, գազանների ու սողունների հետ միասին։ Նրանց կերպարանքը այլևայլ զանազանությամբ, ամեն մի մասում նմանվում է իր տեսակին։

Իսկ չորս կողմերից, սուրբ խորանների վերևում, ճշգրտորեն նկարեց չորս ավետարանիչների պատկերները, որոնք ար-

* Երեմ., ԺԵ, 19։



ժանավորապես սուրբ եկեղեցու ուրախության պսակն են և ավելի բարձր են, քան բոլոր սրբերը։

Նկարեց նաև խաչի հետ Փրկչի պատկերը, որը մեզ համար մարմնացավ, երևաց որպես մարդ։ Այն արևմտյան խորանի կամարի վրա է։ Փրկչի դիմաց, ճշգրիտ նմանությամբ հորինեց նաև Գագիկ արքայի փառահեղ պատկերը, որը հպարտ հավատքով բարձրացրել է եկեղեցին բազուկների վրա, ինչպես մանանայով լի ոսկե սափոր կամ որպես անուշահոտությամբ լցված ոսկե տուփ։ [Գագիկը] տիրոջ առաջ կերպագրված է այնպես, որ ասես թողություն է խնդրում իր մեղքերի համար։ Թեպետև խոսքը վերաբերում է մեր [օրերի] պատմությանը, սակայն թագավորը չմերժեց խնդրված վարձը, հուսալով գալիք հատուցման։

Դարձյալ խորանի հարավային կողմից, եկեղեցու դռան ետևում, հորինեց գահի տեղ, որը բարձրից դեպի ներքև է իջնում կամարաձև աստիճաններով, որպեսզի դառնա թագավորի աղոթքի տեղը, հեռու մարդկանցից, որով նա կլինի իր մտքերի հետ և անզբաղապես կխոսի աստծո հետ։

Իսկ սուրբ խորանի ներսի կողմը հրաշալիորեն կարգավորեց նկարապաճույճ գույներով, արծաթապատ դռներով և լի ոսկեհուռ զարդերով, ոսկեզօծ պատկերներով, պատվական ակներով, մարգարտահյուս զարդերով և պես-պես, երևելի ու պայծառ սպասքով։ Այդպիսով նա հրաշափառապես մեզ ցույց տվեց երկրորդ Երուսաղեմը, ինչպես և վերին Սիոնի դուռը։

Այստեղ կատարվեց մարգարեության ավետիսը, թե՝ «ուրախ լե՛ր, ծարավ անապատ» և դարձյալ, որ «Երկիրը պիտի ցնծա, և ուրախ պիտի լինեն բազում կղզիները»**։ Արդարև, սա երբեմն ծարավ անապատ էր, իսկ այժմ՝ մեծ աստծո քաղաք, որը հոսում է երկու մշտաբուխ աղբյուրներից, սուրբ ավազանից և աստծո որդու անապական արյունից, արբեցնելով հոգով ծարավիս։

Իսկ սրա նավակատիքի օրը եպիսկոպոսների և իշխանների խմբերով փառավորեցրեց, կատարեց ուրախության մեծ տոն, մեծապանծ հիշատակ թողնելով սերնդե սերունդ։ Ահա ասացինք, ինչ որ կար սուրբ եկեղեցու մասին։

* Եսայ., ԼԵ, 1։

** Հմմտ. Սաղմ., ՂԵ, 11։

## Ժ

### ԴՎԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ՄՈՏ ԱՐԱԲԱՑՈՒ ԴԵՄ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԱՐՔԱ ԳԱԳԻԿԻ ՔԱՋԱՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՈՒ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Ինչպես ավելի վերևում պատմեցինք Պարսից անիշխանության մասին, ըստ գրվածի, թե «Իսրայելը դատավոր չուներ, և յուրաքանչյուր ոք հավանում էր իր կամեցածը»։ Այս ժամանակ արաբացի ցեղից մի մարդ[29], որը հմուտ էր պատերազմներում և զինվորական գործերում, բարձրավիզ ամբարտավանությամբ կամեցավ ինքնագլուխ լինել։ Ուստի և զորք գումարեց, հանկարծակիորեն մտավ ու անցավ Գողթնաստանով ու Նախճավան ավանով։ Նա վերցրեց նաև Շարուր կոչված գավառի զորքը և եկավ հասավ մինչև մեծ մայրաքաղաք Դվինը։ Այս փութապես հարկապահանջներ ու ոստիկաններ ուղարկեց Այրարատյան երկիրը և մինչև Արագածոտն կոչված [գավառը], որը Աբասի՝ Սմբատի որդու կալվածների մի մասն էր։ Այն գցեց իր իշխանության տակ։ Եվ քանզի Աբասը չէր կարող ընդհարվել իր վրա բռնացողի հետ, իմաց տվեց [Գագիկ] արքային սուրհանդակների ու հրովարտակների միջոցով, որպեսզի գա և փրկի իրեն հրոսակների բռնություններից։ Իսկ [Գագիկ] արքան հիշելով արյան հարազատությունն ու սերը, ելավ գնաց բազում զորքով, հարազատի վրեժն առնելու։*

*Իսկ Աբասը՝ Սմբատի որդին, հպարտությամբ եկավ իջավ Վաղարշապատ քաղաքի դաշտը և կամեցավ նախքան Հայոց մեծն թագավոր Գագիկի գալուստը, պարծանք վաստակել իր անձի համար։ Իսկ այլազգի մարդը, քանզի գիտեր նրա մասին, որ հմուտ չէ պատերազմներում, ելավ նրա դեմ սակավաթիվ զորքով և ջարդեց ու փախուստի մատնեց նրան։ [Աբասի] զորքից սրի քաշեց 400 տղամարդու, թալանեց զորքին ու երկրի բնակիչներին, հրի մատնեց ամբողջ երկիրը և վերադարձավ քաղաքը, մեծ հաղթությամբ և բազում ավարով։ Իսկ Աբասը այնուհետև փախավ և մազապուրծ ընկավ Վրաց աշխարհը։*

*[Գագիկ] արքան լսելով այս գույժն ու աղաղակները, փութով հասավ Դվինի մատույցները, Երասխ գետի եզերքը, սուրբ Վիրապի դիմաց, որից ելնելով, Մեծն սուրբ Գրիգորիոսը լուսավորեց մեր Հայաստան աշխարհը։ Իսկ այլազգին տեսավ, որ մեծն արքայի բանակը սփռվել է Գինո[30] լեռ կոչված բլրի ստորոտներում, Բլրակի անունն արդարև մարգարեական է. ինչպես անապական գինուց, արքան զմայլվեց, ուրախացավ իր իսկ հաստատած վայրում, Թեպետև հաղթության շնորհն առավ բարձրյալից, սուրբ Լուսավորչի բարեխոսությամբ, որի հիշատակը տոնվում է Սահմի ամսի տասներորդ օրը։ Սակայն [Գագիկի] շնորհները ստանալով՝ բոլորը չի գրկվում այս պատմության մեջ արած գովեստներից։ Այնուհետև ամբարիշտ մարդը գումարեց զորք, գրեթե 13 հազար մարդ և դիմեց [Գագիկ]արքայի վրա, ինչ-որ ուրիշների պես կարծելով նրան։ Մինչդեռ արեգակը երրորդ ժամն էր, ինչ թեածում էր երկնակամարով, և դեռ ընթերցվում էր սուրբ Ավետարանը, եկավ սուրհանդակներից ինչ-որ մեկն ու ասաց. «Ինչո՞ւ է երկար ու ձիգ աղոթում իմ տեր արքան. ահա՛ այլազգիների զորքը մոտեցավ [մեր] բանակին և տիրոջ սուրբ խորանին»։ Իսկ արքան կայուն սրտով ու հեզահամբույր քաջությամբ չբարձրացրեց աչքերը և ոչ էլ խոսեց իմաց տվողի հետ, այլ կատարեց սովորական աղոթքը։ Իմաստունը հասկանում էր՝ որ «տիրոջն է պատերազմը» և «տերը հակառակ է ամբարտավաններին և շնորհներ է անում խոնարհներին»*.*

*Այնժամ արքան զինավառվեց արիությամբ, առավ հավատացյալների բանակը, հանդարտ առաջ շարժեց զորագունդ զորագնդի ետևից և պատշաճաբար հարդարեց ճակատ։ Այնուհետև սուսերավորների խմբերն իրար խառնվեցին, [լսվեցին] ճայթյուններ, թնդյուններ, երևացին ասես ամպերից ցած թափվող կայծեր։ Օրն սկսեց դառնալ ահավոր։ Այնժամ արքան բարձրյալի օգնությամբ զորացավ իր զորքի հետ, մանավանդ որ Հայոց սուրբ հայրապետը՝ մեծ Եղիսեն, բարձրացել էր Գինո բլրի կատարը քահանայական դասով հանդերձ և սուրբ Ներսեսի պես ձեռքերը վեր էր պարզել, մինչև որ պարտվեց երկրորդ Ամաղեկը։ Անցնելով Հայոց զորագնդերի միջով, արքան եկավ ու կանգնեց այլազգիների զորքի*

* *Առակ. Գ, 34։*

կենտրոնի առջև, որտեղ կային մոտ 4000 հետևակ տղամարդիկ՝ ըմբշամարտ զինակիրներից։ Նրանց հետ ընդհարվելով, արքան, ինչպես կայծակն է հարվածում եղեգին, այդպես խորտակեց այլազգիների զորաբանակը։ Եվ այնուհետև գետին ընկածների բազում դիակներ թանձրացել էին դաշտի երեսին, ինչպես հնձի օրերին ցորենի խուրձերի դեզեր։ Անտեղ սրախողխող և գետավեժ արվելով սպանվեցին ութ հազար մարդ, իսկ շատերին նրանցից ձերբակալեցին։ [Արքան] ոմանց շղթայակապ ուղարկեց անառիկ Դարույնք։ Իսկ 200-ից ավելի կամ պակաս մարդկանց, որպես պարգևներ, շնորհեց կյանք, հրամայելով արձակել, որպեսզի գնան քաղաք և պատմեն, ինչ որ տեսան։

Եվ ինքը՝ [Գագիկ] արքան, աճապարելով անցավ Երասխ գետը և կամեցավ ծայրեծայր հրդեհել [Դվինի] քաղաքը և շրջակա գավառը, մինչև որ քաղաքի ծերերը ընկան նրա ոտքերը և խնդրեցին խաղաղություն, տալով հարկեր և պատանդներ, ինչը առավ արքան և վերադարձավ խաղաղությամբ Դարույնք ամրոցը։ Վերցրեց այլազգիների այրուձիի զորքի անչափ շատ զենքեր ու զարդեր։ Իսկ իր զորականների բազում ավարառուներից ոչ մեկից արքան ոչինչ չպահանջեց, այլ հրամայեց, որ հեռու տանեն իր առջևից, ինչ որ վաստակել էին։

## ԺԱ

### ԴԵԼՄԻԿՆԵՐԻ[31] ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՀԱԴԱՄԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՈՒ ԱՂԲԱԿ ԳԱՎԱՌԻ ՎՐԱ, ԵՎ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՆԵՐՈՎ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այն ժամանակ դելմիկների զորքի մի մասը կամեցավ անցնել Ասորեստան աշխարհը։ Նրանք հասան Հադամակերտ քաղաքը և Աղբակ գավառը, ինչքան կարող էին թալանեցին ինչքը և գերեցին կանանց ու երեխաներին։ Այս լսելով, [Գագիկ] արքան հրամայեց իր զորքին՝ հետամուտ լինել նրանց ետևից քաջազինող հեծյալներով, որոնք արքունուստ ստանալով հրամանը, աճապարեցին և վաղընդփույթ հասան նրանց, ովքեր անհոգությամբ մնում էին Անձևացյաց աշխարհում։ Եվ



նիզակավոր քաջամարտիկները, ընդհարվելով դելմիկների զորքին, նրանց դարձրեցին հայոց երիվարների ոտքի կոխան, ինչպես դաշտի խոտը, և սուր գործադրելով, կոտորեցին գրեթե երկու հազար մարդու։ Ապա ավարի մատնեցին նրանց բանակը, փրկեցին գերիներին և վերադարձան յուրաքանչյուրն իրենց տեղերը՝ մեծ հաղթությամբ։

## ԺԲ

### ՀԱՅՈՑ ՄԵԾ ԱՐՔԱ ԳԱԳԻԿԻ ՊԱՏԿԵՐԻ, ԱՆՁԻ ԵՎ ՓԱՌԱՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվ քանզի ասված նախախնամությամբ ու կանխագիտությամբ իմացավ, որ նա պիտի այդպես լինի, հենց սկզբից, մոր որովայնում նրան օժտեց իմաստուն ոգով։ Այդ պատճառով էլ նրան շնորհեց լուսազարդ պատկեր և վայելուչ հասակ, անհամեմատ՝ բանական կարգի բոլոր մահկանացուների մեջ։ Ունի հարթ և ուղիղ, վայելուչ ու պայծառ երես. նրա գլխի մազերը թխակերպ են, գանգրագեղ, ալեխառն[32] և թանձր հյուսքերով իջնում են փառահեղ ճակատին։ Բարակ, կամարաձև ու մրազարդ հոնքերը, արտևանունքները՝ աչքերի բիբերով հանդերձ ինչպես շուշանը հովիտներում, ծաղկելով ծավալվել են հրաշազարդ հորինվածքով։ Քիթը երկար է ու վայելուչ, ականջները՝ դյուրալուր ու դյուրամետ դեպի բարությունը և պայծառ ու հրաշալի լույսի նմանվող գույնով։ Նրա շրթունքները նման են կարմիր լարի, ատամները խիտ են և մաքուր։ Նրա նորածիլ մորուսը մանուշակի պես ծաղկել է գունագեղ այտերին, որով տեսնողներին նա երևում է հրեշտակի կերպարանքով։ Հիրավի, նրա այսպիսի շնորհագեղ վայելչությունը վերուստ տրված պարգև է, որովհետև նա Հովսեփի[33] պես, թագավորելով նոր Իսրայելում, նրանից էլ առավել, լրացրեց սուրբ եկեղեցու կարգերը։ Ուստի, հույժ սիրելի է ինձ համար այս ժամանակ [ադամանդներ] տանել Չինական աշխարհից և պատվական քարերի քաղաքից, մա-

նավանդ քարգործներից ու մարմարագործներից և թերևացող ոսկու նման պատվական քարեր վաճառողներից ու նրա թագի հետ ընդելուզել՝ [նրա] պսակի զրուանքների ժամանակ, մանավանդ երբ փրկչական պասի՝ տերունական տոներին, որպես փեսա, դուրս է գալիս առագաստից, ինչպես արուսյակ։ Գույնզգույն քարերով ու մարգարիտներով հյուսված զարդերը՝ խռոխտ ձիու գլխին, լանջին ու գավակին, ճառագայթում էին լույսի ճաճանչներ։ Այլև նրա առջևից նետվող կրակահոսքեր էին, թնդյունի ձայներ, փողերի հնչյուններ և առհասարակ բյուրավոր մարդկանց գոչյուններ։ Ամեն աչք բաղձում էր տեսնել նրան, ուստի ամենքն աղաղակում էին՝ «տե՛ր, ապրեցրու թագավորին, լսիր մեզ։ Եվ արդարև, աստծո օծյալը բարձր էր, քան երկրի բոլոր թագավորները, արժանի էր այսպիսի և սրանից էլ ավելի մեծ գովասանության։

Որովհետև նա եղավ շինության և խաղաղության պատճառ, ավազակներին այրող ու դուրս վանող։ Նա արդարությամբ էր կատարում իրավունքն ու դատաստանը, կտրում էր ամբարտավանների բարձրաթռիչ թևերը։ Նա բարձրաբերձ ամրոցներից ցած իջեցրեց բազում ողջացածների, ապստամբների ծուղակ էր, որից փրկվելու հնար չկար։ Նա թշնամիների գաղտնի նենգությունները նախատեսնող և դուրս կորզող կարթ էր։ Նա իր սիրելիների և հնազանդների անհատնում պարգևն էր, այլև անուշահոտ բուրաստան՝ լի ամբողջապես պայծառ ծաղիկներով։ Նա իր տան մեջ կանաչ ու ոսկեսաղարթ ծառ էր՝ լի ոգելից սիրով և ուրախարար ավետիք։ Իր որդիների համար բարության կրթարան և իմաստության մշտաբուխ աղբյուր էր, բոլոր վարպետների դուռը բացող և անվրեպ չափ ու օրինակ։ Նա բռնավորների սպառնալիքներին, բերքարեր և աճարկու հողմերին ընդդիմակայող բարձր լեռ էր և անդրդվելի վեմ։ Նա այլազգիներից իրեն հղված խարդախ ու կասկածելի հրովարտակների ու պատգամների ոչնչացնող հուր էր։ Նա բաբելացի, մարաց, պարսից, բյուզանդացի ու բարբարոս բռնավորների սրտերում կրակ դարձած և հարաշարժ մեխ էր, ծովի խորքերի կամ երկնի անհաս բարձրությունների մասին իմաստուններին հարցափորձող։ Նա բաղձում էր ուրախության ոսկեզարդ գահին, պատվելի ճոխությամբ և իբրև զորավոր առյուծ, հավատով աճում ի փառս աստծո։ Նա երեկույթների ոսկեզարդ սենյակներում բազմոցրանինչ քնի մեջ նիրհող վիշապ էր, որի հզոր զորության ահը շրջապատել էր ամբողջ Հայաստանը, և ինչպես պղնձե պարիսպը, անմերձենալի էր պահում թշնամիների երկյուղից ու գաղտածիգ նետերից։ Նա իր դրացիների և իրեն հնազանդվողների վրա ապահով հովանի էր։։

## [ՀԱՎԵԼՎԱԾ]

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՆՑՔԵՐԻ ԵՎ Ա[illegible]ԱՄԵՐ ԱԲԴԼՄՍԵՀ ԻՇԽԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

Գագիկ Արծրունի արքայի՝ Դերենիկի որդու վախճանվելուց և Հայոց իշխանության վերանալուց հետո Հայաստան աշխարհի, առավել ևս Վասպուրականի նահանգի նկատմամբ, կատարվեց Երեմիա մարգարեի ասածը, թե՝ «Իմ ժողովուրդներն [ասում են] անտերունչ շրջելու ենք»*, մեզ տիրեցին Հագարացիները, որոնք հարաժամ ասպատակություններով բոլոր քրիստոնյաներին, թե՛ մեծերին և թե՛ փոքրերին մատնեցին հափշտակումների, ավարառության, սրածության, սովի ու գերության, քանզի ոչ մի տեղից չկար որևէ հույս կամ ակնկալություն։ Դեռևս մի քիչ մնացել էին փոքրիկ հայ իշխաններ, որոնք իրենց ձեռքում էին պահում բերդերն ու քարանձավները։ Այս մեզ վրա թագավորեցին մեր և մեր հայրերի մեղքերը, և տերը մեզ ու մնացածներին մատնեց անօրեն, արծաթամոլ, եղեռնագործ ու մեղսասեր ելիմացոց զարմի ձեռքը, որ թուրքերի ցեղերն են։ Եվ տիրեցին աշխարհին Արևելյան ծովից մինչև Արևմտյան ծովը։ Չմնաց նույնիսկ ո՛չ մի քարանձավ, որ ստված չմտներ նրանց ձեռքը։ Նրանք ունեն արյունարբու գազանների բնություն։ Ահավոր կերպարանք ունեցող ցեղեր են, քանի որ նրանց դեմքերի տեսքը զարհուրում է ու ահաբեկում դիտողներին։ Նրանք վայրի գազանների նման բնակվում են լեռներում, դաշտերում և անապատներում և գիշակեր են գազանների պես։ Չե՛ն պատվում մեծամեծներին, չե՛ն խնայում ծերունիների սպիտակ մազերը և պատկառելիությունը, չեն խղճում երիտասարդներին ու մանուկներին, ո՛չ էլ խնայում որևէ մեկի մանկությունը։ Չար և ժանտ ժողովուրդ են, որոնք չուզեցին իրենց սրտերը և ո՛չ էլ իրենց հոգիներն ապավինեցին աստծուն։ Այս ժողովրդին մեզ վրա թագավոր կարգեցին աստված և մեր մեղքերը, համաձայն Անանիանց սուրբ մանկանց[1] ասածների, թե «Մեզ մատնեցիր ողջ աշխարհում ամենաանօրեն և չար թագավորի ձեռքը»։

Այն ժամանակ երևաց ինչ-որ մի երևելի մարդ[2], ազգակից Սենեքերիմ մեծ թագավորին, որի մասին խոսում է Եսայի մարգարեն։ Այս մարդը անվանակից էր իր նախնուն. ուներ նույն Սենեքերիմ անունը, իսկ իր մոտիկ ազգականն էր մեծ իշխան Դերենիկը։ Սրանք աստծո օժանդակությամբ և սուրբ հոգու նախախնամությամբ, տիրեցին Վասպուրականի իրենց հայրենի բնիկ գավառներին և, դիմագրավելով այլազգիներին, թույլ չտվեցին ավերել երկիրը։ Որովհետև դեռ իրենց ձեռքում էին պահում անմատույց Շամիրամաշեն ամրոցը. երկնաբերձ, նայելիս պարանոցը ցավեցնող, անառիկ Ամյուկ բերդը և առ ոչինչ էին համարում այլազգիների հարաժամ հարձակումները, նրանց հանապազօր եռ էր մղում աստծո օգնությունը։

Սրանց ժամանակ երևացին աստվածային խաչանշանի գանձերը, որի վրա իր արյունը հեղեց աստծո միածին որդին։ Այն պահված էր Վարագա լեռան վրա, քարանձավի գագաթին, սուրբ գառան և թագավորաց կույսի՝ Հռիփսիմեի ձեռքին։ Այն ցույց տվեց աստված, ինչպես Կոստանդիանոս[3] թագավորի և Կյուրեղ հայրապետի ժամանակ։ Նույն կերպ նաև Վասպուրական երկրում, Վարագա լեռան վրա ցոլաց տերունական խաչանշանը և երեք ժամ հետո քարանձավի գագաթից թռչելով՝ հաստատվեց նույն լեռան վրա մի հովտում, որտեղ կան անուշահամ աղբյուրներ։ Իսկ սուրբ թագավոր Սենեքերիմը նույն տեղում կառուցեց մեծածախս եկեղեցիներ, լեռան ստորոտում՝ մենաստանների հոյակապ ու հրա-

* Երեմ., Բ, 31։

չակավոր մայրաքաղաք Վարագը, այնտեղ կարգեց համատարիմ մարդկանց, զարդարեց բազում կրոնավորներով և սուրբ քահանաների երկնային բազմությամբ։ Նրանց համար սահմանեց ռոճիկներ, և ապրեցին խաղաղության մեջ, Վասպուրական երկրում։ Բոլոր երկրների զրկվածներն ու գերիներն ապաստանի տեղ էին գտնում նրա մոտ։

Այս մեր մեղքերի պատճառով մեզ վրա հարձակվեց եկիմացիների ցեղը և, ինչպես ասացինք վերևում, հանապազօր նեղում էին, սրածում, ու հալումաշ անում քրիստոնյա ժողովրդին։ Սենեքերիմ թագավորը մտաբերեց տիրոջ պատվիրանը, որն ասում է՝ «երբ ձեզ կհալածեն այս քաղաքում, փախեք մյուսը»*։ Բացի տիրոջից, այլուստ օգնություն չկար, տիրոջ օժանդակությունը զորավիգ էր նաև բյուզանդացոց թագավորին։ Այն ժամանակ աստվածապահ Կոստանդնուպոլիս քաղաքում կայսերական իշխանությանը տիրում էր Վասիլ անունով աստվածասեր ու բարեպաշտ ինչ-որ մի մարդ։ Բայց բյուզանդացոց թագավորները անկարող էին օգնելու Հայոց աշխարհին, և [հայերն] ըստ իրենց կամեցածի տիրում էին ամեն մեկն իր գավառին և չէին դիմանում այլազգիների հարձակումներին։ Այնժամ Թորգոմի տան[4] մնացորդները, ինչպես որդին հորը, դիմեցին բյուզանդացոց թագավորին։ Իսկ նա, լցվելով աստվածային սիրով, գթաշարժվեց որդիների աղաչանքներից և գավառներից իր մոտ կանչելով յուրաքանչյուրին, նրանց տվեց պարգևներ, կարգեց արքունի դանը։ Նրանց քաղաքների փոխարեն տվեց մեծ-մեծ քաղաքներ, բերդերի դիմաց՝ անմատույց բերդեր, նաև գավառներ, գյուղեր, ագարակներ և սուրբ մենաստաններ։ Եվ հայկազունները՝ Արծրունիները, Սենեքերիմը, փոխեցին իրենց հայրենի երկիրը հայկազյան տոմարի 470 /1021/ թվականին և ելան գնացին բյուզանդացոց երկիրը՝ 14 հազար տղամարդով, բացի կանայք ու մանուկները և մտան հոռոմների ծառայության, լծի տակ։ Հովհաննես թագավորի որդի Գագիկ Բագրատունին նույնպես փոխեց իր հայրենիքը 490 (1041) թվականին և գնաց հոռոմների մոտ։ Եվ նրանք տիրեցին Հայոց արևելյան կողմին՝, Վան մեծ ավանին, Վասպուրական երկրին, թագավորանիստ Անի քաղաքին և Հայոց աշխարհին։

* Մատթ., Ժ, 23։



Երբ իմացվեց Հայաստանից թագավորների գնալու, հոռոմների երկրին անօրեն, արյունարբու և գազանաբարո եկիմացիների զորքի տիրելու մասին, ապա շառաչյունով, ինչպես արծիվն է սլանում հավքերի երամի ետևից, եկիմացիների թագավորը, սուլթան կոչեցյալը՝ Տուղրուլ[6] անունով, ձիարշավեց ու եկավ հասավ Անի մայրաքաղաքը, պաշարեց այն, գրավեց և ենթարկեց սրածության։ Արյունահեղությունից ռռոգվեց գետինը, ինչպես հեղեղների ժամանակ։ Բազում ականատեսներ ասում էին, թե արյունը ծծկեր երեխաներին գլորում հասցնում էր քաղաքագռան մոտով հոսող գետին։ Նույն ձևով ինչ-որ ներքինի մի մարդ, Սրահանգ անունով, ժանտ ու ապերասան, սատանայի փութաջան արբանյակ, արյունարբու և գիշակեր, եկավ և ավարի մատնեց Վասպուրական երկիրը, և հասնելով մինչև Վան ավանը, պաշարեց այն, ենթարկեց սաստիկ տառապանքների, մատնեց սրածության, այրեց բնակարանները։ Նույնը կատարեց նաև Գնունյաց գավառի[7] Արճեշ քաղաքում։ Եվ քրիստոնյաներին ապաստանի տեղ չմնաց, բացի անմատույց Ամյուկ ամրոցից և աստվածարնակ Աղթամար կղզուց, որոնք վայելչագեղ են ու պաշտպանված, պարսպավորված խորխտ կոհակներով։ Սրանց ժամանակ կատարվեց սաղմոսերգու Դավթի խոսքերը՝ թե՝ «ուրախ կդառնան կղզիներն ու բոլոր նրանցում բնակվողները»*։ Եվ Սողոմոնի պատվիրանի համաձայն, սրանք հրճվեցին ու բերկրեցան, ինչպես սիգաքայլ աքաղաղը անտառում և հոտի առջևից ընթացող նոխազը կամ թագավորն իր զորքի մեջ, սրանք նույնպես երևելի և փառավոր գտնվեցին աշխարհում։ Տերն աստվածապահ և անմատույց այս ամրոցների տեր ու տնօրեն ընտրեց Ամյուկի կողմերից, Արծրունյաց տոհմից՝ Սենեքերիմ թագավորի ազգակից ինչ-որ մի մարդու, Աբդլմսեհ անունով, որը մնացել էր, ինչպես կայծակը հրեղեն փայլատակումների մեջ։ Այս ծովածուփ ու վտանգավոր ալեկոծության մեջ աստծո ամենազոր աջը նրան պաշտպանում էր նավաբեկությունից։ Եվ ինչպես տերն ընտրեց Նոյին ու նրանից աճեցին ու բազմացան բոլոր ժողովուրդները, կամ ինչպես աստված ընտրեց ու օրհնեց Աբ-

* Հմմտ. Սաղմ. ՂԵ, 1։

բանամին, նրանից ծնվածներին և ինչպես օրհնեց մեծն Դավ-
թին ու նրա զավակներին, նրանց զորացրեց անպարտելի զո-
րությամբ, նույնպես և աստված ընտրեց սրան՝ գլխավոր կյու-
րապաղատին, ամեն իմաստության տեր Աբդլմսեհին, որդուն
մեծ իշխանի և սուրբ մարտիրոսի՝ Թոռնիկի, որը տիրոջ ծը-
նընդյան և մկրտության մեծ տոնի օրերին բազում ընտրովի
մարդկանցով արժանացավ մարտիրոսության պսակին Մո-
կաց գավառի Ատիճանս[8] գյուղում։ Իսկ նրա որդին զորացավ
աստծո շնորհատուր պարգևներով, լցվեց իմաստությամբ ու
սուրբ հոգով։ Տերը նրա վրա լցրեց յոթնապատիկ շնորհներ՝
գիտության, աստվածապաշտության, զորության, իմաստու-
թյան, խելքի ու հանճարի ոգի, համակեց նաև աստծո հանդեպ
երկյուղածության ոգով։ Եվ նա դարձավ իր տոհմում ամե-
նից բարձրը։ Հեզ էր ու խոնարհ, առատաձեռն, ողորմած, ա-
ղոթասեր, սրբասեր, այրիներին ակնածող, որբերին խնամա-
ծու նենգությամբ չերդվեց իր ընկերոջ դեմ, սուտ տեղ չգտավ
նրա շուրթերին։ Գիշեր ու ցերեկ հանապազ մտածում էր տի-
րոջ հավատքի մասին։ Անձով վայելուչ էր, մեծաշուք, բարձ-
րահասակ, գանգրահեր ու գեղեցկատեսիլ, քաղցրախոս, ինչ-
պես տատրակը։ Կնության էր առել դստերն Արևելյան դուկ[9]
Գրիգորի, որը մեծաշուք ու տիեզերական իշխանաց իշխա-
նի՝ Տաղկոտն[10] ու Կոզովիտ գավառների, Անգեղտուն[11] մեծ
ավանի տեր Ալուզի թոռն էր։

Քրիստոսի այս սուրբ գառը, որի անունն էր Մարիամ, ազ-
գատոհմով տիկնանց տիկին էր, սնվել էր սրբությամբ, աստ-
վածապաշտությամբ և տիրոջ հանդեպ երկյուղածությամբ։ Իր
անվանակոչությամբ նա միացել էր աստծո սիրուն և ավելի
բարձր գտնվեց, քան բոլոր սրբերը։ Գթասիրտ էր ու ողորմած
ամենքի հանդեպ, հաստատ իր հավատի մեջ, զգոն ու զգաստ,
ոչնչով ետ չէր մնում սուրբ թագուհիներից։ Աղոթասեր էր
աղքատասեր և հանապազ ծառայում էր սուրբ կաթողիկեի
սրբազան ու գեղապաճույճ եկեղեցիներին և սուրբ խաչի գե-
գայանծ անվանակոչությանը, քանզի աստված նրան ընտրեց,
և ցանկացավ որ բնակվի այնտեղ։ Եվ պահեց աստվածային
գանձը՝ մեր սուրբ լուսավորչի՝ Գրիգոր Պարթևի աթոռը,
աստվածային ու արբեցնող խորհրդի սեղանը, մեջքի սուրբ
գոտին և ժողովրդին հովվող տիրոջ ամենազոր աջի գավազա-



նը, որ բարձր էր, քան երկու մեծ մարգարեների՝ Մովսեսի ու
Ահարոնի գավազանները, ինչպես նաև սուրբ կույս Հռիփսի-
մեի աշխատասեր ոտքերի հողաթափերը, սուրբ արյամբ
ներկված փողպատը և առաջին կյուրապաղատի ազգակցի
ու անվանակցի, Աբդլմսեհի տղայի՝ սուրբ նահատակի բա-
զուկը և մարտիրոսների այլ մասունքներ, այլև ոսկով և մար-
գարտով ընդելուզված տերունական խաչը, որի վրա կա-
թել էր փրկչի արյունը, և որը տերը տվել էր սուրբ և երջա-
նիկ հայրապետի, արքեպիսկոպոսի՝ տեր Դավթի ձեռքը։ Այն
ցեռես կոչվում է Ասպարանից սուրբ նշան[12]։ Տեր Դավիթն
ազգակից էր առաջին կյուրապաղատին։ Սրանք սուրբ ու տի-
րոջից ընտրված սերունդներ էին։ Նախապես սուրբ հոգին
Վասպուրական երկրի տնօրեն ընտրեց Սենեքերիմի ազ-
գակցին՝ Խեղենեկ անունով, Արծրունիների թագավորազն ցե-
ղից։ Սա սերեց Թոռնիկ իշխանին, որը կտրիճ ու պատերազ-
մող տղամարդ էր և արիություն [պահանջող] գործերում՝
քաջ։ Սուրբ և բոլոր կողմերով գովական էին նույնպես և իր
եղբայրները՝ գերերջանիկ ու առաքինի հովիվներ տեր Դա-
վիթը և տեր Ստեփանոսը՝ եկեղեցու վսեմ պսակները, ինչ-
պես և մեր լուսավորչի անվանակից տեր Գրիգորը։ Սրանք
փայլում էին տիեզերքում, ինչպես արեգակն աստղերի մեջ։
Թոռնիկից ծնվեց մեծ իշխան Թադևոսը, որը պատերազմում
ընտիր տղամարդ էր։ Աստծո օժանդակությամբ և իրենց քա-
ջությամբ՝ հարաժամ հարձակվող թշնամիներին թույլ չէին
տալիս մուտք ունենալու իրենց գավառները։ Թադևոսի որդու
[անունը] ևս Թոռնիկ էր։ Նրանից ծնվեց սուրբ և բարե-
պաշտ Աբդլմսեհը, որն իր աստվածային իմաստնությամբ
ու գիտությամբ առավել եղավ իր բոլոր նախնիներից։ Նրանք
արի էին պատերազմներում, իսկ սա լի էր իմաստնությամբ,
խելացիությամբ, խաղաղությամբ էր վարում իր կյանքը։
Որովհետև սրա ժամանակ կատարվեց տիրոջ պատգամը, թե
«Ժողովուրդը՝ ժողովրդի, թագավորությունը՝ թագավորության
վրա պիտի ելնեն և տեղ-տեղ կլինեն սով, ժանտախտ ու երկ-
րաշարժեր»*, արեգակի, լուսնի և աստղերի վրա կլինեն
նշաններ, իսկ երկրի վրա պիտի տագնապեն անհավատ ժո-

* Մատթ., Իդ, 7։

ղովուրդները»*։ Սրա ժամանակ, 546 [1097] թվին Ֆռանգների արի ժողովուրդը ելավ և անհավատներից ազատեց սուրբ քաղաք Երուսաղեմն ու բազում այլ աշխարհներ։

Եվ մեր արևելյան երկիրը տառապեց անօրենների ձեռքից, այլազգիների հարաժամ հարձակումներից, որոնք ինչպես հեղեղի հորձանքը, պատում էին երկրի երեսը, կամ ինչպես խիտ ամպերը, որ իրար էին խառնվում քամիներից ու հրի փայլատակումներից մութ գիշերին։ Մեր փախուստը եղավ ձմռանը և շաբաթ օրը, ըստ տիրոջ հրամանի։ Եվ քրիստոնյաների համար չգտնվեց հույս ու ակնկալություն, բացի աստվածասեր և ընտրյալ թագավորազն արքայից՝ առաջին կյուրապաղատից և մեծն ու քաջ նահատակ Վարդան Մամիկոնյանի ազգակցից, քանզի սուրբ հայրերի ու ազգակիցների աղոթքներով ու խնդրանքով տերը զորացրեց իր օծյալին։ Որովհետև նա իր կյանքը վարում էր խաղաղությամբ և ամենքի հետ հնարում էր խաղաղություն, հարկային պետքերի համար տալիս էր իր կյանքն ու ստացվածքը և չէր ջանում իրեն առնել այն, ինչը տրվելու էր հարկապահանջներին։ Իր իշխանությունը խստությամբ չէր վարում, ո՛չ էլ ահով ու սպառնալիքներով և ո՛չ էլ վաշխառությամբ, այլ ամենքին խնամում էր, սփոփում և գթում, ինչպես հայրը որդիների հանդեպ։ Որովհետև վաղուց հետե սովորել էր այն խոսքերը, թե՝ «Եղեք գթասիրտ, ինչպես ձեր երկնավոր հայրն էր գթացող»**։ Սրան ծնվեցին յոթ ուստրեր և հինգ դուստրեր։ Սրա որդիներից տերն ընտրեց ինչ-որ մեկին՝ Դավիթ անունով, նման Հեսսե Բեթղեհեմացուն[13], որի որդիներից տերն ընտրեց Դավթին։ Եվ օրհնեց [նաև] սրան անանց օրհնությամբ, մինչև հավիտյանս հավիտենից։

Սա նմանվեց մեծ Դավթին և առավել գտնվեց, քան նա, քանզի տերը կամեցավ մեծացնել իր եկեղեցու զորությունը։ Սա կրթվեց Եկեղեցու, աստվածային գանձերի հովանու տակ, ինչի մասին ասացինք վերևում և որոնք պահված էին աստվածաբնակ Աղթամար կղզում։ Սա նմանվեց Սամուել[14] մարգարեին, որը կրթվեց տիրոջ տաճարում և դարձավ Հեղի

* Ղուկ., ԻԱ, 25։

** Ղուկ., Զ, 36։



քահանայապետի փոխանորդը։ Բայց սա ավելի բարձր գտնվեց նրանից։ Մանկությունից կրեց խոնարհության լուծը, պահեցողությամբ, աղոթքներով, խստամբեր ճգնությամբ, արիությամբ և ժուժկալությամբ պատերազմեց բանսարկուի դեմ, զինավառվեց, քաղցով, ծարավով և տքնությամբ հաղթեց չարահնար թշնամուն, ըստ երկնաքաղաքացի մարդու՝ Պողոսի առաքելական պատգամի, թե՝ «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ իշխանությունների ու պետությունների, այս խավար աշխարհի տիրակալների և երկնի տակ եղող չար ոգիների հետ»*։

Իսկ սա նահատակության և կուսության ապացույցներ տվեց, քանզի ովքեր կուսությամբ վարեցին իրենց կյանքը, գերազույն գտնվեցին, քան հրեշտակները։ Սա առ ոչինչ համարեց այս աշխարհն ու սրա փառքը, կյանքի վայելչությունը, քանզի հանապազօր սուրբ մարգարեներից լսում էր, թե՝ «Մարդը նման է խոտի և ցցված ծաղկի»**, անցավորը նման է նանրի և վարձկանի առօրյա վարձի, ունայնության։ Սա իր կյանքը վարեց ամեն տեսակ առաքինի գործերի, ըստ տիրոջ պատգամի, որ պատվիրեց իր սրբերին, ասելով. «Ո՛չ թե դուք ընտրեցիք ինձ, այլ ե՛ս ընտրեցի ձեզ»***։

Սա նմանվեց Մելքիսեդեկին[15], որը կանխապես ընտրվեց [սուրբ] հոգուց՝ զգաց կենարարին, բաշխեց իր մարմինն ու արյունը և ընթացավ Աբրահամ նահապետին ընդառաջ, երբ գալիս էր պատերազմից։ Սա նմանվեց Հեսուին՝ Նավեի որդուն, քանզի նա սուրբ և արի կույս էր, որն իր գայիսոնով հովվում էր ավետյաց երկրի աստծո ժողովրդին։ Սա նմանվեց Ահարոն[16] քահանայապետին, որի պատմուճանը ընդելուզված էր տասներկու մարգարտյա ակներով, ըստ սուրբ առաքյալների թվի և Քրիստոսին հավատացող տասներկու ցեղերի։ Սա նմանվեց Եղիային[17] աստվածատես մարգարեին, որն իր մոր որովայնից կերակրվում էր հրեշտակների հրով և կուսության շնորհիվ երկինքը փակեց երեք տարի և վեց ամիս ու երկրի վրա չտեղաց ցող, մինչև որ նա չխոսեց։ Սա նմանվեց մեծն

* Եփես., Զ, 12։

** Եսայ., Խ, 6։

*** Յովհ., ԺԵ, 16։

մարգարե Հովհաննեսին[18], Զաքարիայի որդուն, որը հրեշտակապետից լսեց Հովհաննեսի ծննդյան մասին ավետիսը։ [Հովհաննեսը] աստծո միածին որդուն մկրտեց Հորդանանում։

Սա նմանվեց Հովհաննեսին[19], Զեբեդիայի որդուն, որն իր կուսության շնորհիվ անվանվեց որոտի որդի և բարձրությունից որոտաց աստծո պատգամը, ընկավ տիրոջ լանջով և մաքրվեց, ինչպես ոսկին հրի մեջ։ Սա նմանող եղավ սրանց՝ սրբությամբ և կուսությամբ։ Սրան հույժ առատաձեռն պարգևատուից՝ աստծուց տրվեցին շնորհներ՝ քահանայության, եպիսկոպոսության, արքեպիսկոպոսության, և կաթողիկոսության պատիվներ։ Տերը նստեցրեց նրան մեր սուրբ լուսավորչի՝ սուրբ Գրիգորի աթոռին և գտնեց նախնյաց սուրբ հայրերի՝ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի, Ներսեսի և Սահակի կարգը։ Քանզի կանխապես սուրբ հոգին սուրբ Սահակի տեսիլքով ցույց էր տվել Հայաստան աշխարհի աղետալից անցքերը, թագավորությունից զրկվելը, օտար իշխաններին ծառայելը և հակառակ լինելը ճշմարտությանը, ինչպես Սուրմակն ու Շմուելը[20], որոնք դեմ էին աստվածատուր շնորհներին։ Նորոգել տվեց տեսիլքի գիրքը, որտեղ ոսկով և կարմիր թանաքով գրված էր սրբերի երկինք համբառնալու մասին, նաև [տեսիլքի] կես մասը, որը գրված էր սև թանաքով, բայց ջնջվել էր ճշմարտության թշնամիներից։ Նորոգել տվեց նաև մյուս օրինակը, որ ուներ մեր սուրբ հայրապետը՝ աստծուց պատված տեր Դավիթը՝ տիրոջ ընտրյալն ու օծյալը, որ նստում էր մեր սուրբ լուսավորչի աթոռին։ Քանզի առաջին սրբերը նմանվեցին իրենց նախնյաց, սա նույնպես նմանվեց իր նախնիներին՝ սուրբ հայրապետներին և մարտիրոսներին, քանզի հայրապետների աղոթքներով ու խնդրանքով և սուրբ մարտիրոսների՝ Վարդանի ու յուրայինների, Թոռնիկի և յուրայինների, սուրբ Հայրապետ Դավթի ազգակիցների արյունները հեղելու պատճառով տերը սրան ավելի ու ավելի զորացրեց։

Իսկ սրա մյուս որդին՝ եղբայրներից ամենակրտսերը, Ստեփաննոս անունով՝ ըստ հայրական տոհմի, իսկ մորական անվանակոչությամբ իր բարեպաշտ մայրը՝ տիկնաց տիկինը, նրան կոչեց պապի անունով Ալուզ, որն իր առաջադիմության շնորհիվ սուրբ թագավորներից ընդունեց պատվանուն։ Սա լրացրեց հորական և մորական պապերի պակասությունը, երեխ-



լի գտնվեց ամբողջ ազգատոհմի մեջ։ Ինչպես Իսահակն օրհնեց Հակոբին, և տերը լսեց նրան և օրհնեց Հակոբին նրա հոր բերանով, քանզի հայրերի օրհնանքները հաստատ են պահում որդիներին, նույն կերպ մեծ իշխան Ալուզն օրհնվեց աստծուց և իր հորից՝ Աբղլմսեհից, քանզի աստվածասեր մարդ էր, բարեպաշտ և իր ծնողներին հնազանդ, սովորել էր աստծո պատվիրանները, թե՝ «պատվիր քո հորը ու մորը»* և այլուստ լսել էր, որ՝ «Անհնազանդ որդին կկորչի»**։ Եվ հնազանդվելով, նա հեռու մնաց ամեն փորձությունից։ Տերը հաստատեց սրան իր հոր աթոռին, ինչպես Սողոմոնն իր հոր՝ Դավթի աթոռին։ Ինչպես որ նրա օրոք տերը խաղաղություն արեց նրա թագավորության համար, նույնն արեց նաև սրա իշխանության համար։ Իսկ մեծ ու ամեն իմաստության տեր Աբղլմսեհ կյուրապաղատը բաժանեց իր հայրենիքը, որդու՝ Ալուզի ձեռքը տալով երկնանման և անառիկ Ամյուկ ամրոցը, քանզի նա կարող էր դիմակայել իսմայելացի անօրեն ցեղերին։ Նա առավել եղավ իմաստությամբ, քան իր բոլոր նախնիները։

Եվ ամենքին հայտնի և աստվածասեր կյուրապաղատ Աբղլմսեհն իր կյանքը վարեց խաղաղությամբ, տեսավ իր որդիներին փառավոր և ամեն ինչով գոհ։ Մեկը զորացավ հոգևոր և մարմնավոր փարթամությամբ և նստեց հայրապետության աթոռին։ Լցված էր աստվածային պատվիրանների պահպանմամբ, [միտքը] սևեռել էր աստվածային օրենքին։ Իսկ մյուսին տեսավ իշխան [դարձած], փառավորված, բարեբախտ ու հաջողակ բոլոր գործերում։ Մյուս ուստրերին և դուստրերին նույնպես տեսավ փառքի ու պատվի մեջ։ Տեսավ նաև իր թոռներին և երջանկացավ տիրոջից։ Իսկ ինքը բարվոք ծերության մեջ վախճանվեց և թաղվեց նույն աստվածաբնակ կղզում՝ Աղթամարում, Սուրբ Խաչ վանքի դռանը։ Նա արժանի եղավ տիրոջից առնելու, վերստին որդեգիր լինելու հանապազորյա ապրուստը, շնորհիվ իր հարազատի՝ Հայոց կաթողիկոս տեր Դավթի սուրբ և անմահ պատարագի, որ անխափան մատուցեց ի բարեխոսություն իր աստվածասեր ծնողների։ Հայոց 570 [1121] թվականն էր, երբ վախճանվեց Աբղլ-

---

* Մարկ., Է, 10, Ղուկ., ԺԸ, 20, Եփես., Զ, 2։

** Առակ., ԺԳ, 1։

մահՀ թագավորը։ Նրա սրբակրոն կինը ամուսնու մահից հետո ապրեց երկու տարի ու բարվոք հանգստությամբ փոխվեց Քրիստոսի մոտ և ավելացավ իր նախնիներին, դրվելով նույն տապանում։ Իսկ իր որդիներին հանձնեց աստծո ողորմածությանը։

Սրանց մահից հետո հյուսիսային հողմերն սկսեցին ավելի ուժգին փչել, ցրտաշունչ քամիներով ու սառնամանիքներով հանդերձ, պակասեցնելով երկրի դալար բույսերը։ Եվ կատարվեց աստվածային հրամանը, թե՝ «Թափվեցին անձրևներ, հորդացան գետերը, փչեցին հողմերը»*, բայց չկարողացան խախտել փառահեղ Աշոտ իշխանի հավատի մեծ վեմը, քանզի մնաց միայնակ Հայաստան աշխարհում, ինչպես նավը ծովի մրրկալից ալյաց մեջ, օժանդակություն չունենալով ո՛չ ոքից՝ ո՛չ թագավորներից, ո՛չ իշխաններից, ո՛չ մեծամեծներից և ո՛չ էլ նահապետներից, զրկվեց ստացվածքից և թափուր մնաց ամեն ունեցվածքից։ Ավերված պարիսպներն ու շենքերը, որ առաջներում անհոգության էին մատնվել, սա վերստին նորոգեց բազում չարչարանքներով։ Եվ երկրին վրա հասան չարաղետ օրեր, քանզի կատարվեց տիրոջ ասածը թե՝ «Այնպիսի նեղության օրեր են լինելու, որպիսիք երբեք չեն եղել»**։ Բայց սրան թիկունք եղան շնորհներն ու իմաստությունը՝ բարձրյալի օգնությամբ, ինչպես Եզեկիել արքային։ Իրիկունը դարձրեց կեսօր և զորացավ աստծո օգնությունից, եռանդ ցույց տվեց աստծո շնորհներով. լցվեց իմաստությամբ, կյանքն անց կացրեց ոսկե-պես հնարներով, հաշտեցրեց իր հետ անհաշտ թշնամիներին՝ ելիմացիների ցեղին։ Նրանցից առավ պարգևներ, իշխանություն, փառավոր ու երևելի դարձավ անհավատների աչքին, իր մեծ իմաստությամբ։ Իր ինչքն ու ստացվածքը չխնայեց, այլ զվարթ սրտով իր վաստակները տվեց քրիստոնյաների փրկության համար։ Այլազգիներին հարկ էր տալիս և կարգում հեծելազոր, նրանց տալիս ռոճիկ, ամենքի համար ձեռք բերում խաղաղություն, ըստ այնմ, թե՝ «Խնդրի՛ր խաղաղություն և գնա նրա ետևից»***։ Աշոտը նմանվեց մեծ նահա-

* Մատթ., Է, 25։
** Մատթ., ԻԴ, 21։
*** Սաղմ., ԼԳ, 15։



պետ Նոյին, իսկ տապանին՝ իր ամրոցը, քանզի նա իր մոտ ուներ ընտիր երեներ և այլ կենդանիներ, իսկ սա բոլոր գավառներից իր մոտ ուներ սեպուհներ, ազատներ, նախարարների, մեծամեծների և ազատների որդիներ։ Փայլում էր աշխարհում իր աստվածասեր հեծյալներով, ինչպես կամարի մեջ բոլորած լուսինը, կամ արեգակն ամառ ժամանակ։ Աստված նրան տվեց լուսածագիկ մի տղա, լույսի շառավիղ, որն անվանակից էր իր պապին՝ Խեղենեկին։ Նա իր գեղեցկությամբ, վայելչությամբ բոլորի աչքին հաճելի ու սիրելի էր երևում, քանզի նրա հայրը՝ մեծ իշխան Աշոտը, նույնպես գեղեցիկ էր տեսքով, բարձր հասակով և կարող զորությամբ։

Աստծո միածին որդին սրան դարձրեց մեր փառք ու պարծանքը, տալով նրան շնորհներ՝ ըստ իր հորական նախնյաց Արծրունիների։ Սա զորացավ անպարտելի ուժով, որովհետև աստված տվեց նրան անմատույց Ամյուկ ամրոցը։ Նա իր ամենիմաց գիտությամբ խաղաղություն ստեղծեց ամենքի հետ, հուսալով թերևս կխաղաղանա իր և յուրայինների կյանքը խռովությունից և վրդովմունքի ծփացող ալիքներից։

Սրա [կյանքի] խաղաղ տարիներին խառնաշփոթվեց մեր ամբողջ աշխարհը։ Թեպետև ես Վասպուրականի երկիրը չէր խաղաղանում, ավելի էր նեղվում տարակույսներից ու տագնապներից, բայց սրան և իր ամրոցին պահպանում էր աստծո աջը։ Եվ ինչպես Հովսեփը կերակրեց ամբողջ աշխարհը եգիպտացոց սովի ժամանակ, նույնպես և սա պատճառ եղավ Վասպուրական երկրի շենության համար։ Նա այրիների հայրն էր, փախստականների ապաստարանը, գերյալների գերեդարձը և բոլորի երեսներից արտասուքներ սրբողը։ Նա բաղձալի էր բոլոր տնանկներին և ցանկալի՝ կույսերին։ Նրա անունը բարեհռչակվել էր երկրի մի ծայրից մյուսը և գովաբանվում էր բոլոր լեզուներով։ Նա սուրբ եկեղեցու հավատի հաստատությունն էր, փառքն ու պարծանքը և մայր ամենայն աստվածապաշտության։ Նա աղոթքներով ու խնդրանք-պաղատանքներով իրենից առավել՝ աշխարհի համար խնդրեց փրկություն, հանգարտ էր ու հեզ ժողովրդի մեջ, զորքերին ու ավագներին ցույց տալով և ամեն տեսակ առաքինությունների հայրն էր։ Նա բավականանում էր իր երեսի քրտինքով և ձեռքի վաստակով։

Նա ստացավ Թովմայի մատյանը՝ այս պատմագիրքը և նորոգել տվեց վերստին, ի հիշատակ իրեն, իր բարի ծնողների և իր որովայնի աստվածատուր պտղի՝ Խնդենեկի, քանզի արդարության պտղից աճում է բարյաց ծառը։

Նա իր լուսավոր ծաղկով և պտղով ցանկալի եղավ ամենքին, քանզի իր դեմքի վայելչությամբ նման էր առավոտյան ժամին ծագող արուսյակին։ Կամ ինչպես անուշահոտ վարդ՝ պես-պես գեղեցկությամբ, որը ցույց է տալիս իր գույները գարնան ժամանակ։

Նրա հիշատակը թո՛ղ օրհնվի, և սրբերի աղոթքները թո՛ղ նրա վրա գան. ամեն։

## [ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ]

Փառք երեքսրբյան, զուգակշիռ և համագո սուրբ երրորդությանը և միաստվածությանը, որն իր անբավ մարդասիրությամբ, առատաբուխ բարերարությամբ տվեց զորություն՝ տկար, ողորմելի, եղկելի ու մեղսամած անձիս, հասնելու սույն ավարտին։ Գոհությո՛ւն և հավետ փա՛ռք [աստծուն]՝ երկրպագությամբ հանդերձ, այժմ, միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Ամենակալ հայր աստծո, միածին որդու՝ Հիսուս Քրիստոսի և արդար սուրբ հոգու շնորհիվ այստեղ իր լրումին հասնելով, ավարտվեց գեղեցկահարմար այս պատմությունը, որ ստուգությամբ արել է անհաղթ գիտնական վարդապետը՝ Թովման, սկսելով Ադամից մինչև Նոյ և այնուհետև աստիճանաբար վերևից ի վար գալով՝ մեկ առ մեկ, բազում աշխատանքով, ճշգրտաբար եկել հասել է Արծրունյաց ազգատոհմին, մեկ առ մեկ շարադրել տոհմի, նրա գործերի, դրանց պատճառների մասին և թե ինչպես նրանք բազում ջանքեր թափեցին ու տառապանքներ կրեցին, ընդդեմ այլազգիների պատերազմելով հանդերձ և վերացրեցին նրանց չարագործությունները բազում տեղերում, որչափ որ հասավ իրենց կարողությունը։ Առավել ես

սատծուց պսակված, բարեպաշտ ու ամեն իմաստության տեր Հայոց Թագավորը՝ Գագիկը, որն իր իմաստությամբ, ուղղափառ վարքով և աստծո կամքով տիրեց բազում գավառների, ինչը հիշատակված է այստեղ, և իր ամբողջ կյանքի ընթացքում խաղաղությամբ պահեց [երկիրը] թշնամի հրոսակներից։ Պատճառ եղավ եկեղեցիների, առավել ևս մեր գերահռչակ ու հրաշագործ սուրբ եկեղեցու՝ Աղթամարի Սուրբ Խաչի շինության, որի հովանու տակ շարադրվեց այս պատմությունը Հայոց 752 [1303] թվականին, Ղազանի՝ աշխարհակալ թագավորության ժամանակ, հրամանով ու ծախսերով աստծուց կարգված, երջանիկ ու երիցս երանելի, ամեն իմաստության տեր Հայոց հայրապետի՝ տեր Զաքարիայի, որը հույժ բարի է, առատասիրտ, աղքատասեր, լցված աստվածային պարգևներով, ինչպես նաև սուրբ գիտականի, արդյունավոր վարդապետի և արքեպիսկոպոսի աստիճանի արժանացած տեր Ստեփաննոսի խնդրանքով, որն արևելից հույսն է և Սյունաց մեծ տան աթոռակալը։ Եվ եթե նախնիներով քննենք նրան, արևելից կողմանց իշխաններից և նրանց հպատակվողներից ոչ ոք բարձր չէ նրանից, քանզի ամենքին քաջահայտ են նրա ազգատոհմն ու նախնիները։ Եվ նա նրանց մեջ այնպես փառավոր է ու պայծառ, ինչպես արեգակն աստղերի մեջ։ Նա աստվածային սիրո համար խնդրեց այս Պատմությունը, աստծուց ընդունված սրբասեր և սուրբ Լուսավորչի աթոռին բազմող մեր տեր Զաքարիայից։ Իսկ սա մեծ փութով օրինակել տվեց այն՝ նրա խնդրանքի համար։ Այս գործին առավել ևս կամեցող եղավ ամեն իմաստության տեր, բարեմիտ, հեզ ու խոնարհ Ամիր-Դուրգենը՝ տեր Զաքարիայի հարազատ եղբայրը։ Տեր աստված թող նրանց երկար կյանք տա, պահի առանց փորձանքի՝ հոգով ու մարմնով, տեսանելի և աներևույթ թշնամիների բոլոր որոգայթներից, ամբողջ իրենց կյանքում. ամեն։

Իսկ ես, ամեն մեղքի տերս, անարժանս, գրիչների ու կրոնավորների մեջ անհիշելիս՝ Դանիել անունով, իմ տկար տեղով հանձն առա գրել սա, մեծ ու պանծալի Աղթամարի Սուրբ Խաչի դռանը, որը հիշեցինք վերևում։ Եվ դարձյալ, երեսի վրա ընկած աղաչում եմ բարի ընթերցողներից, չմեղադրել գրածներիս սխալների համար, եթե ավելի կամ պակաս չափով կգտնվեն այստեղ, եթե մի կետ, տող կամ ստորակետ և կամ



որևէ բառ՝ Խ-ով կամ Հ-ով*, քանզի գիտունները քաջ գիտեն, որ հին գրքերում այսպիսի բառերի հանդեպ ոչ մի հոգ չի տարվել։ Իսկ ես, անհմուտ լինելով սրանց, գրեցի այնպես, ինչպես տեղյակ էի եկեղեցական գրքերից այդ բառերի մասին, իսկ ինչը [գրքերից] դուրս էր, չգիտեի, թե ինչպես է [գրվում]։ Ձեզանից խնդրում եմ, որպեսզի ըստ ձեր աստվածասեր կամքի, մեզ և մեր ծնողներին շնորհեք միայն «աստված ողորմին», որպեսզի դուք նույնպես գտնեք աստծո ողորմությունը, նրա անսպասելի գալստյան օրը։ Իսկ ինքը թո՛ղ օրհնյալ լինի, գովաբանվի ու փառաբանվի բոլոր արարածներից, մտածող և զգացող, այժմ և հանապազ, հավիտյանս հավիտենից. ամեն։

Դարձյալ աղաչում եմ սրտանց, տիրոջ մոտ հիշեցեք Սիմեոն պատվական քահանային, որն իր բազում արվեստներից մեզ սովորեցրեց միայն գրելը, ինչպես և նրա ծնողներին։ Իսկ Քրիստոսին ու մեր աստծուն փա՜ռք հավիտյան. ամեն։

Բոլոր այսպես կատարվածից ու գրածից հետո, ձեզ կտեղեկացնենք նաև այս, ո՛վ սիրելի որդիներ և հարազատ եղբայրներ։ Հայտնի դարձավ և աստվածային փառքով պարգևվեց մի այր, ինքն ազնվազարմ և նույնպիսի ծնողներից, դաստիարակված սրբությամբ ու արդարությամբ, որը հասել էր աստվածային սուրբ կտակարանի իմաստությանը, քրիստոսապաշտ դավանությամբ և ճանաչվում էր պարոն Սեֆեդին Արքայուն[2] անունով։ Սա որպես աստուց կանչված՝ առաջ բերվեց աստվածաբնակ և անառիկ մեր Աղթամար կղզին, որը սուրբ Գրիգորի՝ Հայոց լուսավորչի աթոռն է և գերապանծ ու հռչակավոր Սուրբ Խաչի բնակարանը։ Սրան հույժ սիրեց Խեդենեկ Արքայունը, իբր իրենց ծնված որդու, տվեց իր դուստրը սրան կնության և օրինավոր ամուսնության, Աղթամարի կեսը տալով որպես բաժին։ Բայց սակավ ժամանակ հետո, երբ Խենդենեկը ծերացավ, չքավոր դարձավ, ծախեց

* Ակնարկում է լեզվական այն իրողությունը, որ Խ և Հ գրերը լծորդվում են միմյանց Վանի բարբառում։ Վանեցին հային ասում է խայ, հացին՝ խաց և այլն։ Այս երևույթը նկատելի է այս երկասիրության մեջ՝ թե Թովմա Արծրունու, թե Անանունի մոտ, որտեղ հանդիպում ենք Ճահուկ-Ճախուկ, Բուհա-Բուխա, հարան-խարան և այլ բառաձևերի։

նաև [Աղթամարի] մյուս կեսը՝ վերստին պարոն Սեֆեդինին և տրամ որպես գին բազում ոսկիներ, իր նյութական պետքերի համար։ Սակավ ժամանակ հետո տեր աստվածը նրա որովայնին տվեց պտուղ՝ վայելուչ ու բարի զավակ՝ տեր Ստեփաննոսին, որը երբ հասավ ուսման, մանուկ հասակում [հայրը] ձեռնադրել տվեց նրան սուրբ Գրիգորի հայրապետական աթոռին։ Նա ապրեց 40 տարի՝ տարաժամ կյանքով ու սակավ ժամանակ [հետո] այս աշխարհից փոխվեց, թողնելով անմխիթար սգի մեջ իր հորը՝ պարոն Սեֆեդինին։

Բայց ամենքին ողորմացող աստված տեսավ սրա ջերմեռանդ սրտի ցավերն ու արտասուքները և տվեց նրան զավակներ՝ աստծուց օրհնված ու զուր եկած՝ հարազատ եղբայրների, հեզ ու հանդարտ Ամիր-Գուրգենին և իմաստուն Մանուկ Զաքարիային։

Եվ երբ հասավ պարոն Սեֆեդինի՝ իր նախնյաց ճանապարհով գնալու և այս աշխարհից փոխվելու ժամը, սա չհասցրեց իր ձեռքով հաստատել տեր Զաքարիային իր եղբոր՝ տեր Ստեփաննոսի աթոռին։ Ապա ստացավ աստվածային սուրբ գրքերի գիտությունը և հասու եղավ Հին ու Նոր կտակարաններին։ Ոչ ոք չուներ իրեն զորավիգ ու օգնական, բացի իր հարազատ Ամիր-Գուրգենը՝ իր հայրն ու հայրագլուխը և պարոն Կուրճիբեկն ու պարոն Նուրադինը՝ իր հորեղբայրները։ Սրանք աստծո կամքով հավաքվեցին միասին, կանչեցին սուրբ եպիսկոպոսների, վարդապետների ու բազում կրոնավորների և միասին աղոթելով՝ օրհնեցին ու ձեռնադրեցին տեր Զաքարիային իր հորեղբոր՝ տեր Ստեփաննոսի հայրապետական աթոռին։ Մեծ ուրախություն և խնդություն եղավ աստվածաբնակ Սուրբ խաչի աթոռում։ Սա իբրև անխախտելի վեմ և իբրև երկաթե պարիսպ ու պղնձե դուռ, ընդդիմակայում էր այլազգի չար ախոյաններին։ Սիրող եղավ բազում շինությունների և լցվելով աստվածային հոգով, Վասպուրական աշխարհում, Լիմ[3] կոչված կղզում կառուցեց գեղեցիկ ու լուսազարդ, գմբեթաձև տաճար՝ սուրբ Գևորգ զորավարի [անունով] զարդարելով բազում սպասքներով։ Շինեց նաև աղոթքի տներ, բնակության տեղեր, ապարանքներ և բազում կրոնավորների կարգեց ու հաստատեց սուրբ Գևորգ զորավարի տաճարի դը-



ռանը։ Նրանց աղոթքներով Քրիստոս աստվածը թող մեզ ողորմա. ամեն։

Դարձյալ իր հայրապետական աթոռի՝ Աղթամար կղզու մեջ, Սուրբ խաչի դռանը՝ [վանքի] ետևի կողմում, շինեց գեղեցիկ ու մեծանիստ տեղերով մեծ ժամատուն՝ ձմեռային օրերի համար։ Իսկ արևմտյան կողմում կառուցեց ամառնային [ժամատուն], որը մեծանիստ էր և կամարաձև, կրով ծեփված ու մաքուր։ Քարերը բերեց Խլաթի կողմերից, բազում չարչարանքներով, անդնդախոր ծովի վրայով։ Եվ ընդօրինակել տվեց, ի հիշատակ իր հոգու՝ գիրք, որ կոչվում է Տոնացույց, քանզի նրա մեջ են սուրբ առաքյալների, մարգարեների, հայրապետների, վարդապետների, զորավարների և կուսակրոնների ազգաբազում տոները։ Տեր աստված Հիսուս Քրիստոսը սրանց աղոթքներով ու բարեխոսությամբ թող ողորմա տեր Զաքարիային և իր հարազատ եղբորը՝ պարոն Գուրգենին ու նրա զավակին՝ տարաժամ հանգչած Սահմադինին և բոլոր ազգականներին. ամեն։

Շինեց նաև ամառային բնակության համար բազում վերնատներ՝ գեղեցիկ ու վայելուչ, այն ապարանքի վրա, որ մեծ պարոն Սեֆեդինն էր շինել իր զավակի՝ տեր Ստեփաննոսի համար։ Հավատով և հույսով հիմնեց նաև բազում այլ շեն ու անշեն տեղեր։ Սա աստվածային նախախնամությամբ մտահղանալով, իր սրտում ցուցաբերեց բարի մտադրություն. Թե՛ իմ մահից ու այս աշխարհից ելնելուց հետո ո՞վ պիտի առաջ քաշվի մեր հայրապետության աթոռին, եթե ոչ մեր ազգականներից ու զավակներից»։ Այնժամ առաջ բերեց իր հոգեորդուն՝ սքանչելատես ու խելացի մանկանը՝ տեր Դավթին, որը իր հարազատ եղբոր՝ պարոն Գուրգենի որդին էր։ Եվ բազում եպիսկոպոսներով, կրոնավորներով, քահանաներով, ժողովրդի բազմությամբ, աղոթքներով, ժամերգությամբ օրհնեցին ու ձեռնադրեցին տեր Դավթին [Զաքարիայի] աթոռի ժառանգ և աթոռակից։ Ծնողները, ազգականները և առհասարակ ամենքը շատ ցնծացին։ Իսկ սա՝ մեր տեր Զաքարիան, ծագեց ինչպես առավոտյան արեգակը և հալածեց ձմեռային սառնամանիքը և այլազգիների՝ Քրիստոսի խաչի թշնամիների սառնությունը։ Սա ընդդիմակայեց չարաշեղ մրրիկներին, Ալի փա-

ջային[4] և Նրա նման ուրիշների, որոնք հոխորտում էին սուրբ եկեղեցիների ու քրիստոնյաների հավատքի վրա։ Սա խափանեց բազում հարկեր ու տուրքեր, որ գրված էին վանականների ու կրոնավորների վրա։ Կրեց բազում ճգնություններ ու տառապանքներ, վիրավորվեց մեծ վերքերով, հոգու և մարմնի վրա ընդունելով բազում սպիներ։ Քանզի իր քեռորդին՝ տեր Ստեփաննոսը իր ազգականին՝ քրոջ դստերը տարավ [կնության] տվեց այլազգիներին, իր կաթը խառնելով նրանց արյան հետ։ Եվ բազում վանքեր ու եկեղեցիներ ընկան մեծ սգի, տրտմության ու վարանումի մեջ, քանզի [այլազգիները] տիրեցին առհասարակ Աղթամարի գեղեցիկ ու անառիկ կղզին և բազում այլ տեղեր, ապարանքներ և ագարակներ՝ գրով և անգիր։ Այսպես կատարվելուց հետո, Հայոց 775 (1326) թվականին վախճանվեց և այս աշխարհից փոխվեց սրբազան հայրապետը՝ տեր Զաքարիան, որը բարի խոստովանությամբ և ուղղափառ դավանությամբ ավանդեց իր հոգին, փոխվեց այս անցավոր, կենդանիների աշխարհից վերին Երուսաղեմ՝ արդարների կայանը։ Ողորմածն աստված նրանց և բոլոր սրբերի աղոթքներով թող դասակից ու մասնակից անի տեր Զաքարիային սուրբ հայրերի և մեր առաջին ու վերջին հայրապետների հետ։

Սակավ ժամանակ հետո, Ստեփաննոսն ու [իր քրոջ դուստրը]՝ Շամշա խաթունը վախճանվեցին, վերացան այս աշխարհից ու գնացին այնտեղ, ուր են ճշմարիտ դատախազները, քննողները և խոսքերի, գործերի ու հղացումների համար [հաշիվ] պահանջողները։ Այս կատարվելիս մենք չունեինք թագավոր, իշխան, դատավոր, վերակացու, առաջնորդ կամ փրկող ու ապրեցնող, որ ազատեր մեզ այլազգի ու չար թշնամիներից։ Քանզի [մեզ] վրա դրեցին գանձերի, ոսկու և արծաթի բազում հարկեր և ով որ առաջ քաշվեր հայրապետական աթոռին, պիտի վճարեր փոխարենը բազում հարստություն, ապա թե ոչ՝ այլազգիները կտրեին վանքերին ու եկեղեցիներին, կրոնավորներին, քահանաներին, միանձներին, կուսակյաններին, ռամիկներին և Քրիստոսի ամբողջ ժողովրդին։ Այսպիսի աղետներ, տագնապներ ու մեծ վտանգներ տեսավ տեր Դավիթը՝ Հայոց հայրապետը, որը ձեռնադրվեց իր եղբորից՝



տեր Զաքարիայից, քանզի այս ժամանակ իր հայրը՝ մեծ պարոն Ամիր-Գուրգենը իր անդրանիկ որդու՝ Ամիր-Սահմադինի հետ, փոխվել էին այս աշխարհից և ո՛չ ոք չկար, որ օգներ կամ թիկունք լիներ։ Այնժամ տեր Դավիթը ծագեց, իբրև լուսապայծառ աստղ, միջօրեի արև, կայծակներից փայլատակած ջահ կամ ինչպես կեսգիշերին երևացող լույսի ցոլք, գերազանց ու գեղեցիկ կազմվածքով, մարմնով ուժեղ, անձով վայելուչ։ Սա և իր հարազատները՝ երկու գեղեցիկ եղբայրները, որոնք անվանվում են Ամիր-Կուրճիբեկ և Ամիր-Սեֆեդին, խելացի են, իմաստուն, ճարտարախոս։ Սրանք առաջ եկան, ձայն տվեցին միմյանց, ինչպես քաջարի, սուրբ Վարդանը և սուրբ Ատոմյանները[5], դիմեցին մեծ պատերազմի այս հանդեսի մեջ, ասելով միմյանց. «Չպետք է թողնել, որ մեր սրբությունները, տուն ու տեղը և հայրենի ժառանգությունը մտնեն այլազգիներ կամ ուրիշներ՝ չար կամ ծուռ հավատի տեր մարդկանցից և բազում բանսարկուներից»։ Եվ սրանք բազում նեղություններով ու չարչարանքներով, առանց հանգստի այս ու այնտեղ ընթանալով, բազում տառապանքներով ու համբերությամբ տարան վիշտ ու նախատինք, որն իրավամբ, որն անիրավացի, ոմանց աղաչելով, ոմանց պաղատելով, ոմանց պատվելով և ոմանց պատուհասելով ըստ արժանվույն, որպեսզի թերևս կարողանան ընդդիմանալ այս մեծ պատերազմի հանդեսում և ազատվեն բազում ինչքերից ու անհամար գանձերից, որ դրել են իրենց վրա։ Դարձյալ ասացին միմյանց. «Ո՜վ սիրելի եղբայրներ, արիանա՛նք, միմյանց հետ կապվելով սուրբ հոգով, որպեսզի մեր հայրենի ժառանգությունը չընկնի օտարության մեջ՝ այլազգիների ձեռքը»։ Իսկ ողորմածն տեր աստված, որ առատաձեռն է բարության մեջ և խաղաղարար ամենայն աշխարհի, թող տա սրանց զորություն, իմաստություն, գիտություն, համբերություն՝ դիմացկունությամբ ընդդիմակայելու Քրիստոսի խաչի այլազգի թշնամիներին և ազատի սրանց հոգով ու մարմնով սատանայի փորձանքից ու խաբեությունից. ամեն։

Վերստին հայցում, աղաչում-պաղատում ենք գթացող Տերդ, ողորմած աստծուդ՝ Հիսուս Քրիստոսից և սուրբ Հոգուց և ճշմարիտ աստծուց, մենք, անարժան կրոնավորներս, քա-

Հանանեքս և սուրբ երրորդության բոլոր հավատացյալներս, հավատով ու հույսով հայցում ենք քո՛ առատաձեռն մարդասիրությունից, որպեսզի վերստին հաստատես մեր հայրապետական աթոռը, իբրև առաջին և ազատես պարտքերից ու անիրավ հարկապահանջներից։ Իսկ մեր հայրապետին, տեր Դավթին փայլեցնես իբրև արեգակ երկրի վրա և իբրև լուսին աստղերի մեջ, մինչև խորին ծերություն, բազմամյա կյանքով, հարազատ եղբայրներով, որդիներով և իր զարմով հանդերձ. ամեն։ Եվ Քրիստոսին՝ մեր աստծուն փա՛ռք, գոհություն ու երկրպագություն՝ հավիտյանս հավիտենից. ամեն։

ՎԵՐՋ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ[1]

1. «Տուն» գոյականը գրաբարում նշանակել է՝ ազգակցական միավոր՝ տոհմ, վարչատարածքային միավոր՝ նահանգ, գավառ, կալված, նույնիսկ երկիր։ Թովմա Արծրունու շարունակողը ամբողջ Հայաստանը կոչում է «տուն»։ «Տուն» բառը շեշտում է նաև տվյալ միավորի ժառանգական հիմքերը։ Վասպուրականը համարվում էր Արծրունիների «սեփական նահանգը»։ «Արծրունյաց տանն» տակ հասկացվում է ոչ միայն ազգատոհմի, այլև իշխանության, Վասպուրական «աշխարհի» պատմությունը։ (էջ 329)։

2. Բերոսոս, Բաբելոնյան պատմագիր, ապրել է մ. թ. ա. մոտ 350—280 թթ։ Հունարեն գրած իր պատմությունից պահպանվել են միայն առանձին հատվածներ։ (էջ 26)

3. Աբիդենոս (Աբյուդենոս) Քաղդեացի, բաբելոնացի պատմագիր, ապրել է II դարում։ Նրան հիշում է Եվսեբիոս Կեսարացին իր «Քրոնիկոն» երկում և Մովսես Խորենացին։ (էջ 26)

4. Գրիգոր Արծրունի, Վասպուրականի գահակալ իշխան Դերենիկ Արծրունին (845—885), որն ուներ Գրիգոր կրկնանունը։ Առհասարակ Արծրունի իշխանները երկանուն էին. մեկը՝ հայկական, մյուսը՝ փաղաքշական կամ տարամուտ։ (էջ 27)

5. Բնագրում «Տաճկաց»։ «Տաճիկ», «Տաճկաստան» բառերի տակ հայ մատենագրության մեջ սկզբնապես հասկանում էին արաբներին, իսկ հետագայում՝ ընդհանրապես մահմեդականներին։ (էջ 27)

6. Եվսեբիոս (Եվսեբիոս Կեսարացի), հռոմեական աչքառու գրող և պատմագիր, ապրել է մոտ 263—340 թթ.։ Գրել է «Եկեղեցական պատմություն», «Քրոնիկոն» և այլ երկեր։ Ընդորում «Քրոնիկոնի» հունարեն բնա-

գիրը ցարդ համարվում է կորած, պահպանվել է միայն հայերեն թարգմանությունը, որը կատարվել է 410—420-ական թթ.։ Աֆրիկանոսը 3-րդ դարի հույն պատմագիր էր, որի Պատմության մեջ անցքերի շարադրումը հասցվում է մինչև 221 թվականը։ (էջ 30)

7. **Սենեքերիմ** (Սինախերիբ), Ասորեստանի թագավոր՝ մ. թ. ա. 705—680 թթ.։ Սպանվել է պալատական հեղաշրջման հետևանքով, որին մասնակցում էին նաև որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը (Աստվածաշնչում՝ Սարասար կամ Շարեցեր)։ (էջ 30)

8. **Եզեկիա**, Հրեական թագավոր (մ. թ. ա. մոտ 723—694), որը պայքարելով Ասորեստանի դեմ, Երուսաղեմն ազատագրեց կախվածությունից։ (էջ 30)

9. **Հուլիանոս Հայիկառնասցի** (Հուլիանոս Աֆրիկանոս), III դարի պատմագիր, ապրում էր Ալեքսանդրիայում։ Գրել է պատմություն, որտեղ դեպքերի շարադրանքը սկսելով փաղաղույն շրջանից, հասցրել է իր ժամանակները։ (էջ 31)

10. **Տիտան**, Բելի անունը։ Հիշվում է հեթանոսական աղբյուրներում։ (էջ 31)

11. **Զրվան**, Հին Իրանի զրադաշտական պաշտամունքի աստվածը։ (էջ 31)

12. **Քախուրտոս**, Նոյ նահապետի բաբելոնյան (քաղդեական) անունը, որը հանդիպում է նաև ասուրա-բաբելոնական արձանագրություններում։ (էջ 31)

13. **Կռոնոս**, Հին հունական դիցաբանության մեջ հնագույն, մինչ օլիմպիական աստվածներից, Ուրանի (Երկնքի) և Գեայի (Հողի աստվածուհու) որդին, հսկաներից կրտսերը։ Կռոնոսի քույր Ռեան միաժամանակ նրա կինն էր, որդիներն էին Դիոսը (նույն ինքը Զևսը՝ աստվածների և մարդկանց արքան), Պոսեյդոնը և ուրիշներ։ Կռոնոսին գուշակել էին, թե նա տապալվելու է իր որդիներից մեկի ձեռքով, ուստի նա կուլ էր տալիս իր երեխաներին։ Միայն Դիոսը (Զևսը) կարողացավ խուսափել դրանից, գահընկեց արեց հորը և հարկադրեց դուրս թափել կուլ տված երեխաներին։ Հին Հռոմում Կռոնոսը նույնացվել է Սատուրնի հետ։ (էջ 31)

14. Հուդայի թագուհի, որ հայտնի էր իր արյունակզակ վարքով։ (էջ 31)

15. **Կլեոպատրա**, Եգիպտոսի Պտղոմեոսյան հարստության վերջին թագուհի Կլեոպատրա VII-ը (մ. թ. ա. 69—30), հայտնի իր վավաշոտությամբ։ Բայց ոչ թե Դիոնիսիոսի դուստրն էր, այլ քույրը և ամուսինը։ (էջ 31)

16. **Թոնոս Կոնկողերոս**, Ասորեստանի Աշուրբանիպալ թագավորը (մ. թ. ա. 669-մոտ. 633), որ հայտնի է նաև Սարդանապալ անունով։ Սակայն է անհամաժամանակություն, քանի որ Սենեքերիմը իշխել է մ. թ. ա. 705—680 թ., ուստի չէր կարող Թոնոս Կոնկողերոսից 88 տարի հետո գահակալել։ (էջ 32)



17. Սիմ՝ Սասունի լեռներից մեկը։ (էջ 32)

18. **Զարավանդ**, Հայոց Պարսկահայք նահանգի գավառներից։ Որոշ շրջանում մտել է Ատրպատականի մեջ, ուստի Թովմա Արծրունին անվանում է նաև «Զարավանդ Ատրպատականի»։ (էջ 32)

19. **Մովսեսի չորրորդ գրությունը**: Ըստ Թովմա Արծրունու, Մովսես Խորենացու Հայոց պատմությունը ունեցել է նաև չորրորդ գիրք։ Այս մասին Թովման հիշում է նաև այլ առիթով։ Սակայն Մովսես Խորենացու ցարդ հայտնի 35 ձեռագրերում չորրորդ գիրքը բացակայում է։ Որոշ հայագետներ, հենվելով Թովմա Արծրունու հաղորդման վրա, ընդունել են Խորենացու Պատմության չորրորդ գրքի գոյությունը (Ղ. Ալիշան, Մ. Էմին, Ներսես Բյուզանդացի)։ (էջ 33)

20 **Պտղոմեոս** (90—168 թթ.) հույն նշանավոր աստղագետ, աշխարհագետ և մաթեմատիկոս, ապրում էր Ալեքսանդրիայում։ Կազմել է աշխարհագրական առաջին քարտեզը։ (էջ 33)

21. **Կադմոս**, ըստ հին հունական առասպելաբանության, Թեբե քաղաքի հիմնադիրը և հունական այբուբենի կատարելագործողը։ (էջ 33)

22. **Փիլոն Ալեքսանդրացի**: Հույն նշանավոր փիլիսոփա և աստվածաբան, ապրում էր Ալեքսանդրիայում (մ. թ. ա. մոտ 20—մ.թ. 50 թթ.)։ (էջ 35)

23. **Միջերկրայքի** տակ ի նկատի է առնվում Փոքր Ասիան (տես Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 13)։ (էջ 40)

24. Յոթ թիվը խորհրդանշում է կատարելության, սրբության գաղափար։ Ըստ Աստվածաշնչի (Ծննդ., Է) Նոյի տապանը վերցվեցին նաև սուրբ անասուններից՝ յոթական հատ։ Յոթ թիվը նշվում է Աստվածաշնչում նաև այլ առիթներով։ Յոթ թվի գաղափարը ծագել է աստղաբաշխական ավյալներից, որոնց համաձայն երկիրն ունի երկնային յոթ մարմին։ Դրանք դասվում են արեգակնային համակարգում, որի կենտրոնում է Երկիրը, իսկ նրա շուրջն են պտտվում մյուս յոթ մարմինները՝ Արև, Լուսին, Հրատ, Փայլածու, Լուսաբեր, Լուսնթագ, Երևակ։ Սրանք ծառայում են երկրին, բայց իրենցից յուրաքանչյուրն իշխում է շաբաթվա յոթ օրերից մեկի վրա։ Սրանից էլ հենց առաջացել է յոթ թվի սրբության ցարդ հարատևած գաղափարը (յոթ տարի, յոթ պատ, յոթ որդի, յոթ սարի ետև և այլն)։ Միջնադարյան Հայաստանում այբուբենները նույնիսկ դասակարգելիս միշտ առաջնորդվում էին յոթ թվի պահպանման սկզբունքով։ (էջ 41)

25. **Երիքով**, Քանանացիների գլխավոր քաղաքը, գրավեց Հեսուն և բնաջնջեց բնակիչներին։ Քաղաքի պարիսպները հրաշքով կործանվեցին։ (էջ 41)

26. **Քանանացիներ**, Նոյի թոռան՝ Քանանի սերունդները։ Սեմական լեզուների մեջ եղած չորս լեզվախմբերից մեկը քանանականն է, որով խոսում էին իսրայելացիները և փյունիկեցիները։ **Գարավանացիներ**, Հին Հրեաստա-

նի Դարամոն քաղաքի բնակիչները։ Սողոմոն, հրեական առաջին թագավորը, մեռել է մ. թ. ա. մոտ 1056 թ.։ (էջ 41)

27. **Կորդվաց լեռներ**, գտնվում են Հայաստանի Կորճայք նահանգում։ (էջ 48)

28. **Հերոդոտոս**, խոշորագույն հույն պատմագիր (մ. թ. ա. մոտ. 490—430 թթ.)։ Ճանապարհորդել է շատ երկրներում։ Ինը գրքում ամփոփված նրա անավարտ մնացած աշխատությունը ընդգրկում է մոտ 500 տարվա պատմություն, դեպքերի շարադրանքը հասցված է մինչև մ. թ. ա. 480-ական թթ.։ (էջ 42)

29. **Սոկրատես**, նշանավոր աստվածաբան Սոկրատես Կիպրացին (մոտ 310—404 թթ.), որը հայտնի էր իր պաշտպանողական հայացքներով։ Նրա «Դիրք հերձվածոցս» երկը դեռևս V դ. թարգմանվել է հայերենի։ (էջ 42)

30. **Գողգոթա**, փոքր լեռ Երուսաղեմից ոչ հեռու։ Այս լեռան վրա մահապատժի էին ենթարկում մահապարտներին։ Ըստ Նոր կտակարանի, այս լեռան վրա է խաչվել Քրիստոսը։ (էջ 43)

31. **Բել**, Միջագետքի հնագույն ցեղերի՝ շումերների գլխավոր աստված էնլիլը երկրպագվել է նաև Միջագետքի Աքքադ երկրի սեմական ցեղերի կողմից, ստանալով «Բել» անունը։ Բելին պաշտում էին նաև Բաբելոնում, որտեղ նա նույնացվում էր գլխավոր աստված Մարդուկի հետ։ Բելը պաշտվել է նաև Ասորեստանում։ (էջ 44)

32. **Արամազդ** կամ **Անհրամազդա** (հնագույնում՝ Որմիզդ), զրադաշտական կրոնի գլխավոր աստվածը, բարի ոգիների արարիչը և խավարի աստծու (չար ոգու)՝ Արհմնի երդվյալ թշնամին։ (էջ 44)

33. Հավանաբար ի նկատի ունի Աստվածաշնչում հիշվող Սեփարվեմ քաղաքը, որը տեղադրվում է Միջագետքում։

34. **Ներգալ**, Բելի անուններից, հիշվում է Աստվածաշնչում։ (էջ 44)

35. **Շար**, **Ներ** և **սոս**, քաղդեացիների մոտ ժամանակի չափման միավորներ։ Շարը կամ տիեզերական ժամը բաղկացած էր 3600 տարիներից։ Մեկ շարը կազմվում էր վեց ներից։ Մեկ ները պարունակում էր 600 տարի և բաղկացած էր տիեզերական տասը րոպեներից՝ սոսերից, որոնցից յուրաքանչյուրը պարունակում էր 60 տարի։ (էջ 45)

36. **Կանգուն**, երկարության չափ միջնադարյան Հայաստանում։ Մեկ կանգունը հավասար է 50,7 սմ-ի։ (էջ 45)

37. **Լիտր**, ծանրության և հողի մակերեսի չափի միավոր, օգտագործվում էր հին և միջին դարերում Հայաստանում և հարևան երկրներում։ Ըստ հայ մատենագրական տվյալների, լիտրը, որպես ծանրության չափի միավոր, կազմել է 29.376 կգ։ (էջ 45)

38. **Սողոմոն իմաստուն**, հրեական միացյալ իսրայելա-հուդայական պետության թագավոր (մ. թ. ա. 960—935 թթ.)։ Միջնադարյան (հատկապես



արևելյան) ժամանագրության մեջ ներկայացված է որպես արդարադատ, անկաշառ և իմաստուն անձնավորություն։ (էջ 46)

39. **Հաշտ** գավառը գտնվում էր Հայաստանի Տուրուբերան նահանգում՝ Արածանի գետի վերին հոսանքում, այժմյան Բուլանխի շրջանում։ (էջ 47)

40. **Մեսոպոտամիա**, ավելի ճիշտ՝ Մեսրայիմ, ըստ ավանդության Քամի որդին և եգիպտացիների նախահայրը։ Հրեից լեզվով եգիպտացիներն անվանվում են Միցրայիմ, որից և Մեծրայիմ անունը։ (էջ 47)

41. **Լիբիստան**, Լիբիա անելով հայ հին մատենագրության մեջ հասկացվում էր Աֆրիկան։ (էջ 47)

42. **Զրադաշտ**, մազդեզական (զրադաշտական) կրոնի հիմնադիրը։ Հին պարսկերեն (ավեստերեն) կոչվել է Զարաթուշտրա։ (էջ 48)

43. **Մանեթոն**, հին եգիպտական քուրմ և պատմագիր, ապրել է մ. թ. ա. IV դ. վերջին և III դ. սկզբին։ Թովմա Արծրունին սխալմամբ անվանում է հեփթաղների արքա։ (էջ 48)

44. **Բակտրիա**, հնագույն երկրամաս Միջին Ասիայում։ Մ. թ. ա. VIII—VII դդ. այնտեղ կար ստրկատիրական պետություն, իսկ մ. թ. ա. 250 թ. ստեղծվեց հույն-բակտրիական թագավորությունը։ (էջ 48)

45. **Մեդեր**, իրանալեզու ցեղեր, որոնք մ. թ. ա. 770-ական թթ. Իրանի արևմուտքում ստեղծեցին Մեդիա (Մեծ Մարաստան) պետությունը։ Հայկական աղբյուրներում Մեդերը հիշվում են «Մարք», «Մարեր» անունով։ Այդ են Հերոդոտոսի մոտ հիշվող մարերը, որոնք հանդես են գալիս ուրիշ միջավայրում՝ կոլխերի և պոնտական ցեղերի հետ։ (էջ 48)

46. **Հեփթաղներ**, ցեղամիավորում, սկզբնապես բնակվում էին Կենտրոնական Ասիայում, իսկ V դ. նվաճեցին Միջին Ասիան։ Բյուզանդական աղբյուրներում անվանվում են սպիտակ հոներ։ (էջ 49)

47. **Խուժաստան** (Խուզեստան, հուն. Սուզիանա), նահանգ Իրանի հարավ-արևմուտքում, Պարսից ծոցի հյուսիսակողմում։ (էջ 49)

48. **Բահլ** կամ **Բալխ**, քաղաք Հյուսիսային Աֆղանստանում, այժմյան Բալխ քաղաքի մոտակայքում։ Թովմա Արծրունին հիշում է նաև «Բահլ շահաստան» ձևով։ (էջ 49)

49. **Դեպուհան** (**Դեպուհական**) կամ **Դեպուհ**, Սասանյանների պետության մեջ մանող հնդկական քաղաք (J. Marquart, Eransahr, s. 45). (էջ 49)

50. **Գովմայիդ**, հավանաբար Գովմայա գետը Իրանի Ջիբալ նահանգում, Համադան քաղաքից հյուսիս-արևելք (G. Le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 212—213). (էջ 49)

51. **Գուզան** կամ **Գուզզան**, նահանգ այժմյան Աֆղանստանի հյուսիսարևմուտքում։ X դ. Սամանյաններից վասալական կախման մեջ գտնվող իշխանություն։ (էջ 49)

52. **«Ներքսամպան»** բառացի նշանակում է «Բամականի իշխան» (պարսկերեն)։ Բամականը Բամիկան քաղաքն էր համանուն գավառում, Խորասանից հարավ-արևելք (J. Marquart, Eransahr, s. 92—93). (էջ 49)

53. **Խանխնուտան** կամ **Խունխնուտան**, գյուղ համանուն գավառում, Իրանի հարավ-արևելքում (J. Marquart, Eransahr, s. 44—45). (էջ 49)

54. **Որմիզդ** անունը պարսիկների Արամազդ աստծու անվան այլափոխությունն է (Արշակ. պահլ. Ohrmazd, Սասան. պահլ. Hormizd). (էջ 50)

55. **Արեմն**, տես ծան. 32։ (էջ 50)

56. **Նեպատ** (Նեպուհ), Հին Հայաստանում հատուկ պարհակ, ըստ որի երկրագործը պարտավոր էր ոչնչացնել սահմանված քանակի մորեխ։ (էջ 50)

57. **Սպանդարամետ** (Սանդարամետ), ստորերկրյա աշխարհ (դժոխքը), ուր իբր ընկնում էին մեղսապարտ հոգիները։ (էջ 51)

58. **Շախրի** անունով ցեղերը բնակվում էին Թեհրանի մոտերքում։ (էջ 51)

59. **Ապաղատան**, ըստ երևույթին Աֆղանստանի աղավաղված ձևն է։ Համապատասխանում է այժմյան Քաբուլ քաղաքի շրջակայքին։ (էջ 51)

60. **Եմավոն լեռ**։ Ի նկատի ունի Հիմալայան լեռները։ (էջ 51)

61. Բնագրում **«առ Ողոմպիադայ վիպագրութիւնն»**, որի տակ պատմիչն ի նկատի ունի Կեղծ Կալիսթենեսի հորինած այն նամակը, որն իբր երկրային դրախտից (Հնդկաստանից) գրել է Աղեքսանդր Մակեդոնացին մորը՝ Օլիմպիադային (Տես Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ, Վիեննա, 1892, էջ 33)։

62. Այս և հաջորդ նախադասությունը տպագիր բնագրում վերցված է չակերտների մեջ։ Սակայն դրանք Թովմա Արծրունու խոսքերն են, որոնցով պատմագիրն իր կարծիքն է հայտնում Աղեքսանդրի գրած վայրի մասին։ Մինչդեռ դրան նախորդող՝ կարծեցյալ դրախտի նկարագրությունը Թովմա Արծրունին վերցրել է Կեղծ Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» երկից (տես Հ. Տաշյան, նշվ. աշխ. էջ 39—40)։ (էջ 53)

63. **Աբրահամ նահապետ**, հրեաների առասպելական նախահայրը։ Սեմի սերունդից։ Մեծարվել է ոչ միայն հրեաների, այլև քրիստոնյաների և մահմեդականների կողմից։ (էջ 56)

64. **Յոթանասնից թարգմանության**։ Ակնարկում է Աստվածաշնչի Հին



հունարեն թարգմանությունը, որը կատարվել է մ. թ. ա. II դ. Ալեքսանդրիայում, 70 անձանց՝ միմյանցից անկախ աշխատանքի ի մի բերումով։ (էջ 57)

65. **Տյուրոս**, նավահանգստային նշանավոր քաղաք Փյունիկիայում (այժմ Սուր)։ (էջ 57)

66. **Եփոն**, փոքրասիական Տրոյա (կամ Տրովադա) քաղաքի հնագույն անվան՝ Իլիոնի հայացված ձևը։

67. **Սամսոն**, հին հրեական առասպելական հերոս, աչքի է ընկել հրեաների հարևան փղշտացիների դեմ մղված պայքարում։ Եղել է դատավոր։ Սամսոնի հետ կապված անցքերը վերաբերում են մ. թ. ա. XII—XI դդ.։ (էջ 57)

68. **Սարդանապաղոս** (Սարդանապալ), տես ծան. 16։ (էջ 57)

69. Բնագրի **Ասուրովա** բառը Աստարտ անվան աղավաղումն է։ Աստարտը փյունիկյան սիրո և պտղաբերության աստվածուհին էր, որի պաշտամունքը տարածված էր ամբողջ Առաջավոր Ասիայում, Եգիպտոսում և այլուր։ Աստարտը բաբելոնացիների, ասորեստանցիների մոտ վերանվանվեց Իշտար անունով։ (էջ 58)

70. **Սամարիա**, Իսրայելի թագավորության մայրաքաղաքներից, մ. թ. ա. 722 թ. գրավեց Ասորեստանի Սարգոն II թագավորը։ Գտնվում էր այժմյան Սեբաստիա անունով գյուղի (Հորդանան) տեղում։ (էջ 58)

71. **Մանասե** (Մանասիա). հին հրեական Հուդա պետության թագավորներից (մ. թ. ա. մոտ 697—640 թթ.), Եզեկիայի հաջորդը և որդին։ Նրա օրոք Ասորեստանի թագավոր Ասարհադոնը գրավեց Երուսաղեմը, շղթաների մեջ Մանասեին գերի տարավ Բաբելոն, որին հաջողվեց վերադառնալ և նորից նստել գահին։ (էջ 58)

72. **Թիգլաթ-պալասար**, Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար III-ը (մ. թ. ա. 745—727 թթ.), որի զորքը մ. թ. ա. 743 և 735 թթ. հաղթեց Ուրարտուին և նրան դաշնակցող երկրներին (Սիրիա, Փյունիկիա և Իսրայելի մեծ մասը)։ Մթա. 729-ին գրավելով Բաբելոնը, դարձավ նրա թագավորը՝ Փուլու անունով (Թովմա Արծրունու մոտ՝ «Փուա»)։ Թովմա Արծրունին կարծում է, թե Փուա և Թիգլաթ-Պալասար տարբեր անձեր են։ Բացի այդ պատմիչը Թիգլաթ-Պալասարին շփոթում է Ասարհադոնի հետ։ (էջ 58)

73. **Սալմանասար**, Ասորեստանի Սալմանասար V թագավորը (մ. թ. ա. 727—722), Թիգլաթ-Պալասարի որդին և հաջորդը։ Արշավել է Իսրայել և այլուր։ (էջ 58)

74. **Ասորդանիս**, Ասորեստանի թագավոր Ասարհադոնը (մթա 680—669), Սենեքերիմի որդին։ (էջ 59)

75. **Տմորիք**, երկրամաս Հայաստանի Կորճայք նահանգում, Արևելյան Խաբուր գետի ավազանում։ (էջ 60)

76. Բնագրում «անգրաւ նաշումամբ», որի նույնական թարգմանությունը կհակասեր ամբողջական խոսքի կառուցվածքին։ Թարգմանեցինք ազատորեն։ (էջ 60)

77. Աղբակ, Վասպուրականի Մեծ Աղբակ գավառը, որը տարածվում էր Մեծ Զավ գետի վերին ավազանում։ Կենտրոնն էր Ադամակերտը։ Արծրունիների ժառանգական սեփականությունը։ (էջ 61)

78. Զողախել (կամ Զուգախիլ), հին Զուղան։ (էջ 61)

79. Վրնջունիս (կամ Վրնջունիք), տեղադրվում է Նախճավանի մոտակայքում։ (էջ 61)

80. Հախրամ, Խրամ բնակավայրը Նախճավան գավառում։ Մովսես Խորենացին հիշում է Խարամ ձևով՝ Վրանջունիքի, Նախճավանի և Ջուղայի հետ միասին։ Թովման հիշում է նաև Խրամ ձևով, որպես ավան։ (էջ 61)

81. Լյուդացիներ, Լիդիայի բնակիչները։ Լիդիան հին պետություն էր Փոքր Ասիայի արևմուտքում։ (էջ 61)

82. Կրեսոս, Լիդիայի վերջին թագավորը (մ. թ. ա. 560—546), 547 թ. պարտություն կրեց Իրանի Կյուրոս II թագավորից, որը հաջորդ տարում նվաճեց ողջ Լիդիան։ (էջ 61)

83. Դեբուինդ (Դումբավանդ), փոքրիկ քաղաք Իրանի հյուսիսում, Տաբարստանում, Դամավանդ լեռան մատույցներում։ VII գ. Աշխարհացույցում հիշվում է «Դմբավանդ» ձևով՝ Տաբարստանից առաջ (Eransahr, s. 127—128, The Lands, 371)։ (էջ 61)

84. Խորասան, Իրանի հյուսիս-արևելյան երկրամասերից։ (էջ 62)

85. Նինվե, քաղաք հին Ասորեստանում, հիմնված մ. թ. ա. V հազարամյակում։ Մ. թ. ա. IX դարից Ասորեստանի մայրաքաղաք։ Կառուցված էր Տիգրիսի ձախ ափին։ «Նինվեի գետափներ» ասելով պատմիչը ի նկատի ունի Նինվեին մերձակա Տիգրիսի գետափները։ (էջ 62)

86. Բնագրում «Դաղա տուն»։ Պետք է ընթերցել «Գալա տուն»=գալլեր (կելտեր)։ (էջ 62)

87. Գալաթացիներ (Գալաթներ), կելտական ցեղեր, որոնք մ. թ. ա. 278—277 թթ. ստեղծեցին իրենց պետությունը՝ Գալաթիան, Անկյուրա (Անկարա) կենտրոնով։ Իրենց լեզուն, բարքերը պահպանեցին մինչև V դարը։ (էջ 62)

88. Տավրոս լեռ, ի նկատի ունի Հայկական Տավրոսի արևմտյան ճյուղավորումը։ (էջ 62)

89. Աղձնիք, Հայաստանի 15 նահանգներից, հայտնի էր նաև որպես առանձին բդեշխություն։ Հիշատակվում է Ուրարտուի արձանագրություններում Արմե, Ուրումե կամ Ալզինի ձևով։ Տարածվում էր Արևմտյան Տիգրիսի և Հայկական Տավրոսի միջև։ (էջ 62)

90. Արզն, Հայաստանի Աղձնիք նահանգի գավառներից, տարածվում էր Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակի՝ Արզանի ստորին ավազանում, կենտրոնն էր Արզն (Արզան) քաղաքը (այժմ Խազրան)։ Հիշվում է նաև Արզնարզյուն ձևով։ Անտիկ աղբյուրներում հայտնի է Arzanenae ձևով։ (էջ 62)

91. Ամոս, եբրայական մարգարե, որն ըստ ավանդության ապրել է մ. թ. ա. VIII դարում։ (էջ 62)

92. Եզեկիել, հրեական չորս մեծ մարգարեներից, ապրել է մ. թ. ա. VI գ.։ Իր մարգարեություններում արել է հոռետեսական կանխատեսումներ։ Ըստ նրա Գոգը և Մագոգը (իշխան և ցեղ) հյուսիսից պիտի գան և ոչնչացնեն Իսրայելը, բայց աստծուց կկործանվեն նրա լեռներում։ (էջ 62)

93. Կամբյուս, հին Իրանի թագավորներից (մ. թ. ա. 530—522), Կյուրոս Մեծի որդին ու հաջորդը։ (էջ 63)

94. Դարեհ Վշտասպյան, հին Իրանի թագավոր Դարեհ I-ը, Վշտասպի որդին։ Իշխել է մ. թ. ա. 522—486 թթ.։ (էջ 63)

95. Արշավրյան թագավորություն, ի նկատի ունի հին Իրանի Աքեմենյան թագավորությունը (մ. թ. ա. 550—330), որի վերջին թագավոր Դարեհ III-ը մ. թ. ա. 330 թ. հաղթվեց Ալեքսանդր Մակեդոնացուց։ (էջ 63)

96. Պտղոմեոս, Ալեքսանդր Մակեդոնացու զորապետներից, մ. թ. ա. 323-ից կառավարում էր Եգիպտոսը, որի թագավորը դարձավ մ. թ. ա. 305 թ.։ (էջ 64)

97. Սելևկոս, Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Սելևկոս I Նիկատորը (մ. թ. ա. մոտ 358—280), Սելևկյան պետության հիմնադիրը։ (էջ 64)

98. Անտիպատրոս (մ. թ. ա. 397—319), Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից և Մակեդոնիայի փոխարքա։ 321 թ. հռչակվեց կայսրության ղեկավար։ (էջ 64)

99. Պտղոմեոսյան հարստությունը իշխում էր Եգիպտոսում մ. թ. ա. 305—30 թթ.։ Հիմնադրվել է Պտղոմեոսի կողմից։ (էջ 65)

100. Օգոստոս, Հռոմի կայսր մ. թ. ա. 27—մ.թ. 14 թթ.։ (էջ 65)։

101. Արշակ, Պարթև Արշակունիների թագավորության հիմնադիրը։ Թագավորել է մ. թ. ա. մոտ. 250—248 թթ. (էջ 65)

102. Ելիմացիներ ասելով հայ մատենագրության մեջ հասկանում էին սելջուկ-թուրքական ցեղերին (էջ 65)

103. Վաղարշակ թագավոր, ի նկատի ունի Հայոց Տրդատ I թագավորին (մոտ 62—88)՝ Հայոց Արշակունիների թագավորության հիմնադրին։

Տրդատը ոչ թե Պարթև Արշակ I-ի (250—248) եղբայրն էր, ինչպես կարծում է Թովմա Արծրունին, այլ՝ Պարթև Արշակունի Վաղարշ I-ի (51—75)։ (էջ 65)

104. Քուշաններ, հնդկական ցեղեր, բնակվում էին Միջին Ասիայի Բակտրիա երկրամասում և մերձակա շրջաններում։ (էջ 65)

105. Տպագիր բնագրի «աճիւ» բառի համար Թովմա Արծրունու Պատմության նախորդ հրատարակություններում գրված ծանոթության մեջ առաջարկվել է «կաճիվ», այսինքն «կաճ կարասիով», «շարժական ինչքով» բառը, որն իրապես ավելի է համապատասխանում նախադասության ամբողջական իմաստին։ Թարգմանության մեջ հաշվի ենք առել հիշյալ ուղղումը։ (էջ 67)

106. Հերովդես, Հրեաստանի Հերովդես Մեծ թագավորը, որն, ըստ աստվածաշնչյան ավանդության, թագավորում էր Քրիստոսի ծննդյան ժամանակ և Բեթղեհեմ քաղաքում կոտորել տվեց երկու տարեկանից հասած բոլոր մանուկներին, որոշ ժամանակ անց բանտարկեց և սպանել տվեց Հովհաննես Մկրտչին։ Մեռավ անբուժելի ախտից՝ որդնոտությունից։ (էջ 69)

107. Հովսեպոս, նշանավոր հրեա մատենագիր Հովսեպոս Եբրայեցին (Հովսեպոս Փլավիոս 37—95 թթ.)։ Հունարեն գրված նրա պատմական երկերը մեծ արժեք են ներկայացնում նաև հին Հայաստանի պատմության համար։ (էջ 69)

108. Տիբերիոս, Հռոմի կայսր մ. թ. 14—37 թթ.։ (էջ 69)

109. Սեկայան, հին քաղաք Պաղեստինում, Միջերկրական ծովի ափին։ (էջ 69)

110. Ճավարշան. տես ծան. 477։ (էջ 70)

111. Գայոս Կեսար, Հռոմի կայսր Գայոս Կեսար Կալիգուլան (մ. թ. 12—41), որն իշխել է 37—41 թթ.։ Աչքի էր ընկնում ծայրահեղ դաժանությամբ ու անձնահաճությամբ։ Կղոդիոս, Հռոմի կայսր Կլավդիոսը (41—54 թթ.)։ (էջ 70)

112. Խառան, քաղաք Միջագետքի հարավ-արևմուտքում։ (էջ 71)

113. Ներսեհ, պարթև Արտաշես (Արտավան) III թագավորի (մոտ 12—38 թթ.) որդին, որին ի կառավարումն էր տրված Բաբելոնը։ Հիշում է նաև Մովսես Խորենացին (Խոր., Ա, լԴ)։ (էջ 71)

114. Նախարար, ազնվական, որն իշխում էր իր ժառանգական երկրամասում, ուներ իր զորքը, հարկային և դատաստանական կարգը, արքունիքում՝ գահը։ Նույնական է եվրոպական ֆեոդալի հետ։ (էջ 71)

115. Ասորպատական (հուն. Ատրոպատենե) կամ փոքր Մարաստան, երկրամաս Իրանի հյուսիս-արևմուտքում։ Հայաստանի հարավ-արևելյան հարևանը։ (էջ 72)



116. «Դայակ» բառը պահլավերեն նշանակում էր «ծծմայր», բայց Հայաստանում գործ էր ածվում նաև տղամարդկանց նկատմամբ, քանի որ ընդունված սովորությամբ թագավորն իր զավակներին տալիս էր այս կամ այն նախարարի դաստիարակությանը։ Դայակ-նախարարները նրանց չէին տարբերում հարազատ որդիներից։ (էջ 72)

117. Վարագ, լեռ Վասպուրականի Տոսպ գավառում, Վան քաղաքից հարավ-արևելք։ (էջ 117)

118. Տոսպ, գավառ Վասպուրականում, Վանա լճի արևելակողմում։ Անունն ստացել է Տուշպա (հետագայում Վան) քաղաքի անունից։ Վաղ միջնադարում Տոսպը և Ռշտունիքը կազմում էին մեկ գավառ, քանի որ համարվում էին նույն տոհմի՝ Ռշտունիների սեփականությունը։ Այս է պատճառը, որ Թովմա Արծրունին հիշում է նաև Տոսպռշտունիք գավառ։ (էջ 72)

119. Երվանդական կամ Երվանդունիք, գավառ Վասպուրականի Հայոց ձոր երկրամասում՝ Խոշաբ գետի ավազանում։ Անունն ստացել է Երվանդունիների Հայոց թագավորական հարստության անունից։ (էջ 72)

120. Բնագրում «ի հետևի զօրս անցս», որը պատմիչի բուն շարադրանքից երևում է, որ պիտի է կարդալ «ի Հեր և ի Զարևանդս» (այս մասին տես Նորայր Բյուզանդացի, Հայկական բառագննություն, Կ. Պոլիս, 1880, էջ 86)։ Թարգմանել ենք ըստ ուղղումի։ (էջ 72)

121. Տարոն, Հայաստանի Տուրուբերան նահանգի ամենանշանավոր գավառը, որի անունով էլ հաճախ կոչվում էր ողջ նահանգը։ Տարածվում էր Արածանիի և Մեղրագետի ավազաններում։ Հնուց եղել է Հայաստանի մշակութային օրրանը։ Այստեղ էր գտնվում դիցապաշտ Հայաստանի հոգևոր կենտրոն Աշտիշատը, որը դարձավ նաև հայոց քրիստոնեական եկեղեցու առաջին կաթողիկոսանիստը։ Սկզբնապես Տարոնում իշխում էր Սլկունի նախարարությունը, իսկ IV դարից՝ Մամիկոնյան նախարարությունը, IX դարից՝ Բագրատունի տոհմը։ Թովմա Արծրունու ժամանակ Տարոնը Այրարատից հետո ուներ մշակութային կարևոր նշանակություն, ուստի գավառը պատմագրի շուրթերին հնչում է «Հայոց տուն» հորջորջմամբ։ 1915 թ. Տարոնի հայ բնակչությունը գրեթե իսպառ սրի քաշվեց, չնչին մասին հաջողվեց ապաստանել Արևելյան Հայաստանում։ (էջ 72)

122. Վան, քաղաք Վասպուրականի Տոսպ գավառում, կոչվել է նաև «Վան Տոսպ», («Վանտոսպ») անունով։ Ավանդաբար անվանվել է նաև Շամիրամակերտ, Շամիրամի քաղաք։ Հիմնադրվել է մ. թ. ա. II հազարամյակի վերջին։ Սկզբնապես կոչվում էր Տուշպա և Ուրարտու պետության մայրաքաղաքն էր։ Ուրարտուի անկումից հետո քաղաքը կոչվեց Վան։ Հին հունական աշխարհագիր Պտղոմեոսը (II դար) քաղաքը հիշում է թե Վան (Buana) և թե Տուշպա (Thospia) ձևերով։ VI դարից քաղաքը դառնում է Վասպուրականի կենտրոն։ Թովմա Արծրունին Վանն անվանում է քաղաք, իսկ Անանուն շարունակողը միշտ անվանում է ավան, այն դեպքում, երբ հայ մատենագրության մեջ սակավ բացառությամբ (Եղիշեի

ժոտ և որոշ հիշատակարաններում), Վանը քաղաք է անվանված։ Վանի մասին սակավաթիվ հիշատակում են արաբական աղբյուրները (Իբն Հավկալ, Յակուտ)։ (էջ 72)

123. Անձախի ձոր (Անձախի ձոր, ձորն Ընձայից). գավառ Վասպուրականի արևելքում, Կոտոր (այժմ Կոտուր-Չայ) գետի ավազանում։ (էջ 73)

124. Նախճավան, քաղաք Հայաստանի Վասպուրական նահանգի Նախճավան գավառում։ Հույն աշխարհագիր Պտղոմեոսը (90—168) հիշում է Նաքսուանա ձևով։ Մ. Խորենացին հնագույն շրջանի համար հիշում է որպես ավան, իսկ Արշակունիների ժամանակ՝ գյուղ։ VII դարի հայկական Աշխարհացույցում հիշվում է Վասպուրականի համանուն գավառում։ Նույնն է հավաստում նաև արաբ պատմագիր Բելաձորին (մոտ. 820—892), որին կրկնում է մի այլ արաբ մատենագիր՝ Յակուտը (1178—1229)։ 902-ին Հայոց Սմբատ Ա թագավորը Մանազկերտի տակ կայսիկների դեմ տարած հաղթանակի առթիվ Նախճավանը նվիրում է իր քեռորդուն՝ Աշոտ Արծրունուն, որի մահից հետո այն խլվում է Արծրունիներից և 908 թ. սկզբին տրվում Սյունիքի տերերին։ Այս է պատճառը, որ երբ Աշոտ Արծրունու մահից հետո նրա եղբայրները՝ Գագիկն ու Գուրգենը իրար մեջ են բաժանում Վասպուրականը, ոչ մեկի բաժնում չի հիշատակվում Նախճավանը։ Քաղաքն Արծրունիներից խլելը վերջիններիս և Հայոց թագավորի միջև առեղծում է հակադրություն։ Թովմա Արծրունին, ելնելով իրական-պատմական փաստերից, Նախճավանը համարում է Վասպուրականի ոստան, որպեսզի շեշտի քաղաքի Արծրունիների անկապտելի ժառանգություն լինելու հանգամանքը։ (էջ 73)։

125. Վասպուրական. Հայաստանի 15 նահանգներից («աշխարհներից») խոշորագույնը ավելի քան 40 հազ. քառ. կմ տարածությամբ։ Ուներ 35 գավառ։ Հնագույն և վաղ միջնադարում նահանգը ձևավորված չի եղել և այնտեղ չէր կարող իրականացվել մեկ տոհմի անբաժան տիրապետություն։ Այդ շրջանում հետագայի Վասպուրականի տարածքում գոյություն ունեին նախարարական մի քանի տոհմեր՝ Ռշտունիներ, Անձևացիներ, Արծրունիներ, Բագրատունիներ, Ամատունիներ, Ակեացիներ և այլն։ Սակայն Վասպուրական նահանգի որոշ գավառներ (Աղբերանի, Աղիովիտ, Տոսպ, Դասնի (կամ Դառնի)) տակավին Հայոց Արշակունի թագավորների օրոք արքունի կալվածներ էին, որտեղ բնակվում էին թագավորական տան անդամները՝ սեպուհները։ Վերջիններիս անունով հիշյալ գավառները կոչվում էին «Սեպհական» կամ «Սեպուհական» և «Վասպուրական» համանշանակ բառերով։ Այս երկու բառերն էլ ծագում են հին պարսկերեն (ավեստերեն) «վիսո-պուհրա»—«իշխանական տան որդի» բառերից։ Հայ մատենագրության մեջ Վասպուրական անունն առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին, որը ընդհանրապես ի նկատի ունի սոսկ հիշյալ գավառները։ Վասպուրական նահանգը իր 35 գավառներով ձևավորվել է ավելի ուշ, VI դարի վերջին և կոչվել է նաև «Սեպհական գունդ», «Տոհմն սեպհական գնդին» անուններով։ VII դարում Վասպուրականի տերերն են դառնում Արծրունի իշխանները։ Ա-



րաբական տիրապետության շրջանում Վասպուրականը հայ ազատագրական շարժման հենքն էր։ IX դարի վերջից Արծրունիները ցուցաբերում են չեզոքված ինքնուրույնություն, իսկ 908 թ. հռչակում են առանձին թագավորություն, որը գոյատևեց մինչև 1021 թ., երբ Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմը թագավորության մեջ մտնող գավառները Բյուզանդիայի հետ փոխանակեց Սեբաստիայի կուսակալության մեջ մտնող շրջանի հետ։ Վասպուրականում հայ ազգաբնակչությունը հիմնական ազգագրական տարրն էր մինչև 1915 թ. մեծ եղեռնը, որից մի կերպ փրկված շատ վասպուրականցիներ 1918 թ. ապաստան գտան Արևելյան Հայաստանում։ (էջ 73)

126. Արտաշես, պետք է նկատի ունենալ Պարսից թագավոր Վոլոգես I-ին (մոտ. 51—80), որին Խորենացին անվանում է Դարեհ (Խոր., Բ, ԽԷ)։ (էջ 73)

127. Տպագիր բնագրում բացակայում է «Տիտոսի» և «Ներոնի» բառերը (Տիտոս՝ Հռոմի կայսր 79—81 թթ.) Վերականգնում ենք՝ ելնելով նյութի իմաստից։ (էջ 73)

128. Մասիս կամ Նեխ Մասիս. Սիփան սարը, որը Հայկական լեռնաշխարհում իր բարձրությամբ (4434 մետր) զիջում է միայն Մեծ Մասիսին։ Պատմական Հայաստանում եղած ավանդության համաձայն իբր Նոյը իջել է Սիփանի գագաթին։ (էջ 74)

129. Արտամետ (Արտամատ), գյուղ Վանա լճի ափին, Վան քաղաքի հարավ-արևմուտքում։ Հեթանոսական շրջանում հայտնի էր որպես Հայոց Աստղիկ աստվածուհու մեհենատեղի։ Թովմա Արծրունին ճիշտ է ստուգաբանում Արտամետ անունը։ Սկզբնապես գյուղը կոչվել է Արտաշեսյան (կամ Արտավանյան) անունով։ (էջ 75)

130. Սուկավետ լեռ, գտնվում էր Այրարատի Բագրևանդ գավառի հյուսիս-արևմտյան մասում։ (էջ 75)

131. Փոքր Աղբակ, գավառ Հայաստանի Կորճայք նահանգում։ (էջ 76)

132. Ջլմար ամրոց, գտնվում էր Կորճայք նահանգում։ Այժմ հայտնի է Ջուլամերկ անունով։ (էջ 76)

133. Արինգ ամրոց, գտնվում էր Կորճայքի Փոքր Աղբակ գավառում։ (էջ 76)

134. Հաշտյանք, Հայոց Ծոփք նահանգի գավառներից, տարածվում էր Արածանիի միջին հոսանքի և Արևմտյան Տիգրիսի ակունքներում։ Համապատասխանում է այժմյան Ճապաղջուրի շրջանին։ (էջ 76)

135. Ադրիանոս, հռոմեական կայսր, իշխել է 117—138 թթ. (էջ 77)

136. Բարքոբա, 132—135 թթ. Հրեաստանում Հռոմի դեմ բռնկված ապստամբության ղեկավար, Սիմոնը, որի պատվանունն էր Բար-Կոխբա (եբրայերեն՝ աստղի որդի)։ (էջ 77)

137. Ասորիք, համապատասխանում է այժմյան Սիրիային։ (էջ 77)

138. **Մարանդ** (Մարինդ), Վասպուրականի գավառներից, տարածվում էր Ուրմիա լճից հյուսիս-արևելք։ (էջ 77)

139. **Բակուրակերտ**, ավան Մարանդ գավառում, Մարանդ քաղաքից արևմուտք, այժմյան Բաքրան գյուղի տեղում։ (էջ 77)

140. Տպագիր բնագրի ասպա Տիրանն դարձվածքն ավելորդ է։ (էջ 77)

141. **Խազիրներ** (Հազիրներ), քոչվոր ցեղեր, բնակվում էին Հյուսիսային Կովկասում (Դաղստան), Ստորին Պովոլժիեում, Սևծովյան տափաստաններում և Ղրիմում։ Խազարների մասին հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշում է Մովսես Խորենացին, մ. թ. ա. II գ. անցքերի առնչությամբ (Խոր., Բ., 65)։ Թովմա Արծրունին օգտվել է Խորենացուց (էջ 77)

142. **Պահլավիկ թագավորություն**. Պարսկաստանում Պարթև Արշակունիների թագավորությունը (մ. թ. ա. 250—224 թթ.)։ (էջ 77)

143. **Ստահրացի**, տես ծան. 145։ (էջ 77)

144. **Արտավան**, Պարթև Արշակունիներից վերջին գահակալ Արտավան V-ը (մոտ. 209—224)։ (էջ 77)

145. **Արտաշիր Սասանական**, Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր I Պապականը (226—241 թթ.), որը Իրանի Ստահր (կամ Իստահր) իշխանության կառավարիչի որդին էր, ուստի Թովմա Արծրունին անվանում է Ստահրացի։ (էջ 77)

146. **Վաղերիանոս**, Հռոմի (Վալերիանոս կայսրը (253—260)։ (էջ 78)

147. **Պրոբոս**, Հռոմի կայսր (276—282 թթ.)։ (էջ 78)

148. **Կոստանդիանոս**, Հռոմեական Կոստանդին II կայսրը (337—340), որը 339-ին մեծաթիվ զորք ուղարկեց Հայաստան և գահին բազմեցրեց Խոսրով Կոտակին (332—338)։ (էջ 79)

149. **Վրթանես**, Հայոց կաթողիկոս (333—341)։ (էջ 80)

150. **Հազարապետություն**, հայ Արշակունիների արքունիքում ամենակարևոր գործակալությունը, սպարապետությունից հետո։ Հազարապետների իրավասության տակ էին պետական հարկերի հավաքման, պարհակների կատարման և տնտեսական բնույթի այլ գործառնություններ։ Այս գործակալությունը Ամատունի նախարարների ձեռքին էր։ Թովմա Արծրունին սխալմամբ այն համարում է Մարդպետների սեփականություն։ (էջ 80)

151. **Հայր Մարդպետ**, Մարդպետների տոհմի գլխավորը։ Այս տոհմը ազդեցիկ դիրք ուներ Հայոց Արշակունիների արքունիքում, ուստի տոհմի ղեկավարին տրվում էր «Հայր» պատվանունը։ Երբեմն Մարդպետներն անվանվում են սոսկ «Հայր» տիտղոսով, որպես հատուկ անուն (տես Վ. Մ. Վարդանյան, Մարդպետ Վասպուրականում, ՊԲՀ, N 3, 1971)։ (էջ 80)



152. **Տայք**, Մեծ Հայքի նահանգներից։ Գրավում էր Ճորոխ գետի միջին ավազանը։ Հնագույն շրջանից Տայքը Մամիկոնյանների ժառանգական հայրենիքն էր (ուրարտական արձանագրություններում այս տոհմը հիշվում է «Մամիկ» ձևով)։ Տայքը կոչվել է նաև «Խորագույն Հայք», իսկ Թովմա Արծրունու շարունակողը՝ Անանուն մատենագիրը անվանում է «Տայաստան»։ VIII դարի վերջից Տայքն անցավ Բագրատունիների իշխանության տակ։ (էջ 80)

153. **Ռշտունիներ**, Հայաստանի հնագույն նախարարական տոհմերից, որոնց ժառանգական հայրենիքն էր Վասպուրականի Ռշտունիք գավառը, իսկ վաղ միջնադարում այս տոհմին էր պատկանում նաև Տոսպ գավառը՝ Վան քաղաքով։ Արաբական տիրապետության պայմաններում Ռշտունիները թուլացան և գերադասեցին համագործակցել Արծրունիներին։ Նրանց տիրույթներն անցան Արծրունիներին։ (էջ 80)

154. **Հուսիկ**, Հայոց կաթողիկոս 341—347 թթ., Վրթանեսի որդին, որը ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, բրածեծ արվելով սպանվեց Ծոփաց նահանգի Բնաբեղ բերդում, Տիրան թագավորի հրամանով։ Հուսիկը մեղադրվել էր վերջինիս հանդիմանելու համար։ (էջ 81)

155. **Դանիել**, ասորի քորեպիսկոպոս, Հուսիկ կաթողիկոսից հետո ընտրվեց Հայոց կաթողիկոս։ Սա ևս դատափետեց Տիրանին՝ նրա զեղծարարության համար, ուստի զայրացած թագավորը 347 թ. խեղդել տվեց նրան։ (էջ 81)

156. **Ամատունիներ**, հին Հայաստանի անվանի նախարարություններից, որոնց ժառանգական հայրենիքը Վասպուրականում՝ Արտազ գավառում էր։ Հայոց Արշակունիների անկումից հետո Ամատունիները որոշ ժամանակ պահպանեցին իրենց ազդեցությունը, բայց VII դարից հետո նրանք թուլացան և ստիպված եղան մտնել Արծրունիների գերիշխանության տակ։ Կարծեցյալ Շապուհ Բագրատունին նույնիսկ Գագիկ Ապումրվանի սպանության մասնակցող Ամատունի եղբայրներին հորջորջում է Արծրունի տոհմանունով։ (էջ 81)

157. **Աշտիշատ** (հնագույն ձևը Հաշտիշատ), ավան Տարոնում, Արածանի գետի աջ ափին։ Դիցապաշտ Հայաստանի կրոնական գլխավոր կենտրոնը, որը IV գ. քրիստոնեության ընդունումից հետո դարձավ Հայաստանի կաթողիկոսանիստը, որտեղ էր Հայոց առաջին մայր եկեղեցին։ Մինչև 1915 թ. Աշտիշատի տեղում հայաբնակ Դերիկ գյուղն էր։ (էջ 81)

158. **Լայնալիճ աղեղ**, լիճը աղեղի կորացած փայտի ու լարի միջև եղած տարածությունն էր։ Եթե լիճը լայն էր, ապա փայտի կորությունը քիչ էր, և նրա ծայրերը միմյանցից հեռու էին, ուստի մեծ ուժ էր պահանջվում նետ արձակելու համար, և նետն ավելի հեռահար էր դառնում։ (էջ 82)

159. **Վաղես կայսր**, Բյուզանդիայի Ֆլավիոս Վալենս կայսրը (364—374), որը եղբոր՝ Հռոմի կայսր Վալենտինիանոս I-ից (364—375) 364 թվին կարգվեց կայսրության արևելյան կեսի տիրակալ։ (էջ 82)

160. Շապուհ արյաց արքա, Պարսից Շապուհ Բ թագավորը (310—379), հայտնի իր հայադավ քաղաքականությամբ։ (էջ 82)

161. **Տիզբոն**. քաղաք Տիգրիսի ձախ ափին, Բաղդադից մոտ 18 կմ հարավ։ Հիմնադրել են Պարթև Արշակունիները և դարձրել իրենց ձմեռային գահանիստը։ Սասանյանների օրոք Տիզբոնը դարձավ Իրանի մայրաքաղաքը։ (էջ 83)

162. **Ձորո վանք (Ձորավանք)**, գտնվում էր Վասպուրականի Տոսպ գավառում։ X դարի սկզբին եղել է Հայոց կաթողիկոսարանը։ Այս վանքում են թաղված նաև Հայոց կաթողիկոսներ Գևորգ Գառնեցին (877—897) և Վահան Սյունին (968—969), ինչպես նաև աշխարհական անձինք։ Վանքն այժմ ավերակ վիճակում է։ (էջ 84)

163. **Սպահան**. Սպահան, քաղաք Պարսկաստանում։ Անունն աղբյուրներում հիշվում է Ասպադան ձևով։ XVI դ. սկզբից մինչև XVIII դ. վերջը եղել է Սեֆյան Պարսկաստանի մայրաքաղաքը։ (էջ 84)

164. **Մազդեզականություն** կամ զրադաշտականություն, հին Իրանի հեթանոսական պաշտամունքը՝ երկրպագությունը արևին ու կրակին։ Ծագել է Միջին Ասիայում, մ. թ. ա. VII դարում։ Հիմնական սկզբունքն է լույսի հաղթանակը խավարի նկատմամբ։ Սասանյանների օրոք (V—VII դդ.) դարձավ Պարսկաստանի պետական կրոնը։ «Մազդեզն» պահլավերեն նշանակում է Արամազդին պաշտող։ (էջ 84)

165. **Արիներ** (բառ. «արյաց»), այստեղ նշանակում է Իրան, իրանցիներ (պարսկերեն «էրան»)։ Արիներ հնդ-իրանական ժողովուրդների հին անվանումն էր, որով տարբերում էին իրենց մյուս ժողովուրդներից (էջ 84)

166. **Աբրահամ Խոստովանող** (Զենակցի), V դ. հայ մատենագիր, որին հիշում է նաև Ղազար Փարպեցին, V դ. ազատագրական պատերազմից հետո Պարսկաստան աքսորված հայ հոգևորականների մեջ։ (էջ 85)

167. **Արած**, գյուղ Այրարատի համանուն գավառում։ Մինչդեռ Աբրահամ Խոստովանողի ծննդավայրը, ըստ Ղազար Փարպեցու, Տայքի Զենակ գյուղն էր։ Թովմա Արծրունին Աբրահամ Խոստովանողին շփոթել է նույն դարի եկեղեցական գործիչ Աբրահամ Սարկավագի հետ, որն իրոք ծնվել է Արած գյուղում (նահատակվել 454-ին Խորասանում)։ (էջ 85)

168. Տպագիր բնագրում՝ «**Երկոքին**»։ Տվյալ նախադասության ոճի տեսակետից այստեղ ավելի հարմար է եզակիով ենթակա, քանի որ խոսքը միայն Սամվելի մոր մասին է։ (էջ 86)

169. **Խաղտիք (Ճանիկ)**. երկրամաս Սև ծովի հարավ-արևելքում, Պարխարյան լեռների հյուսիսարևմուտքում։ (էջ 86)

170. **Բագրևանդ**, Այրարատի գավառներից, համապատասխանում է այժմյան Ալաշկերտի դաշտին։ (էջ 86)



171. **Ձիրավ**, գյուղ Բագրևանդ գավառում. Ձիրավ դաշտում, որտեղ ըստ Խորենացու, 371 թ. տեղի ունեցավ ճակատամարտ հայերի և պարսից զորքի միջև։ (էջ 86)

172. **Թեոդոս Մեծ**, Հռոմի կայսր 379—395 թթ.։ Վեստգոթերի դեմ մղած պատերազմի ավարտից հետո, 383 թ. զորք ուղարկեց Արևելք և ելնելով Հռոմի շահերից, զորքի հրամանատարությանը հրահանգեց հովանավորել Հայաստանի բյուզանդական մասում իշխող Արշակ թագավորին (Պապի որդուն) և նրա թագավորությունը տարածել նաև Հայաստանի պարսկական մասի վրա։ (էջ 86)

173. **Թորդան**, գյուղ Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառում։ Եղել է Գրիգոր Լուսավորչի տոհմի գերեզմանոցը։ (էջ 87)

174. **Եզնունիք**, գավառ Հայոց Տուրուբերան նահանգում։ Համանուն նախարարության կալվածք։ (էջ 87)

175. Տպագիր օրինակներում՝ «**Սմբատայ Մամիկոնէից**»։ Ուղղեցինք, ելնելով հատվածի բովանդակությունից։ Սխալը հետևանք է այն պարագայի, որ պատմիչը շփոթում է Մուշեղ Մամիկոնյանին և Սմբատ Բագրատունուն։ (էջ 87)

176. **Օվկիանոս** անվամբ հին մատենագիրները սովորաբար հասկանում էին Ատլանտյան օվկիանոսը՝ Հյուսիսային և Բալթիկ ծովերի հետ միասին։ (էջ 87)

177. **Օնորես**, հռոմեական կայսր Թեոդոս Մեծի երկրորդ որդին։ Հոր մահից հետո նստեց Արևմտահռոմեական կայսրության գահին (395—423)։ (էջ 88)

178. **Արկադիոս**, Թեոդոս Մեծ կայսեր անդրանիկ որդին, որը սկզբնապես Արևելքի կառավարիչն էր, իսկ 395 թվից դարձավ Արևելքի կայսր, որով իսկ հռոմեական կայսրությունը տրոհվեց արևմտյան և արևելյան մասերի։ (էջ 88)

179. **Սասանյան տոհմ**, Պարսից արքայական տունը. թագավորել Իրանում 224—651 թթ.։ (էջ 88)

180. **Եկեղյաց գավառ**, գտնվում էր Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում։ (էջ 89)

181. **Արտաշիր**, պարսից արքա Արտաշիր II-ը (379—383)։ (էջ 89)

182. **Հովհան Ոսկեբերան** (մոտ 345—407), Արևելքի քրիստոնեական եկեղեցու ականավոր գաղափարախոսներից. պերճաբան քարոզիչ, 398-ից Կ. Պոլսի պատրիարքը։ Ընդվզուն վարքագծի պատճառով Արկադիոս կայսեր կողմից շնորհազրկվեց և աքսորվեց։ (էջ 90)

183. **Թեոդոս Փոքր**, Բյուզանդիայի Թեոդոս II կայսրը (408—450 թթ.)։ (էջ 90)

184. **Թեոդուպոլիս** (տես ծան. 256)։ (էջ 90)

185. **Կարին գավառ**, գտնվում էր Բարձր Հայք նահանգում, Եփրատ գետի ակունքներն ընդգրկող շրջանում։ (էջ 90)

186. Վռամ. պարսից Վռամ V արքան (421—439)։ (էջ 92)

187. Մշկան անունով Հայաստանի մարզպան չի եղել։ Նույն անունը Թովմայի Պատմության մի ձեռագիր պատառիկում գրված է Միշկան ձևով։ Հավանաբար պատմիչն ի նկատի է ունեցել հայերի ապստամբությունը ճնշելու նպատակով 451 թ. Հայաստան ներխուժած պարսից զորքի հրամանատար Մուշկան Նյուսալավուրտին։ Հայաստանի առաջին մարզպանը Վեհմիհրշապուհն էր (430—438), որին հաջորդեց Վասակ Սյունին (438—451)։ (էջ 93)

188. Աշոցք (Աշոցան), գավառ Այրարատ նահանգում, համապատասխանում է այժմյան Ղուկասյանի շրջանին։ Գավառը Աշոցյան նախարարության ժառանգական հայրենիքն էր։ (էջ 93)

189. Գողթն, Վասպուրականի գավառներից։ Համապատասխանում է մոտավորապես այժմյան Նախիջևանի ԻԽՍՀ Ապարակունիսի և Օրդուբադի շրջաններին։ Կենտրոնն էր Գողթն ավանը (այժմ Քիլիթ գյուղ)։ Գավառը Թովմա Արծրունու շարունակողի մոտ հիշվում է «Գողթնաստան» ձևով։ (էջ 94)

190. Տպագիր բնագրում Ոտն Արագածո։ Այրարատի Արագածոտն գավառը։ Համապատասխանում է այժմյան Աշտարակի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի շրջաններին և Թալինի շրջանի մի մասին։ (էջ 95)

191. Հազկերտ II, Պարսից թագավոր (439—457). Վռամ V-ի որդին։ Թովման Վռամ II-ի որդի է համարում, քանի որ Սասանյան արքաների մեջ Վռամ V-ը նույն անունով երկրորդ անձն է։ (էջ 95)

192. Մոկք, Հայաստանի 15 նահանգներից մեկը, տարածվում էր Վանա լճի հարավ-արևմուտքում։ Բնակչությունը մինչև 1915 թ. եղեռնը հիմնականում հայեր էին։ (էջ 95)

193. Բնագրում «Ի լեառն Ջերմաձորայ» (Ջերմաձորը Մոկքի գավառներից էր), որը Նորայր Բյուզանդացին առաջարկում է թարգմանել «Ջերմաձորի կիրճերում» (կամ կապաններում), թեև «լեառն» բառը «կլեսուրի» (հունարեն նշանակում է «բերդ») տարաձևությունն է (տես այս մասին՝ Նորայր Բյուզանդացի, Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան կոչեցելոյ, Մոսկվա, 1889 (էջ 36—37)։ Թարգմանելիս հաշվի ենք առել հիշյալ առաջարկը։ (էջ 95)

194. Բնագրում Ձորայ։ Այս ամրոցը գտնվում էր Մոկքի Ջերմաձոր գավառում։ Ձորայը Նորայր Բյուզանդացին առաջարկում է ուղղել Ձայլ («Բազմավէպ», 1905, էջ 329)։ Անանուն պատմիչը հիշում է Ձոել ձևով։ (էջ 95)

195. Անձևացիք, գավառ Վասպուրականի հարավ-արևմտյան մասում։ Համանուն նախարարության տոհմական կալվածքը։ Գավառի անունն ունի վաղ հայկական ծագում. ասուրա-բաբելական արձանագրություններում հիշվում է «Ալզի», «Անզի» ձևերով։ (էջ 95)



196. Զենոն, Բյուզանդիայի Զենոն II կայսրը (476—491), որի ժամանակ՝ 480—481 թթ., Սահակ Բագրատունու հանձնարարությամբ, Մովսես Խորենացին գրել է «Հայոց պատմությունը»։ Թովմա Արծրունին ելնում է այն փաստից, որ Մովսես Խորենացին ապրել է մինչև Զենոն II կայսրի ժամանակները, ուստի կարծում է, թե նա իր պատմությունը հասցրել է մինչև այդ կայսրը։ (էջ 95)

197. Բնագրի «որոյ ժամանակ կենացն տևեալ ձգեալ ամս ճի...» նախադասության «որոյ» դերանունը, ըստ Ստ. Մալխասյանցի, պետք է վերաբերվի Սահակ կաթողիկոսին (տես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմ. առաջաբանը (1940 թ. հրատ., էջ XXIX—XXXI)։ Նախադասության իմաստից ելնելով. «որոյ» դերանունը պետք է վերագրել ոչ թե Սահակ կաթողիկոսին, այլ Սահակ Բագրատունի իշխանին։ Սակայն Թովմա Արծրունու այն հաղորդումը, թե հիշյալ Սահակն ապրել է 120 տարի, ենթադրել է տալիս, որ խոսքը վերաբերում է ոչ թե Սահակ Բագրատունուն (որն, ինչպես հայտնի է, երիտասարդ տարիքում զոհ գնաց թշնամու սրին), այլ Սահակ կաթողիկոսին, որի մասին Յայսմ. մեջ էլ առաջ գրում է, թե ապրել է հիրավի 120 տարի։ Բացի այդ, պատմիչի այն վկայությունը, թե այս Սահակին հիշում են Խորենացին և Կորյունը, գալիս է հաստատելու այդ ենթադրությունը, քանի որ թե՛ Կորյունը և թե՛ Խորենացին նշում են, որ Սահակ կաթողիկոսն իրոք ապրել է մինչև խոր ծերություն։ (էջ 95)

198. Տպագիր բնագրի «Ի չորրորդ դրուագի» արտահայտությունը Ստ. Մալխասյանցն առաջարկում է ուղղել «երրորդ դրուագիս», ելնելով այն ենթադրությունից, թե ձեռագիր բնագրում պետք է լիներ «Ի Գ դրուագիս», որը Գ և Դ տառերի նմանության պատճառով վեր է ածվել «Ի Դ դրուագիս» (տես Խորենացու Հայոց պատմության առաջաբանը, էջ XXX)։ Պատմության առաջին գրքության առաջին գլխում նույնպես Թովման հիշում է Խորենացու պատմության այս չորրորդ գրքի մասին։ (էջ 95)

199. Բնագրի «Ի վերայ երկեցունց» դարձվածքը Ստ. Մալխասյանցն ուղղում է «ի վերայ երկոցունց» (նույն տ., էջ XXX)։ Թարգմանել ենք ըստ այդ ուղղումի։ (էջ 95)

200. Կորյուն, V դարի հայ պատմագիր, հեղինակել է «Վարք Մաշտոցի» երկը, որը պահպանվել է երկու խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ (սկզբնականն ընդարձակ տարբերակն է)։ Երկը կարևոր աղբյուր է հայ գրի և գրականության պատմության համար։ (էջ 96)

201. Պերոզ, Պարսկաստանի թագավոր՝ 459—484 թթ.։ Թովմա Արծրունին այստեղ Պերոզին շփոթել է Հազկերտ II-ի հետ։ (էջ 97)

202. Վնդո Մարզպան. այս անունով մարզպան չի եղել Հայաստանում։ Հովհաննես Դրասխանակերտցին Վնդոյին հիշում է որպես նախարար։ (էջ 97)

203. Բնագրում «ի դուռն Ճաղատիճն», որն ուղղելի է «ի Դունի քաղաքին»։ Դա հավաստվում է Թովմայի հետագա շարադրանքով, ինչպես նաև Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմությամբ»։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 98)

204. Ռշտունիք, Վասպուրականի առաջին գավառը։ Տարածվում էր Վանա լճի հարավ-արևմուտքում։ Համանուն նախարարության ժառանգական հայրենիքը։ Հայտնի էր վաղ հայկական (նախաուրարտական) ժամանակներից։ (էջ 98)

205. Բնագրում՝ «Մայրին մեծի», որի տակ հասկացվում է Մեծամոր գետը («մայր»՝ շամբ և «մեծ» բառերից), Երասխի (Արաքս) վտակներից, այժմ կոչվում է Սև ջուր։ (էջ 98)

206. Ճորա դուռն կամ Ճորա պահակ, Դերբենդի անցքը։ (էջ 99)

207. Ապար աշխարհ, գտնվում էր Իրանի հյուսիս-արևելյան մասում՝ այժմյան Խորասանում։ (էջ 99)

208. Նեստորի աղանդ. V դարում Բյուզանդիայում կրոնաքաղաքական հոսանք։ Հիմնադիրն էր Կ. Պոլսի եպիսկոպոս Նեստորը, որը քարոզում էր Քրիստոսի մարդկության (մարդկային բնության) մասին։ Նեստորի աղանդը դատապարտվեց 431 թ. Եփեսոսի ժողովում։ 484 թ. Պարսից եկեղեցին պաշտոնապես ընդունեց նեստորականությունը։ (էջ 100)

209. Հայոց կաթողիկոս Քրիստափորը աթոռակալել է ավելի ուշ՝ 539—545 թթ.։ (էջ 100)

210. Դերջան, Հայոց Բարձր Հայք նահանգի գավառներից։ Գտնվում էր Եփրատ գետի հովտում։ Համապատասխանում է այժմյան Էրզրումի վիլայեթի Դերջան գավառակին։ (էջ 100)

211. Խաղտոց ձոր, գտնվում էր Հայաստանի Բարձր Հայք նահանգի Սպեր գավառում, Ճորոխ գետի միջին հոսանքում։ (էջ 100)

212. Տպագիր բնագրում «եկն եհաս յԱրզնարզին և յաշխարհն Մոկաց»։ Թովմա Արծրունու Պատմության մի ձեռագիր պատառիկում նույն դարձվածքը հետևյալ կերպ է ներկայացված. «եկն ի Հայս, յԱրզնարզին և յաշխարհն Մոկաց» (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ., № 2559, թ. 305 ա)։ Թարգմանել ենք ըստ ձեռագրի։ Արզնարզյունի մասին տես ծան. 90։ (էջ 101)

213. Մարկիանոս կայսր (450—457), հաջորդեց Թեոդոս II-ին (408—450)։ Սրա վերջինս 450-ի ամառը մահացավ, կայսերական գահը ժառանգեց քույրը՝ Պուլքերիան։ Նույն թվականին Մարկիանոսն ամուսնացավ Պուլքերիայի հետ և դարձավ կայսր։ (էջ 101)

214. Քաղկեդոնի եկեղեցական ժողով, գումարվել է 451 թվին, Քաղկեդոն քաղաքում (քաղաքը գտնվում էր Բոսֆորի արևելյան ափին)։ Հայ եկեղեցին հրաժարվեց մասնակցել ժողովին և մերժեց ժողովի հռչակած միաբնակ (քաղկեդոնական) դավանանքը։ (էջ 101)



215. Լևոն առաջին, Բյուզանդիայի կայսր (457—474 թթ.)։ (էջ 102)

216. Հաղամակերտ կամ Ադամակերտ, ավան Վասպուրականի Մեծ Աղբակ գավառում, այժմյան Բաշ-կալեի տեղում, Արծրունիների տոհմի բնօրրանը։ (էջ 102)

217. Զամասպ, Իրանի թագավոր (496—498 թթ.)։

218. Կավատ, Իրանի Կավատ I թագավորը։ Իշխել է նախ 488—496, ապա 498—531 թվականներին։ (էջ 103)

219. Խոսրով, Իրանի թագավոր Խոսրով I Անուշիրվանը (531—579 թթ.)։ (էջ 103)

220. Վաղարշ, Իրանի թագավոր՝ 484—488 թթ.։ (էջ 103)

221. Ծոփք կամ Չորրորդ Հայք, Հայաստանի 15 նահանգներից մեկը։ Տարածվում էր Արևմտյան Տիգրիսի վերին և Արածանիի ստորին ավազանում։ (էջ 103)

222. Եկեղ (տպագիր բնագրում Երից), ավան Բարձր Հայքի Եկեղյաց գավառում։ (էջ 104)

223. Այս գլխից հետո անցքերի հաջորդական շարքը ընդհատվում է, ապա 480-ական թթ. ժողովրդական ապստամբության մասին եղած պատումը մնացել է թերի և հաջորդ Դ գլխում արդեն խոսվում է ավելի քան մեկ դար հետո կատարված անցքերի մասին (ուշագրավ է նաև այն, որ Գ և Դ գլուխները գրեթե ունեն նույն վերնագիրը)։ Մ. Չամչյանը (Պատմություն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 210) հիշում է Արծրունյաց տանուտեր [illegible], որի մասին չեն նշում աղբյուրները (նաև Փարպեցին)։ Կարելի է ենթադրել, որ Թովմայի Պատմության այս թերի մասում եղել է Սահակ Արծրունու, ինչպես նաև V դ. վերջին և VI դ. կատարված դեպքերի մասին։ Հ. Աճառյանի կարծիքով Մ. Չամչյանը օգտվել է Թովմայի պատմության մի ձեռագրից, որն ունեցել է թերի մասը (տես Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 253)։ (էջ 104)

224. Մորիկ կամ Մավրիկիոս, Բյուզանդիայի կայսր (582—602)։ Հայտնի է իր վարած հայահալած քաղաքականությամբ։ Նրա օրոք (591 թ.) կատարվեց Հայաստանի երկրորդ բաժանումը, որով երկու մասի բաժանվեց նաև Հայոց եկեղեցին։ Ստեղծվեցին երկու կաթողիկոսություններ՝ լուսավորչադավան (աթոռանիստն էր Դվինը) և քաղկեդոնական (միաբնակ), որի կաթողիկոսանիստն էր Ավան գյուղը։ (էջ 104)

225. Որմիզդ, Պարսից Որմիզդ IV թագավորը (579—590)։ (էջ 104)

226. Վահրամ Մեհրևանդակ, Պարսից զորավար, այլ թագավոր (590—591) Վահրամ Չուբինը, որը ապստամբելով պարսից Որմիզդ IV թագավորի դեմ, 590-ին իրեն հռչակեց շահնշահ։ Բյուզանդիայի օգնությամբ Խոսրով II Փարվեզը 591 թ. հաղթեց Վահրամին և վերահաստատվեց գահին։ (էջ 104)

227. Թետալացիներ, միջինասիական հնագույն պետության՝ Բակտրիայի բնակիչները։ (էջ 104)

228. Վաճառ (Վեհռոտ) գետ, հայտնի էր նաև Օքսոս (արաբերեն՝ Ջեյհուն) անունով։ Ամուդարյա գետը Միջին Ասիայում։ Վեհռոտ պարսկերեն նշանակում է «լավ գետ» (տես J. Markwart, Wehrot und Arang, Leiden, 1938, s. 34)։ (էջ 104)

229. Տպագիր բնագրում Արևստան։ Ի նկատի ունի Միջագետքի Արվաստան (հունարեն Միգդոնիա) երկրամասը։ (էջ 105)

230. Տպագիր բնագրում «Մծուին»։ Պետք է լինի «Մծուրն» (այս մասին տես Գ. Աբգարյան, «Սեբեոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը», Երևան, 1965, էջ 147—150)։ Մծուրն քաղաքը մ. թ. I դ. վերջին հիմնել էր Հայոց թագավոր Սանատրուկ Արշակունին։ (էջ 105)

231. Տանուտերական իշխանություն։ Այդպես էր կոչվում Մարզպանական Հայաստանը, որտեղ ինքնուրույն իշխանությունների՝ նախարարությունների ղեկավար նախարարները և նրանց գլուխ կանգնած մարզպանը հորջորջվում էին «Տանուտեր»։ (էջ 105)

232. Բզնունյաց ծով, Վանա լիճը։ Այդպես է կոչվել լճի արևմտակողմյան գավառի՝ Բզնունիքի անունով։ (էջ 105)

233. Յոնաս, գյուղ Վասպուրականի Առբերանի գավառում, Վանա լճի հյուսիս-արևելյան ափին, Բերկրի (Բանդիմահի) գետի գետաբերանի մոտ։ (էջ 105)

234. Զարևանդ գավառ Ատրպատականում, Ուրմիա լճի հյուսիս-արևմուտքում, Վարարատ (այժմ Հաջիչայ) գետի ավազանում։ (էջ 105)

235. Միհր կամ Միթրա, զրադաշտական Իրանում լույսի, ճշմարտության և անկեղծության աստվածը։ (էջ 105)

236. Տպագիր բնագրում «Անդրեաստան»։ Պետք է ուղղել «Արտաստան» ձևով, ինչպես գրված է VII դարից Սեբեոս եպիսկոպոսի անունով մեզ հասած ստույգապատում երկասիրության մեջ (տես Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Երևան, 1939, էջ 39)։ Թովման օգտվել է Սեբեոսի աշխատությունից։ (էջ 106)

237. Նոշիրական, կամ Նոր-Շիրական, իշխանություն, որի տարածքը համընկնում էր Հայոց Պարսկահայք նահանգին։ (էջ 106)



238. Տպագիր բնագրում՝ «Զարասխ»։ Պետք է լինի «Զարասպ» (հմմտ. Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, էջ 39)։ Զարասպը 3497 մ բարձրությամբ լեռ է պարսկաթուրքական սահմանագլխին։ Հին շրջանում այն եղել է Հայաստանի և Ատրպատականի սահմանը (տես Հ. Մանանդյան, Քննական-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, էջ 12—14)։ (էջ 106)

239. Կոտայք, գավառ Այրարատ նահանգում։ Համապատասխանում էր մոտավորապես այժմյան Աբովյանի շրջանին։ (էջ 107)

240. Կոգովիտ (Կոգհովիտ), Այրարատի գավառներից, տարածվում էր Մեծ Մասիսի հարավ-արևմուտքում։ (էջ 107)

241. Հայոն, գյուղ Վասպուրականի Արտազ գավառում, Մակու քաղաքի հյուսիս-արևելքում։ Այժմ հայտնի է Հայոուն անունով։ (էջ 107)

242. Մակու, բերդ Վասպուրականի Արտազ գավառում։ Այժմ նույն անունով քաղաք Իրանում։ (էջ 107)

243. Փոկաս, Բյուզանդական զորապետ, Մորիկ կայսեր սպանությունից հետո հռչակվեց կայսր (602—610 թթ.)։ (էջ 107)

244. Հերակլես (Հարակլես), Բյուզանդիայի Հերակլ I կայսրը (610—641 թթ.), հաջորդեց Փոկասին։ Արյունահեղ պատերազմներ մղեց Կ. Պոլիսը պաշարած պարսիկների և ավարական խաքանի զորքերի դեմ և շահեց հաղթանակ։ (էջ 107)

245. Բնագրում՝ «Ոստիկան»։ Այս բառը փոխ է առնված պահլավերենից և նշանակում է թագավորին հավատարիմ բարձրագույն պաշտոնյա՝ վերակացու, կառավարիչ։ Արաբական տիրապետության ժամանակ Արմինիայի (Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի) արաբ կառավարիչները հորջորջվում էին ոստիկան անունով։ (էջ 108)

246. Բնագրում՝ «յաւուրն ինն և տասներորդի, յամսեանն մարգաց, որ օր Իբ էր ամսոյն, յամի քսան և հինգերորդի թագաւորութեանն Խոսրովու...»։ Խոսրովի թագավորելու 25-րդ տարին կլինի 616 թվականը, իսկ այդ թվականի մարգաց ամսի 1-ը համընկնում է ապրիլի 21-ի չորեքշաբթի օրվան։ Հետևաբար մարգաց ամսի 19-ը պետք է համապատասխանի 616-ի մայիսի 9-ին։ (էջ 108)

247. Բյուզանդիոն, քաղաք Բոսֆորի եվրոպական ափին։ Հիմնվել է մ. թ. ա. մոտ 660 թ.։ 330 թ. Հռոմի Կոստանդին կայսրը Հռոմեական կայսրության մայրաքաղաքը տեղափոխեց Բյուզանդիոն, որը կայսեր անունով վերակոչվեց Կոստանդնուպոլիս։ (էջ 108)

248. Դահեկան, ոսկուց կամ արծաթից դրամ, որը մեր փողով հաշված կլիներ 26 ռ. 40 կոպ.։ (էջ 109)

249. Հռոմ նշանակում է հռոմեացի։ Այս բառի տակ հին մատենագիրները հասկանում էին ոչ միայն Արևմտյան հռոմեական կայսրության բնակիչներին, այլև բյուզանդացիներին, քանի որ Բյուզանդիան պաշտոնապես կոչվում էր Հռոմեական կայսրություն։ Բյուզանդացիները հայ աղբյուրներում անվանվում են նաև հույներ, քանի որ Բյուզանդիայի հիմնական տարրը հույներն էին։ Հռոմ անունով հասկացվում էր նաև հունադավան եկեղեցուն հարող անձը։ (էջ 109)

250. Կեսարիա (Մաժաք), Կապադովկիայի մայրաքաղաքը։ Այժմ հայտնի է Կայսերի անունով։ (էջ 110)

251. Անտիոք, հնագույն հռչակավոր քաղաք Ասորիքում (Սիրիա), Օրոնտես գետի ափին։ Սելևկյան պետության մայրաքաղաքը։ IV դարի սկզբից այստեղ էր գտնվում տիեզերական չորս պատրիարքություններից մեկը։ Քաղաքը հիմնվել է մ. թ. ա. 300 թ. Սելևկոս Նիկատորի կողմից և անվանվել նրա հոր՝ Անտիոքոսի անունով։ Մ. թ. ա. 83—69 թթ. եղել է Տիգրան Մեծի հարավային գահանիստը։ Այժմ հայտնի է Անթաքիա անունով։ (էջ 110)

252. Տարսոն, քաղաք էր Կիլիկիայում, Կյուդնոս գետի ստորին ավազանում։ (էջ 110)

253. Ամասիա, հնագույն քաղաք Պոնտոսում։ Այժմ էլ կոչվում է նույն անունով։ (էջ 110)

254. Թեբայիս, հին Եգիպտոսի Ուասետ մայրաքաղաքը, որին հույներն անվանում էին Թեբե։ Համարվում էր հին աշխարհի հռչակավոր քաղաքներից մեկը։ Թեբեի ճոխությունը, գեղեցկությունը երգել է նաև Հոմերոսը։ (էջ 110)

255. «Սինկղիտոս» հունարեն բառ, նշանակում է «համաժողով»։ Գործ է ածվել Սենատոր (ծերակուտական) իմաստով։ (էջ 111)

256. Կարնո Քաղաք, Կարին, քաղաք Բարձր Հայքի Կարին գավառում։ Միջին դարերում կոչվել է նաև Թեոդոսուպոլիս («Թեոդոսի քաղաք»), ի պատիվ Բյուզանդիայի Թեոդոս Բ կայսեր (408—450), որի օրոք քաղաքը դարձավ Բյուզանդական Հայաստանի ռազմավարչական կենտրոնը։ Այժմյան Էրզրումը։

257. Որմի, քաղաք Պարսկահայք նահանգի Թրաբի գավառում, Ուրմիա լճից արևմուտք։ Մինչև վերջերս կոչվում էր Ուրմիա։ Այժմ հայտնի է Ռեզայե անունով։ (էջ 111)

258. Գանձակ, Ատրպատականի մայրաքաղաքը։ Գտնվում էր Ուրմիա լճի հարավ-արևելքում։ (էջ 111)

259. Անմատան կամ Ահմատան, քաղաք Մարաստանում։ Այժմ Համադան։ (էջ 111)



260. Մայ, Արևմտյան Պարսկաստանի Քուստակ-ի-խորբարան կուսակալության գավառներից։ Հիշվում է նաև VII դ. Աշխարհացույցում։ (էջ 111)

261. Տպագիր բնագրում «Վշնապ»։ Այս ձևը սխալ է, պետք է լինի Վշնասպ, ինչպես հանդիպում ենք նաև մատենագիրների մոտ (բացի Սեբեոսից, որից (կամ նույնի օգտագործած աղբյուրից) և վերցրել է Թովմա Արծրունին)։ (էջ 111)

262. Դկլաթ (Դեկղաթ), Տիգրիս գետի սեմական անունը։ (էջ 113)

263. Վեհկավատ կամ Վեհհավատ, քաղաք Բաղդադից մոտ 18 կմ հարավ, Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնի դիմաց՝ Տիգրիսի հակադիր աջ ափին։ (էջ 113)

264. Կավատ, Պարսից Սասանյան թագավոր Կավատ II-ը, իշխել է Խոսրովից հետո, 628 թ.։ (էջ 113)

265. Արտաշիր, պարսից Սասանյան թագավոր Արտաշիր III-ը (628—629)։ (էջ 114)

266. Խոռեմ, նույն ինքը Ցարուհան Շահրվարազը (Սասանյան չէր), թագավորեց 629 թ.։ (էջ 115)

267. «Իսմայելի որդիներ», «իսմայելացի», բառ աստվածաշնչյան ավանդության, Աբրահամ նահապետից և իր Հագար աղախնից ծնված Իսմայել որդու սերունդն էր, որի տակ հասկացվել են արաբները։ Վերջիններս հին մատենագրության մեջ անվանվում էին նաև «հագարներ», «հագարացիներ», Իսմայելի մոր անունով։ (էջ 115)

268. Բոռ, Պարսից (Սասանյան տոհմից) թագուհի Բորանը (629—630 թթ.)։ (էջ 115)

269. Ազարմիկ, Պարսից (Սասանյան տոհմից) թագուհի Ազարմեդուխտ (630—631 թթ.)։ (էջ 116)

270. Որմիզդ, Պարսից Սասանյան Որմիզդ V արքան, 629—632 թթ. իշխում էր Իրանի Հյուսիս-արևելյան շրջաններում, իսկ Տիզբոնում նստում էր Ցարուհազ-խոսրով թագավորը։ (էջ 116)

271. Հազկերտ, Սասանյան Պարսկաստանի վերջին թագավոր Հազկերտ III-ը (632—651/52)։ (էջ 116)

272. «Մադիամ» քաղաքի տակ հասկացվում է Մեդինան՝ մահմեդականության օրրանեղին Արաբիայում։ Այլ է Աստվածաշնչում հիշատակված Մադիամ ժողովուրդը, որը մ. թ. ա. II հազարամյակում բնակվում էր Աքաբայի ծոցի և Սինայան թերակղզու շրջանում։ Պատմագիրը փորձում է Մեդինայի անունը, հիմնավորումը կապել Մադիամի հետ։ (էջ 116)

273. Մովաբ, աստվածաշնչյան նախահայրերից, Աբրահամ նահապետի եղբորորդի Ղովտի որդին, որի սերունդները կոչվեցին մովաբացի-

ներ։ Նրանք ենթարկվեցին երկնառաք պատուհասի, իրենք կոտորվեցին, երկիրն ավերվեց։ (էջ 116)

274. Բնագրում «**Մաքայ**», որի տակ հասկացվում է Մեքքա քաղաքը՝ մահմեդական գլխավոր սրբավայրը։ Այժմ նույնանուն քաղաք Սաուդյան Արաբիայում։ (էջ 117)

275. **Ամալեկացիներ**, հրեաներին ազգակից ռազմիկ և խաշնարած ցեղ։ (էջ 117)

276. **Սամամ**, Քաաբի մոտակայքի աղբյուրը՝ Զամզամը, որը Մեքքայի երկրորդ սրբավայրն էր։ (էջ 117)

277. **Քաբա**, մահմեդականների սրբազան տաճար Քաաբը Մեքքայում։ (էջ 117)

278. **Սարգիս Բեիրայի** (**Բխիրա**) պատմական անձնավորություն լինելը դեռ չի ապացուցված։ (էջ 117)

279. **Արիանոսներ, Արիոսականներ**, IV—VI դդ. քրիստոնեական աղանդի՝ արիոսականության հետևորդներ։ Աղանդի հիմնադիրն էր ալեքսանդրիացի քահանա Արիոսը, որը քարոզում էր, թե որդին՝ Քրիստոսը հավիտենական չէ, համագո և հավասար չէ հորը՝ աստծուն։ (էջ 117)

280. **Իսրայելացիներ**, սեմական ցեղեր հին Պաղեստինում, հրեաների նախնիները։ Առաջին անգամ հիշատակվում են մ. թ. ա. XIII դ. կեսին։ (էջ 117)

281. **Դանա ցեղի դուստր**, ակնարկում է հին հունական առասպելաբանության մեջ հիշվող Դանայոսի դուստրերին, 50 քույրեր, որոնք միասին, նույն օրն ամուսնանալով՝ հենց առաջին գիշերը սպանեցին ամուսիններին, ուստի աստվածներից դատապարտվեցին լցնելու անհատակ տակառները։ (էջ 118)

282. Բնագրում «**Ալի որդի Աբուտալիբ**»։ Արաբական այսպես կոչված ուղղահավատ խալիֆաներից չորրորդը՝ Ալի իբն Աբու Թալիբը (656—661 թթ.)։ Մուհամմեդի հորեղբորորդին և փեսան։ Խալիֆ դառնալով՝ մայրաքաղաքը Մեդինայից տեղափոխվեց Քուֆա։ Պատերազմեց Օմայան խալիֆա Մուավիայի դեմ։ Սպանվեց գահակալական կռիվներից մեկում։ Ալին դարձավ մահմեդականության շիա դավանանքի մեծագույն մարգարեն, որը համարյա հավասար էր Մուհամմեդին։ Ալիի հետևորդները՝ շիաները նրա սպանության տարելիցը դարձրել են իրենց սգատոնը՝ շախսեյ-վախսեյ անունով (տե՛ս К. Босворт. Мусульманские династии. Москва, 1971, с. 27—28)։ (էջ 118)

283. **Մովաբացիներ**, տես ծան. 273։ (էջ 119)

284. **Աբուբեքր**, Մուհամմեդի հետևորդը, նրա մահից հետո դարձավ խալիֆա (632—634 թթ.)։ (էջ 119)

285. **Ամր**, արաբական խալիֆա Օմար I-ը, Հատաբի որդին (634—644 թթ.), որի օրոք արաբները նվաճեցին նաև Իրանի մեծ մասը։ Նրա ժամանակ մտցվեց մուսուլմանական տարեթիվը՝ Հիջրան։ (էջ 119)



286. **Օսման**, խալիֆա Օսման իբն Աֆանը (644—656 թթ.)։ (էջ 119)

287. Բնագրի «**ամս Ի**» պետք է ուղղել «ամս Յ»։ (էջ 122)

288. Բնագրում **ամս ՇԽԸ**։ Պետք է ուղղել ամս ՆԽԸ։ Գրչագրական սխալ է, որ հավանաբար առաջացել է Ն և Շ գրերի նմանությունից։ (էջ 122)

289. Բնագրի ՌՃԿ (1160) պետք է ուղղել ՌՄԱ (1201)։ (էջ 122)

290. **Մուավիա** (բնագրում «Մավիա»), Օմայան հարստության հիմնադիր և առաջին խալիֆա (661—680), պայքարի մեջ մտնելով Ալիի և նրա կողմնակիցների դեմ, 661-ին Ալիի սպանությունից հետո դարձավ խալիֆա։ (էջ 122)

291. **Եզիդ** (Եզիդ I,) Օմայան խալիֆաներից (680—683)։ (էջ 122)

292. **Աբդլմելիք** Օմայան խալիֆա Աբդ-ալ-Մալիքը (685—705), հաջորդեց հորը՝ Մրվանին։ (էջ 122)

293. **Վալիդ** (բնագրում Վլիդ), Աբդ-ալ-Մալիքի հաջորդ Ալ-Վալիդ I խալիֆան (705—715)։ (էջ 122)

294. **Խոսմ**, տես ծան. 30։ (էջ 122)

295. **Աստապատ**, գյուղաքաղաք Վասպուրականի Նախճավան գավառում, Արաքսի ձախ ափին։ Առաջին անգամ հիշատակվում է Թովմա Արծրունին։ Գյուղից երեք կմ հարավ-արևելք, Արաքսի ափին, գտնվում էր Աստապատի վանքը, որը հիշվում է նաև Կարմիր վանք անունով։ (էջ 123)

296. **Սուլեյման**, Օմայան խալիֆաներից (715—717 թթ.)։ (էջ 123)

297. **Ոմառ** (բնագրում Ումառ) Օմայան խալիֆա Ումար իբն Աբդ-ալ-Ազիզը (717—720 թթ.)։ (էջ 123)

298. **Լևոն** (բնագրում Ղևոն) Բյուզանդիայի Լևոն III Իսավրացի կայսրը (716—741 թթ.)։ (էջ 123)

299. **Եզիդ** (Եզիդ II), Օմայան խալիֆաներից (720—724 թթ.)։ (էջ 123)

300. **Շամշխենեցի** Օմայան խալիֆա Հիշամը (724—743)։ (էջ 123)

301. **Վլիդ**, Օմայան խալիֆա Ալ-Վալիդ II-ը (743—744)։ (էջ 123)

302. **Մրվան**, Օմայան վերջին խալիֆա Մրվան II ալ-Հիմարը (744—750)։ (էջ 123)

303. **Աբդլա**, Աբբասյան խալիֆայության հիմնադիր Աբուլ-Աբբասը (750—754)։ (էջ 123)

304. **Մյուս Աբդլա**, Աբուլ-Աբբասի եղբայրը՝ Աբբասյան խալիֆա Մանսուրը (Աբու Ջաֆար էլ-Մանսուր) (754—775)։ (էջ 123)

305. **Մահադի**, Աբբասյան խալիֆա Մահդին (775—785)։ (էջ 123)

306. Մահմեդ որդի Մանացու, Մահդի խալիֆայի որդի Մուսա էլ Հադին (785—786), Հաջորդեց Մահդիին։ (էջ 123)

307. Մուսե, նույն ինքը՝ Մուսա էլ Հադին։ (էջ 123)

308. Ահարոն, Աբբասյան խալիֆա Հարուն-ալ-Ռաշիդը, որը սակայն թագավորել է ոչ թե հինգ տարի, այլ 786—809 թթ.։ (էջ 123)

309. Ահարոնի որդի Մահմեդ, Աբբասյան խալիֆա Ամինը (809—813)։ (էջ 123)

310. Մայմոն, Աբբասյան խալիֆա Մամունը (813—833)։ (էջ 123)

311. Մահմեդի որդի Սահակ, Աբբասյան Մութասիմ խալիֆան (833—842)։ (էջ 123)

312. Մահմեդի որդի Ահարոն, Աբբասյան Վասիկ (Հարուն էլ Վաթիք Բիլլահ) խալիֆան (842—847)։ (էջ 123)

313. Ջափր. Աբբասյան խալիֆա Մութավաքիլը (847—861)։ Թովմա Արծրունին անվանում է նաև Ջափրմութոքլ, Բոըլ Ջափար։ (էջ 123)

314. Բնագրի «սա յայն Աբդլայն էջ» արտահայտությունը ուղղեցինք «Միւսն այն Աբդլան էջ» ձևով, քանի որ խոսքը գնում է ոչ թե Աբդլայի (Աբու-Աբբաս խալիֆայի), այլ նրա եղբոր՝ մյուս Աբդլայի (իմա՝ Աբու Ջաֆար էլ Մանսուրի) մասին (Տե՛ս «Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց Պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 123)։ (էջ 124)

315. Հոբելյան, տարեհաշվի ձև հին եբրայեցոց, որով յուրաքանչյուր 50 (երբեմն 25) տարին մեկ անգամ հանդիսավորապես նշվում էր որևէ հայտնի իրադարձության, անձնավորության կամ հաստատության տարելիցը։ (էջ 121)

316. Օլիմպիադա, անունը ծագում է Հին Հունաստանում Պելոպոննեսի Օլիմպիա քաղաքում մ. թ. ա. 776 թվականից չորս տարին մեկ անգամ անցկացվող օլիմպիական խաղերից (օլիմպիադաներից)։ Հին Հունաստանում ընդունված թվական, որն սկսվում է մ. թ. ա. 776-ից։ Երկու օլիմպիական խաղերի միջև ընկած քառամյա ժամանակաշրջանը հաշվվում է մեկ օլիմպիադա։ (էջ 121)

317. Ընդիկտոն (ինդիկտիոն), լատիներեն նշանակում է «հայտարարում», ժամանակագրության մեջ գործածվող 15-ամյա պարբերաշրջան, որ ընդունված էր հին և հռոմեական միջին դարերում, բյուզանդական երկրներում, թվականության մյուս ձևերի հետ զուգահեռ։ Գործածական է եղել 312 թվականից մինչև 18-րդ դարը։ Ինդիկտիոնը գործածվել է նաև հայ ժամանակագրության մեջ։ (էջ 124)

318. Հայկական տոմար. ի նկատի ունի Հայոց Մեծ թվականը, որը հաշվվում է 552 թ. հուլիսի 11-ից։ 1085 թվականից Հայոց մեծ թվականին զուգահեռ Հյուսիս-արևելյան Հայաստանում մոտ 200 տարի գործ է ածվել նաև Հայոց «Փոքր» կամ «Սարկավագադիր» կոչված թվականը, որն ի տարբերություն նախկին շարժական տոմարի. անշարժ էր. գործածվում էր նահանջ տարին։ «Հայոց փոքր թվական» է կոչվել նաև «Ազարիայի տոմարը» (1616 թ. տոմարագետ Ազարիա Ջուղայեցու կազմած տոմարը), որը սակայն գործածվել է միայն պարսկահայ և հնդկահայ գաղթօջախներում՝ 1617 թվականից։ Հայաստանում ավանդաբար ընդունված է եղել նաև Հայկ նահապետի հետ կապվող «Հայոց հին թվականը», որը սկսվում է մ. թ. ա. 2492 թվից։ (էջ 124)

319. «Հաստ». այստեղ գործ է ածված տուրք իմաստով։ Ընդհանրապես «հաստ» նշանակում է հասանելիք (մաս), հասույթ, տուրք և հարկ (Թ. Ավդալբեգյան, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 362—375)։ (էջ 125)

320. Սամառա, քաղաք Իրաքում, Տիգրիսի արևելյան ափին։ 836—892 թթ. եղել է Աբբասյան խալիֆայության մայրաքաղաքը։ (էջ 125)

321. «Ազատ» բառի տակ հին և միջնադարյան Հայաստանում հասկացվում էր լայն առումով՝ արտոնյալ դասերը, նեղ առումով՝ մանր ու միջին հողատերերը, որոնք պարտավոր էին այրուձիով կատարել զինվորական ծառայություն։ Ազատների դասը անվանվում էր նաև «ազատանի» հեծյալ անունով։ (էջ 127)

322. Բաղեշ (Բաղաղեշ), քաղաք Հայաստանի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառում։ Թովմա Արծրունու ժամանակ վաճառաշահ քաղաք էր՝ արաբական արտոնություններով. ուստի անվանում է «շահաստան»։ Միջին դարերից ի վեր կոչվել է նաև Բիթլիս անունով։ (էջ 128)

323. Արճեշ. գյուղ Վասպուրականի Անձևացիք գավառում։ (էջ 129)

324. Բնագրում «Այսաի»։ Պետք է լինի «Այսայի», քանի որ խոսքը Ալա Ծովափիի մասին է։ (էջ 130)

325. Բերկրի. Վասպուրականի Առբերանի գավառի գլխավոր բերդաքաղաքը։ Գտնվում է Բենգիմահի (Բերկրի) գետի ստորին հովտում։ (էջ 130)

326. Բնագրում «տա. բազառեն»։ Մ. Բրոսեն առաջարկել է ուղղել «տառ Ազատեն» (տես Histoire des Ardzrouni, p. 130, n. 4), որն իրոք հիմնավորված է։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 130)

327. Նկատի ունի Հայոց կաթողիկոս Հովհաննես Օվայեցուն, որ հովվել է 833—855 թվականներին։ (էջ 131)

328. Սոդոմայեցիներ, Սոդոմ քաղաքի բնակիչները։ Սոդոմը քաղաք էր հին Պաղեստինում, Մեռյալ ծովի մոտ։ Ըստ աստվածաշնչյան ավանդույթի, բնակիչների ծայրահեղ անառակությունների պատճառով աստված Սոդոմը Գոմոր քաղաքի հետ երկրաշարժով և հրակեզ անձրևով կործանել տվեց։ Այնուհետև Սոդոմ, սոդոմայեցի նշանակում էր անառակ վարք, բարք, աղմուկ, անկարգություն։ (էջ 132)

*329.* **Հովնեփ,** *արաբ մատենագիրների մոտ հիշվող Յուսուֆ (Յուսուփ իբն-Աբուսեթ)։ (էջ 133)*

*330. Տես ծան. 216։ (էջ 133)*

*331.* Մարդաստան *(Մարդոստան), Վասպուրականի գավառներից։ Այսպես է կոչվել մարդ ցեղի անունից։ Տարածվում էր Կոտուրի (Վասպուրականի) լեռների արևելակողմում, Մակու քաղաքից արևմուտք։ Գավառը կոչվել է նաև Մարդպետական, Մարդուցայք անուններով։ (էջ 134)*

*332.* Հանգս ձոր, *պետք է գտնվեր Վասպուրականի Մարդաստան գավառի հյուսիսային կողմում։ (էջ 134)*

*333.* Խլաթ, *քաղաք Հայաստանի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառում, Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին։ Այժմ հայտնի է Ախլաթ անունով։ (էջ 134)*

*334.* Մուշ, *քաղաք Տարոն գավառում։ Հայտնի էր հնագույն հիշատակներով։ Անունը հավանաբար կապվում է Մուշկիների հետ (Մուշկեր անունով ասորեստանյան աղբյուրները կոչում էին մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհի հնդեվրոպական (թրակափռյուգիական ցեղերին)։ (էջ 135)*

*335.* Խութի լեռներ, *կազմում էին Սասունի լեռների արևելյան մասը և տարածվում մինչև Բաղեշ գետը։ Խութ անունով էր կոչվում նույն լեռներում գտնվող գավառը, որն այժմ էլ պահպանել է իր անունը։ (էջ 135)*

*336. Բնագրում* «Ի Բոյնս խուժանց»։ *Խութի իմաստից ելնելով, թարգմանել ենք «իր բնում»։ (էջ 136)*

*337.* Ուլպիան (Ուլպիանոս). *Հռոմեացի նշանավոր իրավագետ (ծննդյան թիվն անհայտ է, մահացել է 228 թ.), ունի բարոյախոսական և օրենսդրական մի շարք ստեղծագործություններ։ (էջ 140)*

*338. «Աշխարհն» բառի տակ այստեղ ի նկատի է առնված նահանգը, գավառը։ (էջ 140)*

***339.** Ի նկատի ունի աստվածաշնչյան Մովսեսին, որն ըստ ավանդության հրեական կրոնի հիմնադիրն էր, մարգարեն, օրենսդիրը, զորավարը, Եգիպտոսի լծից հրեաների ազատարարը։ Հայտնի են նրա («Մովսիսական») օրենքները։ Մովսեսը հեղինակել է Աստվածաշնչի Հին կտակարանի առաջին հինգ գրքերը՝ «Հնգամատյանը»։ Մովսեսի անունով այստեղ հիշատակված խոսքերը բառացի չեն բերված։ (էջ 141)*

***340.*** **Սակաստան կամ Սագաստան,** *Պարսկաստանի արևելյան նահանգներից։ Սահմանակից էր Հնդկաստանին՝ ներկայիս Աֆղանստանի տարածքում։ (էջ 141)*

***341. Այսինքն Տիգրանը։ (էջ 141)***



*342.* Եփրեմ. *Հրեաների Հովսեփ Գեղեցիկ նահապետի երկրորդ որդին, որի անունն առնելով՝ դարձավ Իսրայելի 12 ցեղերից մեկը։ (էջ 142)*

*343.* Բենիամին, *իսրայելացիների նախահայր Հակոբ նահապետի որդին։ (էջ 142)*

*344. Տարբեր է Աշոտ Ա-ի հայր Սմբատ Բագրատունուց։ (էջ 143)*

*345.* Ապահունիք, *Հայաստանի Տուրուբերան նահանգի գավառներից (այժմյան Մանազկերտի սանջակը)։ (էջ 143)*

*346.* Հողց. *դյուղաքաղաքը ուսումնասիրողները տեղադրում են Հայոց Աղձնիք նահանգում (Ղ. Ինճիճյան, Հ. Մարկվարտ, Հ. Հյուբշման), իսկ Մ. Բրոսսեն հավանական է համարում այն տեղադրել Սասունում* (Histoire des Ardzrouni. p. 110.n.3)։ *Թովմա Արծրունու հաղորդումից երևում է, որ Բուղա զորավարը Ապահունիքից միրաք զորապետին ուղարկում է Ռշտունիք, դեպի որտեղ միրաքի զորամասը պետք է անցներ Վանա լճի հյուսիս-արևմտյան եզերող շրջաններով, իսկ հակառակը՝ լճի հյուսիս-արևելյան կողմով դեպի Վան՝ Աշոտ Արծրունու իշխանանիստը։ Բնական է, որ միրաքը դեպի Ռշտունիք կգնար ավելի կարճ ու ապահով ուղիով, այսինքն Բզնունիք գավառով ու Աղձնիքի հյուսիս-արևելյան շրջանների ճանապարհներով։ Հողցը պետք է գտնվեր Ռշտունիքից արևմուտք, Աղձնյաց ձոր և Երևարք գավառների սահմանագլխին։ Հողցը հիշում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին։ (էջ 144)*

*347.* Առվանից (Առվենից) ձոր, *գավառ Հայոց Մոկք նահանգում։ (էջ 144)*

***348.** Ի նկատի ունի Ոստան քաղաքը* **Վանա** *լճից հարավ, Ռշտունյաց նախարարության ժառանգական հայրենիք Ոստանը։ (էջ 144)*

*349.* Աձանա ձոր. *պետք է գտնվեր Վասպուրականի Ռշտունիք գավառի հարավակողմում։ (էջ 144)*

*350.* **Բնագրում** *«որովն»։ Պետք է ուղղել «որովս»։ (էջ 144)*

*351.* Մարդպետական. *Տես ծան. 331. (էջ 145)*

*352.* Սիոն, *փոքր լեռ Երուսաղեմի միջնակայքում (քաղաքի հարավային մասը գտնվում է այդ լեռան վրա)։ Համարվում է սրբազան լեռ (էջ 115)*

*353.* «Մեծ քաղաքը», «Մեծն արքա» *բառերի տակ պատմագիրն ի նկատի է առել Մուհամմեդ մարգարեին։ (էջ 146)*

*354.* Ծառվանի ձոր, *դատելով պատմագրի մոտ եղած տվյալներից, պետք է գտնվեր Հայոց ձոր երկրամասի հյուսիս-արևմտյան կողմերում։ Ղ. Ինճիճյանը առաջարկում է այն ուղղել «Դասվանա ձոր» (Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 533)։ Սակայն այդպիսի ուղղումը բացի հնչյունայինից, ուրիշ կռվաններ չունի և անհարիր է փաստերին։ (էջ 147)*

355. Վանտոսպ, տես ծան. 122։ (էջ 147)

356. Նկան, ամրոց Վասպուրականի Թոռնավան գավառում, այժմյան Նազան գյուղի տեղում։ (էջ 147)

357. Թոռնավան, գավառ Վասպուրականում, Վանա լճից հյուսիս-արևելք։ Կենտրոնն էր Թոռնավան ավանը։ (էջ 147)

358. Ղևկորվառ (Ղեկարատ) ավանը պետք է գտնվեր Վասպուրականի Թոռնավան գավառում, Նկան ամրոցի հարավ-արևմտյան կողմերում։ (էջ 147)

359. Բնագրի «Դրդեալ» («փայլփլած») բայաձևը Հր. Աճառյանն առաջարկում է ուղղել «Գոգեալ» («փորած, փոսացրած»), որն ավելի է ներդաշնակում հեղինակի խոսքին (տես Հր. Աճառյան, «Բանասիրական ուսումնասիրություններ», Երևան, 1976, էջ 85)։ Թարգմանել ենք ըստ այդ ուղղումի։ (էջ 148)

360. Ճահուկ (Ճախուկ) բերդ։ Տես Անանուն Մատենագրի շարադրություն, ծան. 3։ (էջ 151)

361. Բաբելոնի գերություն։ Բաբելոնի Նաբուքոդոնոսոր թագավորի (մ. թ. ա. 604—562 թթ.) կողմից հրեաների գերեվարելը Բաբելոն։ (էջ 154)

362. Բնագրում «Որիվարացն»։ Պետք է ուղղել «Որիվարականացն», այսինքն՝ «ձիավորներին», «հեծյալներին», ինչպես և թարգմանել ենք։ (էջ 155)

363. Բնագրում «Ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ»։ Այստեղ «տաճիկ» բառը համանշանակ է «մահմեդական»-ի։ Խոսքը քրիստոնյա պարսիկի մասին է, որը թերևս ընդունելով մահմեդականություն, մեղանչել էր իր քրիստոնեական խղճի առաջ և վերստին կամեցել վերադառնալ նախկին հավատին։ Կամ, որ նույնպես հավանական է, պարսիկ լինելու հանգամանքը արաբներին կարծել էր տալիս, թե իրենց զոհը մահմեդական է։ (էջ 156)

364. Որսիրանք, գավառ Հայաստանի Կորճայք նահանգում։ (էջ 158)

365. Թով (Թուայ). գյուղ Որսիրանք գավառում։ (էջ 158)

366. Զարեհավան. գավառ Հայաստանի Պարսկահայք նահանգում, Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք։ Կենտրոնն էր Զարեհավան գյուղը։ (էջ 158)

367. Ակե, փոքր գավառ Վասպուրականում, Անձևացյաց գավառից հարավ-արևմուտք։ Ակեացի նախարարության ժառանգական հայրենիքը։ Գավառը նաև եկեղեցական վիճակ (թեմ) էր, որի եպիսկոպոսությունը հաստատվել էր Գրիգոր Լուսավորչի կողմից՝ IV դ. սկզբին։ (էջ 158)

368. «Աղջը լեռնակողմերում»։ Աղջի է կոչվել հին և միջին դարերում Անձևացիք գավառը (ասուրա-բաբելական արձանագրություններում՝ Alzi)։ (էջ 158)

369. Առնոտն, գավառ Անձևացիքից արևմուտք, Առնոս լեռան հարավային մատույցներում։ (էջ 158)



370. Ձողա լեռը գտնվում է Կորճայք նահանգի Որսիրանք գավառի հարավ-արևմուտքում, այժմյան Ջուլամերիքից հարավ-արևելք՝ Քուրդստանի լեռներում, Թուրքիայի և Իրաքի սահմանագլխին։ Այժմ կոչվում է Չիլոդաղ (ունի 4168 մ բարձրություն)։ (էջ 158)

371. Զավ (կամ Մեծ Զավ) գետը Տիգրիսի վտակներից է, որը (վերին ավազանում) հոսում է նաև Հայաստանի Կորճայք նահանգով։ (էջ 159)

372. Ելի (Այլի)։ Պարսկահայքի գավառներից, տարածվում էր Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք։ Գավառում հայտնի էր նաև Էլի վանքը (այժմյան Էլի անունով գյուղի մոտ)։ (էջ 159)

373. Ամբատաբերդը գտնվում էր Կորճայքի Ճահուկ գավառում։ (էջ 159)

374. Պարսից Գարզից։ Հավանաբար ի նկատի ունի Գարդից քաղաքը, որը գտնվում էր Ղազնայից ոչ հեռու, մի բլրի վրա Հնդկաստան տանող ճանապարհին (տես В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПБ, 1903, с. 52)։ (էջ 163)

375. Բնագրում «արՃունի զորացն»։ Ելնելով խոսքի իմաստից, թարգմանեցինք «արքունի զորագլուխներին»։ (էջ 164)

376. Թոքվամ (Տոքավամ), ըստ աստվածաշնչյան ավանդության, Հրեաստանի Սողոմոն թագավորի ծառան ու հաջորդը։ Անընդմեջ պատերազմների մեջ էր և աչքի էր ընկնում անիմաստ դաժանությամբ, ինչի պատճառով իր դեմ ապստամբեցին հրեական ցեղերը։ (էջ 172)

377. Հիշվում են Աստվածաշնչում («Գիրք ժողովողի» մեջ)։ (էջ 176)

378. Անանիա և Սափիրա։ Հրեաների հոգևոր առաջնորդներից (մ.թ. I դ.)։ (էջ 179)

379. Շամշղտա (Շամշուլդե, Սամշվիլդե). բերդ Գուգարք նահանգում, Գուգարաց բդեշխների գահանիստ Ծուրտավ քաղաքի մոտ։ (էջ 187)

380. Սանարներ, ցեղեր, որոնք բնակվում էին Թերեք գետի վերին ավազանում՝ Սանարքում (այժմյան Ղազբեկի շրջանը)։ (էջ 188)

381. Աբխազներ, միջնադարում Աբխազաց աշխարհ էր կոչվում ոչ միայն բուն Աբխազիան, այլև Արևմտյան Վրաստանը։ Արաբ մատենագիրները նույնիսկ ամբողջ Վրաստանն էին անվանում Աբխազիա։ (էջ 189)

382. Վասնիանյան (Վասնյան) դաշտ, տեղորոշվում է Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Վարդանակերտ գավառում (տես Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, (էջ 83)։ (էջ 189)

383. Գարգարացվոց դաշտ, գտնվում էր Փայտակարան նահանգում Գարգար գետի հովտում (այժմյան Միլի դաշտը)։ (էջ 191)

384. Քրիշ. ամրոց Արցախում՝ Մյուս Հաբանդ գավառում։ XV դարից

հիշվում է Տող անունով։ Դիզակի Մելիքանիստ գյուղը, այժմ էլ գոյություն ունի։ (էջ 191)

385. **Ամադեկ**, ըստ Աստվածաշնչի, Եղիփազի որդին, որից սերված ժողովուրդը՝ ամաղեկացիները արաբներին ազգակից թափառաշրջիկ ու ռազմասեր ցեղ էին, բնակվում էին Սինայի թերակղզում։ Եգիպտոսից հրեաների դուրս գալու ժամանակ սրանք առաջինը հարձակվեցին հրեաների վրա, սակայն Մովսես մարգարեն հրամայեց կոտորել նրանց։ (էջ 192)

386. **Հեսու** (Նավեի որդին), Իսրայելի նշանավոր զորավար, հաջորդելով Մովսեսին, գրավեց Պաղեստինը, հաղթեց Քանանացիներին։ (էջ 192)

387. **«Ինչպես... Սամուելը Ագագին»**: Սամուելը հրեաների հայտնի դատավորը և մարգարեն էր (մ. թ. ա. XI դ. առաջին կես), որը մեծ ազդեցություն ուներ նաև ժամանակակից թագավորների վրա։ «Ագագ» Ամաղեկացի թագավորների անունն էր, (ինչպես «կեսար» «փարավոն», «շահ» և այլն)։ Աստվածաշնչում Ագագը (Սավուղ թագավորը) իր կատարած մեղքերի պատճառով կտոր-կտոր է լինում Սամուելի ձեռքով՝ Աստծու առջև։ (էջ 192)

388. **Դավիթ**. ըստ Աստվածաշնչի, իսրայելահուդայական պետության թագավոր (մ. թ. ա. XI—X դդ.)։ (էջ 192)

389. **Գողիաթ**, ըստ Աստվածաշնչի, փղշտացի հսկա, հրեաների ու փղշտացիների միջև մղված պատերազմի ժամանակ սպանվեց Դավիթ թագավորի ձեռքով։ Գողիաթ ասելով հասկանում են բաջ և հաղթանդամ անձնավորություն։ (էջ 192)

390. **Դմիշկ** (Դիմիշկ), Դամասկոսի արաբերեն անունը։ Արաբները Դամասկոսը կոչում են նաև «Դիմիշկ էշ շամ», կամ սոսկ «Դիմիշկ», ինչպես նաև լոկ «Շամ» անուններով։ Հայկական աղբյուրներում մեծ մասամբ հիշվում է Շամ անունով (որից էլ «Շամա երկիր», «Շամա գավառ»)։ (էջ 196)

391. **Վանանդ**, Այրարատի գավառներից, տարածվում էր Ախուրյան գետի հովտում։ Այստեղ էր Կարս քաղաքը, որի անունով XI դարից կոչվել է նաև գավառը։ (էջ 197)

392. **Գուռգ** (Գուռզ), բերդ Հայաստանի Արցախ նահանգի Մյուս Հաբանդ գավառում, այժմյան Տումի գյուղի մոտ։ (էջ 199)

393. **Սևորդիներ** հունգարական ցեղ, VIII դարի կեսին հյուսիսից անցնելով Կովկասյան լեռնաշղթան, բնակություն հաստատեցին Հայաստանի Ուտիք նահանգում։ IX դ. սևորդիները մերվել էին հայ միջավայրին և հաճախ դաշնակցում էին հայերին՝ ընդդեմ արաբների։ (էջ 199)

394. **Շաքի** գավառ Աղվանքում, համապատասխանում էր հիմնականում Ադրբեջանական ՍՍՀ Նուխիի շրջանին։ (էջ 199)

395. **Վայոց ձոր**. Սյունիք նահանգի գավառներից, տարածվում էր այժմյան Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջանների տարածքում։ Բնագրում



այս գավառի տեր Վասակը հորջորջվում է «իշխանականս» ձևով, որը պետք է լինի «իշխանիկս») տես Թ. Ավդալբեգյան. Հայագիտական հետազոտություններ, էջ 181, ծ.7)։ Հովհ. Դրասխանակերտցին այս նույն Վասակին հիշում է՝ «Մեծ իշխանն Սիւնեաց Վասակ, որ ըստ փաղաքշականին իշխանիկ անուանիւր» (տես Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 136, 142)։ (էջ 203)

396. Բնագրի **«Պարիսպանից»-ը** պետք է ուղղել «Պարզմանից» (տես Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 137. ծան.)։ Պարզմանը գավառ էր Մեծ Հայքի Ուտիք նահանգում։ Համապատասխանում է այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Ղազախի շրջանին և Հայկական ՍՍՀ Շամշադինի շրջանի մի մասին։ (էջ 203)

397. **Ճենաց Մամգունները»**: Այսինքն Մամիկոնյանների, որոնց նախնի Մամգունը, պատմական ավանդության համաձայն, գաղթել էր Ճենաստանից. այսինքն Ճաների երկրից՝ Խաղտիքից (Սև ծովից հարավ-արևելք)։ Սմանը սխալ կիրպով Ճենաստանը նույնացնում են Չինաստանի հետ։ Սեներեքիմյաններ ասելով պատմիչը ի նկատի ունի Արծրունիներին։ (էջ 204)

398. **Սպեր**. գավառ Հայաստանի բարձր Հայք նահանգում, Ճորոխ գետի վերին հոսանքում։ (էջ 206)

399. Բնագրում՝ **«Գադարար»**։ Հ. Մարկվարտը առաջարկել է այս բառն ուղղել «Գայլարար» (ելնելով անշուշտ լ և Ղ գրերի նմանության փաստից), կամ՝ «դաղտարար» (տես Հ. Մարկվարտ, Հայ Բագրատունյաց Ծագումնաբանությունը, Վիեննա, 1913, էջ 139, ծան. 3)։ «Գադաարար» ավելի է հարիր խոսքի ամբողջական իմաստին։ Ընդամին Ն. Գուրյանը կարծում է, թե «Իշխանիկս» հատուկ անուն է, իսկ «Գադարարս»՝ հասարակ և ունի «դաղտնարար» իմաստը (տես Ն. Գուրյան, Ազգային Պատմութիւն, Երուսաղեմ, 1934, էջ 428)։ Իսկ Ժ. Լորանը կարծիքով Գադարարը հատուկ անուն է, և որ Սպերի Գրիգոր Բագրատունի իշխանը կոչվել է նաև «Գադարար իշխանիկ» (տես J. Laurent, Un féodal Arménien au IX-e siecle: Gourguen Ardzrouni fils d'Abou Beldj; Etudes d'Histoire Arménienne, Louvain, 1971, p. 31). Սակայն «Իշխանիկը» սոսկ մականուն է, որ տրվել է նույն իշխանին (ինչպես «արքայիկ» անունը՝ տրված Տարոնի տեր Դավիթին)։ Հայկազյան բառարանը «Իշխանիկս» մեկնում է «կարիճ և սիրուն իշխան»։ Լեոն նույնպես կարծում է, թե իշխանիկ հատուկ անուն էր (Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 451)։ (էջ 206)

400. **Ասամանյակ բերդը** գտնվում էր Բարձր Հայքի Սպեր գավառում։ (էջ 206)

401 Բնագրում **«իշխանականն»**: Հր. Աճառյանն առաջարկում է ուղղել «Իշխանիկանն» (տես Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 540)։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 206)

402. **Աշխարհաբերդ**. գտնվում էր Բարձր Հայքի Սպեր գավառում։ (էջ 206)

403. Ճվաշ (Ճվաշոտ), Վասպուրականի գավառներից՝ (Ճվաշ գետի ավազանում։ (էջ 207)

404. Խոզաբերդ, գյուղ Վասպուրականի Աղիովիտ գավառում, Վանա լճից հյուսիս-արևելք։ (էջ 207)

405. Ուրմանիկներ, արաբական տիրապետության ժամանակ Հայաստան գաղթած արաբական ցեղ։ Հաստատվել էին Տուրուբերան նահանգում, Վանա լճից հյուսիս-արևելք։ (էջ 208)

406. Որդոֆ, գյուղ Վասպուրականի Երվանդունիք գավառի արևելյան սահմանագլխին՝ Հայոց ձորում։ (էջ 208)

407. Արվանդունի անունը Երվանդունի(ք) գավառի նախնական ձևն է, որ պահպանվել է Թովմա Արծրունու մոտ։ Տես ծան. 119։ (էջ 208)

408. Սուրբ Խաչ վանք, Արծրունիների տոհմական գերեզմանոցը։ Գտնվում էր Վասպուրականի Մեծ Աղբակ գավառում, Ոսի գյուղի մոտ։ (էջ 211)

409. Գեդեոն (Գեդեոն), հրեաների դատավորը (մ. թ. ա. XIV դ), որը նրանց ազատեց օտար լծից։ (էջ 211)

410. Հայոց կաթողիկոս Զաքարիա Ձագեցին գահակալել է 855—876 թթ. (էջ 212)

411. «Գերության ութերորդ տարում»։ Հայ իշխաններին Բուղան Սամառա է տարել 852 թ., հետևաբար գերության ութերորդ տարին կլինի 859 թվականը։ (213)

412. Միխայել, Բյուզանդիայի կայսր Միքայել III-ը (856—867)։ (էջ 214)

413. Տփղիսում (Թիֆլիս) այն ժամանակ նստում էր արաբ ամիրա։ Քաղաքը արաբական ամիրայության կենտրոնն էր։ (էջ 215)

414. Ջափրմորոֆլ, տես ծան. 313։ (էջ 216)

415. Մորնիե, Մունթասիր խալիֆան (861—862)։ (էջ 216)

416. Բնագրում «Ամիսս Գ», որն ուղղեցինք «ամս Դս՝ չորս տարի, քանզի Մուհթիս (իմա՝ Մուսթաին) խալիֆան իշխել է 862—866 թթ.։ Շփոթն առաջացել է «ամս» և «ամիս» բառերի, ինչպես նաև «Գ» և «Դ» գրերի նմանությունից։ (էջ 216)

417. Նոազանի կամ Նշանգանի, գյուղ Վասպուրականում։ Ճշտիվ չի տեղորոշվում. (էջ 217)

418. Բագարան, քաղաք Հայաստանի Այրարատ նահանգի Արշարունիք գավառում։ Հայաստանի սրբավայրերից, առաջին Բագրատունի իշխանների վարչաքաղաքական կենտրոնը։ Գտնվում է Ախուրյանի աջին, Անիից ոչ հեռու (էջ 218)



419. Հակոբիկյան Ուխտը կազմված էր քրիստոնեական եկեղեցու միաբնակ դավանանքի կողմնակիցներից։ Հիմնել է 451 թ., Եդեսայի Հովակիմ Բարադա եպիսկոպոսը։ (էջ 219)

420. Կանգավար (Կանգուար), ամրոց Վասպուրականի Անձևացիք գավառում, այժմյան Կենգևեր գյուղի տեղում։ (էջ 219)

421. Բնագրի «Ի Յէ ամի» (307 թ.) դարձվածքը ուղղել ենք «Ի ՅԺԷ ամի» (317 թ.), այսինքն 868 թ. երբ իրոք Աշոտ Արծրունին վերադարձավ գերությունից։ Սա հաստատվում է Թովմա Արծրունու մեկ այլ վկայությամբ (տես գլուխ ԺԸ), որ ասվում է, որ Աշոտ Արծրունին ապրեց գերեդարձությունից հետո վեց տարի և վախճանվեց ՅԻԳ թվին (874-ին), որից վեց տարի հետ գնալով կստանանք 868 թիվը։ (էջ 220)

422. Սեդեկիա, հրեական Հուդա պետության վերջին թագավորը (մ. թ. ա. VI դ. սկիզբը)։ 586-ին Նաբուքոդոնոսորի կողմից գերության տարվեց Բաբելոն և կուրացվեց։ Իսկ Նաբուքոդոնոսորը Քաղդեական (Նոր-բաբելոնական) պետության թագավորն էր (մ. թ. ա. 604—562), որը հրեական Հուդա պետությունը կախման մեջ գցեց, երկու անգամ՝ 597 և 586 թթ. գրավեց Երուսաղեմը, բնակչությանը գերեվարեց Բաբելոն։ (էջ 220)

423. Կզվին, քաղաք Պարսկաստանի հյուսիսում, Կասպից ծովից հարավ։ Այժմ հայտնի է Ղազվին անունով։ (էջ 221)

424. Վանք Անձևացյաց գավառում։ (էջ 222)

425. Ամյուկ, անմատչելի ամրոց համանուն հրվանդանում՝ Վանա լճի հյուսիս-արևմուտքում՝ Առբերանի գավառում, այժմյան Համոկ կամ Ամիկ գյուղի մոտ։ (էջ 224)

426. Վարագ, վանք Վասպուրականի Տոսպ գավառում, Վարագա լեռան ստորոտում, Վան քաղաքից հարավ-արևելք։ Հայտնի էր իր հնավանդ հիշատակներով։ Անվանվում է «սրբաստանների մայրաքաղաք» (այսպես էին կոչվում Հայոց առավել հռչակված վանքերը՝ Էջմիածինը, Ս. Կարապետը, Հաղպատը և այլն)։ (էջ 224)

427. Անևական (կամ Անավկանից) գյուղը գտնվում էր Վասպուրականի Տոսպ գավառում, Ձորո վանքի մոտ։ (էջ 224)

428. Վանեվանյան էին կոչվում Հայոց Վահագն աստծուն նվիրված մեհյանները։ Այստեղ պատմագիրն ի նկատի ունի Վասպուրականի Տոսպ գավառում, Ձորո վանքի մոտ եղած մեհյանը։ (էջ 224)

429. Բնագրում «Ամդային Հիսե», ինչը բառացի նշանակում է «Ամիդի տերը», «Ամիդցին»։ Ակնարկում է Ամիդում իշխող Շայբանյան ամիրա Իսա իբն ալ-Շայխին, որը սկզբնապես Ասորիքի կառավարիչն էր, ապա նշանակվեց Միջագետքի և Հայաստանի ոստիկան։ Ուստի Թովմա Արծրունին գրում է, թե Հիսեն «Հայոց զորավար» էր։ (էջ 224)

430. Երիվարաց արկման դաշտ։ Այս անվանումը կարելի է թարգմանել որպես «դաշտ, որտեղից երիվարներ են վերցրել», կամ «երիվարներ գցելու դաշտ», քանի որ «արկանել» բայը գրաբարում ունեցել է ոչ միայն «գցել», «նետել» իմաստը (որից էլ այժմյան «արկղ», «զարկ», «զարկել» բառերը), այլև «վերցնել» իմաստ։ Դատելով Թովմա Արծրունու հաղորդումից, այս վայրը պետք է գտնվեր Վան քաղաքի հյուսիս-արևմուտքում, Լեզք գյուղից ոչ հեռու։ (էջ 225)

431. Լեզք, գյուղ Վասպուրականի Տոսպ գավառում, Վան քաղաքից հյուսիս-արևելք։ Գյուղը գոյություն ուներ մինչև 1915-ի եղեռնը։ (էջ 225)

432. Բնագրում «զօրացն դիզեցին» Ներսես Բյուզանդացին առաջարկում է կարդալ «զԱրացն Գեղեցիկն» (տես Ներսես Բյուզանդացի, Հայկական բառաքննություն, էջ 20)։ Թարգմանել ենք համաձայն հիշյալ ուղղումի։ (էջ 225)

433. Ամադալու կամուրջ (ավելի հայտնի էր Սկանիր անունով). գտնվում էր Վասպուրականի Աղբակ գավառի հյուսիսային սահմանագլխին։ Այժմ հայտնի է Մերջեք-գազ անունով։ (էջ 225)

434. Առնջակայան ավան։ Տես ծան. 129։ (էջ 225)

435. Տարեթիվը բնագրի «Ն ամ ի գերութեանն» պետք է կարդալ «ԺԵ ամ ի գերութեանն», քանի որ հենց իր՝ Թովմայի վկայությամբ Աշոտ Արծրունին գերության տարվեց 852-ի վերջին և ազատ արձակվեց 868-ին։ Հետևաբար գերության մեջ է եղել ոչ թե «Ե ամ» (5 տարի), այլ «ԺԵ ամ» (15 տարի)։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 225)

436. Պաղակ, ավան Վանա լճի արևմտյան կողմում, Բզնունիք գավառում։ (էջ 228)

437. Մաղյուր։ Այս անվան տակ պետք է հասկանալ IX դ. 60-ական թվականներից Ապահունիքին, Մանազկերտին տիրած կայսիկ ամիրա Աբուլ-Վարդին (տես Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 95—99, 107—110)։ (էջ 228)

438. Ասպարեզ։ Բառացի նշանակում է ձիընթացարան, ինչպես և ձիարշավ։ Հրապարակային եղել է նաև երկարության չափի միավոր։ Հին և միջնադարյան շրջանում տարբեր ժողովուրդների օգտագործած ասպարեզի երկարությունները մետրականի վերածելիս չափագետները հիմք են ընդունում հռոմեական-իտալական (միջինը 1480 մ), կամ հռոմեական-փիլետերյան մղոնը (միջինը 1508 մ)։ (էջ 229)

439. Սևան Բերդը հայտնի է նաև այլ աղբյուրներից (Հմմտ. Դրսախանակիրոցի, Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող մի Հայսմավուրքից՝ Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 100 և այլն)։ Բերդը գտնվում էր Վան քաղաքից հյուսիս-արևելք՝ Վասպուրականի Արճիշակովիտ գավառում։ (էջ 229)



440. Սևոսատան, նկատի ունի Հին Ասորեստանի տարածքը։ (էջ 231)

441. Մանազկերտ (հնագույն ձևը՝ Մանավազակերտ), քաղաք Տուրուբերանի Ապահունիք գավառի հարավ-արևմտյան սահմանագլխին։ Հիմնվել է մ. թ. ա. IX դարում։ Ուրարտական արձանագրություններում հիշվում է Menizaiani ձևով։ Այժմ հայտնի է Մելազկերտ անունով։ (էջ 233)

442. Մառակեն (Մարակեն) ավան, Արծրունի իշխանների ձմեռոցը։ Գտնվում էր Վասպուրականի Ճվաշռոտ գավառում, Արաքսի վտակ Կարմիր գետի ափին։ (էջ 234)

443. Ձեր, քաղաք Պարսկահայք նահանգի Ձեր գավառում (Թովմայի հորջորջմամբ, «զաստան Ձեր քաղաքին»)։ Այժմ հայտնի է Խոյ անունով։ Թովմա Արծրունու շարունակողը հիշում է «Խեր» անունով։ (էջ 235)

444. Փեռոզի, գյուղ Պարսկահայքի Զարավանդ գավառում, Ձեր քաղաքից հյուսիս-արևմուտք։ Այժմ հայտնի է Փեռ անունով։ (էջ 235)

445. Փշոց վանքը գտնվում էր Ռշտունիքում, Վանա լճի հարավում։ (էջ 237)

446. Անախանք, գյուղ Վանա լճի հարավային կողմում, Աղթամար կղզու դիմաց, մինչև 1915 թ. եղեռնը կանգուն էր։ (էջ 237)

447. Մանակերտ, Փոքր Մանակերտ, ժայռոտ հրվանդան Վանա լճի հարավային ափին, Աղթամար կղզու դիմաց (այժմ Քարտա-դաշ)։ (էջ 237)

448. Աղթամարի Ս. Խաչ։ Այս անունով հայտնի է նույնանուն կղզու Ճշակավոր վանքը՝ կառուցված Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի օրոք։ Թովմա Արծրունին մեկ այլ առիթով Աշոտի մահը դնում է 904 թ.։ Տվյալ համատեքստում Աշոտի հիշատակումը ցույց է տալիս, որ պատմիչն ի նկատի ունի ոչ թե հիշյալ վանքը, այլ բուն եկեղեցին նույնանուն, բայց կղզում ավելի վաղ կառուցված մեկ այլ (հավանաբար, սակավանշան) եկեղեցի։ Հակառակ պարագայում Աշոտ Արծրունին վախճանված պետք է լիներ ոչ թե 904 թ., այլ 920-ական թթ. հետո, ինչը հակասում է պատմությանը։ Բացի այդ, հայտնի է, Թովմա Արծրունին նույնպես չի ապրել մինչև Ս. Խաչ վանքի կառուցումը։ Հիմքեր չունենք Աշոտի անվան հիշատակումը ընդմիջարկության համարելու։ (էջ 227)

449. Կոփայից բանակը Կորխը ըստ Ասողիկածացնի, Մովսեսի հոգեպարտիզին էր. արտասանելով Մովսեսի և Եհովայի, ինչպես նաև Եհովայի ատյանը դեմ։ Դրան հետևող 250 զինվորները զոհվեցին երկնառաք կրակից, իսկ Կորխը իր երկու զինակիցներով հրակուլ եղավ գետնի վրա բացված ճեղքի մեջ։ (էջ 239)

450. Ոզիա (Ոզա), ըստ աստվածաշնչյան ավանդույթի, Աբինադաբի որդին, որը աստծուց պատժվելով՝ մեռավ, երբ տապանակը (Նվիրական արկղը, որը պարունակում էր աստվածային օրենքները՝ գրված տախտակների վրա) անվայել ձևով՝ երինջներ լծած և բաց վիճակում տարավ Հռոմ-գանանը։ (էջ 239)

451. Ջիրենյաց լեռ, 818 մետր բարձրությամբ լեռ Երուսաղեմի

արևելակողմում։ Հռչակվեց սրբազան, քանի որ ըստ ավետարանական ավանդության, այստեղից էր, որ Քրիստոսը համբարձվեց երկինք։ (էջ 239)

452. Նոր Քաղաք։ Արշակունյաց Հայաստանի մայրաքաղաք և Հայոց եկեղեցու աթոռանիստ Վաղարշապատը 160-ական թ., երբ նվաճվեց հռոմեական զորքերի կողմից, վերանվանվեց «Նոր քաղաք» («Կայնեպոլիս»)։ (էջ 239)

453. Պարսկահայք, Մեծ Հայքի 15 «աշխարհներից» (նահանգներից) մեկը։ Տարածվում է Ուրմիա լճի արևմտյան և հյուսիս-արևմտյան կողմերում։ (էջ 240)

454. Կորդուք, լեռնոտ գավառ Մեծ Հայքի Կորճայք նահանգում։ Այստեղ էր Արարատ լեռը, որ ասուրա-բաբելական արձանագրություններում հիշվում է Ուրարտու ձևով։ (էջ 240)

455. Կասոր, լեռ Վասպուրականի Անձախի ձոր գավառում, Կոտոր գետի աջ ափին։ (էջ 240)

456. Լմբա փոր։ Հայերենում «փորք», «փորակ» բառերը նշանակում են «ձորք», «ձորակ», ուստի Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիրը գրում է. «ձորակ մի, զոր փորակ Լմբա անուանեն»։ Թովմա Արծրունու շարունակողը ձորակը «Լմբա փորակ» է անվանում և համարում է գավառ։ Գտնվում էր Վասպուրականի Պալունիք գավառում, Արճակ լճից հյուսիս-արևմուտք։ (էջ 240)

457. Կուզան Նովիտ (Կուզանովիտ), գավառ Վասպուրականում, Կուզան (այժմ Կեյան-Դարասի գետի հովտում)։ (էջ 242)

458. Ամիդացոց Քաղաք, Ամիդ քաղաքը Հայկական Միջագետքում, Արևմտյան Տիգրիսի աջ ափին։ (էջ 243)

459. Բոխա, գետ Աղձնիք նահանգի Դվեղի գավառում. Բաղեշ գետի աջակողմյան վտակներից մեկը։ (էջ 244)

460. Գերպացիներ։ Ակնարկում է Աղձնիք նահանգի Կեթիկ գավառի (գտնվում էր Աղձնիքի հարավ-արևելքում) մահմեդական բնակիչներին։ Կապ չունի աստվածաշնչյան Գեթ անվան հետ, որը ըստ ավանդության, փղշտացիների քաղաքներից էր, հետո միացավ Իսրայելին։ (էջ 244)

461. Գեղարքունիք, գավառ Սյունիք նահանգում, Սևանա լճի հարավ-արևմուտքում։ (էջ 245)

462. Պորդ կամ Պորդեն, քաղաք Տուրուբերանի Պալունիք գավառում, այժմյան Խարաբա-Բաղդաս վայրի մոտերքում։ Ավելի հայտնի էր Զյունկերտ անունով։ (էջ 245)

463. Տես ծան. 162. (էջ 245)

464. Վեսպասիանոս, Հռոմի կայսր (69—79 թթ.)։ Լինելով Ներոն կայսեր զորավարներից, 67 թ. ուղարկվեց հրեական ապստամբությունը ճնշելու։ Երուսաղեմը երկար ժամանակ պաշարվեց, մատնվեց սովի, ապա գրավվեց և ավերվեց. 70 հազ. բնակիչներ ստրկության վաճառվեցին։ (էջ 248)

465. Մարաղա, քաղաք Ատրպատականում, Ուրմիա լճից հարավ-արևելք, այժմյան Մարաղան։ Սխալ է Մարակայի և Մառախանի նույնացումը, որ անում է Ղ. Ինճիճյանը (Աստղագրութ., էջ 21)։ (էջ 249)

466. Գեղարքունի լիճ. Սևանա լիճը։ (էջ 250)

467. Եղիար (Ողիար) և Բեսելիել, Աստվածաշնչում (Ելից, ԼԵ, ԼԶ) հիշվող ճարտարապետներ, որոնք կառուցեցին վկայության խորանը։ (էջ 251)

468. Նաբուզարդան, Բաբելոնի Նաբուքոդոնոսոր թագավորի (մ. թ. ա. 604—562 թթ.) զորավար, նրա հրամանով գրավվեց Երուսաղեմը, որն ավերվեց, բնակչությունը քշվեց գերության։

469. Զամրի (Աստվածաշնչում՝ Զամբրի), Իսրայելի Ելա թագավորի զորավարը, որն սպանելով Ելային, հափշտակեց նրա գահը։ (էջ 251)

470. Բնագրում «Ի թագաւորէն Սմբատայ»։ Հր. Աճառյանը սրբագրում է «ի Բագաւորէն Սմբատայ» (տես Բանասիրական ուսումնասիրություններ, էջ 85), ինչն իրոք ավելի է համապատասխանում խոսքի ամբողջական իմաստին։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 252)

471. Կայսիկներ, Հայաստանի արաբական ցեղերից, որոնք Հարուն Ալ-Ռաշիդ խալիֆի (786—809) օրոք գաղթելով Հայաստան, հաստատվեցին Տուրուբերան նահանգի Հարք և Ապահունիք գավառներում։ (էջ 252)

472. Մանավազյան նահանգի տակ պետք է ի նկատի ունենալ Հարք և Ապահունիք գավառները, որտեղ իշխում էր Մանավազյան նախարարական տոհմը։ Իսկ Մանավազյան քաղաքը Մանազկերտն է։ (էջ 252)

473. Աշական դաշտ։ Թովմա Արծրունին հիշատակում է այս դաշտը Մանավազյան նահանգում։ Դաշտը պետք է տեղադրել Աղի լեռնանցքից արևմուտք։ (էջ 252)

474. Երիվավ, լեռ Վասպուրականի Առբերանի գավառում, Վանա լճից հյուսիս-արևելք. Բերկրի քաղաքից ոչ հեռու։ (էջ 253)

475. Բնագրում՝ «Սմբատ իշխանն Սիւնեաց»։ Իրականում Սյունիքում այս ժամանակ իշխանապետ էր ոչ թե Սմբատը, այլ Աշոտը։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 253)

476. Շարուր. Այրարատի գավառներից։ Գտնվում էր Արփանյալ (այժմ Արփա) գետի ստորին հովտում։ Թովմա Արծրունին Շարուրը դաշտ է անվանում, իսկ նրա շարունակողը՝ գավառ։ (էջ 254)

477. Արտազ, գավառ Վասպուրական նահանգում, Մակուից հարավ-արևելք, համապատասխանում է այժմյան Մակուի գավառին։ Թովմա Արծրունին Արտազն անվանում է նաև «Արտազական» անունով։ (էջ 257)

478. Գառնի (նաև Դառնի), գավառ Վասպուրականում, Թոնդրակ լեռան հարավում՝ Արաղա դաշտում։ (էջ 257)

479. Առբերանի, գավառ Վասպուրականում։ Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում։ Միջին դարերում Առբերանի և Գառնի գավառները միասին կոչվել են Քաջբերունիք անունով։ (էջ 257)

480. Ազանդռոտ, գավառ Վասպուրականի արևելյան մասում՝ Ազանդռոտ գետի ավազանում։ (էջ 257)

481. Բաղիլովիտ, Վասպուրականի գավառներից, որը բացակայում է VII դարի Աշխարհացույցում։ Թերևս այլ աղբյուրներում եղող Բաղգակովիտ գավառի աղավաղված անունը։ Գտնվում էր հավանաբար Ազանդռոտի հյուսիսային կողմում։ (էջ 257)

482. Պալունիք, Վասպուրականի գավառներից։ Տարածվում էր Մարմետ գետի միջին ավազանում (Վանա լճից հյուսիս-արևելք)։ (էջ 257)

483. Մեծնունիք, Վասպուրականի գավառներից։ Գտնվում էր Պալունիք գավառից հյուսիս-արևելք։ (էջ 257)

484. Տոսպրշտունիք, տես ծան. 118։ (էջ 257)

485. Բոգունիք (կամ Բոզունիք), գավառ Վասպուրականում, Մարմետ գետի ստորին հովտում, Վանա լճի արևելակողմում։ (էջ 257)

486. Զուզան, ավելի ճիշտ ձևով՝ Գուկանք, Վասպուրականի գավառներից։ Տարածվում էր Վանա լճի հարավ-արևելքում։ (էջ 257)

487. Արտաշեսյան, գավառ էր Վասպուրականում, Վանա լճից հարավ-արևելք, Գուկանք գավառից հյուսիս, այժմյան Արտամետ գյուղի մերձակայքում։ (էջ 257)

488. Շամիրամի քաղաք, տես ծան. 122։ (էջ 257)

489. Կրճունիս (Կրճունիք), գավառ Վասպուրականում, Կոտոր գետի վերին հովտում, Աղբակից հյուսիս-արևմուտք։ (էջ 257)

490. Կուղանովիտ, տես ծան. 457։ (էջ 257)

491. Բուն Մարդաստան. Վասպուրականի գավառներից։ Գտնվում էր Հայոց ձոր գետի վերին ավազանում, Կուղանովիտից հարավ-արևմուտք։ (էջ 257)

492. Արճիշակովիտ, Վասպուրականի գավառներից։ Տարածվում էր Արճակ (Արճեշակ) լճի ոլորտում, Կուղանովիտ գավառից հյուսիս-արևմուտք։ (էջ 257)

493. Տամբեր, գավառ Պարսկահայք նահանգում, Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք։ (էջ 257)

494. Տայգրյան, Վասպուրականի Տայգրյան գավառի նախնական ձևը, Պարսից Դարեհ I-ին թագավորի Բեհիսթունյան արձանագրության մեջ հիշվում է «Տիգրա» ձևով։ Գավառը տարածվում էր Խանասորի լեռնանցքի և Աղբակ գետի միջև, Մեծ Աղբակ գավառից հյուսիս-արևելք (Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 84։ (էջ 257)

495. Ըռնա, Պարսկահայք նահանգի գավառներից։ Գտնվում էր Խանասորի լեռնանցքից հյուսիս-արևելք, Տայգրյան գավառից արևելք։ (էջ 257)

496. Բնագրում «զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ»։ Գողթն անունն ավելորդ է, խոսքը վերաբերվում է միայն Նախճավան քաղաքին և համանուն գավառին։ Այլ կերպ հակասություն է ստեղծվում հեղինակի այս և հաջորդ նախադասության միջև, ուր խոսքն արդեն վերաբերում է Գողթնին և արվում այլ ժամանակագրությամբ։ Թարգմանել ենք ուղղումով։ (էջ 257)

497. Ամրական Քարանձավ, այսպես էր կոչվում Վան քաղաքի միջնաբերդը։ (էջ 258)

498. Ազատ Մասիս. «Արարատ լեռան հին հայկական անունը, տրվել է նրան զանազանելու համար մյուս լեռներից, որոնք ևս կոչվում էին «Մասիս»։ «Ազատ» վերադիրը անշուշտ տրվել է լեռան վեհացող և անմատչելի բնույթի պատճառով։ Հայ հին մատենագիրները լեռը Արարատ չեն կոչում, բայց փորձեր արվում էին լեռան «Արարատ» անվան հիմնավորման համար, ելնելով աստվածաշնչյան ավանդույթից։ Թովմա Արծրունու ժամանակ ևս չէր արմատավորվել լեռան «Արարատ» անվանումը, ուստի պատմիչը «Արարատյան լեռ» և «Ազատ Մասիս» հասկացությունները գործ է ածում կողք կողքի։ (էջ 259)

499. Կարմիր գետ, Արաքսի վտակներից, հոսում էր Վասպուրականի Ճվաշռոտ գավառում։ (էջ 259)

500. Մանոաշա, գյուղ Վասպուրականի Ռշտունիք գավառում, Ոստան քաղաքի մոտ։ (էջ 260)

501. Անստան, գյուղ Վասպուրականի Բոզունիք գավառում, Վանա լճից արևելք։ Ուրարտական շրջանում քաղաք էր «Անիաշտանիա» անունով։ XX դարի սկզբի Աննավանք գյուղը։ (էջ 260)

502. Ոձ ձոր գտնվում էր Վասպուրականի Բաքրան գավառում, Համանքար Կարմիր գետի աջ ափին։ Այս ձորի մատույցներում էր, որ Գագիկ Արծրունին կառուցեց Դավթակերտ բերդավանը։ (էջ 261)

503. Փռյուգիացիներ, Փոքր Ասիայի Փռյուգիա պետության բնակիչները։ (էջ 262)

504. Կրման, երկիր Մեդիայից հարավ-արևելք, այժմյան Կրման նահանգը Իրանում։ (էջ 263)

505. Մուկան, Մուղանի դաշտը՝ Կուրի և Արաքսի գետախառնուրդից հարավ-արևելք։ (էջ 263)

506. Թուրքաստան ասելով հին մատենագիրները հասկանում էին միջինասիական երկրները։ (էջ 263)

507. Ծամբրամ բերդ, գտնվում էր Վասպուրականի Ճվաշ (Ճվաշռոտ) գավառում։ (էջ 263)

508. Արղոզական փակա, տես ծան. 477։ (էջ 263)

509. Փայտակշտան գյուղ, գտնվում էր հավանաբար Վասպուրականի Արտազ և Ճվաշռոտ գավառների սահմանագլխին։ (էջ 264)

510. Կորճից աշխարհ, Հայաստանի հարավում գտնվող Կորճայք նահանգը, հայ Արշակունիների օրոք՝ 1—4-րդ դդ. Հայաստանի սահմանային չորս խոշոր իշխանություններից՝ բդեշխություններից մեկը։ (էջ 264)

511. Սպուզափրի բերդ, գտնվում էր Պարսկահայք նահանգի Ընծա գավառում։ IX դ. 70-ական թվականներից մտնում էր Վասպուրականի մեջ։ (էջ 264)

512. Լեկ, գյուղ Վասպուրականի Անձևացիք գավառում։ (էջ 264)

513. Ազգի, գյուղ Վասպուրականի Անձևացիք գավառում։ Այժմ հայտնի է Ախաի անունով։ (էջ 264)

514. Կրերիֆ, գավառ Վասպուրականի Անձևացիք գավառի հարավում, Գրերյաց լեռնանցքի մերձակայքում։ Ասուրա-բաբելոնական արձանագրություններում հիշվում է «Կիրուրի» ձևով։ (էջ 264)

515. Թրար կամ Թրարի, գավառ Պարսկահայք նահանգում, Ուրմիա լճի արևմտակողմում։ (էջ 265)

516. Ճնոճ, քաղաք Պարսկահայքի Արասխ գավառում, Ուրմիա լճից հարավ-արևմուտք։ (էջ 265)

517. Ըմբեա լին. գտնվում էր Վասպուրականի Աղբակ գավառում, Ըմբիա (ռուսական մինչհեղափոխական շրջանի քարտեզներում՝ Амбе) գյուղից 5 կմ դեպի հարավ-արևելք։ Ստ. Կանայանցը բնագրի «ծովակն յԸմբեաւ»-ն առաջարկում է ուղղել «ծովակն Ըմբեաւ», որպես իբր կոչվել է Վանա լճի հյուսիս-արևելյան կտուցաձև մասը, ապա և կղզին (տես Ստ. Կանայանց, Անհայտ գավառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 138, ծան.)։ Սակայն այս ուղղումը չի հաստատվում տեղագրական-պատմական տվյալներով։ (էջ 265)

518. Բնագրում սրնգ վարադիս։ Պետք է ուղղել սրնգ Վարաժնունիս, որը փոքրիկ գավառ էր Վասպուրականում։ Վարագ բառը անհարիր է խոսքի իմաստին, որից պետք է մակաբերել, որ Գուրգենի հեծելախումբը անցել է հենց Վարաժնունիքով, որտեղից ուղիները տանում էին դեպի Խանասորի լեռնանցքը և Վասպուրականի կենտրոնական շրջանները։ (էջ 265)

519. Համազ (Համէ) գյուղ, գտնվում էր Պարսկահայք նահանգի Ընծա գավառում։ (էջ 265)

520. Մղունիս գյուղ, գտնվում էր Զարեհավան գավառում, Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք։ (էջ 265)



521. Ժանգան (Ժանչյան), քաղաք Կասպից ծովից հարավ-արևմուտք, Արաքսից ոչ հեռու (G. Le Strange, p. 167)։ (էջ 266)

522. Քաղաք հյուսիս-արևելյան Իրանի Գուրգան նահանգում, համանուն գետի մոտ (G. Le Strange, p. 376-377)։ (էջ 266)

## [ԱՆԱՆՈՒՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ]

## [ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ]

1. Թովմա Արծրունու անունով մեզ հասած երկասիրությունն իրապես գրել են երկու մատենագիրներ։ Բայց որովհետև երկուսի գործերն էլ զետեղվել են միևնույն գրքում՝ «Արծրունյաց տան պատմության» մեջ, միջին դարերում դրանք դիտվել են իբրև մեկ աշխատություն, որի հեղինակ է համարվել Թովմա Արծրունին։ Այս երևում է Անանուն մատենագրի երկի վերջում եղած հավելյալ (ԺԲ) գլխից և դրանից հետո զետեղված հիշատակարանից, որտեղ հիշվում է Թովմա վարդապետը՝ որպես երկասիրության միակ հեղինակ։ Ավանդաբար երկը հրատարակվել է իբրև մեկ ամբողջական գործ նաև նոր ժամանակներում։ Սակայն ավելի նպատակահարմար է դրանց առանձնացումը, որպես միմյանց հարող, բայց շատ կողմերով տարբեր աշխատություններ։ Այն պարագան, որ երկուսն էլ վեր են հանում միևնույն տան պատմությունը, անհրաժեշտ դարձրեց դրանց հրատարակումը նույն գրքում, բայց որպես տարբեր հեղինակների երկասիրած գործեր։

Արծրունյաց տան պատմության երկու հեղինակների աշխատությունները նույն գործը համարելու հետևանքով Թովմայի Պատմության երրորդ դպրության վերջին գլխին ավելացվել է Անանունի մեզ հասած երկասիրության սկիզբը, ինչն այդպիսով կազմել է Թովմայի երկի երրորդ դպրության վերջընթեր ԻԹ գլխի շարունակությունը։ Այս գլխի երկու անհարիր մասերին հաջորդում է Պատմության միայն տպագիր բնագրերում վերնագրված չորրորդ դպրությունը, որն ամբողջությամբ Անանունի գործն է, սակայն նման բաժանումը պայմանական է և աշխատության բովանդակությունն օժտում է տարիմաստ երկվությամբ։ Ուստի ստացվում է այնպես, որ նույն գլխի տակ խոսվում է տարբեր անցքերի մասին, իսկ չորրորդ դպրության մեջ՝ նախկինում արծարծված դեպքերի մասին, վկայաբերելով տարբեր փաստեր։ Թարգմանության մեջ Անանուն մատենագրի երկասիրության սկիզբը կազմել է ոչ թե Թովմայի Պատմության վերջին գլխի մասը, այլ Անանունի գործի առաջին գլուխը, որին հաջորդում են տպագիր բնագրի չորրորդ դպրության մեջ մտնող գլուխները։ Այս դպրության առաջին գլուխը բնականաբար դարձել է երկրորդ և այդպես հաջորդաբար։ (էջ 267)

2. Բնագրում Աղգա գավառ։ Այստեղ «գավառը» պետք է դիտել նեղ իմաստով, որպես «կողմ», «մերձակայք»։ Չնայած այն պարագան, որ Անանունը Աղգա գավառը զետեղում է Տոսպ գավառում, ցույց է տալիս, որ այն գավառ չէր բառիս բուն իմաստով։ Աղգա գավառի տակ մատենագիրն

նկատի է ունեցել Վասպուրականի Տոսպ գավառի Սղգա (Սղգահ, Սխկայ) գյուղին հարող տարածքը։ (էջ 267)

3. Ազարակ (Ճահուկ) բերդ, գտնվում էր Հայաստանի Կորճայք նահանգի Ճահուկ գավառում, Ազարակի լեռներում։ Բերդը գավառի անունով անվանվել է նաև Ճահուկ։ (էջ 268)

4. «Հերակլեան» («Իերակլեան») դաշտ, Հեր քաղաքի մատույցներում տարածված է դաշտավայրը։ (էջ 269)

5. Աշինոտ ամրոցի տեղը որոշակի հայտնի չէ։ Թերևս գտնվում էր Վասպուրականի Անձախիձոր գավառում։ (էջ 276)

6. Կարուց բերդ, վաղ հայկական ամրոց, որի անունով կոչվեց իր շուրջը հետագայում առաջացած Կարս քաղաքը։ (էջ 278)

7. «Դենադարձ» նշանակում է իր կրոնից հրաժարված։ Հայ մատենագրության մեջ ընդունված սկզբունքին հակառակ Անանուն պատմիչը այստեղ քրիստոնեությունը «Դեն» (պարսկերեն «Դին», «կրոն» բառից) է անվանում։ Մինչդեռ հայ մատենագիրները «դեն» են կոչում միայն օտար կրոնները, մասնավորապես զրադաշտականությունը, մահմեդականությունը։ Վասակը ուրացել էր քրիստոնեությունը։ Թովմա Արծրունին նույն Վասակին և ուրիշ հավատափոխների կոչում է «ամբարիշտ» մակդիրով։ (էջ 279)

8. Կակնեից գյուղ, գտնվում էր Վասպուրականի Մեծ Աղբակ գավառում։ (էջ 279)

9. «Շամա երկիր» ասելով մեր մատենագիրները հասկացել են Ասորիքը (Սիրիան)։ Թե՛ Թովմա Արծրունին և թե՛ շարունակողը մնացած դեպքերում օգտագործում են «Ասորիք», «Ասորվոց աշխարհ» և համանշանակ այլ ձևեր։ «Շամի երկիր» անունը կազմվել է արաբերեն ալերը էշ-Շամ» բառից, որը նշանակում է «Ձախակողմյան երկիր» քանի որ Սիրիան գտնվում է Մեքքայի ձախ (հյուսիսային) կողմում։ Մինչդեռ Արաբիայի հարավ-արևմուտքը, որ գտնվում է Մեքքայի աջ կողմում (հարավում) ստացել է «Եմեն», այսինքն «աջակողմյան երկիր» անունը։ (էջ 279)

10. Բուզանդ պատմիչ, V դարի հայ մատենագիր, որի «Հայոց պատմությունը» բովանդակում է Հայաստանում քրիստոնեության մուտքից մինչև 387 կատարված անցքերը։ Իր պատմության չորրորդ դպրության Ժ գլխում Փավստոսը գրում է, որ իբր Վաղես կայսեր սպանել են Սուրբ Սարգիսն ու Թեոդորոսը՝ Թեկղի կույսի գիտությամբ ու կամակցությամբ։ Սուրբ Սարգիսը Կապադովկացի էր, ապրում էր Տրդատ III ժամանակ, քաջարատիճան զինվորական էր, որ հեթանոս զորքի մեջ տարածում էր քրիստոնեություն։ Հայտնի զորավար էր, բայց մահապատժի ենթարկվեց, քանզի չերկրպագեց կուռքին։ Որդին՝ Մարտիրոսը, նահատակվեց հոր հետ։ Սարգիսը հայերի մեջ մեծ պաշտամունք ունեցող սուրբ էր։ Թեոդորոսը նույնպես բարձր զինվորական էր և նահատակվեց։ Իսկ Թեկղը (Թեկղի) միանձնուհի էր։ Պողոս առաքյալի աշակերտուհին, որի անունով կառուցված են բազմաթիվ



եկեղեցիներ։ Քրիստոնեության առաջին խոստովանուհին, որի վարքը երկնագործվել է հրաշափառ պատմություններով։ Փավստոսի հաղորդումը Վաղեսի մասին, որ վկայաբերում է Արծրունի պատմագիրը, պատմական չէ, քանի որ, ինչպես հայտնի է, Վաղես կայսրը 378 թ. սպանվել է վեստգոթերի դեմ մղած պատերազմում։ (էջ 279)

11. Պղուանս կամ Պղուանք, գյուղ Վասպուրականի Պալունիք գավառում։ Այժմ հայտնի է Պողանց անունով։ (էջ 280)

12. Տես Թովմա Արծրունու Պատմության ծան. 372։ (էջ 283)

13. Երիվարկ (Երևարք), գավառ Տուրուբերան նահանգում։ Այժմյան Կարճկանը՝ Վանա լճի հարավային ափին։ (էջ 284)

14. Բերդ՝ Աղձնիք նահանգի Երխեթք գավառում։ Այժմյան Սղերդի շրջանում, Գենջի գավառակում (Բիթլիսի վիլայեթ) գտնվող Փարխու անունով վայրը։ (էջ 284)

15. Գերասա դաշտ. գտնվում էր հավանաբար Վասպուրականի Արտազ գավառում։ Դաշտի տեղը որոշակի հայտնի չէ։ (էջ 286)

16. Ալանաց դռներ (Դրունք ալանաց), Դարիալի կիրճը, այժմյան ռազմավիրական ճանապարհը։ (էջ 288)

17. Դարույնք, նշանավոր բերդ Այրարատի Կողովիտ գավառում, այժմյան Հին Բայազետի տեղում։ X դ. առաջին կեսին մտնում էր Վասպուրականի Արծրունյաց թագավորության կազմի մեջ։ (էջ 290)

18. Ուղեռ գյուղ, Թովմա Արծրունու շարունակողը հիշում է որպես բերդ։ Գտնվում էր Այրարատի Մասյացոտն գավառում, Փոքր Մասիս լեռան հարավ-արևելքում։ Այլ է Փոքր Հայքում՝ Գայլ գետի ափին գտնվող Ուղեռ բերդը։ (էջ 290)

19. Մասյացոտն գավառ Այրարատ նահանգում, այժմյան Սուրմալուի դաշտում, Մեծ Մասիսի հյուսիսային և արևելյան կողմերում։ (էջ 290)

20. Բնագրի «Սևորդյաց Նազարու» («Հագարի սև որդիները») արտահայտության տակ պետք է հասկանալ արաբներին։ Բոլորովին այլ է «Սևորդիներ» ցեղը (տես Թովմա Արծրունու Պատմ. ծան. 393)։ (էջ 292)

21. Աբսաճի տոհմ: Ատրպատականի Սաջյան ամիրայական տոհմը, որի հիմնադիր Աբու Սաջը ծագումով միջինասիացի էր և ծառայում էր խալիֆի զորքում։ Աչքի ընկավ Բաբեկի ապստամբության ճնշման ժամանակ։ Նրա որդի Մուհամմեդը 890-ին նշանակվեց Ատրպատականի կառավարիչ։ Սաջյանները Հայոց Բագրատունի թագավորության, որոշ ժամանակ նաև Արծրունիների հանդեպ, ունեին անհաշտ վերաբերմունք։ Ատրպատականում իշխել են մինչև 929 թ.։ (էջ 293)

22. Թովմա Արծրունու 1887-ի և 1917-ի տպագիր բնագրերում՝ «սրով գելում» (1852-ի հրատարակությունում՝ «սրով գելուս» ճիշտ ձևով)։ «Գելուլ» («ճզմել», «ոլորել») բայը անհարիր է «սուր» բառին։ Նորայր Բյուզանդա-

ցին ճիշտ է համարում սարով գնլուս ձևը (տես Նորայր Բյուզանդացու «Նախնիքս» ձեռագիր աշխատությունը (էջ 642), որի միկրոժապավենը պահվում է Մաշտոցյան մատենադարանում (Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթ. № 235 III, վավ. № 264)։ Հաշվի ենք առել ուղղումը։ (էջ 294)

23 Կղարջք, Գուգարքի գավառներից։ Տեղադրվում է Գուգարքի հարավ-արևմուտքում, Ճավշուրի (այժմ Իմերխեի) գետի ստորին հովտում։ (էջ 296)

24. Ճուչեք (Ճավչեք), Գուգարքի գավառներից։ Տեղադրվում է Ճորոխի գետի վերին հովտում։ (էջ 296)

25. Անձիգ, համապատասխանում է Չերքեզական բնական մարզի հարավկողմում՝ Արհիզ և Մեծ Զելենչուկ գետերի միախառնման տեղում գտնվող Արհիզ գյուղին։ Իսկ Գաղը համապատասխանում է Աբխազիայի Գալի շրջանին՝ համանուն կենտրոնով, Սուխումից հարավ արևելք։ (էջ 296)

26. Տայաստան ասելով պատմիչը հասկանում է Մեծ Հայքի Տայք նահանգը։ (էջ 296)

27. Կոտոմ, գյուղ Տուրուբերան նահանգի Երևարք գավառում, Վանա լճի հարավ-արևմտյան ափամերձ շրջանում։ (էջ 300)

28. Զուրարիկներ, Հայաստան գաղթած արաբական ցեղերից, հաստատվել էին Աղձնիք նահանգում։ (էջ 300)

29. «Արաբացի ցեղից մի մարդ»։ Ակնարկում է հավանորեն Գիլանի ամիրա Ալ-Խաշքարիին, որը 936 թ. ներխուժել էր Բագրատունյաց Հայաստան։ (էջ 302)

30. Գինո բլուր, գտնվում է Արտաշատ քաղաքի արևմտակողմում, Գինեգույն (այժմ Կարա-սու) գետի մոտ։ (էջ 303)

31. Դեյլմիկներ, Ատրպատականի բնիկ ցեղերից, ապրում էին հիմնականում Կասպից ծովից հարավ-արևմուտք ընկած շրջաններում։ (էջ 304)

32. Թովմա Արծրունու Պատմության 1887-ի և 1917-ի տպագիր բնագրերում՝ «ուղեբեկ», ճիշտ է 1852 թ. հրատարակությունում տպագրվածը՝ «աղէքէկ», այսինքն՝ «ալեխառն» (այս մասին տես Նորայր Բյուզանդացի, «Նախնիքս», էջ 149)։ Թարգմանել ենք «ալեխառն» (աղէքէկ) ձևով։ (էջ 305)

33. Հովսիա, ըստ Աստվածաշնչի, Հուդայի թագավոր, հայտնի իր բարեպաշտ վարքով, կրոնամեծար գործունեությամբ։ Երկրից չնչեց կռապաշտության մեհյանները։ (էջ 305)

## ՀԱՎԵԼՎԱԾ

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՆՑՔԵՐԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՍԵՐ ԱԲԴԼՄՍԻՀ ԻՇԽԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Բնագրում «սրբոց Մարգարէիցն Անանիանցն», որն ուղղեցինք «սրբոց մանկանցն Անանիանցն»։ Անանիանք կամ երեք մանկունք ըստ աստվածաշնչյան ավանդության (Դանիել, Ա, Բ և Գ), հրաժարվեցին երկրպագել Բաբելոնի Նաբուքոդոնոսոր թագավորի ոսկեձույլ արձանին և գցվեցին հնոցի մեջ, բայց չայրվեցին։ Անանիանց մասին հայ մատենագրության մեջ եղած տվյալները հաճախ ցեղվում են Աստվածաշնչի հաղորդումից (նույնն է կատարվել նաև Արծրունյաց տոհմի պատմության հավելյալ այս գլխում)։ (էջ 309)

2. Ակնարկում է Վասպուրականի Արծրունի թագավոր Սենեքերիմին, որը Աբուսահլ-Համազասպ թագավորի որդին էր և 968—1003 թթ. եղբայրների հետ թագավորել Վասպուրականում, իսկ 1003—1021 թթ. թագավորել միայնակ (տես Վ. Մ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 181—216)։ (էջ 309)

3 Կոստանդիանոս, Հռոմի կայսր Կոստանդիանոս Մեծը։ Գահակալել է 306—337 թթ.։ (էջ 309)

4. «Թորգոմի տունը»։ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ ավելի մոտ է կոչվել Թոգարմա երկիրը, որը, ըստ խեթական արձանագրությունների, քաղաք-պետություն էր Թեգարամա անունով (ասուրա-բաբելական Բիլ-Գարիմմու)։ Ավանդաբար «Թորգոմա տունն» ասելով հասկացվել է Հայաստանը։ Աստվածաշնչյան Թորգոմը Հաբեթի որդին էր և նրա անունով կոչված երկրի «Թորգոմա տանն» (հիշվում է մ. թ. ա. 593 թ. անցքերի առընչությամբ) բնակիչները աշխատասեր ու վաճառական մարդիկ էին։ Թորգոմը համարվել է հայերի էպոնիմը։ (էջ 310)

5. «Հայոց արևելյան կողմ», մատենագիրն ի նկատի ունի իր ժամանակի Զաքարյան Հայաստանի տարածքը։ XII—XIII դդ. «Աշխարհ Արևելից», «Կողմանք Արևելից» աշխարհագրական և վարչաքաղաքական հասկացության տակ սովորաբար հասկացվում էր Մեծ Հայքի հյուսիս-արևելյան երկրները։ (էջ 310)

6. **Տուղրալ**, *Սելջուկյան առաջին սուլթան Տողրուլ-Բեկ Մուհամմադը (1038—1063)։ (էջ 311)*

7. **Գնունյաց գավառ** *(Գնունիք), նույնական է Տուրուբերանի Աղբերանի գավառի և Աղիովիտ, Արճիշակովիտ գավառների մեծ մասի հետ։ Այդպես է կոչվել գավառում իշխող տոհմի՝ Գնունիների անունով։ Իսկ* Արճեշը *Հայաստանի հնագույն քաղաքներից էր։ Գտնվում էր Տուրուբերանի նահանգում, Վանա լճի հյուսիսային ափին։ Ուրարտական շրջանում կոչվել է Արգիշտիխինա՝ հավանաբար Ուրարտուի թագավոր Արգիշտի II-ի (մ. թ. ա. 714—685) անունով։ Այժմ անցել է ջրի տակ։ (էջ 311)*

8. **Առինճանց** *(Առըճանց), գյուղ Հայաստանի Մոկք նահանգի Մոկք Առանձնակ (Մոկս) գավառում, Վանա լճից հարավ։ Մինչև 1915 թ. եղել է Մոկսի հայաբնակ 48 գյուղերից մեկն էր և հայտնի էր Առըճանց անունով։ (էջ 312)*

9. **Դուկ.** *համանշանակ է դուքս բառին և նշանակում է իշխան, զորապետ։ (էջ 312)*

10. **Սաղկան**, *գավառ Այրարատ նահանգի հարավային մասում, Բագրևանդից հարավ-արևելք։ (էջ 312)*

11. **Անգեղ-տուն** *ավանը նույնական է Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքի հետ, հավանաբար բոլորովին տարբեր է Աղձնիք նահանգի Անգեղ-տուն գավառից։ (տես Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 35)։ (էջ 312)*

12. **Ապարանից Սուրբ Նշան**, *միջնադարյան Հայաստանի նշանավոր սրբություններից։ Մոկաց Ապարանք գյուղի վանքին Բյուզանդիայի Վասիլ II կայսեր նվիրած մի ոսկյա խաչ էր, որի մեջ էին իբր Քրիստոսի խաչափայտի, փշապսակի, սպունգի, բևեռների և այլնի մասունքները։ (էջ 313)*

13. **Հեսսե Բեթղեհեմացի**, *Հրեաստանի Դավիթ թագավորի հայրը։ Պատմիչը Արդլմանհին համեմատում է Հեսսեի հետ, քանի որ Արդլմանհի որդի Դավիթը դարձավ Աղթամարի կաթողիկոս (1113—1165)։ (էջ 314)*

14. **Սամուելը** *ըստ Աստվածաշնչի, հրեաների մարգարեն էր և դատավորը (մ. թ. ա. XI դ.), հայտնի իր հասարակաշահ արարքներով։ Օծեց Իսրայելի առաջին թագավոր Սավուղին։ Սամուելը մանկուց դաստիարակվել էր հրեից Հեղի քահանայապետի մոտ, որի մահից հետո փոխարինեց նրան։ (էջ 314)*

15. **Մելքիսեդեկ**, *ըստ Աստվածաշնչի, հրեաների թագավորը և քահանան, օրհնեց Աբրահամին։ (էջ 315)*

16. **Ահարոն**, *ըստ Աստվածաշնչի եբրայական կրոնի հիմնադիր Մովսեսի եղբայրը և հրեա հոգևորականության առաջին քահանայապետը (մ. թ. ա. XVI դ.)։ (էջ 315)*

17. **Եղիա**, *ըստ Աստվածաշնչի, հրեաների աչքառու մարգարեներից, հայտնի իր հրաշափառ վարքով։ (էջ 315)*



18. **Հովհան մարգարե**, *Հովհաննես Մկրտիչը, որը ըստ Նոր կտակարանի, Քրիստոսի մկրտիչն էր, ականավոր քարոզիչ։ (էջ 316)*

19. **Հովհան որդի Զեբեդիայի**, *Առաքյալ և ավետարանիչ, որն ըստ Նոր կտակարանի, աչքի էր ընկնում գթասրտությամբ և այլ բարեմասնություններով։ Քրիստոսի ջերմ հետևորդը և սիրելին։ (էջ 316)*

20. **Շմուել** *(Շամուել), ըստ Մովսես Խորենացու, Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին (387—439) ընդդիմադիր եպիսկոպոս, նշանակված Պարսից արքայի կողմից։ Հայտնի էր իր ագահ և քսու բնավորությամբ, որի պատճառով հեղինակազրկվեց Հայոց եպիսկոպոսների մոտ, բացառությամբ իր համախոհ Սուրմակի, որին նվիրաբերել էր ուրիշներից խլված կալվածներ (Խոր., Գ, ԿԵ, ԿԶ)։ (էջ 316)*

## [ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ]

1. Ղազան. մոնղոլների Հուլավյան պետության (ընդգրկում էր Իրանը, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը և հարակից երկրամասերը) խաներից։ Իշխել է 1295—1304 թթ.։ (էջ 322)

2. Արքայուն (Արքավուն), Մոնղոլներն այսպես էին անվանում քրիստոնյաներին։ Ն. Մառի կարծիքով այս արտահայտությունը մոնղոլները փոխ են առել Միջին Ասիայի հայ-քաղկեդոնականներից։ (տես Н. Марр Аркаун монгольское название христиан, С. Петербург,1905, с.-67-68), (էջ 323)

3. Կիմ, կղզի Վանա լճի հյուսիս-արևելքում։ Վանա լճի կղզիներից ամենամեծն է տարածությամբ (երկրորդը Կտուցն է, ապա Աղթամարը և Առտերը) (էջ 324)

4. Ալի փաշա, Մոնղոլական հուլավյան պետության իշխան Աբու-Սաիդի (1317—1335) քեռին։ Երբ Աբու-Սաիդի մահից հետո նրա գահը ժառանգեց Արփա խանը, որը քրիստոնյա էր, Բաղդադից եկավ Ալի փաշա Նոյինը, սպանեց Արփա խանին և փոխարենը նշանակեց Մուսային (1336)։ Վերջինիս իշխանությունը ձևական էր, և փաստական իշխողը Ալի փաշան էր, որը անհանդուրժամիտ էր քրիստոնյաների հանդեպ, ավերել տվեց եկեղեցիները, ուժեղացրեց հալածանքները։ (էջ 326)

5. Ոստմյաններ, այս անունով հայտնի են երկու խումբ նահատակներ։ Առաջին Ոստմյանները Ոստոմ Գնունու (այս անունից է անվանումը) և Մանաճիհր Ռշտունու գլխավորությամբ նահատակվել են V դ. ժողովրդաազատագրական պատերազմի ժամանակ՝ 449 թվականին։ Երկրորդ Ոստմյանները զոհվել են 853 թ. սկզբներին՝ արաբ զորապետ Բուղայի կողմից (Թովմա Արծրունի, III, Ը)։ Նրանց գլխավորն էր Ոստոմ Անձևացին, որի անունով էլ կոչվել են նահատակները։ Այստեղ ի նկատի ունի առաջին Ոստմյաններին (էջ 327)

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ


1. ԱԲԵՂՅԱՆ Մ. Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 67, 339—361, Գ, Երևան, 1968, էջ 485, 494—505։

2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1958։





3. ԱԼԻՇԱՆ Ղ., Հայապատում, Ա, Վենետիկ, 1901։

4. ԱՃԱՌՅԱՆ Հ., Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, Վենետիկ 1913։

5. ԱՃԱՌՅԱՆ Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1—7-րդ, Երևան, 1926—1935։

6. ԱՌԱՔԵԼՅԱՆ Վ., Գրաբարի հատընտիր, Երևան, 1946։

7. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 181, 185—190։

8. ԴՈՒՐՆԵԱՆ Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 161—163։

9. ՋԱՄԻՆԵԱՆ Ա., Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջևան, 1914, էջ 151—153։

10. ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, 1932, էջ 518—530։

11. ՄԿՐՅԱՆ Մ., Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955։

12. ՄԿՐՅԱՆ Մ., Վերածնության սկզբնավորման արտացոլումը X դարի հայ պատմագրության մեջ (Թովմա և Անանուն Արծրունիներ), Բանբեր Երևանի համալսարանի, № 1, 1975։

13. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Ս., 451 թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջը, «ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր», № 12, 1953։

14. ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ, Թովմա Արծրունի և Անանուն Արծրունի երկու այլևայլ պատմագիրներ են։ «Բազմավեպ», 1905)։

15. ՏՐՈՒՄՊՖ Գ., Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յարենմուտս, Թարգմ. Գ. Զարբհանալյանի, Վենետիկ, 1895, էջ, 190, 200—202։

16. ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ. «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում հիշատակված մի քանի տեղանունների մասին։ «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1973,

17. ՏԱՇԵԱՆ Յ., Ուսումնասիրութիւն ստոյն Կալիսթենեսի, Վիեննա, 1892, էջ 32—41։

18. ՓԱՓԱԶԵԱՆ Վ., Պատմութիւն Հայոց գրականութեան, Թիֆլիս, 1910, էջ 148—150,

19. ՔԻՊԱՐԵԱՆ Կ., Պատմութիւն հայ գրականութեան, առաջին մաս, Վենետիկ, 1944, էջ 219—221։

20. **Адонц Н.**, Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908.

21. **Васильевский В.**, Советы и рассказы византийского боярина XI века (журнал Мин. нар. просв., ч. 206, СПБ, 1881, с. 110—112).

22. **Орбели И.**, Избранные труды, т. 1, Москва, 1968.

23. **Токарский Н.** М., Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961.

24. Brosset M., Notice sur l'Histoire arménienne de Thoma Ardzrouni, X[e] siecle. Mélanges Asiatiques, tome IV, St.-Pètersbourg, 1862, pp. 686—763.

25. Brosset M., Sur l'Histoire composée en armenien par Thoma

Ardzrouni, en français par M. Brosset. Mélanges Asiatiques, tome VI, St.-Pétersbourg, 1869, pp. 226—232.

26. Markwart J., Südarmenien und die Tigrisquellen, Wien. 1930.

27. Marquart J., Eransahr nach der Geographie des ps. Moses Xorenaci: Berlin, 1901.

28. Topdschian H., Die inneren Zustande von Armenien unter Asot I, Berlin, 1904.

29. Verhandlungen der Berliner anthropologischen gesellschaft, Berlin, 1897, ss. 307—309.

## «ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

## ԲՆԱԳՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*1. Պատմութիւն տանն Արծրունեաց, ի Թովմա վարդապետէ Արծրունւոյ, Կ. Պոլիս, 1852։*

*2. Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887։*

*3. Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։*

4. Th. Ardzrouni, Histoire des Ardzrouni, trad. M. Brosset (Collection d'historiens arméniens, I, S. Pétersbourg, 1874, pp. 1—266).

---

## ՑԱՆԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

### Ա

*Աբաս Բագրատունի— 302*
*Աբաս սպարապետ— 231*
*Աբգար— 68, 69, 70, 71*
*Աբդըլազիզ— 123*
*Աբդըլմելիք— 122, 123*
*Աբդլմսեհ— 311, 312, 313*
*Աբդլմսեհ— 313, 317—318*
*Աբդլա— 117, 122, 123, 124*
*Աբդրահման— 252*
*Աբել— 29, 36, 37, 39*
*Աբեգյանք— 243*
*Աբիդոնոս— 26*
*Աբրահամ խոստովանող— 65*
*Աբրահամ Մամիկոնյան— 102*
*Աբրահամ նահապետ— 31, 56, 117, 119, 211, 239, 291, 311, 315*
*Աբուբեքր— 119, 122*
*Աբու-Թալիբ— 117, 122*
*Աբու-Թուրաբ— 120*
*Աբուհեյմ— 159, 161*
*Աբումսար— 269*
*Աբուսաճ— 240, 246, 293*
*Ագադ— 192*
*Ագարակի բերդ— 268, 275, 282, 283*
*Ադամ— 26, 29, 35, 36, 37, 38, 44, 57, 95, 268, 321*
*Ադամակերտ— 133, 261*
*Ադդե— 70*
*Ադրամելեք— 32, 59, 60, 66, 138*
*Ազատն Մասիս— 259*
*Ազարմիկ— 116*
*Ադտադաս— 56*
*Աթանագինես— 81, 94*
*Աժդահակ— 59, 60, 61, 75*
*Աժդահակ Մարացի— 75*
*Ալա Ծովափի— 128, 130*
*Ալանաց դուռ— 288*
*Ալեքսանդր— 224*
*Ալեքսանդրիա— 66, 110*
*Ալեքսանդր Մակեդոնացի— 44, 45, 52, 53, 63, 64, 66, 79, 122, 224, 297*
*Ալի— 118, 119, 122*
*Ալի փաշա— 325*
*Ալուզ— 312, տես նաև Սուփա-նոս Ալուզ*
*Ածանա ձոր— 144*
*Ակեացի տոհմ— 156, 241, 263, 285*
*Ակն գավառ— 158, 257*
*Ահավանք— 237*

Ահարոն— 123, 313, 315
Ահիզ— 296
Ահմադ (Հայթի որդի)— 228, 230, 231, 233
Ահմադ (Հիսեի որդի)— 239, 240, 243, 244, 245
Ահմատան— 111
Ահեակյան գյուղ— 224, 245
Աղան Արծրունի— 89, 90, 94, 97, 101, 102
Աղանդրոտ— 257
Աղբակ Մեծ— 61, 75, 76, 129, 133, 158, 208, 211, 227, 237, 240, 255, 257, 261, 279, 304
Աղբակ Փոքր— 76, 247, 257, 264
Աղբիանոս— 87
Աղզի— 264
Աղու լեռնակողմեր— 158
Աղթամար կղզի— 237, 295, 296, 311, 314, 323, 324, 325, 326
Աղթամար ս. Խաչ եկեղեցի— 237
Աղթամար քաղաք— 299
Աղձնիք— 62, 73, 126, 128, 130, 138, 244, 263, 300
Աղվանից կողմ— 190
Աղվաններ— 59
Աղվանք— 190, 191, 193, 195, 196, 197, 244
Ամադեկ— 192, 303
Ամասիա— 110
Ամատունիներ— 81, 95, 103, 127, 236, 245, 247, 263
Ամբակում մարգարե— 142
Ամիդ— 224
Ամիզացոց քաղաք— 243
Ամինես— 57
Ամիր Գուրգեն— 322, 324, 325, 327
Ամիր Սոհմադին, Սահմադին— 325
Ամյուկ— 224, 284, 285, 286, 309, 311, 317, 319
Ամոն— 45
Ամովս— 62
Ամր— 119, 122
Ամրական քարանձավ— 258, 259
Այլի գավառ— 265
Այրարատ— 67, 105
Այրարատյան երկիր— 302
Անակ— 77
Անանիա— 179
Անանիանք— 309
Անատոլ— 91, 93, 94
Անգեղտուն— 312
Անդրիա— 48
Անի— 310, 311
Անհուշ— 83
Անձաւի ձոր— 73, 257, 269, 276
Անձևացիք— 95, 98, 219, 220, 222, 211, 252, 304
Անձևացյաց աշխարհ— 304
Անձևացյաց իշխանություն— 129
Անստան գյուղ— 260
Անտիոք— 110, 114, 212
Անտիպատրես Ասկալոնացի— 69
Անտիպատրոս— 64
Աշինոտ— 276
Աշխարհաբերդ— 206
Աշխե— 161
Աշխեթ— 187
Աշոցք— 93
Աշոտ Արծրունի— 203
Աշոտ Արծրունի (Դերենիկի հայր)— 125, 126, 127, 128, 129, 130, 133, 134, 140, 142, 143, 144, 147, 148, 149, 150, 151, 153, 154, 155, 165, 166, 168, 186, 210, 213, 214, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 229, 261, 266, 267, 273, 284, 293, 310, 311, 313, 319, 321
Աշոտ Արծրունի (Դերենիկի որդի)— 227, 237, 240, 241, 242, 243, 245, 246, 247, 248, 252, 253, 254, 255, 256, 270, 274,



275, 276, 277, 278, 279, 280, 281
Աշոտ Բագրատունի (Աշոտ Ա)— 203, 214, 217, 218, 228, 231, 233, 234, 235, 237, 238, 274
Աշոտ (Դավիթ իշխանի որդի)— 230, 244, 270
Աշոտ Թագավոր— 274
Աշոտ իշխան (Սյունաց)— 253, 254
Աշոտ Կյուրապաղատ— 228, 229, 230, 239
Աշոտ Հայկազն— 245
Աշտիշատ— 81, 94
Ապահունիք, Ապահունյաց աշխարհ— 143, 144, 228, 231, 233, 234, 244, 252, 253, 281
Ապարանից ս. Նշան— 313
Ապար աշխարհ— 99
Ապարեթոս— 57
Ապլբառ կայսիկ— 228, 229, 233
Ապլբերս— 235
Ապղաստան— 51
Ապղշեհ— 118, 119
Ապուհարազ Գագրիկյան— 127
Ապումայա— 127
Ապումկդեմ— 127, 160, 162, 203, 207
Ապումուսե— 190, 191, 193, 195, 196, 197, 202
Ապուպելճ Արծրունի— 127
Ապուջաֆր Արծրունի— 127, 203, 207, 208
Ապուջաֆրի բերդ— 264
Ապուսակր Ամատունի— 236
Ապուսակր Վահունի— 245, 286
Ապուսահակ Վահեունի— 145, 146
Ապուսեթ— 125, 126, 128, 130, 133, 161
Ապուսելմ— 161
Ապուսելմ Գագրիկյան— 161
Առան— 46
Առաջին Ասորիք— 30
Առբերանի— 257
Առեստ— 105, 107
Առնոս Ոտն— 158, 257, 283
Առվանից ձոր— 144, 284
Ասիա— 40, 47, 48, 56, 64
Ասիթ— 161
Ասկալոն— 69
Ասկատագես— 57
Ասորդանիս— 59
Ասորեստան— 30, 31, 43, 47, 49, 56, 57, 58, 59, 64, 78, 85, 100, 114, 124, 133, 136, 138, 141, 176, 196, 221, 231, 288, 296, 300, 304
Ասորեստան ստորին— 58
Ասորիք— 77, 128, 227
Ասորվոց աշխարհ— 249
Ասորվոց Միջագետք— 115
Ասպահան— 84
Ասպուրակես— 87, 89
Աստապատ— 122
Աստարտի տաճար— 58
Աստղիկ— 74, 75
Ասուղ— 63, 64, 65, 77
Ասուր— 30, 31, 48
Ավարայր— 99
Ավշին— 240, 241, 242, 246, 247, 248, 249, 277, 278, 279, 280
Ատիճանս— 312
Ատլաս աստղագետ— 57
Ատոմ— 91
Ատոմ Անձևացի— 184, 243
Ատոմյաններ— 327
Ատրիկես— 92
Ատրներսեհ— 202, 244
Ատրպատական— 71, 72, 78, 105, 111, 150, 155, 162, 215, 263, 267, 269, 279, 284, 285, 290, 299
Արաբիա— 116, 117, 141, 143
Արագած— 67
Արագածոտն— 95, 302
Արա Գեղեցիկ— 225
Արած— 85

Արամ— 30
Արամազդ— 42, 44, 45, 110
Արամանյակ բերդ— 206
Արարատյան լեռներ— 259
Արդոզական գավառ— 263
Արետ— 69
Արզն— 62, 126, 219, 223
Արզնարզյուն— 101
Արզրունիք— 66
Արիաս— 56
Արիստակես— 316
Արիստոնիկոս Բաղքեւացի— 31
Արծրունիներ— 28, 29, 30, 44, 66, 67, 68, 76, 77, 78, 79, 80, 81, 90, 101, 102, 125, 135, 150, 155, 158, 165, 172, 203, 206, 229, 261, 266, 267, 273, 284, 293, 310, 311, 313, 319, 321
Արկադիոս— 88, 90
Արհմն— 50
Արճեշ քաղաք— 311
Արճիշակովիտ— 257
Արճուճ— 129
Արճուճք— 232
Արմավիր— 72
Արյան լիճ— 158
Արշակ— 81, 82, 83
Արշակ (Պապի որդի)— 88, 89
Արշակ Պարթև— 65
Արշակ Վարաժնունի— 248
Արշակունիներ— 73, 86, 87, 88, 91, 131
Արշակունյաց թագավորություն— 94, 95, 97
Արշամ— 63
Արշավիր— 71, 73, 76
Արշավիր Արծրունի—63
Արշավիրյան թագավորություն— 63
Արշեզ— 61, 62
Արքամ— 67, 68
Արվանթունի գավառ— 208
Արվաստան— 105, 106, 107
Արտագ— 99, 257
Արտամատ— 75
Արտամետ— 147
Արտաշատ— 84, 98
Արտաշես— 71, 72, 73, 74, 75, 76, 77, 224
Արտաշես Երկայնաբազուկ— 63
Արտաշեսի քաղաք— 239
Արտաշեսյան ավան— 225
Արտաշեսյան գավառ— 257
Արտաշես (պարսից թագավոր) —73
Արտաշիր— 89, 90, 92, 93, 114, 115
Արտաշիր Սասանական— 27, 78
Արտաշիր Ստահրացի— 122
Արտավազդ— 77, 127
Արտավազդ Արտաշեսյան— 259
Արտավազդ Մամիկոնյան— 80
Արտավան— 77, 122
Արտեմիդա— 72
Արտոս լեռ— 294
Արևելյան ծով— 308
Արևմտյան ծով— 308

Բ

Բար— 48
Բարան (Բարեկ)— 203
Բարզեն— 77, 78
Բարզին (Մյուսը)— 78
Բաբելոն— 30, 31, 32, 44, 45, 46, 47, 49, 58, 59, 62, 64, 141, 154, 212, 292
Բագարան— 218
Բագարատ— 125, 126, 128, 133, 134, 135, 136, 172, 176
Բագարատ Բագրատունի— 86, 133, 171, 176
Բագրատունիներ— 67, 125, 127, 135, 206
Բագրեւանդ գավառ— 86, 205, 278
Բալհ— 49, 65, 104, 107
Բակտրիացիներ— 48
Բակուրակերտ— 77
Բաղակ— 116
Բաղդադ— 124
Բաղեշ— 128
Բաղեպարես— 57
Բահլովիտ— 257
Բասրա— 290
Բարզափրան— 84, 298
Բարծումա— 100, 101
Բարքոբա— 77
Բեզոս— 57
Բեթսայիդա— 68
Բել— 42, 44, 45, 46, 47, 48, 57, 58
Բեզեսիոս— 58
Բեզորոս— 56, 57
Բենիամին— 142
Բեսելիել— 251
Բերկրի— 130, 207, 208, 237, 253
Բերոսոս— 26
Բզնունական գավառ— 134
Բզնունիք— 87
Բզնունյաց ծով— 105, 107, 244, 262
Բլրակ գյուղ— 222
Բյուզանդիա— 82, 83, 93, 101, 102, 104, 107, 114, 116, 123, 206, 214, 216, 310
Բյուզանդիոն— 108
Բշիր— 214
Բողունիք—257, 260
Բոր— 115
Բրբիշո— 93
Բուզանդ— 279
Բուղա— 142, 143, 147, 149, 150, 153, 163, 164, 165, 166, 180, 181, 182, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 193, 194, 196, 197, 198, 200, 202, 203, 205, 206, 207, 208, 209, 220, 221
Բուն Մարդաստան— 257
Բուսել— 208

Գ

Գաբանեղյան տոհմ— 156
Գագիկ Ապումրվան, Ապումրվան— 155, 225, 228, 233, 234, 237, 240, 241, 242, 243, 245, 247, 248, 268, 269, 274, 275, 276, 277
Գագիկ Արծրունի— 67, 96, 227, 233, 237, 240, 242, 243, 245, 246, 247, 250, 251, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 270, 272, 274, 275, 276, 277, 278, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 296, 299, 301, 302, 303, 304, 308, 322
Գագիկ Բագրատունի— 310
Գագկակերտ— 261
Գալաթացիներ— 62
Գաղի— 296
Գայոս կրասեր— 70
Գանձակ քաղաք— 111
Գառնի— 107
Գառնի գավառ— 257
Գարգարացվոց աշխարհ— 225
Գարգարացվոց դաշտ— 191
Գարդման— 203
Գարեգին— 83
Գեդեովն— 211
Գեթացիներ— 244
Գեղամա ծով— 89
Գեղարքունի լիճ— 250
Գեղարքունիք— 245

Գեան ավան— 259
Գերասա դաշտ— 286
Գինո բլուր— 303
Գյուղիկ— 265
Գյուտ կաթողիկոս— 99
Գնունիներ— 127, 253
Գնունյաց գավառ— 311
Գող— 62
Գողյան— 65
Գոթողիա— 31
Գոհշթասպ— 85
Գողգոթա— 43, 115, 258
Գողթն— 94, 257
Գողթնաստան— 302
Գողիաթ— 192
Գովմայիդ— 49
Գոտեր— 101, 102
Գորգ Հարմացի— 127
Գորոզ— 199
Գրիգոր— 27, 155, 213, 273, 284, տես նաև Դերենիկ
Գրիգոր Ապուհամզա— 282, 283
Գրիգոր (Աշոտի եղբայր)— 127, 210, 211
Գրիգոր Ապուպելճ— 223
Գրիգոր Արծրունի— 165, 167, 173, 174, 175, 176, 212, 229
Գրիգոր (Արևելյան դուռ)— 312
Գրիգոր Գնունի— 127
Գրիգոր (Դերենիկի ազգական)— 229, 230
Գրիգոր իշխան (XII դ.)— 312
Գրիգորիս— 189
Գրիգորիս Մեծն սուրբ— 303, 316
Գրիգոր Լուսավորիչ— 78, 81, 83, 224, 239, 303, 316, 323, 324
Գրիգոր Մամիկոնյան— 202, 206
Գրիգոր Մոկացի— 252
Գրիգոր (Սյունաց իշխան)— 202
Գրիգոր քահանա— 167, 173, 213, 218, 224, 239, 257
Գրիգոր Քաջբերունի— 127
Գրիգոր (Քուրդիկի որդի)— 202
Գուգան— 257
Գուգրան— 49
Գուրգեն— 126, 129, 130, 150, 155, 159, 160, 161, 163, 164, 165, 213, 214, 215
Գուրգեն Ապուպելճ— 127, 129, 153, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 222, 223, 224, 225, 233, 241, 242, 243
Գուրգեն (Արծրունի)— 257, 261, 262, 264, 265, 267, 270, 283, 291
Գուրգեն (Արծրունյաց տոհմից)— 161, 162, 164, 165, 203
Գուրգեն (Դերենիկի որդի)— 237, 240, 242, 243, 246, 256, 257, 261, 262, 265, 266, 275, 276, 278, 283, 285, 291
Գուրգեն իշան (Տարոնի)— 239
Գևորգ— 227, 231, 238, 239, 250
Գևորգ Ակեացի—156
Գևորգ Անձևացի— 161
Գևորգ Բողկացի— 184, 185
Գևորգ (Ընտրունի)— 161
Գևորգ (սուրբ)— 258


Դ


Դամասկոս— 57, 58, 59, 124, 196
Դանա— 118
Դանիել գրիչ— 322
Դանիել քահանա— 81, 262
Դավիթ— 192, 236
Դավիթ Անձևացի— 161, 229, 230
Դավիթ արքեպիսկոպոս— 313
Դավիթ Բագրատունի (Աշոտ I-ի եղբայր)— 277
Դավիթ եպիսկոպոս— 237
Դավիթ զորապետ— 127, 152, 162
Դավիթ կաթողիկոս— 314, 316, 317
Դավիթ կաթողիկոս (Աղթամարի) — 325, 326, 327, 328
Դավիթ մարգարե— 25, 27, 43, 57, 118, 179, 180, 300, 312
Դավիթ Սահառունի— 296
Դավիթ սեպուհ— 127
Դավիթ (Տարոնի իշխան)— 229, 230, 239, 244
Դատվան— 228
Դարեհ— 63, 71, 73, 122
Դարույնք ամրոց— 290, 304
Դելմիկներ— 304, 306
Դեպուտան— 49
Դերենիկ— 212, 215, 216, 218, 219, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 240, 242, 245, 252, 258, 267, 269, 274, 284, 308
Դերենիկ (XI դ)— 209
Դերջան— 100
Դիա— 44
Դիոնիս— 57, 76
Դիոս— 31
Դկլաթ— 113
Դմիշկ— 196
Դնրուինդ— 61
Դվին— 98, 105, 111, 151, 167, 190, 182, 185, 225, 230, 238, 239, 302, 303, 304


Ե


Եգիպտոս— 31, 32, 43, 47, 57, 64, 65, 66, 70, 116, 117, 118, 120, 288
Եզեկիա— 116
Եդեսիա— 30, 44
Եզեկիել— 62, 132, 318
Եզիտ— 122
Եզր մարգարե— 62
Եթովպիա— 47
Ելի— 159, 162, 283
Ելիմացիներ— 65, 141, 142, 158, 263, 308, 311, 318
Ելիոն— 57
Եկեղյաց գավառ— 89
Եղամ— 30
Եղիա— 315
Եղիար— 251
Եղիշե պատմիչ— 51, 101
Եղիշե քահանա— 51
Եղիսե կաթողիկոս— 303
Եմաթ— 59
Եմավոն լեռ— 51
Ենանոս— 67
Ենովք— 38
Եպիփանոս— 42
Եսայի— 78, 121, 132, 144, 148, 149, 154, 196, 203, 204, 239
Եսայի Ապումուսե— 203
Եսայի Մարգարե— 309
Եսավ— 56
Եսկուլապ— 74
Եվա— 34
Եվպատրիս Արաբիացի— [illegible]
Եվսեբիոս Կեսարացի— 30, 31, 41, 43
Եվրոպա— 43
Երազունի— 217
Երասխ— 98, 123, 253, [illegible], 259, 303, 304
Երեզ— 104
Երեմիա— 46, 141, [illegible], [illegible]
Երիցավ բերդ— 253
Երկվորաց արհման դաշտ— 275
Երիվուրի— 284
Երիքով— 187
Երվանդ— 71, 72, 73, 75, 78
Երվանդական գավառ— 72
Երուսաղեմ— 44, 59, 62, 64, 68, 70, 85, 108, 110, 114, 115,

213, 216, 258, 288, 301, 314, 326
Եփրատ— 91
Եփրեմ— 149

Զամասպ— 103
Զամե— 49
Զամեսս— 55, 56
Զամրի— 251
Զավեն— 87, 88
Զավ գետ— 159
Զարասպ— 106
Զարեհավան— 158, 257, 265
Զարեանդ գավառ— 32, 72, 266
Զաքարիա կաթողիկոս— 210, 212, 217, 227, 239
Զաքարիա— 108, 262, 315
Զաքարիա (Աղթամարի կաթողիկոս)— 322, 324, 325, 326, 327
Զեբեդիա— 316
Զենոն— 95
Զորաբաբել— 62
Զոայլ, Զոել (ամրոց)— 95, 98, 233
Զվիթա— 84
Զրադաշտ— 48, 49, 50, 53, 56
Զրվան— 30, 32, 49, 50
Զուրայր— 122
Զուբեյդա— 123
Զուրարիկ ցեղ— 300
Զփերոս— 57
Զքրի— 214

## Ը

Ըմրեա— 265
Ընձայից ձոր— 235, 240, 283, տես նաև Անձահի ձոր
Ընտրունիներ— 127, տես նաև Տրունյաց տոհմ
Ըռնա— 257, 264, 265, 267

## Թ

Թադեոս Ակեացի— 241, 243, 263, 264, 285, 286
Թադեոս Առաքյալ— 68, 263
Թադեոս իշխան (XII դ.)— 313
Թային— 67
Թերայիտ— 110
Թեկղ (սուրբ)— 279
Թեոդոս Մեծ— 86, 87, 88, 92
Թեոդոս Փոքր— 90, 92, 95, 101
Թեոդորոս— 116, 119, 222
Թեոդորոս Քերթող— 66
Թեոդուպոլիս— 90
Թեսալիա— 57
Թիգլաթ-պալասար— 58, 59
Թոդորոս Վարագի— 127
Թոնոս Կոնկողեռոս— 32, 57
Թոռնավան— 147, 207, 240, 257, 264, 275, 278
Թոռնիկ— 313, 316
Թով— 158
Թովմա Առաքյալ— 68
Թովմա (Արծրունի)— 96, 320, 321
Թորգոմ— 47
Թորգոմի տուն— 310
Թորդան— 87
Թորլ Ջափար— 124
Թրար— 265
Թուխ— 244
Թուրքաստան— 141, 263

## Ժ

Ժանգան— 260
Ժիրաք— 144, 145, 147, 188



## Ի

Իբրահիմ— 203, 207, 208
Իշխանիկ— 206
Իսահակ— 56, 317
Իսմայել— 115, 119, 164, 185, 299
Իսրայել (պետություն)— 58, 62, 79, 116, 142, 172, 211, 212, 216, 220
Իրաք— 128

## Լ

Լավոդիկեոս փռյուգիացի— 40
Լեզք գյուղ— 225
Լեկ— 264
Լիբեաստան— 43, 47, 48
Լիմ— 324
Լյուդացոց թագավորություն— 61, 62
Լումբա փորակ, Լմբա փոր— 240, 280

## Խ

Խաղերոնեա— 77
Խաղտաց ձոր— 100
Խաղտիք— 86
Խալիկ (Գալիկ)— 227
Խառան— 71
Խեդենեկ I— 313, 319
Խեդենեկ II— 319
Խեդենեկ III— 320, 323
Խիկար Իմաստուն— 236
Խլաթ— 134, 143, 172, 325
Խոզաղբերք— 207
Խոնիհրաստան— 49
Խոսեմ Թոզմաուզյան— 108, 114, 115
Խոսրով Որմիզդ— 115
Խոսրով— 77, 79, 80, 89, 90, 102, 104, 105, 106, 107, 110, 111, 112, 113, 115
Խոսրով Ակեացի— 122
Խոսրով Գարաբեդյան— 156
Խոսրով (Գողթնի տեր)— 257
Խոսրով Վահևունի— 127
Խորասան— 62, 222, 262
Խորեն— 218
Խրամ— 122
Խութ— 135, 136, 138
Խութի լեռներ— 200
Խուժաստան— 49, 58, 100, 141, 263, 299
Խուրան Արծրունի— 68, 69, 70, 71, 76

## Ծ

Ծաղկոտն— 312
Ծանարներ— 188, 207
Ծանարք— 189, 190
Ծոփք— 103

## Կ

Կադմոս Փյունիկեցի— 33
Կալիսթենես— 53
Կակենից գյուղ— 279
Կահա— 199
Կամբյուս— 63
Կայեն— 36, 226
Կայնան— 37
Կայսիկներ— 220, 252, 281
Կանգավար ամրոց— 219, 223, 242, 243
Կապադովկիացիներ— 59
Կապույտ բերդ— 289
Կասպից դուռ— 288
Կավատ— 102, 113, 114

Կարին գավառ— 90, 93
Կարին քաղաք; Կարնո քաղաք— 111; 239
Կարմիր գետ— 259
Կարուց բերդ— 278
Կեսարիա (Պաղեստինի)— 114
Կեսարիա (Կապադովկիայի)— 78, 94, 110
Կզվին (Ղազվին)— 221
Կիլիկիա— 59
Կլեոպատրա— 31, 65, 66
Կղարջք— 296
Կղոդեոս— 70
Կյուրեղ Հայրապետ— 309
Կյուրոս— 55, 59, 60, 61, 62, 122, 154
Կյուրոս (Սենեքերիմյան)— 65
Կոգովիտ գավառ— 107, 290, 312
Կոխպան— 224
Կոստանդիանոս— 79, 309
Կոստանդնուպոլիս— 107, 110, 120, 310
Կոստանդին— 120
Կովկասի լեռ— 189, 298
Կոտայք— 107
Կոտոմ գյուղ— 300
Կոտոր ամրոց— 240, 243, 275, 276
Կորդվաց լեռներ— 42
Կորդուք— 240
Կորխա— 239
Կորճեից աշխարհ, Կորճեք— 264
Կորյուն— 96
Կոռնոս— 31, 44
Կրեսոս— 61
Կրերիք— 264
Կրճունիս— 257
Կրճունյաց գավառ— 264
Կրման— 263
Կուզանովիտ— 242, 257
Կուր— 187

Հ

Հաբեթ— 30, 43, 47
Հաղամակերտ— 102, 216, 265, 279, 285, 304, տես նաև Ադամակերտ։
Հաղարավուխտ— 103
Հաղիերտ— 91, 92, 95, 116, 122
Հագր— 127
Հալթ— 228, 230
Հախրամ— 61
Հակոբ— 32, 56, 317
Հակոբիկյան ուխտ— 218
Հաղացովիտ— 253
Համազասպ— 77
Համազասպ Մամիկոնյան— 91, 93
Համազասպյան— 92
Համազասպուհի— 83
Համամ— 76
Համաց գյուղ— 265
Համբույրազան— 247
Համդո— 159, 164
Համիս— 266
Հայկ— 47, 296
Հայոց աշխարհ, Հայաստան— 27, 49, 56, 59, 60, 65, 70, 77, 78, 80, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 95, 97, 99, 101, 102, 103, 104, 114, 125, 128, 130, 135, 136, 137, 140, 142, 146, 147, 150, 153, 165, 181, 182, 200, 202, 203, 215, 217, 228, 238, 240, 244, 254, 260, 267, 269, 271, 276, 278, 279, 280, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 296, 303, 307, 308, 310, 311, 316, 318
Հայոց Արևելյան կողմ— 310
Հայոց կաթողիկոսություն— 210
Հայոց ձոր— 208
Հայրապետ— 233
Հայր Մարդպետ— 80, 81, 82, 257
Հայք— 290



Հաշիուր Արծրունի— 103
Հաշտյանք— 76, 103
Հասան— 147, 161, 229, 231, 232, 233, 234, 243, 268, 279, 280
Հասկո ձոր— 134
Հավուկ Կուկառիճեցի— 94
Հարամայիս— 30
Հարեգ— 38
Հարք գավառ— 47
Հաբյուն— 107
Հեթում— 164
Հեղի— 32
Հեղինե— 70
Հեղինե Անձևացի— 219
Հեսսե Թիթղեմեացի— 314
Հեռու— 27, 192, 211, 315
Հերական դաշտ— 269
Հերակլես— 44, 45, 57, 76
Հերակլես թագավոր— 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 119
Հեր գավառ— 72
Հերոդոտոս— 42
Հերովդես— 69, 173, 249
Հեր քաղաք— 235, 269
Հեփեստոս— 51, 53, 54
Հեփթաղներ— 49, 51
Հիսե (Շեհի որդի)— 224, 225, 230, 239, 240, 241
Հիսե Տրունի— 243
Հմայակ (Աշոցքի տեր)— 93
Հմայակ Մամիկոնյան— 92
Հյուսր— 279
Հյուրկանես— 69, 296
Հնդկական ծով— 49
Հնդկաց աշխարհ, Հնդկաստան— 41, 48, 64, 280, 305
Հոբ— 171
Հոգյաց վանք— 222
Հողց— 144, 245
Հոնավար— 243
Հովել Մարգարե— 166
Հովհան— 95
Հովհան եպիսկոպոս— 218
Հովհան (Զաքարիայի որդի)— 318
Հովհան (Զեբեդիայի որդի)— 316
Հովհան Ոսկեբերան— 90, 92
Հովհան պատրիկ— 105
Հովհաննես ավետարանիչ— 63
Հովհաննես Բագրատունի— 310
Հովհաննես եպիսկոպոս— 173, 167, 170, 173, 212, 218
Հովհաննես կաթողիկոս— 131, 132, 205, 260
Հովհաննես կաթողիկոս (դրասխանակերտցի)— 250, 253
Հովհաննես Կարապետ— 250
Հովհաննես Մկրտիչ— 69, 94, 173
Հովնան խութեցի— 200, 202
Հովսեպոս Փլավիոս— 69
Հովսեփ— 31, 56, 133, 134, 135, 136, 137, 200, 248, 249, 319
Հովսեփ եպիսկոպոս— 95
Հովսեփ, Յուսուփ— 133, 134, 135, 136, 137
Հովսեփ (Ներքինի)— 248, 249
Հորդանան— 316
Հռիփսիմե Արծրունի— 159, 166, 219
Հռիփսիմե եկեղեցի— 224
Հռիփսիմե (կույս)— 309, 313
Հռոմ— 177
Հրազդան— 107
Հրահատ— 161
Հրանույշ— 155
Հրեաստան— 58, 64, 69, 85, 120, 288
Հուդա— 62, 286
Հուդա (Մակարայեցի)— 212
Հուդա (պետություն)— 213
Հուլիանոս Հալիկառնասցի— 81, 82, 83
Հունաց երկիր, Հունաստան— 70, 288
Հուշո դաշտ— 263

## Ձ

Ձիթենյաց լեռ— 239
Ձիրավ— 88
Ձորո վանք— 84, 245
Ձորք— 259

## Ղ

Ղազան— 322
Ղամեք— 39
Ղավսաթենես— 57
Ղեկորվաս (ավան)— 147
Ղուկաս— 32
Ղևոնդ (կաթողիկոսի տեղապահ)— 95
Ղևոնդ (քահանա)— 66
Ղևոնդյանք— 85

## Ճ

Ճահուկ բերդ— 151, 234
Ճահուկ գավառ— 151, 234, 264, 268, 275, 282, 283
Ճորա դուռ— 99
Ճվաշ (Ճվաշռոտ) գավառ— 207, 234, 257, 259, 263, 264, 269, 275, 285

## Մ

Մագոգ— 62
Մաղխամ— 116
Մաթուսաղա— 39
Մակվի բերդ— 290
Մակու— 107
Մահադի— 123
Մահաշա— 260
Մաղախիել— 88
Մամբրե վերծանող— 66
Մամգոնյաններ— 204
Մամեգոն— 56
Մամեգոն (մյուս)— 57
Մամիկոնյաններ— 80, 81, 82, 89
Մայ— 111
Մանազկերտ— 224, 233
Մանակերտ ժայռ— 237
Մանասե— 58
Մանավազյան նահանգ— 252, 262, 263
Մանավազյան քաղաք— 253, 259
Մանեթոն— 48, 51, 53
Մանվել ճարտարապետ— 300
Մաշտոց— 92, 94
Մաշտոց կաթողիկոս— 250
Մառական ավան— 234, 259, 269
Մասիք լեռ— 74
Մասյացոտն— 290
Մատթեոս ավետարանիչ— 31
Մարակա— 249
Մարաճա— 265
Մարանդ— 77
Մարբակատինա— 62
Մարաստան— 58, 59, 60, 72, 75, 77, 91, 263, 238, 299
Մարդաստան գավառ— 134, 217, 220, 247, 257, 264, 285
Մարդպետական— 145, 247
Մարիամ— 31, 201
Մարիամ (XII դ)— 313
Մարիամ Արծրունի— 230
Մարկիանոս— 101, 102
Մարոզ— 63
Մարաղիս— 56
Մեղացիներ— 48, 60
Մեղինա— 118, 119
Մելիքսեդեկ— 315
Մեծամոր— 98
Մեծ Հայք— 75, 78
Մեծնունիք— 257
Մեհենդակ Ռշտունի— 80
Մեհրշապուհ— 103
Մեհրուժան— 127
Մեհրուժան Արծրունի— 82, 83, 84, 85, 86, 88, 89, 90
Մեհրուժան Արծրունի (Վարազդատի ընկեր)— 87
Մեստրիմ— 32, 47
Մեսրոպ— 93, 94
Մերշապուհ Արծրունի— 87
Մեքքա— 116
Մժեժ Գնունի— 253
Միթրես— 57
Միհր— 105
Միջագետք— 59, 70, 88, 91, 244
Միջերկրայք— 40, 42
Միքայել կայսր— 206, 214
Միքիե Մարգարե— 166
Մլեհ— 161
Մլեհ Վարաժնունի— 184
Մծբին— 116
Մծուրն— 105, 106, 107
Մղունիս գյուղ— 265
Մշկան— 93, 95, 99
Մոդեստոս— 108
Մոկաց աշխարհ— 101, 240, 283
Մոկաց գավառ— 312
Մոկք— 95, 101, 143, 144, 153, 223, 252, 284
Մովաբ— 116
Մովսես— 192
Մովսես Խորենացի— 31, 33, 47, 79, 95
Մովսես Մարգարե— 25, 26, 39, 43, 47, 55, 57, 95, 141, 250, 251, 313
Մոտանես— 57
Մորիկ— 104, 105, 107, 109, 115
Մրվան— 122, 123
Մուավիա— 122
Մուխաթլ— 197, 198, 199
Մուկան— 263
Մուհամմեդ (Մահմեդ)— 177— 121, 123, 146, 164, 165, 170, 200, 249, 269
Մուհթիս— 216
Մուղան— 60
Մուշ— 135, 136
Մուշեղ— 78, 80
Մուշեղ (IX դ.)— 127, 149, 155
Մուշեղ Ամատունի— 161
Մուշեղ Անձևացի— 219
Մուշեղ Ապուպելճ— 159, 203
Մուշեղ (VI դ.)— 105, 106, 148, 161, 203
Մուշեղ Բագրատունի— 195, 203, 219, 233
Մուշեղ Մոկացի— 223, 228, 230
Մուշեղ Վահեվունի— 147, 150
Մուսե— 123, 126, 128
Մուսե (Բուղայի որդի)— 221, 222
Մուքաղմ— 159

## Յ

Յամանիկ— 227, 228, 231, 233, 234
Յուսիփ-որդի Ապուսաճի— 287, 288, 289, 290, 292, 293

## Ն

Նաբատ— 172
Նաբուզարդան— 251
Նաբունեդոս— 59
Նաբուպալասար— 59
Նաբուքոդոնոսոր— 59, 220
Նախճավան— 73, 98, 111, 122, 145, 208, 240, 247, 253, 254, 257, 281, 302
Նավատիանոս— 177
Նավե— 315

Նեբրովթ— 30, 44, 45, 46, 47, 48, տես նաև Բել։
Նեռ— 94, 118
Նեստոր— 100, 251
Ներշապուհ— 101
Ներսեհ— 63, 71, 78, 81
Ներսեհ Կամսարական— 102, 103
Ներսես— 81, 82, 83, 84, 86, 87, 89, 239, 303, 316
Ներսես (Գարդմանի իշխան)— 203
Ներսես զորապետ— 105
Նինոս— 30, 31, 32, 33, 48, 49, 56, 58
Նինվե— 30, 31, 60, 62, 71, 138
Նինուաս— 30
Նկան— 147, 149, 233, 240, 243, 273
Նոյ— 29, 30, 39, 40, 41, 44, 47, 239, 262, 291, 311, 319
Նորաբերդ— 219, 220
Նորագեղջ— 144
Նորագյուղ ավան— 217
Նոր քաղաք— 239
Նուշիրական— 106
Նուրադին— 324

## Շ

Շախրիք— 51
Շահակ— 65, 87, 88
Շահգոստ— 85
Շամա երկիր— 279
Շամբիթ— 67
Շամիրամ— 30, 31, 32, 48, 49, 58, 225, 296, 297
Շամիրամաշեն ամրոց (Վան)— 309
Շամիրամ բերդ— 263, 264, 275, 285
Շամիրամի քաղաք— 83, 247, 257, տես նաև Վան։
Շամշա խաթուն—326
Շամշղտա— 187
Շամորհեշմ— 123
Շապուհ Աղեացի— 264
Շապուհ Ամատունի (IX դ)— 127, 211, 245, 247
Շապուհ (Աշոտ թագավորի եղբայր)— 228
Շապուհ (Աշոտ թագավորի որդի)— 223, 228, 237, 243, 248
Շապուհ (երեց)— 144
Շապուհ (Մայմանկի որդի)— 282
Շապուհ (պարսից արքա)— 79, 80, 81, 82, 83, 84, 85, 87, 88, 89, 91, 92
Շավասպ Արծրունի— 82, 91, 97, 98
Շավարշ— 65, 77
Շավարշան— 70
Շատվանի ձոր— 147
Շարուր— 254, 302
Շարի— 203
Շեխեարք— 266
Շերեփ— 241, 242, 243, 263
Շերիրամական— 49
Շիրակ— 111
Շիրո— 98
Շմավոն— 85, 95
Շմերգիս Մոգ— 63
Շմուել— 316
Շնորհ— 265
Շուշեթ— 296
Շուռել— 51

## Ո

Ոզիա— 239
Ոլպիան— 140
Ոզոքոս— 63
Որմի— 111
Ոնորես— 88
Ոստան (Աշոտյաց)— 144, 203, 210, 217, 223, 242, 250, 258, 260, 279, 293, 294, 295



Ոսիտ աշխարհ— 292
Որդոք— 208
Որմզդուհի— 83
Որմիզդ— 50, 51, 53, 104, 116
Որսիրանից ձոր— 279
Որսիրանք— 158

## Պ

Պալունիք— 257
Պահլավիկ թագավորություն— 77, 122
Պաղա բերդ— 284
Պաղեստին— 58, 59, 85, 108, 114, 117, 118, 296
Պապ— 86, 87, 88
Պատրիկ Անձևացի— 127, 156, 161
Պարթևներ— 122
Պարսից աշխարհ, Պարսկաստան— 49, 56, 60, 64, 71, 75, 77, 82, 88, 91, 94, 107, 120, 122, 155, 215, 218, 252, 263, 266, 288, 289, 290, 292, 293, 299
Պարսկահայք— 240, 257, 264
Պարտավ— 191, 203, 225, 227, 231, 246, 247, 249, 279
Պարույր Հայկազն— 50
Պեգասոս— 57
Պետրոս Առաքյալ— 260, 288
Պերոզ— 65, 97, 100, 101
Պերոզ Վռամ— 72
Պիղատոս Պոնտացի— 180
Պղուանս գյուղ— 280
Պողոս— 54, 175, 178, 179, 180, 205, 248, 251, 260, 315
Պորպ— 245
Պորոս— 78
Պտղոմեոս— 33, 51, 224
Պրոմեթեոս— 51, 56

## Ջ

Ջայլամար— 76
Ջալ— 67
Ջաչուռ— 67
Ջափր— 123, 124, 165, 216, 220, 289
Ջերմաձոր— 95, 283
Ջլմար— 76, 151, 208, 214, 247, 283
Ջողա լեռ— 158
Ջողախել— 61
Ջվանշիր— 211
Ջուրշան— 266

## Ռ

Ռաշամ Ռշտունի— 298
Ռեա— 31
Ռեյ— 290
Ռշտունիներ, Ռշտունյաց տոհմ— 80, 81
Ռշտունիք, Ռշտունյաց գավառ— 83, 98, 101, 144, 147, 203, 210, 217, 223, 239, 240, 242, 250, 258, 260, 294
Ռոստոմ Վարաժնունի— 161, 224

## Ս

Սաթենիկ— 73, 75
Սալման— 120, 121
Սալմանասար— 58
Սալմաս— 285
Սակաստան— 141
Սահակ Ամատունի— 161
Սահակ Բագրատունի (Աշոտի եղբայր)— 223
Սահակ Բագրատունի( Բագարատի եղբայր)— 134

Սահակ Իսմայելացի— 185, 187, 188, 220
Սահակ Ընտրունի— 161
Սահակ Կաթողիկոս— 89, 90, 92, 93, 94, 95, 102, 316
Սահակ Սեպուհ— 127
Սահակ (Սյունաց իշխանի եղբայր)— 254
Սահակ սպարապետ— 90
Սահակ քաղաքապետ— 187, 188
Սահլ (Սմբատի որդի)— 202
Սաղա— 47
Սամամ— 120, 121
Սամոսատ— 125, 128, 135, 155, 166, 172, 202, 211
Սամոգես— 59
Սամսոն— 57
Սամվել— 58, 86, 88
Սանասար— 32, 59, 60, 138
Սանասնայր— 138
Սանատրուկ— 70, 71, 73, 224
Սասանյան տոհմ— 88, 104, 105, 122
Սավուղ— 41
Սարա Ամատունի— 245
Սարգիս (Աշոտ)— 227
Սարգիս Բհիրա— 117, 120
Սարգոն— 58
Սարդանապալ— 60
Սարդանապալոս— 57
Սափի— 247, 249, 279
Սափիրա— 179
Սեգա— 211, 245, 248, 255
Սեդեկիա— 220
Սեթ— 26, 37
Սելևկոս Նիկատոր— 64
Սեմ— 30, 31, 32, 43, 47, 49, 225
Սենեքերիմ (Ասորեստանի թագավոր)— 30, 32, 44, 58, 59, 66, 68, 71, 138, 216, 309
Սենեքերիմյաններ— 60, 63, 65, 79, 204
Սենեքերիմ (Վասպուրականի թագավոր)— 309, 310, 311, 313
Սեֆեդին արքայուն (Ամիր—Սեֆեդին)— 323, 324, 325, 327
Սիմեոն քահանա— 323
Սիմ լեռ— 32, 72, 73
Սիմոն Սամարացի— 179
Սիմոն— 145, 175, 258, 262, 301
Սիրիա— 110
Սլգա— 267
Սմբատ— 72, 73, 86, 87
Սմբատա բերդ— 159
Սմբատ Ապահունի— 127
Սմբատ Ապլաբաս (սպարապետ)— 186, 194, 195, 202, 206, 207, 218
Սմբատ Բագրատունի (IV դ)— 86, 87, 95
Սմբատ Բագրատունի (Աշոտի եղբայր)— 203
Սմբատ Բագրատունի (թագավոր) — 223, 238, 241, 243, 244, 252, 253, 277, 278, 281, 286, 287, 288, 302
Սմբատ Բագրատունի (Մոկաց իշխան)— 143, 153, 154
Սմբատ Սարացյան— 127
Սմբատուհի— 67
Սողոմ— 187, 239
Սողոմոն— 46, 132, 144, 152, 199, 200, 232, 236, 311, 317
Սողոմոն Բագրատունի— 215
Սոփի— 237, 271, 273, 274
Սպանդարամետ— 51
Սպեր— 205
Ստահրացի— 77
Ստեփանոս Սլուզ— 316, 317, 318, 319, 324, 325, 326
Սրահանգ— 311



Սրինգ— 76, 151, 208, 214, 247, 263
Սուլեյման— 123
Սուկավետ լեռ— 75
Սուրբ խաչ վանք— 211, 215, 224, 227, 237, 255, 317
Սուրմակ Արծկեցի— 93, 316
Սուփան— 245
Սևան ամրոց— 229, 231, 233, 234, 240, 243, 280
Սևորդի— 199, 292

## Վ

Վալենտիանոս կայսր— 78
Վալիդ— 122
Վահագն Հայկազն— 64
Վահան— 225, 245
Վահան Ամատունի (V դար)— 79, 81, 95
Վահան Ամատունի (IX դ)— 147, 245
Վահան Արծրունի— 66, 67, 78, 80, 99, 100, 101
Վահան Արծրունի (IX դ)— 127, 129, 155, 208, 210, 211, 221, 222, 225, 277
Վահան Գագրիկյան— 161
Վահան Գողթնացի— 257
Վահան Հավնունի— 127, 129, 130
Վահան Մամիկոնյան— 102
Վահան (մյուս)— 127
Վահեվահյան— 224
Վահոտ— 104
Վահրամ— 149
Վահրամ Մեհրեանդակ— 104, 105, 106, 107
Վահրամ Սեպուհ— 147, 150
Վահրամ Տրունի— 147, 150
Վահրիճ— 98
Վահունյաց տոհմ— 145, 150, 286
Վաղարշ— 89, 103, 122
Վաղարշակ— 65, 66
Վաղարշակ (մյուս)— 77
Վաղարշակ (Պապի որդի)— 88
Վաղարշապատ— 84, 302
Վաղես— 82, 86, 279, 280
Վայոց ձոր— 203, 253
Վան— 72, 225, 241, 254, 268, 276, 278, 279, 310, 311
Վանանդ գավառ— 197
Վանի քաղաքաբերդ— 72
Վանտոսպ— 83, 84, 147, 217, 225, 227, 234, 245, 247, 249, 258
Վաչե Արծրունի— 80, 93, 94
Վաչե Արշավիրյան— 71, 73, 75
Վասակ— 127
Վասակ Ակեացի— 161
Վասակ Արծրունի— 203
Վասակ Գագրիկյան— 161
Վասակ (Գուրգենի որդի)— 127
Վասակ Գենադարձ (Արծրունի)— 127, 129, 130, 172, 203, 231, 279, 280
Վասակ իշխանիկ— 203
Վասակ Կովահեր— 208, 210
Վասակ Մամիկոնյան— 80
Վասակ Սյունեցի— 100
Վասիլ կայսր— 310
Վասպուրական աշխարհ, Վասպուրական— 73, 96, 125, 126, 128, 129, 133, 134, 135, 136, 142, 143, 149, 150, 154, 155, 158, 165, 166, 182, 203, 205, 206, 208, 210, 213, 218, 220, 224, 225, 229, 231, 233, 235, 236, 237, 240, 241, 242, 243, 245, 246, 247, 248, 249, 252, 253, 254, 256, 263, 264, 269, 271, 274, 278, 279
Վատնիանյան դաշտ— 189

Վարագա լեռ— 72, 224, 259, 260, 267, 297, 303
Վարագա վանք— 224, 310
Վարազդատ— 87, 88
Վարազշապուհ— 161
Վարազշապուհ (մյուս)— 248
Վարդատառ գավառ— 105, 266
Վարաժնունիք— 265
Վարաժնունյաց տոհմ— 247
Վարբակ— 57, 58, 60
Վարգեն— 67
Վարդան (XII դ)— 316
Վարդան Գարայլեղեն— 127
Վարդան Գնունի— 161
Վարդան Մամիկոնյան— 67, 83, 92, 93, 95, 98, 99, 100, 101
Վարդան Պատրիկ— 260
Վարդ պատրիկ Ռշտունի Հայկազըն— 260
Վեհկավատ— 113
Վեսպասիանոս— 240
Վիտահատ— 264
Վիրապ (վանք)— 303
Վլիթ— 128, 265
Վհրի (Վեհրի)— 264
Վնգո— 97, 104, 106
Վշնասպ— 111
Վռամ— 91, 92, 93
Վստամ— 104, 106
Վրաց երկիր, Վրաստան, վրացիներ— 105, 278, 292, 302
Վրթանես— 80, 81, 189, 306
Վրնջունիք— 61

## Ց

Ցադրյան— 257
Ցաճատ— 98, 101, 102
Ցաճատուհի— 86, 88
Ցամբեր— 257, 264
Ցայք, Ցայտառան— 80, 298
Ցավրոս— 62, 95, 98
Տարոն— 72, 81, 94, 125, 126, 135, 138, 172, 217, 219, 230, 231, 239, 243, 245
Տարոնա գետ— 265
Տարսոն— 32, 110, 114
Տերենտ— 87
Տիբերիոս— 69, 70, 71
Տիգրան Հայկազն— 32, 59, 60, 61, 62, 63, 66, 72
Տիգրան Մեծ— 59
Տիգրան վերջին— 77, 84
Տիգրանուհի— 61
Տիզբոն— 83, 92, 113, 116
Տիմոթեոս— 178
Տիտան— 30, 31
Տիտոս— 73
Տիրան— 77, 80, 81
Տիրոց— 78
Տմորիք— 60, 62, 101
Տյուրոս— 57
Տոսպ— 72, 267
Տոսպոշտունիք— 257
Տրդատ Մեծ— 78, 79, 89, 240, 262
Տրունյաց տոհմ— 150, 243
Տուղրուլ— 311
Տփղիս— 105, 159, 185, 167, 215, 278
Տևտես— 57

## Ր

Րոբովամ— 172

## Ու

Ութմանիկներ— 208, 224, 284, 285
Ուշեռ բերդ— 290
Ուրեգիանոս— 69



## Փ

Փաղեկ— 46
Փայտակարան— 264
Փառան— 117, 118, 119
Փարհուաց— 284
Փեթր— 290
Փեռուսակ— 225
Փիլիպե իշխան— 203
Փիլիպիկոս— 105
Փիլիպպոս— 69, 179
Փիլոն Աղեքսանդրացի— 35, 37, 43
Փշոց վանք— 237
Փոկաս— 107, 108
Փուա— 58

## Ք

Քարարակ— 161
Քարար— 117
Քաղկեդոն— 101, 102, 108, 111
Քամ— 30, 43, 44, 47
Քթիշ— 191, 199
Քայոս— 75
Քսերքսես— 60, 61, 62, 63, 65
Քսիսութրոս— 31, 44
Քրիստափոր (կաթողիկոս)— 100
Քրիստոս— 28, 31, 68, 69, 70, 75, 78, 84, 85, 86, 90, 94, 95, 99, 108, 110, 121, 131, 146, 156, 170, 171, 173, 174, 175, 176, 179, 182, 184, 189, 195, 198, 199, 200, 201, 209, 212, 215, 216, 218, 219, 226, 227, 246, 250, 251, 255, 258, 260, 261, 264, 265, 275, 282, 286, 299, 300, 312, 315, 318
Քուշ— 44, 47
Քուշաններ— 65, 99, 104, 122
Քուրդիկ Մամիկոնյան— 202, 205

## Օ

Օգոստոս կայսր— 65
Օգոստոս Տիբերիոս— 69
Օլիմպիադա— 52
Օձ ձոր— 261
Օմար— 123
Օշական գյուղ— 95
Օշական դաշտ— 252
Օսի— 255

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . . . . . 3

ԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ . . . . . . . . . . . 25

ԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ . . . . . . . . . . . 29

*(Գլուխ) Ա.* . . . . . . . . . . . . . . . 29

*Բ. Ուղի, բարելագինների և նրանց առասպելների մասին* . . . . 44

*Գ. Ասորեստանի թագավորության մասին, թե ինչպես Զրադաշտ ու Մանեթոնը դարձան արևելյան կողմերի գլխավորներ։ Նրանց մոլար ուսմունքների մասին* . . . . . . . . . . 48

*Դ. Թե ինչպես կարգավ իրար հաջորդեցին Ասորեստանի թագավորները մինչև Կյուրոս պարսիկը* . . . . . . . . 55

*(Գլուխ) Ե* . . . . . . . . . . . . . . . 59

*Զ. Կյուրոսից հետո [թագավորում են] Կամբյուսը, Եմերդիս մոգը, Դարեհ Վշտասպյանը. Դարեհի թագավորության տարում մեռնում է Տիգրան Հայկազնը* . . . . . . . . . . . 63

*Է. Ներսեհի նախարարների չարախոսությունը. Վաչե Արշավիրյանի մասին* . . . . . . . . . . . . 71

*Ը. Արտաշիրի թագավորելը Հայաստանում* . . . . . . . . 72

*Թ. Պահլավիկի թագավորության վերացումը և Սասանյանների թագավորելը* . . . . . . . . . . . . 77

*Ժ. Տրդատի վերադարձը Բյուզանդացոց երկրից. Մեծ Հայքի թագավորության անոնք Հնաստանով բյուզանդացոց թագավորի օգնությամբ. Քրիստոսի նկատմամբ եղած հավատի մասին* . . . 78

*ԺԱ. Թեոդոսի թագավորելը Բյուզանդիոնում* . . . . . . . 86

ԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

*(Գլուխ) Ա.* . . . . . . . . . . . . . . .

*Բ. Սարդասպան Բարձումայի մասին* . . . . . . . . . 100

*Գ. Թե ինչպես վերացավ պարսից Սասանյան տոհմի անդրա թագավորությունը* . . . . . . . . . . . . 104

*Դ. Թե ինչպես վերացավ Պարսից վաճառ թագավորությունը և Հայոց մյուս՝ խոմայնականներ, որը նույնպես բանի պետք չէր* . . 110

*Ե. Զահր թագավորի, Հայոց աշխարհի նկատմամբ նրա չար վարությունների, նրա չարակամությունը դրսևորելու մասին, և ինչ որ կատարվեց այդ ժամանակ՝ մինչև 6-րդ հարկյանի, 20-րդ*

օլիմպիադայի լրանալը և 19-րդ ինդիկտիոնից հետո, որը հայկական տոմարով բովանդակում է արաբների բռնատիրության 222 տարիները։ Արաբներին թագավորում է ինչ-որ մեկը՝ Թոքլ Ջաֆր անունով . . . . . . . . . . . . . . 124
Զ. Հայոց իշխան Բագարատի ու Մուսեի պատերազմի և Բագարատին օգնության եկած Վասպուրականի իշխան Աշոտի շնորհիվ [տարած] հաղթանակի մասին . . . . . . . . . 126
Է. Խութի լեռնցիներից Հովսեփի մահվան մասին։ [Նրանց] պատմությունը . . . . . . . . . . . . . . .
ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ . . . . . . . . . . . . . . 135
Ա. Ամբողջ Հայոց աշխարհում կատարվածի մասին, իշխանների երկպառակությունը, անհամերաշխությունը և նրանց հետ պատահածը 139
Բ. Մոկաց իշխան Սմբատ Բագրատունու մասին . . . . . . 148
Գ. Իշխանի, նախարարների ու նրանց ընտանիքների կապվելն ու վտարվելը մեր աշխարհից . . . . . . . . . . 154
Դ. Թե ինչու նրանցից ոմանք հասան սուրբ նահատակման . . . 155
Ե. Նրանից հետո [կատարվածը]։ Գուրգենի մեկնելը Բուղայի կանչով, և այդ տեղի ունեցածը։ Արքայից իբր թե ստացած թուղթը 163
Զ. Արծրունյաց նախարարների չար հանձնառության մասին. տեր Գրիգոր Արծրունու, Արծրունյաց եպիսկոպոս տեր Հովհաննեսի և Գրիգոր քահանայի նահատակվելը հանուն Քրիստոսի, և նրանց պատմությունը . . . . . . . . . . . . . 167
Է. Բագարատ Բագրատունու հերձվածի մասին, որը Քրիստոսի ուրանալուն ավելացրեց նաև սա, ի կործանումն շատերի։ Մի քանիսի ընդդիմադրությունը . . . . . . . . . . . 176
Ը. Ինչ որ դրանից հետո կատարեց Բուղան Դվին քաղաքում, և նահատակների մասին . . . . . . . . . . . . . 180
Թ. Թե ինչ կատարեց Բուղան իր գալստյան երկրորդ տարում, որը Ցլիմպիադան է, նրա պատերազմը Սահակ Իսմայելացու դեմ, որը ճանաչվում էր Իսմայելի որդի, և [Տփղիս] քաղաքի պաշարման մասին . . . . . . . . . . . . . . . 185
Ժ. Ծանարների մեջ կատարվածի մասին . . . . . . . . 188
ԺԱ. Թե ինչպես նահատակվեց Մուշկաթը Վանանդ գավառից . . 197
ԺԲ. Անիշխանությունից հետո կատարվածի և պատերազմների մասին . . . . . . . . . . . . . . . 203
ԺԳ. Գուրգենի միայնակ մնալու և մեր աշխարհում նրա հակառակորդների մասին . . . . . . . . . . . . . 204
ԺԴ. Դերենիկի վերադարձը Հայաստան և սրանց [շնորհիվ] ամբողջ Հայաստանի իշխանների գերեդարձության սկիզբը . . . . 212
ԺԵ. Գերությունից իշխանների վերադարձը . . . . . . . 218
ԺԶ Գերությունից Աշոտ իշխանի և Վահան Արծրունու վերադառնալու մասին . . . . . . . . . . . . . . . 221
ԺԷ Անձևացիքի համար Աշոտի գրգռվելու և դարձյալ խաղաղվելու մասին . . . . . . . . . . . . . . . 222



ԺԸ Ութմանիկների դեմ Աշոտ իշխանի մաքառման և նրանց հափշտակածը ետ առնելու մասին . . . . . . . . . 224
ԺԹ Դերենիկի զավակների մասին . . . . . . . . . 227
Ի Դերենիկի կողմից Տարոնի իշխանին՝ կյուրապաղատին՝ ձերբակալելու և Դավթին, որ ճանաչվում էր արքա, իշխան կարգելու մասին . . . . . . . . . . . . . . . 229
ԻԱ Սմբատի թագավորելը Աշոտի փոխարեն . . . . . . 238
ԻԲ Դվին քաղաքի կործանումը սաստիկ շարժից . . . . . 238
ԻԳ Հայոց Սմբատ թագավորի արշավանքը Ահմադ Ամիդացու դեմ՝ Վրաց, Աղվանից և Հայոց բոլոր իշխաններով, Սմբատի պարտությունն Ահմադից՝ Աղձնիքի սահմաններում, Թուխ կոչված գետի վրա, որը թափվում է Բզնունյաց ծովը . . . . . . 244
ԻԴ Ապումրվանի մահվան մասին . . . . . . . . . 245
ԻԵ Թե ինչպիսի կեղծավոր սիրով էր Աֆշինը նյութում չարիքներ Հայերի և նրանց իշխանների նկատմամբ . . . . . . . 246
ԻԶ Թե ինչպես աստվածասաստ բարկությամբ մեռավ Աֆշինը և ամբողջ իր զորքը . . . . . . . . . . . . . 248
ԻԷ Հրաշքի մասին, որ երևաց Ռշտունյաց Ոստանում, Գագիկի զորավարության տարիներին . . . . . . . . . . . 250
ԻԸ Սմբատ թագավորի դեմ կայսիկներ կոչված արաբների և Սյունաց իշխանի ապստամբության մասին, և երկուսին հնազանդեցնելը . 252
ԻԹ Նախճավան քաղաքում Աշոտի՝ Վասպուրականի իշխանի մահվան մասին . . . . . . . . . . . . . . . 254

[Անանուն Պատմագիր]

[Շարունակություն Արծրունյաց տան պատմության]
(Գլուխ Ա) . . . . . . . . . . . . . . . 267
Բ. [Դերենիկի] անդրանիկ որդու՝ Աշոտի աթոռակալությունը և տիկին Սոփիայի՝ երջանիկի ու բարեպաշտի մահը . . . . 274
Գ. Փառքի ճանաչումը, ինչպես նաև աստծո շնորհների երևալը Գագիկ մանկան վրա. Ապումրվանի սպանությունը նրա ձեռքով՝ մեծ արիությամբ, և նրա մասին եղած գովեստները . . . 275
Դ. Գագիկի իշխանության սկիզբը իր եղբորից՝ Աշոտից հետո, և նրա քաջարի արարքները . . . . . . . . . . . . 281
Ե. Մեծ սգի վերանալու, արքայի կողմից մեր աշխարհի խաղաղեցման և Ցուսփի՝ Աբուսաճի որդու մասին . . . . . . 292
Զ. Պարսից անիշխանության մասին . . . . . . . . 293
Է Գագիկ մեծ արքայի աշխարհաշինության, բազում տեղերի նորոգման և Ոստան ավանի հրաշակերտման մասին . . . . . 293
Ը. Աղթամարի շինության և այն մասին, թե ովքեր էին, որ թագավորի ձեռնարկելուց առաջ այնտեղ կատարեցին նվազ և հիշատակելու անարժան գործեր . . . . . . . . . . . . 295
Թ. Փառավոր ու պանծալի եկեղեցու մասին, որն Աղթամար քաղա-

բում է, և որի շինության քարերը բերեց Հեռավոր Երկրից, ինչի մասին հավաստապես կհայտնենք իր տեղում . . . . . . 229
Ժ Դվին մայրաքաղաքի դարպասների մոտ արաբացի մարդու դեմ մղած պատերազմի, և Հայոց մեծն արքա Գագիկի քաջարի գործերի ու հաղթության մասին . . . . . . . . 302
ԺԱ Գեղմիկների հարձակումը Հադամակերտ քաղաքի ու Աղբակ գավառի վրա, և աստծո շնորհներով Հայոց զորքի հաղթանակը . 304
ԺԲ Հայոց մեծ արքա Գագիկի պատկերի, անձի և փառաց բացատրությունը . . . . . . . . . . . . . . 305
[ՀԱՎԵԼՎԱԾ] . . . . . . . . . . . . . . 308
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՆՑՔԵՐԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՍԻՐ ԱԲԼՄԱՍԵՀ ԻՇԽԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ . . . . . . . 308
[ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ] . . . . . . . . . . . . 321
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . . . . . . . 329
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ . . . . . . . . 380
ՑԱՆԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ . . . . . . 383

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԱՆԱՆՈՒՆ

Պատմություն Արծրունյաց տան

Товма Арцруни и Аноним

ИСТОРИЯ ДОМА АРЦРУНИ

(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91
Ереван, 1978

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Մինասյան

ИБ—1

Հանձնված է շարվածքի 25/X 1977 թ.։
Ստորագրված է տպագրության 27/IV 1978 թ.։
Թուղթ՝ № 1, $84 \times 108^1/_{32}$։ տպագր. 12,75 մամ. = 21,42 պայմ. մամ., հրատ. 19,4 մամ.։
Պատվեր 458։ Տպաքանակ 20000։
Գինը՝ 2 ռ. 70 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն,
Երևան—9, Տերյան 91։

Շարված է ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տպարանում։

---

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

Типография № 1 Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна, 65.